ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ

Ա

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

ВАРАГ АРАКЕЛЯН

СИНТАКСИС АРМЯНСКОГО ЯЗЫКА

Том I

Простое предложение

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հատոր I

Պարզ նախադասություն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1958

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի խմբագրական-
հրատարակչական խորհրդի որոշմամբ։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի շարահյուսությունը հայ լեզվաբանության կողմից բարձիթողի արված բնագավառ է։ Եթե նկատի չառնենք ակադեմիկոս Մ. Աբեղյանի «Հայերենի շարահյուսություն» աշխատությունը, որ լույս է տեսել 1912 թ., մի այլ, քիչ թե շատ ծավալուն, հետազոտություն գոյություն չունի մեր լեզվաբանական գրականության մեջ, որ նվիրված լինի հայերենի շարահյուսության հարցերին։ Հրատարակության հանձնելով Վ. Դ. Առաքելյանի սույն աշխատությունը՝ ինստիտուտը գտնում է այն որպես մի լուրջ ներդրում հայերենի շարահյուսության ուսումնասիրության բնագավառում։ Թե՛ իր կառուցվածքով և թե՛ իր նյութերի հարստությամբ սույն աշխատությունը մեծապես կնպաստի հայ քերականագիտության խնդիրների լուծմանը և կբարձրացնի քերականության գիտության մակարդակը։ Ինստիտուտը հույս ունի, որ սույն աշխատությանը կհաջորդեն նույն հեղինակի, ինչպես և այլ նոր հետազոտողների նոր ու նոր աշխատություններ, և մեր շարահյուսության հարցերի ուսումնասիրությունը կհանգի իր սպառիչ նվաճումներին։

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌԱՋԱԲԱՆ

Շարահյուսությունը հայ քերականության քիչ ուսումնասիրված բաժինն է։ Ավելին՝ եթե ուսումնասիրության նյութ դառնալու տեսանկյունով շարահյուսությունը համեմատենք ձևաբանության, մանավանդ բառագիտության հետ, կնկատենք, որ շարահյուսությունը քերականության գրեթե անտես արված միակ բաժինն է։ Մեր հին լեզուն, որ հարյուրից ավելի տարիներ գիտնականների քրտնաջան մշակության հողն է եղել, չունի մի ամբողջական շարահյուսություն։ Այս կողմից ավելի անմխիթար է արևմտահայ գրական լեզուն, որի շարահյուսական դասական կառուցվածքը ցայժմ ուսումնասիրված չէ և սպասում է իր ուսումնասիրողին։ Ռուսահայ գրական լեզուն այս պարագայում մասամբ ավելի բարենպաստ պայմաններում է։ Մոտ կես դար առաջ մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանը ձեռնարկեց տալու ռուսահայ գրական լեզվի համար շարահյուսության ամբողջական շարադրանք, որը, պետք է ասել, հաջողությամբ գլուխ բերվեց։ Անվանի հայագետը իր ուսումնասիրության մեջ չէր կարող ծավալվել, որովհետև նա նպատակ էր դրել գրելու շարահյուսության միջնակարգ դպրոցի մի դասընթաց, որը պետք է ծառայեր իբրև դասագիրք՝ հայերենի շարահյուսության օրինականացված երևույթների ուսուցման համար։ Հիսուն տարվա ընթացքում մեր գրական լեզուն շատ է հարստացել. առաջացել են նոր օրինաչափություններ, հնացել են շարահյուսական բազմաթիվ երևույթներ, մանավանդ, եթե նկատի առնենք, որ Մ. Աբեղյանը համահավասար չափով չի խորացել շարահյուսական բոլոր երևույթների ուսումնասիրության մեջ. օրինակ՝ համեմատաբար ընդարձակ է հոլովների առումների մասը, բայց պարզ նախադասությունը և նրա անդամները նույն չափով չեն մշակված, և դրանց վերաբերյալ շատ հարցեր բնավ չեն շոշափված։ Բարդ նախադասության բաժնում ստորադասական նախադա-

ությունները լավ են մշակված, բայց դրա փոխարեն համադասական նախադասությունները քիչ ուշադրության են արժանացել։ Այսպես է դրությունը նաև մյուս հարցերի բնագավառում։ Այս ամենը հաշվի առնելով, շատ տարիներ առաջ մենք ձեռնարկեցինք գրելու հայերենի շարահյուսություն։ Սույն աշխատությունը համարյա գրված էր, երբ 1954 թվականին լույս տեսավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի կազմած ռուսերենի ընդարձակ շարահյուսությունը, որ գրված է մոտ երկու տասնյակ հեղինակների կողմից։ Նկատի ունենալով այդ գրքի մանրամասն շարադրանքը և նյութի դասավորման գիտականությունը, մենք հիմնավորապես փոխեցինք մեր աշխատանքը և հարմար դատեցինք նյութը դասավորել այնպես, ինչպես դասավորված է վերոհիշյալ գրքում։ Մեր մեջ առաջացավ բնական նախանձախնդրություն՝ ունենալու այնպիսի շարահյուսություն, որ իր մանրամասնությամբ և կառուցվածքով մոտենա ռուսերենի շարահյուսությանը։ Թե որքանով է մեզ հաջողվել գլուխ բերել այս գործը, այդ կերևա, երբ այս աշխատանքը լրիվ լույս կտեսնի, միայն պետք է նկատի առնել, որ մեր լեզվի շարահյուսությունը չի կարող նույն դյուրությամբ ստեղծվել, ինչ որ ռուսերենի շարահյուսությունն է։ Ռուսերենի համար գրված կան շարահյուսության բազմաթիվ գրքեր, որոնք իրենց մեջ հսկայական նյութ են ամփոփում։ Ռուսերենի նոր շարահյուսության հեղինակներն իրենց ձեռքի տակ ունեցել են հարուստ քարտարան, որից ազատորեն քաղել են անհրաժեշտ լեզվական նյութերը և, վերջապես, այդ շարահյուսությունը գրված է մոտ երկու տասնյակ հեղինակների ձեռքով։ Հարկ չկա ասելու, որ հսկայածավալ նյութը մենք հավաքել ենք երկար տարիների ընթացքում, և հաճախ որևէ շարահյուսական երևույթ օրինակով հաստատելու համար հարկ է եղել այդ օրինակը որոնել օրերով ու շաբաթներով, մանավանդ որ մեր գրականության հին հրատարակությունների օրինակները գերազանցապես փոխարինել ենք նորերով։

Մենք նպատակ ենք դրել քննելու մեր լեզվի շարահյուսական այն բոլոր երևույթները, որոնք նկատել ենք մեր ուսումնասիրության ընթացքում։ Ամենուրեք նշված են հին, նոր զարգացող, մեռած կամ մեռնող երևույթները, բարբառային ու գրաբարյան օրինաչափությունները, անշուշտ, հիմնված մեր գրական լեզվի նյութերի վրա, որպեսզի ընթերցողը տարբերի ժամանակակից շարահյուսական գործուն օրինաչափությունները հին ու հնացած, կամ նոր առաջացող երևույթներից։ Այս պատճառով օրինակները բերված

են XIX և XX դարերի համարյա բոլոր հայ գրողներից։ Ամբողջ շարահյուսությունը բաժանել ենք երկու մասի։ Առաջին մասը նվիրված է պարզ նախադասության և նրա անդամների ուսումնասիրությանը, իսկ երկրորդ մասը ընդգրկում է թերի պարզ նախադասությունը, բարդ նախադասությունը, հոդը, ուղղակի, անուղղակի խոսքը և շարահյուսական այլ հարցեր։

Սույն աշխատության հեղինակը նպատակ է ունեցել, որքան հնարավոր է, ընդարձակ կերպով տալու մեր լեզվի շարահյուսական երևույթների բնութագիրը, բայց երբեք հավակնություն չունի կարծելու, թե սպառել է ամբողջ նյութը իր ծավալով և մշակումով։ Հայերենի կատարյալ շարահյուսություն կգրվի այն ժամանակ, երբ կատարվի քարտարան ստեղծելու այն մեծ նախաձեռնությունը, որ մեծ եռանդով առաջ է տանում Լեզվի ինստիտուտը և, վերջապես, պետք է նկատի առնել անհատի չափավոր կարողությունները ուսումնասիրվող նյութի անսահմանության առջև։

ՀԵՂԻՆԱԿ

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

I ՊԱՐԶ ՀԱՄԱՌՈՏ ԵՎ ՊԱՐԶ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 1. *Նախադասությունը մեր մտքերի արտահայտման լեզվական միավորն է և շարահյուսության ուսումնասիրության ամենահիմնական առարկան։ Նախադասությունները իրենց կառուցվածքով հասնում են այնպիսի բարդության, տարբեր մասերի ու անդամների շղթայակցման այնպիսի նրբության, որ դա կարելի է համարել լեզվական մշակույթի խոշորագույն նվաճումներից մեկը, մի նվաճում, որ ձեռք է բերվել մարդկային մտքի դարավոր գործունեության ընթացքում։ Մի պարզ նախադասության մեջ կարող են արտահայտվել պատճառի, նպատակի, ժամանակի, տեղի, բաղդատության և այլ հարաբերություններ, որոնց կապակցումն ու դասավորությունը մի ենթակայի և ստորոգյալի շուրջը՝ պահանջում են մտքի մեծ աշխատանք ու լարում։ Այն հարաբերությունները, որոնք պարզ նախադասության մեջ դրսևորվում են առանձին բառերով, բարդ նախադասության մեջ դրանք փոխարինվում են կապակցված նախադասություններով, որոնք իրենց հերթին կարող են ունենալ երկրորդական կարգի լրացուցիչ նախադասություններ և այլն։*

§ 2. *Նախադասությունը պահանջում է տրամաբանական շղթայակցում, մասերի ճիշտ տեղաբաշխում։ Լինում են դեպքեր, երբ տրամաբանական շղթայակցումը, մասերի հավասարաչափ դասավորությունը ճիշտ չեն։ Այս երևույթը տեսնում ենք գրավոր և, մանավանդ, բանավոր խոսքի մեջ։ Բայց դրանք համարվում են բացառություններ և դիտվում են իբրև ոչ ճիշտ կազմություններ։*

Գեղարվեստական արձակ ու չափածո խոսքի մեջ, նախադասությունների կառուցման շղթայակցման պահանջից բացի, անհրա-

ժեշտ են կշռույթը, արտաբերման ելևէջը, հանգավորումը և այլն, որոնք հաճախ պայմանավորվում են նախադասությունների ձևական մշակումով, այսինքն՝ նրանց մասերի և այդ մասերի մեջ մըտնող անդամների համամաս տեղադրմամբ ու կապակցությամբ։ Այս տեսակետից էլ գեղարվեստական խոսքի նախադասությունների կառուցումն ու շղթայակցումը հատուկ լինելով միայն որոշ անհատների, նրանց խոսքի մեջ նախադասությունները և ընդհանրապես լեզվական այս կամ այն երևույթը դիտվում են իբրև օրինակ և հիմք՝ տվյալ լեզվի օրինաչափությունների ուսումնասիրության և օրինականացման համար։

Նախադասությունները լինում են պարզ և բարդ։ Բարդ նախադասության մասին կխոսվի առանձին։ Այստեղ ուսումնասիրվում է լրիվ պարզ նախադասությունը, որը լինում է համառոտ *և* ընդարձակ:

§ 3. *Համառոտ համարվում է այն նախադասությունը, որը կազմված է միայն գլխավոր անդամներից։ Համառոտ նախադասությունների մեջ, սակայն, կարող են առկա լինել թե՛ նախադասության երկու գլխավոր անդամները և թե՛ միայն մեկը։ Եթե գըլխավոր անդամներից մեկը բացակայում է, դա համարվում է զեղչում և ոչ թե նախադասությունը կազմված է միայն մի գլխավոր անդամից։*

— *Իսկ դու կարող էիր։*
— *Ես... չգիտեմ...*
— Ձեռ կարող:
— *Ձեռ կարող (ԴԴՎ, 216)։*
Հիշում եմ.
Եղավ տոն (ՁԵ, 38)։

Սերունդներն ասում են.— Յնդել է Վարոսը, ցնդել *(Իս., III, 150)։* Քունը փախել էր: Իսկ միտքս գործում էր *(Շիրվ., VII, 215)։*

Բերված օրինակները համառոտ նախադասության օրինակներ են։ Համառոտ նախադասության բնույթը չի փոխվում ստորոգյալի պարզ, բաղադրյալ և բարդ լինելուց. սա վերաբերում է նաև բաղադրյալ ենթակային։

§ 4. *Այն նախադասությունը, որը, երկու գլխավոր անդամներից բացի, ունի երկրորդական անդամներ, կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն. օրինակ՝* Քո կրակոտ խոսքերը բխում էին իմ սրտի խորքից *(Շիրվ., VII, 193)։* Սիփան սարը ճագավ դանդաղ գի-

շերվա թուխ յափունչին *(Հ. Շիրազ, ՀԸ, 296)*։ Մի անգամ բարձրացա Քյարքե գյուղի դիմացի ժայռապատ լեռան կատարը *(ՎԱՈՊ, 151)*։ Խանբեգյանը շարունակեց ճանապարհը միանգամայն անտարբեր արտասահմանյան մի կորած-մոլորած քաղաքում տեղի ունեցած այդ անցքի հանդեպ *(Նար., VII, 126)*։ *Միայն մի երկրորդական անդամ ունեցող նախադասությունն անգամ կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն։*

1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ (ԵՂԱՆԱԿԻ)

ա) ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 5. Երբ մենք այս կամ այն առարկայի, երևույթի մասին որևէ բան հաղորդում ենք մեկ ուրիշի՝ նրան տեղեկացնելու, ուսուցանելու, լուր տալու նպատակով, ապա մենք մեր իմացածը պատմում կամ հայտնում ենք։ Դա կատարվում է պատմողական նախադասություններով։ Պատմողական նախադասությունը բացառում է հարցը, հրամանը, բացականչությունը։ Ուրեմն այն նախադասությունը, որ արտաբերվում է առանց հատուկ առոգանության, կոչվում է պատմողական նախադասություն։

§ 6. Պատմողական նախադասությունը մյուսներից տարբերվում է իր արտաբերման ելևէջով, որը հատկանշվում է սկզբնական պահի թեթև բարձրացումով և վերջում դանդաղ իջեցումով։

§ 7. Պատմողական նախադասությունների սովորական ժամանակներն են սահմանական եղանակի ներկան, անցյալ անկատարը, անցյալ կատարյալը, ապառնին, վաղակատարը և մասամբ հարակատարը։

§ 8. Ինչպես ասվեց, պատմողական նախադասությունները արտահայտում են մեր գիտելիքները, իրականության մեջ կատարվող, կատարված, կատարելի իրողությունների մասին. պատմողական նախադասությամբ հաղորդումը կարող է լինել դրական, բացասական կամ ժխտական. օրինակ՝ Արսեն Տոնոյանի դեմքն այրվում էր: Արսեն Տոնոյանի քունը չէր տանում: Շուռ էր գալիս մի կողմից մյուսը: Արձակեց բլուզի կոճակները, մի քանի անգամ ամուր տրորեց ճակատը, որ գլխի ցավն անցնի, բայց հնար չեղավ: Նրա աչքերի առջևով իրար ետևից գալիս անցնում էին օրվա պատկերները *(Քոչար, 241)*։

բ) ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 9. Հարցական կոչվում է այն նախադասությունը, որի միջոցով խոսողը ցանկանում է խոսակցից որևէ բան իմանալ։ Հարցական նախադասությունները հաճախ օժտված են հատուկ հարցական արտաբերությամբ և առանձնահատուկ հարցական բառերով (դերանուններ, շաղկապներ, մակբայներ), որոնց վրա էլ հաճախ ընկնում է հարցական արտաբերությունը։ Երբեմն խոսողը փոխում է հարցական նախադասության շարադասությունը՝ արտաբերությունը այս կամ այն կարևոր բառի վրա գցելու նպատակով։

Վահա՛ն Տերյա՛ն, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո *(Զն, 134)*։
Եվ մի՞թե, մի՞թե, մի՞թե չերգեց
Եվ չողջունեց իմ սիրտը խնդուն *(Նույն տեղում, 104)*։

— Ի՞նչ բան է, չհաջողվե՞ց ուրեմն հանգիստ աշխատել *(Քոչար, 321)*։

— Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ է գնում Հայաստան,— հարցրեց Գյուտը *(ԴԴՎ, 158)*։

Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց զորանչի ձվածե՞ղ ուտել,
Թե՞ նշանածին շատ էր կարոտել *(Թ., II, 12)*։

§ 10. Հարցական արտաբերությունը տարբերվում է շեշտադրությունից. կարող է պատահել, որ հարցական արտաբերություն կրող բառը ունենա նաև շեշտ, բայց երկու երևույթները որոշակի տարբերվում են։ Հարցումի ժամանակ ձայնը ուժեղ բարձրանում է և կորագիծ իջնում, իսկ շեշտը ուղղակի ուժգնությամբ իջնում է ձայնավորի վրա։ Պատմողական արտաբերության համեմատությամբ հարցականը շատ բարձր է և բազմազան իր ելևէջումներում։ Ըստ հարցման տակ՝ ընկնող բառի շարադասության ելևէջումները փոխվում են։ Եթե հարցական արտաբերության տակ գտնվող բառը շարադասվում է նախադասության սկզբում, ապա արտաբերությունը իջնում է. օրինակ՝

— Ունի՞ս,— հարցրեց,— մի պաշտոն կամ գործ *(Նույն տեղում, 97)*։

Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կրակ դառնա *(Նույն տեղում, 107)*։

Ո՞վ գիտե՝ ինչ էին երազում. թերևս իրենց մանկության մասին, թերևս դեռ խոստումներ շռայլող ապագայի մասին:

Ո՞վ է իմացել երազների ուղիները և նրանց դեգերած վայրերը *(Իս., III, 124)*։ Կամենո՞ւմ ես, այդ իշխանազն ցեղից ես լակեյներ կբերեմ քեզ համար *(Մուր., I, 229)*։

Երբ հարցական արտաբերությունն կրող բառը գտնվում է նախադասության միջին մասում, ապա ամբողջ նախադասության արտաբերությունը բարձրացող-իջնող է. օրինակ՝ Ջոջանց պարծանք քաջ Դավիթը ո՞րն է արդյոք, բարեկամ *(Թ., II, 137)*։ Ես քեզ հարցնո՞ւմ եմ ուր լինելուդ մասին *(ԱՋ, III, 308)*։ Այնուհետև արդեն հայտնի է ընթերցողներին, թե այս ժամադրությունը ինչպե՞ս տեղի ունեցավ և ի՞նչ վախճան ստացավ *(Մուր., I, 229)*։ *Իսկ երբ հարցականի տակ գտնվող բառը նախադասության վերջում է, ապա ամբողջ նախադասությունը հնչում է բարձրացող՝ արտաբերությամբ. օրինակ՝* Նա ուզում էր իմանալ, թե ուրեմն Միրզայանի գործը դրանով վերջացավ և նա պիտի գնա՞ *(ԱՋ, III, 302)*։

...Բայց երազն ի՞նչ է։
Երազ, թե իրոք, այդ միթե մի՞ն չէ *(Թ., II, 76)*։

Այ ծաղիկներ, աղջկաս չտեսա՞ք, *(Իս., III, 272)*։ Դուք երբևիցե նման բան լսած կա՞ք *(Շեքս., II, 367)*։ Իսկ նա այդ միջոցին քեզ տեսա՞վ *(Նույն տեղում, 316)*։

§ *11. Հարցական նախադասությունները հաճախ ձևավորվում են հարցական դերանուններով, շաղկապներով, մակբայներով, որոնցից մի մասը հարցական նախադասության մեջ յուրահատուկ եղանակավորող դեր է կատարում։ Այդ բառերից առանձնապես շատ են կիրառվում* միթե, արդյոք, չէ որ։ *Սրանք նախադասությանը հաղորդում են կասկած, զիջականություն, անվստահություն. օրինակ՝* Չէ՞ որ նա էլ մեզ պես մտածող և զգացող հոգի ունի *(Իս., III, 159)*։

Մի՞թե վերջին պոետն եմ ես, վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե ի՞նչն է քեզ պատել, պայծառ Նաիրի։
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ, թե՞ վերքերն իմ հրահրուն
(Տ., I, 293)։
Եվ մի՞թե ես չերգեցի Ձեր կռիվը կարմիր, Ընկերներ *(Չե., 45)*։

Չէ՞ որ հնարավոր չէ թաքնվել
Փողի քսակի կամ պղպեղամանի մեջ *(Շեքս., II, 401)*։

§ *12. Մեծ մասամբ հարցական նախադասությունները ձևավորվում են հարցական դերանուններով ու մակբայներով, որոնք*

հիմնականում հարցական արտաբերությունը իրենց վրա են կրում, այդպիսի հարցական բառեր են **ով, ինչ, ինչպես, ոնց, որքան, երբ, ուր, որտեղից, ինչու, ինչի համար** *և այլն, որոնցից շատերը կարող են ոչ միայն ուղիղ ձևով կիրառվել հարցական նախադասության մեջ, այլև հոլովված. օրինակ՝*

Ո՞նց իմանար Սողոն...
Թե ինչո՞ւ կարպատներն առան
Ու Ռեյմսի տաճարը այրեցին *(Չե, 35)*։

Ո՞ւր է նրա թավշային ձայնը, որ ամբողջ երաժշտություն էր, ո՞ւր է նրա պլաստիկան *(Շիրվ., VIII, 172)*։ Ո՞վ չի սակայն երազում այդպիսի մահ *(նույն տեղում, 107)*։ Ե՞րբ էին տեսել նրանք անձանոթ մարդկանց այդքան դաժան դեմքեր *(Քոչար, 325)*։ Որտեղի՞ց այդ գիտեր Լիլիթ *(Իս., III, 226)*։ Ինչո՞վ կլցնես այս ահագին շտեմարանս *(նույն տեղում, 280)*։

§ 13. *Հարցական նախադասության առանձնապես կտրուկ, սպառնական նշանակություն են տալիս հակադրական* **թե չէ, թե ոչ** *շաղկապները, որոնք երբեմն ունենում են հարցական արտաբերություն, երբեմն էլ զուրկ են դրանից և միշտ գտնվում են նախադասության վերջում. օրինակ՝* Չգիտեմ... վերջիվերջո պիտի գա՞ն, թե՞ չէ *(Քոչար, 324)*։ Հոգիս բերանս բերիր, ասելո՞ւ ես, թե՞ չէ *(Շիրվ., VII, 258)*։ Արդյոք նա դրսում խոսացե՞լ է թե ոչ *(Ր., V, 48)*։

Ծանոթություն. **Թե չէ, թե ոչ** *շաղկապները համադասական բարդ նախադասության երկրորդ մասը առաջին մասին հակադրող շաղկապներ են* այլապես *նշանակությամբ. համադասության երկրորդ մասի զեղչումով դրանք մնացել են առաջին մասի համար իբրև եղանակավորիչներ։*

§ 14. **Ինչ** *հարցական դերանվանը հաճախ նախորդում է* **այս** *(էս),* **այդ** *(էդ),* **այն** *(էն) ցուցական դերանուններից մեկնումեկը. օրինակ՝*

— Էդ ի՞նչ կրակ կանես, մերիկ:
— Բալաս, վերքիդ դեղ կեփեմ *(Իս., I, 65)*։
Այդ ի՞նչ եք ուզում անել,— հարցրի ես *(Շիրվ., VIII, 171)*։

§ 15. *Վերևում հիշատակված հարցական բառերով ուղեկցվող նախադասությունների վերջում, մանավանդ երբ նախադասության մեջ կան անվանական լրացումներ, հաճախ հանդես է գալիս մի թարմատար* **որ.** *այս դեպքում նախադասությունը հարցմանը զուգահեռ արտահայտում է խոսողի ժխտողական, բացասական վե-*

բաքերմունքը. օրինակ՝ Դա ի՞նչ մարդ է որ: Ջյուն է եկել. ի՞նչ ձյուն է եկել որ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Այս թարմատար որ-*ը հաջորդ նախադասության շաղկապը պետք է լինի, որ մնացել է նույն նախադասության սղման հետևանքով։*

Որ թարմատարը նշանակում է հարցման աննպատակայնությունը (պատասխանի հարաբերությամբ) և մի հաջորդող հետևանքի նախադասության կրճատումը. օրինակ՝ Ի՞նչ կա որ *(ԱՉ, III, 110)։* Այդ ինչո՞ւ համար եք ասում որ *(նույն տեղում, 103)։*

§ *16. Հարցական նախադասությունները ըստ իրենց արտահայտչության լինում են երեք տեսակ՝* հավաստիական, հորդորական, ճարտասանական: *Հավաստիական հարցական նախադասությունը արտահայտում է այնպիսի հարցում, որին անպայման պատասխան է պահանջվում և հարցվում է դրական կամ բացասական պատասխան ստանալու համար։ Հավաստիական հարցական նախադասության մեջ չկա որևէ բան, որ հարցնողին հայտնի լինի. այսպիսի նախադասության հարցական արտաբերությունը լինում է մեղմ՝ առանց սուր ելևէջների. նույնիսկ խոսողին հայտնի է իր հարցման պատասխանի բնույթը, բայց այնուամենայնիվ նա ցանկանում է պատասխան ստանալ. օրինակ՝*

— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թարուլը քաջ չէր ու սիրուն...
— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա *(Թ., II, 149)։*

— Ինչո՞ւ էիք գնացել:— Հենց այնպես, քեֆս ավեց, գնացի,— պատասխանեց նա մի եղանակով, որ թույլ չէր տալիս խոսակցությունը շարունակելու *(Շիրվ., VIII, 326)։*

— Իսկ փողերը ետ ստացա՞ք:— Ոչ:— Ծխախոտի տո՞ւփը:

— Մի՛ հարցնեք *(նույն տեղում)։*— Ի՞նչ ունիս ինձ հայտնելու,— հարցրեց նա։— Իշխանը հրամայեց ինձ ասել, որ եկել է բանակը կարևոր գործի համար *(Մուր., III, 156)։*

§ *17. Հավաստիական հարցին հետևում է պատասխանը, որ կարող է լինել երկար՝ նայած հարցի բովանդակությանը, կարող է լինել և շատ կարճ* (հա, այո, ոչ). *պատասխանի մեջ լինում է հարցական նախադասության որևէ մասը՝ կախված պատասխանի*

քնույթից։ Պատասխան են դառնում ճարկավ, անշուշտ, անտարակույս, իճարկե, անպատճառ, բնավ, ամենևին *և այլ բառեր, որոնց նշանակությունը բացահայտվում է հարցական նախադասությամբ. օրինակ՝*— Բանտի՞ց են տվել դիպկը։— Իճարկե՛, կենդանի բաց չէին թողնի *(ԳՍԹ, II, 452)*։— Վաճանից լուր չկա՞։— Ոչ մի լուր *(նույն տեղում, 339)*։— Այնպե՞ս է, թե ոչ։— Անշուշտ։ *(Մուր., IV, 154)*։— Մի՞թե նա խելագար է։— Իճարկե, ինչպե՞ս է որ չես իմացել *(նույն տեղում, 147)*։— Բայց բացվե՞լ է այդ անկյունը։— Արդեն *(նույն տեղում, 177)*։

§ 18. Ինչպես երևում է օրինակներից, հաճախ հավաստիական հարցերին իբրև պատասխան, իբրև մասնակի լրացում հետևում են լրացական հարցերը. օրինակ՝— Քերե՞չ կտանե՞ս։ Քերե՞չ ես գնում *(ԳՍԹ, II, 467)*։— Գիտե՞ս, որ այրուձիից ճսան մարտիկ և մի ճաճի ճաճանաներ փախել են,— ասաց Գարեգինը։— Ե՞րբ *(ԴԴՎ, 315)*։— Տեսնո՞ւմ ես թափված խոտերը։— Հա՛, ի՞նչ է որ *(ՎԱՈՊ, 56)*։ *Այսպիսի հարցական նախադասությունները կոչվում են լրացական հարցական նախադասություններ։*

§ 19. Հարցական նախադասությունների մյուս տեսակը կոչվում է ճորդորական, *որով հարցնողը միաժամանակ հրահրում, դրդում է խոսողին, որպեսզի վերջինս համաձայնվի հարցի բովանդակությանը ըստ հարցնողի ցանկության և արտահայտվի դրական կամ բացասական։ Այսպիսի նախադասության արտաբերումը մեղմ է, ունի մտերմական շեշտադրություն, որ նշում է հարցնողի և խոսակցի մտերմության հանգամանքները, խոսողի վստահությունը։ Այս պարագայում նախադասության մեջ առկա են նաև համոզելու, աղաչանքի ու թախանձանքի երանգները, որոնք հարստացնում են նախադասությունը հուզարտահայտչական գույներով. օրինակ՝* Դու դարձյալ կգաս ինձ մոտ, այնպես չէ՞ *(Ր., II, 538)*։— Նինա՛, Արմենը սանատորիայում տխուր է, լավ չի՞ լինի, որ նրան բերենք մեզ մոտ։ Միևնույն է, նա այնտեղ չի բժշկվում *(Շիրվ., VIII, 376)*։ Թույլ տվեք ձեր պատկերը նկարել յուղաներկով։ Ես վաղուց էի ուզում խնդրել ձեզ այդ մասին։ Ուրեմն համաձա՞յն եք *(նույն տեղում, 391)*։ Բայց դու նամակը չես հանձնի, այնպես չէ՞։ *(Շեքս., II, 317)*։

§ 20. Հորդորական հարցական նախադասությունները հաճախ ուղեկցվում են զանազան ձայնարկություններով, հորդորող բառերով, որոնք ձևավորում են յուրահատուկ հորդորական արտաբերությունը։

§ 21. Հարցական նախադասությունների երրորդ տեսակը կոչվում է ճարտասանական։ Ճարտասանական *հարցական նախադասությունը միայն իր ձևով և արտաբերումով է հարցական. սա հաստատական նախադասություն է, որն իր մեջ պարունակում է իր պատասխանը. կիրառվում է միայն հուզարտահայտչական բարձր լիցք հաղորդելու և ուշադրություն գրավելու համար։*

Սովորաբար հարց ու պատասխանը կատարվում է երկխոսության միջոցով. խոսողներից մեկը հարցնում է, իսկ մյուսը պատասխանում. սակայն ճարտասանական հարցման դեպքում կամ ընավ պատասխանի կարիք չի զգացվում և կամ խոսողը ինքը հարցադրում, ինքն էլ պատասխանում է. ստացվում է մենախոսություն հարց ու պատասխանի ձևով, որով խոսքը ստանում է կենդանություն և առաջ է բերում հետաքրքրություն։

— Ինչո՞ւ էր վախենում: Փոքր սատուծո, հայոց թագավորը շատ ամրոցներ ուներ, կարող էր մեզ դնել նրանցից մեկի մեջ և պահապաններ կարգել մեզ վրա. ինչո՞ւ անպատճառ կուրացնել. ինչո՞ւ երկու մարդու, յուր իսկ հարազատների արևը հավիտյան խավարեցնել: Ինչպե՞ս կարողացավ նա դահճին այդ անագորույն հրամանը տալ... Ինչո՞ւ, ինչո՞ւ նրան էլ կուրացրավ: Չէ՞ որ նա ո՛չ մի հանցանք, ո՛չ մի մասնակցություն չուներ այն դժոխային խռովությունների մեջ... Մի՞թե, վերջապես, նա ամենափոքր զութ անգամ չուներ... Իմ ապարախտ դստեր վրա... *(Մուր., III, 136)։*

Զորքը գոյություն ունի միայն արտաքին թշնամու դեմ կռվելու համար, իսկ ներքին կյանքում նա մի չեզոք ուժ է,— հավատացնում են նրանք:

Ինչի՞ վրա են հիմնում իրենց ուժը, իրենց շահագործությունը իշխող դասակարգերը բոլոր ժամանակակից պետությունների մեջ: Ինչո՞վ են նրանք սարսափի և հնազանդության մեջ պահում ժողովրդական հալածվող ու հարստահարվող մասսաները, ո՞ւմ միջոցով է բուրժուազիան ամեն տեղ խեղդում պրոլետարիատի ազատագրական շարժումը, խանգարում նրանց դասակարգային կռիվը... Ո՞վ է կանգնած այս րոպեիս Ռուսաստանի հարյուր միլիոնավոր՝ ազատության ձգտող ժողովրդի առաջ, ո՞վ է գետերով հոսեցնում ըմբոստ բանվորների ու գյուղացիների արյունը, ո՞ւմ վրա է հենվում ամբողջովին ինքնակալական ռեակցիան... *(ՍՇԸն, 197)։*

§ 22. Երբեմն հարցնողը գիտե խոսակցի պատասխանը և այնպես է կառուցում նախադասությունը, որ ունկնդիրը կամ ընթերցո-

ղը նույնպես հասկանում է. այս նկատի ունենալով՝ տրվում է համապատասխան բացատրություն. օրինակ՝

Թշնամինե՛ր, ի՞նչ եք ուզում—
Որ դեգերե՞մ ես գլխահակ
Իմ երջանիկ հայրենիքում,
Իմ հարազատ արևի տա՞կ։
Հաճելի չէ՞ ձեր նորտ հոգուն,
Ձեր կործանված ոճովը չի՞
Կեցվածքն իմ սեգ և աննկուն՝
Սովետական խիզախ երգչի։
Այդ չեք տեսնի դուք, շպարված
Եվ անշպար թշնամիներ *(ՆՁՀԸ, 46)*։

§ 23. Ճարտասանական հարցական նախադասությունը ուժեղ արտահայտչական ուժ է ստանում, երբ խոսողը ինքը հարցնում է ժխտելու և իբրև պատասխան մի այլ բան հաղորդելու համար առանց ժխտական բառերի կամ մասնիկների։ Ժխտումը պատասխանի էության մեջ է, որը միաժամանակ կարող է ծառայել իբրև համեմատության եզր. օրինակ՝

— Էն մըթին ամպից արծի՞վն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով։
— Էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում
Թշնամու հոգին լցնում սարսափով։
— Էն Թըմկա ձորում սև ա՞մպն է գոռում,
Էն շա՞նթն է ճայթում էնպես ահարկու։
Էն Թըմկա ձորում Թաթուլն է կռվում,
Էն թուրն է շաչում էնպես ահարկու *(Թ., II, 146)*։
Էս ի՞նչն է ամպում զիլ թևին կուտա,
Գարնան զովասանք արտո՞ւտն է նխշուն,
Ու ձենը ինչո՞ւ զարհուրիկ կուգա,—
Վա՜խ, էս ագռավն է գլխիս պտտվում *(Իս., I, 123)*։
Սյունյաց բարձր լեռներում այդ շանթե՞րն են բոցկլտում
Հանդ ու ձորեր թնդում են որոտալից շաչյունով,
Դավիթ-Բեկի վառ թրերն են կայծակում,
Ամեն մի սիրտ թնդում է նժույգների դոփյունով *(ԱԻԵ, 89)*։

§ 24. Ճարտասանական հարցման այս ձևը սակավ ուղեկցվում է նաև ժխտական պատասխանով, որին հաջորդում է համեմատությունը՝ իբրև այդ ժխտումից բխող այլ պատասխան. օրինակ՝

էս բարձր ժեռուտ սարի գագաթան բազա՞ է նստած,
Թե՞ էծը վայրի չըլոտ ոտներով է էնտեղ հասած.
Ամպի կտո՞ր է կըպել երկնամերձ էդ սարի ծայրին,
Թե՞ ծառ կամ մացառ բըսնում անում են հանքնակ վայրին:
Ոչ ծառ և ո՛չ բույս, ո՛չ հավ թևավոր և ո՛չ անասուն
Կարող են հասնել ոտով կամ թևով էդ սարի գըլխուն,
էդ սարի օդեն մենակ մեկ մարդու դոշն է ծծել,
էդ սարի գլխուն մենակ մեկ մարդու ոտն է կոխել *(ՌՊ, I, 52)*։

գ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 25. Հրամայական կոչվում է այն նախադասությունը, որով խոսողը խոսակցին դրդում, հրահրում, հրամայում է կատարել մի որևէ գործողություն, կամ ընդհակառակը՝ դադարել այն անելուց։

§ 26. Հրամայական նախադասությունը հրամանին զուգահեռ արտահայտում է բազմազան կամային ու զգացմունքային երևույթներ, այն է՝ խնդրանք, հրավեր, աղաչանք, զգուշացում, հորդոր և այլն։ Վերջինները հաճախ դժվար է գրով դրսևորել. արտահայտելու ամբողջ բեռը ընկնում է արտաբերական հնարավորությունների վրա, ուստի գրողները հաճախ ցուցումներ են տալիս այս կամ այն հրամայական նախադասությունը արտաբերելու եղանակների վերաբերյալ. օրինակ՝ ժամանակի և տարածության պատճառն եմ ուզում իմանալ: *Պատասխանեցե՛ք* ինձ և կամ մեռե՛ք... Ամպրոպի նման որոտաց Բողդիխանը, և բովանդակ ապարանքը դղրդաց, և նրա դաժան աչքերի դեղին ծովերը փոթորկեցին մոլեգին *(Իս., III, 203)*։ Լավ, աստված քեզ հետ,— մեղմացավ Վարազվաղանը,— կմտածեմ, *գնա՛ (ԴԴՎ, 212)*։ *Լռի՛ր*, աղաչում եմ քեզ. *մի՛ հիշիր* նրա անունը, գոնե *մի՛ հիշիր* իմ առաջ *(Մուր., III, 165)*։

§ 27. Բացի հիշյալ ուղեցույց միջոցներից, կան և այնպիսի բայեր, որոնք արդեն իրենց իմաստի (և ոչ թե հրամայականի ձևի) մեջ են ամփոփում վերոհիշյալ հուզարտահայտչական երևույթները. ուստի այլևս կարիք չի լինում արտաբերության համար տրվող մեկնություններին. օրինակ՝ *Գթա՛* ինձ և *թո՛ղ* նորից մի դար ևս ապրեմ *(Իս., III, 217)*։ *Ների՛ր*, որ այսքան պարզ եմ դնում խնդիրները *(Սիրաս)*։ Գթալ *և* ներել *բայերից մեկը աղաչանք է արտահայտում, իսկ մյուսը՝ խնդրանք։*

§ 28. Հրամայական նախադասության մեջ կիրառվում է միայն երկրորդ դեմքը, որն արտահայտվում է հրամայականի վերջավորության միջոցով. այդ պատճառով հրամայական նախադասության մեջ մեծ մասամբ ենթակա չի կիրառվում, մանավանդ որ գերազանցապես հրամայվում է այն մարդուն, որը կանգնած է լինում հրամայողի մոտ։ Հրամայական նախադասության մեջ ենթական երկրորդ դեմքի անձնական դերանունն է։

Դերանուն ենթական կիրառվում է, երբ անհրաժեշտ է ուրիշներից զատել այն մարդուն, որին ուղղվում է հրամանը, և երբ անհրաժեշտ է մեղմ խնդրանքի երանգ արտահայտել. օրինակ՝ Սարգի՛ս, դո՛ւ գնա և ո՛չ թե Սուրենը: Բայց դու նստի՛ր, ազնիվ հոգի, որ ես հանգչեմ քո գրկում (Թ., II, 164)։

— Դու գնա, պա՛պի, միամիտ քնի՛ր,
Ես աչքի լույսը կհանեմ գողի (Նույն տեղում, 38)։

— Դո՛ւ եղիր նրանցից մինը, Սևադա՛ իշխան (Մուր., III, 141)։ Այժմ դու գնա՛ Ամրամի մոտ և աշխատի՛ր համոզել նրան (Նույն տեղում, 144)։

§ 29. Դերանունը հրամայական նախադասության մեջ գործածվում է նաև այն ժամանակ, երբ դերանունը իր վրա կրում է տրամաբանական շեշտ. հրամայական եղանակով գործածված բայը անշեշտ մնալով փոխում է իր բնույթը. Դո՛ւ էլ, իշխա՛ն, ընդունիր, թե չարագործ հազարացու մինն է քեզ կուրացրել (Մուր., III, 143)։ Ուզում ես, ձիդ թող ինձ մոտ, դո՛ւ էլ նրա պես ոտով վազի. գուցե հասնես (Թ., III, 173)։ Ուրեմն դո՛ւ եղիր մեր դատավորը (Շիրվ., VI, 282)։ Նրա անբախտ շիրմի վրա Պաղ ջուր ածա աղբյուրի, Դո՛ւ էլ գնա՛, նոր սեր արա՛, Այդպես է կարգն աշխարհի (Թ., II, 68)։ Դո՛ւ անցորդի պես քեզ միայն զգա: Ազատության զանգ, դո՛ւ վեհ ղողանջե Կովկասյան վսե՛մ, վես բարձունքներից, ինչպես մրրիկ շաչե՛, շառաչե՛ Մինչև սիգապանծ Ազատն Մասիս (Իս., I, 142)։ Հայտնվի՛ր դու ինձ խաղաղ, անթախիծ, Ամոքի՛ր սիրտս քո անհուն սիրով (Տ., I, 287)։

§ 30. Դերանուն-ենթական որոշ դեպքերում այնքան է թուլացնում հրամայական նախադասությունը, որ այս վերջինը ամբողջովին վերածվում է եղանակավորիչ կապակցության՝ թե՛ ենթակայի և թե՛ ստորոգյալի չեզոքացմամբ։ Այդ տեսակ կապակցությունները դառնում են ոճավորման յուրահատուկ միջոցներ. օրինակ՝ Դու մի ասիլ՝ գայլերը մոզին կերել են: Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում

փանձ է եղել պահած (*Թ., III, 156*)։ *Դու ասա*՝ մարդ դառնա, թե չէ զազանություն ով ասես կանի։ *Դու ասա*՝ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի (*Նույն տեղում, 158*)։

§ *31. Հրամայական նախադասությունը խրախուսական, սրտադրող, համոզող, մեղմ, մտերմական երանգ է ստանում, երբ կրկնվում է, օրինակ՝ Մի՛ վախիր, արի՛* ինձ հետ, արի՛ (*Նույն տեղում, 87*)։ *Հանգստացի՛*, Բայրամ, *հանգստացի... Ե՛կ, խեղճ արի՛ ազատ արա՛* ինձ, *բա՛ց թող*, բա՛ց թող գնամ (*Նույն տեղում, 88, 158*)։ Միշային լավ տիրություն արա՛, այդ Վերային էլ գրի՛ր, գրի՛ր (*Սիրաս*)։

§ *32. Հրամայական նախադասությունները մտերմական, աղաչական, մեղմ համոզող երանգ են ստանում, երբ ունեն կողմնակի բառեր, ձայնարկություններ, մակբայական բառեր և այլն. օրինակ՝*
— Ա՜յ տղա, դե շուտ արա՛, հացի՛ է՜... (*Թ., III, 153*)։— Տո՛, վեր կաց է՜, մթնեց է՜ (*Նույն տեղում*)։

— Դե գոնե անունդ ասա՛ (*Թումանյան*)։— Հայրի՛կ, մի՛ անիր, հայրի՛կ, խնայի՛ր նրան (*ԴԴՎ, 263*)։

§ *33. Հրամայականի հետ հաճախ կիրառվում է* մի (մեկ) *մակբայը, որը հրամայականին տալիս է ըղձական, կամային նշանակություն. օրինակ՝* — Լավ, մեկ տո՛ւր, տեսնենք ժամացույցդ (*Իս., III, 291*)։ Սաշա՛, մտածի՛ր մեկ ասածիդ վրա... Որդին իր նորը ոչնչացնողի հետ (*Փափ., 615*)։ Նայի՛ր մեկ, ինչպես լավ է այս բոլորը (*Նույն տեղում, 278*)։ Մի կարգին հագնվի՛ր, դուրս արի քարմացի՛ր, ախր կյանքդ մաշվում է (*Թաթիկյան*)։

§ *34.* Դեհ, դե *ձայնարկությունն արտահայտում է անհամբերություն, հորդոր, աճապարանք, խնդրանք. օրինակ՝* — Դե, ձեներդ կտրե՛ք ու ինձ լսե՛ք (*Գուլակյան*)։ — Դե, շուտ, քշե՛ք ախոռ. չմրսեն (*ԴԴՎ, 88*)։— Դեհ, համբերի՛ր, հիմի կտանեմ բժշկին։ Դեհ, մի՛ քաղի մարդու հոգին, դիմացի՛ր, էլի (*Նույն տեղում, 89*)։ Դեհ, կարդա՛, տեսնենք... որտեղ մնացինք (*Փափ., 595*)։

§ *35.* Դե, դեհ *կիրառվում են նաև* լավ, հա, է, հը, էլի *բառերի հետ, որոնք հարստացնում են հրամայական նախադասության արտահայտչական հնարները, ընդ որում դրանք կարող են և՛* դե *ձայնարկության հետ միասին դրվել, և՛ առանձին՝ նախադասության վերջում կամ սկզբում. օրինակ՝* Դե լավ, հոգս մի՛ անիլ, ես քեզ նեղություն տվողը չեմ (*Նույն տեղում, 574*)։ Դե լավ, ձայնդ կտրի՛ր, մարդ է գալիս (*Շիրվ., VI, 157*)։ Դե լավ, քիչ զոռ տո՛ւր խելքիդ, նստի՛ր խաղանք (*Նույն տեղում, 174*)։ Լավ դե... գնա՛ հագնվիր

(Փափ., 563)։ Հը, դե տեսե՛ք, ինչ է ասում էս անզգամը *(Թ., III, 167)*։ Գնա՛ դե է, հապա ինչու չգնացի՞ր: Դե ասա՛ էլի:

§ 36. *Դրանցով, իհարկե, չեն սպառվում այն միջոցները, որոնք նպաստում են մեր լեզվի հրամայական նախադասությունների ոճաիմաստաբանական հնարների հարստացմանն ու բազմազանությանը։ Բանավոր խոսքից գրականին անցել են* տո, հա, ահ, է, ուհ *կոչական և այլ կարգի ձայնարկություններ, որոնք արտահայտում են բարկություն, արհամարհանք, անհամբերություն, ձանձրույթ, գոհունակություն, դժգոհություն և այլն. օրինակ՝* — Տո՛, թո՛ւյլ տուր, թույլ տուր, ես պարզաբանեմ, եռում է Հովասն ու չի դադարում: Տո՛, շաշ կնիկ, հասկացի՛ր,— գոռաց «պունուր Վաղոն»: Հա՛ հա՛, հա՛, ասա, խոսիր է՜, Լաչին *(Զարյան)*։ — Է՜, մի՛ խոսիր, քույրիկ, էդպես *(Թ., I, 344)*։

§ 37. Ոչ *ժխտականով կազմված հրամայականն արտահայտում է խստություն, ընդհատում, խզում, վճռականություն. օրինակ՝* Ո՛չ, սպասի՛ր: Այժմ հենց այս լեզվով պիտի խոսեմ քեզ հետ: *(Շիրվ., VII, 189)*։ Ո՛չ, ո՛չ, Աննա, մի՛ ասա այդ բանը, մի՛ ասա... *(Նույն տեղում, 170)*։

§ 38. *Հրամայական նախադասությունը, ինչպես ասվեց, մեծ մասամբ կիրառվում է առանց ենթակայի, իսկ եթե ենթական կա, ապա վերջինս մեծ մասամբ նախադաս է։ Եթե դերանուն-ենթական ետադաս է, հրամայականի կտրուկությունը մեղմանում է և հրամանը փոխվում է մեղմ աղաչանքի. օրինակ՝* Հայտնվի՛ր դու ինձ խաղաղ, անբախիծ, ամոքի՛ր սիրտս քո անհուն սիրով *(Տ., I, 287)*։

§ 39. *Հայերենում հրամայական նախադասությունները արտահայտվում են բայի հրամայական եղանակի երկրորդ դեմքով, մյուս ձևերը, որոնք հրամայականի նշանակություն ունեն, այստեղ նկատի չեն առնվում։ Հրամայականի մեջ պետք է նկատի առնել միայն անորոշ դերբայի հրամայական կիրառությունը, որն ուժգին ու կտրուկ երանգ է հաղորդում, արտահայտում է խոսողի հոգեկան գերազանց լարվածությունը, առաջին գծի վրա է քաշում ոչ թե գործողի, այլ գործողության կարևորությունը և ընդգծում է հրամանի կարևորությունն ու լրջությունը. օրինակ՝* Մեքենան շուտ քաղաք տանել, անմիջապես *(Վաղարշյան)*։ Այժմ քեզ մարտական խնդիր եմ տալիս. շուտ առողջանալ *(Սիրաս)*։ Վռնդել այդ անկոչ հյուրին, դուրս նետել նրան իմ հողից, իմ տերությունից *(Փափ.)*։

§ 40. *Վերևում նշեցինք, որ* դու *դերանվան հետ բայերը կորցնում են իրենց բայական նշանակության մի մասը, հետևապես և*

թուլանում է հրամայական եղանակը։ Հրամայականի այդ տեսակ թուլացումը նկատվում է գալ, տեսնել, թողնել, բերել բայերի որոշ գործածությունների մեջ. օրինակ՝ գալ բայով հրամայականը կամական ըղձականի հետ արտահայտում է խնդրանք՝ միասնաբար մի բան անելու կամ չանելու համար. օրինակ՝ Դե արի ես դրա կարճ պատմությունը անեմ *(Թ., V, 34)*։— Եկ ներս կանչենք էս աղքատ կնկանն ու իր երեխին *(Թ., III, 166)*։ Այս գործածությամբ հրամայականի նշանակությունը այնքան է թուլանում, որ կարող է ուղղվել ոչ միայն երկրորդ դեմքին, այլև հենց իրեն խոսողին. օրինակ՝ Արի ու սրանից բան հասկացիր: Արի ու մի անիր, որ նշանակում է հարկադրանք, ստիպմունք, անելանելիություն։

Բանավոր խոսքի մեջ գալ և տեսնել բայերի հրամայականը այս կիրառությամբ նշանակում է՝ պարզվում է, դուրս է գալիս, իմացիր. օրինակ՝ Ամա, արի տես, որ ինձ ու քեզ համար օրենքով շարժվողները մեկ չեն *(Փափ., 579)*։ Բայց արի, դու տես, թարսը պատահեց *(ՆՋՀԸ, 161)*։

§ 41. Տեսնել բայի հրամայականը, կորցնելով իր նյութական նշանակությունը, այլ բայերի հրամայականի կամ այլ եղանակների հետ՝ արտահայտում է հանձնարարություն, գործողության կատարման անհրաժեշտություն, ուշադրության հրավիրում, սպառնալիք, զգուշացում, օրինակ՝ Տե՜ս, դաս լավ սովորի՛ր, հա՜: Տե՜ս, դու էլ հասար նպատակիդ *(Վաղարշյան)*։ Մի տե՛ս, մի տե՛ս, Թե լրբի պես Գլուխը բաց, Ազատ նստած՝ Ոնց է կանչում, Չի ամաչում *(Թումանյան)*։

Տե՛ս կխռովե՜մ,
Լաց կըլեմ ես է՜լ...
Չեմ խոսիլ քեզ հե՜տ...
Չեմ սիրիլ քեզ է՜լ... *(Թ., II, 70)*։

§ 42. Թողնել բայի հրամայականը այլ բայերի հրամայականի և ըղձականի հետ արտահայտում է պատվեր, խրատ, զգուշացում, խնդրանք և այլն։ Օրինակ՝ Թո՛ղ փախիր: Անմիջապես թո՛ղ եկ: Թող ինչ ուզում է լինի. կա՛ց, մի գնա.— աղաչեց այրած կույսը *(ԴԴՎ, 205)*։

դ) ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 43. Հաստատական, հարցական ու ժխտական նախադասությունները հուզարտահայտչական ավելի մեծ և բազմազան երանգներ են դրսևորում, երբ արտահայտվում են իբրև բացականչական

նախադասություններ։ Բացականչական նախադասությունները առանձնանում են իրենց յուրահատուկ հնչերանգով։ Պատմողական նախադասության համեմատությամբ բացականչական նախադասության արտաբերումը ավելի բարձր է և տևական։ Բացահայտ կերպով մյուս բառերի շարքից առանձնացվում է այն բառը, որը ենթարկվում է բացականչական հնչերանգին, չնայած որ միաժամանակ բացականչական հնչերանգը տարածվում է նրա ամբողջ նախադասության վրա։

§ 44. *Բացականչական նախադասությունները հաճախ ուղեկցվում են* ինչ, որքա՛ն, ինչպես, այդպես, որպիսի, ինչպիսի *և այլ բառերով. այս դեպքերում հաճախ հարցական և բացականչական նախադասությունների հնչերանգները մոտենում են. միևնույն նախադասությունները արտաբերվում են երբեմն հարցական, երբեմն էլ բացականչական հնչերանգներով. օրինակ՝*

— Ինչպե՞ս չամաչեցիր, գոչեց ահեղ
Հնչյունների արքան արդեն սառած *(Չարենց)*։
Ի՞նչքան աչք են վրադ հառել,
Նայում են քեզ
Հիմա մեզ պես,
Ի՞նչքան աչք է նայել, մարել
Եվ կամ ի՞նչքան
Դեռ պիտի գան,
Որ անհայտից կյանք չեն առել *(Թ., I, 198)*։

Առաջին օրինակում գրեթե իմաստային տարբերություն չկա, իսկ երկրորդի մեջ հարցականի նպատակը կլիներ իմանալ քանակը, մինչդեռ բացականչականը այդպիսի նպատակ չունի, այլ կողմնակի կերպով հուշում է՝ Ո՞վ գիտե ինչքան: *Այս դեպքում էլ հարցականը բացականչականից տարբերվում է արտաբերական ուժեղ անկումով ու բարձրացումով, իսկ վերջինս առանձնանում է տևական բարձրացումով։*

§ 45. *Բացականչական նախադասությունները իրենց բնույթով երկու տեսակ են՝ մեկն այն է, որ խոսողը իրականության մեջ կատարվող երևույթների նկատմամբ արտահայտում է իր վերաբերմունքը և մյուսն էլ՝ երբ նա դրսևորում է իր ներքին զգացումները։ Մի դեպքում արտահայտում է հավատ, կասկած, մտածումներ, անվստահություն, անսպասելիություն, զարմանք, արհամարհանք, ծաղր, իսկ մյուս դեպքում՝ վախ, սարսափ, բարկություն, ատելու-*

թյուն, մեղմություն, սեր, փաղաքշանք և այլն։ Մտածումների ու զգացումների այդ բազմապիսի երևույթները հարստացնում են բացականչական նախադասությունները իմաստային ու ոճաբանական նրբություններով, արտահայտչական տարբեր երանգներով ու հնչերանգների բազմազանությամբ, օրինակ՝ Եվ ինչքա՜ն դժբախտ է այն մարդը, որ կմեռնի օտար հողում և բախտ չի ունենա խառնվել իր ծնողների հողին *(Իս., III, 122)։* Քանի՜, քանի՜ անգամ նա ճանապարհ է ընկել դեպի Ապար աշխարհը *(ԴԴՎ, 271)։*

— Ա՜խ, չէ՛, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ. ես երբե՜ք, երբե՜ք բախտ չեմ ունեցել *(Թ., II, 56)։* Ա՜խ, նա գնա՜ց, նա գնա՜ց... *(Նույն տեղում, 68)։*— Ի՜նչ բախծոտ է հորիզոնը՝ նման խաբված աղջկա *(Հ. Շիրազ, ՀԸ, 331)։* Ա՜խ, չէ, ջրերն են պահել հորս ձայնը դեռ *(Նույն տեղում, 226)։* Որքա՜ն բարի է նա *(Ր., II, 542)։* Էդ պաղ ձուկը ինչպես է գրում այդպիսի կրակոտ բաներ *(Շիրվ., VIII, 126)։*—Մայրի՛կ, նայիր, արևն ինչպես դեղնել է, ցուրտ է ի՜նչպես *(Իս., I, 80)։* ...Ա՜խ, ի՜նչ վսեմ են երկինքը լազվարթ, երկիրը լաջվարդ... *(Նույն տեղում, 53)։* Ո՜նց էր երգում, խորունկ, անվերջ լույս ծովի մեջ, անփույթ լողում, խնդում, խաղում *(Թ., I, 329)։* Ինչքա՜ն ցավ եմ տեսել ես... Քանի՜ ձեռքից եմ վառվել *(Նույն տեղում, 206)։*

§ 46. Բացականչական նախադասությունները հարստանում են նոր իմաստով ու ոճական նրբություններով, երբ ուղեկցվում են ձայնարկություններով, որոնք վերևում նշված առանձնահատկությունները բովանդակելով, նշում են նաև խոսողի դիմախաղերը, շարժումները, կեցվածքը և այլն. օրինակ՝ Վո՜ւյ, քոռանա՜մ ես *նախադասությունը կարդալիս մենք անմիջապես պատկերացնում ենք, թե ինչպիսի զարմացական դեմք ունի այդ ասող կինը, ապա ձեռքի շարժումները՝ երեսը վար բերելիս և այլն, որոնց միանում են նաև ձայնի ելևէջների ճոխությունը։*

Ա՜խ, եթե լինեը, ա՜խ, եթե լինեը:
Օ՜, հարազատ, սիրած, եկա՜ր կրկին,
Իմ քնքշագին աշուն... *(Տերյան)։*
Ու էս գիշեր աստղ մի պայծառ
Տխուր կանչեց, վար ընկավ.
Ա՜խ, էն սիրու աստղն էր պայծառ
Սիրուս երկնուց վար ՚ընկավ *(Իսահակյան)։*
Ա՜խ, չար մարդիկ թող չիմանան *(Շիրազ, ՀԸ, 324)։*

§ 47. *Բացականչական նախադասություններ են համարվում նաև ողջույնները, բարի ցանկությունները, որոշ օրհնություններ ու անեծքներ, որոնք նույնպես հարուստ են հուզարտահայտչական նրբություններով. օրինակ՝*— Մնաք բարյա՞վ...— Գնաս բարո՞վ, Ճանապարհդ ի բարին *(ԴԴՎ, 270)*։ Մնաք բարով, դո՛ւք, արոտնե՛ր սիրուն, Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն *(Թ., I, 411)*։ Քո արևին հատնող և քո երգին, երգին, եվ շրշյունին փափուկ, և բեկումիդ ողջո՞ւյն *(Տերյան)*։ Երթաս բարով, աստված քեզ հետ, Ոտքըդ քարի թող չը գա *(Իս., I, 118)*։ Ո՞վ, որ էսքան բարիք ու փառք Աշխարքն անծեր, ծովերն անտակ, Ըստեղծել ես, փռել, լցրել, Ո՞վ բարեգութ, քեզ՛ եմ խնդրել,—Ինչպես որդիս իր մոր գրկին Գնաց կարոտ, աչքն աշխարքին, Նրանք էլ թող իրենց կյանքից Կարոտ գնան լիքն աշխարհքից. Եդեմ այգին կտրի թող փուշ, Իրենք գազան չար ու ապուշ *(Թ., II, 153)*։

§ 48. *Բացականչական նախադասություններն ավելի աղքատ են լինում արտահայտչական միջոցներով, երբ չեն ունենում առանձին բացականչական բառեր ու ձայնարկություններ։ Այս դեպքում նախադասությունը ձևավորվում է միայն հնչերանգով. օրինակ՝* Ջո՞ւր տամ, պաղ ջո՞ւր, սառը ջուր *(Շիրազ, ՀԸ, 126)*։ — Այդպե՛ս է. Ես պնդում եմ. Նրանք օգնություն կստանան, կազատվեն և դուք, հոռետեսներդ, կամաչեք այն ժամանակ... — Եռանդով բացականչեց օրիորդ Սևիկյանը *(Մուր., IV, 7)*։

§ 49. *Սրան միանգամայն հակադիր կերպով հաճախ նախադասությունը ծանրաբեռնվում է բացականչական տարբեր բառերով և համարյա դառնում է միայն զգացումային. օրինակ՝* — Վաշ-վի՜շ, վա՜շ-վի՜շ, ի՜նչ իմացանք *(Թ., I, 326)*։ — Վա՜յ, վա՜յ, հորեղբա՛յր, ի՞նչ ասեմ ես քեզ *(Թ., II, 117)*։

II ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱ

§ 50. *Իր ծավալով նախադասությունը կարող է ունենալ բազմաթիվ անդամներ. սրանցից ամենակարևորները նախադասության երկու գլխավոր անդամներն են՝* ենթական և ստորոգյալը։ *Մնացած անդամները կա՛մ սրանց լրացումներն են և կա՛մ սրանց լրացումների լրացումները։ Ուրեմն՝ նախադասության մյուս անդամները երկու գլխավոր անդամի նկատմամբ ստորադաս վիճակի մեջ են գտնվում և կոչվում են նախադասության երկրորդական անդամներ։*

Նախադասության գլխավոր անդամները իրար նկատմամբ հավասարազոր դրության մեջ են գտնվում. մեկը մյուսի լրացումը լինել չի կարող։ Եթե վերցնենք որևէ պարզ ընդարձակ նախադասություն և վերածենք մասերի, ապա կտեսնենք, որ այն բաժանվում է երկու հիմնական խմբի՝ ենթական իր լրացումներով և լրացման լրացումներով, ստորոգյալն իր լրացումներով և լրացման լրացումներով, եթե կան այդպիսիները։

§ 51. *Ենթական նախադասության այն գոյական կամ գոյականի առում ստացած (առարկայացված) անդամն է, որին վերագրվում է մի գործողություն, որը կատարում է տվյալ գործողությունը կամ ժամանակավորապես գտնվում է մի որևէ դրության մեջ և գերազանցապես համաձայնվում է ստորոգյալին դեմքով ու թվով։*

Ենթական կարող է դրսևորվել ամեն խոսքի մասով, միայն այն պայմանով, որ իբրև ենթակա հանդես եկող խոսքի մասը գոյականի առում ունենա։ Հայոց լեզուն այս կողմից շատ ճկուն է. բոլոր խոսքի մասերը, եթե անհրաժեշտ է լինում, հեշտությամբ գոյականացվում, առարկայացվում են և կիրառվում են իբրև ենթակա, այսինքն՝ ստանում են գոյականի առում։

Ուրեմն՝ ենթակա կարող են լինել բոլոր գոյականները (հոդով և առանց հոդի), դերանունները (մի մասը հոդով, մյուսը առանց հոդի), ածականները, բայերը (դերբայները), շաղկապները, մակբայները և այլն։ Հայերենում ենթակա կարող են դառնալ մի ամբողջ նախադասություն, դիմավոր բայ, ամբողջական բառակապակցություններ և այլն, որոնք նախադասության մեջ դառնում են ստորոգյալի տերը, հատկանիշի կրողը կամ առարկան, որը դրվում է ուղղական հոլովով, և որի մասին մի բան ասվում է։

1. ԳՈՅԱԿԱՆՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԵՆԹԱԿԱ

§ 52. *Ինչպես ասվեց, բոլոր բառերն իրենց սովորական գործածությամբ ենթակա չեն լինում։ Ամենից հաճախ գոյականներն են, որ կիրառվում են ենթակայի պաշտոնով։ Գոյականները ենթակա դառնալիս օժտվում են ձևաբանական միայն մի կարգով, այսինքն՝ դրվում են ուղղական հոլովով։ Ենթակա լինելը կապ չունի նրանց սեռային, թվային, վերացականության, թանձրացականության, որոշվածության, անորոշության, հատուկ կամ հասարակ լինելու հետ։ Քերականական վերոհիշյալ կարգերը գոյականին չեն օժտում ենթակայի դերի համար. դրանք, իբրև բառի քերականական ձևավորվածության արտահայտություն, անհրաժեշտ են գոյականի բոլոր գործածությունների համար։ Այդ է պատճառը, որ քերականական այս կամ այն կարգի բացահայտումը կապվում է ոչ թե նախադասության անդամների վերլուծության հետ, այլ առընչվում է խոսքի մասերին։ Գոյական ենթակաների օրինակները շատ սովորական են. ահա մի քանիսը։*

Խոջան արտաքինով, անշուշտ և ներքինով, պրիստավի հակապատկերն էր *(Մուր., V, 14)*։ Նրանց համար այսօրվա *կոպեկը* վաղվա ռուբլուց թանկ է *(Շիրվ., VI, 303)*։ Բեմի աջ անկյունում դրված էր ամբիոնանման մի *հարմարություն* *(Զե, 298)*։ Հանդիսականների աչքին ներկայացավ մի բավականին տարօրինակ, անսպասելի *տեսարան* *(նույն տեղում)*։ Ու ամեն անգամ *տղաներն* ուրախ խաղում էին շների հետ *(ՍԶ, III, 354)*։ Թեհրանի վրա իջել էր իրիկնամուտի *մշուշը*։ Փոշու *մետաքսն* արևի ճառագայթների հինվածքով երկինք էր ելնում *(ԳՍԹ, II, 209)*։ *Համիկը* կարմրեց նրա այդ կատակից *(ՎԱՍԱ, 211)*։ Նրանցից քիչ հեռու մի սեղանի շուրջը բոլորել էին քաղաքի նշանավոր *աստղերը* *(ՍԶ, III, 261)*։

§ 53. *Հայերենում երբեմն գոյականները շփման եզրեր են հան-*

դես բերում մյուս խոսքի մասերի հետ թե՛ ըստ նշանակության և թե՛ ըստ ձևի. օրինակ՝ գոյական պետք է համարել ած-ով և իք-ով վերջավորվող մի շարք բառեր։ Ած-ով վերջավորվողները համընկնում են հարակատար դերբայների հետ, ուստի կարող են ըմբռնվել իբրև հարակատար դերբայ. սակայն ած-ով վերջավորվող մի շարք գոյականներ՝ անկախ հարակատար դերբայից, անցել են գրաբարից և իբրև այդպիսիք էլ կիրառվում են։ Այդ կարգի գոյականներ են՝ արարած, կոտորած, վարակած, արկած, ասացված, զանգված, հատված, հարված, հոդված և այլն։ Սրանց կարգին պատկանող ուրիշները մեր լեզվում վերջից ստացել են ք մասնիկը և այդ ձևով են գոյականացել. օրինակ՝ բանվածք, մանվածք, դարձվածք և այլն։

Իք-ով վերջավորվողները գրաբարի ապառնի դերբայական ձևերից են կազմված։ Այդ դերբայը մեր լեզվում երեք գործածությամբ է մնացել՝ ածական, գոյական և մասամբ բայ։ Իք-ով վերջավորվածները մեծ մասամբ գոյական են։ Ահա մի քանի օրինակներ, որոնց մեջ հիշյալ մասնիկներով բառերը գոյական են։

Որի արդյունքը եղավ բազմաթիվ հայ զոհերի կոտորածը (Մուր., III, 42)։ Որ քնկար,—ազատվելիք չկա (Զե, 260)։ Տպագրված հոդվածներն արդեն կազմում են մի ամբողջ հատոր (Թ., IV, 5)։ Կամսարյանին այլևս առարկելիք չէր մնում (Մուր., V, 129)։ Բայց այդ ռոպեում որսորդի ուշադրությունը գրավեց մի այլ արարած (Րաֆֆի)։ Ոմանք ասում են սուտ է, կոտորած չկա (Թ., IV, 203)։

§ 54. Այս նույն բանը պետք է ասել գրաբարի անցյալ դերբայի մասին։ Մի շարք բայերից կազմված անցյալ դերբայը արդեն գոյականացել է. օրինակ՝ Այդտեղ գտնվում էին Սիսականի այն բոլոր ընտրյալները (Մուր., V, 262)։ Եվ նորից ամենուրեք դալկանում է Արևելքի հին տառապյալը՝ հայ ժողովուրդը (Թ., IV, 203)։

§ 55. Մի շարք գոյականներ մասամբ կորցրել են իրենց նյութական թանձրացական նշանակությունը և դարձել են այնպիսի բառեր, որոնք իրենց կիրառությամբ մոտենում են անորոշ դերանուններին։ Այս երևույթը նորություն չէ, հատուկ է ամեն լեզվի և կենդանի լեզուների համար շարունակ գործող օրինաչափություն է։ Իբրև օրինակ կարելի է վերցնել մեր լեզվի ինչ դերանունը, որ այժմ իբրև գոյական այլևս չի կիրառվում, մինչդեռ սկզբնապես այն գոյական է եղել։ Գոյական է դրա ածանցված ինչք ձևը։ Այժմ արդեն կիսով չափ անորոշ դերանվան նշանակություն են ստացել մարդ,

մարդումուրդ, բան, *բարբառային*՝ զատ *գոյականները, որոնք շատ հաճախ իբրև ենթակա կիրառվելով՝ կորցրել են իրենց նյութական թանձրացյալ նշանակությունը. օրինակ՝* Ոնց որ թե *մարդի* երեխեն թշնամու ձեռին քրքրելիս ըլեն, ու *մարդ* կարենա ոչ թե օգնի *(Թ., III, 63)*։ Կան *բաներ*, որոնց մասին պետք է զգույշ լինել *(Շիրվ., VI, 51)*։ Այս երեկո մի *բան* պետք է պատահի *(Նույն տեղում, 57)*։ Ուր *մարդ* չէր կարող խղճալ ու ցավել *(Զն, 3)*։ Բանն այն է *(Շեքս., II, 210)*։ Վե՛ր կացեք, վե՜ր, ամբողջ գիշեր *Մարդ* է գնում ու գալի *(Թ., II, 148)*։ էդ սարսափելի *բանը* դառավ իսկական նապաստակ *(ՎԱՈՊ, 211)*։ Այլանդակ *բանը* նրանց համար էլ անտանելի է *(Նույն տեղում)*։ Պակասում էր սովորական մի *բան* *(Զն, 279)*։ *Զատ* չկա *և այլն։*

§ 56. *Երբեմն բազմակիություն, տևականություն, խստություն, ուժգնություն արտահայտելու համար գրողը կրկնում է ենթական։ Այս երևույթը ունի նաև ոճաբանական այն նշանակությունը, որ գրողը կամ խոսողը դրսևորում է իր այս կամ այն վերաբերմունքը առարկայի նկատմամբ։ Ենթակայի կրկնությամբ նախադասության մեջ որևէ էական փոփոխություն չի կատարվում. այսինքն՝ ենթակայի ու ստորոգյալի, որոշիչի ու որոշյալի, հատկացուցիչի ու հատկացյալի և վերջապես բացահայտիչի ու բացահայտյալի քերականական հարաբերությունները մնում են նույնը. օրինակ՝* Եվ ո՛չ մի *ծիծառ*, և ո՛չ մի *ծիծառ* չի բերի իր հետ, Ինչ որ կորցրի՝ անդարձ կորցրի Անցած երգի հետ: *Աշխարհքը* պայծառ, *աշխարհքը* պայծառ Ծաղկում էր, բուրում: Գալու է գարուն, գալու է գարուն՛ Աշխարհ լցվելու... Բայց իմ *սիրտս*, ավա՜ղ, բայց իմ *սիրտն*, ավա՜ղ, էլ չի բացվելու *(Թ., I, 383)*։ *Դժբախտություն*, անպատճառ մի *դժբախտություն* պետք է պատահի *(Շիրվ., VI, 65)*։ Քո խոսքերում հիմա, քո մտերիմ Զրույցներում և խո՛ր և չմարող. Զարմանալի հատուկ քո երգերում *Թախի՛ծ, թախի՛ծ* կա ջինջ, անափ կարոտ *(Զն, 121)*։

Կրկնվող ենթական կարող է դրվել ստորոգյալից հետո. կրկնության այս ձևը ցուցման նշանակություն է ստանում և հատուկ է բանավոր խոսքին, օրինակ՝ Ձին ընկավ, *ձին* (*Նույն տեղում, 553)*։

§ 57. *Ենթակայի կրկնությունը հուզարտահայտչական նշանակության հետ միասին ունի նաև ընդհանրացնող արժեք, որը ոճաբանական երևույթ է։ Երբ գրողը ցանկանում է բազմաթիվ կողմերից մոտենալ իր առարկային, բնորոշել վերադրային մանրամասներով, հարկադրված կրկնում է ենթական, որովհետև վերագրածս*

ժանրամասները մի տեղ համախմբվել չի կարող, ուստի կրկնում է, և ամեն կրկնելիս տարբեր մոտեցում է հանդես բերում, տարբեր բնութագրման է ենթարկում։ Այս իմաստով ենթական կարող է մի քանի անգամ կրկնվել, որով ավելի է խորանում նախադասության հուզարտահայտչական գունավորումը. օրինակ՝ Ինչպես չի հեռանում և էն մանուկ *Նեսո՛ն*, լուսնյակ գիշերներին գերանների վրա նստած հեքիաթ ասող *Նեսո՛ն*, մաքուր ու միամիտ *Նեսոն*, իմ մանկության ընկեր *Նեսո՛ն (Թ., III, 120)։*

§ 58. Նշենք նաև այն, որ բոլոր խոսքի մասերն իբրև ենթակա գործածվելիս կարող են կրկնվել։ Բոլոր դեպքերում էլ կրկնության բնույթը մնում է միևնույնը։

Որ *ինքս, ես ինքս,* մի օր հեռացա *(Զն, 88)։ Ոչ-ո՛ք, ոչ-ո՛ք* չտեսավ *(Նույն տեղում, 285)։ Ո՞վ է* ձեռքով անում, *ո՞վ,* Հեռվից անթիվ ձեռքերով *(Թ., I, 208)։*— Վեզի՛ր, հրամայում եմ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն *ամենքը,* ամենքը *(Իս., III, 210)։*

2. ԴԵՐԱՆՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

ա) ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

§ 59. Վերևում ասացինք, որ ենթական պետք է ունենա առարկայական նշանակություն. դերանունների մեջ այդ նշանակությունը ամենից ցայտուն կերպով արտահայտում են անձնական դերանունները։ Դրանց առարկայական նշանակությունը այնքան ուժեղ է, որ քերականներից ոմանք անձնական դերանունները դասում են գոյականների շարքը, կամ ուղղակի կոչում են գոյական դերանուններ։

Անձնական դերանունները ենթակայի պաշտոնով կիրառվում են առանց որոշյալ հոդի և հանդես են գալիս բոլոր դեմքերով. այստեղ խոսքը վերաբերում է միայն դրանց ուղղական հոլովներին։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Ինքը, *ինքն դերանունների վերջում* ն, ը-*ն հոդ չեն։*

Ահա մի քանի նախադասություններ, որոնց ենթակաները անձնական դերանուններ են. Ինքն իրեն պահել իմացող և պատվական մարդ է *(Շեքս., II, 211)։ Ես* մարդ եմ, պոետ ու քաղաքացի *(Զն, 181)։* Երբ *ինքներդ* կորցրած չհամարեք *(Շեքս., I, 151)։ Ինքս* էլ չիմացա *(Նար., IV, 20)։* Այդ *ինքն* էլ զգաց *(Նույն տեղում)։* Այդ գիտեն *իրանք.* մեր մեծ հրապարակախոսները *(ՍՇԸՆ, 14)։*

Բայց *մենք* գիտենք և այն, որ երբ թույլ էլ տային ձեզ գրել, *Դուք* ոչինչ չէիք կարողանա գրել *(նույն տեղում)*։ Երկար *նրանք* գրկախառնված մնացին *(Մուր., III, 34)*։ Լսում եք *դուք*, ահա այնտեղ որոտն է *(ՀՀԵ, 209)*։ *Ու ես* հիշում եմ իմ մանուկ օրը՛, իմ ծաղիկ հասակ *(նույն տեղում, 177)*։ Ադամյանը սիրում էր հյուրասիրել, որովհետև *ինքն* էլ հյուրասիրվում *էր* *(Շիրվ., VIII, 177)*։ *Ես* չգիտեի անձայն արտասվել: *Ես* հեծկլտում էի երեխայի պես: *Ես չէի* ուզում, որ հիվանդը կից սենյակից լսե իմ ձայնը *(նույն տեղում, 373)*։ Անցյալ օրը *ինքը* ծխի պես անց էր կենում Ավարայրի դաշտով *(ԴԴՎ, 347)*։ *Իրենք* միշտ ունենան ինձ այցելելու *(Մուր., II, 8)*։

§ 60. *Ինքը (ինքն) անձնական դերանունը առաջին և երկրորդ դեմքերով իբրև ենթակա կիրառվելիս թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում ստանում է դիմորոշ հոդ. ըստ որում հոգնակին երրորդ դեմքում լինում է* իրենք *(առանց հոդի), իսկ առաջին և երկրորդ դեմքերում՝* ինքներս, ինքներդ. *օրինակ՝* Պետք է ինքներդ կարդաք *(Շերս., I, 127)*։ *Ինքս* դուռը բաց արի *(Ր., I, 79)*։ *Ինքդ* քեզ փորձանքի մեջ կգցես *(Շիրվանզադե)*։

§ 61. *Անձնական դերանունների սեռական հոլովները (*Իմ, քո, իր *(իրեն)*, մեր, ձեր, նրանց, իրենց*) որոշիչ հոդ առնելով՝ դառնում են ենթակա և ցույց են տալիս այն առարկան, որ պատկանում է համապատասխան դերանվանը. օրինակ՝* *Ձերը* խո էդ է: *Քոնն* էլ պարտքի, տալիքի գործ է: *Քոնը* 75 մանեթ է: Էգուց նորից թող *քոնը* լինի *(Փափ., 42, 601, 591, 582)*։ *Իմս* յոթն է *(Իս., III, 291)*։ *Մերն* էլ յոթից մի բան պակաս է *(նույն տեղում)*։ *Իմս* էրզրումի մութասարիֆի ժամացույցն է *(նույն տեղում)*։ *Իրն* իր միսը կերել է, ոսկորը դեն չի գցել *(ՍՋՄԿՊ, 395)*։

§ 62. Ոնք[1] *ածանցով* իմ, քո[2], մեր, ձեր *սեռականներից կազմըվում են* իմոնք, քոնոնք, մերոնք, ձերոնք *դերանունները, որոնք դառնում են ենթակա՝ առանց հոդի։*

Մերոնք էս դեպքը պատմեցին ու խոսքն ընկավ շան վրա *(Թ., III, 121)*։ *Մերոնք* պետք է լարեն իրենց բոլոր ուժերը *(Շիրվ., VII, 183)*։ Երբ որ *մերոնք* այստեղ էին, մի Կովկասցի էր ապրում ձեզ նման *(Քոչար, 684)*։ *Իմոնք* լավն են, իսկ քոնոնք՝ վատը: *Ձերոնք* վաղը կգան:

[1] Ոնք *ածանցը միանում է* քոն *ձևին։*

[2] Քո *դերանունը երկու հոդ է առնում, որտեղ առաջինը այլևս չի գիտակցվում։*

§ 63. *Անձնական* ես, դու, նա *դերանունները հաճախ գործածվում են* ինքը *դերանվան հետ իբրև մի բաղադրյալ ենթակա։* Ինքը *այս պարագայում միշտ դիմորոշ* ս, դ *հոդով է հանդես գալիս և մեծ մասամբ ստանում է հաստատողի, հակադրողի, ինչպես և մյուս դեմքերը բացառողի նշանակություն։ Դրանք, առնելով տրամաբանական շեշտ՝ ունենում են եռադաս կիրառություն։ Գրաբարում շարահյուսական այս ձևի հետ միաժամանակ՝ հաճախ միևնույն դերանվան բացառականն է կիրառվում, որը մակբայական արժեք է ստացել (ես ինձէն, դու քեզէն...)։ Այժմ* ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք իրենք *կամ* նրանք ինքները (իրենք ինքները) *ունեն հարադրական բարդության արժեք, ուստի միասնաբար վերցվում են իբրև մի բաղադրյալ ենթակա։*

Դուք ինքներդ էլ, պարոն հոբելյա՛ր, չեք կարողացել ըմբռնել Ձեր ժամանակի հիմնական պահանջները *(ՍՇԸԵ, 14)։ Նա ինքն* է խիղճը և չարն ու բարին *(Իս., II, 73)։ Նրանք իրենք* վկայում են, որ իրենց գոյությունը այդ եկեղեցում նախատինք է *(Մուր., IV, 151)։ Ես ինքս* ինձ մոռացա *(Շիրվ., VI, 523)։* Այդ *ես ինքս* էլ գիտեի *(Նար., IV, 21)։ Դու ինքդ* շատ լավ գիտես *(ՆՁՀ, 137)։ Դու ինքդ* ես ինձ սովորեցրել *(Շիրվ., VI, 282)։ Դու ինքդ* համաձայն ես *(ՆՁՀ, 47)։* Դու գովում ես մի աղջկա, որին *ես ինքս* կուզեի գովել *(ԳՍԹ, II, 135)։* Օզա շահի և Սարդար խանի բարեկամության մասին *դու ինքդ* շատ լավ գիտես *(ԳՍԹ, I, 160)։ Դուք ինքնե՞րդ* եք ասում *(Մուր., IV, 151)։ Նա ինքը* ցանկացավ կռվել *(ՆՁՀ, 340)։ Ես ինքս* իմ աչքին բարձրանում եմ *(նույն տեղում, 109)։* Բայց Ջալալի, իրոք, պատերազմող լինելու վկայությունը հենց *նա ինքն* է տալիս յուր պատմության մեջ *(Մուր., V, 376)։*

§ 64. *Առհասարակ անձնական դերանունները որոշիչ և հատկացուցիչ չեն առնում. եթե նրանց մոտ գտնվում է որևէ լրացուցիչ բառ, ապա այդ բառը կարող է միայն բացահայտիչ լինել։ Հաճախ այդ բացահայտիչը այնքան է սերտանում դերանուն-ենթակայի հետ, որ կորցնում է իր բացահայտիչ լինելու առանձնահատկությունները և անձնական դերանվան հետ դիտվում է իբրև միասնական ենթակա։ Այսպես՝ գրաբարում* անձամբ ձևը *իր նշանակությամբ հավասարվում է* ինքը *դերանվան* (ես ինքս, դու ինքդ, նա ինքը *կապակցությունների մեջ) և գրաբարում դիտվում է իբրև մակբայ. այժմ* անձամբ ձևը *կիրառվում է անձնական դերանունների հետ՝* ես անձամբ, դու անձամբ, նա անձամբ... *կամ՝* ես ինքս անձամբ, դու ինքդ անձամբ, նա ինքն անձամբ *կապակցություններով։*

Այս կապակցությունների մեջ անձամբ բառի մակբայական նշանակությունը արդեն մթագնվել է և այնքան սերտ է կապված դերանունների հետ, որ կարելի կլինի այն արդեն դերանունների հետ դիտել իբրև մի միասնական ենթակա. օրինակ՝ Ես ինքս անձամբ կգամ Հացավան և կստուգեմ *(ՆԶՀ, 198)։ Նա ձին անձամբ* ինքը տարավ *(նույն տեղում, 18)։ Ես ինքս անձամբ մայր ունեմ (ԳՍԵ, 455)։*

Հաճախ դերանուն ենթական ուղեկցվում է գոյական ենթակայով, որ տվյալ դեպքում բուն ենթական է. օրինակ՝ Բարեպաշտ տան *տիկինը ինքը անձամբ* առանձին խնամք էր տանում նրա անկողնի պատրաստության մասին *(ՐԽՀ, II, Ա)։*

§ 65. Հաճախ անձնական դերանուններից անմիջապես հետո մի գոյական է գործածվում, որ դերանուն-ենթակայի համար դառնում է բացահայտիչ. օրինակ՝ Մենք հայերս ունենք բազմաթիվ պարտիաներ՝ «Մշակի» պարտիա, «Նոր-դարի» պարտիա,. «Հին-Մուրճի», «Նոր-Մուրճի» *և այլն (ՍՇԸԵ, 15)։* Ու այստեղ է *նա՝ Մովսեսը դարբին (ՀՀԵ, 209)։ Մենք բանվորներս* վշտի, արցունքի, կիսաքաղց կյանքի, բանտի աքսորի անբաժան ընկեր *(Կուրղինյան)։* Իսկ *մենք մեծամասնությունս* զկրտում ենք *(Շիրվ., III, 584)։* Երբ *նա ինքը տիկինը* անտեղյակ յուր դժբախտությանը զվարճանում էր *(Մուր., III, 11)։*

§ 66. Սակայն գոյություն ունի և՛ մրա շուռ տված ձևը, երբ ենթական գոյականն է, իսկ բացահայտիչը դերանունը։ Այս դեպքում արդեն գոյականը և դերանունը դիտվում են իբրև մի միասնական ենթակա, որովհետև դերանուն-բացահայտիչը ոչինչ էլ չի բացահայտում, այլ հանդես է գալիս միևնույն կիրառությամբ, ինչ-որ տեսանք վերևում (§ 64). օրինակ՝ Արասխանյանը ինքը կարիքի մեջ լինելով՝ չէր կարող Պողոսյանին տալ նույնիսկ չափավոր վարձ *(Շիրվ., VIII, 182)։ Գևորգը* բռունցքի հարվածներ էր տեղում *ինքն* իր գլխին *(ՆԶՀ, 357)։* Երբ *թագուհին ինքը* հեռանում էր մարդկանցից *(Մուր., III, 10)։*

§ 67. Հոգնակի անձնական դերանունների հետ դրվելով՝ մասամբ բացահայտիչ, մասամբ բաղադրյալ ենթակայի մաս են կազմում ամենքը, բոլորը *որոշյալ դերանունները, որտեղ միշտ անձնական դերանունները նախադաս են։ Ետադաս գործածությունն անսովոր է, բայց այս դեպքում որոշյալ դերանունները նախադաս գտնվելով՝ բացահայտիչ լինելուց դադարում են և ավելի ամբող-*

ջանում են անձնական դերանունների հետ՝ ունենալով դիմորոշ հոդեր։

Ինչքան երջանիկ էինք *մենք ամենքս (Մուր., II, 28)։ Մենք ամենքս* պարտական ենք անեղ դատաստանի առաջ *(Շիրվանզադե)։ Մենք ամենքս* նյութ ենք կյանքում Մեր ծննդյան փուշ օրից *(Թ., II, 141)*։ Մենք էլ ամենքս այնպես ենք կարծում *(ՍԳԱՐ, 51 թ., № 5, էջ 45)։ Նրանք բոլորը* միասին ուղևորվեցին դեպի բրիգադները *(ՆՋՀ, 84)։ Մենք բոլորս* էլ մի երկրի զավակներ ենք *(Փափ., 580)։ Այս բոլորը համեմատիր հետևյալ օրինակների հետ, որտեղ* բոլոր *բառը նախադաս է և առանց հոդի։ Բոլոր դուք,* ով արևին է կարոտում, *Բոլոր դուք,* ով դարերով շղթայակապ *(ՀՀԵ, 151)*։ Պիտի փոշիանան *բոլոր նրանք,* ինչ որ ծնունդ և սկիզբ են առել *(Իս., III, 212)*։

§ *68.* Բոլոր *բառը հոգնակի անձնական դերանունների հետ կիրառվում է նաև գործիական հոլովով. օրինակ՝ Մենք բոլորով* այնտեղ կլինենք, *դուք բոլորովդ* էլ եկեք *և այլն։*

§ *69. Անձնական դերանունները իբրև ենթակա գործածվելիս երբեմն իրենցից առաջ ընդունում են ցուցական* այս, այդ, այն *դերանունները, որոնք տվյալ դեպքում մատնացույց անող միջոցներ են և լոկ ուժեղացնում են ենթակայի վրա ընկնող տրամաբանական շեշտը, բացառում են ամեն մի կասկած ենթակայի վերաբերյալ և կայունացնում շեշտը։ Այդպիսի ցուցական դերանունները նույնպես պետք է բաղադրյալ ենթակայի մաս համարել և անձնական դերանունների հետ ընդունել իբրև մի ամբողջական ենթակա։ Տվյալ դեպքում ցուցական դերանունը իր շարահյուսական կիրառությամբ տարբերվում է այն գործածությունից, երբ դրվում է գոյականի վրա։ Համեմատի՛ր Այդ մարդը* գալիս է *նախադասությունը Այդ մենք* ենք գալիս *(Կուրղինյան) նախադասության հետ։*

§ *70. Անձնական դերանունները հաճախ իրենց հետ ընդունում են իրենց իսկ տրական հոլովը՝ միակի կամ կրկնված. օրինակ՝* Ես ինձ ու ինձ, ինքս ինձ, դու քեզ ու քեզ, ինքդ քեզ, ինքն իրեն, նա ինքն իրեն, ես ինքս ինձ, մենք ինքներս մեզ, դուք ձեզ ու ձեզ, դուք ինքներդ ձեզ, ինքն իրեն, նրանք իրենք իրենց: *Այս կապակցությունները նույնպես պետք է համարել բաղադրյալ ենթականեր, որոնք ցույց են տալիս առանձին լինելը, գործողության մեջ այլոց մասնակցության կամ ներկա գտնվելու բացառումը։ Համեմատի՛ր. Քեզ ու քեզ* վնոել ես *(Նար., I, 213)*։ Ու ես ներսոտվում, խռովում եմ *ինքս ինձ (ՀՀԵ, 248)*։ Մտածում էր նա *ինքն իրեն (Մուր., III,*

23)։ Պետք է նշել, սակայն, որ այս վերջինները որոշ չափով ձևի պարագայի կիրառություն ունեն և մասամբ կարող են դիտվել իբրև այդպիսիք։

§ 71. Նույն ինքը *դերանվանական կապակցությունը նույնպես մի բաղադրյալ ենթակա է, որը հաստատում է նույնականությունը՝ առանց երկբայության.* Նույն ինքն ասաց. նույն ինքն էր այդ կատարում:

բ) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

§ 72. Ենթակա են դառնում նաև անորոշ ինչ-որ, ոմն, մեկը, ովևիցե, այսինչը, մի քանիսը, ուրիշ, ով-որ, օքմի(ն), այլ, մին, ոք *դերանունները։ Սրանցից անհոդ են կիրառվում* ինչ-որ, ոմն, ով-որ, ոք, այլ *դերանունները։ Իբրև ենթակա միայն հոդով են կիրառվում* մեկը, մի քանիսը, այսինչը, այնինչը, օքմին, *որոնց մեջ արդեն հոդը կորցրել է իր նշանակությունը։*

Ուր թալանում են մերոնք և *այլերը (Թումանյան)։* Բայց ուրիշ մտածողություն կաներ *ովևիցե (ՈՊԵ, 317)։* Հո մեր տանիցը *օքմի* չի՞ հիվանդացել *(Թ., III, 46)։* Ունեն *մի քանիսը (ԲԿ, 207)։ Մի քանիսն* ինչ են որ, թեկուզ և լինեն *(Թ., V, 280)։* Կարծես թե *օքմին* լինի էն ժայռի գլխին կանգնած *(Նույն տեղում, 268)։* Նրա նման ազնիվ, նրա նման համուսով մի *ուրիշը* չկա այս քաղաքում *(Շիրվ., VI, 555)։* Որոնց մի *քանիսը* եղանակներ են գուշակում *(ՄՆ, II, 64)։ Մինն* ասավ.— բայց կծաղկի էն հովիտը նորից նոր *(Թ., I, 126)։ Ուրիշները* գնում էին բժշկական դարմաններ, ջրի սրվակ *(ԴԴԿ, 268)։* Ոմանք արդեն ուշաթափվել էին *(Նույն տեղում, 368)։* Մի անգամ իմ ներկայությամբ ծառան զեկուցեց, թե՝ *այսինչը* ուզում է նրան տեսնել *(Շիրվ., VIII, 175)։* Որքան բան գիտեն *ուրիշները* իմ ցավերի մասին *(Մուր., III, 35)։* Զազունյանի և այդ զինվորականի միջև *ինչ-որ* կա *(Նար., II, 272)։* Ոնց որ *մինը* մի քար գցի *(Թ., III, 206)։* Եվ չկար *մեկը, որ* առաջնորդեր նրան կրկին էնտեղ *(Նույն տեղում, 196)։ Ոմանք* տանուտերին էին խնդրում, *ոմանք* գնացողներին էին բռնում, *ոմանք* էլ Սիմոնի հետ էին կռվում *(Նույն տեղում, 21)։* Քարը վեր կալ քարի տակին դիր, *օքմին* չիմանա *(Նույն տեղում, 16)։* Ու քաշվեցին *ոմն* այստեղ, *ոմն* այնտեղ, մի քանիսը գաղթեցին Գյումրի *(ՊՊ, II, 230)։* Տեսա մահճակալիս մոտ *ով-որ* նստած է *(Նար., IV, 83)։* Նա հայի միս կուտի, կրկնեց մի *այլը (Ր., I, 136)։* Եթե կա *մի ոք* ձեր ընկերներից ինձ սիրահարված, բավ է, որ

նրան ուսուցեք պատմել ձեր պատմությունը, և ես նրանն եմ *(Ծեքս., I, 129)*։ *Ով որ* նրան ասաց, թե պատերազմում սպանվածների մեր-ձավորները որոշել են սևազգեստ չհագնել *(Շիրվ., V, 323)*։

§ 73. *Հիշյալ անորոշ դերանունները մեր նոր գրական լեզուն են մտել տարբեր աղբյուրներից և տարբեր չափով ու ծավալով էլ կիրառվում են այժմ։ Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք հին են, կամ արդեն հնացել են և կամ իբրև ենթակա այլևս գործածական չեն. կան և այնպիսիները, որոնք գալիս են բարբառներից և անցյալում էլ արդեն սահմանափակ են կիրառվել. օրինակ՝* ումն *և* ոք *անորոշները եզակիում գրեթե ենթակա չեն դառնում կամ շատ հազվադեպ են կիրառվում։* Այլ *դերանվան տեղը բռնել է* ուրիշը՝ *չնայած մեր բերած եզակիի օրինակին՝ միտում կա գործածելու դրա հին հոգնակի ձևը (այլք)՝ որպես փոփոխակ և՛* ուրիշներ, *և՛* ուրիշները *հանձախակի կրկնվող, սահմանափակող ֆորմուլաների ու առհասարակ, համանիշ* ուրիշները *անորոշի փոխարեն. օրինակ՝ Այլք* ուրիշ նավանավան և աննավանավան ենթադրություններ էին անում *(ԳԳ, III, 383)*։ *Այլք* մինչև անգամ ծածուկ տեղերում իրենց մտերիմների ականջին ինչ-որ փսփսում էին *(Նույն տեղում, 205)*։ Եկան Մուշեղը, Դավիթը և այլք։

Այժմ հնացած է նաև ինչ-որ *անորոշի՝ իբրև ենթակայի գործածությունը. այս դերանունը ներկայումս հաճախ որոշիչային կիրառում ունի։*

Խիստ բարբառային է օմին-ը *(Թումանյանը ունի նաև առանց* ն-ի, *որը բոլորովին չի կիրառվում)։ Մեռած պետք է համարել նաև* մի քանիսը *դերանվան* մի քանիքը *փոփոխակը։*

գ) ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

§ 74. *Ենթակա են լինում նաև ժխտական* ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը, ոչ ով *դերանունները։ Սրանց մեջ* ոչ ոք, ոչ ով *բացարձակ կերպով հոդ չեն ընդունում.* ոչ մի, ոչ մեկ*(ը) միա՛յն հոդով են ենթակա դառնում, իսկ* ոչինչ *դերանունը կիրառվում է թե՛ հոդով և թե՛ առանց հոդի. օրինակներ՝* Գուցե հավաքված պիոներներից *ոչ մեկն* այնքան անհամբեր չէր, որքան Գարիկն ու Լևիկը *(ՍՁ, III, 387)*։ Ասա ինձ, քույր,— այստեղ բացի այդ մարդից ուրիշ *ոչ ոք* չի՞ եկել *(Շիրվ., VI, 87)*։ Ինձ համար վախենալու *ոչինչ* չի մնացել *(Նույն տեղում, 61)*։ *Ոչինչ* մխիթարական չկար, *ոչինչ* չէր զորացնում բեկված սրտերը *(ՐԿ, 596)*։ *Եվ ոչ-ոք* չգիտեր, որ հիմա Աստաֆյան փո-

ղոցի վրա հրաշք պիտի լինի *(Զե, 31)*։ *Ոչ-ոք, ոչ-ոք* չտեսավ *(Նույն տեղում)*։ Ընթացիր դու, մարդ անդադար, որ *ոչինչ* քեզ երազ չթվա, Որ լինես անվախճան ու հար, ու *ոչինչ* քեզ երազ չթվա *(Նույն տեղում, 166)*։ *Ոչով* չելավ բռնելու *(ՍԶ, V, 387)*։ *Ոչով* ինձ տեղափոխ չի անում *(Թ., III, 278)*։ *Ոչով ոչինչ չէր կարողանում անել (ԴԱՀ, 16)*։

Ժխտական դերանուններից ներկայումս իբրև ենթակա գործածական են միայն ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, *մնացածները հնացել և գործածությունից դուրս են եկել*։

դ) ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 75. *Հարցական և հարաբերական դերանուններից իբրև ենթակա կիրառվում են՝* Ով, ինչ, որ, քանի, որքան, որչափ, ինչքան, ով-որ, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ, որտեղ, ինչ-որ:

Եզակիում ով *և* ով-որ *դերանունները ենթակա են դառնում առանց հոդի,* ինչ *և* որ *դերանունները ենթակա են դառնում թե՛ հոդով և թե՛ առանց հոդի, միայն պետք է նկատի առնել, որ վերջինս առանց հոդի հաճախ կիրառվում է նաև իբրև շաղկապ, իսկ վերևում թվարկված մյուս դերանուններն իբրև ենթակա կիրառվում են միայն հոդով։* Որտեղ *դերանունը ենթակա է լինում նաև առանց հոդի, սակայն այս դեպքում այն գերազանցապես դիտվում է իբրև տեղի պարագա։* Քանի *դերանունը ենթակայի պաշտոնով գործածվում է* քանիսը *ձևով, ուր* ս *մասնիկի հոգնակիացնող նշանակությունն արդեն մեռած է, բայց հին ավանդությամբ այս դերանվան ստորոգյալը հոգնակի է դրվում։ Հիշյալ բոլոր դերանունները (բացի* ով-որ, ինչ-որ *հարաբերականներից) կիրառվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով։* Քանի *դերանունն իբրև ենթակա եզակի ձևով չի կիրառվում։ Ստորև բերում ենք դրանց համար մի շարք օրինակներ.*

Ինչը կհաղթի կյանքում հերոսին, Թե չլինին կինն ու գինին *(Թ., II, 143)*։ Ուրեմն զարմանալու չէ, որ իմ կարդացողներեն *քանիսը* չիմանան դորա ինչ լինելը *(ՌՊԵ, 330)*։ Մենք էն գիտենք, որ նա, *ով որ* ցավ է տվել ու աղետ *(Թ., II, 154)*։ Իսկ *ով* ասաց, թե իմ սպարապետը դավաճան է *(ԴԴՎ, 390)*։ *Ով* հայրենի ունի, *ով* պատիվ ունի, թող գա *(Նույն տեղում, 401)*։ *Որպիսին* միայն Ադրիատիկի ափերումն է լինում *(«Ընտիր էջեր», 718)*։ *Որպիսին* առաջացել էր սարսափից *(ԱԲԵ, 577)*։ *Քանիսը* հաղթական վերադարձել (են), *քանիսը* սպառ-սպուռ ջնջվել *(Մուր., II, 22)*։ Հեյ ագահ մարդ, հեյ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի *քա-*

նրան անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ *(Թ., I, 211)*։ *Ով* է ձեռքով անում, *ով*, Հեռվից անթիվ ձեռքերով *(նույն տեղում, 208)*։ Եվ կամ *ինչքան* դեռ պիտի գան *(նույն տեղում, 198)*։ *Ով* քաղաքից էր հեռացել, նա թողել էր մշուշը ծեր: *Ով* եկել էր գյուղից հեռու, նա թողել էր հողը խոնավ: *Ով* եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի *(Չե, 250)*։ Այլևս *ովքեր* կլինեին ճաշին *(ՐԿ, 604)*։ *Ով ասես չէր* գալիս Սահակին տեսության *(ՊՊ, II, 405)*։ Այս անգամ պատվելին, *որ* բոլոր խոսակցության ժամանակ մոռացել էր կարմիր քիթը *(ՐԿ, 276)*։ Քիչ չէր պատահում, որ մեր ծուղակի մեջ ընկնում էին այնպիսի բարեպաշտ քրիստոնյաներ, *որպիսիքը*[1] էին հարուստ կալվածատերերը և միամիտ տիրուհին *(ՐԵԺ, II, Բ)*։ *Ո՞րտեղ է* ցավում *(Նար., II, 181)*։

§ 76. *Հոգնակիում հոդ չեն առնում* ով, որ, որպիսի, ինչպիսի *դերանունները։ Հոգնակի սովորաբար չեն գործածվում* քանի, որքան, որչափ, ինչքան, ով-որ, քանիերորդ, որերորդ, որտեղ, *իսկ* քանի *դերանունը, ինչպես ասվեց, միայն* քանիսը *ձևով է կիրառվում*։

§ 77. *Հարաբերական և հարցական* ով, ինչ, որչափ, որքան, ինչքան *դերանունները իրենցից առաջ կարող են ընդունել* այս, այդ, այն *ցուցական, որ հարաբերական ու հարցական դերանվան հետ պետք է մի բաղադրյալ ենթակա համարել։ Համեմատիր հետևյալ օրինակները. Այն ո՞վ* է ասում, թե մեռավ Լենին *(ՀՀԵ, 155)*։ *Այն ո՞վ* է ծնունդը տեսել մանուկի *(նույն տեղում, 237)*։

§ 78. *Իբրև հարցական, հարաբերական դերանուն՝ 50-ական թվականներին կիրառվել է նաև* ո *դերանունը, որ այժմ բոլորովին կիրառությունից դադարել է։ Համեմատի՛ր. Ո՛* գիտե, թե այդպիսի շնչական մարմինք ուր կարելի էր դեռևս գտնել *(ՄՆ, II, 101)*։

ե) ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 79. *Ենթակա են լինում հետևյալ ցուցական դերանունները՝* այս, այդ, այն, սա, դա, նա, սույն, դույն, նույն, միևնույն, մյուս, այսպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այստեղ, այդտեղ, նույնտեղ: Այս, այդ, այն, սա, դա, նա *դերանունները թե՛ եզակի և թե՛ հոգնակի գործածվելիս երբեք հոդ չեն առնում*։ Սույն, դույն, նույն, միևնույն, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնտեղ *դերանունները ենթակա են լինում միայն հոդով*։ Մյուսները կարող են *կիրառվել և՛ հոդով, և՛ առանց հոդի*։

[1] Որպիսիք *բառի հոդը բոլորովին հնացած է*։

Նա ո՛չ պոետ է, ո՛չ քննադատ, Ո՛չ վիպագիր է, ոչ մտածող (*Զե, 223*)։ *Դա* վերին աստիճանի զբաղեցուցիչ մի զույգ էր (*Շիրվ., VIII, 50*)։ *Այդ* այն է (*ՍՇԸԵ, 10*)։ *Դրանք* հո քաջ հայտնի են քեզ (*Մուր., III, 37*)։ *Այդ* գեղանի Սահանույշն էր (*Նույն տեղում*)։ Աշխարհքում *այս* կա, *այն* կա, կամ *սա* ու *նա* կան (*Թ., V, 280*)։ Բայց *այդ* եղել է ավելի հին ժամանակներում (*ՐԿ, 281*)։ *Դա* նրանց առաջին պտուղն էր (*ՎԱՍԱ, 213*)։ Չէ, երեխե՛ք ջան, *էդ* իմ բանը չի (*Նույն տեղում, 33*)։ *Մյուսը* նույնպես իրեն հերթին Գրեց զորքին, ժողովրդին (*Թ., I, 332*)։ *Մյուսը* էստեղ ոչինչ չասավ (*Նույն տեղում, I, 126*)։ *Այդքանն* էլ բավական էր (*ՆՉՀ, 336*)։ Այստեղ կատարվեց այն, ինչից վախենում էր *նա* (*ՎԱՍԱ, 59*)։ *Այսքանը* միայն կա, որ քաղաքում ամեն ինչ ձանձրացնում է ինձ (*Մուր., II, 9*)։ Մի քանի տարեկան տղայի համար *այսքանը* քիչ էր կյանքի դառնությունների հետ հաշտվելու համար (*Շիրվ., VIII, 64*)։ *Այդպիսիներն* էլ կոչվում էին ենիչերի (*Փափ., 39*)։ *Այդպիսիներն* անհրաժեշտ են մեր գործի համար (*Շիրվ., VIII, 185*)։ *Այսքանը* հերիք էր (*Քրեստ., IX, 24*)։ *Այստեղ* ցավում է (*Մուր., IV, 149*)։ *Այդպիսիները* սակավաթիվ լինելուց զատ՝ հայ ժողովրդի մեջ գործելու բարեմասնություններից էլ զուրկ էին (*Մուր., II, 270*)։ Նամակի մեջ *այնքանը* միայն գրված պետք է լիներ (*Ր., III, 48*)։ Բայց չի տևում այդ էլ երկար (*Ր., I, 153*)։ *Այդ* մենք ենք (*Մուր., IV, 160*)։ Բայց վերջիններին *այդքանը* չգոհացրեց (*Մուր., V, 260*)։ *Միևնույնը* կլիներ ինձ համար (*Նար., II, 371*)։ Ես զոհ եմ, բայց *էնպիսիները* կան, որ իսկի չեն կարող զոհ լինել (*Թ., III, 245*)։

§ 80. Սույն, դույն *ցուցական դերանունները այժմ այլևս չեն գործածվում, մանավանդ վերջինը բոլորովին դուրս է ընկել*։ Նույն *դերանվան հին հոգնակի* նույնք *ձևը անցյալում հաճախակի երևում էր դրամատիկական գրվածքներում. օրինակ՝ Նույնք* և Սուրեն: *Նույնք* և Անդրեաս։ *Նույնք* առանց Բագրատի, հետո Մարգարիտ (*Շիրվ., VI, 242, 247, 257*)։ *Սակայն այդ ձևը նույնպես հնացած է։ Սպասելի էր, որ դա փոխարինվեր* նույները *հոգնակիով, բայց դա ևս այժմ չի ընդունված։ Թատերական գրվածքներում վերևում բերված* նույնք *ձևը* նրանք *ցուցականով է արտահայտվում*։

Ծանոթություն. Դույն *դերանունը ոչ միայն իբրև ենթակա, այլև իբրև բառ դուրս է եկել գործածությունից*։

§ 81. Այս, այդ, այն *ցուցական դերանունները լիակատար ենթակա են լինում, երբ դրանց ստորոգյալը թանձրացյալ նշանակություն ունեցող որևէ բայ է. օրինակ՝ Այդ* այնքան արագ էր կատար-

վում *(ՆՁՀ, 365)*։ Բարեբախտաբար այդ չի եղել *(Զե, 261)*։ *Այն* կատարվել էր ընդամենը չորս կամ հինգ տարվա ընթացքում *(Մուր., III, 35)*։ *Այս* նույնպես կհանգստացնե սիրտդ *(նույն տեղում)*։ *Այդ* չի կարող լինել *(Մուր., V, 21)*։

§ *82*. Այս, այդ, այն *դերանունների ենթակայական պաշտոնը ցայտուն երևում է նաև այն դեպքում, երբ դրանց բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը մի այնպիսի խոսքի մաս է, որի առարկայական ըմբռնումը ավելի թույլ է, քան հիշյալ դերանուններն են ըմբռնվում. այսինքն՝ածական է, թվական է, մակբայ է և այլն։ Համեմատի՛ր.* Թող *այդ* ամենքին հայտնի լինի *(Ծիրվ., VI, 18)*։ Այլ է այն, ինչ որ տեսնում եմ իմ առաջ *(Ծիրվ., VIII, 88)*։ Այդ լավ է *(Մուր., V, 211)*։

§ *83. Ցուցական դերանունների ենթակայական կիրառության ըմբռնումը համեմատաբար թուլանում է, երբ բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը գոյական է. օրինակ՝ Այդ* իմ գործը չէ *(Ծիրվ., III, 60)*։ *Այդ* իմ փափագն է *(Մուր., III, 395)*։ *Այդ* իհարկե դեռ ապագայի խնդիր է *(ՂԱ, IV, 216)*։ Հրաշալի մի տեսարան էր այդ *(ԲԿ, 198)*։ *Այն* մի տեսակ վաշխառություն է *(նույն տեղում, 203)*։ *Էն* հազարան ազնիվ հավքն է *(Թ., II, 157)*։ *Այդ* Գարդմանա օրհորդն է *(Մուր., III, 87)*։ *Այդ* ուշադրության արժանի կետ է *(նույն տեղում, 360)*։ Նորեկ աշխարհի օդակներն են այն *(ՀՀԵ, 227)*։

Այս դեպքում ցուցականության հանգամանքը որոշ չափով թուլացնում է դերանունների առարկայական նշանակությունը, որից և առաջանում է ենթակայական կիրառման մասնավոր թուլացումը։

§ *84. Հիշյալ ցուցական դերանունների ենթակայական կիրառման թուլացումը շատ ավելի ցայտուն է դրսևորվում, երբ դրանց բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը որևէ անձնական կամ ցուցական դերանուն է։ Այս պարագայում դժվար է լինում ենթական պարզորոշ զատել ստորոգելիական վերադիրից. օրինակ՝ Այդ* նա է *(Մուր., III, 362)*։ *Այդ* դուք եք: *Այդ* նա էր *(Զե)*։ *Այդ* մենք ենք: *Համեմատի՛ր. Այս* ով է: *Այն* ով է *և այլն*։ *Համարյա բոլորովին անզգալի է ենթակա ցուցականի ըմբռնումը, երբ, մանավանդ, ստորոգելիական վերադիրը հոգնակի է*։

§ *85*. Այս, այդ, այն *իսկական ցուցականների հոգնակին նույնանում է* սա, դա, նա *կրկնական՝ ցուցականների հոգնակիների հետ, որոնք իբրև ենթակա սովորական են։ Սակայն այս վերջինները հաճախ դրվում են մի որևէ գոյականի հետ և կազմում են մի բա-*

ղադրյալ ենթակա։ Սա, դա, նա *կրկնական ցուցականների և այդ գոյականի կապակցությունը իբրև մի բաղադրյալ ենթակա առաջացել է բացահայտիչ երկրորդական նախադասությամբ մի բարդ ստորադասական նախադասության երկու նախադասությունների բաղարկությունից. փոխանակ ասելու՝ դա*, որ գալիս է, *մարդ է՝ ասվում է՝* դա մարդ է գալիս. *ուրեմն* դա *ենթական ձուլվում է ստորոգելիական վերադիրի հետ և կազմում է մի բաղադրյալ ենթակա, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը դառնում է երկուսի համար ստորոգյալ, և հետագայում բաղարկությունը մթնում է։ Համեմատի՛ր. Դա* ոչ թե *քամին* է փողոցում շաչում, *Եվ* ոչ էլ հրթիռը հրդեհում խավարը,— Իր խմբի տղերանց հետ *դա* հյուրանոցում խմում, աղմկում է խմբապետ *Շավարշը (Չե, 121)*։

§ *86*. Սա, դա, նա *ցուցականները* ինքը *անձնական դերանվան հետ կազմում են մի բաղադրյալ ենթակա։ Համեմատի՛ր*. Կցանկանար, որ *սա ինքը* սկսեր խոսել *(Մուր., III, 15)*։

գ) ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆ

§ *87*. *Ենթակա են դառնում նաև՝* ամեն, ամեն մեկը, ամենքը, բոլորը, յուրաքանչյուր, համայն, ամեն ինչ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջ, ամբողջ *որոշյալ դերանունները։ Միայն հոդով են ենթակա լինում՝* ամեն, ամեն մեկ *(ամեն մին)*, բոլոր, յուրաքանչյուր, ամբողջ *որոշյալ դերանունները։ Բացարձակապես անհոդ են* յուրաքանչյուր ոք, ամեն ոք: *Հոդով կամ առանց հոդի՝ ենթակայի պաշտոն են կատարում* ամեն ինչ, ողջ *դերանունները. իսկ* ամենքը *բառի հոդը քարացած է։ Օրինակ. Ամեն ինչ* լուռ էր *(ՐԿ, 592)*։ Գալիս էին ամենքը *(Շիրվ., VIII, 175)*։ Բայց նրանցից *ամեն մինը* կվաներ հարյուր հազարացի *(Մուր., III, 44)*։ *Այս ամենը* բոլորովին ընդդեմ էր նրա կրոնական բնավորությանը *(ՐԿ, 208)*։ *Ամենքս* էլ հո տեր չենք կարող լինել *(Շեքս., I, 118)*։ *Ամեն մինը* մի զուրզ ուներ *(Թ., III, 192)*։ *Ամենքս* սիրում էինք նրան *(Մուր., II, 44)*։ *Ամենքն* ինձ համարում են ոսկու տոպրակ: *Ամենքդ* գնացիք *(Շիրվ., VI, 270)*։ *Ամեն մեկս* մենակ մեր մասին մտածենք, էլ ի՛նչ ազնվություն կմնա *(ՎԱՍԱ, 226)*։ *Ամեն ինչ* լուռ էր *(ՐԿ, 592)*։ *Ամեն ոք* իր վերարկուի տակ սուր էր ման ածում *(նույն տեղում, 597)*։ *Ամենը* բռնած կլիներ ուխտավորներով *(նույն տեղում, 174)*։ *Որոնցից յուրաքանչյուրը* սպասում էր յուր հերթին *(Մուր., II, 12)*։ *Բոլորս* էլ անխտիր ձերբակալվեցինք *(ՀՀե, 345)*։ Մանր են, շատ մանր այս

ամենը (նույն տեղում, 337)։ Ու *ողջ* միասին մի խորունկ թախիծ, մի մութ զարզանդ են գիշերին տալի *(Թ., II, 37)*։ *Ողջ* ազատ են ու համազատ էս աշխարհիքում քեզանով, *Ողջը* քո մեջ՝ անմահ, անվերջ՝ քեզ են երգում քո ձենով *(Թ., I, 214)*։ Էստեղ մենք մոտիկ թավադներ ունենք, *Ամենքս*, իմացիր, տասը տեր ունենք *(Թ., II, 39)*։ Այստեղ *ամեն ինչ* կեղծ է և ստորությամբ լի *(Շիրվ., VI, 66)*։ *Ամեն մինը* առած մի բան *(Թ., I, 333)*։ Եվ էն *ամենը*, արդ նայում եմ ես, Տեսնում եմ նորից իմ լեռան ծերից,— էնպես հասարակ, դատարկ են էնպես *(նույն տեղում, 157)*։ *Բոլորը* նայեցին նրան՝ իրենք իսկ սարսափելով *(ԴԴՎ, 289)*։

Ամեն ոք նրանց համար օրացույց էր *(Ր., III, 274)*։ *Ամեն մեկը* փնտրում էր իրեն վերաբերող հատվածը *(ՆԶՀ, 296)*։ Արդեն ինձ համար *ողջը* մին են հիմա *(Թ., I, 591)*։

3. ԱԾԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ 88. *Հայերենում ածականի բոլոր տեսակները և աստիճանները թե՛ եզակի և թե՛ հոգնակի նախադասության մեջ հեշտությամբ ենթակա են դառնում. միայն ածականի որ ձևն էլ որ իբրև ենթակա կիրառվի, պետք է անպայման որևէ հոդ (գլխավորապես որոշիչ) ստանա, այլապես ածականը ենթակա կարող է դառնալ իբրև մեջբերում՝ կորցնելով իր ածականային հատկանիշները, կամ բռնելով իր որոշյալի տեղը. օրինակ՝ հաճախ ասվում է՝* Իմ դասարանում այլևս *վատ* չկա: Ինչ է անընդհատ *վատերի* մասին ես խոսում. *վատեր* կային, բայց վերացվեցին: *Այս էլ պետք է նկատել, որ նույնիսկ այդ պարագայում նման ածականները գործածվում են միայն* լինել, եմ *բայերի հետ։ Եթե ուզում ենք դրանք անորոշ կիրառել, ապա անհրաժեշտ է* մի անորոշ հոդով արտահայտել:

Ուրեմն՝ օրինաչափականն այն է, երբ ածականը հոդով է գործածվում և դառնում է նախադասության ենթակա. օրինակ՝ *Կարմիրը* ուրախություն, *սևը* տրտմություն, վեցանոցը ճանապարհ է ցույց տալիս *(Շիրվ., VI, 31)*։ Գյուղացիներից շատ *քչերն* էին բողոքում *(Թ., IV, 87)*։ Գիշերն ընկավ, *մութը* վրա հասավ, ու բոլոր մժղուկներր մտան եղեգնուտի տաք տեղերը, թաք կացան *(Թ., III, 206)*։ Իսկ այս *վերջինները* ավելի բազմաթիվ էին *(Մուր., III, 344)*։ Այն *խղճալիքը* ինչ պետք է անեն *(Ր., I, 150)*։ Քուն թե արթուն օրիս *շատը* երազ եղավ անց-կացավ *(Թ., I, 211)*։ *Թացն էլ* է այրվում չորի կրակով *(Շիրվ., VI, 502)*։ Զոհվում է *լավը* վատե-

րի համար, *վատն ու չարը* լլկում են տանջում *(Իս., II, 74)*։ Էնքան շատ են ցավերն, *ավերն* իմ սրտում, էնքան տրտում կորած *լավերն* իմ սրտում *(Թ., I, 216)*։ Ո՞ւր կորան, *Մոտիկներս*՝ ո՞ւր կորան *(Նույն տեղում, 204)*։ *Քաջն* է հաղթում, պարտվում է *հեգը* *(ԴԴՎ, 687)*։ Ասում են քաղաքի *առաջավորներն* ու ճամփա ընկնում *(Իս., III, 273)*։ Առավոտը Նուկիմ քաղաքի *խելոքները* շարունակում են իրենց ուղին *(Նույն տեղում, 274)*։ *Խամն* ավելի շատ է քան ցելը *(ՆԶՀ, 172)*։ Արտաշեսը սակավախոս էր, և *անհրաժեշտը չէր ստիպում նրան* խոսելու *(Շիրվ., V, 201)*։ Մինչև հանդես եկա *նվաստս* ես *(ՉԵ, 480)*։ *Անհրաժեշտը* իմ եսն է *(Իս., III, 212)*։ Եթե *քեզ նմանները* թողնեին մեր անբախտ արյունակիցներին *(Շիրվ., VII, 190)*։

§ 89. *Ածականի գոյականացումը շատ ավելի ուժեղ է, երբ կիրառվում է, այսպես կոչված,* վերացական թանձրացյալի փոխարեն *կապակցության ձևը. այսինքն՝ փոխանակ ասելու* լավ մարդը, *ասվում է* մարդու լավը: *Համեմատի՛ր.* Գեղեցկության *մի անհուն* ծավալվեց ու խորացավ իր առջև *(Իս., III, 221)*։

§ 90. *Ինչպես ասվեց, բոլոր տեսակի ածականները կարող են ենթակա դառնալ. ենթակա են դառնում նաև համեմատական ու գերադրական աստիճանով արտահայտված ածականները. օրինակ՝* Մնաց միայն *ամենափոքրը*՝ Հասմիկը *(ՆԶՀ, 170)*։ Մի ուրիշը կգա, գուցե *ավելի ուժեղն ու վտանգավորը (Նույն տեղում, 126)*։ *Դժվարագույնն* այդ բլրակների բարձրանալն էր *(Շիրվ., VIII, 340)*։

§ 91. *Այն ածականները, որոնք կիրառվում են նաև իբրև գոյականներ, կամ ավելի ճիշտ, որոնց խոսքի մասային սահմանները մերթ հարում են գոյականներին, մերթ ածականներին, ապա այդպիսիները ենթակա են դառնում նաև առանց հոդի։ Սակայն այդ կարգի ածականներն արդեն գոյական են և դուրս են գալիս ածականների շարքից։*

§ 92. *Գրաբարի անցյալ դերբայը հաճախ հանդես է գալիս նաև իբրև ածական և նախադասության մեջ իբրև ենթակա կիրառվում է սովորական ածականների նման. օրինակ՝* Թող հանգիստ քնի *հանգուցյալը (Իս., III, 161)*։ Ինքն է *ամենակատարյալը* դրախտի մեջ *(Նույն տեղում, 222)*։ *Մնացյալները* հաղթանակով վերադարձան *(Մուր., III, 340)*։

Այդպես է նաև գրաբարի ապառնի դերբայը, որ այժմ նույնպես դերբայ է համարվում. օրինակ՝ Զարմանալին այն է, որ միմյանց չտեսանք: Այս դեպքում *կարելին* անկարելի է դառնում:

Ապառնի դերբայի իք-*ով ձևը երբեմն իբրև ածական, հաճախ*

էլ իբրև գոյական է գործածվում. օրինակ՝ Կավի հոտ զգաց իր հոտոտելիքը (նույն տեղում, 221)։ Համեմատիր նաև իբրև խնդիր. Մեր նախարարները մայրական, պապական պատերազմ են կարծում լինելիքը (ԴԴՎ, 442)։

4. ԲԱՅՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

ա) ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ 93. Ինչպես ցույց է տալիս անվանումը, այս դերբայը հաճախ է ենթակա դառնում, որովհետև ցույց է տալիս «գործող կամ եղող, լինելու, կամ գործողության կատարման համար ունակ լինելու բայական գաղափարը»[1]։ Եվ ենթակա դառնալով առարկայանում է այնքան, որ կարող է մինչև անգամ առանց հոդ առնելու էլ ենթակա դառնալ։ Ենթակայական դերբայը ենթակա է դառնում նաև հոգնակի թվով և այս դեպքում այն ավելի է առարկայանում։ Կան այնպիսի ենթակայական դերբայներ, որոնք արդեն գոյականացել են. բայական հասկացողությունը նրանց մեջ երևում է կողմնակի կերպով. օրինակ՝ ծնող, սիրող, գրող (писатель) և այլն։ Համեմատի՛ր. Ծնողները բանավոր գտին վարսավիրայի առաջարկությունը (Մուր., V, 261)։ Ահա մի քանի նախադասություններ, որոնց ենթական ենթակայական դերբայ է. Չկա կռվում հաղթող երկու, Մեկն է հաղթող, պարտվողը մեկ (ԴԴՎ, 687)։ Նրանց տեսնողը կամ պիտի սարսափեր, կամ ոգևորվեր (Մուր., III, 44)։ Եկողն ուրիշ ինչ պիտի տեսնի (Մուր., V, 130)։ Լսող չկա (ՄՆԸԵ, 281)։ Երբ տի թողնես ապրողն ապրի (Թ., I, 210)։ Նույնիսկ կարծողներ կային (ՁԵ, 328)։ Դրանց վրա եկողները ոչ այլ ոք էին... (Մուր., III, 345)։ Իսկ երկրորդ հարկում ապրում են գյուղի ղեկավար աշխատողներ (ՆՁՀ, 67)։ Հանգստացողները հագնվել էին այնպես... (ՍԳԱ, 51 թ., № 7, 55)։ Նրանք գործում են, սակայն ընթերցողը հաճախ չի հավատում նրանց գործողություններին (նույն տեղում, 85)։ Իսկ հարձակվողը մենք ենք լինելու (Քոչար, 379)։

բ) ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

§ 94. Հարակատար դերբայն իբրև գործողի կամ եղողի հատկանիշ արտահայտող բայական ձև որևէ հոդով առարկայանում է և դառնում նախադասության ենթակա՝ գործածվելով թե՛ եզակի

[1] Տե՛ս Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը», էջ 227—228։

և թե՛ հոգնակի թվով։ Այս դերբայի մեջ բայական գաղափարը շատ ավելի ուժեղ է, քան ենթակայական դերբայի մեջ, ուստի սա առանց հոդի ենթակա չի դառնում։ Ինչպես նշվել է, հարակատարի ձևով, նաև առանց հոդի գործածվող բառերը գոյական են և իբրև գոյական անցել են մեր նոր գրական լեզվին (տե՛ս § 53)։

Օրինակներ. Ասվածն արված է *(Շեքս., II, 82)։ Ասածս* ասած վերջացած է *(Նար., I, 470)։* Յուր *տվածը* արձանագրվում է մի տեղ *(Մուր., V, 128)։* Մանավանդ *գիտեցածս* էլ հատնում էր *(նույն տեղում, 122)։* Իմ տասը մանեթը տուր, *մնացածը* քու փողն է *(նույն տեղում, 156)։* Բայց *անցկացածն* անց էր կացել *(նույն տեղում, 159)։* Ուրեմն ճիշտ է այդ տղայի *ասածը (Շիրվ., VII, 188)։* Քո *տեսածները* մերը չեն *(նույն տեղում, 191)։* Այլ է վեպերի մեջ *նկարագրածը (Շիրվ., VIII, 88)։ Արածս* լավ բան չէ *(նույն տեղում, VI, 53)։* Որսորդական փչոց է մորուք Ասատուրի *պատմածը (ՎԱՍԱ, 43)։* Ձեր *ունեցածը* միայն եկեղեցական սպասներ են *(Մուր., V, 122)։*

§ 95. Հաճախ ենթակա հարակատար դերբայի հետ իբրև կողմնակի ենթակա գործածվում է մի գոյական. այս պարագայում երկուսը միասին պետք է վերցնել իբրև մի բաղադրյալ ենթակա. օրինակ՝ Մեր *գլուխը տաքացածները*, ընդհակառակը, նրան ճարեցնելու համար ցույց են սարքում *(ՀՀԵ, 417)։* Այդ *թանգարան կոչվածը* ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի հասարակ խուց *(Մուր., V, 121)։* Էս անպատիվ *Վարոս չեղածդ* ի՛նչ առավ էս քածը բերեց լուսահոգի Շողոյի տեղը *(Իս., III, 150)։ Ընդհանրապես հարակատարով դերբայական դարձվածքը, եթե ենթակա է դառնում, ամբողջ միասնաբար մի ենթակա պետք է համարել։*

գ) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

§ 96. Անորոշ դերբայն իբրև գործողության անվանում շատ դյուրությամբ, հոդի շնորհիվ գոյականանում է և կիրառվում իբրև ենթակա։ Անորոշ դերբայի այս կիրառությունը գրեթե չի տարբերվում ածականների և մյուս դերբայների ենթակայական պաշտոնի կիրառման ձևերից. օրինակ՝ Աղա՛, *հարցնելը* ամոթ չլինի *(Թ., II, 35)։* Բայց վեճը շատ *խոսելը և բարձր* կանչելը չէր որոշում *(ԱԲՄԹՆ, 58)։* Անձայն ու հասարակ էր նրանց *հավաքվելը (ԴԴՎ, 390)։ Շահելը* միևնույն պահելու իմաստն ունի *(Թ., V, 42)։* Դեռ սակավ էր մի կողմ *դնելը* իր սիրո զբոսիկ անձնական երջանկության հետամուտ զգացմունքը *(ԴԴՎ, 446)։* Ինչ որ *ծածկելը* մեզ շատ ավելի

գլխացավ կտա, ճաճ թե *հայտնելը*՝ դժկամությունն *(Շեքս., I, 32)*։ Փոքրիկ տորմիղով մեզ դեմ *խիզախելը* միայն մի պատրվակ էր *(Մուր., III, 345)*։ *Քո գալն* ավելի անհնարին է դառնում *(Շիրվ., VII, 199)*։ *Ասելդ* ինչ է *(ԱՋՄԿՊ, 160)*։

§ *97—98. Իբրև ենթակա անորոշ դերբայը հաճախ հանդես է գալիս ամբողջական դերբայական դարձվածով։ Այս դեպքում ենթակա պետք է համարել ամբողջ դերբայական դարձվածը իր բոլոր անդամներով. օրինակ՝* Բայց *կրոնը կենդանացնելը* նրա ուժերից վեր եղավ *(ՍՇԸե, 304)*։ Իմ՝ Ցուրինովի *բանտ-դեղատան մեջ տապակվելս* էլ երկար չտևեց *(ՀՀե, 329)*։

§ *99. Եթե անորոշ դերբայը մի հարադրական բարդություն է, ապա ենթակա պետք է համարել հարադիրը և բայը միասնաբար. օրինակ՝ Ետ գնալը* անհնարին էր *(ՎԱՍԱ, 51)*։

§ *100. Անորոշ դերբայը առանց հոդի ենթակա է դառնում անդեմ նախադասությունների համար։ Սովորաբար այդպիսի անդեմ նախադասությունները կազմված են լինում մի ածականից, մակբայից և կամ մի այլ խոսքի մասից ու մի բայական հանգույցից։ Այդպիսի անդեմ նախադասությունը արտահայտում է հնարավորություն, անկարելիություն, ժամանակային և այլ հարաբերությունների հնարավորություն, անհնարինություն, հարմար լինելը և այլն. օրինակ՝* Պետք է, անհրաժեշտ է, հատուկ է, ուշ է, հարմար է, վաղ է, անկարելի է *և այլն։ Օրինակներ՝* Երկինքը վկա, այնքան հատուկ է մեր ծերությանը մեր կասկածները շատ հեռու մղել, որքան հատուկ է դեռահասներին անխոհեմ *լինել (Շեքս., I, 32)*։ Ինձ մի քանի տեղ ևս պետք է *անցնել (Ր., II, 542)*։ Այժմ Միքայելին պետք էր *վազել* այստեղ *(Ր., II, 560)*։ *Թողնել* այս վտանգավոր ուղին ուշ է և անկարելի ինձ համար *(Շիրվ., VI, 59)*։ Ժամանակն է իրենց *գնալ* տուն *(ՀՀե, 265)*։ Հարկ է հոգին *տալ (Փափ., 278)*։ Դժվար էր *ըմբռնել* այդ ժպիտի իմաստը *(Քոչար, 381)*։ Կամակոր հազարացուն *համոզել* անկարելի էր *(Մուր., III, 350)*։ Դժվար չէր *հասկանալ (ՍՇԸե, 141)*։ Երբ կարելի է այսպես *ասել (Նույն տեղում, 297)*։ Հարկավոր է զգույշ *լինել (ՍԳԱ, № 7, 52)*։

§ *101. Անդեմ նախադասություններ են կազմում նաև եղակի թվով գործածվող մի շարք չեզոք բայեր, որոնք արտահայտում են խնդիր, հարկադրանք, առաջարկ, հրաման և այլն. սրանց համար անորոշ դերբայը ենթակա կարող է լինել առանց հոդի, որը (դերբայը) տվյալ դեպքում բայերի գործողության նպատակն է հիշեցնում։* Այդպիսի *բայերից հիշենք*՝ մնում է, հրամայվում է, հաջող-

291—4

վում է, կարգադրվում է, խնդրվում է, առաջարկվում է, խորհուրդ է տրվում *և այլն*։ Մնում է մի անգամ էլ *տեսնվել* տեղացիների հետ (*Շիրվ., VII, 183*)։ Անձնակազմերին հրամայված էր *շարժվել* ուղղակի մարտակարգերի հետ (*Քոչար, 383*)։ Անուշին չհաջողվեց նոր մարդ *ճարել* (*ՆՋՀ, 121*)։

§ 102. *Անորոշ դերբայն իբրև ենթակա վերևի երկու պարբերություններում քննված օրինակների և նմանների մեջ այնքան է մթնել և այնքան թույլ է գիտակցվում, որ դերբայը և նրա հետ կիրառվող բայը և բայական կապակցությունը դիտվում են իբրև մի բարդ ստորոգյալ։ Համեմատի՛ր հետևյալ օրինակները.* Նախ պետք է բացատրել երեկվա դեպքը: Քո՛ւյր, կարելի է կարծել, որ կամ դու ես խելագարվել, կամ ես (*Շիրվ., VII, 186*)։ Ուրեմն պետք է հարվածել և ոչնչացնել նաև նրան (*ՆՋՀ, 390*)։ Պետք է աշխատել, աշխատել ավելի շատ ու ավելի արդյունավետ (*Քոչար, 5*)։ Որ կարելի էր անվերջ ու անվերջ լսել (*Նույն տեղում, 6*)։ Անհրաժեշտ է իմանալ (*Շիրվ., VI, 303*)։ Պետք է սիրել մերձավորին և չխեղդել նրան (*ՍՇԸՆ, 298*)։ Չի կարելի ներս գնալ (*ՎԱՍԱ, 103*)։

§ 103. *Անորոշ դերբայն իբրև ենթակա առանց հոդի է գործածվում նաև, երբ ստորոգյալ են դառնում* լինել, գոյություն ունենալ, կա (*չկա*), ունենալ *բայերը. օրինակ՝* Յասավուլի համար *հարցնել* չկա (*ՊՊ, I, 433*)։ Նոր նախագահի հետ լեզու *գտնել* չի լինում (*ՆՋՀ, 126*)։ Ա՛յ, ինչ ասել է փող *չունենալ* (*Քրեստ., IX, 27*)։ Էդ֊ ֆան *կարդալ* չի լինի (*ՍՁՄԿՊ, 166*)։

§ 104. *Անորոշ դերբայն անհոդ է կիրառվում նաև այն դեպքում, երբ համադաս է գալիս իբրև բազմակի ենթակա։ Այս պարագայում բազմակի անորոշները իրենցից հետո դերազանցապես մի ընդհանրացնող ցուցական են ընդունում, որը դառնում է դրանց ընդհանրացնող ենթական. օրինակ՝* Լինել աղքատ, լինել մուրացկան, լինել շրջմոլիկ, դա հենց այն է (*ՍՇԸՆ, 303*)։ *Համեմատի՛ր.* Որն է հոգեպես ավելի ազնիվ. տանել զոռ բախտի պարսաքարերը և սլաքները, թե զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ (*Շեքս., I, 49*)։

Բերված օրինակներում անորոշ դերբայների ենթակա լինելը շատ թույլ է զգացվում. ավելի ցայտուն այն է, երբ անորոշները առանց միջնորդող բառի են ենթակա դառնում. օրինակ՝ Սիրել և այնպես *ատվել, հավատալ* և այնպես *մոլորվել, արհամարհվել, ոտնատակ լինել* ծաղրի ու ծանակի առարկա *դառնալ*՝ անտանելի է (*Շիրվ., VI 36*)։

§ 105. Պետք է նկատի առնել, որ անորոշ դերբայն իբրև են-թակա, հոգնակի չի ունենում։ Չնայած ասվում է՝ գնալներդ լինի, գալներդ չլինի: Գալներս չհաջողվեց և այլն, բայց սա արտահայ-տում է ոչ թե անորոշի հոգնակին, այլ անորոշ դերբայի հատկա-ցուցիչի հոգնակին։

§ 106. Մնացած դերբայները ենթակայի պաշտոնով հանդես չեն գալիս. եթե կիրառվո՛ւմ են նույնիսկ, այդ արդեն այն չէ, ինչ որ վերևում քննեցինք։ Հայերենում ամեն բառ գոյականանում, ա-ռարկայանում է, բայց կան խոսքի մասեր, որոնց գոյականացումը դառնում է դրանց անվանումը, դրանց այս կամ այն թանձրացյալ արտահայտությունը, անունը և ոչ թե ինքը՝ այդ հասկացողությու-նը։ Երբ ասում ենք՝ իմ գնալը չեղավ, այստեղ գնալը իբրև բայա-կան հասկացողություն, իբրև անորոշ դերբայ, պահպանվում է և օժտվում է մի այլ պաշտոն կատարելու հնարավորությամբ, իսկ երբ ասվում է՝ էդ ամեն որովհետևներն էլ կարող են լինել և կան (Թ., IV, 213), այս դեպքում որովհետևը վերցվում է իբրև մեջբե-րում, իբրև շաղկապի անուն, իբրև բառ, որ չի պահպանում իր խոսքի մասային բնույթը, այլ վերածվում է իբրև այդպիսին։

5. ՎԵՐԱԾՎԱԾ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ 107. Այն խոսքի մասերը, որոնք ենթակա են դառնում՝ չպահպանելով իրենց խոսքի մասային բնույթը, մենք, տվյալ դեպ-քում, անվանում ենք վերածված խոսքի մասեր։ Դրանք այդպես ենք կոչում միայն իրենց ենթակայական պաշտոն ունենալու պատ-ճառով և ո՛չ թե ընդհանրապես։

Վերածված խոսքի մասերի մեջ մտցնում ենք դիմավոր բայերը, շաղկապները (այնպիսիները, որոնք միայն և միայն շաղկապ են), մակբայները, կապերը, ձայնարկությունները, իբրև ենթակա հան-դես չեկող դերանունները, ինչպես նաև այն դերանունները, որոնք վերածվելով դառնում են անուն, բառ և իբրև այդպիսիք են ենթա-կա դառնում և ո՛չ թե իբրև դերանուն։ Այս բոլոր դեպքերում ենթա-կան դրվում է հոդով։

6. ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ 108. Դիմավոր բայը իր վերջավորություններով հանդերձ ո-րոշիչ հոդ է ստանում և դառնում ենթակա. օրինակ՝ Այն բանը, ինչ

որ կուզեինք անել, Պետք է անեինք, երբ որ կուզեինք. Քանզի մըշտապես այդ *կուզեինքը* փոփոխվող բան է (*Շեքս., I, 90*)։ Այս *«չեն հիշում»-ը* ինձ այնքան վշտացրեց (*Թ., V, 341*)։ Ու այս *«շարում ես, քանդում ես»-ը* կատակի խոսք էր դառել նաև հանգստյան տան բանվորների համար (*«Ընտիր էջեր», 903*)։ Բարձր է հնոց աշխարհքն հայոց ու Մասիսը երկնադետ. Իմ խոր հոգին էն բարձրունքին խոսք է բացել նրա հետ՝ Անհաս բանից, ըսկզբանից, երբ *չըկան* էլ դեռ չկար... (*Թ., I, 214*)։ Առեք կերեքը վկա (*լինի*) (*Շիրվ., V, 205*)։

Ենթակա կարող է դառնալ նաև բաղադրյալ անվանական ստորոգյալը. օրինակ՝ Հետո *«պետք էրը»* նման է վառնող մի հառաչանքի (*Շեքս., I, 91*)։

7. ՇԱՂԿԱՊՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ *109. Շաղկապները նույնպես թե՛ եզակի և թե՛ հոգնակի ձևով հոդ են առնում և դառնում ենթակա. օրինակ՝* էդ ամեն *որովհետևներն* էլ կարող են լինել և կան. սակայն մի *որովհետև* կա, որ ինձ թվում է, թե ամենալուրջ պատճառն է (*Թ., IV, 213*)։ Հենց այդ *«եթեն»* է գործը փչացնում (*Շեքս., II, 94*)։ Անշուշտ մեջտեղը մի *և* կա (*Շիրվ., III, 463*)։

8. ՄԱԿԲԱՅՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉ ԲԱՌԵՐԸ ԵՎ ՀՈԼՈՎՎԱԾ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ *110. Նույն ձևով ենթակա են դառնում նաև մակբայները, եղանակավորիչ բառերը, դերանունները. օրինակ՝* Բարի ճանապարհ, թող *շտապը*[1] ապացույց լինի (*Շեքս., I, 11*)։ Կարծես այդ *«նրանքը»* իսկի մարդիկ չէին (*Մուր., V, 130*)։ Եվ թեպետ այդ ժամանակի քննական կարողությունն էլ հաճախ ջլատում էր կուսակցական *«իմ և քո»*-ն (*Մուր., V, 374*)։ Ձուլվում է *եսը* հզոր մենքի հետ (*ՀՀԵ, 194*)։ Ինձ համար *«չէ»* չկա (*Շաթիրյան, 411*)։ Քանի *իմ* ու *քու* կա, սեր ու խիղճ չկա (*Իս., III, 70*)։ Իսկ այդ *սրանքը* շատ անգամ հինգ կամ վեց հոգի էին լինում (*Մուր. II, 122*)։ Միայն թե ապրի իմ *եսը* (*Իս., III, 212*)։ Գեղարվեստական երկի համար նշանակություն ունեն *«ինչպես»*-ը և *«ինչ»*-ը[2] (*ՍԳԱ, 55 թ., № 3, 120*)։ *Այոն* հին ժամանակ խամ խոսք էր (*ՎԱՍԱ, 347*)։

---

[1] Շտապ *բառը հնում գոյական էր, դուցե այստեղ կիրառված է իբրև այդպիսին։*

[2] *Որոշ նկատառումով օրինակը փոխված է։*

Ես կարող եմ լռել, եթե ձեր *«ոչ»*-ը փոխվի *«այո»*-ի *(ԳՍԹ, I, 439)*։ Գոռշյանի համար գրեթե չկար *«դուքը» (Շիրվ., VIII, 183)*։ Ովքեր են այդ *«իրենքը» (ՆՔՀ, 196)*։ Երբ որ *երբը* կգա: Ե՞րբ կգա այդ *երբը (Նար., I, 236)*։ Բայց այդ *«ինչու»*-ները անթիվ են *(Մուր., V, 126)*։

9. ԹՎԱԿԱՆԸ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

ա) ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

§ 111. Հայերենի թվականներից իբրև ենթակա ամենից շատ գործածվում են քանակականներն ու դասականները։ Քանակական թվականները երկու կերպ են ենթակա դառնում՝ հոդով և առանց հոդի։ Հոդով թվականները կիրառվում են միշտ այնպես, ինչպես ածականները, այսինքն՝ հոդով փոխանունաբար նշանակում են այն առարկաները, որոնք բովանդակվում են այդ թվերի մեջ. օրինակ՝ Երեքն էլ նստեցին սեղանի *շուրջ (Նար., II, 255)*։ *Երեքս* էլ զգում էինք մեր դրության կեղծիքը *(Շիրվ., VII, 481)*։ Ուր է այն *մեկը (ՀՀԵ, 133)*։ *Երկուսը* մի ամբողջություն են կազմում *(«Ընտիր էջեր», 952)*։ *Քսանվեցը* անխոս հեռանում են: Ես *շրջում* են այդպես *քսանվեցը (ՉԸ, 404)*։ *Մեկը* թող լինի մեկ հիմար կարծվող ծաղրածու *(ՂԱՀ, 76)*։ *Երկուսդ* էլ իմն եք *(Թ., III, 159)*։ *Երկուսն* էլ հայ են, ունեն մի հավատ *(Թ., II, 42)*։ *Երկուսս* էլ ընկանք նրա մահճակալի վրա *(ՐԿ, 591)*։ Խո հիմա *երեքդ* էլ ձեռքո՞ւմս եք *(Փափ., 605)*։ *Երկուսդ* էլ հուզված էիք *(Շիրվ., VII, 183)*։ Ուր *հազարն* է մեկ և *մեկը*՝ հազար *(ՀՀԵ, 233)*։ Այլ է *հազարը (ՀՀԵ, 190)*։ *Երեքն* էլ լավ տրամադրության մեջ էին *(Նար., II, 243)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Այս նշանակությամբ քանակական թվականների անհոդ կիրառությունը բարբառային բնույթ ունի, ուստի և անթույլատրելի է. օրինակ՝ Լոռիին *մեկ* բավ է, չլոռիին *հազարն* ալ խեր չունի *(Առած., 74)*։ *Հազար* կմեռնի, մեկ չի շվարի, *մեկ* կմեռնի, *հազար* կշվարի *(Նույն տեղում, 1)*։

§ 112. Այս նույն կիրառությամբ քանակական թվականները կարող են նաև ենթակա լինել հոգնակի թվով. օրինակ՝ Տարին մի անգամ, տարին մի անգամ Գալիս են ահա այս *հազարները (ՀՀԵ, 232)*։ *Սակայն անհրաժեշտ է նշել, որ հոգնակի կիրառվում են պարզ խոշոր թվականները՝ սկսած հարյուրից. օրինակ՝ ասվում է. հարյուրները, հազարները, միլիոնները* ոտքի են ելել, շարժվում են *և այլն*։

§ 113. *Հենց այս վերջինները կարող են նաև անորոշ, ընդհանուր կերպով առանց հոդի գործածվել. օրինակ՝ ասվում է՝ հազարներ* են ծախսվում, *միլիոններ* են խնայվում և այլն։ *Նույն ձևով դրանք նաև եզակի են լինում։*

Իսկ փոքր թվերը՝ սկսած մեկից մինչև հարյուր հոգնակի կարող են կազմվել, բայց ո՛չ այդ նշանակությամբ, այլ իբրև սոսկ թվանշաններ՝ թե՛ հոդով և թե՛ առանց հոդի. օրինակ՝ Իմ օրագրում գրանցվեցին *հինգեր(ը)։* Քո օրագրում *չորսեր* են շարված *և այլն։*

Պետք է եզրակացնել, որ ամեն դեպքում հոդով կիրառված թվականը միայն փոխանունաբար չէ, որ գործածվում է. այդպիսի թվականը կարող է պարզապես հենց թվանշանը արտահայտել։ 9-ը բաժանվում է 3-ի վրա (Կիս., Թվաբ., V—VI, 67)։ Համեմատի՛ր. ժամը տասնիսն — 10-ը կլիներ *(Փափ., 84)։ Չնայած որ այստեղ էլ նախապես ժամ բառը մտածվել է, բայց այժմ այդ այլևս չի ըմբռնվում։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Քանակական թվականները առնում են նաև դիմորոշ հոդ. օրինակ՝ երկուսս, հինգս, ութս *և այլն։*

բ) ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

§ 114. *Դասական թվականները ենթակա են դառնում քանակականների նման. այսինքն որոշյալ հոդով ցույց են տալիս այն առարկան, որը դասվում է տվյալ թվականի տակ. օրինակ՝* Առաջինը չաչանակ Սերգոն էր: *Երկրորդը՝* գզականգործ Ծղալոբը: *Երկրորդը* մի երիտասարդ էր *(Մուր., II, 293, 294)։* Առաջին պատճառը և՛ հարգելի, և՛ իրավացի է, բայց *երկրորդը՝* անիրավ *(Մուր., III, 340)։ Երկրորդը, չորրորդը,* նույնպես ուրիշներն եղան *(ՍՉ, V, 162)։ Երրորդը* իբրև փայակ վազում էր նրանց առջևից ոտով *(Ր., III, 294)։*

§ 115. *Դասական թվականը անորոշ ձևով ենթակա է լինում, երբ արտահայտում է ոչ թե անձ, առարկա, որ դասվում է տվյալ թվականի տակ, այլ պարզապես նշում է թվականը. օրինակ՝ թեև առանձին* ասվում է առաջին և ոչ մեկերորդ *(ՀԱԾՀՔ, I, 295)։ Դասական թվականները կարող են կիրառվել նաև հոգնակի թե՛ հոդով և թե՛ առանց հոդի, միայն սրանք դիմորոշ հոդ են առնում անձնական դերանվան հետ միասին գործածվելով.* ես երկրորդս և դու հինգերորդդ գնացինք։

10. ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ, ՀԱՎԱՔԱԿԱՆ, ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ, ԲԱՂԿԱՅԱԿԱՆ, ԶԱՓԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ *116. Հիշյալ թվականները իրենց կազմությամբ հիշեցնում են ածականների կազմությունը, ուստի և ածականների նման դառնում են ենթակա թե՛ հոդով և թե՛ առանց հոդի. օրինակ՝* Այդտեղ էլ դրված էր երկու 5-անոց *(Մուր., IV, 22)*։ Այսպես են *կես* և *չարեկ* «քառորդ» *(ՀԱԺՀՔ, I, 315)*։ Թեև առանձին ասվում է *առաջին* և ոչ մեկերորդ *(նույն տեղում, 295)*։ Դիցուք թե որևէ թվի մեջ կա երեք *հարյուրյակ*, մնացած *տասնյակները* հինգ են, իսկ *միավորները*՝ յոթ *(Կիս., Թվաբ., 7)*։ Իրենից առաջ մնացել են *հազարավորները (Մուր., I, 133)*։ Չորս *առաջնակները մահանում են 4—7* տարեկան հասակներում *(«Նորք», IV գիրք, 93)*։ Առանձին ձևեր են *տասնորդ, հարյուրերորդ, քառորդ (ՀԱԺՀՔ, I, 314)*։ Պահանջվում է գտնել մի այնպիսի թիվ, որ բազմապատկվի 4-ով, ստացվի 8-իններորդականը *(Կիս., Թվաբ., 7)*։ *8 ութերորդականը 100* ութերորդականի մեջ պարունակվում է 12 անգամ, *ընդ որում* 4 ութերորդական մնում է *(նույն տեղում, 107)*։ Որի ութ տասներորդը հարկավ կանայք էին *(Մուր., IV, 13)*։

11. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ *117. Ձայնարկություններից մի մասը հայերենում արդեն իբրև ենթակա է գործածվում. այդ կատարվում է ածականների ենթակա դառնալու նմանությամբ։ Դրանց համաբանությամբ էլ մյուս ձայնարկությունները հոդով առարկայանում, դառնում են իբրև բառանուն և այդպես էլ նախադասության մեջ կիրառվում են իբրև ենթակա. օրինակ՝ Վայն* եկել ու ձեզ տարել է հետո *(Փափ., 583)*։ *Ախ ու ուֆդ* առանց պատճառի չի *(Շիրվ., I, 256)*։ Մեկ էլ ականջիս հասնում է մի կոպիտ հայհոյանք, հետո *մի վայ (ՍՁՄԿ, 157)*։ Նախասենյակից լսելի եղավ նրա վերջին *«այու-այուն» (Ր., III, 161)*։

Ձայնարկությունները գործածվում են նաև հոգնակի թվով. օրինակ՝ Կովերի բառաչը, մաքիների մայունը, տավարածի *հա՛-հո՛-ները* և հովվական սրնգի մելամաղձիկ երգը մի հաճելի աններդաշնակություն էին կազմում *(Մուր., II, 24)*։

12. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ *118. Հայերենում ենթակա կարող են դառնալ ամբողջական նախադասություններ, ընդարձակ բառակապակցություններ, որոնք*

նախադասության մեջ դիտվում են իբրև մի միասնական ենթակա։ Ահա մի քանի օրինակներ։

Լենեերում ամեն մարդ լավ է հասկանում, թե ինչ կնշանակի *«շունը տարան»* (*Թ., III, 69*)։ *«Գամ ավելց ուտեմն»* ավելի զորեղ է մինչև անգամ, քան *«Հոգույս հատոր, սրտիս կտորը»* (*Թ., V, 19*)։ Իսկ как писал-ը այն (է), որ նրան հասնելիքը տամ (*նույն տեղում*, *237*)։ *«Դիցուք թե»* չէ հարկավոր (*Նար., II, 325*)։ Տարբեր էր ազդել նրանց պատասխան թուղթը (*ԴԴՎ, 289*)։ *85 բազմապատկած 6-ով* կազմում է 510 (*Կիս., Թվաբ., 30*)։ *15-ն առանց 8-ի* կլինի 7 (*նույն տեղում, 22*)։ *2700-ը բազմապատկել 15-ով* նշանակում է գումարել 15 թիվ (*նույն տեղում, 37*)։

§ *119. Հաճախ ենթական և ստորոգյալը իմաստով այնքան են սերտանում, որ մի բառական արժեք են ստանում, ուստի և մի շարահյուսական ամբողջություն են կազմում։ Ճիշտ է, ձևաբանորեն դրանք տարբերվում են միմյանցից, որովհետև ակնհայտ երևում է, որ մեկը բայ է, իսկ մյուսը՝ գոյական կամ այլ խոսքի մաս, բայց դրանք միասնաբար կիրառվելով կազմում են արդեն մի կապակցական ամբողջություն։ Դրանց վերլուծությունը առանձին ենթակայի և ստորոգյալի միայն ձևական և պայմանական բնույթ է կրում. օրինակ՝* Թե մի զուցե *բախտը բանի* (*Թ., I, 271*)։ *Քունս չի տանի* (*Քոչար, 682*)։ Կարո՛, *բախտդ բանել է* (*ՎԱՍԱ, 136*)։ *Բանը բանից անցել էր* (*Նար., II, 456*)։ *Ղոնաղն աստծուն է* (*ՎՄԼՈ, 25*)։ *Բանս վատ է* (*ՍՋՄԿՊ, 79*)։ *Բանն այն է* (*Քրեստ., 12*)։ *Համեմատի՛ր. Բանս բուրդ է*։ Իսկ իմ ուրախությանը *չափ չկա* (*ՍՋՄԿՊ, 173*)։

13. ՀՈԼՈՎՎԱԾ ԲԱՌԸ ԿԱՄ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ *120. Հայերենում ենթակա կարող են դառնալ նաև թեք հոլովներով հոլովված բառերը և բառակապակցությունները։ Բավական է այդպիսի ձևերի վրա որոշիչ հոդ դնել, որպեսզի դառնան առանձին առարկայացած բառեր՝ ուղղական հոլովով։ Այս դեպքում թեք հոլովով հոլովված բառը իր թեք հոլովական ձևով վերածվում է ուղղական հոլովի, ճիշտ այնպես, ինչպես դիմավոր բայերը իրենց խոնարհման վերջավորություններով առնվում են իբրև գոյական և ստանում են ուղղական հոլովի պաշտոն. օրինակ՝ «Գործակատարի հիշատակարանիցը»* տպվելուց հետո (*սա հավասար է, երբ «Գործակատարի հիշատակարանիցը» տպվեց* (*Շիրվ., VIII, 114*)։ Այդ չափ *«Նկատելովներն»* ո՞րտեղից գոյացան (*Փափ., 84*)։

§ 121. *Այն ենթակաները, որոնք կազմված են մեկից ավելի բառերից, կարելի է կոչել բաղադրյալ։ Այդպիսի ենթականեր մենք մասամբ տեսանք, երբ քննում էինք դերանունները (§ 62), ամբողջական նախադասությունները ու բառակապակցությունները (§ 103)։ Բաղադրյալ ենթակա առաջանում է նաև այլ բառակապակցությունների դեպքում, երբ կապակցության շարահյուսական կապը մթնել է, երբ պարզ չէ, թե ենթական և նրա հետ կապված բառը ինչ հարաբերության մեջ են գտնվում։ Հայտնի է, որ ենթակայի հետ կապված լրացուցիչ բառերը կա՛մ որոշիչ են, կա՛մ հատկացուցիչ, կա՛մ բացահայտիչ։ Ենթակայի հետ սերտ կերպով կապված այն բառը, որ այս երեքից ո՛չ մեկն է և ո՛չ մյուսը և չի էլ անջատվում նախադասության ստորոգյալի հետ, պետք է ենթակայի հետ վերցնել իբրև բաղադրյալ ենթակայի մի մասը. համեմատի՛ր.* Գևորգ Մարզպետունի, Աշոտ Երկաթ, Մայիսի մեկը, խաչագողի հիշատակարանը *և այլն։ Տե՛ս նաև ներքևում։*

14. ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻԲՐԵՎ ԵՆԹԱԿԱ

§ 122. *Թվականների, քանակ արտահայտող բառերի և այլ բառերի հետ հաճախակի կիրառվում է մի մասնական բացառական. օրինակ՝ Մեզանից* հինգը գնացին: *Շատերից* մեկը եկավ: *Աշակերտներից* մի քանիսը բացակայում են *և այլն։ Այս նախադասությունների մեջ բացառական հոլովով դրված բառերը ո՛չ որոշիչ են, ո՛չ հատկացուցիչ և ո՛չ էլ բացահայտիչ. կապված չեն նաև ստորոգյալի հետ, բայց քանակ արտահայտող ենթակաների հետ սերտ բառական միասնության մեջ են գտնվում թե՛ իմաստով և թե՛ հնչերանգությամբ։ Ուստի այս կարգի կապակցությունները պետք է ընդունել իբրև մի բաղադրյալ ենթակա. օրինակ՝ Աշակերտներից երկուսն* այս մի քանի օրը գալիս չեն եղել *(Նար., VI, 48)։ Թե որն իրենցից* շատ տարի կապրի *(Թ., I, 288)։ Չորսից ոչ ոք* ուշադրություն չի դարձնում *(Շիրվ., VII, 363)։ Կանանցից մեկը* բաժանվում է խմբից *(Անթ., 184)։ Հայերից* միայն *ընտրյալները* ունեին *(Մուր. V, 195)։* Գյուղացիներից շատերն էին համամիտ Ավան ամու ասածներին *(ԱԲԵ, 447)։*

§ 123. *Այս երևույթը որոշակի դիտվում է, երբ ենթական իր մասնական բացառականի կրկնությամբն է. օրինակ՝ Օրն* էլ ամառվան էն տաք օրերից է լինում *(Թ., III, 235)։*

§ 124. Որ բացառական հոլովով կիրառվող այդպիսի բառերը ենթակայի մաս են կազմում և ո՛չ թե լրացում են, երևում է նաև նրանից, որ երբեմն դրանց մոտ դրվող ենթական վերջվում է, և դրանք են ստանձնում ենթակայի պաշտոնը. օրինակ՝ Հին ծանոթներից երբեմն այցելության էին գալիս *(ԱԲՆ, 403)։*

§ 125ա. Առհասարակ գործողություն արտահայտող գոյական ենթակայի բացառական խնդիրները պետք է դիտել իբրև բաղադրյալ ենթակայի բաղադրիչ, այլապես նախադասության մեջ նրանց դերը մնում է բաց. օրինակ՝ Իմ *պահանջները կյանքից* և ձեր աղջըկա պահանջները չեն կարող հաշտվել *(Շիրվ., VII, 358)։ Այս նախադասության մեջ* կյանքից *բառը* իբրև խնդիր *շատ սերտ կապված է* պահանջները *ենթակայի հետ. ծայրահեղ դեպքում* կյանքից *բառը պետք է համարենք որոշիչ, բայց որոշիչային նրա ըմբռնումն այստեղ չափազանց թույլ է, քանի որ կողմնակի խնդիր է, բայց այս դեպքում խնդրի դերով հանդես չի գալիս։ Այսպիսի կապակցությունները մոտենում են դերբայական դարձվածքի, որպիսին, եթե ենթակա է, նույնպես մի բաղադրյալ ենթակա է համարվում։*

§ 125բ. Ենթական հաճախ դրվում է միասնության գործիական հոլովով որևէ բառի հետ. օրինակ՝ —Չէ, ասավ Մելիք, քու ամբողջ *ազգով* Անց պիտի կենաս իմ թրի տակով *(Թ., II, 104)։*

Այս նախադասության մեջ ենթական վերջված դու *դերանունն է, իսկ* ազգով *ձևը որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ չէ։ Միայն կարելի է ձևի պարագա մտածել, սակայն դա իրոք ձև չի ցույց տալիս, այլ միասնաբար գործածվող հոլոված բառ է, որ կարելի է դիտել իբրև ենթակայի բաղադրիչը։ Համեմատի՛ր. Մենք երկուսով միասին* թաղում էինք մեր առաջին սերը *(ՀՀՆ, 319)։ Այս դեպքում գործիական հոլովով դրված բառը ավելի ուժեղ է հարում ենթակային, քանի որ գործիականով բառը վերաբերում է արդեն ենթակայի մեջ մտածներին միաժամանակ։*

§ 126. Ամեն գործիականով դրված գոյական ենթակայի մաս չի կարող համարվել. ենթական և գործիականով դրված գոյականը պետք է հավասար լինեն ոչ միայն իրենց շարահյուսական կիրառությամբ (ձևով տարբեր են), այլև իրենց բառական նշանակությամբ. օրինակ՝ Կցանկանայի ձիրք ու շնորհքով, գեղեցկությունով, հարստությունով, *բարեկամներով* հաշվից դուրս լինել *(Շեքս., I, 541) նախադասության մեջ դրված գործիականով բառերը շարահյուսական կիրառությամբ նման են, իսկ բառական նշանակությամբ՝ տարբեր.* բարեկամներով *բառը իմաստով տարբեր է՝ դա*

արտահայտում է անձ, որ կարող է գործողության կատարմանը մասնակցել։ Նույնը չեն կառքով գնացի և ընկերներով գնացի *նախադասությունները. առաջին դեպքում կհարցնենք* ինչպե՞ս, ինչո՞վ, *իսկ երկրորդ դեպքում՝* ո՞ւմ հետ:

§ *127. Այս երևույթը կարող է արտահայտվել նաև* հետ *կապով. օրինակ՝* Եվ ինչպես *ճորտը* շվայտ Հռոմում *պատրիկների հետ* չի նստել ճաշի *(Չե, 181)։*

Այս պարագայում միասնությունը ավելի սերտ է լինում, երբ առորոգյալը հոգնակի է դրվում. օրինակ՝ Ջոն իրեն երջանիկ էր զգում տեսնելով, որ մայրն իր հավանած կնոջ հետ նստել են վիլիսի հետևում *(Աբիգ., 301)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Պետք է նշել նախ այն, որ գործիական հոլովով դրված հիշյալ միասնության բառերը ավելի թույլ են առնչվում ենթակայի հետ, քան բացառականով դրվածները։ Ելնելով սրանից՝ դրանք կարելի է կոչել նաև միասնության, ձևի պարագաներ։

§ *128. Քանակական բառերը երբեմն կիրառվում են նաև սեռական հոլովով դրվող հատկացուցիչի հետ.* մեր հինգը, նրանց մի քանիսը, երեխաների մեծ մասը *և այլն։ Նախադասության վերլուծության ժամանակ այսպիսի սեռականները համարվում են հատկացուցիչ։ Սակայն այս կարգի սեռականներից շատերն այնքան են սերտ կապված իրենց հատկացյալների հետ, որ դրանք ևս կարելի է միասնաբար իբրև մի բաղադրյալ ենթակա ընդունել. այսպես, օրինակ՝* Քուն թե արթուն *օրիս շատը* Երազ եղավ անցկացավ *(Թ., I, 211)։*

§ *129. Ենթական բաղադրյալ է համարվում նաև այն դեպքում, երբ ենթակա են դառնում այնպիսի բառակապակցությունները, որոնց մասերի միջև շարահյուսական կապերը արդեն մթնել են և ձուլվելով՝ դրանք դարձել են մի ամբողջական հասկացություններ. օրինակ՝ Սովետական Միությունը* աշխարհի ամենահզոր պետություններից մեկն է: *«Սովետական Հայաստանը»* ամեն օր ահազանգում է գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացնելու մասին: *Վերին Արտաշատը* ժամկետից շուտ ավարտեց խաղողի բերքահավաքը:

Ուրեմն՝ Սովետական Միություն, Սովետական Հայաստան, Վերին Արտաշատ *և այս կարգի բոլոր կապակցությունները պետք է նախադասության մեջ միասնաբար վերցնել և ոչ թե բաժանել որոշիչ որոշյալի կամ հատկացուցիչ հատկացյալի և այլն։ Այստեղ*

արդեն ավելորդ է ասել գծիկով միացած բառերի, հարադրական բարդությունների և այլ կարգի կապակցությունների մասին, որոնք նախադասության մեջ ենթակա կամ այլ անդամ դառնալիս պետք է միասնաբար դիտվեն իբրև մեկ անդամ։

ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 130. Ստորոգյալը նախադասության այն գլխավոր անդամն է, որ ցույց է տալիս ենթակայի փոփոխվող հատկանիշները, այսինքն՝ նրա գործողությունը, դրությունը, որակական այլ առանձնահատկությունները ժամանակի մեջ։ Ամեն անգամ, երբ վերոհիշյալ հատկանիշները վերագրում ենք ենթակային, կատարում ենք ստորոգում. ամեն հատկանիշ չի կարող ստորոգյալ լինել, ինչպես որ ամեն վերագրում ստորոգում չէ։ Ստորոգում է միայն այն վերագրումը, որը կատարվում է որոշակի քերականական ժամանակի մեջ։ Հաճախ հատկանիշը վերագրվելով հանդերձ համասարեցվում է առարկային. օրինակ՝ երբ ասում ենք սպիտակ ձյուն, հատկանիշը վերագրում ենք առանց ժամանակի և հատկանիշի համասարեցման, իսկ երբ ասվում է՝ ձյունը սպիտակ է (սպիտակ եղավ), ապա այս դեպքում նշվում է վերագրման ժամանակը (ներկա և անցյալ), և հետո որոշ հատկանիշներ և առարկան դրվում են համասարեցման մեջ։ Ամեն ստորոգյալ, լինի բայական, թե՛ անվանական, արտահայտի առարկայի գործողությունը, թե որակը, համարվում է հատկանիշ, որն առարկայի հետ նախադասության մեջ տարբեր, բայց համասարազոր դեր է կատարում։ Առարկան ենթակա է, իսկ հատկանիշը ստորոգյալ։

§ 131. Ստորոգյալները ըստ իրենց բնույթի լինում են երկու տեսակ՝ բայական և անվանական։ Բայական կոչվում է այն ստորոգյալը, որն արտահայտվում է բայով։ Եթե բայի հետ միասնաբար հանդես են գալիս նաև այլ խոսքի մասեր, և դրանք տվյալ բայի հետ մի նոր իմաստի բայ են կազմում, չեն դառնում նրա անվանական մասը, այլ նրա հետ բարդ բառ են կազմում. օրինակ՝ Նա սիրտ չուներ այդ մասին խոսելու. սիրտ չուներ կապակցությունը մի բայական ստորոգյալ է։

Անվանական կոչվում է այն ստորոգյալը, որը կազմված է մի բայական հանգույցից և մի այլ խոսքի մասից (գոյական, ածական, դերանուն, մակբայ և այլն), որը համարվում է ստորոգյալի անվանական մասը։ Այս անվանական մասը, իբրև հատկանիշի անուն

կամ հատկանիշ, բայական հանգույցի միջոցով վերագրվում է ենթակային և դառնում է նրա փոփոխվող հատկանիշը։

§ 132. Այս երկու բնույթի ստորոգյալները իրենց հերթին լինում են պարզ և բաղադրյալ։ Բայական ստորոգյալներից պարզ ենք համարում բոլոր եղանակների բոլոր գլխավոր ժամանակները՝ լինեն դրանք պարզ, թե բաղադրյալ ժամանակներ. այսինքն՝ սահմանական եղանակի ինը ժամանակները, ըղձական, ենթադրական, հարկադրական զույգ-զույգ ժամանակները, հրամայականը և ածանցումով կազմված պատճառական կերպի բայ-ստորոգյալները։

Անվանական պարզ ստորոգյալ է կոչվում այնպիսի ստորոգյալը, որտեղ հանդես է գալիս միայն անվանական մասը, իսկ հանգույցը ենթադրվում է։

§ 133. Բաղադրյալ ստորոգյալները իրենց հերթին լինում են երկու տեսակ՝ բայական և անվանական. բայական բաղադրյալ ստորոգյալ կոչվում է այն ստորոգյալը, որ կազմված է երկու այնպիսի անդամներից, որոնք կամ երկուսն էլ բայ են և կամ երկուսը միասնաբար մի բայ են կազմում։ Ըստ այսմ բաղադրյալ բայական ստորոգյալներ ենք համարում եղանակավորիչ բայերի և նրանց հարող անորոշ դերբայների միասնական ստորոգելիացումը, բոլոր երկրորդական բաղադրյալ ժամանակները, այն հարադրական բարդությունները, որոնց մի անդամը բայ է, տալ բայով պատճառական կազմությունները և այլ կարգի բայական կապակցությունները։

Ծանոթություն. Եթե հարադրական բարդությունը իր դիմավոր ձևի մեջ մի կցական բարդություն է կազմում, ապա ստորոգյալը պետք է պարզ համարել. օրինակ՝ Նա անց է կացնում. նա անցկացնում է (անցկացրեց)։ Առաջին դեպքում ունենք բաղադրյալ ստորոգյալ, իսկ երկրորդ դեպքում պարզ։

§ 134. Անվանական բաղադրյալ ստորոգյալ կոչվում է այն ստորոգյալը, որ կազմված է մի գոյականից, ածականից, մակբայից, դերանունից, թվականից, կապից, ձայնարկությունից, շաղկապից, և սրանցից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին կապվող մի բայական հանգույցից, որը դրանցից ոչ թե բայ է կազմում, այլ դրանք իբրև հատկանիշ վերագրում է ենթակային, իբրև վերջինիս փոփոխվող հատկանիշ։

§ 135. Բացի սրանցից, կա նաև բարդ ստորոգյալ, որը կազմվում է անվանական և բայական ստորոգյալների միասնությունից. այդ երկուսը միասնաբար հանդես են գալիս իբրև մեկ ստորոգյալ։

1. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԲԱՅԱԿԱՆ ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ

ՆԵՐԿԱ

§ 136. *Բայական պարզ ստորոգյալը արտահայտվում է մեր լեզվի բայերի հինգ եղանակների ու սրանց գլխավոր բաղադրյալ և պարզ ժամանակների բոլոր ձևերով։*

§ 137. *Բայի ներկա ժամանակը միատարր ժամանակ չէ. ներկա ժամանակ ասելով սովորաբար հասկանում ենք այն պահը, երբ բայի գործողության ժամանակը համընկնում է խոսելու ժամանակամիջոցի հետ. օրինակ՝* Այս ռոպեիս հինգ աշակերտուհի *ունիմ (Նար., III, 317)։* Նա այժմ իրեն չի *պատկանում (Մուր., V, 12)։* Դու *խաբում ես* ինձ, սուտլիկ, խաբեբա *(Թ., II, 60)։* Ես մեզ *եմ մեղադրում,* մեզ,— ջերմորեն արձագանքեց դոկտոր Մաշարը *(ԳՍԹ, I, 21)։ Ինչպես տեսնում ենք, ներկա ժամանակի այս կիրառությունը վերաբերում է մի այնպիսի գործողության, որը տևական չէ, իսկ ավելի ճիշտ այդ տևականությունը աննշան է և միայն վերաբերում է խոսելու վայրկյանին և կարող է հաջորդ վայրկյանին փոխվել. օրինակ՝* Այժմ Սեդան է *կարդում,* իսկ չանցած մի ռոպե, *շարունակում է* Աշոտը: *Ներկա ժամանակի այս գործածությունը հաճախ ուղեկցվում է ներկա վայրկյանը արտահայտող* այժմ, հիմա, այս ռոպեին, այս վայրկյանին *ժամանակային և այլ բառերով ու բառակապակցություններով։*

§ 138. *Բայի ներկա ժամանակը արտահայտում է նաև այնպիսի գործողություն, որ մշտապես տեղի է ունենում. դա կատարվում է թե՛ խոսելուց առաջ, թե՛ խոսելու վայրկյանին և թե՛ խոսելուց հետո։ Այս կարգի մշտատև գործողությունները միայն և միայն ներկա ժամանակով են արտահայտվում։ Անցյալ և ապառնի ժամանակներով այդ անհնարին է արտահայտել, որովհետև դրանցից առաջինը պահանջում է որոշ վերջացածություն մինչև խոսքի վայրկյանը, իսկ երկրորդը՝ սկիզբ խոսքի վայրկյանից հետո. մինչդեռ տևական գործողությունները այդպիսի վերջացածություն և սկզբնավորում չունեն. օրինակ՝* Այն ժամանակամիջոցը, որի ընթացքում երկիրը *պտտվում է* արեգակի շուրջը... *(Կիս., Թվաբ., 97)։* Լուսինը իր լույսը *ստանում է* արեգակից:

§ 139. *Մշտատև ներկայով են արտահայտվում հանրահայտ ճշմարտությունները, որոնք միշտ միևնույն հաստատուն ձևակերպումն ունեն. օրինակ՝* Սանտիմետր *անվանում ենք* մետրի հարյուր-

եռորդ մասը *(Կիս., Թվաբ., 101)*։ Այդ պատճառով յուրաքանչյուր չորրորդ տարվան *ավելացնում են* մի օր *(Նույն տեղում, 97)*։ Մարմինները տաքությունից *լայնանում են* և ցրտությունից *սառչում*։ Առյուծն *էլ տկարանում ու մեռնում է (Մուր., III, 304)*։

§ 140. *Ներկա ժամանակով են արտահայտվում բնության մեջ կատարված, բայց արդեն կայուն վիճակ ստացած, աշխարհագրական երևույթները, տեղադրությունները և այլն. օրինակ՝* Արաքսին զուգահեռ, Աղմաղանից դեպի Ջուլֆա ձգվող մերկ ու ժայռոտ լեռնաշղթայի ճյուղերից մեկը *չոկվում է* մայր լեռնաշղթայից, սեպի պես *խրվում է* Արարատյան դաշտի սիրտը և *դեմ է առնում* Արաքսին *(ՎԱՌՊ, 5)*։

§ 141. *Ներկա ժամանակով են արտահայտվում ոչ միայն մըշտական ընթացքի մեջ գտնվող առարկաների ու երևույթների գործողությունները կամ դրությունները, այլև այնպիսիները, որոնք կարող են կամ փոխարինվել այլ գործողություններով ու դրություններով և կամ իսպառ վերանալ. օրինակ՝* Ահա գյուղերում այստեղ և այնտեղ *բարձրանում են* ամրոցներ, որոնք իրանց հպարտ աշտարակներով և ատամնավոր պարիսպներով *իշխում են* շրջակայքի վրա, նրանց մեջ *բնակվում են* «աղաները» իրանց ախոռներով և մոլություններով.— ահա նրանց է *պատկանում* երկրի բոլոր բեղմնավորությունը, նրանք են *շահագործում* մշակ մարդու աշխատավոր ձեռքի վաստակը *(ՐԿ, 14)*։ Նա էլ ուսում ունի, *գրում է (Նար., III, 11)*։ Ամեն օր քեզ *ասում է (ԳՍԹ, I, 132)*։

§ 142. *Ներկայով արտահայտվում են որոշակի սահմանումի ձև ստացած առածները։ Այդպիսի ներկան կոչվում է առածական ներկա։ Առածական ներկան իր բնույթով մոտենում է գիտական սահմանումների ներկային, որ կոչվում է ընդհանրացնող ներկա։ Առածական ներկայի օրինակներ կարող են հանդիսանալ հետևյալները։*

Ուրիշի աշխատածը քամին է տանում *(Շիրվ., VI, 58)*։ Ասում են կաթնի էրածը (այրածը) մածնին *փչում է*, օձի կծածը չաթուից (թոկից) *վախենում է (Թ., V, 206)*։ Անտառի լավ տանձը արջն է *ուտում*։ Ոսկին կրակով *են փորձում*։ Կայծից բոց է *բռնկվում*։ Սերը աշխատասեր մարդուն *դարձնում է* ավելի աշխատասեր՝ ծույլին ավելի ծույլ *(ՆՁՀ, 351)*։ Եզը որ *ընկնում է*, դանակավորը *շատանում է (ՔԹՈՀ)*։

§ 143. *Ներկա ժամանակով կարող են արտահայտվել նաև շատ հեռավոր անցյալ ժամանակի այնպիսի գործողություններ, որոնք թեական են, ենթադրվում են, կամ հայտնի չէ, եղե՞լ են այդ գործո-*

ղությունները, թե ոչ։ Գուցե ժամանակին դրանք ներկայով են պատմվել, որպեսզի պատումը հավաստի լինի, լսողի մեջ հավատ ու վստահություն առաջանա խոսքի նկատմամբ, մանավանդ որ անցյալի դեպքերը ներկայով պատմելիս պատումը աշխուժություն ու կենդանություն է ստանում։ Այսպես պատմվելով՝ հետագայում սահմանական եղանակի ներկան դառնում է այդ տեսակ պատմությունների յուրահատուկ ժամանակը, օրինականացվում և մինչև անգամ սահմանումի ձև է ընդունում. օրինակ՝ Լինում է, չի լինում։ *Այստեղ մեր խոսքը հեքիաթներին է վերաբերում, ուստի ներկայի այս կիրառությունը կարելի է կոչել հեքիաթային ներկա. օրինակ՝* Ժամանակով մի մեծահարուստ մարդ *է լինում (Իս., III, 283)։* Սոված ու ծարավ գնում են, գնում. Գնում են, գնում, *չգիտեն* թե ուր. Վերջապես մի հով անտառ են *մտնում*, Անտառի միջին մի զանգակ աղբյուր։ Կուշտ-կուշտ *խմում են* էն սառը ջրից, Հետո Մանուշը ծառն *է բարձրանում (Թ., I, 303)։*

§ 144. *Առհասարակ անցյալի սովորական գործողությունները նույնպես կարելի է ներկայով պատմել. այսպիսի ներկայով անցյալում կատարված իրողությունները փոխադրվում են ներկա ժամանակի մեջ, որով պատմողը ցույց է տալիս, թե ինքը լսել է տեղի ունեցածի մասին և պատմում է իբրև ուրիշից իմացած եղելություն. այսպես պատմում են առօրյա երևույթները. օրինակ՝* Այսպես զրուցելով գալիս են Թաքոյի տնակը, պառկում են քնելու։ Եվ ահա կես գիշերին թվում է Թաքոյին՝ մեկը անուշ ձայնով *կանչում է* վար. *ելնում* վեր և ասում է ընկերոջը՝ արի։ Եվ նրանք միասին *վերցնում են* նրազը, *իջնում են* վար *(Ձն, 257)։* Ասում են մի օր ես օրորոցում, մի պառավ դարվիշ մեր տունն *է գալի (Թ., II, 56)։* Երբ *իջնում է* հանկարծ ուսիս վրա, անակնկալ *իջնում* մի ծանր ձեռք *(Ձն, 198)։*

§ 145. *Սահմանական եղանակի ներկայով են արտահայտվում ոչ մշտատև, բայց միշտ կրկնվող գործողությունները, երբ դրանք դառնում են սովորույթ՝ օրվա կամ այլ ժամանակի որևէ որոշակի պահին. այսպիսի ներկան կոչում ենք սովորույթի ներկա։ Այս կարգի գործողությունները ներկայով են արտահայտվում այնքան ժամանակ, որքան դրանք գոյություն ունեն. երբ դադարում են գոյություն ունենալուց, արդեն կարող են անցյալով պատմվել. օրինակ՝* Ամեն օր լուսադեմին այծյամները գիշերային արոտից հետո այդ լեռնաշարքով *գնում են* Արաքսից ջուր խմելու *(ՎԱՈՊ, 5)։* Նա հագնված էր այնպես, ինչպես սովորաբար *հագնվում են* Շամախում միջին կարողության տեր կանայք վաղուց հետե *(Շիրվ., I, 311)։*

Այստեղ են ժողովում գործունյա և անգործ իտալացիները և այստեղ են խմում իրենց սենծանո ըմպելիքը *(Շիրվ., VIII, 445)*։

§ *146. Ավելի կենդանություն է ստանում պատումը, երբ անցյալում իբրև սովորույթ կրկնվող գործողությունները արդեն դադարել են շատ վաղուց, բայց հետագայում պատմվում են սովորույթի ներկայով։ Գրողը կամ խոսողը անցյալի գործողությունները փոխադրում է ներկան և իրեն համար արդեն հուշ դարձած անցյալը կենդանացնելով՝ կրկին անգամ իրեն դնում է նրա մեջ. օրինակ՝* Ես ընկերներիս հետ *վազվզում եմ* ջրաղացի ներսն ու դուրսը, մեր և հարևանների կտուրներն ենք *բարձրանում, թռչում ենք* խոտանոցների վրա. մեծ աղմուկով գյուղացոց գոմեշներն *ենք լողացնում* գետի մեջ և նրանց հետ *սուզվում* ջրի տակ. դաշտերում բաց թողած էշերն ու անսանձ պառավ ձիերն *ենք հեծնում* ու նրանց բաշերից բռնած *արշավում (Իս., III, 120)*։

§ *147. Ներկայով կարող են դրվել նաև անցյալում կատարված եզակի գործողություններ. խոսքին ուժ և կենդանություն տալու համար պատմողը անցյալի երևույթները պատմում է ներկա ժամանակով։ Հաճախ այդպես են գրվում անցյալի պատմությունները, այդ պատճառով դա կոչվում է պատմական ներկա. օրինակ՝* Եվ Աշուշան մեծամեծ ծախսեր *է անում* արքունիքի մեծավորներին կաշառելու համար և *աղաչում է* Հազկերտին, որ իրեն բաշխեն Մամիկոնյան երեք երեխաներին *(Լեո, ՀՊ, II, 103)*։ Խոսրովի ու Մորիկի միջև կնքված դաշնագրությամբ Հայաստանը *բաժանվում է* Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև *(նույն տեղում, 224)*։

§ *148. Ներկա ժամանակով արտահայտվում է նաև ապագայում կատարվելիք որևէ գործողություն. այսպիսի ներկան ապառնուց տարբերվում է նրանով, որ ցույց է տալիս վճռական, հավաստի, առարկություն չվերցնող գործողություն, որ կատարվելու է անպատճառ, այսպես, օրինակ՝* Նախագահ ջան... տունս *տեղափոխում եմ* նոր Հացավան *(ՆՉՀ, 444)*։ Ես էլ *գնում եմ* Բաքու,— մեջ մտավ զանգրահեր Լևոնը: —Քեզ ով է տանում:— Մենք ընտանիքով ենք գնում *(Շիրվ., III, 487)*։ Բայց ե՞րբ *եք գալիս*, ե՞րբ. Քսանից ես Թիֆլիս *եմ գնում (Թ., V, 322)*։ Գարունքից *սկսում են* սանատորիայի շինությունը *(նույն տեղում, 332)*։

§ *149. Երբ ստորոգյալը դրվում է առաջին դեմքով, այդ նշանակում է՝ կատարվում է այնպիսի գործողություն, որի կատարողը առաջին դեմքի անձնավորությունն է։ Տվյալ նախադասության մեջ եղած այլ առարկաներ եզակի առաջին դեմքով գործածված ստորոգյալի համար ենթակա չեն կարող լինել, եթե նրանք չեն անձնա-*

վորված և իբրև այդպիսիք չեն խոսում։ Առաջին դեմքի եզակի ստորոգյալի համար ենթակա են դառնում ես, ինքս, ես ինքս *անձնական դերանունները։* Ես թերթ *եմ կարդում (Զե, 252)։* Երբեմն էլ ես *տեսնում եմ* նրան... հորս՝ Աբգար աղայի, դեղնած, դեղնափայլ մազերում *(նույն տեղում)։* Եվ *ես* հեքիաթի շեմքին խոնարհած՝ *Հիանում եմ* լոկ այս նոր աշխարհով *(ՀՀե, 226)։ Ես տեսնում եմ* հայրենի տնակը՝ իր հին, ժամանակի ավերմունքներից մաշված պարիսպներով *(ՐԿ, 7)։ Ինքս* էլ *եմ* խորը մտածում *(ՆՉՀ, 396)։ Ես ինքս* իմ աչքին բարձրանում եմ *(նույն տեղում, 109)։ Ես ինքս* մեծ հետաքրքրությամբ հետևում եմ քո գործունեությանը *(Շիրվ., III, 322)։ Ես ինքս* իմ խանութի համար պետք եղած ապրանքները գնում եմ գործարանից *(ՐԿ, 610)։* Թեև *ես ինքս* այժմ ծիծաղում եմ իմ այն ժամանակվա գիտության վրա *(նույն տեղում, 156)։*

§ 150. Հոգնակի առաջին դեմքի ստորոգյալի համար իբրև ենթակա կիրառվում են՝ մենք, ինքներս, մենք ինքներս *անձնական դերանունները. օրինակ՝* Այժմ *մենք* բնակվում ենք մեր հին տանը *(Նար., II, 24)։* Քիչ մնաց *ինքներս* էլ վառվեինք *(Զեյ., II, 252)։* *Մենք ինքներս* կկարգադրենք այդ խնդիրը:

§ 151. Հոգնակի առաջին դեմքի ստորոգյալի համար ենթակա են լինում նաև որոշյալ ամենքը, բոլորը *դերանունները* ս *դիմորոշ հոդով. սրանց հետ նաև հաճախ միավորվում է* մենք *դերանունը. օրինակ՝ Մենք բոլորս* հերոսներ ենք *(ՄԴ, X, 93)։* Որի վրա ողբում ենք բոլորս *(Շեքս., I, 36)։ Ամենքս,* իմացիր, տասը տեր ունենք *(Թ., II, 39)։ Մենք բոլորեքյանքս* չենք կարող գնալ *(Րաֆֆի)։ Մենք ամենքս* հյուր ենք կյանքում *(Թումանյան)։*

> ***Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.*** Ամեն մեկս *դերանվան ստորոգյալի դեմքը և թիվը պայմանավորված է նախադասության մյուս անդամներով և շեշտի հանգամանքով. օրինակ՝ Ամեն մեկս* մեր մասին ենք մտածում: *Ամեն մեկս* իր մասին է խոսում:

Այս դեպքում, եթե ստորոգյալը եզակի է դրվում, երրորդ դեմքով է կիրառվում, իսկ եթե հոգնակի է, անպայման կիրառվում է առաջին դեմքով։

§ 152. Մեկից ավելի քանակական թվականները ս *դիմորոշ հոդով վերցնում են հոգնակի առաջին դեմքի ստորոգյալ. օրինակ՝ Երեքս էլ* գնում ենք Վարշավ *(Մուր., IV, 323)։*

§ 153. Այն բոլոր հոգնակի գոյականները, որոնք ունեն ս *դիմորոշ հոդ և ցույց են տալիս խմբակցություն, ընդհանրություն,*

հավաքականություն, որոնց մեջ խոսողը իրեն դնում է իբրև դրանց մի անդամը, կարող են վերցնել հոգնակի առաջին դեմքի ստորոգյալ. օրինակ՝ Հայերս դիմադրում ենք (ԴԴՎ, 182, բնագրում՝ վճռել ենք դիմադրել)։ Դե քայլենք առաջ բանվորներս քաջ (ՀՀԵ, 552)։ Որտեղ ռուսաց ծննդյան տոներին աշակերտներս տալիս էինք երբեմն ընտանեկան ներկայացումներ (Զմշկյան, 17)։

§ 154. Վերևում բերված վերջին երեք պարբերությունների մեջ քննված առաջին դեմքի ենթակաները իրենց ծագումով ոչ թե ենթակա են, այլ բացահայտիչ։ Այդ բոլոր բառերից առաջ նախապես եղել է մենք անձնական դերանունը, որը և հանդիսացել է այդ կարգի նախադասությունների ենթական. հետագայում դրանք զեղչվելով՝ ենթակա են մնում հենց այդ մենք դերանվան բացահայտիչները։

§ 155. Դրանք քիչ են տարբերվում այն ձևից, որտեղ հիշյալ բացահայտիչները հանդես են գալիս գործիական հոլովով. օրինակ՝ Ուսանողներով ենք գնում. Բայց այս անգամ երկուսով բռնեցին նրա թևերը (ՍԶ, V, 73)։

Ծանոթություն. Պռոշյանի մոտ գտնում ենք այս ցուցական դերանունով երրորդ դեմքի գոյականներ, որոնք առաջին դեմքի ստորոգյալ են վերցնում. օրինակ՝ էս քո գլխամեռ մերը ու էս գզգզված նալիվորը՝ քո ները էն ենք ուզում (ՊՊ, III)։ Այստեղ էլ պարզապես մենք դերանուն ենթական զեղչվում է։ Անսովոր է ասել՝ Ոմանք բանտ, ոմանք ոստիկանություն ուղարկվեցինք՝ մինչև մեր ով լինելը պարզվելը (ՀՀԵ, 345)[1]։

§ 156. Հայերենում հաճախ առաջին դեմքի դերանուն-ենթական զեղչվում է. սա մեր լեզվի համար օրինաչափական երևույթ է. դրանով նախադասության ամբողջականությունը բնավ չի խախտվում և քերականորեն նա մնում է լրիվ նախադասություն։ Շատ դեպքերում դերանուն-ենթակայի առկայությունը ավելորդաբանություն է, որովհետև ամենից առաջ ստորոգյալի դեմքը պարզ կերպով ցույց է տալիս, որ ենթական առաջին դեմքի դերանուն է, իսկ խոսողը անհրաժեշտություն չի համարում ամեն պարագայում նշելու դերանունը, երբ տվյալ դեպքում նախադասության մեջ դերանվան ընդգծումը անհրաժեշտ չէ։

[1] Այս մասին մանրամասն տե՛ս «Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը», § 467։

§ 157. Բանաստեղծական խոսքի մեջ առաջին դեմքի դերանուն-ենթակայի կիրառությունը անհրաժեշտ է այն դեպքում, երբ կա առաջին և մյուս դեմքերի հակադրություն. օրինակ՝ Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում (Տերյան)։ Դու հին վանքերի քնքուշ սիրահար: Մեր կոթողները ես էլ եմ սիրում (Էմին)։ Ինչպես տեսնում ենք, Տերյանի լիրիկական հույզերով հարուստ տողը դերանուն-ենթակաների առկայությամբ օժտվում է հակադրությամբ, կտրուկությամբ, և ամբողջ ուշադրությունը բևեռվում է ենթակաների վրա։ Նույն նպատակն է հետապնդում նաև հաջորդ օրինակը, որտեղ հիմնական նպատակը դերանուն-ենթակայի դրսևորումն է՝ տրամաբանական շեշտով։

§ 158. Հակադրությունից բացի, բանաստեղծական խոսքի մեջ դերանուն-ենթական կարող է դրվել տաղաչափական, զուգադրության, ներդաշնակության պահանջներով, որտեղ բոլոր դեպքերում կարևորությունը ավելի տրվում է ենթակային, քան ստորոգյալին. օրինակ՝

Ես սիրում եմ արտերը ոսկի
Եվ դաշտերը պայծառ,
Ես սիրում եմ խորհուրդն այն խոսքի,
Որ չասիր ու անցար:
Միայնակ՝ ես սիրում եմ նստել
Երերուն լույսերում,
Ես սիրում եմ երազ ու ստվեր,
Ես իմ սերն եմ սիրում (Տ., I, 153)։

§ 159. Երբ ենթական զեղչվում է, խոսքը ազատվում է ավելորդ ծանրաբեռնվածությունից, դառնում է արագընթաց, մեղմվում է տրամաբանական կողմը, վերանում են հակադրությունը, իմաստային սահմանափակությունը, և կարևորությունը տրվում է գործողությանը։ Այս ամենը նպաստում են այն բանին, որ խոսքը դառնում է ուղղագիծ, ամփոփ. կողմնակի երևույթները ուշադրություն չեն գրավում, և այն դառնում է ատոնին, խոսակցական։ Երբ համեմատում ենք գեղարվեստական և հրապարակախոսական խոսքը, նկատում ենք, որ առաջինը դերանուն-ենթականերով (այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն առաջին, այլև երկրորդ դեմքի դերանվանը) շատ աղքատ է, իսկ գիտական, հրապարակախոսական խոսքը իբրև տրամաբանական եզրահանգումների, հակադրությունների վրա հիմ-

նըված խոսք, հազվագյուտ դեպքում է խուսափում դերանուն-են-թականերից։

§ *160. Առաջին դեմքի դերանուն-ենթական զեղչվում է, երբ չկան վերևում նշված ոճաբանական և տրամաբանական պահանջները, այսինքն՝ երբ ասվածը սովորական, պարզ հաղորդում է, երբ խոսողը ցանկանում է լսողի կամ ընթերցողի ուշադրությունը բևեռել գործողության վրա. օրինակ՝* Մինչև հիմա էլ զարմանում եմ: Սկզբում կարծում էի, թե առավոտ է և նոր եմ զարթնում *(Նար., IV, 53)։* Սակայն ուզում եմ, որ ինձ չտեսնես, Չգիտեմ ինչու ձեր զանգն եմ տալիս, Փախչում եմ... փախչում... և հեռանալիս Փառաբանում եմ, օրհներգում եմ քեզ *(Տ., I, 76)։* Հափշտակված նայում եմ տաճարին, նայում եմ. և տեսնում եմ մեր Երերուքը... Բարձրանում եմ աշտարակի կատարը, նայում եմ շուրջս *(Իս., III, 133)։* Զունենք գրականությամբ ապրող դասակարգ. և ինչու չունենք *(Թ., IV, 362)։* Մտածիր ինչ մթնոլորտում ենք ապրում *(Շիրվ., VI, 294)։* Դեհ, Սաղաթել, գնո՞ւմ ենք կլուբ, թե՞ չէ *(Նույն տեղում, 306)։* Մեզ ներիր, գործ ունենք *(Նույն տեղում, 310)։*

§ *161. Այն ստորոգյալը, որն արտահայտվում է եզակի երկրորդ դեմքով, կարող է ենթակա ունենալ* դու, ինքդ, դո՛ւ ինքդ *դերանունները. օրինակ՝* Դու քեզ ամենևին չես խղճում *(Մուր., II, 31)։* Այդ հո *ինքդ* էիր ասում *(ՆԶՀ, 258)։* *Դու ինքդ* քեզ հեռու ես պահում ինձանից *(Շիրվ., VI, 273)։* *Դու ինքդ* ես ասում *(ՆԶՀ, 126)։* *Դու ինքդ* ինձնից լավ ես հասկանում *(Նույն տեղում, 95)։* *Ինքդ* խոտ ես զողանում *(Նույն տեղում, 101)։* Եկ *ինքդ* իմացիր *(ԴԴՎ, 28)։* Ինքդ ասում ես՝ չեմ հավատում *(Շիրվ., I, 350)։*

§ *162. Հոգնակի երկրորդ դեմքի ստորոգյալի համար ենթակա կարող են դառնալ* դուք, ինքներդ, դուք ինքներդ, ամենքը, բոլորը(ը) *անձնական և որոշյալ դերանունները. բացի* դուք *անձնական դերանունից, մնացածը երկրորդ դեմքի ստորոգյալի համար ենթակա են դառնում* դ *դիմորոշ հոդով. օրինակ՝* Դուք ինձ վախեցնում եք *(Մուր., II, 288)։* *Ինքներդ* ամբողջ օրը ավտոմոբիլ նստած շրջում եք *(բնագրում ման եք գալիս, ՆԶՀ, 290)։* Այժմ *ինքներդ* ապրում եք հանգիստ *(Շիրվ., III, 477)։* *Բոլորդ* էլ սրտով կռվում եք հայրենիքի փրկության համար *(ԴԴՎ, 402)։* Բարով եք եկել, պարոններ, *ամենքդ* էլ *(Շեքս., I, 36)։*

§ *163. Մեկից ավել քանակական թվականները* դ *դիմորոշ հոդով նույնպես երկրորդ դեմքի հոգնակի ստորոգյալի համար ենթա-*

կա են դառնում ճիշտ այնպես, ինչպես տեսանք առաջին դեմքի ենթակաները քննելիս (§ 151)։ Համեմատի՛ր. Դուք երկուսդ էլ արիկաներ էք *(ՄԳ, X, 88)*։

§ *164. Այն բոլոր գոյականները, որոնք* դ *դիմորոշ հոդով իրենց մեջ են առնում երկրորդ դեմքով առարկա, կարող են դառնալ հոգնակի երկրորդ դեմքի ստորոգյալի համար ենթակա (§ 153)։ Սակայն առանց* դուք *դերանվան* դ *հոդով հոգնակի գոյականները այնքան էլ դյուրությամբ ենթակա չեն դառնում։ Համեմատի՛ր.* Հայերդ դիմադրում էք: Բանվորներդ համախմբվում էք: Ուսանողներդ անհոգ էք:

§ *165.* Ով դու *կոչական կապակցության մեջ* դու *անձնական դերանվան զեղչումով երկրորդ դեմքի ստորոգյալը կարող է* որ *հարաբերականը իբրև ենթակա ընդունել, որ միայն թվում է, թե ենթակա է. օրինակ՝* Ով, որ գալիս ես նստած ամպերին, Ով, որ փայլում ես մաքրությամբ վերին *(Թ., II, 161)*։

§ *166. Երկրորդ դեմքի դերանուն ենթական նախադասության մեջ գործածելը պարտադիր է դառնում, երբ կա դեմքերի հակադրություն. օրինակ՝* Մենք հոսելով անց ենք կենում այս աշխարհից որպես գետ, Իսկ դու անհաս քո բարձունքից ողջ տեսնում ես ու քըննում *(Թ., II, 165)*։ Դուք մարդ ու կնիկ մի հատիկ աչքի լույս տղա ունեք, մենք էլ մարդ ու կնիկ մի տղա ունենք ու մի աղջիկ *(Շիրվ., VI, 505)*։

§ *167. Ենթական չի զեղչվում նաև այն ժամանակ, երբ խոսողը իր խոսքը օժտում է հուզական տարրերով (ցասում, հանդիմանություն, արհամարհանք և այլն). օրինակ՝* Եվ դուք ձեզ կոմերիտականներ եք համարում *(ՎԱՍԱ, 62)*։ Իսկ դու... դու չես իմանում, որ առանց քեզ դրախտն անտանելի է ինձ համար *(Իս., III, 225)*։ Դու սուտ ես ասում, քեզ ոչ մի ծննդկանի մոտ չեն տարել *(Նար., III, 165)*։

§ *168. Ենթական զեղչվում է նաև, երբ նախադասությունը ունի երկրորդ դեմքին վերաբերող կոչական բառ։ Այս պարագայում հակադրությունից ազատ պետք է լինի նախադասությունը և չըպետք է ունենա սպառնալիքի, զայրույթի, արհամարհանքի ընդգծված տարրեր։ Օրինակ՝* Հայրենի Շիրակ, ինչքան քաղցր հուշեր ես զարթեցնում իմ հոգում *(Իս., III, 122)*։— Էլի՞, Սուսանբար... ա՜խ, երեխայությունդ չես մոռանում, չէ՛ *(Շիրվ., I, 242)*։ Եղբա՛յր, այս ի՞նչ եք անում,— ասաց նա ժպտալով,— խոստանում եք, թե կգաք և չեք գալիս *(Նար., III, 494)*։

§ 169. Իսկ եթե նախադասությունը ունի սպառնալիքի, հակա-դրության, արհամարհանքի, զայրույթի ընդգծված տարրեր, և մանավանդ կոչականը ընկած է նախադասության վերջում, երկրորդ դեմքի դերանուն-ենթական չի զեղչվում. օրինակ՝ Դու ինձ խիստ զարմացնում ես, Նվա՛ (Նար., III, 322)։

§ 170. Երկրորդ դեմքի դերանուն-ենթական մեծ մասամբ զեղչվում է՝ դառնալով նախադասության համար միանգամայն ավելորդ բառ, եթե չկան վերևում բերված պայմանները, և բացի դրանից այն զեղչվում է, որովհետև պետք չկա հենց իրեն՝ դիմացինի համար միշտ կրկնել դերանունը, մանավանդ որ բայ-ստորոգյալը իր վերջավորությամբ բացորոշ նշում է երկրորդ դեմքը. օրինակ՝ Ինչո՞ւ ես այդպես ժպտում և այդքան ստեպ-ստեպ համբուրում ձեռքդ (Շեքս., II, 321)։ Երևի խրխնջացող սերունդ եք ցանկանում, նժույգներ և մատակներ եք ուզում իբրև թոռն ու ծոռ (Շեքս., I, 120)։ Տեսնո՞ւմ ես թափված խոտերը (ՎԱՈՊ, 56)։ Այդ ինչո՞ւ համար եք ասում որ (ԱՁ, III, 103)։ Ի՞նչ եք ուզում, բոլորդ դուրս եկեք (ԳՍԹ, II, 221)։ Գիտե՞ք, ուրեմն լռեցեք (Շիրվ., VI, 212)։ Ինչո՞ւ համար եք ծիծաղում, չեք հավատում ինձ (Մուր., II, 289)։ Ի՞նչ, ի՞նչ իրավունքով եք պահանջում ինձնից այդպիսի խոսք (Շիրվ., VI, 127)։

§ 171. Երբ դուք դերանունը կիրառվում է քաղաքավարության համար և ուղղվում է եզակի անձնավորության, եթե առաջին անգամն է խոսքն ուղղվում, այն ժամանակ չի զեղչվում. իսկ շարունակության մեջ կարող է դերանունը չկրկնվել այլևս։ Առաջին անգամ կարող է և՛ դերանուն-ենթական չդրվել, երբ առկա է որևէ կոչական բառ՝ ուղղված խոսակցին։

§ 172. Ենթակայի զեղչման կամ կիրառության պարագաները այնքան էլ որոշակի չեն սահմանագծված։ Այս դեպքում պայմանականությունը մեծ դեր է կատարում։ Կարող են տվյալ նախադասության մեջ առկա լինել այնպիսի երևույթներ, որոնք դժվար են ենթարկվում օրինականացման և տվյալ պայմաններում նպաստում են դերանուն-ենթակայի զեղչմանը կամ կիրառմանը։

§ 173. Երրորդ դեմքի ստորոգյալի համար ենթակա են դառնում այն բոլոր բառերը, բառակապակցությունները, ամբողջական նախադասությունները և այլ կարգի լեզվական միավորները, որոնք ունակ են հոդավորվելու և ենթակա դառնալու։ Այս բառերից պետք է դուրս հանել այն սակավաթիվ անձնական դերանունները, որոնք ենթակա են դառնում առաջին և երկրորդ դեմքերի ստորոգյալների համար։

§ 174. Հայերենում առաջին և երկրորդ դեմքի ենթակաների սղումը հազվագյուտ դեպքում կարող է թյուրիմացություն ստեղծել, որովհետև առաջին դեմքի ենթական դրվում է խոսողի, իսկ երկրորդ դեմքի ենթական խոսակցի փոխարեն, որ գերազանցապես ներկա է գտնվում և որին դիմում է խոսողը։

§ 175. Ինչպես ասվեց, երրորդ դեմքի ստորոգյալի համար, լինի եզակի, թե հոգնակի, ենթակա են դառնում բոլոր բառերը. իսկ որպեսզի այդ բառերը հաճախ չկրկնվեն և խոսքը չծանրաբեռնեն ավելորդ և ձանձրալի նույնաբանությամբ, դրանց փոխարեն հանդես են գալիս անձնական նա, ինքը, նա ինքը, նրանք, իրենք, ինքները, նրանք իրենք, նրանք ինքները, այս, այդ, այն, սրանք, դրանք, նրանք *ցուցական և այլ դերանուններ։ Բայց հենց այս դեպքում նախադասության ենթակայի ճիշտ ընկալումը խիստ դժվարանում է, որովհետև այդ դերանունները կարող են վերաբերել բոլոր առարկաներին՝ լինեն դրանք շնչավոր, թե՛ անշունչ, անձ, թե՛ իր։ Երրորդ դեմքի դերանուն է դրվում որևէ անվանական ենթակայի փոխարեն այն դեպքում, երբ այդ անվանական ենթական գոնե մի անգամ գործածված է և դրանից հետո այլ անվանական ենթականեր չեն մտել խոսքի մեջ։ Եթե խոսքը ընդմիջված է այլ անվանական ենթականերով, և դերանունը վերաբերում է ոչ թե սրանց, այլ դրանցից առաջ ընկած, մեզ արդեն հայտնի ենթակային, ապա դա մի անգամ ևս պիտի հիշատակվի ու ապա փոխարինվի դերանունով, այլապես չի տարբերվի, թե դերանուն-ենթական որի՛ն է վերաբերում։*

§ 176. Երրորդ դեմքի ենթական, ինչպես ցույց են տալիս այս պայմանները, համեմատաբար սակավ է զեղչվում։

Ամենից առաջ զեղչումը օրինաչափական և անհրաժեշտ է այն պարագայում, երբ անընդմեջ խոսքը վերաբերում է միևնույն առարկային, այսինքն՝ գործողությունը կատարում է նույն առարկան։ Մանավանդ այն նախադասությունները, որոնց ենթական հանդիսանում է տվյալ առարկան, շարահյուսորեն սերտ առնչվում են միմյանց հետ. բերենք օրինակներ. Ա՜յ, ձեզ օրինակ մեր չաչանակ Սերգոն. որտեղ չկա նա, որտեղ չէ մտնում, ում հետ չէ խոսում: Դուք նրան կարող եք պատահել և՛ փողոցներում, և՛ հրապարակներում, և՛ խանութներում, և՛ եկեղեցու բակում: Ամեն տեղ էլ գլխին հետաքրքիր լողների մի խումբ հավաքած, մեկին պատմում է, մյուսի հետ վիճում է, երրորդին համոզում է, չորրորդին խայտառակում է. և այսպիսով մեզ ու մեր մարդիկներին գովում ու երկինք

է բարձրացնում, իսկ մեր հակառակորդներին պախարակում ու դժոխքն է իջեցնում *(Մուր., II, 323)*։ Գնում են նրանք դեպի կոլխոզի հանդերը, թե իրենց բեռը թափում են Գիժ սարի ժայռերի վրա *(ՎԱԱԱ, 348)*։ Փոշու նման բարձրանում են հուշերս, բարձրանում են ապրած օրերից և զգացած վայրերից *(Իս., III, 119)*։ Ծխում են, թեյ են խմում և զրույց անում: Պատմում են զանազան իմաստալից առակներ *(Նույն տեղում, 120)*։

§ 177. Ինչպես երևում է վերևում բերված օրինակից, երրորդ դեմքի ենթական գոնե մեկ անգամ պետք է հիշատակվի. եթե հենց սկզբից երրորդ դեմքի ստորոգյալը հանդես է գալիս առանց ենթակայի, ապա նշանակում է, որ կա՛մ այդ նախադասությունը անենթակա նախադասություն է և կա՛մ երրորդ դեմքի ստորոգյալի ենթական խոսողին և խոսակցին հայտնի է. օրինակ՝ Ձի՞ երևում, հարցնում էր նա Գյուլնազին անդադար, հազիվ լսելի ձայնով։ — Ա՛խ, գալիս է,—բացականչեց հանկարծ Գյուլնազը՝ վեր թռչելով *(Շիրվ., I, 350, 351)*։ Ձի՞ երևում և գալիս է *ստորոգյալները հենց սկզբից չունեն իրենց ենթական, բայց խոսողներին հայտնի է, որ այդտեղ ենթական մի անձ է (Շըպպանիկը), որին իրենք (Բարխուդարը և Գյուլնազը) սպասում են։* Թող, կանչում են ինձ *(Թ., III, 52)*։ Ասում են, թե՛ էն փարվանա Ջահելներն են սիրավառ *(Թ., I, 296)*։ *Այս վերջինները անենթակա նախադասություններ են։*

§ 178. Դերանուններից երրորդ դեմքի ստորոգյալի համար իբրև ենթակա կիրառվում են՝ նա, ինքը, նրանք, իրենք, նա ինքը, նրանք իրենք, այս, այդ, այն, սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք, նույն *(սույն)*, մյուս, միևնույն, այսպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այստեղ, այնտեղ, նույնտեղ, ով, ինչ, որ, քանի, որքան, ամեն, ամեն մեկը, ամենքը, բոլոր, յուրաքանչյուր, ամեն ինչ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջ, ամբողջ, ինչ-որ, ոմն, մեկը, այսինչ, այնինչ, մի քանիսը, ուրիշ, այլք, ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը:

Սրանցից բացարձակապես անձի համար են կիրառվում՝ նա, ինքը, նրանք, իրենք, նա ինքը, նրանք իրենք, ով, ամենքը, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ոմն, այսինչ, այնինչ, այլք, ոչ ոք *դերանունները։ Միայն իրի համար են կիրառվում՝* այստեղ, այնտեղ, նույնտեղ, ինչ, ինչ-որ, ամեն ինչ, ոչինչ *դերանունները։*

Խառը *և՛ իրի և՛ անձի համար հավասար կամ ավել և պակաս չափով գործածվում են՝* այս, այդ, այն, սա, դա, նա (նա *իրի համար անսովոր է)*, նույն *(սույն)*, մյուս, միևնույն, այսպիսի, այն-

պիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, որ, քանի, որքան, բոլոր, ամեն մեկը, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, մի քանիսը, ուրիշ, ոչ մի, ոչ մեկը:

2. ՍՏՈՐՈԳՅԱԼ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ

ԱՆՑՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ

§ 179. Անցյալի անկատարը ենթակայի հետ ունեցած իր առնչակցությունների մեջ ոչնչով չի տարբերվում ներկայից. այսինքն՝ ստորոգյալի հետ ենթակայի գործածության և զեղչման հանգամանքները միևնույն են. յուրահատուկ երևույթներ հանդես չեն գալիս, ուստի այն, ինչ ասվեց ներկա ժամանակի համար, լրիվին վերաբերում է նաև անցյալի անկատարին։ Այս պատճառով այլևս դրանց մասին խոսելու կարիք չի մնում։

§ 180. Անցյալի անկատարը ամենից առաջ ցույց է տալիս այնպիսի մի գործողություն, որ տևական է, սկսվել է, սակայն վերջանալու մասին որևէ ցուցում խոսելու վայրկյանին դեռևս չկա։ Սրանով արտահայտվում է գործողության ընթացքի, դրության երկարատև լինելը։ Սակայն այս դեպքում խոսողը նույնպես չգիտի, վերջացե՞լ է գործողությունը, թե ոչ. օրինակ՝ Ճանապարհին մարդիկ են հանդիպում, որոնք գնում են դեպի գյուղ. անցնում ենք, և հետո երբ մեզ հարցնում են, թե «մարդիկ էին անցնում, չիմացա՞ք, ուր էին գնում», *մենք պատասխանում ենք,* որ նրանք գյուղ էին գնում՝ *ցույց տալով, թե մենք չգիտենք՝ նրանք հասել են արդյո՞ք, թե դեռևս շարունակում են ճանապարհը։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, այնպիսի գործողություններ, որոնք շարունակական են և տեղի են ունեցել անցյալում, արտահայտվում են անցյալի անկատարով. օրինակ՝* Մի բան վատ էր. փողը չէր բավականացնում, հայրն իր ուզածի չափ չէր ուղարկում: Այդպիսի օրերին նա մելամաղձոտ ու թախծոտ գալիս էր ընկերների մոտ, գանգատվում *(ԳՍԹ, I, 123)։* Մարիամը Ռուբենին էր որոնում *(Շիրվ., II, 293)։* Տղաները կուզեկուզ և զգուշությամբ հետևում էին նրան: Նրանցից ոչ հեռու, ժայռի ստորոտում մի երկար պոչ էր ուժգին խփվում գետնին, որից հազիվ նկատելի փոշի էր բարձրանում *(ՎԱՍԱ, 422)։* Ինչպես խոհուն ուրվական խավարի միջից նայում էր Աշտիշատի վանքը, ըստ երևույթին ոչինչ բան չէր վրդովում նրա խորհրդավոր անդորրը: Սառն հովը սկսվում էր նրա պարիսպների շղթաներից *(ԴԴՎ, 3)։* Մեր որսոր-

դի խումբը քռնարոր մոտենում էր Սև քարափներին: Մռայլ, բոխ գույնի ժայռերը հարկ առ հարկ վեր էին բարձրանում ու գլուխները պեմ անում ամպերին: Հսկա անգղերը նրանց բարձունքներում թառած իրենց սրատես աչքերով հետևում էին խմբի շարժումներին (ՎԱՍՍ, 135)։

§ 181. *Անցյալում կատարված տևական գործողությունների նկարագրությունը անկարելի է ուրիշ որևէ ժամանակով արտահայտել. դրանց համար հիմնական դրսևորման միջոց է անցյալի անկատարը. Հենց այս դերով դա դառնում է նաև պատմական ժամանակ, այսինքն՝ պատմական դեպքերը նկարագրվում են անցյալի անկատարով. օրինակ՝* Այսպես էր ընթանում նոր շարժման նախապատրաստական շրջանը: Եվ արտաքին հանգամանքներն էլ գալիս էին հասունացնելու այդ շարժումը: Ամենքին դյութում էր ոգևորված միաձայնակյացը, որ շարունակ հրահանգում էր երիտասարդությանը և՛ անվախ լինելու, և՛ գործը ձեռքից չտալու հորդորներով: Բայց արդեն նկատվում էր ավատական իրականության հատուկ երևույթը: Դեռ գործի սկզբում, նախարարական ուժերի ցլատում էր նկատվում *(Լեո, ՀՊ, II, 109, 404)*։

§ 182. *Անցյալի անկատարով արտահայտվում են այնպիսի պատմական գործողություններ, որոնք տևական լինելուց բացի, կրկնվում են իբրև սովորույթ, իբրև անհրաժեշտություն, իբրև որոշ շրջանի համար պարբերաբար կրկնվող երևույթներ. օրինակ՝* Վիճաբանում էին շատ հարցերի վերաբերությամբ *(Նար-Դոս)*։ Տիգրանը գյուղի ժողովներին էր մասնակցում, սսում-խոսում անհեյջանելի հետ *(ԱԲՄԹՆ, 96)*։ Նրանք գարնանը գալիս էին, հողերը ներկում, սերմանում, ամառվա արևի տակ չարաչար աշխատում և ուշ աշնանը՝ իրենց վաստակի արդյունքը զանձած վերադառնում էին իրենց երկիրը՝ գարնանը նորից գալու համար *(Իս., III, 123)*։ Ամեն գարուն, ձնծաղիկների երևալու պես, գալիս էին արագիլները, այր ու կին, հսկա թևերը գյուղի վրա ծափ տալով և ուրախ-ուրախ, լակ-լակ անելով՝ գալիս հանգչում էին իրենց վաղեմի բույնի վրա: Մի քիչ հանգստանալուց հետո սկսում էին աշխատել. թռչում էին շյուղ, տաշեղ, փետուր տանում-բերում ու բույնը կարկատում: Անցնում էր մի ժամանակ. ու մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագեր, բույնի միջից գլուխները օրորում էին ու մանուկ ձայնով լակ-լակ անում *(Նույն տեղում, 169)*։

§ 183. *Անցյալի անկատարը արտահայտում է այնպիսի գործողություն, որը կատարելու միայն ցանկություն, մտադրություն*

է եղել, բայց որը չի կատարվել այլևայլ նկատառումներով. օրինակ՝ Գալիս էի, բայց հենց որ դու եկար մտադրությունս փոխեցի:

§ 184. *Անցյալի անկատարը արտահայտում է նաև այնպիսի գործողություն, որ բնավ տեղի չի ունեցել և գործողություն կատարողի կողմից էլ ոչ մի մտադրություն չի եղել. օրինակ՝* Այսպիսով գլորվեցին, անցան դարձյալ մի քանի օրեր և նա դեռ գնում էր Մարությանների տուն *(այսինքն՝ բոլորովին չի գնացել) (Նար., IV, 41)։*

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

§ 185. *Անցյալ կատարյալը անկատարից տարբերվում է նրանով, որ արտահայտում է ոչ թե գործողության տևականությունն ու կրկնությունը, այլ վերջացածությունը, կատարվածությունը. օրինակ՝ երբ ասում ենք՝* Նա այս գիրքը կարդաց, *մեր ուշադրությունը բևեռվում է միայն վերջին սահմանի վրա, չնայած այդ կարդալու պրոցեսը կարող է տևած լինել մի քանի օր։ Ուրեմն, նույնիսկ այնպիսի գործողություններ, որոնք ցույց են տալիս տևականություն, անցյալ կատարյալով այդ տևականությունը որոշակի սահմանի մեջ է դրվում, տրվում է նրա վերջացածությունը, ավարտածությունը. օրինակ՝* Նա ինչ-որ շշնջաց աղջկա ականջին և ծիծաղեց *(Շիրվ., VIII, 87)։* Այնուհետև նրանք բարեկամացան և հաջորդ ամռան դպրոցում Միհրդատը նստեց Լևոնի կողքին *(ՆԶՀ, 148)։ Վերջին օրինակի մեջ, չնայած այն բանին, որ բազմաթիվ անգամ ու երկար ժամանակ է նստել, այնուամենայնիվ անցյալ կատարյալով վերցվում է միայն բազմաթիվ գործողություններից մեկը և արտահայտվում է իբրև ավարտված, վերջացած միանգամյա գործողություն։ Համեմատի՛ր.* Մենք փող զարկինք, և արձագանքն ահավոր Երկրից-երկիր որոտաձայն շառաչեց, Եվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց *(Չե, 187)։*

§ 186. *Գործողության այս վերջացածությունը ավելի ցայտուն զգացվում է այն ժամանակ, երբ անցյալ կատարյալը զուգահեռ կիրառվում է ուրիշ անցյալ ժամանակների հետ. օրինակ՝* Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում, Որ բյուրավոր մարդկանց խանդաղանքով ահա Բարձրացել է որպես հաղթանակի վահան Մի վիթխարի մարդու այգանման անուն: Մեր սրտերում անդուլ մի ափսոսանք պահած՝ Մի օր ճամփա դրինք նրա դագաղը մենք, Եվ քարացել էին, ինչպես ռազմի պահակ, Ճանապարհին՝ անթիվ բազմություններ *(Չե, 186)։*

Մինչդեռ անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անգամ արդեն կատարված վերջացած գործողություն՝ առանց տևականության, վաղակատարը արտահայտում է կատարված, բայց մնայուն գործողություն։ Իսկ վաղակատարի անցյալը ցույց է տալիս կատարված, բայց ոչ վերջացած, այլ ժամանակավոր բնույթի մի գործողություն, որի մեջ կա նաև տևականություն։ Համեմատի՛ր. Դեռ արեգակը չէր ծագել. դեռ նոր զարթնած թռչունները սկսել էին իրանց առավոտյան ճլվլոցը, երբ ես աչքերս բաց արի *(ՐԿ, 448)*։

§ 187. Անցյալ կատարյալը ավելի բացահայտ կերպով է տարբերվում անցյալի անկատարից. օրինակ՝ Զվիցերիացիք ասում էին, որ այդ լեռան վրա է Տելլը իր ընկերների հետ երդվել *(Շիրվ., VIII, 376)։ Եթե հեղինակը ասեր՝* զվիցերիացիք ասացին, *ոչ միայն կնշանակեր, որ իրեն՝ հեղինակին ասացին, այլև մի անգամ ասացին, և վերջացավ. բայց այն դեպքում, ոչ միայն իրեն են ասել, այլև ամենքին են ասում և դարերով կրկնում են նույնը։*

§ 188. Անցյալ կատարյալը անցյալ ժամանակի չափի նկատմամբ խտրություն չի ճանաչում. այսինքն՝ առանց տևականության և միանգամյա գործողությունը կարելի է արտահայտել թե՛ հեռավոր անցյալի և թե՛ մի վայրկյան առաջ կատարվածի համար. օրինակ՝ Ես հայ ուսուցիչ եմ: Կարծեմ սրանով շատ բան, ասացի,—ասացի այն ամենը, ինչ որ հազար անգամ գրված է մեր լրագրերում *(Նար., IV, 67)։*

Այս օրինակում անցյալ կատարյալը արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ կատարվել է մի վայրկյան առաջ։ Նար-Դոսը գրում է՝ Ես հայ ուսուցիչ եմ *և անմիջապես հաջորդում է՝ ասացի։ Սրան հակադիր, Փարիզում պատահած իրողությունը տարիներ հետո, Շիրվանզադեն նույնպես արտահայտում է անցյալ կատարյալով. օրինակ՝* Այդտեղ էր, որ առաջին անգամ *տեսա* այն ֆրանսուհի աղջկան: Աղջիկը *մոտեցավ* Արմենին, ինչ-որ *ասաց* նրան, ինչ-որ *լսեց* նրանից և շուտով *հեռացավ* չափազանց տխրած դեմքով և գլուխն երերելով *(Շիրվ., VIII, 378)։*

§ 188. Վերջին օրինակում անցյալ կատարյալը ցույց է տալիս, որ հեղինակը իրողության կատարման պրոցեսին ներկա է եղել և պատմում է իբրև իր տեսած և լսած իրողություն. եթե ինքը ներկա չլիներ, այս դեպքում չէր կարող անցյալ կատարյալով հաղորդել իրողությունը։

§ 189. Բայց երբեմն հեղինակը անցյալ կատարյալով է պատմում շատ հեռավոր անցյալի իրողությունները, որոնց ինքը չէր

կարող ներկա գտնվել։ Այս դեպքում հեղինակը իրեն փոխադրում է անցյալը և դառնում ականատես՝ իր պատումը կենդանի, հավաստի և իրական դարձնելու համար։ Միանգամյա և ոչ տևական գործողությունները, որոնք պատմական բնույթ ունեն, այլ ժամանակներով պատմվելու դեպքում՝ այնպես է ստացվում, որ հեղինակը իրեն դնում է լսողի, կողմնակի հաղորդողի դերում։ Որպեսզի խուսափի դրանից և իրեն դնի անմիջական դիտողի, դեպքերին ականատեսի դերում, պատմում է անցյալ կատարյալով, մի բան, որ հաճախ է օգտագործվում գեղարվեստական գրականության մեջ. օրինակ՝ Գյուտին ու Կողակին չընդունեց Միհրներսեհը: Հազարապետը քննեց նրան, խոսեցրեց: Գնա,— ասաց նա Կողակին *(ԴԴՎ, 195, 196)։* Նադիր շահը զորք հավաքեց, Զորք հավաքեց անհամար, եկավ Թմկա բերդը պատեց, Ինչպես գիշերն էն խավար *(Թ., II, 142)։* Ջրից դուրս եկան, երկուսով բռնեցին եղբորը, ձեռներն ու ոտները կապեցին, դրին գետին, աչքերը հանեցին *(ՍԶ, V, 391)։*

§ 190. Վերջին օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ մի ամբողջական լրիվ կատարված գործողության արագ հաջորդում են նույնպիսի գործողություններ. այդ պատճառով անցյալ կատարյալը օգտագործվում է նաև հենց այդպիսի իրար հետևողականորեն հաջորդող միանգամյա և ոչ տևական գործողությունների ու դեպքերի նկարագրության համար. օրինակ՝ Մահճակալիս մոտ տեսա բժշկիս և նրա քրոջը: Հետո մտավ տանտերս իր կնոջ հետ: Նրանց նայելով զգացվեցի, աչքերս արտասվակալեցին: Ինձ թվաց, թե մեռնելու եմ և այդ բարի մարդիկ կարեկցում են ինձ: Բժիշկս նայեց զարկերակս, չափեց տաքությանս աստիճանը, սկսեց ինչ-որ տարօրինակ հարցումներ տալ, որոնցից գլխի ընկա, որ կասկածում էր... *(Նար., IV, 83)։*

§ 191. Անցյալ կատարյալը արտահայտում է նաև կրկնվող, սովորույթի բնույթ ունեցող գործողություններ, որի հետևանքով դառնում է համանիշ կրկնվող և սովորույթի ներկային, սակայն այն տարբերությամբ, որ այս դեպքում կատարյալը արտահայտում է հանկարծակիություն, արագ վրա հասնող անսպասելիություն և չնայած կրկնվող գործողություններ են, բայց տևական չեն և անմիջապես փոփոխվում են. օրինակ՝ Նայես. թռավ մի հրանոթ ու թունդ պայթեց խրամատում *(ՉԸ, 252)։* Մեկ էլ *տեսար* մի սարի ուսից տարածվեց մի առաձգական ձայն *(Թ., III, 68)։* Նստել ես, չես նստել, մեկ էլ *տեսար* եկան *(Փափ., 461)։* *Տեսար* մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լսվեց օդում միլիոնավոր բզեզների բզզոցի ուժգնությամբ, կամ մի թեթև հովից Այգեստանի ծառերի տերևները

շրջվեցին, և լավեցին այդ ձայներն ալիֆ-ալիֆ թավալում *(ԳՄՇ, 318)։*

Ինչպես նկատելի է, հանկարծակիությանը, անսպասելիությանը նպաստում է մեկ էլ տեսար *բառակապակցությունը, որ համախ ուղեկցում է այս կարգի անցյալ կատարյալին։*

§ 192. *Անցյալ կատարյալը արտահայտում է նաև գործողության որոշ տևականություն. օրինակ՝* Վերջինս, ճանճախ լսելով այդ մասին՝ կամաց-կամաց *մտածեց (ԴԴՎ, 195)։ Պետք է ասել, որ այս ձևը այնքան էլ հարազատ չէ հայերենին և ավելի շուտ նշանակում է* սկսեց մտածել, *այսինքն՝ արտահայտում է սկզման պահը՝ որոշ տևականությամբ. իսկ այդ ոչ թե դրսևորվում է բայի ժամանակով, այլ կողմնակի պարագաներով և կամ բայիմաստով։*

§ 193. *Անցյալ կատարյալը արտահայտում է նաև այնպիսի գործողություն, որ կատարվելու է հետագայում. այս դեպքում անցյալ կատարյալը ցույց է տալիս ապագայում կատարվող այնպիսի մի գործողություն, որին անմիջապես պետք է հաջորդի հավաստի, անկասկած, առանց ենթադրության ու պայմանի գործողություն. այսինքն՝ մյուս ապառնի ժամանակների համեմատությամբ վճռական ու կտրուկ. օրինակ՝* Պատերազմը երբ *եղավ,* ինքը առաջինը պետք է նետվի նրա մեջ *(ԳՍԹ, I, 426)։* Բայց մտիկ արա, երբ վատ տեղ *տարիր,* ձեռքիցս չես պրծնիլ *(Շիրվ., II, 140)։* Ուզած ժամանակ էլ, երբ մի վատ խոսք *ասացիր,* վզակոթիդ կտա, դուրս կանի *(ԳՍԹ, I, 421)։* Երեք օրվա մեջ պետք է լուր բերես, թե Կասսիոն *մեռավ (Յագոն իբրև պատասխան ասում է).* Բարեկամս *մեռավ. եղավ* ձեր կամքը *(Շեքս., I, 170). այսինքն՝ կամենում է ասել, թե անպայման կմեռնի։*

Այսպիսի անցյալ կատարյալը ցույց է տալիս նաև այնպիսի մի ապառնի, որտեղ խոսողը փոխադրում է գործողությունը և դիտում իբրև կատարված փաստ, իբրև հաստատուն, որոշակի, անկասկած կատարելի իրողություն. օրինակ՝ Ասա՛, ջուրը եկավ տարավ մեզ *(ԴԴՎ, 21)։* Երբ բանը հասավ արքային, կորած ենք *(նույն տեղում, 167)։* Երբ *իմացար,* թե էս ընչից էս ինչ բանն է դուրս գալիս *(Թ., II, 155)։* Իմացար *նշանակում է՝* իմանաս, կիմանաս։

ՎԱՂԱԿԱՏԱՐ

§ 194. *Վաղակատարը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ կատարվել է անցյալում՝ ներկայում կատարվող մի գործողությունից առաջ, այսինքն՝ վաղակատարի ցույց տված ժամանակը վերցվում է մի որևէ ներկա ժամանակակետի նկատմամբ*

իբրև կատարված, տեղի ունեցած անցյալ։ Միաժամանակ, վաղակատարը այնպիսի անցյալ է, որ ավելի վաղ է կատարվել, քան անցյալ կատարյալը։ Համեմատի՛ր. Եկել եմ — եկա, գնացել եմ — գնացի, խոսել եմ — խոսեցի *և այլն, որտեղ զուգադրված մասերի համեմատությունը պարզ ցույց է տալիս, թե առաջինը ավելի վաղ կատարված գործողություն է արտահայտում, քան երկրորդը։ Այս զուգադրությունների մեջ կարծեք երկրորդ ձևը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ խոսելու վայրկյանից անմիջապես առաջ է կատարվում. բերենք օրինակներ՝* Ես *եղել* եմ, կամ, կլինեմ հար ու հավետ *(Թ., I, 549)։ Հոգնե՞լ ես* դու փոքրիկի Ոռնոցներից խելագար *(նույն տեղում, 379)։* Ուրկից *եկել,* Ո՞ւր ես *թեքել,* Ո՞ւր ես ճեպում էղքան հզոր *(նույն տեղում, 198)։* Քանի՜ էսպես գարունքներ *են եկել անցկացել,* քանի՜ ինձ պես որսկաններ են *եկել* ու *գնացել,* Գիլլի լիճը կա ու կա *(ՎԱՍԱ, 19)։*

§ *195. Հայտնի է, որ հարակատարի կիրառությունը մեր գրական լեզվում աստիճանաբար ետ է զարգանում (§ 210)։ Հատկապես ներգործական սեռի բայերը համարյա հարակատարով չեն կիրառվում, ուստի հաճախ հարակատարի հարատևումը արտահայտվում է վաղակատարով։ Այսպիսով վաղակատարը արտահայտում է նաև մնայուն, տևական գործողություն ու հետևանք։ Դա երևում է այն բանից, որ բնության մնայուն երևույթները հաճախ նկարագրվում են վաղակատարով. օրինակ՝* Բարձրագահ Աբուլն ու Մըթին սարեր Մեջք մեջքի տված *կանգնել* վեհափառ, Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝ Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ *(Թ., I, 292)։* Իսկ նրան շրջապատող լեռները... Ուս-ուսի տվել, շուրջպար են բռնել ու հենց պարի ժամանակ էլ *քարացել են (ՎԱՍԱ, 4)։*

§ *196. Տևականությունը և մնայնությունը ավել կամ պակաս չափով արտահայտվում են նաև այլ կարգի բայերի միջոցով. օրինակ՝* Մութի թերև քող է իջել Պայծառության իր երկնային, Վշտի ամպից լույս ճաճանչել, Լույսն սքողել վշտովն իր հին *(Թ., I, 194)։* Քանզի դու հավետ մի մարդ ես եղել, որ ամենայն ինչ կրելով հանդերձ, ոչինչ չես կրում *(Շեքս., I, 55)։* Այդ դո՞ւք եք, տիկի՛ն, ինչքան փոխվել եք: Հիմա խելոքացե՞լ է, էլ չի՞ խմում, չի՞ ծեծում *(Նար., IV, 113)։* Ամպերը եկել են սարերը պատել, Ձորերը լցվել, իրար փաթաթվել... Վաղո՜ւց, վաղուց ես դու ինձ մոռացել. Ես ե՞րբ եմ եկել, էստեղ քարացել *(Թ., II, 52)։* Ոչ ոք քեզ չի սիրել այնչափ, որչափ ես *(Շիրվ., VI, 315)։*

§ 197. *Վաղակատարը ցույց է տալիս անցյալում կատարված այնպիսի մի գործողություն, որին խոսողը ներկա չի եղել, որը, սակայն, պատմում է իբրև լսած, իմացած, տեղյակ մեկը. օրինակ՝* Մի ժամանակ հայերը դիմել են ցարական կառավարությանը և խնդրել են՝ անջրդի հողերը ոռոգելու համար թույլ տալ օգտագործելու Սևանի ջրի պաշարները *(ՎԱՍԱ, 4)։*

§ 198. *Վաղակատարը ցույց է տալիս նաև ապագայում կատարվելիք գործողություն։ Վաղակատարով արտահայտված ապառնին իր մեջ ունի վճռականություն, որոշակիություն։ Սահմանական եղանակի ապառնին, ըղձականը, պայմանականը կարող են կատարվելիք գործողության նկատմամբ կասկածի տակ առնվել, մինչդեռ վաղակատարով ասվածը դիտվում է իբրև արդեն վճռված-կատարված փաստ. օրինակ՝ Սակարկության ընթացքում մեկը մյուսից որոշ գումար է պահանջում ինչ-որ գործ կատարելու համար. այդ գումարը վճարողը, որ պետք է հատուցի գործը կատարելուց հետո, ասում է.* Գնա, տվել եմ. տվե՛լ եմ, տվե՛լ, Սարգիս *(Նար., I, 449)։*

§ 199. *Վաղակատարով արտահայտվում է նաև ներկա ժամանակը, որը սովորական չէ, այլ կիրառվում է աղոթքների մեջ յուրահատուկ ձևով. օրինակ՝* Ով բարեգութ, քեզ *եմ խնդրել.* Ինչպես որդիս իմ մոր գրկին գնաց՝ կարոտ, աչքն աշխարհին *(Թ., II, 153)։*

§ 200. *Վաղակատարը կիրառվում է նաև առածական արտահայտությունների մեջ, որը տվյալ դեպքում ներկայի նշանակություն է ստանում՝ այն տարբերությամբ միայն, որ մի անգամ ասվածը ընդունվում է բոլոր ժամանակների համար. իսկ ներկայով կիրառվելիս այդ մի անգամ ասվածը անընդհատ նորոգվում է խոսելու ժամանակ. օրինակ՝*

Ասել են առ և տուր, չեն ասել՝ առ և կուլ *(Ր., II, 462)։* Երկրորդ ամուսին չէ առել մի կին, եթե չէ դավել առաջնի կյանքին *(Շեքս., I, 58)։*

§ 201. *Գրեթե վերջինիս մոտենում է կրկնվող գործողությունների վաղակատարը. օրինակ՝* Նստել ես, չես նստել, մեկ էլ տեսար եկան *(Փափ., 461)։*

ԱՆՑՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

§ 202. *Անցյալի վաղակատարը, ի տարբերություն վաղակատարի, ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ տեղի է ունեցել անցյալում կատարված մի այլ գործողությունից առաջ և վերջ-*

վում է հենց այդ գործողության ժամանակակետի համեմատությամբ. օրինակ՝ Վլադիմիր Դեմենտևը մի կողմ նետեց լսափողը, որ մինչ այդ *դրել էր* ականջին *(Քոչար, 608)*։ Երբ Մինաս Մելիքյանը փողոցներում Պարթև Սարխոշովին կորցրած քաղաքի արվարձաններից դուրս եկավ, մեր նահանջող զորքերն *անհետացել էին* *(Նույն տեղում, 275)*։ Մինչև ձեր նամակի ստանալը ես *չէի մտածել* այն մասին *(Թ., V, 232)*։

§ 203. *Անցյալի վաղակատարը նույնպես տևականության, գործողության որոշ մնայնություն է արտահայտում, միայն այն տարբերությամբ, որ վաղակատարի մնայնությունը շարունակվում է մինչև խոսելու պահը, իսկ անցյալի վաղակատարի մնայնությունը՝ մինչև համեմատության եզր հանդիսացող մի անցյալ գործողություն. օրինակ՝* Կարծես այն օրերից, որ ինքն աչք *էր բացել* աշխարհի վրա, միշտ էլ *տեսել էր* ռուսական, միջինասիական ու կովկասյան դեմքեր *(Քոչար, 611)*։ Գադիշոն սրահը *զարդարել էր* ամենաընտիր մորթիներով *(ԴԴՎ, 231)*։ Այրուձին ու հետևակը շարք-շարք *կանգնել էին* ծովափի գծով *(Նույն տեղում)*։

Այս օրինակներից պարզ երևում է, որ գործողությունները կատարվել են նկարագրվող ժամանակաշրջանից առաջ, բայց տևել են մինչև նկարագրվող ժամանակաշրջանը։

§ 204. *Այդ երևույթը ավելի որոշակի է երևում, երբ համեմատվում են վաղակատարը և անցյալի վաղակատարը. օրինակներ.* Երեք տանկ *էին խփել* նրանք, բայց ամեն մեկին թվում էր, որ այդ բոլորն *արել են* գնդի հրամանատարներն ու կոմիսարը *(Քոչար, 615)*։ *Բերված օրինակի մեջ առաջին նախադասությունը դրված է անցյալի վաղակատարով, որը ավելի առաջ է կատարվել* թվում էր *բայի ցույց տված անցյալ ժամանակից. հեղինակը այն դիտում է հետո, երբ* թվում էր *արդեն մի այլ անցյալ է. իսկ վերջին նախադասությունը (*արել են*) վաղակատարով է, որովհետև վերջինս դիտվում է* թվում էր *բայի ժամանակակետից և ոչ թե հեղինակի նկարագրած պահից։ Համեմատե՛ք նաև հետևյալ նախադասության ժամանակները, որտեղ անցյալի վաղակատարը դիտվում է անցյալ կատարյալի, անցյալի անկատարի համեմատությամբ.* Սոլանն ինձանից վաղ էր վեր կացել, *պատրաստվել էր*, ինձ ևս ասաց, որ շուտով հագնվեմ *(ՐԿ, 448)*։ *Մտել էր* արհեստանոցները, *քանդում էր* պատը *(Զե, 398)*։ Դեռ արեգակը *չէր ծագել*, դեռ նոր զարթած թռչունները *սկսել էին* իրանց առավոտյան ճլվլոցը, երբ ես աչքերս բաց արի *(ՐԿ, 448)*։

§ 205. *Անցյալի վաղակատարը երբեմն կիրառվել է ըղձական ապառնու, անցյալի փոխարեն, որ այժմ հնացած է և գործածու-թյունից դուրս եկած. օրինակ՝* Եթե ունեցել էր, փչել կտայինք *(Բա-կունց, «Մուրոյի զրույցը»)։* Եթե այդ բաշլուղը չէր եղել, ես ան-շուշտ ցրտահար էի լինելու *(Թ., V, 21)։* Յարաբ աստված, էս մար-դուն մի ծտի խելք էիր տվել *(Շիրվ., I, 307)։* Եթե աղջիկը տեղն ի տեղը մեռել էր, ես ինձ ամենաերջանիկ մարդը կհամարեի *(ՌՊԵ, 322)։*

Այս դեպքում անցյալի վաղակատարի համար ժամանակակետ է վերցվում անցյալի ապառնին։ Դե էն ա, որ չէր ստացել, կուզեի էլի *(Թ., V, 21)։* Մեղքը իմն է, իմն է, իմ, Չէի քշել թիթեռին, Նա չէր թռչի վարուվեր Ու չէր ընկնի ծտի ձեռ *(Հակոբ Աղաբաբ)։ Այս-պիսի վաղակատարի փոխարեն այժմ կիրառվում է նաև երկրորդա-կան բաղադրյալ ժամանակի ըղձականի անցյալը։ Համեմատի՛ր* Երանի չէր լինիլ, որ մի անգամով քաղել էր այս երկու թշվառական-ներին *(ՌՊԵ, 322)։*

§ 206. *Թումանյանի մոտ գտնում ենք նաև հարկադրական և պայմանական անցյալի փոխարեն կիրառված, որ բարբառային է և հազվագյուտ. օրինակ՝* Այն գիրքը, որի միտքը ծագեցնելը քեզ է պատկանում և որ *պետք է* երեքով *էինք հրատարակել (Թ., V, 22)։* Եթե այսպես չլիներ, վայն *եկել էր տարել* բանաստեղծներին *(Նույն տեղում, 157)։*

ՀԱՐԱԿԱՏԱՐ

§ 207. *Հարակատարը արտահայտում է մի այնպիսի գործողու-թյուն, որ կատարվել է ներկայում կատարվող մի ուրիշ գործողու-թյունից կամ մի ներկա ժամանակից առաջ, և գործողության հետե-վանքը հարատևում է մինչև այդ ներկա գործողությունը կամ հենց ներկա ժամանակը. օրինակ՝* Միթե ես անպատված եմ *(Մուր., I, 118)։* Իմ կառանիվի շառավիղները շինված են սարդի երկար ոտնե-րից *(Շեքս., I, 425)։* Բայց այնպիսի գրվածքներ, որ տակավին չեն տպված, մինչև անգամ չեն վերջացած *(Թ., V, 231)։* Առավոտից մինչև երեկո թաղված ենք գործերի մեջ։ Այդ գործը միայն ինձնից չի կախված *(ԳՍԹ, I, 372)։*

ԱՆՑՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

§ 208. *Անցյալի հարակատարը արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ կատարվել է մի անցյալ ժամանակամիջոցից*

առաջ, և գործողության հետևանքը հարատևում է մինչև այդ ան-ցյալ ժամանակամիջոցը. օրինակ՝ Երևի դեռ լվացված չէր *(Ր., II, 534)*։ Մի քանի ժամանակից ետ ամեն զաղտնիք պարզված էր *(Մուր., I, 201)*։ Ներքին հարկի մի ցածում, բայց ընդարձակ սե-նյակի մեջ ժողովված էին մի խումբ աշխույժ երիտասարդներ *(Մուր., V, 8)*։ Գլուխը ծածկված էր կոտրած կարասի վերին մասով *(Նար., VII, 9)*։ Կանգնած էր երդիկի տակ իր ցից-ցից սյուներով *(նույն տեղում, 101)*։ Անցյալ օրը Թումանյանների տանը կոլոլակի էին հրավիրված *(Թ., V, 226)*։ Որի զույգ լուսամուտները ծածկված էին թափանցիկ վարազույրներով *(«Ընտիր էջեր», 954)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Անհետևողության արդյունք է ասել՝ Այժմ Բարաթյանը զբաղված էր մի քանի մանր 'գործերով *(Շիրվ., III, 332)*։ Պուցե կամենում է ասել՝ այժմ, երբ ինքը նրա մոտն էր, նա զբաղված էր:

§ 209. *Հարակատարը և անցյալի հարակատարը համեմատած վաղակատարի և վերջինիս անցյալի հետ, խիստ չափավոր կիրառու-թյուն ունեն։ Մեր նոր գրական լեզվի պատմությունը ցույց է տա-լիս, որ հարակատարի կիրառությունն անընդհատ նեղանում է։ Այժմ մեր լեզուն հասել է մի այնպիսի վիճակի, որ բազմաթիվ բա-յերի հարակատարները միանգամայն խորթ են և զուրկ բնականու-թյունից, կամ ավելի ճիշտ այլևս չեն կիրառվում. օրինակ՝* Նրանց հիմնարկում նման կին *չէր տեսած (ԱՁ, III, 456)*։ Մենք սկսյալ ա-ռավոտից ոչինչ *կերած չէինք (ՐԿ, 338)*։ Առանձնապես նա *հետա-քրքրված էր* գյուղական մանուկների թվով *(Շիրվ., III, 325)*։

Բերված օրինակներից ակնհայտ երևում է, որ դրանք հնացած են և փոխարինված ուրիշ ժամանակներով։

§ 210. *Ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ հարակատար ժամանակների կիրառության առնչությամբ բայերը տարբերակվում են ըստ սեռերի։ Այժմ ներգործական սեռի բայերը գերազանցապես հարակատար ժամանակներով չեն գործածվում։ Մի քանի տասնա-մյակ առաջ և դրանից հետո կիրառված ներգործական սեռի բայերի հարակատարները բացարձակորեն հնացած են. օրինակ՝* Ծառուղիի մեջ զբոսնողների ուշադրությունը միայն Հեղինեն *էր գրված* *(Մուր., I, 76)*։ Երբե մինչև այսօր այդ ցավի համը *առած չես (նույն տեղում, 147)*։ Մեր մոլլաները այդ խտրությունը *դրած են* քրիստո-նյաների և մուսուլմանների մեջ *(Ր., I, 560)*։ Մի հուզմունք, որ եր-բեք *չէր տեսած (ԱՁ, III, 456)*։ Դու առջևդ կերակուր *ես դրած*, լավ ախորժակով ուտում ես *(Ր., I, 468)*։

§ 211—212. Ինչո՞վ պետք է բացատրել այս երևույթը։ Յուրաքանչյուր ներգործական սեռի բայի գործողություն ենթակայից անցնում է մի այլ առարկայի վրա. եթե այդ գործողությունը ունի հարատևելու, մնայուն լինելու առանձնահատկություն, ապա մեծ մասամբ այդ մնայնությունը, հարատևող հետևանքը առնչվում է խնդրին և ոչ թե ենթակային. օրինակ՝ երբ ասում ենք՝ Նա արտը հնձած է, ապա հարատևման, գործողության մնայնության տեսանկյունից դիտելով՝ ստացվում է անհեթեթություն, որովհետև հետևանքը մնում է արտի վրա և ոչ թե ենթակայի, իսկ որպեսզի իրոք այնպես ստացվի, որ հետևանքը, հարատևությունը առնչվի արտի հետ, պետք է վերջինս դառնա ենթակա, որ հնարավոր է միայն կրավորական կառուցվածքով. Արտը հնձված է։ Իսկ երբ ասում ենք՝ Նա նստած է, կանգնած է, ընկած է և այլն, այսինքն՝ վերցնում ենք չեզոք բայեր, ապա նկատում ենք, որ դրությունը, վիճակը, թեկուզ և չեզոք բայի ցույց տված գործողությունը կապվում է ենթակայի հետ, իսկ գործողության հարատևող հետևանքը հենց կրում է ենթական և դրանով էլ հարակատարի գործածությունը իմաստավորվում է։

§ 213. Եթե այժմ այդպես է հարակատար ժամանակների գործածության պատկերը, ապա ինչո՞վ պետք է բացատրել, որ մի քանի տասնամյակ առաջ այնուամենայնիվ որոշ ներգործական բայեր կիրառվել են հարակատար ժամանակներով։

Երբ այս հարցը քննում ենք ըստ էության, նկատում ենք. նախ՝ մեր գրական լեզվի զարգացման սկզբնական շրջանում և դրանից էլ երկար ժամանակ հետո հարակատարը այնպիսի ուժեղ հետևանքային արժեք չի ներկայացրել, ինչպես այժմ։ Մի ժամանակ այն վաղակատարից քիչ է տարբերվել. երկրորդ՝ ած-ով վերջացող ներգործաձև բայերը ունեին կրավորական նշանակություն, որ ցույց է տալիս, թե դեռևս տասնամյակներ առաջ էլ հարակատարը ներգործական բայերի համար խորթ էր։ Հետագայում, երբ մեր բայերի ներգործական և կրավորական ձևերը որոշակի կերպով կազմավորվեցին, այսինքն՝ կրավորականի համար օրինաչափական և պարտադիր դարձավ վ ածանցը բոլոր ժամանակների և եղանակների համար, այդ պատճառով էլ ներգործաձև հարակատարները, որ սկզբնապես կրավորական նշանակություն ունեին, վերացան։ Այժմ մեզ համար միանգամայն խորթ են հարակատարի հետևյալ կիրառությունները, որոնց կրավորական կամ չեզոք նշանակությունը մեզ համար անհասկանալի է։ Շատ դեպքերում կասկած կարող է

առաջանալ՝ ներգործակա՞ն են այդ բայերը, կրավորակա՞ն, թե չեզոք։

Խոյի առաջ միս է *դրած* (*Թ., II, 172*)։ Որին *պատվիրած էր* խնամք տանել նրա առողջության (*Ր., I, 148*)։ Այնտեղ ո՛չ քո խիղճն է *դատապարտած*, ո՛չ իմ աքսորն է զանգատված (*Թ., V, 224*)։ Սենյակը *վառած չէր*, բայց պատանին երևի ցուրտ չէր զգում (*Ր., II, 534*)։ Գրասեղանի վրա անկարգ կերպով *ածած էին* զանազան թղթեր (*Նույն տեղում*)։ Հյուրանոցի աջակողմյան մասնում *կապած էին* մի քանի ձիաններ (*ՐԿ, 225*)։ Հյուրանոցի սյուներից *քարշ էին տված* զենքերի այլևայլ տեսակներ (*Նույն տեղում*)։ Բայց մեր արագիլի սիրտը *կոտրած էր*, նոր սեր չէր ուզում (*Իս., III, 170*)։ Անկյունում *դրած էին* բազիններ հիշեցնող եռոտանի բրոնզե պատվանդաններ (*ԴԴՎ, 231*)։ Դարակներում *դրած էին* ոսկեկազմ մատյաններ (*Նույն տեղում*)։ Նրա փալանը բարձի տեղ *դրած էր* նրա գլխի տակ, և մի քրքրված վերարկու *ձգած էր* նրա վրա (*Ր., I, 148*)։

Բերված օրինակներում հարակատարով գործածված բոլոր բայերը այժմ միայն վ *ածանցով կարող են դրվել, չնայած այդտեղ ունենք Իսահակյանից և Դեմիրճյանից բերված օրինակներ։ Պետք է լինեին՝* պատվիրված էր, ասված էին, կոտրված էր, դրված էին *և այլն։*

§ 214. Չնայած այն բանին, որ մեր բայերը կրավորական և կրավորաձև չեզոք բայերի համար ունեն վ *մասնիկը և դրանց հարակատարը պետք է անպայման* վ*-ով արտահայտվի, այնուամենայնիվ դեռևս բայեր կան, որոնց կրավորականը և կրավորաձև չեզոքը կիրառվում են առանց* վ*-ի. ավելի ճիշտ կլինի ասել՝ շատ դեպքերում դրանց հարակատարի ներգործաձև, բայց չեզոք և կրավորական նշանակությամբ գործածությունը այնքան էլ խորթ չէ։ Այս երևույթը կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով։ Ամենից առաջ առանց* վ *մասնիկի հարակատարների մի մասը, բարբառներից մուտք գործելով գրականության մեջ, դառնում է սովորական, և խորթություն չի զգացվում. երկրորդ՝ ներգործաձև (առանց* վ *մասնիկի) գործածվում են նաև այն բայերը, որոնց կրավորականը կա՛մ անսովոր է, կա՛մ դժվար է կազմել* վ*-ով, բաղաձայնների կուտակման պատճառով. և վերջապես՝ ներգործաձև կիրառության հաճախակիության պատճառով այդ ձևը կայունացել է։ Կրկին անգամ պետք է նկատել, որ դրանք ևս աստիճանաբար փոխարինվում են, կամ արդեն փոխարինվել են կրավորաձևով։ Վերևում նշված բայերի օրինակներ կարող են հանդիսանալ՝* սեռտել,

սվաղել, սրել, սփռել, վերականգնել, ներկել, ցանել, փոցխել, ճըշտել, օսլայել, ածիլել, պատել, անբեղել, անպատվել *և այլն։*

§ 215. Վերևում բերված դիտողությունները վերաբերում էին միայն ներգործական բայերին։ Թվում է, թե բոլոր չեզոք բայերը պետք է որ հարակատար ժամանակներով գործածվեն. սակայն այստեղ ևս որոշակի սահմանափակում գոյություն ունի։

Նախ և առաջ տեսնենք, թե ինչպիսի չեզոք բայեր են հարակատար ժամանակով կիրառվում։

Հարակատարը անսահմանափակ կերպով հատուկ է միայն կրավորական բայերին, ուստի այն բոլոր չեզոք բայերը, որոնք կրավորաձև են, այսինքն՝ վ *ածանցով են կազմվում, անխտիր կերպով ունեն հարակատար ժամանակները. այդ բայերից հիշենք՝* զբաղվել, բնակվել, բռնկվել, գանգատվել, գժվել, գրկախառնվել, զմայլվել, ընդհարվել, թաքնվել, խելագարվել, ցնորվել, խղճահարվել, խռնվել, հաշտվել, հիասթափվել, հնազանդվել, հպատակվել, ճարահատվել, մոլորվել, մռայլվել, մտադրվել, շշկլվել, պարտավորվել, ուշաթափվել, փշաքաղվել, փքվել *և այլն։*

Զարմանալիորեն այս բոլոր բայերը իրենց մեջ կրում են այնպիսի վիճակ, դրություն, որ արտահայտում են հետևանքային հարատև բնույթ՝ կապված ենթակայի հետ։

§ 216. Ըստ այսմ չեզոք բայերից հարակատար կազմում են այնպիսիները, որոնք արտահայտում են ենթակայի հետ ժամանակավորապես կամ ընդմիշտ կապված այնպիսի գործողություն, դրություն, վիճակ, որոնք մի անցյալ պահում կատարված-վերջացած լինելուց հետո թողնում են մնայուն հետևանք. օրինակ՝ նստած է, պառկած է, քնած է *բայերը հենց այդպիսի գործողություն, դրություն կամ վիճակ են ցույց տալիս. իսկ* վազած է, քայլած է *բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ խոսելու պահից առաջ կատարվել, վերջացել է, բայց ենթակային կապված մնայուն հետևանք չի մնացել. այդ պատճառով էլ նման բայերը հարակատար ժամանակներով չեն կիրառվում։*

§ 217. Հարակատարով կիրառվում են հետևյալ չեզոք բայերը. ապշել, արտասվակալել, բարակել, բեզարել, բորբոսնել, գազազել, դեղնել, դժգունել, զարթնել, թալքել, թառել, թառշամել, թիկնել, լացակումել, խանձրահամել, խոպոտել, խորշոմել, ծաղկել, ծլել, ծարավել, ծվարել, կակղել, կանաչել, կանգնել, կառչել, կատաղել, կարմրատակել, կարմրել, կռվել, հարբել, հերսոտել, հոգնել, հոտել, ճկռել, ճաքել, ճերմակել, ճլորել, մամռակալել, մգլո-

տել, մrափել, մոփել, ճվաղել, ճվազել, շաfաrակալել, շշմել, պակասել, frռնել *և գուցե մի քանի ուրիշները։*

§ *218. Իսկ այն չեզոք բայերը, որոնք արտահայտում են միաժամանակյա գործողություն՝ առանց ենթակայի հետ կապված մնայուն հետևանքի, որոնց տևողությունը չի շարունակվում գործողության ավարտից հետո, չեն կարող հարակատար ժամանակներով կիրառվել. այդպիսի չեզոք բայերից են՝* **աղաղակել, աղմկել, այցելել, աշխատել** *(բանել)*, **արշավել, արտասվել, բառաչել, բարեխոսել, բողոfել, գարշել, գերիշխել, գիշերել, դեգերել, դժգոհել, դիմադրել, դիմել, դոփել, երևակայել, երթևեկել, զուգադիպել, թագավորել, թախծել, թափառել, թոչկոտել, ժամանել, իշխանել, խանդել, խիզախել, խուժել, խուսափել, ծափահարել, ծլկել, կարթել, կատաղել, կարեկցել, կարկաչել, կաfավել, ճակակրել, համաձայնել, համառել, հանդգնել, հանդիպել, հաչել, հաջորդել, հառաչել, հետևել, հոսել, ձգտել, ճամփորդել, ճայթել, հրճվել, ձմեռել, ճգնել, ճեմել, ճղավել, մայել, մասնակցել, մարտնչել, մաfառել, մrցել, շաչել, չրչագայել, պայթել, պայfարել, պարել, սազել, սայթաfել, վազել, fայլել** *և այլն։*

§ *219. Այս ցանկի մեջ կան այնպիսի բայեր, որոնք արտահայտում են գործողության որոշ տևականություն. օրինակ՝* **համառել, պայfարել, ճամփորդել, ձմեռել** *և այլն։ Սակայն հարակատարի համար ամենակարևոր հանգամանքը հետևանքային հատկանիշն է։ Եթե կա տևականություն, բայց չկա հետևանքային հատկանիշը, բայը հարակատար չի կազմում. օրինակ՝* **ձմեռել** *բայը կարող է արտահայտել մի քանի ամսվա տևողականություն, սակայն հենց որ այդ բայի գործողության ժամկետը վերջանում է, դրանով էլ ամեն ինչ վերջանում է, հետք, հետևանք չի մնում։ Բայց երբ ասում ենք՝* **հոգնած է,** *չնայած այն բանին, որ այդ հոգնած մարդը կարող է խոսելու վայրկյանին պառկած լինել, այսինքն՝ հոգնածության պրոցեսը կատարված լինի մի քանի ժամ առաջ, այնուամենայնիվ հետևանքը, արդյունքը շարունակվում է։*

Այդ է պատճառը, որ վերջին թվարկված բայերը հարակատար չեն կազմում. դրանք չունեն ենթակայի հետ կապված մնայուն հետևանք. դրանց տևականությունը գործողության ավարտի հետ անմիջապես վերջանում է, իսկ դա արտահայտվում է վաղակատարով։

§ *220. Հարակատարը, ինչպես արդեն նշվել է, այլևս չի զարգանում. մի շարք բայերի հարակատարով կիրառությունը ուղղակի արդյունք է լեզվական ավանդության։ Վերևում մենք բերեցինք մի շարք բայեր, որոնց գործողությունից հետո մնում է որոշ հետևանք.*

այս առնչությամբ ասացինք, որ այդ կարգի բայերը բնական կերպով կազմում են հարակատար։ Պետք է նշել, որ այդ երևույթը եղել է պատմական մի շրջանում և այժմ այլևս ուրիշ բայերի վրա չի տարածվում. օրինակ՝ շատ բնական կերպով կազմում ենք՝ վախեցած եմ, վախեցած ես, վախեցած է և այլն, բայց չենք ասում, կամ արհեստական է հնչում՝ զարհուրած եմ, զարհուրած ես, զարհուրած է, չնայած որ հետևանքային տեսանկյունով երկուսն էլ միևնույն արժեքն ունեն։

§ 221. Հարակատար ժամանակներով արտահայտված ստորոգյալների և ենթակաների հարաբերությունները, մյուս ժամանակների համեմատությամբ, առանձին յուրահատկություններ հանդես չեն բերում, ուստի անհրաժեշտություն չկա այդ հարցին անդրադառնալու։ Նույնը վերաբերում է նաև վաղակատար ժամանակներին։

ԱՊԱՌՆԻ

§ 222. Սահմանական եղանակի ապառնին արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ ստույգ կերպով, ավելի ճիշտ՝ խոսողի ըմբռնումով ստույգ կատարվելու է խոսելու պահից հետո։ Այդ հետոն կարող է գալ և մի վայրկյանից և շատ ուշ. օրինակ՝ Ջանգուն այսօրվա պես ջրառատ է մնալու իջնելուց հետո էլ (ՎԱՍԱ, 5)։ Այստեղ բերված ապառնին, ըստ հեղինակի, գալու է հիսուն տարի հետո։

Եվ հոգին այնպես պիղծ ու սև դառնա, ինչպես այն դժոխքն, ուր գնալու է (Շեքս., I, 66)։ Համլետը հաստատ որոշել է, որ պետք է հորեղբորը սպանի, որի հոգին հենց այդ օրը դժոխք է գնալու։ Համլետը բուռն ցասման մեջ հարձակվում է մոր վրա. մայրը կարծում է, թե նա ցանկանում է իրեն սպանել, ասում է. Ի՞նչ ես անելու, ինձ սպանե՞լ ես ուզում (Նույն տեղում, 67)։ Ի՞նչ ես անելու ապառնին գրեթե ներկա է. մայրը կարող էր ասել՝ ի՞նչ ես անում, որովհետև Համլետը ուղղակի հարձակվում է։

§ 223. Ապառնին հայերենում համեմատաբար քիչ է գործածական։ Դա բացատրվում է ապառնու յուրահատուկ բնույթով. ինչքան էլ սահմանական եղանակի ապառնին արտահայտի ապագայում կատարվելիք ստույգ գործողություն, այնուամենայնիվ խոսողը չի կարող ապագայի ստուգության համար լիահույս երաշխավորել։ Այդ պատճառով էլ այն, ինչ որ պետք է ապառնիով արտա-

հայտվի, հաճախ փոխարինվում է պայմանական, ըղձական և հարկադրական եղանակի ապառնիներով։

Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ ապառնու կիրառությունը մեր լեզվում քերականորեն ու տրամաբանորեն արդարանում է և այժմ շատ բնական ու օրինաչափական է. ահա մի քանի օրինակներ՝ Վատ է սկսվել, բայց դեռ *գալու է* ավելի վատը (*Շեքս., I, 71*)։ Հիսուն տարվա ընթացքում Սևանի այդ մասը բոլորովին *ցամաքելու է* (*ՎԱՍԱ, 121*)։ Լճի տակից *ազատվելու է* հարյուր քսան հազար հեկտար հող (*Նույն տեղում*)։ Դե իմ անունով երդվիր, անզգամ, Որ էլ Սարոյին դու *չես սիրելու*, Թե չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝ Մինչև դաստակը սիրտդ *եմ խրելու* (*Թ., II, 60*)։ Նա էլ *չի տեսնելու* իրենց տունը։ Այլևս *չի՞ տեսնելու* ծնողներին, ընկերներին (*ԴԴԸԹ, 186, 187*)։

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ 224. *Անցյալի ապառնին ամենաքիչ գործածական ժամանակն է. ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ ապառնի է մի անցյալ ժամանակակետի նկատմամբ։ Եթե վերցվում է անցյալ ժամանակակետի նկատմամբ ապառնի, ապա նշանակում է՝ գերազանցապես մնում է անկատար. օրինակ՝* Մինչ ես ինքս *էի գալու*, դու նրա դուռը ծեծեցիր. *այս նախադասության ապառնին վերցված է անցյալ կատարյալի ցույց տված ժամանակի նկատմամբ իբրև ապառնի, ուստի մինչև այդ ժամանակակետը չի կատարված, դրանից հետո պետք է կատարվեր։ Անցյալում չկատարված, ավելի ճիշտ՝ այն գործողությունը, որի կատարվելու մասին խոսողը տեղյակ է եղել, բայց նրան հայտնի չէ, այդ գործողությունը կատարվել է, թե ոչ, կարող է արտահայտվել անցյալի ապառնիով։ Այսպես, օրինակ՝* Ես նրան ասացի, մայրիկ, որ Աստղիկը գալու է մեր տուն.—թող գա, թող գա, բալիկս... ասաց մայրը մի այնպիսի տոնով, որ կարծես այսօր իրենց տուն *էր գալու* ոչ թե այն Աստղիկը (*ԳՍԹ, I, 431*)։ Նա ժամանակին *դառնալու էր* ամենամեծ արծիվներից (*Թ., III, 216*)։

Անցյալի ապառնին փոխարինվում է պայմանական և հարկադրական եղանակների անցյալի ապառնիով. դրա համար նրա կիրառությունը շատ սահմանափակ է։

3. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՊԱՌՆԻ

§ 225. *Ըղձական ապառնին ցույց է տալիս ապագայում կատարելի այնպիսի մի գործողություն, որի իրականանալը ցանկալի է խոսողի համար. ավելի ճիշտ՝ խոսողը իր ցանկությունը դնում է գործողության մեջ, որ ապագայում պետք է կատարվի. օրինակ՝* **Թող շատ** *ապրի* **Ալամ արքան ոսկի գահին իր հաստատ** *(Թ., II, 154)։* **Թող արևը միշտ ձեզ պայծառ** *շողա,* **Թող կյանքը** *բացվի* **ամենուր ձեր դեմ, Որպես սխրանքի սրբազան մարտից եկ թող ձեր հոգին** *լինի* **լուսեղեն, Ձեր սիրտը** *լինի* **լայն ու մշտաբաց** *(Տ., I, 360)։ Ապրեն* **նրանք երկար իրենց խաչերով** *(Մուր., I, 357)։* **Գե՛, ես** *գնամ,* **հավաքեմ կազմակերպությունը** *(ՆԶՀ, 414)։* **Երնեկ** *մեռնիմ,* **ու սիրտս** *ուտեն* **գել ու գազան ամեհի** *(Իս., I, 59)։*

Ծանոթություն. Ըղձանքը, ցանկությունը ավելի ցայտուն արտահայտվում է մի քանի ձայնարկություններով և մակբայական բառերով. օրինակ՝ **երանի՜, ա՜խ, մի՜, երնե՜կ** *և այլն։*

§ 226. *Ըղձական ապառնին ունի զանազան դրսևորումներ, որոնք արտահայտում են իմաստային և ոճաբանական կարևոր նրբություններ։*

§ 227. *Ըղձական եղանակի ապառնին հոգնակի առաջին դեմքով արտահայտում է կտրուկ ցանկություն, մտադրություն, պահանջ, որոնք հանդես են գալիս խոսողի կողմից և ուղղվում խոսակցին՝ միասին մի բան անելու, կատարելու. օրինակ՝* **Գե, էլ ժամանակ** *չկորցնե՛նք, գնա՛նք,* **Համիկ** *(ՆԶՀ, 406)։ Գնանք, զարկե՛նք, ջարդե՛նք, կրակե՛նք.— Հա՜յ,* **հո՜յ, առա՛ջ, դե ձե՛զ տեսնեմ** *(Թ., I, 331)։* **Գե՜, հա՛յդա,** *քաշվե՛նք (ՆԶՀ, 412)։ Գնանք հանգցընենք,—* **ասավ նա հավերին** *(ՍԶ, V, 347)։* **Այժմ պետական գործերին անցնենք** *(Շեքս., I, 130)։* **Սակայն** *թողնենք* **հուշերը, գանք, տեր արքա, քո ցավին** *(Թ., II, 155)։ Ճարունակենք (ՄԳ, V, 579)։ Պատրաստվենք (ԴԴՎ, 441)։ Կռվենք,* **սպարապետ, սերունդ–սերունդ կռվով** *գնանք,* **մի տեղ լույսը բացվի** *(ԴԴՎ, 475)։*

§ 228. *Այս ըղձական ապառնուն ուղեկցում է* **գալ, վեր կենալ, կանգ առնել, թող** *բայերի հրամայականը, որ մի տեսակ ձևական արժեք է ստացել՝ կորցնելով իր նյութական, բառական նշանակությունը։ Այդ հրամայականը ավելի արտահայտում է դրդում, հորդորում. օրինակ՝ Կա՛նգ առ* **խաղա՛նք էս ծառի տակ** *(Թ., I, 236)։*

Արի՛ զմրուխտ էս դալարում էսպես ճանգչենք մենք ճիմիկ (*Թ., II, 163*)։ Դե *արի* հաշտվե՛նք (*Շիրվ., VI, 273*)։ *Արի* մի քիչ զրո՛ւյց անենք (*Ս. Կապուտիկյան, 113*)։ *Թող* զգո՛ւյշ լինենք, ծածկենք մեր սերը։ *Ծկեք* լողա՛նք,— ասավ մեծ եղբայրը (*ՍԶ, V, 390*)։

§ *229. Ըղձական ապառնին արտահայտում է պատվեր, հանձնարարություն, պահանջ, խրատ, որ խոսողը հաղորդում է դիմացինին թե՛ վերջինիս գործողության և թե՛ մի երրորդ դեմքի գործողության համար. երբեմն այսպիսի ըղձականը չի տարբերվում հրամայականից։*

Թող ինչպես *կան*, այնպես էլ մնան (*ԳՍԹ, I, 418*)։ Ավելի լավ չէ, *թքես* այդ բոլորի վրա, քարվանդ ուղիղ *քշես* (*նույն տեղում, 420*)։ Բայց լավ բաներ *սովորեցնես* երեխայիս (*Հ. Հրահան, 9*)։ Դուք զենքով *զարկեք*, մենք հացով (*ԴԴՎ, 458*)։

§ *230. Ըղձական ապառնին արտահայտում է պայման, ենթադրություն. այս իմաստը* եթե *շաղկապով շատ սովորական է ըղձական ապառնու համար, սակայն պայմանը, ենթադրությունը արտահայտվում է նաև առանց հիշյալ շաղկապի. օրինակ՝* — Ձայն *հանեք*, մեռած եք (*այսինքն՝ եթե ձայն հանեք, Քոչար, 505*)։ Սիրուն աղջիկ, երկիր *լինիմ*, Դուն ի՞նչ կրլնիս (*Իս., I, 69*)։ *Համեմատի՛ր*. Եթե ամեն մեկս մենակ մեր մասին *մտածենք*, էլ ի՞նչ ազնվություն կմնա (*ՎԱՍԱ, 226*)։

§ *231. Ըղձական ապառնին արտահայտում է նաև նպատակայնություն, մի բանի հասնելու ձգտում. օրինակ՝* Տո՛ւր ինձ քամի ձին, *հասնեմ* փափագիս, Բլբուլը *բերեմ*, *հասցնեմ* այգիս (*Թ., II, 170*)։ Որ *համոզես*, թե քոնը եղել է ջինջ լուսին (*ՉԸ, 460*)։ Թող գա, զոռում է, որ բռնե՛նք նորից (*Թ., II, 59*)։ Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ, *իմանամ* ես էլ ուրիշին ասեմ (*նույն տեղում, 37*)։

§ *232. Ըղձական ապառնին արտահայտում է խոսողի երկընտրանքը, կասկածը, ինքն իրեն հետ խորհրդակցելը, անվճռականությունը. օրինակ՝ Լսեմ* ավելին, թե պատասխան *տամ* (*Շեքս., I, 433*)։ Բերանումս լեզու ունեմ, ուրեմն *չխոսե՞մ* (*ԳՍԹ, I, 417*)։ Մինչև *տեսնենք*, հետո ի՞նչ կասեն տերերը (*նույն տեղում, 418*)։ Ես ինչ *անեմ*, ես ուր *չքվիմ*, Ընկնեմ չոլերն ամայի (*Իսահակյան*)։ *Թողնեմ* խելացի խոհերս բոլոր ու ելնեմ *երթամ* (*Գր. թերթ, 1955 թ., № 14*)։ Ի՞նչ *անես*, ախպեր, ումնից խռովես (*Թ., II, 36*)։

§ *233. Ըղձական ապառնիով են կիրառվում անեծքները, օրհնանքները, երդումներն ու ողջերթները. օրինակ՝ Հողե՛մ* ձեր գլուխը

(ՍՋ, III, 52)։ Վա՜յ, քու ձերը խոր *խորանա*, ճանապարհ շինող *(ՍԽՀ, II, 53)։* Ա՜խ, մառերիալ տվող Լևոնի երեխանց արցունքի համն *աններ* քո հացից *(ՆՁՀ, 395)։* Վա՜յ, *քոռանամ* մի խոսեցնեք *(Թ., I, 326)։* Սասման քույրեր, *բարով մնաք*, Քուրություն եք արել ինձ, Սասման մերեր, *բարով մնաք*, Մերություն եք արել ինձ *(Թ., II, 123)։ Անիծվի՛ք* դուք *(Շիրվ., VI, 279)։*

§ *234. Ըղձական ապառնին կիրառվում է նաև կրկնվող գործողությունները արտահայտելու համար, որով այն համապատասխանում է կրկնության, սովորույթի ներկային, այնպիսի ներկայի, որ որոշ պայմաններում դառնում է տևական, մինչև որ այդ պայմանները վերանում են. օրինակ՝* Խեղճ աղքատի ճոզին *դուրս գա*, Քարից, ճողից *հաց քամե*, Բեռով հացը ճարուստին *տա*, Հարուստն *իշխե*, վայելե: Խեղճ աղքատը դարը *դատի*, դատարկ *նստի*... Է՜յ աշխարհ *(Իս., I, 72)։*

Այսպիսի ըղձական ապառնին կարելի է փոխարինել ներկայով. բայց նույնանման ապառնին հարցապնդման ձևով ներկայով չի փոխարինվի. օրինակ՝ Ի՞նչ է. մենք *աշխատենք*, դուք *ուտե՞ք*. *սա նույնպես ներկայի է համապատասխանում, որովհետև այդ կարելի է ասել նույնիսկ հենց աշխատանքի ընթացքում։ Համեմատի՛ր նաև հետևյալ օրինակը.* Էլ ի՞նչ թագավոր, կամ էլ ի՞նչ իշխան, որ կոխվ *չանի*, ուրիշին *չտիրի*, մարդ *չկոտորի*, երկիր *չավերի (Թ., II, 37)։*

§ *235. Ըղձական ապառնին պայմանական ապառնու համեմատությամբ ավելի է մոտենում ներկային. կարծես թե այդ ապառնին որոշ դեպքերում խառնվում է ներկայի հետ. օրինակ՝ Վեր կենամ*, սաի, մեկի մոտ *գնամ*, Կրկին պարտք *անեմ*, գլուխը քարը, Մինչև որ *տեսնենք*, ինչ կըլնի ճարը *(Թ., II, 89)։* Մի կատաղած գել *սսեմ, պրծնեմ (ՍԽՀ, II, 382)։* Գլուխ *առնիմ, երթամ, կորիմ... (Իս., I, 70)։ Համեմատի՛ր.* Վեր կկենամ, մեկի մոտ կգնամ: Մի կատաղած գել կասեմ, կպրծնեմ: Գլուխս կառնեմ, կերթամ, կկորչեմ:

§ *236. Ինչպես հայտնի է, ըղձականի ապառնին գրաբարում եղել է ներկա. այժմ նրա ներկայի նշանակությունը բոլորովին մթնել է. սակայն հին ներկան մթնած կերպով որոշ քարացած արտահայտությունների մեջ մնացել է, որի ինչ ժամանակ լինելը պարզ չէ. օրինակ՝* էհ, աստված *սիրես*, թող դրանց պապի *(Թ., II, 37)։ Սա անշուշտ այժմ ներկայի նշանակությամբ պետք է հասկանանք, այսինքն՝* երբ աստված սիրում ես։

§ 237. Ըղձական ապառնին որոշ պայմանականությամբ հանգերձ պարզապես ապառնի ժամանակ է ցույց տալիս երբ *շաղկապից հետո. օրինակ՝* Երբ պարն ավարտվի, ես նրա կանգնած տեղը կգիտեմ *(Շեքս., I, 428)։*

§ 238. Ըղձական ապառնին արտահայտում է նաև անցյալում կատարվող մի գործողություն, որպեսզի խոսողը արտահայտի գործողության կարևորությունը, անսովորությունը, անսպասելիությունը, այն փոխադրում է ներկա ժամանակը. այսպիսի ըղձականը անցյալում կատարված գործողությանը տալիս է ներկայի նշանակություն. օրինակ՝ Մի անգամ էլ, երբ որ էսպես Պարում էի, մինը անտես էնպես զարկեց՝ ուշքս անցավ: Ուշքի որ *գամ*, ինչ *տեսնեմ* լավ,— Երկինքը թուխպ, երկիրը սև... *(Թ., I, 342)։* Հետո *տեսնեմ* դրա դոշին մի կարմիր կտոր *(ԱՉ, III, 58)։*

§ 239. Ըղձական ապառնին պայմանականի համեմատությամբ արտահայտում է անորոշություն, հարցում, երկընտրանք. իսկ պայմանականը՝ որոշակիություն, վճռականություն, հաստատունություն, որոնք երկուստեք արտահայտվում են թե՛ գործողության և թե՛ ժամանակի մեջ։ Համեմատի՛ր. Հենց *իմանաս* սարերին էր նայում *(Իս., III, 20)։ Տեսնենք* ինչ նոր գյուտ ես արել *(Թ., V, 430)։ Կարծես* երկար ժամանակ գլխի չէր ընկել և հիմա ընկավ հարցնելու *(ԴԴՎ, 14)։*

§ 240. Սրա հետևանքով մի շարք բայեր. ըղձական ապառնիով կիրառվելով՝ կորցրել են իրենց բառական նշանակությունը և ստացել են մակբայի, եղանակավորման, միջանկյալ բառերի արժեք. այդպիսի բայերից հիշենք՝ տեսնել, կարծել, ընդունել, դնել, վերցնել, նայել, երևիլ (երևի), ասել:

Տեսնենք ինչ դուրս կգա *(Թ., V, 408)։* Ցարական կառավարությունը, *երևի*, սարսափում էր... *(Շիրվ., VIII, 208)։* Բարձրանալով տեղից, նա *կարծես* նոր հիշեց, որ իր որդին այդտեղ է *(ԳՍԹ, II, 221)։* Առաստաղի կենտրոնից կախված ջահն *ասես* զարդարված էր ճակինթով ու սուտակով *(Նույն տեղում, 227)։*— Հասակն *ասես*՝ շիտակ, Դավիթ, դրախտի միջում կանգնած նոճին, Մծերն *ասես*՝ ջուխտակ, Դավիթ, ու կցոլան աստղ ու արև *(Թ., II, 138)։ Նայես* թռավ մի ճռանոթ ու թունդ պայթեց խրամատում *(ՉԸ, 252)։*

§ 241. Մի քանի կամական, կարելիական բայերից հետո, ըղձական ապառնին մի ժամանակ հաճախ կիրառվել է անորոշ դերբայի փոխարեն. այժմ սակավ է այդպիսի ապառնին. վերջինիս տեղը անվերադարձ բռնում է անորոշ դերբայը։ Համեմատի՛ր.

Ուզում է տեղ *հասցնի*, միայն թե *հասցնի (Զն, 277)*։ Ափսո՛ս, չկարողացա մի տեղ մի քիչ հանգիստ *նստեմ* ամառս *(Թ., V, 389)*։ Ուզում էի նամակ գրեմ, շնորհակալություն *հայտնեմ* «Բաժվի ձայնի» խմբագրությանը *(նույն տեղում)*։ Ուզում եմ օգոստոսի սկզբում դուրս գամ Ուրավելից *(նույն տեղում, 188)*։ Կարող ես դու *առաջ բերես* և՛ հետևանք ցանկալի *(Թ., II, 155)*։ Ինչպես կուզեմ սիրտս *թաղեմ (Իս., I, 73)*։

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ 242. *Ըղձական եղանակի անցյալի ապառնին արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ ապառնի է անցյալի նկատմամբ։ Ըղձականությունը այս պարագայում ավելի ուժեղ է զգացվում, որովհետև դրան խառնվում է անցյալում կատարելի, բայց չկատարված (կամ կատարված, բայց ցանկալի, որ չկատարվեր) գործողության նկատմամբ ափսոսանքի զգացմունք. օրինակ՝* Եվ այնպես *զարկեր,* որ կրունկները երկնքին դիպչեն, և հոգին այնպես պիղծ ու սև *դառնա (Շեքս., I, 66)*։ *Լիներ,* այնպես *լիներ,* որ իմքը հնձվոր *լիներ,* տերտերանց արտը *հնձեր,* և Սոնան նաչ *բերեր* իրեն, չալիկը *քրտներ և* քրտնած *նստեր* կողքին *(ԱԲՄԹՆԶ, 68)*։ Ախ, մի ձեռքս *ընկներ (ՆԶՀ, 386)*։ Ինձ *թաղեիր* շատ խորն ու մութ, նոր *երթայիր,* է՛յ անգութ *(Իս., II, 56)*։ Օ՛, երբ նորից, երբ նորից *նայեի* շուրջս պարզ ու խնդուն, Անտագնապ, անխոհ և անքախիծ *Այրվեի* բոցե ակնթարթում *(Տ., I, 456)*։

§ 243. *Երբեմն ըղձական ապառնու անցյալը պարզապես ապառնի անցյալ է արտահայտում՝ առանց ըղձականության. օրինակ՝* Գլուխն այնպես էր ցավում, որ բեկուզ *կտրեիր* ու *դեն* նետեիր *(ՍԽՀ, II, 171)*։

§ 244. *Ըղձական անցյալի ապառնին երբեմն պարզապես ըղձական ապառնու նշանակություն ունի. դժվար է ասել՝ սա բայական ժամանակների սովորական անհամապատասխանություն է (այսինքն՝ անհետևողություն՝ անակլություն), թե այդ նշանակությունը եղել է։ Համեմատի՛ր.* Ես որ մեռնիմ ու իմ վերքից Երբ մի վարդ դուրս *ծլեր,* Եվ ընկերս հեռու տեղից *Գար* շիրիմս *այցելեր.* Երբ նրա խոր աչերից Մի ցող վարդիս մեջ *ծորեր... (Իս., I, 75)*։

§ 245. *Անցյալի ապառնին իբրև ապառնի ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ այլևս չի կատարվելու. դրա փոխարեն անցյալում այդ գործողությունը տեղի է ունեցել. օրինակ՝* Ա՛խ, դուք ինչու հիմա եք եկել, թող *գայիք* հետո, երբ որ կավարտեինք ցրանցքը *(Ս. Կապուտիկյան)*։ *Խոսողը դժգոհում է, որ այդ գործողու-*

թյունը հետո պետք է կատարվեր, բայց քանի որ արդեն տեղի է ունեցել, այլևս չի լինելու։

§ *246. Ըղձական եղանակի անցյալի ապառնին կարող է արտահայտել նաև պայման՝ իրենից հետո եկող մի գործողության համար. օրինակ՝* Եթե հսկիչները 20 րոպե ևս *ուշանային,* Բաղդասարը փախած կլիներ *(Զե, 398)*։ Վատ *չէր լինի,* եթե մի ոչխար տանեինք *(ԳՍԹ, I, 98)*։ Եթե Այծեմնիկը Իրաչի և Վահանի հետ վրա *չհասնեին,* ինձ էլ կպատառեր այն *(նույն տեղում, 433)*։ Լեզու *իմանար* էլ, նա պիտի լռեր *(ԱԲՄ, 70)*։

§ *247. Ըղձական ապառնին և անցյալի ապառնին ենթակայի զեղչման առանչությամբ տարբերվում են մյուս ժամանակներից. ապառնու հոգնակի առաջին դեմքը գերազանցապես արտահայտում է ցանկություն, մտադրություն, պահանջ՝ մի բան անելու համար. այսպիսի ըղձականը կոչվում է կամական ըղձական և, ինչպես ասվեց, հաճախ կիրառվում է* գալ, վեր կենալ, ելնել, պատրաստվել *և մի քանի ուրիշ բայերի հրամայականների հետ (*§ *240)։ Այսպիսի ըղձականը երբեք ենթակա չի ընդունում (օրինակները՝* § *227)։*

§ *248. Ըղձական ապառնու և անցյալի ապառնու առաջին և երկրորդ դեմքի ստորոգյալները իբրև կանոն ենթակայով չեն կիրառվում. բայց եթե ենթական շեշտվում և հակադրվում է մի այլ դեմքով ենթակայի, այդ ժամանակ չի զեղչվում։*

§ *249. Երրորդ դեմքի ենթական զեղչվում է, երբ արդեն խոսողին և խոսակցին հայտնի է, թե խոսքը ում մասին է. այս դեպքում էլ, եթե անհրաժեշտ է ենթական շեշտել, հակադրել, անպայման գործածվում է։*

4. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՊԱՌՆԻ

§ *250. Պայմանական եղանակի ապառնին ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ տեղի է ունենալու խոսելու վայրկյանից հետո և մեծ մասամբ վերցվում է իբրև հնարավոր, ենթադրելի, որոշ դեպքերում նաև վճռական գործողություն՝ պայմանական եղանակավորումով. օրինակ՝* Կրակների ու ջրերի միջից *կանցնենք, դուրս կբերենք* երկաթե մարդիկ *(ԴԴՎ, 442)*։ Անասունի պես *կբանեցնի,* ինչքան քեֆն ուզի *(ԳՍԹ, I, 421)*։ Արի վերև, *կպատմե՛մ* *(ԱՁ, III, 59)*։ Ինքը *կգղջա* *(Շիրվ., VI, 280)*։ Ես էդ ձծում հեծնող

ջաղու պառավին էսօր *կկանչեմ գրասենյակ և նրա լեզուն արմատից* հարյուր տոկոսով *կպոկեմ (ՆՋՀ, 385)*։ Տեղն ու տեղը *կսարքեմ* այդ փաստաթղթերի նմանը *(նույն տեղում, 437)*։ Ուրեմն հարսանիքդ *կանենք* բերքի բաշխումից անմիջապես հետո *(նույն տեղում, 445)*։

§ 251. *Պայմանական ապառնին, ինչպես ասվեց, արտահայտում է ենթակայի որոշակի պատրաստակամությունը՝ ապառնի գործողության կատարման համար։ Ժամանակի ըմբռնումով այն չի կարող որոշակի լինել, որովհետև ասվում է ապառնի անսահման ժամանակի մեջ։ Բայց ինչ ձևով էլ պայմանական ապառնին ասվի, ըղձական ապառնու համեմատությամբ, պարունակում է վճռականություն, հավաստիացում, ապագա գործի նկատմամբ վստահություն. օրինակ՝* Շուտով բոլորովին *կազատվենք*։ Մենք *կազատվենք* առանց քննիչի էլ: Մեր ընկերները *կգան* շուտով, *կազատեն (ՍՋ, III, 56)*։ *Կպայքարենք* Համիկի հետ միասին *(ՆՋՀ, 382)*։ *Կգա* կրկին մայիս մի նոր և *կծաղկեն* արտ ու արոտ *(Տ., I, 361)*։ Բոլորից շատ մենք ինքներս *կպարզենք* ձեր վիճակը *(ԳՍԹ, II, 167)*։ Դրանք իմ ձեռքից չեն պրծնի *(նույն տեղում, 436)*։ Կկանխենք փոթորիկը,— ասաց Աշուշան *(ԴԴՎ, 286)*։ *Կանցնի*, Մարգո, այս երեկոն և *կանհետանա* հավերժի մեջ *(Տ., I, 363)*։

§ 252. *Հակադիր այս վերջին օրինակներին, պայմանական ապառնին արտահայտում է նաև իսկական ենթադրություն, խոսողը տարակույսի մեջ է ապագա գործողության կատարման վերաբերյալ, չի կարողանում կողմնորոշվել ապագայի հանդեպ. օրինակ՝* Այդ կարող է պատահել նաև իր հետ, *կբռնեն* որևէ տեղ և *կսպանեն (ԳՍԹ, I, 436)*։ Տեսնես բան *դուրս կգա՞ (ՎԱՍԱ, 358)*։ Տեսնես *կազատվի՞* Վիկտորը, կամ ե՞րբ *կազատվի (ՍՋ, III, 56)*։ Էսքան էլ կռիվ *կլինի (նույն տեղում, 53)*։

§ 253. *Պայմանական ապառնին արտահայտում է կրկնվող սովորություն դարձած գործողություն, որ սովորաբար ներկա ժամանակով է դրսևորվում։ Տարբերությունը երկու ժամանակների մեջ սակավ դեպքերում այն է, որ ներկան ասվում է ընդհանրապես, իսկ պայմանականի ապառնին կարծես պատվիրում է, թե մյուս անգամ այդպես պետք է անել, կամ չանել։*

Հիմար,— ասում է,— գտած ասեղը ջրի կուժը կամ թևքը *կխփեն*, ոչ թե սայլի մեջ *կգցեն*։ Նապաստակին փայտով ու հրացանով *կխփեն*, ոչ թե փիսի-փիսի *կանեն (ՍՋ, V, 351—352)*։ Հարդը հարդ է ու *կլինի* Կամ մարագում, կամ ախոռում, Ոչ թե թափած խոր անտառում, Ու դմակն էլ իրեն կարգին *կլնի* տիրոջ տան թա-

րեքին (Թ., I, 604)։ Տեսնողն էլ *կասի*, ինչ աղջիկ է սա, Հազար մարդի մոտ *կերթա, կխոսա* (Թ., II, 50)։

§ 254. *Պայմանական ապառնին արտահայտում է պատվեր, հանձնարարություն և այսպիսով մոտենում է հրամայականին, սակայն այն տարբերությամբ, որ մեղմ է, ունի խրատական, պատվիրական բնույթ և գործողության կատարումը թողնում է հեռավոր ապագային, իսկ հրամայականը մոտենում է ներկային։ Այս տարբերությունը պարզ երևում է հետևյալ օրինակից.* Լսիր, Վասիլիսա, միտդ պահիր ու կատարիր իմ վերջին խոսքը: Ահա ես մեռնում եմ ու իմ մայրական օրհնության հետ էս տիկնիկն եմ թողել քեզ: Միշտ մոտդ ու հետդ *կպահես* էս տիկնիկը, ոչ ոքի ցույց չես տալ. իսկ մի ցավ կամ վիշտ ունեցածդ ժամանակ կերակուր *կտաս* իրեն, *կկերակրես* ու խորհուրդ *կհարցնես*։ *Կուտի* ու քեզ *կասի*... (Թ., III, 258)։ *Համեմատի՛ր նաև ներքոհիշյալները*։

Որդի՛ս, քու քարավանով քառասուն օր ճամփա *կերթաս, կանցնես* շատ սար ու ձոր, *կանցնես* դժար տեղեր ու *կհասնես* մի մեծ անտառ, ուր ծառերը դեռ մարդու երես չեն տեսել: Քու մարդկանցով այդ լճի ջուրը *կհանեք դուրս*, տեղը *կլցնեք* ձեր տարած սպիտակ գինին և աղը *կցանեք* լճափի քարերին ու դուք *կերթաք, կնըստեք* հեռու մի տեղ, պահ *կմտնեք* ու *կնայեք* (ՍՁ, V, 358)։ Խոնարհ և հլու հպատակ *կլինիս* աղա Գուլամյաններին, կկատարես բոլոր, ինչ կհրամայեն (Շիրվ., I, 26)։

§ 255. *Պայմանական ապառնին արտահայտում է նաև սպառնալիք. օրինակ՝* Մեծ թիթեղ ականջդ *կթողնեմ* (ՎԱՍՍ, 64)։ Ձեզ համար վատ *կլինի*, հիմա *կկանչեմ*, կախաղան կբարձրացնեն (ԳՍԹ, I, 436)։

§ 256. *Պայմանական ապառնին երբեմն շատ սակավ կիրառվում է* եթե *պայմանական շաղկապից հետո. սովորաբար այս դեպքում կիրառվում է ըղձական ապառնին. օրինակ՝* Եթե ծնունդն արու *կլինի*, նա խոստացավ... մի վանքում ճգնավորության նվիրել, իսկ եթե աղջիկ *կլինի*, խոստացավ կուսանոց ընծայել նրան (Ր., I, 383)։ Բայց եթե այդ բանը ծածուկ *կանես*, երբ նա կհասկանա, այն ժամանակ կվնասես քո ասպարեզին (Ր., II, 537)։

Այս դեպքում պայմանական ապառնին հնարավորություն է թողնում հետագայի համար, այսինքն՝ գնա մտածիր, եթե կհամաձայնես, ես կուղարկեմ: *Իսկ ըղձական ապառնին կարծես ավելի որոշակի է, վերաբերում է անմիջապես խոսելու վայրկյանից հետո ընկած ժամանակամիջոցին*։

§ *257. Եթե պայմանը արտահայտվում է ըղձական ապառնիով, կամ մի այլ ձևով, վերջինից կախված գործողությունը դրսևորվում է պայմանական ապառնիով. օրինակ՝* Գյուղում թող չիմանան, թե չէ մեր բրիգադի անունը *կխայտառակվի (ՆԶՀ, 66)։* Չէ, թող, fեզնից կնեղանամ *(նույն տեղում, 115)։* Թfես մի ծերից մյուս ծերը *կհասնի (Թ., II, 39)։* Երբե ուզում ես, անա *կճաշեմ (ԳՍԹ, I, 430)։*

§ *258. Պայմանական ապառնին մեր նոր գրականության սկզբնական շրջանում կիրառվում էր նաև սահմանական եղանակի ներկայի փոխարեն. այդպիսի կիրառություն բարբառների ազդեցության արդյունք է և այժմ վերացված է. օրինակ՝* Ես *կճանաչեմ* նրանց իրենց ուսանող ժամանակից *(Ր., I, 44)։*

Այսպիսի կիրառության արձագանք են որոշ քարացած արտահայտություններ. օրինակ՝ Կուզես նեղացիր, *կուզես* ոչ *(Իս., III, 294)։ Կուզես* լինիմ վշտի ցողեր *(Իսահակյան)։ Սրանք էլ արդեն փոխարինվում են ներկայով։ Համեմատի՛ր.—* Էդ ինչ կրակ *կանես,* մերիկ։— Բալաս, դարդիդ դեղ *կեփեմ։* էս նամփեն ոլոր-մոլոր, Սև ծովի բոլոր *կերթա,* Շուշան յարըս ինձի թողել՝ էն տղի հետ ուր *կերթա (Իս., I, 32)։ Պարզ է, որ սրանք իսկապես բարբառային երևույթներ են և մեր գրական լեզվի անցյալ շրջանի մի որոշ արտահայտությունը։*

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ *259. Պայմանականի անցյալի ապառնին ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ ապառնի է եղել մի անցյալ գործողության կամ ժամանակի նկատմամբ։ Այդպիսի ապառնին գերազանցապես անկատարելի ապառնի է և կամ այնպիսին է, որի մասին խոսողը չգիտե՝ տեղի ունեցե՞լ է անցյալում մի որևէ ժամանակակետից հետո, թե դեռևս ոչ։ Ենթադրությունը նույնիսկ վերցվում է անցյալում հնարավոր, բայց տեղի չունեցած գործողության նկատմամբ. օրինակ՝* Այն ծաղիկը, որին վարդ ենf անվանում, մի այլ անունով դարձյալ *կարձակեր* նույնչափ անուշ բույր *(Շեքս., I, 434)։*

§ *260. Պայմանականի անցյալի ապառնին մոտավորապես արտահայտում է նույն նշանակությունը, ինչ որ նույնի ապառնին. միայն այս դեպքում ենթադրությունը, ափսոսանքը, կասկածը, անհավանականությունը, ըղձանքը ավելի են ուժեղանում, որովհետև ապագայի հնարավորությունները գործողության կատարման առըն-*

չությամբ ավելի իրական են, քան անցյալում տեղի չունեցած, կամ խոսողին տեղի ունեցած լինելը անհայտ գործողության մասին, որ կատարվելու էր մի անցյալ ժամանակակետից հետո. օրինակ՝ Բայց *կուզենայի* տեսրակում գրված իմ երգերի մեջ զգացվեր, մնար *(Ս. Կապուտիկյան)*։ Նա, որ *կլիներ* մոտ քառասուն տարեկան *(Շիրվ., VIII, 385)*։ Տո ներ ողնած, մի *կմոտենայիր* է՞ *(Մուր., I, 149)*։

§ *261. Պայմանականի անցյալի ապառնին արտահայտում է անցյալի համար սովորություն դարձած, կրկնվող այնպիսի գործողություն, որ այլևս չի՛ կրկնվելու։ Իր այս կիրառությամբ պայմանականի անցյալի ապառնին կատարում է անցյալի անկատարի դերը. օրինակ՝* Բայց այդպես չէր հանգուցյալ հայրը: Ամեն տարի, աշնան ժամանակը, *կգար*։ Մենք առաջուց *կլվանայինք*, *կմաքրեինք* ոչխարները և սպիտակ ձյունափայլ հոտերը *կհանեինք* նրա առջև, նա կնայեր... *(Ր., III, 352)*։ Փողոցներում մեջ *կտարածեի* ջահելության բույր: Օրս, որ *կանցներ* արագ ու պայծառ արևի նման *(ՀՀb, 284, 88)*։

Պայմանականի անցյալի ապառնու այս կիրառությունը հատուկ է ժողովրդական պատմողական ոճին և հատկապես կիրառվում է հեքիաթների, նկարագրությունների մեջ. օրինակ՝ Բաժին *կտային*, Վասիլիսան ամենալավ պատառը *կպահեր* իր տիկնիկի համար: Իրիկունը, երբ ամենքը *կպառկեին* քնելու, նա իր նկուղում *կփակվեր* ու տիկնիկի հետ *կխոսեր*։ Տիկնիկը *կուտեր*, խորհուրդներ *կտար*, *կմխիթարեր*, առավոտն էլ նրա բան ու գործն ինքը *կաներ*։ Վասիլիսան իրեն համար դինջ ու հանգիստ *կնստեր* ծառերի շվաքներում, ծաղիկ *կքաղեր* ու մին էլ *կտեսներ*... *(Թ., III, 258—259)*։ Հանկարծ թուքը կուլ գնալով *կթռչեր* նրա շնչափողը և նա հազալով *կզարթներ*։ *Կզարթներ* և սոված գայլի պսպղուն աչքերը *կդարձներ* չորս դին: Խիստ անողոք իրականությունը *կսթափեցներ* նրան *(ԴԴ, I, 42)*։ Ամառային արևը *կկանգներ* ուղիղ զենիթում ու մի թանձր լռություն *կխտանար* շուրջը *(ԳՄb, 318)*։

§ *262. Պայմանականի ապառնի անցյալը արտահայտում է պայման մի անցյալ ժամանակակետի նկատմամբ. օրինակ՝* Մի ժամանակ դարձյալ կարող էր անկախություն ձեռք բերել, եթե ազգը կենդանի *կմնար (Ր., I, 189)*։ Իմ հայրը չէր կամենա, եթե նրա փողերից *կտային* որդուն *(Ր., II, 537)*։

Պայմանականի անցյալի ապառնու այս կիրառությունը հնա-

ցած է և այլևս անգործածական։ Սրան փոխարինում է ըղձականի անցյալի ապառնին։

§ 263. *Պայմանականի անցյալի ապառնին արտահայտում է նաև քաղաքավարության պատվեր՝ ուղղված մեկին. սա արդեն ոչ թե անցյալին է վերաբերում, այլ ներկային ու ապառնուն և կարող է փոխարինվել նրանցով. օրինակ՝* Միայն բե կարելի է մի fանի ռոպե մեզ հանգստություն շնորհեցեf ձեր տան ծածկի տակ, մինչև յոթը *կանցներ (Ր., I, 82)։* Ես էսօր գնում եմ Երևան, *կխնդրեի* որ... ի՞նչ *կխնդրեի՛ր,* փո՞ղ, ճանապարհածա՞խս *(ՍԶ, III, 51)։*

§ 264. *Պայմանականի անցյալի ապառնին արտահայտում է մի անցյալ գործողության նկատմամբ կախվածություն. օրինակ՝* Գլուխը fարը, գոնե փող լիներ, էլ ինչո՞ւ էսfան մարդ գանգատ *կաներ (Թ., II, 38)։* Այժմ կարող էի տաf արյուն խմել, Եվ այնպես դաժան գործեր կատարել, Որ լույս ցերեկը *կդողահարվեր* վրան նայելուց *(Շեքս., I, 63)։*

§ 265. *Ենթակայի զեղչման առնչությամբ պայմանական ապառնին գրեթե նույն դրությամբ է հանդես գալիս, ինչ որ ըղձականը քննելիս տեսանք։ Առաջին և երկրորդ դեմքերով արտահայտված ստորոգյալները գրեթե մնում են առանց ենթակայի. ենթական կիրառվում է, երբ անհրաժեշտ է շեշտել ու հակադրել, իսկ երրորդ դեմքի ստորոգյալի ենթական անպայման կիրառվում է, եթե խոսակցին հայտնի չէ, թե ով է ենթական։ Երբ ենթական հայտնի է և այնպիսի դրություն չի ստեղծված, որ կարող են երրորդ դեմքի մի քանի ենթականեր խառնվել, նաև, երբ չկա հակադրություն ու շեշտում, սովորաբար ենթական զեղչվում է։*

5. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՊԱՌՆԻ ՆԵՐԿԱ

§ 266. *Հարկադրական եղանակի ապառնին արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ ենթական հարկադրաբար կատարելու է հետագայում։ Հարկադրանքը կարող է ենթակայի վրա անցնել թե՛ մեկ ուրիշից, և թե՛ ենթական ինքը իրեն դնում է հենց հարկադրանքի պայմաններում՝ մի բան անելու կամ չանելու։*

Եթե ստորոգյալը առաջին դեմքով է կիրառվում, ապա խոսողը իր կատարելիք գործողությունը համարում է իրեն համար հարկադրական, իսկ եթե մյուս երկու (երկրորդ և երրորդ) դեմքերով է

գործածված, ապա հիշյալ դեմքերով կիրառված ենթակաները խոսողի կողմից ենթարկվում են հարկադրանքի՝ այս կամ այն գործողությունը կատարելու համար։

Երբ հարկադրական եղանակի ապառնին կիրառվում է երկրորդ դեմքով, մոտենում է հրամայականին. այս երկուսի մեջ կա այն տարբերությունը, որ հարկադրականի դեպքում գործողությունը մնում է անորոշ ժամանակի մեջ. իսկ հրամայականը ենթադրում է գործողության անմիջական հաջորդում, որի պատճառով ոմանք հրամայականի մեջ տեսնում են նաև ներկա ժամանակ։ Երբ հրամայականը նույնպես վերաբերում է հեռու անորոշ ժամանակի, այս դեպքում թուլանում և մոտենում է ըղձականի և պայմանականի ապառնիներին՝ չնայած պահպանում է իր հրամայական ձևը։

Երրորդ դեմքի հարկադրականի ապառնին անուղղակի կերպով է հարկադրանք արտահայտում. կա՛մ երկրորդ դեմքի ենթական առաջին դեմքի ենթակայի անունից այդ հարկադրանքը պետք է փոխանցի և կա՛մ ինքը հանդես գալով իբրև առաջին դեմք՝ հարկադրի։ Իսկ մյուս կողմից, խոսողը համոզմունք կա՛մ իրավունք ունի համոզմունք ունենալու երրորդ դեմքի ենթակային հետագայում հաղորդելու և կա՛մ ի լուր նրա է ասում, որ նա հարկադրված կատարի գործողությունը, այսպես, օրինակ՝ Պետք է նա ձեզ հետ Անգլիա գնա (Շեքս., I, 63)։ Չպետք է շարժվես, չպետք է գնաս, մինչև դիմացդ հայելի պահեմ (Նույն տեղում, 67)։ Ոչ մի հասկ չպետք է մնա դաշտում (ՆԶՀ, 447)։ Միթե պիտի թոռմին, թոշնին վարդ ու շուշան խնկաբույր (Իս., I, 16)։ Իսկ դու երբ պիտ ժպտաս անամպ, իմ խղճուկ սիրտ վիրավոր (Նույն տեղում, 19)։ Եվ պիտի պատռեմ ձեր հզոր կուրծքը, ես պիտի թռչիմ դեպ սուրբ օրրանը (Նույն տեղում, 29)։ Որ նրանք, նրանք, որ պիտի գան, որ պիտի շրջեն լճերի ափին, այգիներում պերճ, որ պիտի ապրեն գալիք օրերում, և ապրեն շքեղ, որ պիտի շնչեն միայն վարդերի բույրը թովչական (Ս. Կապուտիկյան)։ Նույնիսկ չի մտածում այն մասին, թե ինչքան արյուն պետք է թափվի, ինչքան զոհեր պետք է լինեն (ԳՍԹ, 426)։ Ինչ էլ լինի, չպիտի վախենամ (Քոչար, 499)։ Ինչով, ինչով պիտի ապրենք, ինչով պիտի կերակրվենք (Շիրվ., VIII, 404)։ Ռամիկի ձայնը հանց կայծակ պիտի որոտա, լեռները դողացնի (ԴԴՎ, 476)։ Ինչ պիտի շահեք, եթե խորտակելու լինեք այդ պարիսպը (Ր., III, 325)։ Ուրեմն դու անձամբ ներկա պետք է գտնվես գործի քննությանը (Նար., II, 242)։

§ 267. Հարկադրական եղանակի անցյալի ապառնին ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ անցյալում հարկադրաբար պետք է կատարվեր, չի կատարվել, կամ խոսողին կատարվելու մասին ոչինչ հայտնի չէ։ Դա ապառնի է անցյալ մի գործողության կամ որևէ ժամանակակետի նկատմամբ. ուստի իբրև այդպիսին՝ հարկադրական եղանակի անցյալի ապառնու մեջ ենթադրության, անորոշության, տարակուսանքի տարրերը ուժեղ են. օրինակ՝ Տնե-րը, որոնց թիվը երկու հարյուրից ավելի պիտի լինեին (Մուր., II, 32)։ Անշուշտ ուսումնական պիտի լիներ (Նույն տեղում)։ Ինչի պի-տի հանդիպեր (Զե, 277)։ Քո հետևանքը այս պիտի լիներ (ՀՀե, 226)։ Շուտ պետք է գայի (ԳՍԹ, II, 144)։

§ 268. Հարկադրական ապառնին և անցյալի ապառնին կազմ-վում են պետք է, պիտի, պիտ, տի, տ եղանակավորիչներով, որոնք միևնույն պետք բառի հնչյունափոխված տարբերակներն են։ Պետք է և պիտի եղանակավորիչները գործածվում են հավասարապես, իսկ պիտ, տի-ն կիրառվում են պոեզիայի մեջ[1]։ Բարբառներում դրանք դարձել են տի, տ, որոնք գրական լեզվի համար արդեն խորթ են։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Երկու ժամանակի համար էլ պետք է եղանակավորիչը կազմվում է պետք բառից և եմ բայի եզակի երրորդ դեմքից. պետք է գնամ, պետք է գնայի. մի հինամյակ առաջ հարկադրականի անցյալի համար սակավ կիրառվում էր նաև պետք էր ձևը՝ Պետք էր վշտանայի նույնպես (Շիրվ., VIII, 404), սակայն այժմ այդ այլևս չի գործածվում։

§ 269. Սովորաբար պետք է, պիտի, պիտ եղանակավորիչները դրվում են համապատասխան բայից առաջ, բայց բանաստեղծու-թյունների մեջ երբեմն մեկը բռնում է մյուսի տեղը։

§ 270. Ժխտականը կազմվում է չ-ով, որը սովորաբար դրվում է պետք է, պիտի եղանակիչի վրա։ Չպետք է գնամ, չպիտի գնամ, չպիտի գնայի, սակայն հաճախ դրվում է նաև բայի վրա. պետք է չգնամ, պետք է չգնայի, պիտի չգնամ, պիտի չգնայի։

---

[1] Համեմատի՛ր. Է՜յ անխելք մարդ, երբ տի թողնես ապրողն ապրի սրտալի (Թ., I, 210)։ Երբ բարի չըլնենք էսպես, էս աշխարհքից ինչ տի տանենք (Նույն տեղում, 602)։

6. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 271. *Հրամայական եղանակը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ հրամայվում է խոսողի կողմից (առաջին դեմք) խոսակցին (երկրորդ դեմք), որպեսզի այս վերջինը կատարի որևէ գործողություն։ Ժամանակային առումով հրամայականը ապառնի է. բայց չի բացառված նրա մեջ ներկայի հասկացողությունը։ Երբ մեկը նստած է և հրամայվում է նրան, որ վեր կենա և աշխատի, ապա իհարկե սա ապառնի է, բայց երբ մեկը աշխատում է և մենք խրախուսում ենք նրան և ասում.* աշխատի՛ր, աշխատի՛ր, աշխատանքը պատվի ու փառքի գործ է. *այստեղ արդեն գործողությունը համընկնում է խոսելու պահի հետ, ուստի և ներկա է։ Համեմատի՛ր նաև հետևյալ խրատական ձևը, որ ասվում է թե՛ կարդացողի և թե՛ չկարդացողի համար. այսինքն՝ նրան, որ նստած կարդում է և նրան, որ հեռու է կարդալուց, կամ ուղղակի վեր կենա և կարդա.* Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանո՛ւկ, կարդա՛, գրի՛ր տարին բոլոր *(Տատուրյան)։ Այստեղ բերված հրամայականը վերաբերում է ներկային, այսինքն՝ խոսելու պահին և դրանցից հետո ընկած ժամանակաշրջանին։*

§ 272. *Հրամայական եղանակի ստորոգյալը արտահայտվում է միայն եզակի և հոգնակի երկրորդ դեմքով և ամենից առաջ ցույց է տալիս մի հրաման, որ դեմքով, աստիճանով, պաշտոնով, տարիքով մեծը հրամայում է ավելի ցածում գտնվածին, փոքրին, ստորադրյալին, որպեսզի վերջինս կատարի որևէ գործողություն։ Այսպիսի հրամայականը իրենով դրսևորում է կտրուկ, առարկություն չվերցնող, անխախտ կատարելի գործողություն. այլ բան է, որ այդ հրամանը չկատարվի. օրինակ՝ Բերե՛ք, արե՛ք* ինչ ճար որ կա Երկրի վրա ու տակին, Բարով, բույրով *լցրե՛ք* նորից եդեմական իմ այգին, *Ազատեցե՛ք,* որ չկորչեն իմ մարդիկը հավիտյան, *Տվե՛ք* նախկին տիպը ազնիվ, քնքույշ հոգին բնական *(Թ., II, 155)։ Հեռացե՛ք* երկուսդ էլ *(Շեքս., I, 37)։ Գնա՛, պատրաստվի՛ր,*— հրամայեց Վասակը *(ԴԴՎ, 262)։*

§ 273. *Հրամայականը արտահայտում է հրավեր, որ հնչում է իբրև մարտակոչ, կանչ դեպի որևէ գործ, կռիվ։ Այսպիսի հրամայականը հնչում է մեծ պաթոսով և նպատակ ունի ոգևորելու, խրախուսելու. օրինակ՝* էյհե՜յ, *լսեցե՛ք* վեհ հայրենիքի Կտրին զավակնե՛ր, ժողովուրդնե՛ր քաջ, *Ելե՛ք, զարթնեցե՛ք. կանգնեցե՛ք* արթուն. *Գիտցե՛ք,* քնում են գետերն ու քամին. Սակայն չի քնում երբեք թըշ—

նամին, էյնե՞յ, *լսեցե՛ք, ձայն տվեք* իրար, Ամենքդ եք ոտքի, մարդ քնած չկա, Շո՛ւտ *հագե՛ք-կապե՛ք* զենքեր ու զրահ, *Գոտեպնդվեցե՛ք* ատելությամբ վառ, *Գոտեպնդվեցե՛ք* անձնազոհ կամքով, *Գոտեպնդվեցե՛ք* ահեղ վրեժով. *Շառաչե՛ք ուժգին,* կաղնինե՛ր հզոր, Խոլ *վրնչացե՛ք,* նժույգնե՛ր խիզախ... (*Իս., I, 305*)։

§ 274. Հրամայականը արտահայտում է նաև սպառնալիք. այս դեպքում այն հաճախ կրկնվում է, երբեմն առջևից ստանում է դե, մի, հալա *եղանակավորիչները. օրինակ՝* Մոուրդ չներին կտամ, *սպասի՛ր (ԴԴՎ, 166)*։ *Զգի՛ր* շուտով մի հատը ցած, Թե չէ՝ կացինս սրեն սրած, Գնամ բերեմ, Ծա՛ռը կտրեմ (*Թ., I, 597*)։ *Հալա* դեռ *կա՛ց*, Գել կասեն ինձ (*նույն տեղում, 606*)։ Կացին չունե՞մ... *դե՛* հիմի *կա՛ց* (*նույն տեղում, 311*)։

§ 275. Հրամայականը արտահայտում է խրախուսանք, հուսադրում, սրտապնդում, հորդորանք. օրինակ՝ Տոկա, համբերի՛ր, իմ վիրավոր սի՛րտ, Վճիտ հայացքով աշխարհին նայիր (*Իս., I, 147*)։ Դե՛, զառնուկ, դե՛, մատաղ, *արի՛* (*ԴԴՎ, 630*)։ Շատ ես սգում, սիրելիս, *մխիթարվի՛ր, ամոքվի՛ր*,— Ոտից գլուխ զննելով Մովսես Վանականին,— ասաց Եղիշեն (*նույն տեղում, 636*)։

§ 276. Սրան մոտ է հրամայականի հանձնարարական, պատվիրող, խորհուրդ տվող նշանակությունը։ Այս դեպքում հրամայականը արտահայտվում է մեղմ, համոզիչ հնչերանգությամբ, մոտենում է պատվիրական պայմանական ապառնուն. օրինակ՝ Մի՛ լաց լինի, ինչ որ ասեմ, *Լսի՛ր,* աղջիկս, ալևորիս: Ի՛նչ որ կտաս, էն է մենակ, որ դու ունես (*Թ., II, 283*)։ *Թաքցրո՛ւ*... գործարանում *կարդա* վստահելի բանվորների համար, *հասկացրո՛ւ*, որ իրենց ճանապարհը կազմակերպված պայքարի ճանապարհն է (*ԳՍԹ, I, 422*)։

§ 277. Սրան է մոտենում նաև հրամայականի աղաչական, խնդրողական նշանակությունը, որ հնչում է շատ մեղմ ինտոնացիայով. օրինակ՝ Խնդրեմ, *անցե՛ք* հարևան սենյակը (*ԳՍԹ, II, 167*)։ Մայրիկ, *արի* հեռանանք քաղաքից և գանք այստեղ հաստատենք մեր բնակությունը (*Մուր., II, 109*)։ Էս էլ *առ տա՛ր*, թո՛ղ մինուճար Վերջինը գեթ մնա ինձ հետ (*Թ., I, 598*)։ *Գնացե՛ք*, ձեզ մատաղ, ինձ թողե՛ք, աչքերս *տարե՛ք*՝ տեսնեմ նրանց (*ԴԴՎ, 627*)։

Հրամայականի այս նշանակությունը ավելի է բացահայտվում, երբ ստորոգյալը կրկնվում է. օրինակ՝ Գնա խնդրի՛ր, մայրիկ, *խնդրի՛ր,* մեզ չտանի (*ԴԴՎ, 263*)։

§ 278. Հրամայական եղանակի ձևի և բովանդակության մեջ

երբեմն այնպիսի խզում է առաջանում, որ հաճախակի գործածվող տեսնել, թողնել, ասել, գալ, տալ և մի քանի այլ բայերի հրամայականները դադարում են հրամայական եղանակ արտահայտելուց և դառնում են այլ ժամանակներով դրվող ստորոգյալների համար եղանակավորիչ բառեր՝ վերածվելով խոսքի մասնիկների, մակբայների, ավելի ընդհանուր ասած ձևական բառերի։ Երբ հրամայական եղանակը միայն իր ձևն է պահպանում՝ կորցնելով բայական, ուստի և եղանակային նշանակությունը, դադարում է ինքնուրույն ստորոգյալ լինելուց. և ինչ ստորոգյալի հետ որ կիրառվում է, նրա հետ էլ կազմում է մի միասնական ստորոգյալ։ (Այս մասին՝ §§ 240, 247, 305—314)։

§ 279. Հրամայական եղանակը միայն մի դեմք ունի (երկրորդ դեմք), որը գերազանցապես ներկա է գտնվում խոսելու վայրկյանին, և առաջին դեմքով խոսողը խոսքը ուղղում է նրան. և քանի որ ներկա է, և խոսքը ուղղվում է նրան, սովորաբար ենթակայի հիշատակման կարիք չի զգացվում. մանավանդ հրամայական ստորոգյալին ուղեկցում են կոչական բառեր, ցուցումներ և այլն։ Վերևում բերված բոլոր օրինակների մեջ համարյա ենթակա չկա (միայն մի օրինակում ենթակա է երկուսդ բառը, որ ավելի բացահայտիչ է, քան ենթակա. պետք է լիներ՝ Դուք երկուսդ)։ Ահա մի քանի օրինակներ ևս. Տո՛ւր ինձ իմ իրավունքը (Իս., III, 185)։ Ընդունի՛ր, սիրելի ընկեր, ջերմաջերմ բարեմաղթություններս (Նար., VII, 327)։ Տվե՛ք ինձ մարկիզ Պոզաներ, այլապես ինչ օգուտ ինձ ձեր ժակերից և ճաճաներից (Նույն տեղում)։ Հեռացի՛ր, աշուն համրորեն լացող... Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ, Բորբոքի՛ր սիրտս, ազատության ե՛րգ, Ոռոտա՛, շաչի՛ր, ազատաբեր ամպ (Տ., I, 96)։

§ 280. Հրամայական եղանակի համար իբրև ենթականեր հանդես են գալիս դու, դուք, դու ինքդ, դուք ինքներդ, բոլորդ, մի քանիսդ, երկուսդ, երեքդ..., ամենքդ, նաև դ դիմորոշ հոդով մի շարք գոյականներ. օրինակ՝ բանվորներդ, զինվորներդ, ուսանողներդ և այլն, որոնք կամ բացահայտիչ են դուք դերանվան համար, կամ գերազանցապես որևէ որոշիչ բառով են կիրառվում. օրինակ՝ Հասարակ և պարզ մարդիկդ արե՛ք, գերազանցիկ ուսանողներդ, գնացե՛ք և այլն։

Սրանցից դու, դուք, դու ինքդ, դուք ինքներդ կիրառվում են այն ժամանակ, երբ կան տարբեր նախադասությունների ենթակաների (նաև մյուս անդամների) զուգադրություն, հակադրություն,

ենթակա շեշտելու անհրաժեշտություն, և կամ երբ խոսողը կամենում է որոշ հուզական գունավորում տալ նախադասությանը. այսինքն՝ կամենում է մեղմացնել տոնը, կամ արտահայտում է իր թշնամական վերաբերմունքը և այլն։ Իսկ մյուսները, որոնք ծագումով բացահայտիչներ են, չեն կարող զեղչվել. դրանց կիրառությունը պարտադիր է։ Ահա մի քանի օրինակներ. Դու գնա՛, պապի, միամիտ քնի՛ր, Ես աչքի լույսը կհանեմ գողի *(Թ., II, 38)*։ Բայց դու նստիր, ազնիվ հոգի, որ ես հանգչեմ քո գրկում *(նույն տեղում, 164)*։ Նրա անբախտ շիրմի վրա Պաղ ջուր ածա՛ աղբյուրի, Դու՛ էլ գնա՛ նոր սեր արա՛, Այդպես է կարգն աշխարհի *(նույն տեղում, 68)*։ Դու անցորդի պես քեզ միայն զգա՛, Եվ որպես ճամփորդ այս Երկրի վրա, Ազատ հայացքով նայի՛ր ամենին Եվ անվերջ քայլի՛ր քո անհայտ ուղին *(Իս., I, 153)*։ Ազատության զանգ, Դու վեհ ղողանջե՛ Կովկասյան վսեմ, վես բարձունքներից, Ինչպես մրրիկ, շաչե՛, շառաչե՛ Մինչև սիգապանծ ազատն Մասիս *(նույն տեղում, 142)*։ Հայտնվի՛ր դու ինձ խաղաղ, անբախիծ, Ամոքի՛ր սիրտս քո անհուն սիրով *(Տ., I, 287)*։

7. ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԲԱՂԱԴՐՎԱԾ ՁԵՎԵՐԸ

ԿՐԿՆՎՈՂ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 281. *Պարզ բայական ստորոգյալը հաճախ կրկնվում է այլևայլ նպատակներով. այս նպատակները հիմնականում ունեն ոճաիմաստաբանական արժեք։ Կրկնություն ասելով, այստեղ հասկանում ենք միևնույն պարզ ստորոգյալի կրկնումը, որը սովորաբար երկու անգամ է լինում, բայց չի բացառված, որ ստորոգյալը կրկնվի երեք, նույնիսկ չորս և գուցե ավելի անգամ։ Ստորոգյալի կրկնություն հաճախ է տեղի ունենում ժողովրդական խոսքի մեջ՝ առանձնապես հեքիաթներում։ Հիշենք հեքիաթներում սահմանումի ձև ստացած այսպիսի արտահայտությունները.* գնաց, գնաց, շատ գնաց, քիչ գնաց, շատ ու քիչն էլ ճամփան գիտի։ *Այսպիսի կրկնությամբ հեքիաթաբանը արտահայտում է ճանապարհի երկարությունը և ժամանակի տևականությունը։*

ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

§ 282. *Սովորաբար կրկնվում է միայն բայը միևնույն քերականական կառուցվածքով՝ առանց որևէ փոփոխության։ Ինչպես*

ավելց, այդ տեղի է ունենում երկու և ավելի անգամներ. օրինակ՝ Գնա՛ց, գնա՛ց Բինգյոլի աղբյուրի վրա *(Իս., II, 121)։* Հաղթվեցի՛ր, հաղթվեցի՛ր, հաղթվեցիր,— հորը ջգրացնելով՝ արագ-արագ վրա տվեց Եվան *(Նար., VI, 52)։*

§ *283. Պարզ ստորոգյալի բաղադրյալ ժամանակները կրկնվելիս երկրորդ եզրում օժանդակ բայը զեղչվում է. օրինակ՝* Տաշում ես, տաշում այս քարերը *(Զb, 160)։* Թռչում են, թռչում սև չարագուշակ Երազներն ահեղ անվերջ խմբերով *(Թ., II, 147)։*

§ *284. Հաճախ կրկնության երկրորդ եզրում ավելանում են նախադասության այլ անդամներ, այսինքն՝ զեղչված ենթական, խնդիրներ, պարագաներ, ձայնարկություններ, խոսքի մասնիկներ կամ ընդհակառակը՝ առաջին եզրում լինում են, իսկ երկրորդ եզրում փոխվում են, կամ չեն կրկնվում. օրինակ՝* Մթնեց, մթնեց աշխարհը պարոն Մարուքեի աչքին *(Զb, 285)։* Մի՛ վախիր, արի՛, ինձ նե՛տ արի՛ *(Թ., III, 87)։* Նա կհավաքի, հա կհավաքի *(ԴԴՎ, 21)։* Չգիտե՛մ, ես ոչինչ չգիտե՛մ *(Տ., I, 286)։* Որ դու չհագնես, երբեք չհագնես այդ սև շորը սքանչելի *(Իս., II, 215)։* Կռիվ կերթամ, կծարավեմ, դուք հորդ մնաք, պաղ մնաք *(Թ., II, 124)։* Նա գնում էր առանց աջ ու ձախ նայելու, գնում էր գլուխը դեպի ձախ խոնարհած, գնում էր որպես մի սգավոր *(Ր., III, 40)։*

§ *285. Երբեմն կրկնության եզրերը իրար հետ կապակցվում են շաղկապներով. օրինակ՝* Պատածակերում հատիկը կա ու կա *(ԴԴՎ, 458)։* Երեսն են շուռ տալիս,— փախի՛, որ փախի՛ *(Թ., III, 196)։* Չենք թողնի, որ չենք թողնի *(Նույն տեղում, 161)։* Անօրենն եկավ, եկավ ու եկավ *(Թ., I, 334)։*

§ *286. Հեքիաթներում կրկնության երկրորդ եզրում ստորոգյալը ժխտականով է արտահայտվում. օրինակ՝* Կար-չկար՝ բարի մի արքա կար *(Զb, 229)։* Լինում է չի լինում, մի մարդ է լինում: *Այսպես է լինում, երբ կրկնվող ստորոգյալը ցույց է տալիս արագ հաջորդող մի այլ գործողություն. օրինակ՝* Նստել ես, չես նստել, մեկ էլ տեսար եկան *(Փափ., 461)։*

§ *287. Երբեմն կրկնության երկրորդ եզրում ստորոգյալը չի երևում, բայց այս դեպքում կրկնությունը հաստատվում է լրացուցիչ որևէ բառով, որ վկայում է կրկնության գոյությունը. օրինակ՝*

Դա՛վ... Դա՛վ... Ելե՛ք... Կոչնա՛կ... պահնա՛կ...
Զենք առեք շո՛ւտ... ձի հեծեք ձի՛... *(Թ., II, 148)։*

Նստած եմ մի օր ու միտք եմ անում. Միտք եմ անում, *միտք,* ու չեմ կարենում... *(Թ., V, 89)։*

§ 288. *Հնարավոր է, որ առաջին եզրում ստորոգյալը զեղչվի և հանդես գա երկրորդ եզրում, սակայն այն պայմանով միայն, որ առաջին եզրում որևէ լրացուցիչ բառ լինի, որ սերտ կապված լինի ստորոգյալի հետ և այդ երկրորդ եզրում նույնությամբ հանդես գա. օրինակ՝* Դե *չո՛ւտ*, չո՛ւտ արա, չկա ժամանակ *(Իս., II, 178)*։

§ 289. *Երբեմն կրկնությունը արվում է հակադրությունը ուժեղացնելու նպատակով. առաջին եզրը թույլ է շեշտվում, իսկ երկրորդը ուժգին, և հենց այս վերջինին հակադրվում է մի այլ ստորոգյալ. օրինակ՝* Ինչպիսի ներոս ընկերներ մեռան,— մեռան՝ չկորան *(ՀՀե, 78)*։

§ 290. *Լինում է նաև այնպես, որ կրկնության եզրերը իրենց խոնարհումը, եղանակը, ձևը փոխում են. օրինակ՝* Ջեոքի փետը ետ է տանում, *տու՛ր* թե *կտաս* ավերակի խարխուլ պատերին *(Թ., III, 156)*։ Խոսում, խոսում և անընդհատ սիրում էր խոսել *(ՀՀե, 394)*։

§ 291. *Կրկնության այս վերջին ձևին մոտենում է այն հնարը, երբ դիմավոր բայ-ստորոգյալի անորոշ դերբայը հոդով դրվում է այդ ստորոգյալից առաջ, առանձնացնելու, ընդգծելու համար ստորոգյալի նշանակությունը, ցույց տալու նրա կարևորությունը նախադասության մեջ. օրինակ՝* Տանելը կտանեն վերջը *(ԴԴՎ, 495)*։ Ասելը լավ ասիր, Հասան բեկ, նամա նրես նողի նոր բաժանությունը մոտենում է *(ԴԴԸՊ, 249)*։ Ո՛չ, «ուզելը» ուզել եմ, բայց չեմ կարողացել *(Թ., V, 274)*։ Ես բերելը կբերեմ *(ՎԱՍԱ, 463)*։ Իհարկե պաշտոնյաները սրան հավատալը չհավատացին *(Գոգոլ, V, 272)*։ Գալը չենք գա *(ՍխՀ, II, 357)*։ Հանդարտելը հանդարտեց, բայց ուրիշ տեսակ *(ԴԴՎ, 312)*։

§ 292. *Այս նույն ձևի մի այլ տարբերակը այն է, որ խոսողը վերցնում է իր խոսակցի նախադասության իրեն խոսքի համար անհրաժեշտ ստորոգյալը, դնում է անորոշ դերբայով և ապա միևնույն ստորոգյալի ժխտական ձևով հերքում է. այստեղ անորոշը նշում է տվյալ ստորոգյալի կարևորությունը և վերևում բերված անորոշի հետ ամի* ինչ վերաբերում է, գալով դրան *կապակցությունների նշանակությունը. օրինակ՝* Գոռալ, նախ ես չեմ գոռում *(ՍՉ, V, 102)*։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

§ 293. *Ստորոգյալի կրկնությունը արտահայտում է գործողության և ժամանակի տևականությունը. օրինակ՝* Նա նայում է կիր-

նի լանջով ոլորվող կածանին ու սպասում, անվերջ սպասում (*ՄխՀ, II, 6*)։ Մեր սարի բարակ հովին Տվի հյուսերս ծուփ-ծուփ, Որ տանի՛, տանի՛, տանի Հեռո՜ւ, հեռո՜ւ իմ յարին (*Իս., II, 45*)։ Նայե՛ց, նայե՛ց Սայաթ-Նովեն, ամպի նման տխո՜ւր մնաց (*ՉԸ, 45*)։ Թռչո՜ւմ, թռչո՜ւմ են թեթև իմ երկու ձիերը սպիտակ ու սև (*ՀՇՀԸ, 146*)։ Տագնապով դարձնում էր թերթերը ու կարդում, կարդում, կարդում (*ՉԵ, 196*)։ Մտածեցին, մտածեցին, դատեցին, դատեցին և վերջապես որոշեցին (*Գողոլ, V, 273*)։

§ 294. *Կրկնությունը արտահայտում է պնդում, համոզիչ խորհուրդ, խոսողի մեղմ պահանջը, որ խոսակիցը կատարի այն, ինչ որ նրանից պահանջվում է, կամ հավատա նրան. օրինակ՝* Մի վախի՛ր, հանգստացի՛, Բայրամ, հանգստացի՛ (*Թ., III, 88*)։ Նայի՛ր, նայի՛ր սրտաբաց էս լեն արձակ աշխարհին (*Թ., I, 537*)։ Մտածի՛ր, մտածի՛ր, դա միայն իմ կարծիքը չէ (*ՄխՀ, II, 61*)։ Համբերի՛ր, Մանվել, համբերի՛ր (*նույն տեղում, 39*)։ Չկա, ոչինչ չկա հիմա (*ՉԵ, 259*)։

§ 295. *Կրկնությունը արտահայտում է տագնապ, շտապողականություն, պահանջ՝ արագացնելու գործողությունը. օրինակ՝* Տեսե՛ք-տեսե՛ք դափ ու զուռնով, Ինչ հարսնիք է դուրս գալի (*Թ., II, 69*)։ Արի՛ ջան իգիթ, Արի՛ անիրավ (*նույն տեղում, 70*)։

§ 296. *Կրկնությունը արտահայտում է աստիճանական հետևումը, կամաց-կամաց որևէ երևույթի փոխվելը. օրինակ՝* Գնում են անցքով,— գալիս, գալիս լայնանում է անցքը (*ՉԵ, 258*)։

§ 297. *Կրկնությունը շեշտում, առանձնացնում, ընդգծում է ստորոգյալը՝ նրա վրա ուշադրություն հրավիրելու համար. օրինակ՝* Ինչպիսի հերոս ընկերներ մեռան, մեռա՛ն չկորան (*ՀՀԵ, 78, տե՛ս նաև § 289*)։

§ 298. *Կրկնությունը արտահայտում է գործողության բազմակիությունը. օրինակ՝* Իջել է, իջել է «Շոմպոլը» (*ՉԵ, 262*)։ Թռչո՛ւմ են, թռչո՛ւմ սև, չարագուշակ Երազներն ահեղ անվերջ խմբերով (*Թ., II, 147*)։ Ու համբուրեց, ու համբուրեց, ու մեռավ (*Իս., II, 131*)։

§ 299. *Ստորոգյալի կրկնությունը արտահայտում է խոսողի բուռն ցանկությունը, կարոտը, ըղձանքը գործողության կատարման նկատմամբ. օրինակ՝* Եվ ցոլան, ցոլան աստղերի նման (*Տ., I, 377*)։ Գար ինձ հանկարծ հեռագիր, որ դու գալիս ես, գալիս (*նույն տեղում, 378*)։ Հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ, քո անմահ գինով հարբեցրո՛ւ ինձ (*Իս., II, 79*)։

§ 300. Կրկնությունը երբեմն միևնույն բայաձևերը օժտում է տարբեր նշանակություններով՝ հատկապես առաջին եզրը ստանում է կամենալ, ուզել, ցանկանալ *բայերի նշանակություն. օրինակ՝* Երբ որ կերթանք, կերթանք *(Թ., V, 84)։*

§ 301. Կրկնությունը արտահայտում է խոսողի վստահ համոզմունքը, հավատը, վճռական կարծիքը ապագայում կատարվելիք գործողության նկատմամբ. օրինակ՝ Նստել է արդեն հազար տարի, և ազատություն չկա նրան, չկա՛ *(Իս., II, 194)։* Քաշ ես, գիտե՛մ, գիտե՛մ, չկա քեզ նման *(Նույն տեղում, 130)։* Բայց ես կիմանա՛մ՝ ուր է գնում, կիմանա՛մ *(Ընտիր էջեր, 625)։*

§ 302. Կրկնությունն արտահայտում է խոսողի ափսոսանքը կատարված գործողության հանդեպ, մի գործողություն, որ տեղի է ունենում, տեղի է ունեցել կամ ունենալու է խոսողի կամքից անկախ, իսկ նա չէր ցանկանա, որ այդպես լինի. օրինակ՝ Ու թվաց հանկարծ, որ չկա՜ն, չկա՜ն անցյալն, ապագան *(Տ., I, 150)։* Անցե՛ք, անցե՛ք, անցե՛ք, ով ստվերներ տրտում *(ԳՄԵ, 195)։*

§ 303. Ստորոգյալի կրկնությունը արտահայտում է խստություն ըստ գործողության ներքին բովանդակության. օրինակ՝ Յոթն անգամ ահա առնում եմ, առնում իշխանությունը՝ սերունդներ լափող *(Իս., II, 72)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Հարկ չկա մի անգամ ևս պնդելու, որ կրկնվող ստորոգյալը մի պարզ ստորոգյալի բաղադրված ձևն է, և նախադասությունը վերլուծելիս կրկնությունը պետք է վերցնել իբրև մի ստորոգյալ։

8. ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԲԱՂԱԴՐՈՒՄԸ ՄԻ ԱՅԼ ՁԵՎԱԿԱՆ ԵՎ ԻՍԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅՈՎ

§ 304. Պարզ բայական ստորոգյալը բաղադրվում է երկու տեսակ բայերով. կա՛մ բաղադրող բայը կորցնում է իր բառական և ըստ այդմ իր իմաստային ու քերականական նշանակությունը և դառնում է եղանակային, ձևական բառ, և կա՛մ երկու բայն էլ հավասար չափով պահպանելով իրենց նշանակության մի մասը՝ մի ամբողջական բայ-ստորոգյալ են դառնում իրենց իմաստները միացնելով իրար հետ։ Այս վերջինները շատ անգամ գծիկով միանում են և դառնում իբրև մի բառական միություն։

§ 305. Որոշ բայեր, պահպանելով իրենց քերականական լրիվ ձևը՝ կորցնում են, սակայն, իրենց ինքնուրույն նշանակությունը և նախադասության մեջ գործադրվող մի բայ-ստորոգյալի հետ գործածվելով՝ դառնում են նրա համար եղանակավորող բառ և հենց նրա հետ էլ մի միասնական բաղադրյալ ստորոգյալ են կազմում։ Այդ ձևական բայ-ստորոգյալները երկու կերպարանքով են հանդես գալիս. կա՛մ իրենց խոնարհման ձևով հար և նման են բուն բայ-ստորոգյալին, այսինքն՝ ունեն միևնույն դեմքը, թիվը, ժամանակը, և կա՛մ խոնարհման ձևով տարբերվում են։

§ 306. Իբրև ձևական բայեր ամենից ավելի կատարյալ են մի քանի բայերի հրամայական եղանակները, որոնք հատկապես կիրառվում են ըղձական եղանակով արտահայտված բայ-ստորոգյալների հետ և նրանց տալիս են կերպավորող նշանակություն՝ հարկավ այլ դեպքերում պահպանելով իրենց բուն բառական նշանակությունը։

Իբրև ձևական, կերպավորող նշանակություն արտահայտող բառեր՝ ամենից հաճախ հանդես են գալիս թողնել, գալ, տեսնել, բերել, հրամել, ասել, տալ բայերի հրամայականները։

§ 307. Թողնել բայի թող հրամայական ձևը, կիրառվելով ըղձական եղանակով արտահայտված ստորոգյալի հետ, նշում է թույլտվություն, պահանջ, իղձ իսկական բայ-ստորոգյալի գործողության կատարման համար. օրինակ՝ Վեր կացավ Մոսին. իրեն կտրատում, *Թող գա*, գոռում է, որ բռնենք նորից (Թ., II, 59)։ Մեյդան բաց արեք, *թող մին էլ մեջ գա* (Նույն տեղում)։ Էդ բոլորը *թող անեն*, համաձայն ենք (ՍՁ, III, 326)։

Ծանոթություն. Թող հրամայական ձևը կիրառվում է նաև այլ բաղադրյալ ստորոգյալների հետ. օրինակ՝ Ամպերի նման *թող սահեն-գնան* մտքերը մոլոր (Տ., I, 277)։ Նա՛ էլ այդպիսի հիմարներից է, *թող թույլատրվի* ասեմ, պարոն Մարութեն (Զb, 255)։ Թող կոտորած լինի (ՐԿ, 329)։

§ 308. Թող հրամայական ձևը որոշ չափով ինքնուրույն է դառնում որ շաղկապի հետ կիրառվելով, որ նույնպես կորցրել է իր շաղկապային արժեքը և դարձել է թարմատար։ Սկզբնապես հրամայականը եղել է մի գլխավոր նախադասության ստորոգյալ, իսկ հաջորդող ըղձական եղանակով արտահայտված բայը՝ նպատակի պարագա երկրորդական նախադասության ստորոգյալը։

Սակայն աստիճանաբար թուլանալով թող *հրամայական ձևի բառական նշանակությունը, թուլացել է նաև երկու տարբեր նախադասությունների շարահյուսական հարաբերությունը, դրա հետևանքով* որ *հարաբերական շաղկապն էլ դարձել է թարմատար. ուստի* թող որ զամ *դարձել է մի ամբողջական ստորոգյալ. օրինակ՝* Երբ ես երկրորդ ամուսին առնեմ, թող որ հավիտյան անիծյալ լինեմ *(Շեքս., I, 58)*։

§ *309.* Թող *հրամայական ձևը դեռևս պահպանում է իր բառական նշանակությունը, երբ խոսողը ուղղակի դիմում է երկրորդ դեմքի մի անձնավորության, ասելով* թող, *երբ խոսակիցը նրան բոլորովին էլ չի բռնել. օրինակ՝* Ու իբր ասում է՝ վեր կաց, իմ հրեշտակ, *թող* որ սպանեմ ես էդ հրեշին *(Թ., II, 147)*։ *Թող* Վարդանին հետս տանեմ Բաքու *(Շիրվ., III, 482)*։

§ *310.* Արի, եկ, բեր, համեցեք, տես *(նաև սրանց հոգնակին) և մի քանի հրամայական ձևեր արտահայտում են սպառնալիք, անելանելիություն, դիմում, ուշադրության հրավիրում և այլն. օրինակ՝* Տե՛ս կխռովեմ, լաց կլեմ ես էլ *(Թ., II, 70)*։ *Եկ* ու բան հասկացիր *(Թ., V, 158)*։ Այժմ *արի*[1] քեզ մի ծիծաղելի դեպք պատմեմ *(նույն տեղում, 144)*։ *Բեր* այժմ խոսենք յուր կարգով և պապականության վերա *(ՄՆ, II, 206)*։ Հիմիկ ներ *եկեք անենք* իմ աղջկանը թագավոր *(Թ., II, 282)*։ Գողերի հետքը իր տունն է տանում. *Համեցեք* դիվան ուզիր սրանից *(նույն տեղում, 38)*։ Մենակ *արի* ու աշխարհքը կերակրի *(ԴԴՎ, 455)*։ Դու, Հազկերտ, *եկ* ու մարսիր *(նույն տեղում, 472)*։

§ *311.* Արի, եկ *հրամայականները մասամբ իրենց նշանակությունը պահպանել են ուղևորման բայերի հետ գործածվելիս. օրինակ՝ Արի* գնանք: Եկեք ձեզ տանեմ «Համլետ»-ի ներկայացմանը *(Թ., IV, 354)*։ *Եկեք* շուտ գնանք *(ԳՍԹ, I, 99)*։ Մայրիկ, *արի*, հեռանանք քաղաքից *(Մուր., II, 109)*։

§ *312.* Ասել *բայի հրամայականը արտահայտում է նախադասության երկրորդ մասի կարևոր լինելը՝ ի հակադրություն նախորդ մասի. օրինակ՝* Պարսիկների հետ դյուրին է, հայերի հետ *ասա (այսինքն՝ ասա հայերի հետ դյուրին լինի, ԴԴՎ, 232)*։

§ *313.* Ասել *բայի անորոշը օժանդակ* եմ *բայի երրորդ դեմքով արտահայտում է արդյունքը, հետևանքը և ստանում է* դուրս է գալիս, նշանակում է *կապակցությունների իմաստը ու հաջորդող բայի հետ կազմում է մի ստորոգյալ. օրինակ՝*

---

[1] *Այս նախադասությունը ասվում է նամակում։*

Ասել է փրկված է, մայրիկ (ԴԴԿ, 455)։

§ 314. Տալ բայի հրամայականը նույն բայի հետ՝ թե շաղկապով կազմում է մի դարձվածքային կապակցություն, որ արտահայտում է գործողության ուժգնությունը. օրինակ՝ Տո՛ւր թե կտաս շան ճակատին Շուռ է տալիս կատվի կողքին (Թ., I, 330)։ Ով գալիս է տո՛ւր թե տալիս (Նույն տեղում, 331)։ Առանց թե շաղկապի էլ ասվում է. տուր տվեց, տուր է տալիս, տուր որ կտաս: Վանա ծովի կոանը մի տուր տվինք Օսմանլուին (ՍԽՀ, II, 195), սակայն առանց շաղկապի ձևերի մեջ տուրը գոյական է և ոչ թե բայ։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Հիշյալ հրամայական ձևերը հաճախ այնքան են թուլացել, որ գործածվում են նաև առաջին դեմքի համար և կամ հրամայականը հոգնակի է դրվում, իսկ բուն բայը եզակի։ Համեմատի՛ր. Համեցեք դիվան ուզիր սրանից (Թ., II, 38)։

9. ԲԱՂԱԴՐՎԱԾ ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ՝ ՀԱՄԱՐԺԵՔ ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐՈՎ

§ 315. Իրար մոտիկ նշանակություն ունեցող երկու բայ, միմյանց հետ հաճախ գործածվելով, ամբողջանում և մի հասկացություն են արտահայտում։ Երկուսն էլ թե՛ ձևով և թե՛ նշանակությամբ հավասար չափով պահպանվում են, բայց որովհետև դրանց նշանակությունները մոտիկ են կամ նույնասեռ, ուստի միասին օգտագործվելիս արտահայտում են մի ամբողջացած հասկացություն. օրինակ՝ Ամեն բան ասելուց առաջ չափում կշռում ես (Շեքս., I, 16)։ Այս ծեր մարդու աղջկան տնից առել տարել եմ (Նույն տեղում, 127)։ Փրթեց գնաց ողջ երկրով մեկ (ԴԴԿ, 477)։ Կանգնեց մնաց՝ դեմքից քաշած օսկեկարած խասը ձեռին (ՉԸ, 45)։ Խաբել է պրծավ գնաց (ՍԽՀ, II, 36)։ Քշեց եկավ, եկավ կանգնավ կոնի առաջ Գյուլիզարի (Իս., II, 150)։ Ինձ մի անգամ առան տարան Հաշվապահի ուսումնարան (Թ., II, 93)։ Բայց արի տես, որ փող չունեն (Թ., I, 268)։ Թող տուր ինձ գնալ (Փափ., 281)։

§ 316. Ինչպես ասվեց, դրանք հաճախ այնքան են սերտանում, որ գծիկով միանում և ամբողջանում են. այս դեպքում էլ, սակայն, ամբողջական իմաստի մեջ պարզ գծվում են երկու բայի իմաստային առանձնահատկությունները. օրինակ՝ Գլուխը տարավ-բերեց կարավանատան տերը (ԴԴԿ, 165)։ Ուտում-քնում, ելնում-ուտում, Մի, գոհ, ինչպես աղբակույտում (Թ., II, 90)։ Նստան-ելան ու քուն.

մտան, կարգով, ճերթով (*Իս., II, 172*)։ Դու էլ արի, նորեկ տարի, գլխիս վերից *անցիր-գնա* (*Թ., X, 114*)։ Երբեմն ձի էր *առնում-ծախում* (*ՍՉ, III, 131*)։ Փոքրիկ թռչունը թևին տալով *թռչում-բարձրանում* է վեր (*նույն տեղում, 366*)։ *Գալիս-հասնում* է իրենց քաղաքը (*նույն տեղում, 366*)։ Առաջին օրը նա *գալիս-գնում* էին նարևան ու բարեկամ (*ԱԲՄ, 89*)։ Նրանցից մի խումբ *եկել-շրջապատել* էր մարդկանց (*ՎԱՍԱ, 167*)։

Ծանոթություն. 1. Պռոշյանի մոտ գտնում ենք նաև այնպիսի ձևով, որտեղ առաջին անդամը դրված է անորոշ դերբայով. այսպիսի կառուցվածքը արդեն հնացած է. օրինակ՝ Ինքը *թողուլ-հեռանալու է* յուր սիրած աշխարհից (*ՊՊ, I, 567*)։

Ծանոթություն. 2. Բաղադրյալ ժամանակների գործածության դեպքում օժանդակ բայը առաջին մասում զեղչվում է։

§ 317. Երբ գրողը կամ խոսողը ցանկանում է այս կարգի բայերի ամբողջական իմաստները առանձնացնել, այդ դեպքում հիշյալ բայերը ստորակետով բաժանում է, որով դրանք առանձին-առանձին շեշտվում են, իմաստավորվում. օրինակ՝ Գնանք, զարկենք, ջարդենք, կրակենք (*Թ., I, 331*)։ *Այս դեպքում արդեն ունենք միավորված բազմակի պարզ ստորոգյալներ։*

§ 318. Համարժեք բայ-ստորոգյալները նույնպես կարող են կրկնվել. օրինակ՝ Գնաց եկավ, գնաց եկավ իր ճյուղերը զարկեց իրար (*Թ., I, 326*)։

§ 319. Բաղադրյալ ժամանակներով կազմվող պարզ ստորոգյալները երբեմն զեղչում են իրենց օժանդակ բայը, և իբրև ստորոգյալ մնում է միայն դերբայը. այսպիսի ստորոգյալը կոչում ենք զեղչված օժանդակ բայով դերբայական պարզ ստորոգյալ։ Այս զեղչումը միանգամայն օրինաչափական է այն դեպքում, երբ միևնույն ժամանակով կիրառված երկու ստորոգյալներից մեկի օժանդակ բայը զեղչվում է չկրկնվելու համար. օրինակ՝ Դու *կարդում, գրում* և խոսում ես. Դու կարդում ես, իսկ ես *խոսում*։ Զայներ, ոռնոց հոսում էին մելամաղձիկ, ֆշֆշում էին ոռպես հեզիկ վտակ, *դայլայլում* ոռպես սիրահար սոխակ (*Փափ., 223*)։ Հասոն քարերին էր դողացնում, Սև-ջրի ալիքները *հուզում*, բնությունն էր քարացնում, զեփյուռին *ողբացնում*, ամեն ինչ *շարժում*, ճրեշտակների նախանձը *գրգռում* (*նույն տեղում*)։

Սակայն երբեմն օժանդակ բայը բացարձակ զեղչվում է բանաստեղծության մեջ և իբրև ստորոգյալ մնում է միայն դերբայը

օրինակ՝ Գութանը *լարած,* Հոտաղը *շարած,* Մաճկալը *մաճին,* Ձեռը ականջին *(Թ., I, 240)։* Սնունդ *առել,* չիղ ու արյուն բանուկ ուժեղ բազուկներից, Գործարանը խանդ ու ավյուն *շնչել* նրան իր ժխորից *(ՀՀԵ, 89)։* Պատուհանդ փակ և դռներդ գոց, Ու մեկ էլ ինքս *քաշում* սև ճոգոց *(նույն տեղում, 92)։* Աղվեսն *եկել, նստել* դեզին, Երկար ագին *ծռել* վզին, Աչք է ձգել մեծ խորոզին *(Թ., I, 219)։ Համեմատի՛ր նաև՝* Հողմը նոր *դադրած* բևերն է պարզում, գուժում փոքրիկ, Ձգայուն ծովը թափով *երազում* ինններորդ ալիք, Եվ մթնոլորտում ցասկոտ նրդենի կայծը *բորբոքվում,* Հզոր վիթխարի անխուսափելի վրեժը *կոփվում (ՀՀԵ, 83)։*

10. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 320. Բացի վերոհիշյալ գլխավոր ժամանակներից, հայերենը ունի նաև երկրորդական ժամանակներ, որոնք բոլորն էլ բաղադրյալ են։ Այս ժամանակները կոչվում են նաև հարաբերական ժամանակներ, որովհետև հարաբերում են գլխավոր ժամանակներին՝ ցույց տալով նրանց գործողության նկատմամբ միաժամանակություն, նախաժամանակություն և եռժամանակություն։

Երկրորդական բաղադրյալ ժամանակները արտահայտում են տևական, կրկնվող գործողություններ, որոնք որոշ շրջանում պարբերաբար կատարվում են։ Դրանք ցույց են տալիս նաև այնպիսի գործողություններ, որոնց կատարման մասին խոսողը հաստատ չգիտե և որպեսզի ցույց տա, թե ինքը չգիտե, վստահ չէ իր ասածի իսկության վրա, այլ լսել է ուրիշներից, իր խոսքի մեջ ստորոգյալները կիրառում է համապատասխան երկրորդական ժամանակներով։

§ 321. Երկրորդական բաղադրյալ ժամանակները իբրև ստորոգյալ համարում ենք բաղադրյալ։ Դրանք կազմվում են լինել *բայի խոնարհվող ձևերով և մի այլ բայի անկատար, հարակատար և ապառնի դերբայներով։*

ա) ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ՆԵՐԿԱ

§ 322. Երկրորդական բաղադրյալ ժամանակների ներկան կազմվում է անկատար -իս *վերջավորվող դերբայով և* լինել *բայի*

ներկայով։ Այս ներկան ամենից առաջ կիրառվում է այն պարագայում, երբ անհրաժեշտ է պատմել անցյալում կատարված տևական կրկնվող եղելությունններ, որոնց կատարման ճշտությունը խոսողը հավաստի չէ. դեպքերը պատմվում են, ուրիշից լսած լինելով։ Եվ որովհետև հեքիաթները, ըստ պատմողի, այդպիսի անիրական, չեղած-չկատարված եղելություններ են, ուստի այս ներկան շատ հաճախ կիրառվում է հեքիաթների և հեռավոր անցյալի դեպքերի պատմության մեջ. օրինակ՝ Հէրը անչափ *սիրելիս է լինում աղջկանը (Թ., III, 184)։* ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում: էս մարդ ու կնիկը իրար *հավանելիս չեն լինում (նույն տեղում, 172)։* ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես fաղաfում *տիրելիս է լինում* Ռւfանա թագավորը *(նույն տեղում, 224)։* Լինում է չի լինում մի աղfատ որբևայրի կին: *Ապրելիս է լինում* մի փոfրիկ տնակում *(նույն տեղում, 287)։* Լինում է չի լինում մի պառավ, շատ պառավ կին: էս պառավն իր սազերի հետ *ապրելիս է լինում* անմարդաբնակ լեռների մեջ՝ մի փոfրիկ տնակում *(նույն տեղում, 294)։*

§ *323. Գործողության տևականությունը կրկնված լինելը ավելի զգալի է, երբ երկրորդական բաղադրյալ ներկան կիրառվում է առօրյա երևույթներ արտահայտելու համար և մանավանդ գլխավոր ներկան գործածվում է դրան զուգահեռ. օրինակ՝* Երբ մեկը մեռնելիս է լինում, բարեկամներին ոչ թե մեռելի տերն է ճայտնելիս լինում *(ՂԱԾ, 366)։* Մի օր ճերը *աշխատելիս է լինում,* ծարավում է *(Թ., III, 197)։* Ճամփին մի լճի ափով *անց կենալիս է լինում,* տեսնում է մեջը վայրի բադեր են լողում *(նույն տեղում, 201)։* Երբ որ ճերը *մեռնելիս ա ըլում,* կնկանն ասում է *(ՀԺՀ, 115)։*

ԱՆՑՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ

§ *324. Անցյալի անկատար ժամանակը ցույց է տալիս անցյալում կրկնվող և տևական մի գործողություն։ Բայց որովհետև գլխավոր անցյալի անկատարը սովորաբար արտահայտում է անցյալում կրկնվող, տևական գործողություն, երկրորդական անցյալի անկատարը գրեթե չի կիրառվում։ Երկրորդական բաղադրյալ ժամանակների վերաբերյալ մեր հավաքած բազմաթիվ օրինակների մեջ չհայտնվեց գեթ մի օրինակ։ Այդպես է դրությունը նաև Մ. Աբեղյանի շարահյուսության մեջ։ Այնտեղ բերված օրինակնե-*

րը ամենայն հավանականությամբ հեղինակի կազմածներն են։ Ահա դրանք։ Ամեն անգամ, որ նրա մոտ էի գնում, նա տանը նստած *պարապելիս էր լինում,*— տնից *դուրս գալիս էր լինում*։ Ամեն տարի աշնան ժամանակը, երբ մենք դեռ *լվանալիս ու մաքրելիս էինք* լինում մեր ոչխարները, նա գալիս էր մեզ մոտ *(ՄԱՇ, 240)*։

Ծանոթություն. 1. Բացի -իս-*ով վերջավորվող անկատար դերբայից, երկրորդական բաղադրյալ ժամանակների մեջ մասնակցություն ունի նաև* -ում-*ով վերջավորվող անկատար դերբայը։ Բայց ներկա և անցյալի անկատար ժամանակներում* -ում-*ով վերջավորվող դերբայը բնավ չի մասնակցում։ Ընդհանրապես պետք է նկատել, որ երկրորդական բաղադրյալ ժամանակների մեջ* -ում-*ով վերջավորվող անկատար դերբայի կիրառությունը անցյալին է վերաբերում. այժմ գրեթե չի նկատվում*։

Ծանոթություն. 2. Սահմանական եղանակի ապառնու երկրորդական բաղադրյալ ժամանակների համար օրինակներ չեն գտնվում՝ հակառակ մեր երկար որոնումներին։ Մ. Աբեղյանը բերում է իր կազմած օրինակները՝ Գնալիս եմ լինելու, գնալիս էի լինելու։ *Ամենայն հավանականությամբ այս ձևերը բնավ չեն կիրառվում. սրանց փոխարեն գործածվում են՝* գնալիս կլինեմ, գնալիս կլինեի։

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

§ *325. Անկատար դերբայով և* լինել *բայով երկրորդական բաղադրյալ անցյալ կատարյալ ժամանակ գոյություն չունի։ Առհասարակ շարահյուսության գրքերում բերված օրինակները ոչ թե գալիս են աղբյուրներից, այլ կազմվում են այդ գրքերի հեղինակների կողմից։ Մ. Աբեղյանը բերում է այսպիսի օրինակ՝* Ամեն անգամ, որ նրա մոտ գնացի *(այսինքն՝ երբ էլ նրա մոտ գնացի.—Վ.Ա.),* նա տնից դուրս գալիս եղավ *(ՄԱՇ, 242)*։

ՎԱՂԱԿԱՏԱՐ

§ *326.* Լինել *բայով և անկատար դերբայով վաղակատարը, իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակ, շատ է կիրառվում մեր լեզվում։ Ըստ որում այս պարագայում մասնակցում են անկատար* -իս *և* -ում-*ով վերջավորվող երկու փոփոխակն էլ, որոնցից վերջինը արդեն այժմ հազվագյուտ է գործածվում*։

Ամենից առաջ վաղակատարը ցույց է տալիս անցյալում կատարված և վերջացած այնպիսի գործողություն, որ խոսողը կասկածի տակ է առնում և իր հայտնածի իրողություն կամ անիրողություն լինելը թողնում է լսողին կամ ընթերցողին՝ վերջինիս կողմնորոշման։ Սրա հետ զուգընթաց՝ գրողը, խոսողը համոզված է իր ասածի իսկությանը, սակայն քանի որ ինքը ներկա չի գտնվել, պատմում է երկրորդական բաղադրյալ ժամանակի վաղակատարով, որպեսզի միաժամանակ արտահայտի կրկնվող, տևական գործողություններ. օրինակ՝ Պեգասը *գշլում է եղել* մի քանի ծաղիկ սպիտակ կամ կարմիր առվույտից *(ՂԱՀ, 127)*։ Երբ փողի պակասությունը շատ *նեղում է եղել* նորան, Սոֆիայի սերը ու գիրկը ծախում է եղել այս կամ այն վավաշոտ ծերուկին *(ՌՊԵ, 485—486)*։ Բոլորովին հանգիստ սրտով *սպասում է եղել* յուր սիրական դստեր և ազնիվ փեսայի վերադարձը *(Նույն տեղում, 474)*։ Մի օր էլ գեներալներ, պոլկովնիկներ, մայորներ չգիտեմ որ թագավորի կենացը *խմում են իլել*, էդ միջոցին էլ հերս կառեթով *անց ա կենում իլել* շարշվից, ուր էդ մեծավորները *քեֆ են անում իլել (Նույն տեղում, 462)*։ Այդտեղ մի ժամանակ մի մեծ մարդ է *եղել կենալիս (ՂԱԵ, 403)*։ Բերդից իջնելով՝ *անցնելիս է եղել* գետը *(ՁԸԵ, 301)*։ Ուր հայրս իբրև որմնադիր *նորոգում է եղել* եկեղեցու փլած տանիքը *(Մուր., IV, 153)*։ Իր կուռքը գրում էր տոփոտ, էրոտիկական այնպիսի նամակներ Լիզային և *ստանում է եղել* այնպիսի կրքոտ, այնպիսի պագշոտ և երբեմն էլ խենեշ արտահայտություններով լի երեսներ *(Փափ., 411)*։ Նա յուր երիտասարդ ժամանակը Թիֆլիսում փերեզակությամբ *է եղել պարապում (Մուր., V, 348)*։ Այդ խառնակություններից հետո նա *պարապում է եղել* բազազությամբ *(Նույն տեղում, 349)*։ Ինչպես ինքն էր պատմում, ոտով *գնում է եղել* Թավրիզ և այնտեղից ապրանքներ բերում *(Նույն տեղում)*։ Բայց եթե Շահռուխ բեկը գործին այն կերպարանքը տար, որ իբր թե՝ ինքը *կամենում է եղել* այդ աղջկան վերցնել շահի համար *(Նույն տեղում, 226)*։ *Երգում է եղել* «բանելիս», *երգում* աղետների օրերին *(ԴԴԸՊ, 205)*։ Աշխատանքը սուրբ է՝ *ասելիս են եղել* Հուսիկի պապերը *(Նույն տեղում, 206)*։ Բայց որովհետև հավերի աղտոտությունից *հոտելիս է եղել* բակը, և կենողները շարունակ *բողոքելիս են եղել* այդ բանի դեմ *(Նար., VII, 223)*։ Հավատացրեց, որ ամեն օր սպասում է եղել նրանց *(Մուր., V, 22)*։ Որի բոլոր հրապույրները *կազմում են եղել* չոր հաշվեմատյանները, երկաթե պահարանը և անմիտ համրիչը *(Մուր., IV, 66)*։ Պատրաստվում է

եղել այս օրէրիս օրիորդի ձեռքը խնդրելու *(Մուր., I, 239)*։ Թիֆլիսի մեջ այդ ժամանակ նորություն *է համարվելիս եղել*։ Մկրտիչ Սունդուկյանը *պարապում է եղել* վաճառականական գործերով *(ԳԶ, 168)*։ *Մոտ է, սաելիս են եղել* նրանց *(ՉՐԾ, 304)*։ Որովհետև շատ փոքր հասակի մեջ որբացել է, վարժուհու պաշտոն *է կատարում եղել (ՌՊԾ, 420)*։

ԱՆՑՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

§ *327. Անցյալի վաղակատար ժամանակը շատ հազվադեպ է կիրառված. սա նույնպես ցույց է տալիս անցյալում կատարված կրկնվող տևական գործողություն, որին խոսողը ներկա չի գտնվել։ Վաղակատարից տարբերվում է միայն նրանով, որ նրանից առաջ կատարված ժամանակ է արտահայտում. օրինակ՝* Վասնզի գիմնազիա եկած ժամանակը, երևի, սա ավելի հաճախ հայելի էր նայել, քան թե յուր դասագրքերու վրա և ավելի շատ՝ աղջիկներու զովասանքին *էր ականջ դնում եղել*, քան թե վարժապետի դասախոսություններին *(ՌՊԾ, 390)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Վաղակատարի սովորական շարադասությունը պարզ է. սկզբում դրվում է անկատար դերբայը, ապա գալիս են լինել *բայի խոնարհվող ձևերը։ Ժխտական ձևի մեջ այս դասավորությունը կարող է փոխվել, բայց ժխտական մասնիկը միշտ* լինել *բայի վրա է. օրինակ՝* Ինչո՞ւ խարազ Ջաֆարի աղջիկն այս ֆանի օրս *չի եղել գալիս* դասի *(Նար., VI, 50)*։ Աշակերտուհիներից երկուսն այս մի ֆանի օրը *գալիս չեն եղել (նույն տեղում, 48)*։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

§ *328. Պայմանական ապառնու երկրորդական բաղադրյալ ժամանակը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ ըստ խոսողի ենթադրության հնարավոր է, որ կատարվելիս լինի խոսելու վայրկյանին և դրանից հետո։ Խոսողը չգիտե, հաստատ տեղյակ չէ՝ գործողությունը կատարվում է, թե ոչ, բայց ենթադրում, հնարավոր և կարելի է համարում դա։ Այդպիսի հաղորդումը հաստատուն պնդում չէ, այլ կարծիք է, որ կարող է ճիշտ չլինել։ Եթե պարզվում է, որ այդպիսի հաղորդումը ճիշտ չէ, հայտնողը պատասխանատու չի դառնում դրա համար, որովհետև նա ենթադրա-*

բար է հաղորդում։ Այս պայմանականը ցույց է տալիս տևական, խոսելու վայրկյանին սկսված, բայց դեռևս չավարտված գործողություն. օրինակ՝ Եթե հանդեսներ չեք սարքում, գոնե ծրագիրները կազմելիս կլինեք *(Թ., V, 148)*։ Նա հիմի գետնի տակին Բեհեզգերուղի կողքին նստած՝ իր քաջագործությունները *կլինի պատմում (ՊՊ, II, 205)*։ Դեռ ոխն ու քենը սրտում *մխում* կլի *(ԽԱ, III, 183)*։ Կուսակալը *ինձ կլի մնում (նույն տեղում)*։ Մինչև նա մեզ հասնի, մենք Ահմո բեկի հետ պոռշտի անում կլինինք *(ՊՊ, II, 500)*։ *Այս վերջին օրինակը ունի պայմանական ապառնու նշանակություն՝ առանց տևականության։*

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ *329. Պայմանական ապառնու համեմատությամբ պայմանական անցյալի երկրորդական բաղադրյալ ձևը ավելի կիրառական է։ Սա ցույց է տալիս մի այնպիսի տևական գործողություն, որի կատարումը, ըստ խոսողի ենթադրության, պետք է որ տեղի ունենար անցյալում կատարվող մի այլ գործողության ընթացքում։ Խոսողը հաստատ չգիտե տեղի ունեցել է, թե ոչ. ասում է լոկ իբրև ենթադրություն, իբրև մեղմ պնդում. օրինակ՝* Գիտեի, որ Ասլանը *սպասելիս կլիներ (ԲԿ, 414)*։ Մի օր հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկյանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ *գտնվում կլիներ* հայրենիքում *(Մուր., IV, 67)*։ Ես հավաստի գիտեի, որ ընկերս մինչև այժմ անհամբերությամբ *սպասում կլիներ* ինձ *(ՌՊԵ, 339)*։ Ով գիտե, որ բարեկամի հետ պանդոկումը թեյ *խմում կլիներ (նույն տեղում, 379)*։ Գուցե *ասում կլիներ* մտքում՝ «խեղճ հայեր են» *(ՌՊԵ, 316)*։

ԸՂՁԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

§ *330. Ըղձական ապառնու երկրորդական բաղադրյալ ժամանակը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ տևական է և ցանկալի, որ հետագայում կատարվի. օրինակ՝* Որքան էլ *շտապելիս լինեք*, անպայման կանգ կառնեք *(ՎԱՍԱ, 119)*։ Չեն կարողանում ներել, որ այդ սիրուն սոսիները *պատկանում լինեին* մի խեղճ գյուղացու *(Մուր., IV, 87)*։ Աղջիկը, որ քեզ *սիրում լինի* և քո պատճառով էլ թողնում *լինի գալիս*, ինչ կասես դրան *(Մուր., V, 20)*։ Երբ Կասսիոն Դեզդեմոնային *խնդրելիս լինի*, ներս կմտնեմ

(*Շեքս. I, 154*)։ Հացն ու ջուրն էլ, որ փողով *ըլին ծախում առնում*, էլ ում դուրը գնաս (*ԽԱ, III, 23*)։ Ոչ մեկ բուռ հողի արժանանամ, թե սուտ *ըլիմ ասում* (*նույն տեղում*)։ Ձանգվի վրովն անց կացրին, ու հենց բռնես՝ սար ու ձոր բերաններր բաց՝ նրանց *ըլին ուզում* կուլ տալ (*նույն տեղում, 131*)։ Կարծես այդ անիրավների աչքերը գայլի նման մթնում էլ *տեսնելիս լինեն* (*Րխ, 79*)։ Իմ տեսած լույսը աչքերս կուրացնե, եթե սուտ *լինեմ ասում* (*ՐԿ, 301*)։

Ծանոթություն. Ըղձական ապառնու երկրորդական բաղադրյալ ժամանակը կարող է ունենալ այն բոլոր իմաստային նրբությունները, որ քննվեցին գլխավոր ժամանակի վերլուծության ընթացքում (*§§ 225—241*)։

ԸՂՁԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ 331. *Ըղձականի երկրորդական բաղադրյալ անցյալի ապառնին ցույց է տալիս անցյալի նկատմամբ ապառնի մի այնպիսի գործողություն, որ տևական և շարունակվող պետք է լիներ, եթե կատարվեր. օրինակ*՝ Եթե արդարև նա *սիրում լիներ* ինձ (*Մուր., I, 166*)։ Ինչպես կատարյալ կլիներ նրա ուրախությունը, եթե այսօր Գետյան գտնվում լիներ այն փայլուն հյուրերի հետ, որ պիտի հրավիրվեին նաշի Վարանցովի պարկում (*Մուր., V, 163*)։ —Հոգ չէ, լսիր։ Եվ այդ գեղեցկուհին *ապրում լիներ* այստեղ՝ հոյակապ դղյակի մեջ՝ շրջապատված գեղանի նաժիշտներով (*Մուր., IV, 86*)։ Իսկ եթե հանկարծ *սիրում լինեիր* մի ուրիշին (*Մուր., III, 305*)։ Նրա ջերմեռանդ աչքերը կարծես *ասում լինեին* (*ՐԿ, 610*)։ Եթե վանքերը լինեին լոկ կղերանոցներ, որոնց մեջ անգործ աբեղաների մի ստվար բազմություն միայն *սպառում լիներ* երկրի հարստությունը, տարակույս չկա, որ այդ դեպքում նրանք բոլորովին անտանելի կդառնային ժողովրդին (*ՐԿ, III, 201*)։ Կարծես, լուսինը՝ տիեզերքի սիրելին, իր արծաթափայլ ճառագայթներով *մատնում լիներ* նրանց (*Ր., «Խենթը», III, 74*)։ (*Այս օրինակում ըղձականի անցյալը անցյալի անկատարի նշանակություն ունի*)։ Կարծես նրանք ինձ *տեսնում լինեին* դահճի ձեռքերով (*Շեքս., I, 232*)։ Եվ եթե դուք *գտնվում լինեիք* այդ վայրկյանին նույն հոտած ախոռին կից սենյակը և տեսնեիք նրա անլուր տանջանքը, անպատճառ կասեիք (*Մուր., V, 155*)։ Շահյանը չէր կարծում, թե պանի Զդանևիչը դարձյալ փող խնդրելու համար *լիներ* իրեն *հրավիրելիս* (*Նար., III, 524*)։

Ծանոթություն. Այն բոլոր նշանակությունները, որ ունի ըղձականի անցյալի պարզ ժամանակը, գրեթե արտահայտում է երկրորդական բաղադրյալ ժամանակը. երբեմն վերանում է նաև այն տարբերությունը, որ գոյություն ունի դրանց միջև, այսինքն՝ այն, որ այս վերջինը տևական կրկնվող գործողություն է արտահայտում (§§ 242—249)։

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ 332. Հարկադրական եղանակը ցույց է տալիս այնպիսի մի գործողություն, որ խոսողի կողմից մտածվում է իբրև հարկադիր, անհրաժեշտ, պարտադիր կատարելի։ Հարկադրականի բաղադրյալ երկրորդական երկու ձևերը գրեթե չեն պատահում։ Մ. Աբեղյանը բերում է հարկադրական ապառնու համար իր կազմած օրինակները. Նա այժմ գնալիս պիտի լինի։ Նա այժմ տեղ հասնելիս պիտի լինի։ Նա վաղն այս ժամանակ տեղ հասնելիս պետք է լինի։ Այս օրինակները նշում են, որ հարկադրականի երկրորդական բաղադրյալ ապառնին ցույց է տալիս ներկայում և ապագայում կատարվող տևական, հարկադրական մի գործողություն՝ ենթադրական նուրբ երանգով։ Մեր երկար որոնումները՝ գրականության մեջ գտնելու հարկադրական եղանակի երկրորդական բաղադրյալ ձևեր, չհաջողվեցին։ Սակայն բերված օրինակները, ինչպես նկատում ենք, խորթ չեն մեր լեզվական ըմբռնմանը, մանավանդ որ կա հարկադրականի ապառնի անցյալի երկրորդական բաղադրյալ ձևը։ Համեմատի՛ր. Կցեց ընդհատված խոսակցությունը, որի նյութն յուր կարծիքով պետք է հետաքրքրում լիներ Կամսարյանին (ՄԱՇ, 257)։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 333. Անկատար դերբայով և լինել բայով երկրորդական բաղադրյալ հրամայականի ձևեր, այսինքն՝ գնալիս եղի՛ր, գնում եղի՛ր գրականության մեջ չեն հանդիպում։

բ) ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՈՎ ԵՎ ԼԻՆԵԼ ԲԱՅՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 334. Հարակատար դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակները ավելի շատ են գործածվում, քան անկատար դերբայներով կազմվածները։ Այս երկու դերբայների տարբե-

րությունը երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմության մեջ այն է, որ անկատար դերբայը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ սկսվել է և դեռևս չի վերջացել, ընթացքի մեջ է. օրինակ՝ ուզելիս է լինում։ Ուզելիս *գործողությունը նույնիսկ սկսված կարող է լինել, սակայն մինչև խոսելու վայրկյանը կամ այլ ժամանակակետ տևում է, դարձյալ առանց վերջանալու։ Իսկ հարակատար դերբայը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ կատարված և վերջացած է, բայց հետևանքը հարատևում է մինչև այն պահը, որին վերաբերում է հաղորդումը. օրինակ՝* Ուզած է լինում։ Ես որ խոսում եմ, դու ուզելիս ես լինում։ Ես որ խոսում եմ, դու ուզած ես լինում։ *Առաջին դեպքում գործողությունը դեռևս շարունակվում է, իսկ երկրորդ դեպքում՝ վերջացած է, բայց հետևանքը դեռևս մնում է։*

ՀԱՐԱԿԱՏԱՐ

§ *335. Հարակատարի ներկան ամենից առաջ ցույց է տալիս այնպիսի մի գործողություն, որ անցյալում կատարվել է, բայց հետևանքը հարատևում է մինչև մի այնպիսի ժամանակ, որին վերաբերում է հաղորդումը։ Այսպիսի հարակատարը կիրառվում է այն դեպքում, երբ խոսողը կատարված եղելությունների իրական լինելը ստույգ չգիտե, այլ ասում է հենց այնպես, լսելով։ Ինքը գործողության կատարման ժամանակ ներկա չի գտնվել։ Այս ժամանակը ամենից առաջ կիրառվում է հեքիաթների, ժողովրդական ոճով մշակված գրվածքների մեջ, որտեղ տվյալ դեպքում կարևորը ստույգ լինելը չէ։ Պետք է նկատել, որ այս ժամանակի համար տևական կրկնվող գործողությունները պարտադիր չեն։ Դա ոչ թե կախված է ստորոգյալի կազմությունից, այլ յուրաքանչյուր բայի բնույթից, նյութից։ Օրինակ՝* Դու մի ասիլ էս աղջկան *ուզած է լինում* հարևան երկրի թագավորը *(Թ., III, 195)*։ էդ ժամանակ *գնացած են լինում* ամառը ման գալու *(Նույն տեղում, 357)*։ Ամեն բան կատարվում է այնպես, ինչպես *գուշակած է լինում* անլեզու աղջըկանը արհեստական լեզու տվող կախարդը *(Նույն տեղում, 257)*։ Տղան *հասած է լինում* արդեն, իսկ աղջիկը դեռ բարուրումն է լինում *(ՂԱԵ, 329)*։ *Ստիպված է լինում* մինչև լույս նրան ման ածել սենյակից սենյակ *(Շիրվ., II, 491)*։

§ *336. Ասացինք, որ տևական, սովորութային, կրկնվող գործողությունը կախված է նյութից, այսինքն՝ նախադասության բո-*

վանդակությունից, տվյալ բայի բնույթից. օրինակ՝ Անսվաղ մարդու լեզուն ավելի սպիտակ գույն է ունենում. նրա մակերևույթի վրա ճերմակ փառ է *նստած լինում (ՐԿ, 33)։* Երբ գետնի վրա մի երկայն գերան կա ընկած... մենք վազում ենք նրա վրայով ծայրեծայր, բայց երբ ընկած է մի մեծ գետի վրա իբրև մի կամուրջ, այն ժամանակ էլ չենք կարողանում անցնել նրա վրայով, մեր ծնկները դողում են... Երկյուղը մեզ *փոխած է լինում (ՂԱԵ, 355)։*

ԱՆՑՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

§ *337. Անցյալի հարակատարը ցույց է տալիս անցյալում կատարված՝ սովորույթ դարձած, կրկնվող, տևական մի գործողություն, որ տևել է մինչև անցյալի մի որևէ ժամանակակետ։ Այս ձևը հաճախ կիրառվում է սովորական անցյալի անկատարի փոխարեն. տարբերությունն այն է, որ հարակատարի երկրորդական ձևի մեջ սովորութային, տևական, կրկնվող գործողությունն է ընդգծվում. օրինակ՝* Թաղի ծերունիները *հավաքված էին լինում* եկեղեցու խուցի մեջ *(ՐԿ, 30)։* Վարժապետը մի անկյունում *նստած էր լինում* ուրպես fուրմը իր խորին սրբազանության մեջ *(նույն տեղում, 32)։* Վարժապետը սատանայի պես իմանում էր, երբ աշակերտը մի բան *կերած էր լինում (նույն տեղում, 33)։* Ամեն անգամ, nr նրա մոտ էի գնում, նա տնից *դուրս եկած էր լինում.* իրգործը *վերջացրած էր լինում.* Ամեն տարի, աշնան ժամանակը, երբ մենք արդեն *լվացած, մաքրած էինք լինում* մեր ոչխարները, նա գալիս էր մեզ մոտ *(ՄԱՇ, 249)։*

ԱՆՑՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

§ *338. Հարակատարի վաղակատարը ցույց է տալիս անցյալում տևական, կրկնվող, սովորութային կամ պարզապես միանգամյա այնպիսի գործողություն, որ խոսողի խոսելու պահից առաջ է կատարվել՝ թողնելով մնայուն հետևանք մինչև անցյալում եղած մի ժամանակակետ. մի գործողություն, սակայն, որի կատարման մասին խոսողը խոսում է ոչ իբրև ստույգ, իրեն հայտնի իրողություն, այլ ուրիշից լսած, իբրև ավանդություն ասված, իմացած տեղեկություն. օրինակ՝* Իր մութ ու տարտարոսական շինություններով ահագին տարածություն է *եղել բռնած (Թ., V, 269)։* Արդյոք մի սոխակի երգ *լսած չի եղել* պարսիկ աշխարհի առաջին մեծ

երաժիշտը *(Իս., III, 171)*։ Ձեզ էլ շատ սաստիկ *փնտրած են եղել (Շեքս., I, 123)*։ Հավաքված է եղել *(Չճ, 259)*։ Էրզրումի վալին է նվեր *տված եղել (Իս., III, 291)*։ Դու մի ասիլ գելը մոտիկ վանդակում *պառկած է եղել (Թ., III, 115)*։ Իբրև թե մի անգամ նրանց մեջ խոլերա *ընկած է եղել (ՐԿ, 222)*։ Ասում են էդ յոթը տեսակից էլ նետո, տարբեր կլիմաների, տարբեր կուլտուրաների ու խառնուրդների ազդեցության տակ *առաջ են եկել եղած* բազմազան տեսակները *(Թ., III, 125)*։ Մի զոհ, որ ի ծննդենե նշանակված է *եղել* բոլորովին այլ խորհրդով *(Թ., V, 151)*։ Ինքն էլ *պատրաստված է եղել* գնալու յուր քաղաքը *(ԽԳճ, 471)*։ Նոր-Նախիջևանի գավառային ուսումնարանը դիմած է եղել քաղաքի հոգևոր կառավարությանը *(Աշ. Հով., Նալբ. և նրա ժամանակը, I, 53)*։

ՀԱՐԱԿԱՏԱՐԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ

§ *339. Հարակատարի վաղակատար անցյալը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ ավելի վաղ է կատարվել, քան որ ցույց է տալիս հարակատարի վաղակատարը, և գործողության հետևանքը հարատևում է մինչև ավելի վաղ կատարված մի անցյալ ժամանակակետ։ Սա քիչ է գործածական. սրա փոխարեն կիրառվում է սովորական վաղակատարի անցյալը, որից առաջինը իր հետևանքով է տարբերվում. օրինակ՝* Երբեք իր առջև *դրված չէր եղել* այդպիսի ծանր առեղծվածի լուծումը *(ԴԴՎ, 219)*։ Ինքը *վճռած էր եղել* երբեք հրապարակ չհանել *(ԴԴ, II, 216)*։

ՀԱՐԱԿԱՏԱՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

§ *340. Հարակատարի հրամայականը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ տեական է իր հետևանքով. այսինքն՝ երբ ասում ենք* իմացիր, *պարզապես հրամայում ենք, որ դիմացինը մի բան իմանա, իսկ երբ ասվում է* իմացած եղիր, *նշանակում է՝ այդպես իմացած մնա. կարծեք կարևորությունը ոչ թե տրվում է հրամանին, այլ հետևանքին, տևականությանը, սա մի տեսակ նախազգուշացում, նախապատրաստություն է գալիք մի երևույթի հանդեպ և ոչ թե վայրկենական գործողություն, որ հատուկ է հրամայականին. օրինակ՝*

Բայց *իմացած եղիր*, եթե երեք օրեն վրա ետ չեկար, էլ ինձ չես տեսնի *(Թ., III, 346)*։ Ճակնդեղի կոնյակի անունը Մարյա պիտի դնեմ, Մարյա Դեմչենկոյի անունով, և *հավատացած եղիր*՝

խմիչք կլինի... *(Քոչար, 657)*։ Այժմ *իմացած եղիր*, որ այս երեկո ժամը 7-ին Մարյա Մարկովնայի մոտ նշանակած ենք մեր երեկոն *(Թ., V, 163)*։ Թե որ ես մեկ բան եմ ասում *(ասըմ)*, լավ *իմացած եղիր*, որ նախ չեմ ասում *(ասիլ) (ՌՊՆ, 463)*։

ՀԱՐԱԿԱՏԱՐԻ ԸՂՁԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

§ *341. Հարակատարի ըղձական ապառնին ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որ ցանկալի է՝ կատարվի հետագայում՝ ընդհանուր, սովորության, տևական բնույթով և հետևանքով. օրինակ՝* «Ընկերիս» սազում է, որ մի սիրած կնոջ *ասված լինի* *(Թ., V, 276)*։ *Ինչպես կարելի* է, որ այդպիսի գեղեցիկ մարմնու մեջ այդպիսի կոշտ հոգի *լինի դրած (ՌՊՆ, 400)*։ *Ուզում եմ ասած լինեմ...* ուրիշ բան է այդ նույն քաղաքացիների համար Առաքելոց եկեղեցին *(ՁԸՆ, 302)*։ *Անիծված լինի* այն բախտը, որ քեզ մավրին վիճակեց *(Շեքս., I, 169)*։

Այս օրինակներում երկրորդական բաղադրյալ ժամանակները կարող են փոխարինվել պարզ ըղձական ապառնիով. ասված լինի — ասվի, լինի դրած — դրվի, *միայն տևականությունը և հետևանքն են պակասում վերջին ձևերի մեջ։*

§ *342. Հարակատարի ըղձական ապառնին ցույց է տալիս անցյալում կատարված այնպիսի գործողություն, որի կատարման վրա խոսողը կասկածում է, ենթադրում է, որ տեղի է ունեցել, կամ անհնար է գտնում այդ. օրինակ՝* Չգիտեմ սակայն, թե ես այս գիշեր մի վատ *ասած* կամ *արած լինիմ* *(Շեքս., I, 149)*։ Ինչպես անեն նրանք, որ այդպիսի միտք նայտնեն, որ *հայտնած չլինի* ոչ մի բանաստեղծ *(Թ., V, 158)*։ *Լսած լինիմ*, ասես թե, երազիս մեջ մանկական *(Իս., I, 245)*։ Կարծես թե օրմին *լինի են* ժայռի գլխին *կանգնած (Թ., V, 268)*։ *Այս բոլոր ձևերը կարող էին արտահայտվել սովորական վաղակատարով, միայն կասկածը, ենթադրությունը, հետևանքային արդյունքը այսպես որոշակի չէր դրսևորվի։*

§ *343. Հնարավոր է, որ հարակատարի ըղձականը և՛ անցյալ գործողություն հասկացվի, և՛ ապառնի. օրինակ՝* Ով ինչպես ուզում է *գրած լինի*, ես էլ ինձպես եմ գրելու *(Թ., V, 158)*։ Այստեղ *գրած լինի* կարող է հասկացվել՝ թե ով ինչպես ուզում է, *գրի*, և *թե արդեն գրել է, բայց հետևանքը շարունակվում է*։ *Թող* դու էլ *աշխատած լինես* այս տան վրա *(ՊՊ, III, 7)*։ *Այսինքն՝ թող համարվի, որ դու էլ ես աշխատել այս տան վրա։*

§ *344. Հարակատարի ըղձական անցյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի նկատմամբ ապառնի հետևանքային գործողություն, որը խոսողի համար ցանկալի է. մեծ մասամբ այդպիսի գործողությունը կատարված չի լինում, և խոսողը անցյալի համար ցանկանում է, որ այդ գործողությունը տեղի ունեցած կամ չունեցած լիներ. օրինակ՝* Երանի երբեք *ծնված չլինեիր (Շեքս., I, 187)։*

§ *345. Մեծ մասամբ կիրառվում է պայմանի երկրորդական նախադասության մեջ և ցույց է տալիս անցյալում կատարված կամ չկատարված, բայց մինչև որևէ անցյալ ժամանակ հարատևված մի գործողություն, որը պայման է դառնում մի այլ գործողության համար. օրինակ՝* Եթե ստիպված չլինեի, *նույնիսկ չէի էլ տալիլ (Թ., V, 218)։* Իբրև թե չէր ասիլ, եթե *սիրած լիներ (նույն տեղում, 276)։* Իսկ քույրը խո այնքան հիմար չէր, որ ծնողներին *պատմած լիներ (Նար., IV, 111)։ Այս նախադասությունը հետևանքային է։* Եթե *լսած լինեին* ամենեքյան նոքա... *(ՄՆ, 290)։* Եթե զարեջուր *չլիներ խմած,* այստեղ չէր լինի այսքան պինդ քնած *(Շեքս., 64)։* Եթե ինձ *վիճակված չլիներ... (Նար., IV, 112)։* Եթե *տեսած լինի*, ինչ ասել կուզե, որ ես այստեղ չէի լինի *(ՌՊԵ, 368)։* Մինչև որ այդ տղան *խնդրած աղաչած չլիներ*, նա չէր գալ *(Մուր., II, 351)։* Խոսելիս դժվար է նրան հասկանալը, եթե *սովորած չլիներ* նորա արտասանությանը *(ՌՊԵ, 328)։* Եթե ես եգիպտ *տեսած չլինեի*, բավական էր այդ մարդու դեմքը հետազոտել, նրա խոսակցությունը լսել և եգիպտի մասին կատարյալ գաղափար կազմել *(ՐԿ, 419)։* Եթե տաք *չլինեին փաթաթած*, երկու րոպեում սառումփետանում էին *(ՌՊԵ, 315)։* Եթե Ալթմագովը հյուրանոցումը հանդիպած անգլիացի կնոջ խոսքերի վրա լավ ուշադրություն *դարձրած լիներ*, գուցե հոր տված խրատներեն կհրաժարվեր *(ՌՊԵ, 399)։*

§ *346. Հարակատարի ըղձական անցյալը ցույց է տալիս կրկնվող տևական, սովորութային մի գործողություն, որ ապառնի է մի անցյալ ժամանակի նկատմամբ և կիրառվում է մի շարք երկրորդական նախադասությունների մեջ. օրինակ՝* Օր չէր անցնում, որ նա *հրավիրված չլիներ (ՌՊԵ, 401)։* Բարոն ֆոն–Մյունխհաուզենի բոլոր պատմությունների տակ կստորագրեի անունս, իբր թե այդ ամեն ստապատիր արկածքը իմ գլխովս *լինեին անցած (ՌՊԵ, 371)։* Նոցա մտքեն չէր գալիս, որ այդպիսի ցուրտ եղանակ

նոցա ժամանակները *պատահած լինեն (նույն տեղում, 315)*։ Այդ նրա համար էր, գուցե աշակերտները արձակուրդի ժամանակ իրենց տներում կամ դրսում որևիցե անկարգություն *արած լինեին (ՐԿ, 36)*։ Շատ պիտի ուզեի, որ այս բանը *պատահած չլիներ (Շեքս., I, 152)*։ Սակայն Դարյա Կիրիլովնան, որքան էլ *բռնադատված լիներ* աղջկանից, այնքան էլ անհեռատես կին չէր *(Նար., I, 437)*։ Որքան էլ ընկերների հետ ունեցած իրենց զործունեությունը *ապարդյուն և հուսահատական եղած լիներ*, այսուամենայնիվ նա դեռ չէ կամենում: Այնպես զիտես, թե ամեն մեկը մեկ սաղ ոչխար *ըլեր դրած (ԽԱ, III, 12)*։ Քար չկար, *որ արինաթաթախ չըլեր էլած (նույն տեղում, 89)*։

ՀԱՐԱԿԱՏԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

§ 347. Հարակատարի պայմանական ապառնին արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ ենթադրվում է, թե ապագայում պետք է կատարվի իբրև մի այլ գործողության հետևանք կամ դրա հարաբերությամբ, որն արտահայտվում է սովորաբար երկրորդական նախադասությամբ։ Սովորական պայմանական ապառնուց տարբերվում է իր տևականությամբ և նրանով, որ ապառնի ժամանակի համար այն դիտվում է իբրև արդեն սկսված գործողություն. օրինակ՝ Ով որ բակս գողանա, բիչ բան *գողացած կլինի (Շեքս., I, 162)*։ Երբ մենք բառասուն տարեկան կլինենք, այս նովիտը *ծածկված կլինի* միչուրինյան այգիներով *(ՎԱՍԱ, 122)*։ Այդ ես կասեմ այնպես, որ ես ձեզ կանխելով՝ Դուք ոչ մի զաղտնիք *հայտնած չեք լինի (Շեքս., I, 40)*։ Ինձ սիրածդ գոչիր, և ես *կլինեմ* նորից *մկրտված (նույն տեղում, 434)*։ Երբ ասեմ, թե կսիրեմ, *խաբած կլինիմ (ՈՊԵ, 469)*։

§ 348. Հարակատարի պայմանական ապառնին ցույց է տալիս այնպիսի մի գործողություն, որ ենթադրվում է, թե կատարվել է անցյալում և հարատևում է մինչև խոսելու վայրկյանը։ Այսպիսի ապառնին ապառնի է մի անցյալ ժամանակի նկատմամբ՝ մինչև ներկան տևող հետևանքով։ Այսպիսի պայմանական ապառնին կարելի է մինչև անգամ սովորական վաղակատարով արտահայտել, բայց վերջինս չի ունենա պայմանի և մինչև ներկան տևող հետևանքի հանգամանքները. օրինակ՝ Ես կարծում էի, թե դու կես ճամփումը *սառած կլինիս (ՈՊԵ, 340)*։ Չէր սպասում, թե *եկած կլինեմ (ԱՁ, III, 55)*։ *Եկած կլինի*, որ խաբար տանի *(Թ., II, 34)*։ Բորժոմից ուղարկած պոստ-կարտերն անշուշտ *ստացած կլինես (Թ., V, 221)*։ Դուք անպատճառ այստեղ *կլինեք փախած (Նար., I, 478)*։

Ամենևին չէր կարծում, թե եկան այնքան հիմար *կլինի գտնված*, որ իր խոստովանությունը *հայտնած կլինի* ծնողներին *(Նար., III. 343)*։ Բնությունը շատ հրաշալի պատկերներ է ստեղծում, բայց բնության ծանոթ մարդը այսպիսի հրաշք չի *լինի տեսած (Թ., IV. 11)*։

ՀԱՐԱԿԱՏԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ 349. *Հարակատարի պայմանական անցյալը արտահայտում է անցյալի նկատմամբ մի ենթադրելի ապառնի գործողություն, որ եթե կատարվեր, տևական պետք է լիներ մինչև մի անցյալ ժամանակ. օրինակ՝* Երանի Կարոյի հետ փախած լինեիր, հիմա մի օրինավոր մարդ *դարձած կլինեիր (ՐԿ, 238)*։ *Սա կարելի կլիներ սովորական վաղակատարի անցյալով արտահայտել, բայց այս դեպքում կվերանային տևականությունը և ենթադրական, պայմանական հանգամանքները*։ Ես շտապում էի շատ շուշանով, մտածելով՝ գույն նոր եկած կլինեն *(ՐԿ, 232)*։ Մեր պարոնն էլ նույն փայլուն նույսերը աչքի տակ ունենալով՝ ճանկը *ձգած կլիներ* մի քանի թուման և վազեվազ եկած հասած այստեղ *(ՈՊԵ, 328)*։ Եթե հսկիչները 20 րոպե ևս ուշանային, Բաղդասարը *փախած կլիներ (ՁԸԵ, 439)*։ Կենդանի ժամանակները դրանք հոգի ասած բանը հազիվ թե *ունեցած լինեին (ՈՊԵ, 622)*։ Եթե Սոֆիան սովորեցներ, հազար անգամ ինձ *սաած կլիներ (նույն տեղում, 471)*։ Այժմ ես սկսա կամացկամաց հասկանալու, թե ինձ տաք ջրից էսենտուկ ով *բերած կլիներ (նույն տեղում)*։ Հրացանս անշախմախ է, թե չէ եկույթիս Եղունգի չափ արճիճը հիմի վաղուց սիրտդ *խաշած կլիներ (ՊՊ. II, 500)*։ Վաղուց *կլինեի* ձեզ նամակ *գրած*, բայց ինչ որ եկել եմ, ոչ հանգստություն եմ ունեցած և ոչ ժամանակ *(Թ., V, 169)*։ Դուք մեծ շնորհ *արած կլինեիք*, եթե հենց այս րոպեիս թույլ տայիք ինձ գալ *(Րև, 95)*։

ՀԱՐԱԿԱՏԱՐԻ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

§ 350. *Հարակատարի հարկադրական ապառնին արտահայտում է մի այնպիսի գործողություն, որի կատարումը խոսողը հարկադիր և անհրաժեշտ է համարում անցյալի համար, որ և հարկադրաբար տևում է մինչև խոսելու վայրկյանը։ Հարկադրականի մեջ արտահայտվում է նաև ենթադրություն. օրինակ՝ Պետք է* բնության բանվորները նրանց *ստեղծած լինեն (Շեքս., I, 54)*։ Հուսով

եմ, ով կատարած *պետք է լինի* իր ցանկությունը *(ՐԿ, 247)*։ Նա պետք է *մնացած լինի* այստեղ *(Քոչար, 666)*։ Պետք է Կիպրոս լուր *եկած լինի (Շեքս., I, 123)*։ Բայց պետք է Կասսիոն այն փախած մարդուց այնպիսի սաստիկ վիրավորանք *ստացած լինի (նույն տեղում, 150)*։ Էս տեղ ոսկին ու արծաթը աղբի հետ պետք է խառն *ընկած ըլի (ԽԱ, III, 158)*։ *Պետք է* արդար էլ *լինի եղած*, որ սառված միայն նրան է ազատել *(ՂԱՆ, 209)*։ Մենք էլ *պիտի ստիպված լինենք* ավետարանը թողած՝ Ղուրանի պատվերը կատարելու *(ՊՊ, II, 50)*։ *Այս օրինակում հարակատարի հարկադրականը ապառնի է. այսինքն՝* մենք էլ պետք է ստիպվենք: Այժմ տաք ջուրից *դուրս ելած պիտի լինի (ԲՊՆ, 571)*. Կարծում են, որ գող *պիտի մտած լինի* տուն *(ՂԱՆ, 329)*։

§ 351. *Հարակատարի հարկադրական անցյալը արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ խոսողի կողմից համարվում է հարկադիր և անհրաժեշտ, որ անցյալում կատարված լինի և տևի մինչև անցյալ որևէ ժամանակ. օրինակ՝* Որը մեր անջատման գործում անշուշտ ինչ դեր *չպիտի լիներ խաղացած (Նար., IV, 95)*։ Իր փեսացուն այդպիսի հիմարություններ շատ *պիտի լիներ արած (Նար., II, 436)*։ Մեկն ու մեկը *գողացած պիտի լիներ (ԲՊՆ, 541)*։ Ով *վարձած պիտի լիներ* այս սենյակը և ով *պիտի ժողոված և* այստեղ *բերած լիներ* իմ առարկաները *(նույն տեղում, 471)*։

Ծանոթություն. 1. Այն երկրորդական բաղադրյալ ժամանակները, որ կազմվում են անկատար և հարակատար դերբայներով և այստեղ չեն բերված, բայց կան հայերենի խոնարհմանը նվիրված գրքերում աղյուսակների ձևով, կա՛մ հազվադեպ են կիրառվում և կա՛մ չեն կիրառվում։ Մենք մեջ չենք բերել, որովհետև մեր բոլոր որոնումները՝ գտնել համապատասխան օրինակներ, առայժմ արդյունքի չեն հասցնում։

Ծանոթություն. 2. Երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմության մեջ հարակատար դերբայի փոխարեն վաղակատար դերբայ կիրառելը բարբառային է։ Համեմատի՛ր. Բայց, ախ, երանի թե հավատը էնքան *չըլեր* մեր Աղասուն *մոլորացրել* ու վիշապն ընկել էր ձեռքը, տար վարթարաֆ աներ *(ԽԱ, III, 106)*։ *Չեն ըլիլ պակասցրել*, իրանց գուքն *(ԳԱՍՆ)*։ Անկարելի է, որ սրանք *չըլին մուծել* պարսից մեջ իրանցմեն հնարած եղանակներն ու ձևերն *(նույն տեղում)*։ Թեպետ անկարելի է, որ էս տաս տարվա մեջ *չըլի ասել* հայե-

րեն գոնե մեկ հատ խաղ *(նույն տեղում)*։ Էս հաշվով մեր երգիչն իր մահվան օրն *պիտի էլեր ըլի* 83 տարեկան *(նույն տեղում)*։ Թե մի էրկու տարի էլ ետ դնենք ու ընդունենք 1770-ն, յայնժամ մեր երգիչն *կրոնավորելիս էլել պիտի ըլի* 58 տարեկան *(նույն տեղում, ԺԱ)*։

գ) ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 352. Ապառնի դերբայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակների համար համապատասխան օրինակները մեր գրական լեզվի մեջ հազվագյուտ են։ Այդպիսի օրինակները մասամբ անցել են խոսակցական լեզվից, մասամբ քերականության գրքերում դրանց մասին հիշատակվել է խոսակցական լեզվի ազդեցությամբ։ Մենք մեր գրական լեզվի համար առայժմ չունենք այնպիսի ուսումնասիրություններ, որտեղ տարբեր մարդիկ տարբեր տեղերից հավաքած լինեին այդ դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակները՝ թեկուզ իբրև նյութ։ Այդ տեսանկյունով Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն» գիրքը եզակի մի երևույթ է։ Սակայն հենց այս գրքում բերված օրինակները՝ ապառնի դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակների համար գերակշիռ մասով հենց իրեն հեղինակի կազմած օրինակներն են, որոնք շատ անգամ մեզ հարազատ են թվում, որովհետև Արարատյան բարբառում և բանավոր խոսքի մեջ շատ են տարածված այդ կարգի կազմությունները։ Մեր տարիների որոնումները հարկավոր արդյունքներ չտվին։ Երկրորդական բաղադրյալ ժամանակների համար հավաքված ամբողջ նյութից, որ մենք վերևում բերինք, ապառնի դերբայով միայն երկու օրինակ գտնվեց։ Մենք այստեղ չենք պնդում, թե ուրիշ օրինակներ չեն կարող գտնվել, բայց հենց այն հանգամանքը, որ դրանք շատ հազվագյուտ են, ցույց է տալիս, որ այն երկրորդական բաղադրյալ ժամանակները, որոնք կազմվում են ապառնի դերբայով, մեր գրական լեզվում տարածում չեն գտել, չեն զարգացել և այժմ դրանք արդեն վերացած պետք է համարել։ Եղած օրինակները գտնվում են Պռոշյանի, Պատկանյանի, Աբովյանի, Մուրացանի երկերում։ Մենք այստեղ այդ օրինակները բերում ենք իբրև մեր գրական լեզվի մեջ անցյալ շրջանում սկսված, բայց բոլորովին չզարգացած լեզվական մի երևույթի արտահայտություն, որ պատմական նշանակություն ունի արդեն։

§ *353. Ապառնի ներկայի համար Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ բերում է հետևյալ օրինակները.*

Ամեն անգամ, որ նրա մոտ եմ գնում, նա *պարապելու է լինում*։ Նա, որ մեզ մոտ *գալու է լինում*, առաջուց իմաց է տալիս։ Լինում են չեն լինում, մի մարդ մի կնիկ։ Սրանք ունենում են մի մինուճար տղա, երբ հայրը *մեռնելու է լինում*, կնկանն ասում է *(ՄԱՇ, 239)*։ Երբ որ *վեր կենալու ենք լինում*, նորից փաքաքվում է պառավիս *(ՌՊԵ, 608)*։ Երև միայն *պսակվելու լինիս (նույն տեղում, 373)*։

ԱՊԱՌՆԻ ԱՆՑՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ

§ *354*. Ամեն անգամ, որ նրա մոտ էի գնում, նա տնից *դուրս գալու էր լինում*։ Երբ նա մեզ մոտ *գալու էր լինում*, միշտ առաջուց իմաց էր տալիս *(ՄԱՇ, 240)*։

ԱՊԱՌՆԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԵՎ ԱՊԱՌՆԻ ՎԱՂԱԿԱՏԱՐԻ ԱՆՑՅԱԼ

§ *355*. Ամեն անգամ, որ նա մեզ մոտ *գալու է եղել*, առաջուց իմաց է տվել *(ՄԱՇ, 240)*։ Չէ որ այն օրը, որ դու նրան տեսնելու էիր գնացել, նա արդեն ճանապարհ *ընկնելու էր եղել*։

ԱՊԱՌՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՌՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ

§ *356*. Նա այժմ Երևան *գալու կլինի*։ Երեկ ժամի 5-ին նա *գնալու կլիներ*։

ԱՊԱՌՆԻ ԸՂՁԱԿԱՆ ԵՎ ԸՂՁԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ

§ *357*. Մեր գյուղի վարքը դու լավ գիտես, որ *տալու* չլինեին, հաց չէին ուտեցնիլ *(Պռոշյան)*։ Քույր Աննան պատվիրեց ձեզ հանձնել ծրարը, եթե երբևիցե *գալու լինեիք* մեր գյուղը *(Մուր, II, 142)*։ Էգուց, որ նա ինձ մոտ *գալու լինի*, ինձ առաջուց իմաց արա *(ՄԱՇ, 268)*։

Ծանոթություն. Ինչպես երևում է օրինակներից, ըղձականը ավելի կիրառական է։ Համեմատի՛ր նաև՝ Գլխու էլ, որ *շինելու լինես*, տես, պատահական վարպետի չկանչես *(ՌՊԵ, 630)*։ *Այս կազմությունները բանավոր խոսքի մեջ շատ են տարածված, բայց գրական լեզվում սակավ են հանդիպում։*

դ) ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ՈՒՆԵՄ ԵՎ ԿԱՄ ԲԱՅԵՐՈՎ

§ *358.* Կամ *և* ունեմ *բայերը հարակատար և ավելի սակավ վաղակատար դերբայների հետ կազմում են բաղադրյալ ժամանակներ։ Հարակատար դերբայի հետ* կամ *բայը կիրառվում է միայն ներկա և անցյալի անկատար ժամանակներով՝ հրամայականով և ըղձականով։ Ինչպես ասվել է (§ 209), հարակատարը հայերենում ունի սահմանափակ կիրառություն, ուստի* կամ *բայով լրացվում է հարակատարը։ Առանձին տարբերություն* եմ *և* կամ *բայերով հարակատարների մեջ գրեթե չկա.* կամ *բայով կազմված հարակատարի մեջ տևականության ըմբռնումը ավելի է շեշտված. օրինակ՝* Դուք *նկատած կաք (Նար., IV, 17)։* Դու Լենինի անունը *լսած կաս (Բակունց, «Մուրոյի զրույցը»)։* Աղավնակերպ *կամ ծեբացած (Թ., II, 81)։* Թվում է հար, թե անցյալըս ու ապագաս *տեսած կամ (Թ., I, 545)։* Վաղո՜ւց, վաղո՜ւց *կար ասված,* Բայց կյանք տվի ես բառին *(Նույն տեղում, 537)։* Ոչ մի թթու խոսք քեզ *ասած չկա (Շեքս., II, 85)։* Սակայն *լսած կամ (Նույն տեղում, 114)։ Հավատացած կացեք,* որ ձեր կյանքով պարտական եք ինձ *(Նար., I, 445)։ Ապրած կենաս,* մեր տեր իշխան *(Թ., I, 313)։* Բնավ հաց *խնդրած չկա (Շեքս., II, 115)։ Լսած կաք,* երբ շարականները երգում են անհամ եղանակով *(ՌՊԵ, 500)։* Գալիս տեսնում են, որ շատ ուտելու բաներ *կան պակասած (ՂԱ, 329)։* Երբ գետնի վրա մի երկայն գերան *կա ընկած,* մենք վազում ենք նրա վրայով *(ՂԱԵ, 355)։*

§ *359. Հարակատար դերբայով և* ունեմ *բայով նույնպես ունենք երկրորդական բաղադրյալ ժամանակներ։* Կամ *և* ունեմ *բայով կազմված ձևերի մեջ տարբերությունները աննշան են։* Ունեմ *բայով կազմվում են միայն ներգործական ձևերը. օրինակ՝* Այդ մասին ես խոսք *չունիմ ասած (Թ., V, 276)։* Մի այդպիսի բան *ունի ասած (Նույն տեղում, 277)։* Այս նվազ ծաղկի դալար բաժակում *հաստատած ունի* թույնը իր բույնը, դեղը իր տեղը *(Շեքս., I, 439)։* Ճարեր ունի քաղած-քամած ամեն հանքից ու տունկից *(Թ., II, 154)։* Որքան էլ հույսը *կտրած ունենար* ուրիշ փեսացուներ ունենալուց *(Նար., I, 437)։* Կարծես մի աներևույթ զորություն ինձ պինդ *բռնած ուներ (ՐԿ, 334)։* Գլուխներին *դրած ունեին* արախչինի նման բրդյա թասակ *(Նույն տեղում, 341)։* Ինչքան հարկ, որ այս Դենշապուհի օրով եմ ընդունել, քսան տարի *հանած չունեմ (ԴԴՎ, 15)։*

Այդ բոլորի փոխարեն դեռ մի որևէ փող *չուներ վճարած (Մուր., II, 373)։* Վարժապետը միայն իր տակին *փռած ուներ* այծի մորթի *(ՐԿ. 31)։*

§ 360. Շատ հաճախակի կիրառություն ունի վաղակատար դերբայը կամ և ունեմ *բայերի հետ, որ արտահայտում է մի այնպիսի գործողություն, որ անցյալում տեղի է ունեցել և դրա մասին խոսողը պատահաբար, կողմնակի կերպով իմացել է ուրիշից և ասում է հիմնված ուրիշի ասածի վրա. օրինակ՝* Իմ մեջ հանկարծ բռնկվող ինչ-որ կրակ *կա եղել (Նար., VI, 56)։* Ինքն ամենևին այդ գործից տեղեկություն *չունի եղել (Ր., II, 350)։* Ինչ կա եղել *(նույն տեղում, 236)։ Համեմատի՛ր նաև հետևյալ ձևերը.* Անհաստատ է մեր կարծիքն՝ իբր թե բոլոր Հայաստանի հայերն մեկ ժամանակ *խոսում ըլին ելել* մեր հինգերորդ դարու թարգմանիչներու լեզվով *(ՌՊԵ, 686)։* Թե եղել է և ժամանակ, որ ամեն հայերն էլ *խոսած ըլին եղել մեկ լեզվով (նույն տեղում)։ Ուրիշի ասածն է, իսկ ինքը չի հավատում, չի ընդունում։*

§ 361. Մշտական ներկայի նշանակությամբ անորոշ դերբայի հետ կիրառվում է նաև ունել *(ունենալ) բայը. օրինակ՝* Իմ տիկինը որպես կախարդ *գնալ* և *գալ կունենա* նրա մոտ *(Ր., I, 79)։* Նա գնալ գալ ունի *(գնում-գալիս է)։*

ե) ՏԱԼ ԲԱՅՈՎ ԿԱԶՄՎՈՂ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԻԲՐԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 362. Տալ *բայի դիմավոր ձևերը որևէ բայի անորոշ դերբայի հետ կազմում են պատճառական ձևեր, որոնք ցույց են տալիս, թե գործողությունը ենթական կատարում է մի ուրիշ անձի դրդումով, հարկադրանքով, թելադրությամբ և այլն։ Այս բայերը պատճառական* ացն, եցն, ցն *ածանցավոր բայերից տարբերվում են նրանով, որ գերազանցապես իսկական պատճառական են, մինչդեռ վերջինները ներգործական են. օրինակ՝* Նրա տունը *կողպել է տալիս,* նրա վիզը *կտրել է տալիս,* նրա կինը և աղջիկները *խայտառակել է տալիս (Ր., II, 336)։* Գնա, քիչ հետո քեզ *կանչել կտամ (Շեքս., I, 184)։* Դու էլ Կասսիոյին *վռնդել տվիր (նույն տեղում, 154)։* Դժվար էր այդ օրերին միանգամից *ճանաչել տալ* իրեն *(ՀՀԵ, 332)։* Նա իր մորը *լվանալ էր տալիս (ՐԿ, 427)։* Շուտով *պատրաստել տվեց* մեզ համար պատվական նախաճաշիկ *(նույն տեղում, 349)։* Եկել են մեկ եկամտաբեր պաշտոնի *դնել տանք (ՄԽՀ, I,*

367)։ Ես քեզ ճարմար աշխատանքի ճշանակել կտամ *(Նույն տե-ղում, 150)*։

§ *363*. Տալ *բայով պատճառական ձևերն ունեն նաև ներգոր-ծական նշանակություն. այսինքն՝ ենթակայից ուղղակի գործողու-թյունը անցնում է խնդրի վրա՝* ացն, եցն, ցն *ածանցավոր բայերի նշանակությամբ. օրինակ՝* Ասլանը մեզ սպասել տվեց *(ՐԿ, 329)*։ Ա՜խ, եվա՛, եվա՛, այս ինչեր ես սպասեցնել տալիս ինձ, այս ինչեր ես սպասեցնել տալիս *(Նար., VI, 123)*։ *Այստեղ՝* սպասեցնել տալ, սպա-սել տալ *պարզապես նշանակում են՝* սպասեցնել, սպասեցնել:

§ *364*. Տալ *բայով կազմվող պատճառական ձևերը նաև նշա-նակում են* թույլ տալ, թողնել՝ մի բան անել. *օրինակ՝* Դու միայն լավ հսկիր կոլխոզի խոտին, *գողանալ չտաս (ՆԶՀ, 227)*։ «Հերիք» *քնել տվեք* ինձ *(ԳՄԵ, 24)*։

§ *365*. Տալ *բայով կազմվող պատճառական ձևը կարող է սոսկ ներգործական բայի իմաստ արտահայտել. օրինակ՝* Ամու-սինները *չլսել էին տալիս (այսինքն՝* չէին լսում, կամ, ավելի ճիշտ, ցույց էին տալիս, թե չեն լսում, *ՆԶՀ, 448)*։ *Բայց սա արդեն ստա-ցել է դարձվածքային նշանակություն*։ *Համեմատի՛ր.* Երկու հա-րյուր ռուբլի *տանուլ տվի (Շիրվ., VII, 143)*։

գ) ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ *366. Հայերենում շատ հաճախ բայերի հետ իմաստային-սերտ առնչության մեջ են մտնում տարբեր խոսքի մասեր և կազ-մում են մի միասնական ստորոգյալ՝ առանց, սակայն, ձևական ամբողջության։ Այդպիսի ստորոգյալները մենք նույնպես համա-րում ենք բաղադրյալ բայական ստորոգյալներ, որովհետև դրանք մի մենիմաստ բայ են կազմում և նախադասության մեջ դառնում են բայական ստորոգյալ։*

Բայերի հետ իմաստային սերտ առնչության մեջ մտնող տար-բեր խոսքի մասերը սկզբնապես եղել են այդ բայերի համար լրա-ցուցիչ բառեր, այսինքն՝ խնդիրներ և պարագաներ, որոնց շարա-հյուսական կապերը աստիճանաբար մթնել են՝ փոխարինվելով բառաբարդացման կապերով։ Սակայն ինչպես բարդ բառերի մեջ դեռևս զգալի են շարահյուսական կապերը, այնպես էլ առավել ևս այստեղ շարահյուսական կապերը երբեմն այնքան են բացահայտ, որ հաճախ դժվար է ասել տվյալ նախադասության բայի հետ

առնչվող այս կամ այն խոսքի մասը տվյալ բայի հետ մի ստորոգյա՞լ է կազմում, թե առանձին լրացում է. օրինակ՝ Իրավունք չունեի մասնակից անել նրան ուրիշներին (Մուր., III, 143)։ Ակոբը աչքը չորս է անում (ԴԴ, I, 237)։ Ես իմ մորից մին եմ ծնվել, մի խուֆ ունեմ ու մի զարկ (Թ., II, 170)։ Այս օրինակների մեջ իրավունֆ, չորս, մին բառերը կարող են ըստ կարգի համարվել՝ ուղղակի խնդիր, երկրորդական կամ կրկնակի ուղղակի խնդիր և կամ, ավելի ճիշտ, քանակի պարագա (չորս է անում, այսինքն՝ ինչքան է անում) և (մին եմ ծնվել) դարձյալ քանակի պարագա, այսինքն՝ մի անգամ եմ ծնվել։ Բայց հենց ամենայն իրավացիությամբ այդ բառերը կարող են հիշյալ բայերի հետ մի ամբողջական բայական բաղադրյալ ստորոգյալ համարվել, որովհետև միասնական կերպով մի իմաստ են արտահայտում։

Երբ այս կամ այն խոսքի մասի շարահյուսական կապերը թուլանում են, որ արդյունք է հենց տվյալ խոսքի մասի բառական արժեքի թուլացման, ապա այլևս հարկ չկա, որ տվյալ բնագրում այդ բառը անջատվի բայ-ստորոգյալից և դիտվի իբրև առանձին լրացում։ Այս էլ պետք է նշել, որ ոչ միայն այս կամ այն խոսքի մասի բառական նշանակությունն է թուլանում, այլև թուլանում է նաև այդ խոսքի մասերի լրացյալ հանդիսացող բայի բառական նշանակությունը. օրինակ՝ Իսահակյանի մոտ կարդում ենք այսպիսի մի նախադասություն. Թոռնն իրենն առավ (III, 298)։ Իրենն առավ կապակցության մեջ (վիրավորվեց) առնել բայը արդեն չի պահպանել իր նշանակությունը, այլ իրեն դերանվան հետ ստացել է մի միասնական իմաստ. առավ և իրեն միասին են նշանակում վիրավորվեց:

§ 367. Դարձվածքային այդ կարգի կապակցությունների մեջ բայի և իր լրացման սերտ միասնությունը պայմանավորված է դրանց շարահյուսական կապերի թուլացման և բառական նշանակությունների աղոտացման հետ։ Ինչպես ասվեց, դեռևս կան այնպիսի կապակցություններ, որոնց մեջ լրացումը և լրացյալ բայը կարող են դեռևս անջատվել։ Ամեն պարագայում պետք է քննական մոտեցում հանդես բերել։

§ 368. Լրացուցիչ բառը, որ բայի հետ մի դարձվածքային ստորոգյալ է կազմում, կարող է հանդես գալ իբրև ուղղակի, անուղղակի խնդիր, ձևի, ժամանակի, տեղի, չափ ու քանակի, նպատակի և այլ պարագաների դերով, բայց բոլոր դեպքերում էլ դրանց հիշյալ պաշտոնները հաշվի չենք առնում։

ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Տղաները *վայ* են անում (*ՍՋՄԿՊ, 69*)։ Դա *կշիռ* կտա (*ԴԴՎ, 469*)։ *Հանգիստ* տուր (*նույն տեղում, 633*)։ Ու իր տեղեն թիռ առավ, թռավ նստավ նրա մոտ (*Իս., I, 145*)։ Այս անքաղաքավարի համեմատությունը ուստային հանեց *ինքն իրենից* (*Իս., III, 291*)։ Հետաքրքիր աղջկա հարցերը *վերջ չունեն* (*ՐԿ, 329*)։ Մելիքը անհուն գումարները *գործի* էր դնում (*Ր., II, 336*)։ *Թևին* տալիս, մահ է գալիս (*Թ., I, 271*)։ Մարդիկս *ընկան* մարդու *կերպից* (*Թ., II, 155*)։ Վարձկան կանայք անկյունի մութում *ձեն-ձենի են տալիս* (*ԱԲՄ, 98*)։ Այդ կեղծավորները ամեն ժամանակ *մեծամասնություն են ներկայացրել* (*ՐԿ, 338*)։

ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մնաս բարով, սիրելի տեր. *գնաս բարով* (*Շեքս., I, 160*)։ *Դուրս* եկեք, *դուրս* (*Թ., I, 344*)։ Մենք քաշում ենք այսպես *առաջ* (*նույն տեղում, 251*)։ *Ընկան* նրա *ձեռն ու ոտը* (*նույն տեղում, 268*)։ Շուտով *կարգի կդրվի* (*Շեքս., I, 156*)։ Իսկ ընկերներն անմիջապես *ետ են քաշվում* ու մնում կանգնած (*ՍՋՄԿՊ, 83*)։ *Առաջ անցիր* (*ԴԴՎ, 204*)։ Թե տանուտերին *գանգատ եմ գնում* (*այսինքն՝ գանգատվելու. նպատակի պարագա է*), Բան չեմ վստահում *բացի դուշմանից* (*Թ., II, 38*)։ Ինձ *նեղը մի դնիր. այսինքն՝ նեղ տեղ* (*Շեքս., I, 150*)։ *Աշխարհ եմ գալիս* ես, երրորդ արական զավակս (*Չմշկյան, 4*)։

§ *369. Կան նաև այնպիսի դարձվածքային կապակցություններ, որոնց մեջ մի ամբողջություն են կազմում թե՛ խնդիրները և թե՛ պարագաները. օրինակ՝* Ով էր *գլխից ձեռ վեր կալած*, Ով դուրս կգար նրա դիմաց (*Թ., I, 286*)։

§ *370. Կան նաև այնպիսի դարձվածքային կապակցություններ, որոնց մեջ լրացուցիչների և լրացյալների շարահյուսական կապերը անըմբռնելի են կամ ավելի ճիշտ արդեն մոռացվել և վերացել են. մեր լեզվական ըմբռնումով չեն փաստարկվում ու գիտակցվում. օրինակ՝* Մոտեցեք հաց *անուշ արեք* (*Իս., III, 292*)։ Կարծես երկար ժամանակ *գլխի չէր ընկել* և հիմա ընկավ հարցնելու (*ԴԴՎ, 14*)։ Ինչ որ *թափ է տալիս* (*Ընտիր էջեր, 954*)։ *Ման եմ գալիս* էս մթնում (*Թ., I, 546*)։ Ուստա կատուն *կոտրն ընկավ* (*նույն տեղում, 266*)։ Սա ինձ *դուր չեկավ* (*Շեքս., I, 158*)։

§ *371. Ինչպես արդեն ասվել է (§ 119), ստորոգյալը ոչ միայն իր լրացումների, այլև ենթակայի հետ կարող է մի ամբողջություն կազմել. օրինակ՝* Գիշերը *քունը չէր տանել (ԱԲՄ, 87)* Ձեռիցն ամեն *բան գալիս էր (ՍՋ, III, 131)։ Այսպիսի նախադասությունները վերլուծելիս հարկադրված ենք ձևական մոտեցում հանդես բերել՝ չնայած* քունը տանել է *նախադասության մեջ առանձին՝* տանել է *ստորոգյալ չէ, այլ ստորոգյալ է՝* քունը տանել է: *Համեմատի՛ր նաև՝* գլուխս գնաց, սիրտը կոտրվեց, խելքը գնաց: Ասել չի լինի *(ՍԽՀ, II, 17)*· Քեֆը տվեց, մեռավ *(Շիրվ., III, 478)*

Լ) ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՑԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ՝ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉ ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԵՐՈՎ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՈՎ

§ *372. Անորոշ դերբայը, դառնալով որևէ դիմավոր բայի ուղղակի խնդիր, որոշ չափով թուլացնում է այդ դիմավոր բայի բառական նշանակությունը՝ խանգարելով նրա լիակատար ու ամբողջական իմաստի դրսևորմանը։ Այդ առաջանում է անշուշտ այն պատճառով, որ ամբողջ բուն գործողության դրսևորումն ընկնում է անորոշ դերբայի վրա, իսկ դիմավոր բայերը դառնում են մի տեսակ եղանակավորիչ բառեր, կերպավորման միջոցներ՝ արտահայտելով գործողության սկսման, մտադրման, ցանկության, նախասիրության, պարտադրման և այլ կամային ու զգացումային դրսևորումներ, որոնցով կանխորոշվում է գործողությունը։*

Պետք է նշել, որ արդեն կան այնպիսի ներգործական բայեր, որոնց խնդիրը միայն անորոշ դերբայ է. օրինակ՝ սկսել *բայը ներգործական սեռի բայ է, բայց սովորաբար գոյականը չի դառնում այդ բայի համար ուղղակի խնդիր։ Սրա ուղղակի խնդիրը անորոշ դերբայ է, որ և առնչվելով նրա հետ, դառնում է* սկսել *բայի համար բուն գործողության արտահայտիչ, իսկ վերջինս նախորդի համար ունի սկսողական արժեք, այսինքն՝ ցույց է տալիս, թե գործողությունը իր սկիզբն է առնում. բացի դրանից, գործողությունը դնում է ժամանակի, դիմավորման և թվի տակ։ Եթե նույնիսկ ասում ենք՝* այդ գործը սկսում եմ, սկսիր խոսքդ *և այլն, միշտ մտածվում է՝* ասել, անել.

Այդպես են նաև մի շարք ուրիշ բայեր, որոնք ցույց են տալիս տրամադրություն, հակում, ցանկություն, կարծիք, ներքին հարկադրանք և այլն։

§ 373. *Հայերենում եղանակավորիչ բայերը կարելի է բաժանել մի քանի խմբերի։ Ամենից առաջ իբրև եղանակավորիչ բայեր առանձնանում են այն բայերը, որոնք ցույց են տալիս կարողություն, հնարավորություն, հակում, ձգտում որևէ գործողություն կատարելու։ Այդպիսի բայեր են՝* հանել, կարողանալ, կամենալ, մտադրվել, ցանկանալ, ձգտել, համարձակվել, վճռել, հանդգնել, փորձել, փափագել, աշխատել *(ձգտել նշանակությամբ)*, ուզել, երազել, ջանալ, ուխտել, բարեհաճել *և այլն. օրինակներ.* Հպարտ գլուխս չի *հանդգնում* վերև *նայել (Նար., IV, 47)։ Բարեհաճեցեք հետևել* ինձ *(Շիրվ., VIII, 360)։* Ադելաիդան այդ մասին *լսել* անգամ *չի ուզում (Շիրվ., II, 471)։* Ամեն կերպ *աշխատեցի հանգըստացնել* նրան *(Նար., IV, 46)։* Փափագելով *փափագում էր մասնակցել* վարժուհիների հոգեզվարճ բամբասանքներին *(Մուր., IV, 23)։* Ես *չուզեցա հաճոյանալ* ձեր սրտերին *(ՀՀԵ, 122)։* Դավանանեցի մի գիշեր ես քեզ,—*Ուզեցի ընտրել* սիրունի մի սառ *(ՉԵ, 168)։* Բայց *մոտենալ*, նրա մարմինը *բանալ չեմ համարձակվում (ՍՉՄԿՊ, 157)։* Պայծառ, մաքուր շունչը կենդանի *Ուզեցի փոխել* ես բեռնի հետ, Սիրտս *դարձնել* պողպատի անիվ, Եվ *դառնալ* անկիրք աշխարհի պոետ *(ՉԵ, 168)։* Ինչու եմ *կամենում փնտրել, գտնել* նրան, *խոսել* նրա հետ, սրտով *սիրել* նրան *(ՍՉՄԿՊ, 253)։* Իզա շահը *ցանկացել* էր սուր շեղբով *կտրել* ասիականն իր երկրից *(ԳՍԹ, II, 210)։* Ամառս *հանգստանալ է ուզում (Փափ., 564)։* Նա *ուզում էր պարզել* վաղվանից գարնանացանն սկսելու հնարավորությունը *(ՆՉՀ, 16)։ Աշխատիր մոտենալ* եզերքին *(ՐԿ, 332)։* Գուցե չհամարձակվի ասել *(Նար., IV, 106)։* Բայց երբ *հաճեք* առայժմ նրան հեռացած *պահել (Շեքս., I, 164)։* Ձեր բարձրությունը *չէր բարեհաճի* ձեռքը *լվանալ (Շեքս., II, 69)։* Դու *չկարողացար* նրան *դաստիարակել*, դու *չկարողացար* նրան *բարձրացնել* սոցիալիզմ կառուցող կնոջ մակարդակին, ու *երազում* ես երջանկություն *կառուցել* բոլորի համար *(ՆՉՀ, 229)։ Բարեհաճում եք այցելել* կամերաները *(Ավագյան, 204)։*

§ 374. *Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում մի շարք իմացական, զգացումային բայեր, որոնք արտահայտում են հակում, ներքին զգացումներ, իմացություն։ Այդպիսի բայերի շարքին են պատկանում՝* կարծել, հետաքրքրվել, վախենալ, ամաչել, քաշվել *(վախենալ)*, տատանվել, դժվարանալ *(տատանվել)*, սիրել, վարժվել, սովորել, գիտենալ, զգուշանալ, իմանալ:

Համարձակ կոմերիտուհին *չի քաշվի հիշատակել* բազմաթիվ փաստեր (*ՆԶՀ, 192*)։ Ես *սիրում եմ հավատալ* մարդկանց (*ՍԽՀ, II, 168*)։ *Վարժվել* (էր) *իշխել* տնեցիների վրա, *հրամայել* նրանց։ Նա *սովորել էր* ամեն րոպե նարգիլե *ծխել* (*ՐԿ, 437*)։ *Գիտե* լավ *երգել, նվագել, պարել* (*Շեքս., I, 162*)։ Նա *զգուշացավ* փաշայի դեմ որևէ աննպաստ կարծիք *հայտնել* (*ՐԿ, 409*)։ Ամենաչնչին բանից օգուտ *քաղել գիտեն* (*ՐԿ, 399*)։ Եվ *չգիտեին* շրթերդ խնդալ (*ՉԵ, 167*)։ Դու *լողալ իմանո՞ւմ ես* (*ՐԿ, 332*)։ Մի կախարդ կին էր, որ *գիտեր կարդալ* մարդկանց մտքերը (*Շեքս., I, 172*)։ Որտեղից օրիորդը սովորաբար դեպի փողոցը *նայել կսիրեր* (*Ր., I, 380*)։ Անընդհատ սիրում *էր խոսել* (*ՀՀԵ, 394*)։ *Զգուշացավ* Երևույթը *մատնել* (*ԴԴՎ, 470*)։ *Մտածել է կորուսանել* (*Ր., II, 336*)։ Դուք *վախենում եք* կայսրի աչքում հայրենասեր *երևալ* (*Ր., I, 207*)։

§ 375. *Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում հարկադրանքի, գործողության բայերը, որոնք ցույց են տալիս ենթակայի՝ մի որևէ գործողություն կատարելու համար հարկադրված լինելը, չարչարվելը, միջոցներ որոնելը և այլն։ Այդպիսի բայերի թվին են պատկանում՝* ճգնել, պարտավորվել, ստիպվել, փորձել, հարկադրվել, հետաքրքրվել, չարչարվել, *նաև՝* աշխատել, շտապել *և այլն*։

Ճգնում էր պատասխան *տալ, հաղթել* արգելքներին, պահված գաղտնիքների դռները բանալ (*ԱԲՄ, 7*)։ *Ճգնում էր* ըմբշի և կամ միմոսի պսակ *ստանալ* (*Թ., I, 356*)։ Ես *պարտավորված էի կատարել* նրա կամքը (*Ր., II, 336*)։ Դու *ստիպված ես* երկու չարիքից փոքրագույնը *ընտրել* (*Շիրվ., III, 329*)։ Վասակը *ստիպվեց խոսել* (*ԴԴՎ, 26*)։ *Փորձիր հասկացնել*, ցույց տալ իսկական հանցավորներին (*ԴԴՎ, 478*)։ Ես *շտապում էի իմանալ* այդ նողկալի դեպքերի պատմությունը (*Շիրվ., II, 481*)։ Բրիգադավարները *հարկադրված էին* անցյալ տարվա պես տնե-տուն *ընկնել*՝ մարդկանց քնից կամ սպասի վրայից վեր կացնելու համար (*ՆԶՀ, 159*)։ *Փորձեց որոշել*, թե ովքեր են գալիս (*ԱԲՄ, 86*)։ Լադոն *հարկադրված էր հիշատակել* (*ՆԶՀ, 216*)։ *Հետաքրքրվեցի գիտենալ* (*Շիրվ., VIII, 363*)։ Օհանը *դժվարացավ* այդ *պատասխանել* (*Ր., I, 295*)։ Ծովիկը *դժվարանում էր* իմ մոտից *հեռանալ* (*ՐԿ, 328*)։

§ 376. *Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում մի շարք այնպիսի բայեր, որոնք արտահայտում են վճիռ, համարձակություն, խոստում, երդում մի բան անելու կամ չանելու. այդպիսի բայեր են՝* խոստանալ, երդվել, որոշել, վճռել, համաձայնել, մոռանալ, հոժարել։

§ *373. Հայերենում եղանակավորիչ բայերը կարելի է բաժանել մի քանի խմբերի։ Ամենից առաջ իբրև եղանակավորիչ բայեր առանձնանում են այն բայերը, որոնք ցույց են տալիս կարողություն, հնարավորություն, հակում, ձգտում որևէ գործողություն կատարելու։ Այդպիսի բայեր են՝* հանել, կարողանալ, կամենալ, մտադրվել, ցանկանալ, ձգտել, համարձակվել, վճռել, հանդգնել, փորձել, փափագել, աշխատել *(ձգտել նշանակությամբ),* ուզել, երազել, ջանալ, ուխտել, բարեհաճել *և այլն. օրինակներ. Հպարտ* գլուխս չի *հանդգնում* վերև *նայել (Նար., IV, 47)։ Բարեհաճեցեք հետևել* ինձ *(Շիրվ., VIII, 360)։* Աղելափդան այդ մասին *լսել* անգամ *չի ուզում (Շիրվ., II, 471)։* Ամեն կերպ *աշխատեցի համոզատացնել* նրան *(Նար., IV, 46)։* Փափագելով *փափագում էր մասնակցել* վարժուհիների հոգեզվարճ բամբասանքներին *(Մուր., IV, 23)։* Ես *չուզեցա հաճոյանալ* ձեր սրտերին *(ՀՀb, 122)։* Դավանանեցի մի գիշեր ես քեզ,—*Ուզեցի ընտրել* սիրունի մի սառ *(Ձb, 168)։* Բայց *մոտենալ,* նրա մարմինը *բանալ չեմ համարձակվում (ՍՁՄԿՊ, 157)։* Պայծառ, մաքուր շունչը կենդանի *Ուզեցի փոխել* ես բետոնի հետ, Սիրտս *դարձնել* պողպատի անիվ, Եվ *դառնալ* անկիրք աշխարհի պոետ *(Ձb, 168)։* Ինչու եմ *կամենում փնտրել, գտնել* նրան, *խոսել* նրա հետ, սրտով *սիրել* նրան *(ՍՁՄԿՊ, 253)։* Ոգա շահը *ցանկացել* էր սուր շեղբով *կտրել* ասիականն իր երկրից *(ԳՍԹ, II, 210)։* Ամառս *հանգստանալ է ուզում (Փափ., 564)։* Նա *ուզում էր պարզել* վաղվանից գարնանացանն սկսելու հնարավորությունը *(ՆՁՀ, 16)։ Աշխատիր մոտենալ* եզերքին *(ՐԿ, 332)։* Գուցե չհամարձակվի ասել *(Նար., IV, 106)։* Բայց եթե *հաճեք* առայժմ նրան հեռացած *պահել (Շեքս., I, 164)։* Ձերդ բարձրությունը *չէր բարեհաճի* ձեռքը *լվանալ (Շեքս., II, 69)։* Դու *չկարողացար* նրան *դաստիարակել,* դու *չկարողացար* նրան *բարձրացնել* սոցիալիզմ կառուցող կնոջ մակարդակին, ու *երազում* ես երջանկություն *կառուցել* բոլորի համար *(ՆՁՀ, 229)։ Բարեհաճում եք այցելել* կամերաները *(Ավագյան, 204)։*

§ *374. Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում մի շարք իմացական, զգացումային բայեր, որոնք արտահայտում են հակում, ներքին զգացումներ, իմացություն։ Այդպիսի բայերի շարքին են պատկանում՝* կարծել, հետաքրքրվել, վախենալ, ամաչել, քաշվել *(վախենալ),* տատանվել, դժվարանալ *(տատանվել),* սիրել, վարժվել, սովորել, գիտենալ, զգուշանալ, իմանալ:

Համարձակ կոմերիտուհին *չի քաշվի հիշատակել* բազմաթիվ փաստեր *(ՆՋՀ, 192)*։ Ես *սիրում եմ հավատալ* մարդկանց *(ՍԽՀ, II, 168)*։ *Վարժվել (էր) իշխել* ունեցիների վրա, *հրամայել* նրանց։ Նա *սովորել էր* ամեն րոպե նարգիլե *ծխել (ՐԿ, 437)*։ *Գիտե* լավ *երգել, նվագել, պարել (Շեքս., I, 162)*։ Նա *զգուշացավ* փաշայի դեմ որևէ աննպաստ կարծիք *հայտնել (ՐԿ, 409)*։ Ամենաչնչին բանից օգուտ *քաղել գիտեն (ՐԿ, 399)*։ Եվ *չգիտեին* շրբերդ խնդալ *(ՉԵ, 167)*։ Դու *լողալ իմանո՞ւմ ես (ՐԿ, 332)*։ Մի կախարդ կին էր, որ *գիտեր կարդալ* մարդկանց մտքերը *(Շեքս., I, 172)*։ Որտեղից օրիորդը սովորաբար դեպի փողոցը *նայել կսիրեր (Ր., I, 380)*։ Անընդհատ սիրում *էր խոսել (ՀՀԵ, 394)*։ *Զգուշացավ* Երևույթը *մատնել (ԴԴՎ, 470)*։ *Մտածել է կորուսանել (Ր., II, 336)*։ Դուք *վախենում եք* կայսրի աչքում հայրենասեր *երևալ (Ր., I, 207)*։

§ 375. Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում հարկադրանքի, գործողության բայերը, որոնք ցույց են տալիս ենթակայի՝ մի որևէ գործողություն կատարելու համար հարկադրված լինելը, չարչարվելը, միջոցներ որոնելը և այլն։ Այդպիսի բայերի թվին են պատկանում՝ ճգնել, պարտավորվել, ստիպվել, փորձել, հարկադրվել, հետաքրքրվել, չարչարվել, *նաև՝* աշխատել, շտապել *և այլն։*

Ճգնում էր պատասխան *տալ, հաղթել* արգելքներին, պահված գաղտնիքների դռները բանալ *(ԱՐՄ, 7)*։ *Ճգնում էր* ըմբշի և կամ միմոսի պսակ *ստանալ (Թ., I, 356)*։ Ես *պարտավորված էի կատարել* նրա կամքը *(Ր., II, 336)*։ Դու *ստիպված ես* երկու չարիքից փոքրագույնը *ընտրել (Շիրվ., III, 329)*։ Վասակը *ստիպվեց խոսել (ԴԴՎ, 26)*։ *Փորձիր հասկացնել,* ցույց տալ իսկական հանցավորներին *(ԴԴՎ, 478)*։ Ես *շտապում էի իմանալ* այդ նողկալի դեպքերի պատմությունը *(Շիրվ., II, 481)*։ Բրիգադավարները *հարկադրված էին* անցյալ տարվա պես տնե-տուն *ընկնել՝* մարդկանց քնից կամ սպասի վրայից վեր կացնելու համար *(ՆՋՀ, 159)*։ *Փորձեց որոշել,* թե ովքեր են գալիս *(ԱՐՄ, 86)*։ Լաղոն *հարկադրված էր հիշատակել (ՆՋՀ, 216)*։ *Հետաքրքրվեցի գիտենալ (Շիրվ., VIII, 363)*։ Օհանը *դժվարացավ* այդ *պատասխանել (Ր., I, 295)*։ Սոփիկը *դժվարանում էր* իմ մոտից *հեռանալ (ՐԿ, 328)*։

§ 376. Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում մի շարք այնպիսի բայեր, որոնք արտահայտում են վճիռ, համաձայնություն, խոստում, երդում մի բան անելու կամ չանելու. այդպիսի բայեր են՝ խոստանալ, երդվել, որոշել, վճռել, համաձայնել, մոռանալ, հոժարել։

Երբեմ *չպետք է մոռանալ աղոթել (Նար., IV, 49)։*

Լաղոն *հարկադրված էր հիշատակել*, ֆանի որ *վճռել էր մեր-կացնել* նրան մինչև վերջ *(ՆԶՀ, 216)։ Վճռեցի չվերադառնալ (ՐԿ, 42)։* Դուք *վճռել եք ըմպել* ճաղցրագույն մեղրը փիլիսոփայության *(Շեքս., II, 71)։* Յերեկվա տոթի պատճառով *որոշել էին գնալ* գի-շերով *(ՐԿ, 434)։* Իրենք էլ ոչ մի գնով *չէին՝* համաձայնի *մեռնել* պապենական օջախից դուրս *(ՍԽՀ, II, 186)։ Որոշում էր հայտնել* բջջի բյուրոյին *(ՆԶՀ, 201)։* Նա ամեն օրվա պես *որոշել էր* ամուսնուն *չնեղացնել* ոչ մի հարց ու փորձով *(Նույն տեղում, 230—231)։* Տանը *խոստացել էր* շուտ *վերադառնալ (ՍԽՀ, II, 179)։ Որոշեց օգնել քաղել* ժամանակից *(Մուր., II, 31)։* Ես *վճռել եմ* այս սենյակից *դուրս չգալ (Նար., IV, 37)։ Խոստանում ենք* եկող տարի մեր ֆերմայի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն *ավելացնել* 15 տոկոսով *(Անթ., 351)։ Համաձայնեց հարսնանալ (ԴԴՎ, 177)։* Գյուղացիները *հոժարվում էին* ամեն ինչ *զոհել (ՐԿ, 418)։*

§ *377. Անորոշ դերբայի հետ միասին բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում նաև՝* գերադասել, ձևանալ, սպառնալ, սպասել, մերժել *և մի քանի ուրիշ բայեր. օրինակ՝* Այդ պատճառով նա *գերադասեց լռել (ՆԶՀ, 218)։* Նա այժմ *գերադասում էր* նրա մարդկանց հետ խնամիական կապեր *հաստատել (ՆԶՀ, 151)։ Սպառնում էիք* դատարան *քարշ տալ (Շեքս., II, 69)։ Մերժեց պսակվել (Նույն տեղում, 89)։* Հյուրերը նրա այս վարմունքը *չհասկանալ ձևացրին (Իս., III, 291)։* Ես ուրիշ բանի *էի սպասում տեսնել (ՐԿ, 337)։*

§ *378. Անորոշ դերբայի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում մի քանի այնպիսի բայեր, որոնք արտահայտում են գործողության սկսվելը, շարունակվելը, դադարելը և այլն. այդպիսի բայերի թվին են պատկանում* սկսել, շարունակել, դադարել, դանդաղել, պատրաստվել. *օրինակ՝* Այնտեղ մարդկային մտքի ու ձեռքի աշխատանքը նոր միայն *սկսել էր գնահատվել* որպես շուկայի ապրանք և հարստահարվել *(Շիրվ., VIII, 7)։* Հեղինակն *սկսեց ստանալ գրություններ (ՉԵ, 251)։* Պարտիզան Շչ–ն *սկսեց պատմել (Անթ., 310)։* Եվային տեսնելու ցանկությունն *սկսեց* հետզհետե *սաստկել* նրա մեջ *(Նար., IV, 41)։* Նրանք *սկսեցին քննադատել* հայ գյուղերի անունները *(ՆԶՀ, 257)։* Եվ ով գիտե, մինչև երբ ես այսպես *շարունակեի պահպանել* դեպի քեզ ունեցած լռությունս *(Նար., IV, 8)։* Ես *դանդաղում էի բանալ* ծրարը *(Մուր.,*

II, 142)։ Փիլոն *շարունակում էր շաղ տալ* հատիկները և բուռը *դարձնել* հետզհետե ավելի համաչափ *(ՆԶՀ, 167)*։

§ *379. Բաղադրյալ բայական ստորոգյալի մաս կազմող անորոշ դերբայը կարող է ոչ միայն առանձին հանդես գալ, այլև կապված ուրիշ խոսքի մասերի հետ իբրև մի դարձվածքային կապակցություն, մի հարադրություն. օրինակ՝ Սկսեցի դուրս ածել* ջուրը *(ՐԿ, 332)*։ Ես *վճռել եմ* այս սենյակից *դուրս չգալ (Նար., IV, 37)*։ *Աշխատեցեք* մի կերպ միջից *դուրս գալ (Շեքս., I, 152)*։ *Ջանաց* շատ էլ *ցույց չտալ* և չխռովեցնել Վարազվաղանին *(ԴԴՎ, 210)*։ Առավոտյան *ստիպված էինք* խիստ վաղ *վեր կենալ (ՐԿ, 328)*։ Ես *կցանկանայի* ձիրք ու շնորհքով, գեղեցկությունով, հարստությունով, բարեկամներով *հաշվից դուրս լինել (Շեքս., I, 541)*։ Ոստիկանը *ցանկացավ կարճ կտրել (ԳՍԹ, II, 212)*։ *Համարձակվում էի աչք ունենալ (Նար., IV, 112)*։ Այսյան *ուզեց թիկն տալ (ԱԲՄ, 127)*։ Բայց *չէր համարձակվում խոսք բաց անել* ամուսնության մասին *(ՆԶՀ, 149)*։ Նա *որոշեց վրեժխնդիր լինել* իր հակառակորդից *(Նույն տեղում, 169)*։

§ *380.* Լինել *անորոշ դերբայն, իբրև բաղադրյալ բայական ստորոգյալի բաղադրիչ, հաճախ բարդվում է հարակատար դերբայով, որով և կազմվում են երկրորդական բաղադրյալ ժամանակները. օրինակ՝* Գյուղական գործերով է *ուզում զբաղված լինել (Փափ., 564)*։ Ինչ է, *կուզեիք համոզված լինել (Շեքս., I, 168)*։ *Համեմատի՛ր.* Հայրս *շարունակում է մնալ պառկած (ՍԶՄԿՊ, 40)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Եթե մի եղանակավորիչ բայ իր հետ ունի մի քանի անորոշ դերբայ, բոլորը միասնաբար դիտվում են իբրև մի բաղադրյալ ստորոգյալ։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2. Երբեմն բայական բաղադրյալ ստորոգյալի մաս կազմող անորոշ դերբայը զեղչվում է. այս դեպքում այն բոլոր լրացումները, որոնք վերաբերում էին անորոշ դերբային, դառնում են դիմավոր բայի համար լրացում, իսկ ստորոգյալ միայն համարվում է հենց այդ դիմավոր բայը. օրինակ՝ Հրետանային ստորաբաժանումները մեկեն սկսեցին փոթորկալի կրակ *(Քոչար, 187)*։ Կրակ *բառից հետո սպասելի էին* բաց անել, տեղալ *անորոշ դերբայները*։

§ *381. Դիմավոր եղանակավորիչ, կերպավորիչ բայերից հետո ժողովրդական ոճով գրվածքների մեջ շատ հաճախ անորոշ դերբայի փոխարեն կիրառվում է ըղձական ապառնու որևէ դեմքի բայ, որը տվյալ դեպքում անորոշից տարբերվում է միայն ոճաբանա-*

կան առանձնահատկություններով։ Անորոշի փոխարեն կիրառված այդ դիմավոր ձևը ունի յուրահատուկ ժողովրդական ոճի երանգ, հեքիաթա-պատմողական որոշ պարզունակությամբ։ Բարձր գրական ոճով երկերի մեջ այժմ այդ կարգի դիմավոր բայ չի կիրառվում։ Անցյալում նույնիսկ դա հատուկ էր որոշ գրողների՝ Թումանյանին, Իսահակյանին, Դեմիրճյանին, հետագայում այդ ձևից օգտվել են, ավել կամ պակաս չափով, Զարենցը, Բակունցը և այլք։

Այդպիսի դիմավոր ձևը անշուշտ եղանակավորող և կերպավորող ձևերի հետ մի միասնական բաղադրյալ բայական ստորոգյալ է կազմում. օրինակ՝ *Կուզեմ չտանջվեմ* (Իս., III, 18)։ *Ուզում եմ ասած լինեմ* (Զե, 256)։ Որքան *կամենաք* նրան *հրահրեք*, նրանից մանկական գրող չէր դուրս գա (ՀՀե, 403)։ Նախ *չուզեց ասի* (ԱԲՄ, 96)։ Նույնպիսի տեղեկություն *կուզեիր ունենաս* (Թ., V, 311)։ Ախր բա որ էն գլխիցը *չէի ուզում* ավանսը *վերցնեմ* (Նույն տեղում, 425)։ *Չէր իմանում* ինչից *սկսի* (ՆԶՀ, 141)։ Երբեմն այնքան մոտ է գալիս, որ *ուզում ես վրա վազես* (ԱԲՄ, 69)։ *Վախենում էր սխալվի* (Նույն տեղում, 264)։ Ես այն էլ *մոռացա ասեմ* (Զե, 258)։

Ծանոթություն 1. Եղանակավորիչ և կերպավորվող բայերից կախված ըղձականի դեմքը և թիվը պայմանավորվում են եղանակավորիչ և կերպավորվող բայերի դեմքով և թվով։ Ինչ դեմքով դրվում է եղանակավորիչ բայը, նույն դեմքով և թվով էլ դրվում է ըղձականը. օրինակ՝ Ես ուզում եմ գնամ, դու ուզեցիր գնաս, նա կուզե գնա, մենք ուզեցինք գնանք:

Ծանոթություն 2. Անորոշ դերբայի փոխարեն կարող է գործածվել այնպիսի քարացած դարձվածքային կապակցություն, որի մեջ բայը արդեն ապաիմաստավորվել է. այսինքն՝ կորցրել է բառական և քերականական նշանակությունը. օրինակ՝ Սկսեց քանակով *տուր թե կտաս* (Շիրվ., V, 47)։

§ 382. Երբ եղանակավորիչ կամ կերպավորող բայը և անորոշ դերբայը միևնույն ենթակայի գործողությունները չեն, ապա միասին մի ստորոգյալ կազմել չեն կարող։ Այս դեպքում անորոշ դերբայը դիտվում է իբրև խնդիր. օրինակ՝ Տեր կառավարիչը խնդրում է նրան՝ հանել մի քանի վայրկյան և այցելել իրեն (ՍԶ, V, 285)։ Հասատատ որոշել էր ստիպել նրանց՝ գնալ իրենց հետ (Շաթիրյան, 113)։ Վերջին օրինակում առաջին անորոշը (ստիպել)

որոշել *բայի հետ մի ստորոգյալ է կազմում, իսկ երկրորդ անորոշը (գնալ) նպատակի պարագա է։*

§ *383. Եղանակավորիչ և կերպավորող դիմավոր բայերը կարող են լինել նաև դարձվածքային կապակցություններ, այսինքն՝ բայական հարադրություններ։ Այս կարգի բայական հարադրությունները նույն քերականական և իմաստային դեր են կատարում, ինչ որ տեսանք պարզ բայերը քննելիս։ Դրանք էլ ցույց են տալիս հակում, հարկադրանք, ցանկություն, ներքին զգացումներ, ընդունակություն, ի վիճակի լինել, գործողության սկսումը և այլն։ Պետք է նշել, որ այս նշանակությունները գերազանցապես ոչ թե հարկադրության մաս կազմող բայի մեջ են լինում, այլ բայի հարադիրի միջոցով են արտահայտվում։ Այս դեպքում էլ ստորոգյալը մնում է իբրև բայական բաղադրյալ ստորոգյալ. օրինակ՝ Անհրաժեշտ համարեց տեղափոխվել* Խարկով *(Քոչար, 663)։* Արժանիքներս *իրավունք ունեին* խիզախ *հավակնել (Շեքս., I, 122)։* Մի փանի վայրկյան ոչ ոք *սիրտ չարավ կանգնել (ՍԽՀ, II, 238)։ Հանձն եմ առնում վարել* նոր ծագած այս պատերազմը տանիկների դեմ *(Շեքս., I, 131)։* Ձեր շնորհը *արժան համարե* հետևից դրկել *(Նույն տեղում, 132)։ Հանձն ես առել գործել* մի այդպիսի չար *դավաճանություն (Ր., II, 336)։* Ասլանը մտադրություն *ուներ* նավակով Կտուց անապատը գնալ *(ՐԿ, 328)։ Խոսք տվեց* ավարտելուն պես *վերադառնալ* գյուղը և իր ստացած գիտությունը նվիրել նրա բարօրության գործին *(ՆՁՀ, 155)։* Վարույանի *մտքով անցավ վազել* տուն *(Նույն տեղում, 204)։* Վարույանը *սիրտ չարավ* նրան *մերժել (ՆՁՀ, 218)։ Անհարմար էր համարում չպատասխանել* իրեն ուղղված մի հասարակ հարցի *(Նույն տեղում, 234)։* Մանուշը *անհարմար զգաց ետ տալ (ՍԽՀ, II, 263)։* Ինքը *իրավունք չունի կարգադրություն անել* Միսակյանին *(Նույն տեղում, 286)։ Ցանկություն հայտնեց* նախքան Այրարատ՝ *գնալ* տուն *(ԴԴՎ, 452)։* Մացակ ապերն իրեն *թույլ չէր տա* Արուսին որևէ *վնաս տալ (ՆՁՀ, 185)։ Հարկ համարեց հայտնել* ինձ *(Նար., IV, 98)։ Հարկավորություն եմ համարում հաշիվ տալ* և խորհուրդ ու քաջալերություն *պահանջել (Թ., V, 14)։*

§ *384. Անորոշ դերբայով բայական բաղադրյալ ստորոգյալ կարող են կազմել նաև եղանակավորիչ կամ կերպավորող բայերի երկրորդական բաղադրյալ ժամանակները. օրինակ՝ Ստիպված չի լինի* օտար երկրներում հաց *որոնել (ՐԿ, 389)։* Որ *ստիպված լինեին* թշնամիների միջոցով զենք *ստանալ (Նույն տեղում, 336)։*

II. ԲԱՐԴ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 385. *Բարդ կոչում ենք այնպիսի ստորոգյալը, որ կազմվում է անվանական և բայական ստորոգյալների միասնությունից։ Մի շարք այնպիսի ածականներ, որոնք գերազանցապես եղանակավորող կամ կերպավորող բայերի հիմքերն են ներկայացնում,* եմ *և* լինել *բայերի հետ կազմում են անվանական ստորոգյալներ. Ինչպես եղանակավորիչ և կերպավորող բայերին, այնպես էլ սրանց հաճախ առնչվում է մի որևէ բայի անորոշ դերբայ, և երկուսը միասնաբար կազմում են մի բարդ ստորոգյալ։ Այս բարդ ստորոգյալները նախորդներից հիմնականում իրենց ձևով են տարբերվում. մինչդեռ նախորդ պարբերությունների մեջ քննված եղանակավորիչ դիմավոր ձևերը բայեր են, այստեղ դրանք կազմված են մի անունից (սահմանափակ) և մի բայական հանգույցից, ուստի և իրենց հարող անորոշ դերբայի հետ կազմում են մի բարդ անվանական և բայական ստորոգյալ։*

Այս բարդ ստորոգյալի համար անվանական մաս կարող են լինել՝ կարող, պարտավոր, անկարող, ուրախ, մտադիր, պատրաստ հոժար, անզոր *և մի քանի ուրիշները. բերենք օրինակներ՝ Պատրաստ է հոժար,* և ի հօգուտ մեզ, *սիրել* չարասիրտ Կատարինային և *ամուսնանալ (Շեքս., II, 82)։* Ես *պարտավոր եմ* իր հարսանիքին բոկոտն *պարել (Նույն տեղում, 86)։ Պատրաստ եմ* Երդումս *դրժել* նրա հետ *(նույն տեղում, 112)։ Պատրաստ էի պաշտպանել* նրան մինչև իմ արյան վերջին կաթիլը *(Շիրվ., II, 489)։ Կարող է* ոչինչ *հայտնած չլինել (Նար., IV, 111)։* Բայց *անզոր էր հասկանալ (Շաթիրյան, 99)։ Բարի եղեք* մի հատ էլ ծխախոտ *տվեք (Շիրվ., VIII, 283)։* Բոլորն այժմ *կարող են լինելու* իրենց գործով *զբաղվեն (Թ., V, 461)։* Մի ուրիշը հազիվ թե տասն քսան տարիների ընթացքում *կարող կլիներ կատարել (ԲԿ, 378)։ Ուրախ եմ ծանոթանալ (Շիրվ., VIII, 324)։* Նա *մտադիր չէ ամուսնանալ* յուր զոհի հետ *(Շիրվ., II, 481)։ Կարող էին* ավելի օգտավետ, ավելի նպատակահարմար գործերով *զբաղված լինել (ԲԿ, 391)։* Ես *պարտ*[1] *եմ խոսել (Շեքս., I, 205)։ Ուրախ կլինեն* նրա նման փեսա *ունենալ (ՆԶՀ; 149)։* Դա *կարող էր* քրեական *հանցանք համարվի (Բ., I, 559)։* Եվ դեռ չենք տվել կյանքում մենք այն, ինչ *կարող էինք* գուցե մենք *տալ (Զե, 188)։ Կարող է* ավելի *սիրալիր թվալ,* քան թե ձեզ հետ *(Շիրվ., VI, 277)։ Մտադիր չէ վերադառնալ* ամուսնու մոտ *(ՆԶՀ, 388)։* Միթե

[1] Պարտ եմ *նշանակում է «պարտավոր եմ»։* Պարտ եմ *ձևը այժմ անգործածական է։*

կարծում ես, որ ես երբևիցե կարող կլինեմ մոռանալ նրան (Նար., IV, 7)։ Եվ հիմա որքան դժվար է դարձել նրան ետ բերել (Շեքս., I, 159)։ Մարի, ես քեզ շատ եմ սիրում, որ կարող լինիմ այդպիսի ցածություն կատարել (ՐՊԵ, 367)։ Շատ անհամբեր եմ գիտենալ (Ր., I, 291) (նաև՝ § 437)։

§ 386. Բացի ձևական տարբերությունից, սորոգյալի բայական և անվանական եղանակավորիչ բաղադրիչները ունեն նաև ոճաիմաստային առանձնահատկություններ։ Մինչդեռ եղանակավորիչ բայերը արտահայտում են հնարավորության, ունակության, հակման, մտադրության մի պրոցես՝ անորոշ դերբայի ցույց տված գործողությունը կատարելու համար, իսկ անվանական ձևերը (կարող եմ, մտադիր եմ) արտահայտում են սոսկ ի վիճակի լինելը, մի բան անելու ցանկություն, հնարավորություն, կամք, ունակություն ունենալը կամ չունենալը. օրինակ՝ Չկարողացա ես կրել կյանքում պայծառ անունը քո ուրպես դրոշ (Չե, 169)։ Երբեք էլ չեմ կարողանալու սրտալի սիրել (Թ., V, 274)։ Ինչպես կարողանում է անմեղ ձևանալ իմ առաջ (Շիրվ., I, 494)։

Այս օրինակների մեջ նկատվում են սկզբնական աշխատանք, ճիգ, տևական պրոցես. բացի այդ, եղանակավորիչ բայերը հնարավորություն ունեն դրսևորելու ոչ միայն բոլոր դեմքերը, այլև ժամանակներն ու եղանակները։ Իսկ անվանական եղանակավորիչները չեն արտահայտում նախնական աշխատանք, ճիգ, տևական պրոցես և ավելի կարուկ են։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Այս դեպքում էլ բնականորեն անորոշ դերբային կարող է փոխարինել ըղձականի ապառնու համապատասխան դիմավոր ձևը (§ 371)։ Բացի այդ, անորոշը լինում է թե՛ պարզ, թե՛ մի հարադրական բարդություն և թե՛ մի երկրորդական բաղադրյալ ժամանակի անորոշ, այսինքն՝ կազմված մի հարակատար դերբայից և լինել անորոշից։ Վերևում բերված օրինակների մեջ այդ բոլոր ձևերն էլ առկա են։

§ 387. Սովորաբար եղանակավորիչ ձևերը նախորդում են անորոշ դերբային, բայց չի բացառված շարադասության շրջուն ձևը. օրինակ՝ Բայց Անուշին սեր տալ նա չի կարող (ՆՁՀ, 227)։ Որով կնիկներն զվարճանալ սիրում են (Ր., I, 552)։

Նկատենք, որ շրջուն շարադասության մեջ անորոշի և եղանակավորիչ բայի հնչերանգությունը թուլանում է և այդպիսի ձևը ձեռք է բերում հուզական որոշ արտահայտչություն։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Ինչպես որ մի եղանակավորիչ բայը կարող է իշխել մեկից ավելի անորոշ դերբայների, այնպես

էլ մի անորոշը կունենա մեկից ավելի եղանակավորիչներ, որոնք նաև կարող են կրկնվել. օրինակ՝ Լամիեն չի ուզում և չի կարող նրա կինը դառնալ, չի՛ կարող, չի՛ կարող, չի՛ կարող (Շիրվ., V, 425)։

Ծանոթություն. 2. Անորոշ դերբայը կարող է վերաբերել ոչ միայն մի առանձին գործողության, այլև ընդհանուր երևույթի, որը կբնորոշվի միմիայն մի շարք անորոշներով։ Այսպիսի պարագայում անորոշը դեղչվում է, և եղանակավորիչ դիմավոր ձևերով արտահայտվում է այդ ընդհանուրը, որ մի առանձին անորոշ դերբայով չի արտահայտվում. օրինակ՝ Դավթարն աչքիս դարձավ դաժան, թիվ, կոտորակ, թվանշան Ուղեղիս մեջ դարձան որդեր, Քիչ էր մնում սիրտս պայթեր. Ես խռոված, խենթ Երեխա՝ Փող ու աղջիկ թողի, փախա, Թե չեմ կարող, ես չեմ կարող, Ես գրող եմ, գրո՛ղ, գրո՛ղ (Թ., II, 94)։

12. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 388. Անվանական ստորոգյալ է կոչվում այն ստորոգյալը, որը կազմված է մի անունից (գոյական, ածական, դերանուն և այլն)[1] և մի վերացական բայական հանգույցից։ Անվանական ստորոգյալի մեջ անունը ցույց է տալիս մի այնպիսի հատկանիշ (լինի նույնիսկ գոյական), որ առանձնացվում է ենթակայից և վերացական հանգույցի միջոցով վերագրվում, հավասարվում է ենթակային։ Ուրեմն անունը, ինչ խոսքի մաս էլ լինի, ստորոգյալի մեջ հատկանիշ է արտահայտում, որ հանվում է ենթակայից և հայերենում կոչվում է ստորոգելիական վերադիր։ Երբ ասում ենք՝ Զարենցը բանաստեղծ է, Զարենցի բազմաթիվ հատկանիշներից մեկը, որ բանաստեղծ լինելն է, հանում ենք և դարձյալ վերագրում, հավասարեցնում ենք նրան՝ անտես անելով նրա այլ բազմազան հատկանիշները։

Անվանական ստորոգյալի մեջ բայական հանգույցը կատարում է ստորոգողի, վերագրողի դեր, այսինքն՝ ենթակայի հատկանիշը նորից վերադարձնում է ենթակային, որով և ստացվում է ստորոգյալը. բայց բայական հանգույցի դերը դրանով չի սահմանափակվում. այդ վերագրումը, ստորոգումը հանգույցի միջոցով

[1] Նույնիսկ կարելի է մի դիմավոր բայ մտքով գոյականացնել և դարձնել ստորոգյալի անվանական մաս. օրինակ՝ իսկ մենք ամենքս, կարծեմ, ինչ ուզում եք՝ ենք (Նար., III, 127)։ Այդ ժամանակ մարդս «գուն շատ ապրիս է լինում» (ՌՊՆ, 574)։

դրվում է որևէ (ներկա, անցյալ, ապառնի) ժամանակի մեջ և նշում է ստորոգյալի դեմքը, թիվը, ժամանակը, եղանակը։

§ 389. Հայերենում հիմնական բայական հանգույցը եմ օժանդակ բայն է, որ սակավ դեպքերում ունի նաև ինքնուրույն գործածություն՝ կա, գոյություն ունի, գտնվում է նշանակությամբ. օրինակ՝ Նրա ձեռքումն էին ամենաշահաբեր գործերը և ամենաբերրի հողերը (ՄխՀ, II, 239)։ Այս նախադասության մեջ էին ունի գտնըվում էին նշանակությունը։ Ես եմ նշանակում է՝ Ես կամ, ես գոյություն ունեմ:

Եմ բայը իբրև հանգույց նշանակում է հավասար է և ամենավերացական բայական հանգույցն է, որ հատկանիշը (ստորոգելիական վերադիրը) ստորոգյալին վերագրելով հանդերձ՝ արտահայտում է միայն ներկա, անցյալի անկատար ժամանակները, դեմքերն ու թվերը։ Այս հանգույցի միջոցով չեն դրսևորվում եղանակները և մնացած ժամանակները։ Բայական այս հանգույցը տվյալ գործածությամբ լիակատար կերպով զրկվում է իր բառական նշանակությունից և օժանդակ, ձևական բառի դեր է կատարում։ Եղանակի դրսևորման առնչությամբ կարելի է ասել, որ եմ բայական հանգույցով կազմված անվանական ստորոգյալները միայն սահմանական եղանակ են արտահայտում։

§ 390. Բայական հանգույց է դառնում նաև լինել բայը. սա համեմատաբար ավելի ինքնուրույն է և առայժմ կիսով չափ է վերացականացած, իբրև անվանական ստորոգյալի բայական հանգույց՝ նշանակում է, որ ենթական մի բան է լինում, փոխվում է մի այլ բանի, մի վիճակից անցնում է մի այլ վիճակի։ Լինել բայը մի առարկայի մի այլ առարկա դառնալու պրոցես է արտահայտում, իսկ եմ բայը մի առարկա հավասարեցնում է մի ուրիշի, նույնացնում է։ Լինել բայի նշանակությունն է արտահայտում նաև դառնալ բայը, որոնք ունեն բոլոր ժամանակները, եղանակները, դեմքերը և թվերը։

§ 391. Անվանական ստորոգյալ են կազմում նաև մի շարք չեզոք բայեր, որոնք արտահայտում են նախկին վիճակի պահպանում, մի այլ բան ձևանալը, երևալը, վերածում, փոփոխում և այլն. Այդ բայերն են՝ կտրել (կտրվել ձևով), կանգնել, նստել, երևալ, մնալ, ներկայանալ, ձևանալ, հանդիսանալ, մեծանալ, թվալ, գալ, ընկնել, կենալ, կամ, դուրս գալ, որոնք իբրև անվանական բաղադրիչ, համեմատաբար, քիչ են գործածական և չնչին բացառությամբ արտահայտում են բոլոր ժամանակները, դեմքերը, թվերը, եղանակները։

Ծանոթություն 1. Կամ բայը հավելավոր բայ է և ունի միայն ներկա և անցյալ անկատարի ձևերը, առանց եղանակավորման: Կենալ բայը կիրառվում է միայն հրամայական եղանակում. մյուս ձևերը բարբառային են:

Ծանոթություն 2. Նախորդ և հաջորդ պարբերության մեջ թվարկված բայերը գերազանցապես պահպանում են իրենց բառական նշանակությունը:

§ 392. Բացի հիշյալ բայերից, բայական հանգույցի դեր են կատարում մի շարք ասացական, իմացական, գործողության բայերի կրավորականները, որոնք անունների (գոյական, ածական...) հետ կազմում են բաղադրյալ անվանական ստորոգյալ: Այդ բայերից հիշատակելի են՝ ասվել, կոչվել, ընտրվել, անվանվել, համարվել, ընդունվել, հրատարակվել, հռչակվել, հաշվել և այլն:

§ 393. Այն ստորոգյալը, որ կազմված է մի անվանական բաղադրիչից և մի բայական հանգույցից, կոչվում է բաղադրյալ անվանական ստորոգյալ: Անվանական բաղադրիչը հայերենի քերականության մեջ կոչվում է ստորոգելիական վերադիր, իսկ բայական մասը՝ հանգույց, որ կարելի է կոչել՝ ստորոգիչ, ստորոգելիական հանգույց:

§ 394. Հայերենում առանց բայական հանգույցի ստորոգյալը օրինաչափական չէ, սակայն երբեմն, մանավանդ բանաստեղծության մեջ, հանգույցը զեղչվում է, և մնում է միայն անվանական մասը, որ պարզապես ստորոգելիական արժեք է ստանում: Կարելի է մտքով բայական հանգույցը վերականգնել, բայց այս դեպքում ստացվում է բռնազբոսիկ, ոչ բնական վերականգնում. օրինակ՝ Իսահակյանը ունի այսպիսի մի բանաստեղծություն. Դու Արագած, ալմաստ *վահան* Կայծակեղեն թրերի, Գագաթներդ՝ բյուրեղ *վրան* Թափառական ամպերի: Մեգ ժայռերդ՝ արծվի *բույն*, Լճակներդ՝ *լույս—փերուզ*. Առուներդ՝ մեջքիդ փայլուն Պերճ *գոտիներ* ոսկեհյուս: Աղբյուրներդ գիշեր ու զօր Խոսքի բռնված իրար հետ, Վտակներդ՝ *գիլ ու գլոր* Արեւշուտե փեշերեդ. Թիթեռներդ՝ հուր հրեղեն Թռչող ճախրող *ծաղիկներ*. Ջառ ու զարմանք երազներեն Պոկված *ծվեն-ծվիկներ*: Ծիրանավառ դուն *թագուհի*, Բուրումների դու *աղբյուր*, Ծաղիկներդ հազար *գույնի*, Հազար *անուն*, հազար *բույր* (Իս., II, 15):

Ընդգծված բառերը ստորոգելիական վերադիրներ են՝ առանց բայական հանգույցի. սակայն չի կարելի ասել, որ դրանք առանց այդ հանգույցի ստորոգում չունեն. ստորոգման ըմբռնումը առկա

է, և պարտադիր չէ, որ անպայման այդ զեղչված հանգույցը վերականգնենք, որպեսզի ստորոգման գաղափարը իրականանա։ Այդպիսի ստորոգումը լեզուներում առաջ է գալիս հանգույցի զեղչումով և հետզհետե դառնում է բնական։ Մեր բանաստեղծության մեջ ստորոգման այդ ձևը արդեն օրինաչափական երևույթ է, որ կիրառվում է նաև արձակի մեջ, մանավանդ, առածական խոսքերում, օրինակ՝ **Մարմինը՝ քաղցր** *մաճար* (ԱԲՄ, 66)։ **Ան, Երկինքը** *վկա* (Շեքս., I, 150)։ *Հրեն, հրեն* **քաղաքը** (ՍԽՀ, II, 362)։

§ 395. Հանգույցի զեղչման պատճառները բազմազան են. ինչպես ասվեց, բանաստեղծության մեջ տաղաչափության պահանջներով հաճախ հանգույցը զեղչվում է։ Այս երևույթը տեղի է ունենում նաև այն դեպքում, երբ հարցական նախադասության պատասխանը ստորոգելիական վերադիրն է։ Երբ նախորդ նախադասության միևնույն բայական հանգույցը պետք է կրկնվի հաջորդ նախադասության մեջ, նախորդում զեղչվում է, հաջորդում դրվելու պայմանով, նաև այն դեպքում, երբ ամբողջ ստորոգյալը նույնությամբ կրկնվում է։ Բայական հանգույցի զեղչումը լինում է նաև առածական խոսքերի մեջ, որտեղ դարերի ընթացքում հանգույցը ընկնում է՝ առանց իմաստի վրա ազդելու։

Հաճախ կրկնվող այս զեղչումները աստիճանաբար տարածվում ու դառնում են լեզվի մեջ ներքին անհրաժեշտություն՝ ձեռք բերելով քերականական օրինականացում։ Ահա օրինակներ, որտեղ մեր հիշատակած բոլոր պայմանները գրեթե առկա են։

Արքունիք է, ժամանել Լաերտը։ Հավատացեք, մի կատարյալ *ջենտլմեն* (Շեքս., I, 104)։ **Հերթը հիմի իմն է, թե** *քոնը* (ՍՁ, V, 383)։ **Ոչ քոնն է, ոչ** *դրանը*, **իմն է** (Թ., III, 149)։ **Այնտեղ ամեն ինչ ուրախ ու զվարթ է, և եղած վիշտն էլ,** *քնքուշ ու թեթև* (ՍԽՀ, II, 204)։ **Նրանք իրար հետ այնպես հաշտ էին, այնպես** *սիրալիր* (Շեքս., I 149)։

§ 396. Երբ զեղչումը պայմանավորվում է կրկնությունից խուսափելով, այդտեղ իսկապես հանգույցը զեղչված պետք է համարել և վերականգնել, իսկ երբ զեղչումը հին մտածողության հետևանք է և արդեն ավանդություն, որ և արտահայտչական կայունություն է ձեռք բերել, այսպիսի դեպքերում ստորոգելիական վերադիրը պետք է ստորոգյալ համարել և կոչել **պարզ անվանական ստորոգյալ**, օրինակ՝ **Նա** *ով*, **նա** *ով* (Քրեստ., 143)։ **Մենք** *զինվորյալ*, **մենք** *զինվորյալ* (ԴԴՎ, 473)։ **Քեզ** *ամանաթ* **մեր սուրբ վաթան** (Թ., I, 445)։ **Արազը ծով.** **արազն** *էլման* (նույն տեղում)։

Անուններդ *վաճառական, ու* էս տեսակ խայտառակ բան *(նույն տեղում, 269)*։ Ես էլ էնպես, նորեկ տարի, մի *խոտ,* մի *բույս, ոչ ավելի (նույն տեղում, 114)*։ Իմ կնունքին երկինքը՝ *ժամ,* արևը՝ *ջահ* սրբազան *(նույն տեղում, 215)*։ Ճշմարտությունը՝ ահա ճակատիս վսեմ նշանակ, նրա անունը՝ վեհ աշխատանքի կարմիր *հաղթանակ (ՀՀԵ, 80)*։ Ձեզ Անահիտ՝ *հսկիչ* և *խնամակալ (ՆՁԱ, 71)*։ Ես տեսնում եմ մորս նորից, ստինքները՝ երկու *ձագար (ՁԵ. 39)*։ Նրա դեմքը՝ արծաթե *ափսե (նույն տեղում)*։ Ես՝ *կալանավոր* աշխարհում արար, Հովիվներն՝ *ազատ,* հեռու սարերում *(Տ., I, 291)*։ Ինչո՞ւ երեսդ *արյունլվիկ (Թ., I, 327)*։ Երկինքը *թուխպ,* երկիրը *սև (նույն տեղում, 342)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Հաճախ ենթական և անհանգույց վերադիրը միասին կազմում են մի դարձվածքային կապակցություն. օրինակ՝ Ձեռքս՝ բան, ոտքս՝ գերեզման *(Իս., III, 66)*։ Աչքդ լույս *(Ա., «Շիրակ», 32)*։

ա) ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ *397. Բոլոր այն բայերը, որոնք անվանական ստորոգյալի հանգույց են դառնում, ամենից շատ կիրառվում են գոյականների հետ։ Հայերենում գոյականները գերազանցապես ուղղական հոլովով են դրվում և ցույց են տալիս այն առարկան, ինչ որ է ենթական, ինչ որ դառնում է, լինում է, ինչպիսին մնում է, երևում է, ձևանում է, ներկայացնում է իբրև մի որևէ դիրք, պաշտոն, կոչում ունեցող առարկա և այլն։*

բ) ԳՈՅԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐԸ ԵՄ, ԼԻՆԵՄ *ԲԱՅԵՐԻ ՀԵՏ*

§ *398. Ինչպես ասվեց, այս բայերը, իբրև ստորոգելիական հանգույց, ամենից հաճախ են կիրառվում։* Եմ *բայը արտահայտում է ենթակային վերագրվող հաստատուն, կայուն հատկանիշը, իսկ* լինել *ցույց է տալիս փոփոխվող հատկանիշը. օրինակ՝* Նա *կլիներ հույն, ասորի, պարսիկ (Ր., I, 189)*։ Բայց Դվինը նրա *կալվածն է (Մուր., III, 364)*։ Բայց նա այնքան ազնիվ և աշխատասեր *մարդ է (Շիրվ., VII, 141)*։ Իսկ ձեր վերքերին ես ինքս *բժիշկ կլինեմ (Շեքս., I, 151)*։ Հասմիկն էլ *վկա կլինի (ՆՁՀ, 409)*։ Դուք *կլինեք* պաշտոնական *խմբագիր-հրատարակիչ (Շիրվ., VII, 386)*։ Ժամանակն էլ *լինում է ձմեռ (Թ., III, 115)*։ Եվ դրանք ուրեմն գարշելի նազարացու *սեփականությունն են (Մուր., III, 364)*։ Դա մի բարակ ու շատ երկար *կենդանի էր (ՎԱՍԱ, 425)*։ Եվ ընդամենը ասե–

լիքներս մի քանի *բացականչություններ էին (Թ., V, 355)։* Արանց ամբողջ կյանքը *կռիվ է եղել* քարի դեմ *(ՎԱՍԱ, 427)։* Նամակի հե դիմակն էր վերստին ձերբակալված գավառապետը *(Զե, 333)։* Խորունկ սիրտս *հուր-հնոց էր (Իս., I, 83)։* Մարդն *է ոգի*, մարդն *է ղողանջ (Իս., I, 86)։*

§ *399. Ստորոգյալի անվանական մասը կարող է լինել նույն գոյականը, ինչ որ ենթական է։ Այս դեպքում այն տարբերությունը կա, որ ենթական առարկա է ցույց տալիս, իսկ ստորոգելիական վերադիրը՝ նույնի գոյականական հատկանիշը և կամ ուղղակի արտահայտում է նույնությունը. իհարկե, ժխտական ձևը հակառակն է ցույց տալիս. օրինակ՝* Խոսք եմ տվել ու խոսքս *խոսք է (Թ., III, 266)։* Իմ կյանքը *կյանք չի լինի (Նար., II, 281)։* Եթե մեղքս այնքան մահացու *մեղք է (Շեքս., I, 73)։* Իմ ամուսինը *ամուսին չէ (Նույն տեղում, 174)։* Բայց մարդը *մարդ է (Նույն տեղում, 150)։* Իմ դատս էլ *դատ է (Նույն տեղում, 124)։*

§ *400. Ինչպես արդեն ասվել է, երբ ստորոգելիական վերադիրը կազմված է բազմակի անդամներից, բայական հանգույցը սովորաբար դրվում է առաջին անդամի հետ. օրինակ՝* Նա իմ *բարիքն է*, իմ *կյանքը, տունը*, իմ *կահ-կարասին, դաշտը, ամբարը*, իմ *ձին*, իմ *եզը*, իմ *ավանակը*, իմ ամեն ինչը *(Շեքս., II, 104)։* Հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովը *հոգի է*, կատարյալ *հոգի (Զե, 264)։ Հրաշք էր*, զարմանալի *զարմանք* այդ Համո Համբարձումովիչը *(Նույն տեղում, 281)։*

§ *401. Ստորոգելիական վերադիրը կարող է կազմված լինել մի ամբողջ կապակցությունից, որը վերցվում է իբրև մի վերադիր. օրինակ՝* Մենակ Մեռելի Ենոքն էր հին *օրերի օրը (Զե, 287)։* Այսուհետև *ի՞նչին ես պետք* դու ինձ *(Նար., I, 99), Բանն այն է*, որ երկուսն էլ ունեն գիտակցություն *(Նար., III, 318)։*

§ *402. Երբեմն ամբողջ նախադասությունը մի կապակցություն է. այսինքն՝ ենթական, վերադիրը և հանգույցը մի դարձվածքային միասնություն են ներկայացնում. օրինակ՝* Աչքդ լույս լինի· Բանս բուրդ է:

§ *403. Երբեմն առանց հոդի ենթակա անորոշ դերբայը ստորոգելիական վերադիրի հետ կապակցվում է* այս, այդ, այն, սա *ցուցական դերանուններով, որոնք փաստորեն փոխարինում են ենթակա անորոշին. օրինակ՝* Լինել թե չլինել, *այս է խնդիրը (Շեքս., I, 49)։*

§ *404. Հայերենին ավելի հատուկ է այս պարագայում* եմ

բայը փոխարինել նշանակում է *բայով, որ դրեթե նույն դերն է խաղում. օրինակ՝* Բայց հարատևել համառ վշտի մեջ՝ *նշանակում է* սաստիկ ամբարիշտ *կամակորություն (Շեքս., I, 12)*։ Չգնալ կռվի հրամանին, չգնալ առյան, կնշանակի թույլ տալ, որ պարսից զորքը խուժեն շարժվի դեպի մեր աշխարհը *(ԴԴՎ, 255)*։

§ *405. Հատուկ ոճավորված խոսքի մեջ ստորոգելիական վերադիրը կարող է նաև գոյական ենթակայի հետ կապակցվել վերոհիշյալ ցուցական դերանունների միջոցով, որոնք տվյալ դեպքում շեշտում և առանձնացնում են ենթական. օրինակ՝* Մահը՝ *այդ* միակ *վիշտն է* տիեզերական, միակ բռնությունը ժամանակի վրա, միակ ֆիշխանը տարածության վրա *(Իս., III, 213)*։ Սակայն անվախճան արբեցումը՝ *այս է* ահա շահավոր *գործը (նույն տեղում, 190)*։

Ծանոթություն. Այս ցուցականի հետ *զուգահեռ հաճախ կիրառվում է նաև* ահա *ցուցական բառը, որը ավելի ընդգծում է կապակցությունը։* Կամենալ ապրել՝ *ահա* չարիքի հավերժական արգանդը *(ԻԵ, 322)*։ Զգձգել, ժամանակ շահել,— ահա մեր ուժը, մեր խելքը *(ԴԴՎ, 256)*։

§ *406. Շարադասության առումով ցուցականով կապակցվող ձևերի մեջ սովորաբար ենթական և իր լրացումները դրվում են ստորոգելիական վերադիրից և վերջինիս լրացումներից առաջ, սակայն չի բացառված նաև հակառակ շարադասությունը։ Երկու դեպքում էլ հնչերանգության առանձնացումը առկա է։*

§ *407. Երբ անորոշ դերբայ-ենթական եռադաս է ստորոգելիական վերադիրի նկատմամբ, ապա այս պարագայում հնչերանգության առանձնացում է առաջանում առանց ցուցական բառերի. օրինակ՝* Միթե չես տեսնում, որ իմ առաջին պարտքն է՝ չհանձնել ինձ հավատացող արարածին իր հոշոտող թշնամուն: Ավելի մեծ ոճիր է՝ վտանգված թույլին զրկել օգնությունից *(Իս., III, 184)*։

§ *408.* Եմ *բայի փոխարեն հազվագյուտ կիրառվում է* կամ *բայը, որը ավելի խոսակցական լեզվին է հատուկ. օրինակ՝* Բա *կնանիք չկաք (ԴԴՎ, 399)*։ Շաշ Սիմոնի *թայն* էլ *չկաս (Թ., III, 18)*։

գ) ԳՈՅԱԿԱՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ՝ ԴԱՌՆԱԼ, ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, ԿՏՐԵԼ, ՆԵՐԿԱՅԱՆԱԼ, ԿԱՆԳՆԵԼ, ԸՆԿՆԵԼ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ԲԱՅԵՐԻ ՄՈՏ

§ *409. Իմաստային տարբեր նրբություններով* լինել *բայի պաշտոնը կատարում են նաև* դառնալ, հանդիսանալ, կտրել, ներկայանալ, կանգնել, ընկնել, հանդես գալ *բայերը, որոնցից* կտրել,

ընկնել, կանգնել բայերը որոշ գոյականների հետ, պահպանելով հանդերձ իրենց շատ հին նշանակությունը և նոր իմաստավորվելով լինել, դառնալ, բայերի նշանակությամբ, այժմ արդեն դարձվածքային արժեք են ստացել. Համեմատի՛ր հետևյալ օրինակները. Երրորդ գիշերը ես էլ նրանց հետ պահակ կանգնեցի (Շեքս., I, 15)։ Միքրներսեհը հիմա շուն կտրեց այնտեղ (ԴԴՎ, 478)։ Ծառը կըռպեց կոպիտ մացառ, ուռը՝ բաղեղ, վարդը՝ փուշ (Թ., II, 153)։ Իրավ, որ նա այս անգամ Արելյանին բավական արժանավոր ընկեր ներկայացավ (Շիրվ., IX, 186)։ Քաշի միավոր հանդիսանում է գրամը[1] (Կիս., Թվաբ., 95)։ Երիտասարդ Արտաշիրը թագավոր դարձավ (Ր., I, 185)։ Ինչպես անենք, որ իմ այգին դառնա դրախտն առաջվան (Թ., II, 156)։ Ջուր կտրվեց տատիս լեղին (Թ., I, 219)։ Ձեր ձայնը ինձ պաշտպան կանգնի (Շեքս., I, 131)։ Ջուր կտրեիր մորդ փորում, Հասո (Փափազյան)։ Մի քանի ժամանակ ղաչաղ ընկավ (Թ., IV, 187)։ Ունկնդիրներ էր որոնում, որպիսին ներկայացան կլոշարները (Իս., III, 111)։

§ 410. Հանդիսանալ և ներկայանալ բայերը հայերենում այս կիրառությամբ ընդօրինակման հետևանք են և շատ սակավ են կիրառվում, իսկ մնացածը, բացի դառնալ բայից, ինչպիսի գոյականի հետ էլ կիրառվեն, արդեն դարձվածքային արժեք ունեն, ուստի և սահմանափակ են։ Մենք այստեղ դրանք առաջ բերեցինք, որովհետև նշանակությամբ մոտենում են լինել բային և կազմում են դարձվածքային ամբողջություններ։ Այս շարքում իսկական ստորոգյալի դերում հաճախ հանդես է գալիս դառնալ բայը։

Պետք չէ մոռանալ նաև, որ սրանցից հատկապես կտրել, կանգնել, ընկնել բայերը առանձնապես գոյականների հետ են միանում, իսկ մյուսները կարող են նաև այլ խոսքի մասերի հետ ստորոգյալ կազմել։

դ) ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ՄԻ ՔԱՆԻ ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐԻ ՄՈՏ

§ 411. Գոյականով անվանական բաղադրյալ ստորոգյալ են կազմում մի քանի չեզոք բայեր, որոնք ցույց են տալիս առարկայի մի որևէ վիճակում մնալը, մի բան երևալը, ձևանալը, գտնվելը և այլն։ Այդ բայերից հիշատակելի են՝ երևալ, թվալ, ձևանալ, նստել,

[1] Գոյականով օրինակներ ձեռքի տակ չունենալու պատճառով, սրանք առաջ բերինք։

մնալ, կանգնել, կեղծել (*կեղծ ձևանալ*), երթալ, գնալ, մեծանալ, գալ:

Հանելուկը *մնում էր հանելուկ* (*Նար., II, 286*)։ Սասմա սարերում *նստած էր իշխան* (*Թ., II, 103*)։ Մսրա Մելիքն էր *նստած* թագավոր (*նույն տեղում, 104*)։ Ծովիկը մի զարմանալի *աղջիկ էր երևում ինձ* (*ՐԿ, 329*)։ Մանուկ օրից սար ու ձորին ես *մնացի* մոտ *ընկեր*, Աշխատանքի հանգիստ օրին ես *մնացի* մոտ ընկեր (*Թ., I, 545*)։ Կովկասը պատ է կանգնած (*նույն տեղում, 188*)։ Մարգարը *մնաց* մի քանի ոչխարների, մի կովի, մի բուռն հողի *տեր* միայն (*Փափ., 54*)։ Զորրորդը *բարեգործ է* ձևանում, հինգերորդը *գրող է կեղծում* (*Թ., IV, 90*)։ Փուշը *մնաց* էլ ետ *փուշ* (*Թ., II, 156*)։ Հրեղեն փարեղեն մի *արարած է թվում* Դիվանային (*Թ., III, 157*)։ Միայն թե դուք միշտ մանուկ մնացեք (*ՇՀԸ, 115*)։ *Եվ աշնան ցուրտ* քամին ինձ *մարտակոչ թվաց*. *թվաց* կովի կանչող հնչուն *շեփոր* (*ՉԸ, 49*)։ Կյանքը *թվում էր* ներդաշնակ ու հմայիչ *երաժշտություն* (*Քոչար, 6*)։ Ետ եկեք, զարնան վարար *գետ եկեք* (*Թ., I, 205*)։ Բաբելոնի գետեզերքին *նստել էին* նրանք գերի (*նույն տեղում, 183*)։ Հավետ *մնանք* մենք գերի (*նույն տեղում*)։ Ծուտով սև հողին *կերթամ* ես գերի (*Թ., II, 103*)։ Քու մոր համար մխիթարիչ ու սփոփիչ *մեծանաս* (*ՌՊ, I, 24*)։ Գիշերս մորս հոգին *երազ եկավ* ինձ (*Թ., III, 224*)։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Անվանական ստորոգյալ կազմող չեզոք բայերի թիվը սրանով չի սահմանափակվում. մենք այստեղ բերում ենք միայն այնպիսիները, որոնք գոյականի հետ են միանում, կամ ավելի ճիշտ տվյալ օրինակների մեջ գոյականի հետ են բաղադրյալ անվանական ստորոգյալ առաջ բերում։ Ի հավելումն սրան տե՛ս §§ 432, 433 և այլն։

§ *412. Ինչպես արդեն նշվել է, այսպիսի բաղադրյալ ստորոգյալների գործածությունը սահմանափակ է։ Այդ սահմանափակությունը պատճառ է դառնում, որ դրանք աստիճանաբար վերածվեն դարձվածքային կապակցությունների. և այսպիսի ստորոգյալները, որ նախապես եղել են բաղադրյալ անվանական ստորոգյալներ, այժմ արդեն գերազանցապես դարձվածքային արժեք ունեն։ Բացի այդ՝ ժողովրդական խոսակցական արտահայտություններ են* նստել գերի, պատ կանգնել *և այսպիսի այլ կապակցություններ. սովորաբար ասվում է՝* նստել որպես, իբրև գերի, կանգնել իբրև, որպես պատ (*§ 414*)։

ե) ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ՄԻ ՔԱՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ՄՈՏ

§ *413. Գոյականները ստորոգելիական վերադիր են դառնում նաև մի քանի ասացական, իմացական, գործողության և այլ կարգի բայերի կրավորական ձևերի մոտ, որոնք ցույց են տալիս, որ ենթական կարծվում, համարվում, ասվում, հռչակվում է իբրև մի այլ բան, կամ հենց դրանցով հաստատվում է նրա գոյականական ամենաէական հատկանիշը։ Այդպիսի բայերից հիշատակելի են՝* ասվել, ընտրվել, կարգվել, ընդունվել, կոչվել, անվանվել, համարվել, ճանաչվել, կարծվել, գտնվել, նշանակվել, հաստատվել, հիշվել, դրվել *(համարվել)*, հրապարակվել, հրատարակվել, հայտարարվել, հռչակվել, սեպվել, առաջադրվել *և այլն. օրինակ*՝ Առաջնորդի մոտ *հյուր էր կանչված (ՐԿ, 397)*։ Միայն թե անձի հոգածությունը *մոլորություն սեպվի* և պաշտպանվելը *հանցանք համարվի (Շեքս., I, 149)*։ Դուք այստեղ *կոչվում եք* Պրոսերեսիոս *(Ր., I, 186)*։ Ժպիտը *մեղք է համարվում (Թ., II, 14)*։ Շանգ Շենգը իրավամբ *կոչվել է «Աշխարհի ամենաերկայն գերեզմանոցը» (Իս., III, 251)*։ Ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանվեիք *(Ընտ. էջեր, 327)*։ Տատս *կոչվում էր* Շուշան *(ՐԿ, 7)*։ Նա քաղաքի մեջ ամենաընտիր *աշակերտն էր համարվում (ՌՊ, II, 102)*։ Աղվանից աշխարհի թագավորանիստ քաղաքը Պարտավն էր, որ այժմ *ասվում է Բարդա (ՂԱՀ, 19)*։ Ես *զինվոր եմ կանչած (=կանչված)* առաջին ամսում *(Թ., V, 23)*։ Այդ գոմերի անունով էլ սարը *կոչվում է Գոմեր (ՆԶՀ, 237)*։ Հայ աղջիկ ես, *Հեղինե էլ կոչվիր (նույն տեղում, 35)*։ Ումևէ կյանքից զրկելը նրանց մեջ *համարվում է քաջագործություն (Թ., III, 216)*։ Այս այն երջանիկ գիրքն է, որ հայոց աշխարհիկ գրականության առաջին *հիմնաքարն է ընդունված (Թ., IV, 94)*։ Խելոք *էր կարծվում (ՂԱՀ, 75)*։ *Ընտրվել ենք հանձնաժողով (Թ., I, 504)*։

§ *414. Այս բոլոր բայական համագույցները (բացառյալ* եմ, լինեմ *և կրավորական բայերի) կարող են ստորոգելիական վերադիրի հետ կապակցվել* իբրև *և* որպես *կապերով (§ 412)։ Առանց այդ կապերի վերևում բերված օրինակների մի մասը առայժմ գրական քաղաքացիություն չի ստացել. մասամբ կրում է որոշ նորաբարության և մասամբ ժողովրդական-խոսակցական ոճի դրոշմ։ Նշենք նաև, որ* իբրև, որպես *կապերով շղթայվող ստորոգելիական վերադիրների հաճախությունը ունի գրքային ու երբեմն էլ արհեստականության բնույթ։ Համեմատի՛ր.* Մի քանի հնամաշ կապերտներ

ծառայում էին որպես անկողին (Ր., I, 177)։ Անա նա ներկայանում է ամեն տեղ որպես չհասկացված ու հալածված գաղափարական գործիչ... վեցերորդը հանդիսանում է արդեն որպես նահատակ, յոթերորդը գալիս է որպես դատավոր (Թ., IV, 90)։ Վեպում Թորոսը հանդես է գալիս իբրև խելոք, խիզախ ու անձնվեր հայրենասեր (ՀԳՊ, II, 105)։ Նա ներկայանում է մեզ իբրև մի կրքված, ազնիվ երիտասարդ (նույն տեղում, 106)։ Նա շրջում է վայրից վայր՝ մերթ իբրև մանկավարժ, մերթ իբրև լուսանկարիչ (նույն տեղում, 20)։

Ծանոթություն. Այս տեսակ բայերը կարող են կախված լինել մի եղանակավորիչ կամ կերպավորող դիմավոր բայից և դրվեն անորոշ դերբայով՝ ունենալով նաև ստորոգելիական վերադիր. օրինակ՝ Աղաչում ենք քեզ՝ հոժարիր կենալ և ապրել այստեղ իբրև մեր աչքի խինդ և սփոփանք, իբրև գլխավոր մեր պալատական, մեր եղբորորդի և իբրև որդի (Տեքս., I, 13)։

§ 415. Երբեմն վերադիրը և ենթական դժվար է լինում միմյանցից տարբերել։ Այս երևույթը առաջանում է այն դեպքում, երբ ամբողջ արտահայտությունը կա՛մ գրեթե մի միասնական կապակցություն է, կա՛մ ենթական և վերադիրը միևնույն թվով են դրված, և ստորոգյալի հետ մեկի կամ մյուսի համաձայնությունը չի բացահայտում նրանց տարբերությունը, և, վերջապես, երբ բայական հանգույցը բաժանված է լինում վերադիրից, և երկուսն էլ մի դեմքով (III) են կիրառված լինում. օրինակ՝ Ի՞նչն է կոչվում կոտորակի կրճատում (Կիս., Թվաբ., 111)։ Իմ տեսած ոգին գուցե դևն ինքն է (Տեքս., I, 47)։ Ներկայացումն է այն որոգայթը (նույն տեղում)։ Խենթությունն է քեզ հետ խոսողը (նույն տեղում, 70)։ Նրա ոտնոցը եղել է այն վայրենի պատառաձևերը (Ր., I, 633)։

§ 416. Բայական հանգույցը ստորոգելիական վերադիրից առանձնանում է այն դեպքում, երբ ենթական ուժեղ շեշտվում է։ Բերված օրինակները այդպես են. ըստ էության ենթակաները առաջ են դրված. սակայն հայերենում տարբերությունը շատ աղոտ է, որովհետև ձևականորեն չեն զանազանվում և իմաստային առումով էլ երբեմն այս կամ այն կերպ հասկանալը առանձին մեծ հակասություն չի առաջ բերում։

գ) ԳՈՅԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐԸ ԹԵՔ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

§ 417. Հայերենում գոյական ստորոգելիական վերադիրը սովորաբար ուղղական հոլովով է դրվում, սակայն եմ, լինեմ բայերը

իբրև նաև էական բայեր, սկզբում ունեցել են ինքնուրույն նշանա-
կություն, այսինքն՝ պահպանել են իրենց բառական նշանակու-
թյունը, որ է՝ լինել, գոյություն ունենալ։ Երբ այս բառական նշա-
նակությունը շատ է բացահայտ, ապա հիշյալ բայական հանգույց-
ները գրվում են իբրև անկախ ստորոգյալներ, իսկ դրանց մոտ գըր-
ված թեք հոլովներով բառերը դառնում են պարագաներ. օրինակ՝
Նա ժողովում էր. այստեղ էր նշանակում է գտնվում էր, ուստի
ժողովում՝ տեղի պարագա է, իսկ էր՝ էական բայ-ստորոգյալ։ Բայց
շատ հաճախ թեք հոլովների հետ հիշյալ բայական հանգույցների
բառական նշանակությունը թուլանում է և թեք հոլովով գրված
բառի հետ կազմում է մի բաղադրյալ անվանական ստորոգյալ։ Ոչ
միայն հանգույցը, այլև թեք հոլովով գրված բառը կարող է կորց-
նել թե՛ բառական և թե՛ քերականական (տվյալ դեպքում հոլովա-
կան) նշանակությունը։ Բացի այս՝ հնարավոր է, որ բայական
հանգույցը ներկայացնի որևէ դեղչված բայի օժանդակը, որ տվյալ
դեպքում դիտվում է արդեն իբրև ոչ օժանդակ. օրինակ՝ Նրանք ժո-
ղովի էին (ՍԽՀ, II, 377)։ Մեր կարծիքով՝ այդպիսի կապակցու-
թյունները առաջացած պետք է լինեն՝ նրանք ժողովի մեջ էին.
նրանք գործի մեջ էին. կամ՝ Վաղուց թեև իմ հայացքը անհայտին
է ու հեռվում (այսինքն՝ ուղղված է անհայտին). պատկանում է
անհայտին. ցույց և նախորդ օրինակների մեջ դեղչված է մի բայ-
ստորոգյալ, որ պահանջել է տրական հոլովով խնդիր։ Համեմա-
տի՛ր. Որոնք երկու ազգությանց միույն կամ մեկելին զարշելի են
(ՊՊ, I, 433)։ Այս երևույթները նպաստում են այն բանին, որ
հատկապես եմ և լինեմ բայերը սերտ ձուլվում են թեք հոլովներով
դրվող գոյականների հետ և կազմում են մի բաղադրյալ անվանա-
կան ստորոգյալ՝ ստանալով դարձվածքային կապակցության ար-
ժեք. օրինակ՝ Դա արդեն սրտովդ կլինի (ՍԽՀ, II, 372)։ Նրանք էլ
մի լավ օրում չեն (Նույն տեղում)։ Իսկ բրուտի աղջիկը սրտովդ է
(Նույն տեղում, 439)։ Ես ձեր ասած տուտուցներից չեմ (Շիրվ.,
VIII, 331)։ Իմ տարոքն ես (Շիրվ., VII, 311)։ Ականջս տրակտորի
ձայնին էր (ՍԽՀ, II, 238)։ Հայրար ծննդականի տանը վրույցով է
եղել (Նույն տեղում, 179)։ Որոնք մերձակա գյուղորայքից էին (ԲԿ,
438)։ Խելքը գլխին է (Շեքս., I, 184)։

Այսպիսի ստորոգյալները երբեմն ենթակայի հետ մի ամբող-
ջական դարձվածք են ներկայացնում։ Համեմատի՛ր. Ականջս ձենի
է. խելքը գլխին է. աչքը ճամփի է և այլն (§§ 119, 371)։

է) ՓՈԽԱՆՈՒՆ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 418. *Երբ ստորոգելիական վերադիրը միևնույն բառն է, ինչ որ ենթական է և ունի որևէ գոյականական հատկացուցիչ, ապա ուղղական հոլովով վերադիրը սովորաբար զեղչվում է, և այդ զեղչումը արտահայտում է գոյականական հատկացուցիչը կրկնակի հոդով ու բայական հանգույցի հետ կազմում է մի բաղադրյալ անվանական ստորոգյալ. օրինակ՝* Հաղթանակը *հացինն է (ԴԴՎ, 458)։* — Տո ինչո՞ւ է նրա եզն, է՜. իմ *օղակինն է, կռլխողինն է (ՆՋՀ, 164)։* Աշխարհը *ամիկինն է (ԴԴՎ, 477)։*

Այս նախադասությունները սկզբնապես եղել են՝ Հաղթանակը հացի հաղթանակն է, եզը իմ օղակի եզն է *և այլն, որ այժմ հասկացվում են՝* հաղթանակը պատկանում է հացին, եզը պատկանում է օղակին...

§ 419. *Այն դեպքում, երբ ստորոգելիական վերադիրի հետ զեղչվում է նաև բայական հանգույցը, հատկացուցիչը կարող է մնալ նաև առանց հոդի և դառնալ պարզ անվանական ստորոգյալ. օրինակ՝* Սա Սնեգուրի կամերն է, սա՝ Ֆիգների *(ՉԵ, 198)։ Այսինքն՝* Ֆիգներինը *կամ* Ֆիգներինն է:

ը) ԳՈՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ՝ ԿԱՊՈՎ ՀԱՆԴԵՐՁ

§ 420. *Հաճախ գոյականը ստորոգելիական վերադիր է դառնում և կազմում է բաղադրյալ անվանական ստորոգյալ իր կապի հետ միասին։ Բնականորեն գոյականները թեք հոլովներով են դրվում, իսկ բայական հանգույցը տվյալ դեպքում կապվում է կապի հետ և ոչ թե գոյականի. բայց դրանք միասնաբար վերցվում են իբրև մի ստորոգյալ։ Հայերենում կապերը միայն այս ձևով են ստորոգյալ կազմում. օրինակ՝* Դու ինչ արդեն *դատի տակ ես* այս պահիս *(ԴԴՎ, 479)։* Ամբողջ գյուղը *ոտքի վրա էր (ՐԿ, 328)։* Ասլանը նույնպես լավ *տրամադրության մեջ էր երևում (Նույն տեղում, 330)։* Ով *ինձ հետ է, մեզ հետ, աշխարհի հետ,* նա կգա մեզ հետ, իսկ ով ոչ, *կկանգնի մեր դեմ (ԴԴՎ, 451)։* Դա ուրիշ *ոչնչի նման չէր (ՐԿ, 336)։* Ամենքինն էլ *իր համար է (ԴԴՎ, 492)։* Էյֆելյան աշտարակի գագաթը *մշուշի մեջ էր (Շիրվ., VIII, 288)։ (Այս վերջին օրինակում* մշուշի մեջ *կարող է դիտվել իբրև տեղի պարագա,* էր՝ *էական բայ-ստորոգյալ)։*

§421. Սրանք էլ հաճախ ենթակայի հետ, կամ միայն վերադիրը իր լրացուցիչներով հանգույցի հետ մի ամբողջական կապակցություն են կազմում, իբրև մի դարձվածքային միասնություն. օրինակ՝ Աչքիս վրա, քեռի քուչի (Թ., I, 265)։ Երկուսս էլ քարի տակով եղածի պես ենք (ՍԽՀ, II, 151)։ Նա մնաց առանց մի փարայի (ՐԿ, 440)։ Բայց դեպքն էլ դաժան էր, անվայել, աննախընթաց, խելքից-մտքից դուրս (ԴԴՎ, 472)։ Բայց դու առանց սանդրի կմնաս (ՐԿ, 329)։ Ամբողջ ոստիկանությունը հեծելազորի հետ ոտքի վրա էր (Շիրվ., VIII, 316)։ Դա չափից անց է (Շեքս., I, 183)։

թ) ԱԾԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՎԵՐԱԴԻՐ ՄԱՍ

§ 422. Այն բոլոր բայերը, որոնց հետ գոյականները կազմում են բաղադրյալ անվանական ստորոգյալ, կարող են միանալ նաև ածականների հետ և կազմել նույնպիսի ստորոգյալ։ Տվյալ դեպքում ածականը դրվում է առանց որևէ փոփոխության և ցույց է տալիս մի այնպիսի փոփոխական հատկանիշ, որ ենթակայից դուրս է բերվում և բայական հանգույցի միջոցով վերագրվում է ենթակային։ Ածականը իբրև ստորոգելիական վերադիր դրվում է ուղիղ ձևով, չենք ասում ուղղական հոլովով, որովհետև տվյալ դեպքում այն հանդես չի գալիս իբրև հոլովվող բառ և հոդ չի առնում։ Եթե հոդով և այլ հոլովով է գործածվում, ապա դառնում է գոյական և ենթարկվում է այն օրինաչափություններին, որոնք վերաբերում են գոյական վերադիրին։

Հայերենում ածականը սովորաբար ստորոգելիական վերադիր է դառնում բայական հանգույցի հետ միասին, բայց լինում են դեպքեր, երբ հանգույցը զեղչվում է և ածականը մնում է առանց հանգույցի։ Զեղչման պայմանները նույնն են, ինչ որ տեսանք գոյական վերադիրները քննելիս (§§ 394—396)։

§ 423. Ինչպես արդեն ասվել է, ստորոգելիական հանգույց ներկայացնող բայերը բազմազան են թե՛ քանակով և թե՛ իրենց բառական ու քերականական նշանակության պահպանման կամ կորուսման աստիճանով։ Կան այնպիսի բայական հանգույցներ, որոնք հազվագյուտ դեպքերում են պահպանում իրենց բառական նշանակությունը, իսկ կան և այնպիսիները, որոնք շատ սակավ են վերացականանում և մեծ մասամբ պահպանվում են իբրև ինքնուրույն նշանակություն ունեցող բայեր։

§ 424. Երբ բայը պահպանում է իր ինքնուրույն նշանակությունը, ապա բնականորեն ածականը չի կարող այդ բայի հետ բաղադրյալ անվանական ստորոգյալ կազմել։ Այս պարագայում ածականը դիտվում է բայի համար իբրև պարագայական կամ մի այլ տեսակի լրացում։

Իսկ եթե բայը կիսով չափ է վերացականացել, այսինքն՝ իր ինքնուրույն նշանակությունը մասամբ կորցրել է, ապա այդ դեպքում նրա հետ կապակցվող ածականը երբեմն կարող է դիտվել իբրև ստորոգելիական վերադիր, երբեմն էլ՝ պարագայական կամ այլ լրացում. օրինակ՝ Թող արինք փակ մեր տուն ու ժամ (Թ., I, 345)։ Փակ ածականը այստեղ կարող է և՛ իբրև ստորոգյալի բաղադրիչ ընդունվել, և՛ իբրև ձևի պարագա։ Կամ՝ Կռիվ կերթամ, կծառավեմ, Դուք հորդ մնաք, պաղ մնաք (Թ., II, 124)։ Ինչպես՝ կռիվ կերթամ, այնպես էլ հորդ մնաք, պաղ մնաք կարելի է յուրաքանչյուրը մի-մի ստորոգյալ համարել և կամ հորդ, պաղ ընդունել իբրև ձևի պարագա, իսկ կռիվ բառը՝ նպատակի (կամ տեղի պարագա)։ Այսպիսի դեպքերում ճիշտը այն կլինի, որ ամբողջը վերցվի իբրև մի բաղադրյալ ստորոգյալ։

ժ) ԱԾԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՊԱՐԶ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 425. Ինչպես արդեն ասացինք, հայերենում անունը իբրև ստորոգյալ՝ առանց բայական հանգույցի օրինաչափական երևույթ չէ, բայց կրկնելուց խույս տալու համար, բանաստեղծության մեջ տաղաչափական և իմաստային նկատառումներով, երբեմն հանգույցը զեղչվում է, որ աստիճանաբար դառնում է սովորական և ստանում է օրինաչափական ուժ։

Առանց հանգույցի ածական ստորոգյալը ցույց է տալիս այնպիսի մի հատկանիշ, որի ստորոգումը կատարվում է մտքով և որը կարծես արտահայտում է մնայուն, ոչ ժամանակավոր ու փոփոխական հատկանիշ։ Դա բխում է այն բանից, որ այդտեղ որոշակի ժամանակային դրսևորում չկա։ Չնայած որ այդպիսի ստորոգյալները կարելի է ներկա համարել, բայց դրանք որքանով որ ներկային են վերաբերում, այնքանով էլ՝ մյուս ժամանակներին։

Բանաստեղծության մեջ այդպիսի ստորոգումն ունի այն նշանակությունը, որ դիտվելով իբրև առարկայի մշտական, տևական, մնայուն հատկանիշ, տպավորությունը ավելի է ուժեղացնում. օրինակ՝ Քաղաքը գորշ ու մութ. Փողոցները երկար, Ու ձանձրալի, Աշ—

նաև անծրևների նման: Փողոցները *պաժան, Անհրապույր, չարկամ* (*Զե, 143*)։ Երկինքը *թուխպ*, երկիրը *սև* (*Թ., I,342*)։ Երկիրն *իմ անբախտ և աղետավոր* (*Տ., 294*)։

§ 426. Երբեմն յուրահատուկ շրջումով բայական հանգույցը պոկվում է վերադիրից և ենթակայի հետ կազմում է մի ամբողջություն, և ապա դրան հաջորդում են ածական վերադիրները իբրև անկախ, անհանգույց ստորոգյալներ. օրինակ՝ Յասաուլն էր, աժդահա. *դուրս է գալիս այնպես, որ՝ այդ նշանակում է՝* դա յասաուլն էր, որ աժդահա էր: *Բայց պետք է հասկանալ՝* Յասաուլը աժդահա-էր... *Եվ կարևորը այն է, որ դրանից հետո արդեն կարող են այլ ենթականեր հանդես գալ, որոնց ածական ստորոգյալները արդեն մնում են առանց հանգույցի. օրինակ՝* Յասաուլն էր, *աժդահա,* ռեխը՝ *լայն,* աչքերը չուխտ *կրակ, տեղով մի ղարզանդ (ԱԲՄ, 70)։*

§ 427. Երբեմն ածական վերադիրը գցում է իր հանգույցը և ենթակայի հետ մի ամբողջություն է կազմում. օրինակ՝ Ձեռս պակաս, ուժս հատած, հազար ու մի ցավի տեր *(Թ., I, 3)։* Աշխարհիս գործ՝ *ձեռը պակաս (ԴԴՎ, 457)։*

ժա) ԱԾԱԿԱՆ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐԸ ԵՄ, ԼԻՆԵՄ *ԲԱՅԵՐԻ ՀԵՏ*

§ 428. Ածական վերադիրները ամենից հաճախ կիրառվում են եմ, լինեմ *բայերի հետ և ցույց են տալիս ենթակայի ինչպիսին լինելը, ինչ վիճակում գտնվելը և մասամբ այդ վիճակի մեջ ենթակայի փոփոխվելը։* Եմ *բայը կիրառվում է միայն ներկա և անցյալի անկատար ժամանակներով, իսկ* լինել *բայը ունի բոլոր ժամանակները (§§ 389,390). օրինակ՝* Դուք շատ *խստաբարո եք (Շեքս., I, 152)։* Այնպես *օրորուն* է քայլդ, այնպես *հրահրուն* է փայլդ *(Տ., I, 245)։* Տրամադրությունը *վատ էր (Զե, 283)։ Անհունն եմ* ես, *անքունն եմ* ես *(Թ., II, 165)։ Միամիտ եղիր (Շեքս. I, 163)։* Մարությանն երբեք այսպես առույգ *չի եղած (Թ., V, 215)։* Չէ որ դուք *մենակ եք (Նար., IV, 35)։* Քանի որ դու կնիկ տեղովդ այդքան *քաջ ես (Շիրվ., V, 303)։*

§ 429. Եթե միևնույն ենթական ունի մի քանի ածական ստորոգելիական վերադիր, բայական հանգույցը կարող է առաջին կամ վերջին ածականի վրա դրվել. ըստ որում բայական հանգույցը ո՛ր վերադրի հետ որ կիրառվում է, այդպիսին ավելի է շեշտվում և ընդ-

գծվում իր համազորների մեջ. օրինակ՝ Որ բե՛ սիրահար, բե՛ խանդահար է (Շեքս., I, 162)։ Վտիտ էր, միջահասակ, ուսերը՝ նեղ (Չե, 195)։ Երիտասարդ, համարձակ ու ոգեշունչ եք, քան երբևէ (ՍՀ, 1955 թ., № 90)։ Բարձրահասակ է, ջղուտ, աչքերը սև (Չե, 198)։ Խորամանկ, հարուստ ու հպարտ են եղել նայիրյան արքաները (Չե, 259)։

§ 430. Այսպես կարող է լինել ոչ միայն միևնույն նախադասության մեջ, այլև երկու տարբեր համադասական նախադասության մեջ, որոնց ստորոգելիական հանգույցներից մեկը կարող է զեղչվել, երբ միասին են գործածված և միևնույն հանգույցներն են ներկայացնում. օրինակ՝ Այնտեղ ամեն ինչ ուրախ ու զվարթ է եղած, վիշտն էլ քնքուշ ու թեթև (ՍԽՀ, II, 204)։ Երբ նախադասությունը կրկնվում է, հնարավոր է որևէ եզրում բայական հանգույցի զեղչում. օրինակ՝ Դու վառ ես, դու հրաթև (Տ., I, 244)։

§ 431. Գրաբարի անցյալ և ի-ով վերջացող ապառնի դերբայները նույնպես ածական են համարվում և դիտվում են իբրև ածական վերադիր՝ չնայած դեռևս նրանց մեջ լրիվ չի մեռած բայական ըմբռնումը. օրինակ՝ Անիծյալ լինես դու (Ր., I, 493)։ Անիծյալ լինի այն ամուսնությունը (Շեքս., III, 65)։ Անիծյալ լինի այն ձեռքը, որ այս անցքերը բացեց (Շեքս., III, 11)։ Ծերունու խոսքը ինձ ավելի հասկանալի եղավ (Ր., I, 563)։ Ամենքդ ինձ համար ծիծաղելի եք (Շիրվ., VI, 277)։ Ձեր նպատակը շատ գովելի է (ՐԿ, 341)։ Առաջին անգամ լսելի եղավ հրավերը (Նույն տեղում, 328)։ Օրհնյալ լինեք (ՍՋՄԿՊ, 125)։ Լսելի եղավ շեփորի ձայնը (Ր., III, 106)։

ժբ) ԱԾԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ԴԱՌՆԱԼ, ԴՈՒՐՍ ԳԱԼ, ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, ԳԱԼ ԲԱՅԵՐԻ ՀԵՏ

§ 432. Ածականները, այս բայերի հետ բաղադրյալ անվանական ստորոգյալ կազմելով՝ ցույց են տալիս այն հատկանիշը, որը ներկայացնում, որին վերածվում և իբրև այդպիսին հանդես է գալիս ենթական. օրինակ՝ Եվ ով այս բանում հանցավոր դուրս գա (Շեքս., I, 150)։ Կինը դառնում է դյուրագրգիռ, բծախնդիր, գրեթե կռվարար (Շիրվ., VIII, 354)։ Ուրեմն երկպատիկ մեղապարտ դարձիր (Շեքս., I, 186)։ Որ բոլորովին ինքս իմ աչքին արհամարհելի դառնամ (Նույն տեղում, 152)։ Իմ եղբայր Մամբրեն, Եղիշեն, Ղազար

Փարպեցին նույնպես *նշանավոր հանդիսացան* (Ր., I, 187)։ Մեկը մյուսից *գերազանց հանդիսացան* (Թ., III, 30)։ Մարա Մելիքի երկու կեսը, թե *հավասար չեկան* իրար (Թ., II, 134)։

ժգ) ԱԾԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՎԵՐԱԴԻՐ ՄՆԱԼ, ԿԱՆԳՆԵԼ *ԵՎ* ԿԵՆԱԼ *ԲԱՅԵՐԻ ՀԵՏ*

§ *433*. Մնալ, կանգնել *և* կենալ *բայերի հետ ածականն արտահայտում է այնպիսի հատկանիշ, որ ունի ենթական և որ հարատևվում է այդ հատկանիշային վիճակում մշտապես կամ ժամանակավորապես. օրինակ՝* Ծառը *մնաց ճղնակոտոր* (Թ., I, 326)։ Մեկը ձեզանից թող *պատրաստ կանգնի* մի նոր հագուստով (Շեքս., II, 64)։ *Միամիտ կացեք. հանգիստ կացեք* (Շեքս., I, 157, 169)։ *Ամոթալի կմնաք* մինչև հավիտյան (*նույն տեղում*, 148)։ Կռիվ կերթամ, ես կշոգեմ, *դուք զով մնաք, հով մնաք* (Թ., II, 124)։ Դու *ուրախ կաց*, բոլորը կանցնի (ՐԿ, 400)։ Լավ իմացիր, *զգույշ կացիր* (Թ., I, 603)։

Ծանոթություն. Այս բայերի հետ ածականները մասամբ կայուն կապակցությունների բաղադրիչ, մասամբ էլ լրացական բառերի արժեք են ստանում։

§ *434*. *Հատկապես* մնալ *բայը շատ հաճախ հարակատար դերբայի հետ կազմում է մի ստորոգյալ։ Թուցե կարելի կլիներ այդպիսի կապակցությունը համարել երկրորդական բաղադրյալ ժամանակ։ Սակայն որքանով հարակատար դերբայը հայերենում աստիճանաբար դադարում է ժամանակների կազմության մասնակցելուց, կամ ավելի ճիշտ՝ քանի որ բոլոր բայերի հարակատար դերբայները չեն մասնակցում ժամանակների կազմության (§ 209), ապա այդ կարգի կապակցությունների մեջ դրանք հանդես են գալիս ածականի արժեքով և ոչ բայի նշանակությամբ, ինչպես գրաբարի անցյալ և* ի *վերջավորությամբ ապառնի և աշխարհաբարի անորոշ և ենթակայական դերբայները, որոնք ավելի անվանական ստորոգյալ են կազմում, քան թե բայական։*

Այդ պատճառով հարակատար դերբայի և մնալ *բայի կապակցությունը պետք է նույնպես անվանական ստորոգյալ համարել։ Համեմատի՛ր.* Օլյան մնաց սառած (*Նար.*, I, 479)։ *Մանրամասն՝* § *469*։

ժդ) ԱԾԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐԸ ԹՎԱԼ, ԵՐԵՎԱԼ, ՁԵՎԱՆԱԼ ԲԱՅԵՐԻ ՀԵՏ

§ 435. Ածական վերադիրը թվալ, երևալ, ձևանալ բայերի հետ ցույց է տալիս այնպիսի հատկանիշ, որ վերագրվում է ենթակային առերևութապես, ենթական այդ հատկանիշը կրում է ոչ էապես, այլ թվում է, որ այդպիսի հատկանիշ ունի, կամ ձևանում է իբրև այդպիսի հատկանիշ կրող. օրինակ՝ Ոչ մի անգամ կրակը ինձ այնքան ախորժելի չէր երևացել (ՐԿ, 334)։ Ջոռորդը բարեգործ է ձևանում (Թ., IV, 90)։ Բոլորը թվում էր կարելի և հավանական (Թ., III, 208)։ Որ ձևացավ ամբողջ կյանքում առաքինի, ազգասեր (Թ., IV, 296)։ Պառավը, որ հիվանդ էր երևում (ԴԴՎ, 456)։ Ինչու է դա քեզ անսովոր թվում (Շեքս., I, 12)։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Այն բոլոր բայերը, որոնք գոյականների հետ մի բաղադրյալ անվանական ստորոգյալ են կազմում, կարող են նաև ածականների հետ այդպիսի ստորոգյալ կազմել, այնպես որ թվարկված բայերով չի սպառվում ածականով բաղադրյալ անվանական ստորոգյալների քանակը։

ժե) ՄԻ ՔԱՆԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԲԱՌԵՐ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 436. Մի շարք ածականներ, գոյականներ, մակբայներ և այլ խոսքի մասեր ուղիղ կամ հոլովված ձևով աստիճանաբար դադարում են այլ կիրառություններ ունենալուց և քարանում են միայն իբրև ստորոգելիական վերադիր։ Դրանց մի մասը արդեն համարյա այդպես է, իսկ մյուս մասը գերազանցապես իբրև այդպիսին է հանդես գալիս։

Այդպիսի բառերի թվին են պատկանում՝ պարտ, շնորհակալ, պետք, օրի, գրիվ, հոժար, հարկավոր, անհրաժեշտ, համաձայն, ինչացու, բավական, կարելի, անկարելի, պիտանացու, անձնատուր և այլն. օրինակ՝ Բայց ինչ պետք է դա (Շեքս., I, 162)։ Տասը մանեթ ես պարտ (Թ., III, 156)։ Ինչացու է դա (ԴԴՎ, 455)։ Սա մեզ պետք կգա (ՆԶՀ, 122)։ Աշխորերի հարցն ինչ օրի է (ՆԶՀ, 122)։ Անձնատուր են եղած անհոգ զվարճությունների (ՐԿ, 413)։ Կուտակված ամպերը գրիվ էին եկած (նույն տեղում, 345)։ Շնորհակալ կլինեն ինձ նամակագրիս (ՄՆ, II, 281)։ Նրան հարկավոր էր մի ամուր նեցուկ (Ր., II, 188)։ Այսպես ասվում է՝ Դա անհրաժեշտ է, այս հարկավոր է և այլն։

§ *437.* Պատրաստ, կարող, մտադիր, պարտավոր, ընդունակ, սովոր, արժան, համաձայն, բավական, ունակ *և մի քանի սրանց նման ածականներ (§ 436) կապակցվում են* եմ, լինեմ *(նաև մյուս բայերի) հետ և ցույց են տալիս ենթակայի հակված, պատրաստ, կարող, արժանի լինելը մի որևէ գործողություն կատարելու նկատմամբ։ Այդ գործողությունը արտահայտվում է անորոշ դերբայով, որ բաղադրվելով հիշյալ ածականների և բայական հանգույցների հետ, միասնաբար կազմում է մի բարդ անվանաբայական ստորոգյալ (§ 385)։*

Մտադիր չէ այլևս գյուղ վերադառնալ *(ՆԶՀ, 156)։* Եվ դու *ընդունակ կլինես* ծանոթներիդ, բարեկամներիդ, թեկուզ հենց բոլորովին անծանոթ մարդկանց *պարզել* ձեռքդ *(Նար., IV, 44)։* Միթե Լևոնն *ընդունակ կլինի մոռանալ* Կարլենին ու Լենիկին *(ՆԶՀ, 182)։ Կարող կլիներ* և մի փոքր հարստություն *ձեռք բերել (Մուր., I, 17)։* Իմ աղջիկը ոչ թե *արժանի է լինել* Սոլոմոն բեկի *կինը (Ր., II, 307)։* Իսկ վարժուհին *համաձայն* էր վաճառականի *կին լինել (Քոչար, 663)։* Գրողը բարմ ազդեցությամբ *կարող է* շատ անգամ *հափշտակվել* երևույթների աննշան մանրամասներով *(Շիրվ., VIII, 221)։ Բավական կարող էին լինել (Ր., II, 243)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Կարող *բառը, որ հին* կարեմ *բայի ենթակայական (ներկա) դերբայն է, այժմ բոլորովին կորցրել է իր դերբայական նշանակությունը. դա այժմ պետք է դիտել իբրև ածական։ Իսկ* կարողանալ *բայի ենթակայական դերբայն է* կարողացող:

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2. Այս կապակցությունների անորոշ դերբայների մի մասը ունակ կարող է լինել կապակցել և՛ մի այլ անորոշ դերբայ, որը նույնպես մտնում է բարդ ստորոգյալի մեջ. օրինակ՝ Ես չեմ կարող համարձակվել խոսել նրա հետ: Նա ունակ չի կարող գտնվել այդ բանն անել: Երբե՛ք չպետք է մոռանալ աղոթել *(Նար., IV, 49)։*

§ *438. Երբեմն ածականը այնքան է սերտանում իր բայական հանգույցի և ենթակայի հետ, որ միասնական մի դարձվածքային կապակցություն է կազմում. օրինակ՝* Բանն վատ է, սիրտը բաց է, գլուխը տաք է, խելքը կարճ է, բախտը բաց է *և այլն։*

§ *439. Ոչ միայն ածականի դրական աստիճանն է դառնում ստորոգելիական վերադիր, այլև մյուս աստիճանները։ Այս դեպ-*

քում իբրև վերադիր վերցվում է նաև ածականի աստիճանը որոշող բառը. օրինակ՝ Նրա մի համբույրը քեզ համար *ավելի թանկ է* *(Շիրվ., VI, 314)։* Ոչինչ բան *ավելի հեշտ չէ (ՄՆ, II, 286)։* Թշնամացած բարեկամն *ավելի վտանգավոր է դառնում (ՆԶՀ, 353)։* Հացավանի կոլխոզն *ամենամեծն է* Հայաստանում *(նույն տեղում, 126)։* Դա *ավելի զգալի է,* քան թե անունի վերջը *(Շեքս., I, 150)։* *Ամենաօրինակելին է* ամբողջ Հացավանը *(ՆԶՀ, 275)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Ածականի գերադրական աստիճանը իբրև ստորոգելիական վերադիր հազվ է գործածվում։

ժզ) ԴԵՐԱՆՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 440. Ինչպես գոյականներն ու ածականները, այնպես էլ դերանունները վերևում հիշատակված բայերի հետ կազմում են բաղադրյալ անվանական ստորոգյալ։ Գոյականների նման սրանք էլ դրվում են ուղղական հոլովով և ցույց են տալիս ոչ թե առարկայի անունը, նրա այս կամ այն հատկանիշը, այլ ինչ, որ *լինելը, այսինքն՝ ենթակայի և այլ առարկաների որևէ հարաբերությունը. օրինակ՝ Գիրքը* այս է. այս *վերադիրով սահմանվում է գրքի որը լինելը և մյուս առարկաների հետ ունեցած նրա տարածական հարաբերությունը խոսողի կամ այլ առարկաների նկատմամբ. օրինակ՝* Միտքս *այն էր,* որ երեխաները կզբաղվեն, կուրախանան *(ՍՁ V, 211)։*

ժէ) ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 441. Անձնական բոլոր դերանունները ստորոգելիական վերադիր են դառնում առանց հոդի և գերազանցապես կիրառվում են եմ, լինեմ *բայերի հետ. օրինակ՝* Թե խոսք տվողը, թե ետ կանգնողը *դուք եք (Մուր., II, 354)։* Ես էլ *դու եմ,* ես չկամ *(Տ., I, 175)* Ուրեմն այդ *դու ես,* հա *(ՍԽՀ, II, 166)։* Նա *ինքն է (Շիրվ., VI, 519)։ Դու չէիր* Անգղում որդուդ թաղողը *(ԴԴՎ, 455)։* Այդ *դու ես,* միակ *դու,* բոլոր սոսկումները *դու ես (Իս., III, 216)։* Այդ պայմանով միայն ես *կլինեի «ինքս» (ՎՓՀՀ, 119)։* Ճանապարհին պատահած քաներն *ինքն էր (ՂԱԵ, 298)։*

Երբեմն անձնական դերանուն վերադիրը ենթակայի կրկնությունն է և պնդում, հաստատում է նույնը լինելը. օրինակ՝ Ես *ես*

եմ և ոչ թե մեկ ուրիշը։ Թե ես *ես* եմ, ճապա ես ով եմ *(«Գյուղացին ու դղումը»)*։ Ինչ էլ ես լինեմ, բայց ես *ես* եմ *(ՄԳ*, Y, *199*)։ *Կրկնությունը կատարվում է միայն* եմ *բայով, որովհետև տվյալ դեպքում անհրաժեշտ է միայն նույնությունը հաստատել կամ ժխտել․ իսկ մյուս բայերը ցույց են տալիս* լինել, դառնալ, ներկայանալ, *որոնց միջոցով այդ երևույթը տեղի չի ունենում․ անիմաստ է ասել՝* Ես լինում եմ ես, *կամ՝* դու դառնում ես դու *և այլն։ Դա կարող է արտահայտվել բառախաղի, երկիմաստության համար շատ հազվագյուտ պարագաներում։*

§ *442. Ստորոգելիական վերադիր դերանունը կարող է կազմված լինել երկու առանձին դերանուններից, որոնք իբրև ստորոգելիական վերադիր՝ ներկայացնում են մի ամբողջություն. օրինակ՝* Դա էր *նույն ինքը (ՄՆ, II, 286)*։ Ես *նա ինքն եմ (ԴԱՀ, 108)*։

§ *443. Երբեմն գոյական ենթական բարդանում է* այս, այդ, այն *ցուցական դերանուններով, որոնք առանձնացնում են ենթական հատուկ հնչերանգությամբ և շեշտում նախադասությունը, դարձնելով ուրիշի հարցման մասնակի կրկնություն և միաժամանակ՝ պատասխան․ օրինակ՝* Գամման այդ ես եմ *(Շեքս., II, 96)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Երբ անձնական դերանունը հոդ է ստանում, այս դեպքում իբրև դերանուն հանդես չի գալիս, այլ կատարում է գոյականի դեր. օրինակ՝ Անհրաժեշտը իմ *եսն է (Իս., III, 212)*։

ժր) ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ *444. Անձնական դերանունները կիրառվում են սեռական հոլովով և հաճախ դառնում են ստորոգելիական վերադիրի հատկացուցիչ։ Երբ վերադիրը զեղչվում է, դրա դերը իրենց վրա են վերցնում սեռական հոլովով դրված այդ հատկացուցիչները։ Գործածվելով իբրև վերադիր՝ դրանք փոխ են առնում իրենց հատկացյալ վերադիրի հոլովը (ուղղական). բայց որպեսզի զգացվի, որ դրանք հատկացուցիչ են, պահպանում են նաև իրենց հոլովը․ ստացվում է երկու հոլովի բաղարկություն։ Հատկացյալի հոլովը արտահայտվում է որոշիչ հոդով, որ դրվում է սեռական հոլովը պահպանած դերանուն հատկացուցիչի վրա․ օրինակ՝* Նա ասում է՝ *քունն է,* նա, թե չէ՝ *քունը.* Ոչ *քոնն է, ոչ դրանը, իմն է (Թ., III, 149)*։ Ոնց թե շրջանում ամենահետամնաց կոլխոզը *մերը լինի*

(ՍԽՀ, II, 194)։ Բիանկան *ձերն է (Շեքս., II, 95)*։ *Իմս էր*։ Նա որ *ձերն է,* անուշիկ տիկին *(Շեքս., I, 162, 188)*։ Կամքն *իրենցն է (ՍԽՀ, II, 195)*։ Իսկ Օլգա Վասիլևնան *իրն է, իրը*՝ Օսեփ Նարիմանովինը *(ՉԵ, 279)*։ Դու *իմն ես,* ես՝ *քոնը (Շիրվ., VI, 523)*։ Իրավունքը *քոնն է (Փափ., 34)*։ Էգուց նորից թող *քոնը լինի (Փափ., 42)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Ձայնավորով վերջացող ն, նրա *դերանունները երկու հոդ են առնում, ըստ որում առաջին հոդը այլևս չի գիտակցվում։*

§ 445. *Ուղղականի և սեռականի բաղարկումը չէ, երբ հիշյալ դերանունները գործածվում են ոչ թե իրենց հատկացյալի փոխարեն, այլ իբրև ինքնուրույն բառեր։ Այս դեպքում դրանք հանդես են գալիս իբրև բառաձևեր, իբրև այդ դերանունների անուններ՝ գոյականներ, որ տվյալ դեպքում գոյականանում են հոդով, որը նույնպիսի հոդ է, ինչպես գոյականացող ածականի, թվականի հոդը. օրինակ՝* Ամեն գեշ բաների պատճառը *իմ ու քոն է (Իս., III, 70)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Ինչպես նկատելի է, այս դեպքում ն *դերանունը մի հոդ է ընդունում, որ վերաբերում է նաև* իմ *բառին. այդ երկուսը առված են իբրև մի ամբողջություն։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2. Որքանով որ սրանք իբրև ստորոգելիական վերադիր քիչ են գործածական, այդքանով սրանց հետ կապակցվող բայական հանգույցները սահմանափակ են. Հատկապես կիրառվում են եմ *և* լինեմ *բայերը։*

Ժթ) ՀԱՐՑԱԿԱՆ-ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ *446. Հարցական-հարաբերական դերանունները ստորոգելիական վերադիր են դառնում ուղղական հոլովով. օրինակ՝ Ինչ է,* փնտրածդ *(Շեքս., I, 112)*։ *Ով եք* դուք *(ԴԳՎ, 473)*։ Բայց ովքեր էք դուք վերջապես *(Մուր., IV, 160)*։ *Եվ այդ* բոլորի գործողը *ովքեր էին (ԲԿ, 401)*։ *Ով էր* նա, որին սուր քաշած հալածում էիք *(Շեքս., I, 152)*։ Բայց պետք է մարդիկ նենց այն լինեին, *ինչ որ թվում են (նույն տեղում, 161)*։ Այո, ամեն մարդ պետք է այն լիներ, *ինչ որ*

թվում էր (նույն տեղում)։ Ինչ են դևեր ու հրեշներ, երկյուղ չունեմ ես, պապի (Թ., II, 166)։ Ով եղավ առիթ տվողը (Շեքս., I, 150)։ Ովքեր են այդ «իրենք» (ՆԶՀ, 196)։ Կշտանալու որն է (ՍԽՀ, II, 128)։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. 1. Հոդով են կիրառվում ինչ, որ դերանունները։ Վերջինիս եզակին միայն հոդով է, իսկ հոգնակին բոլորովին առանց հոդի է մնում։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. 2. Որ դերանունը երբեմն բարդանում է ուր, որտեղ հարաբերականներով, որ միասին կազմում են մի ամբողջություն՝ ուր որ է, որտեղ որ է ձևերով. օրինակ՝ Որտեղ որ է՝ շուտով կգա (Թումանյան, «Անբախտ վաճառականներ»)։ Հիմա ուր որ է, նորից կգար (Շիրվանզադե)։ Այստեղ եմ էական բայ է։

§ 447. Ինչ դերանունը շատ հաճախ իր հետ կապակցվող բառերի և բայական հանգույցի հետ կազմում է մի դարձվածքային ամբողջություն և իբրև վերադիր այդ ամբողջությամբ է հանդես գալիս։

Ինչ դերանունը ասել բայի անորոշ դերբայի և եմ օժանդակ բայի հետ կազմում է մի բաղադրյալ անվանական ստորոգյալ՝ դարձվածքային ամբողջությամբ. օրինակ՝ Ինչ ասել է իսկական կյանք (Քրեստ., IX, 29)։ Ինչ ասել է երիտասարդական սեր, Ինչ ասել է առհասարակ սեր (Շիրվ., III, 392)։

Ինչ դերանունը ոչ ժխտականի, այլ դերանունի և եմ բայական հանգույցի հետ կազմում է մի բաղադրյալ անվանական ստորոգյալ՝ դարձվածքային ամբողջությամբ, որ էապես ձևական հարաբերական ստորոգյալ է ու իրենից հետո ենթադրում, պահանջում է մի իսկական հարաբերյալ ստորոգյալ՝ պնդելով թե ենթական հենց այդ և ոչ թե մի այլ բան՝ հարաբերյալ ստորոգյալի վրա այլևս բայական հանգույցը չի կրկնվում. օրինակ՝ Կիրակնօրյա եղած բոլոր զրույցները ոչ այլ ինչ էին, եթե ոչ կիրակնօրյա ներելի հանաքներ (ԶԵ, 283)։ Ձեր այդ պարոն Բազենյանը ոչ այլ ինչ է, եթե ո՛չ մի կատարյալ խաբեբա (Նար., III, 503)։

Երբեմն այսպիսի կապակցության ենթական լինում է անորոշ դերբայ, այս դեպքում ենթական բարդանում է ցուցական դերանուններով, և անորոշ դերբայը իր լրացումներով ենթարկվում է հնչերանգային առանձնացման. օրինակ՝ Որովհետև սպանել, ամեն զորությունից զրկել մարմինը մշտական պահքով, ծոմով և խիստ ճգնություններով, որ նա անընդունակ լինի որևիցե ցանկության, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ մի տեսակ հոգևոր բարբարոսություն (ՐԿ, 338)։ Համեմա-

տի՛ր. Ամեն օր, ամեն ժամ անդադար միևնույն աղոթքների կրկնությամբ բթացնել միտքը, և զգայուն մտածող էակից դարձնել մի տեսակ անգիտակցական մեքենա,— դա կատարյալ հոգեսպանություն է *(նույն տեղում)*։

Ծանոթություն. Ինչ դերանունը երբեմն իր հետ կիրառվող ստորոգյալի և ենթակայի հետ կազմում է մի դարձվածքային ամբողջություն. օրինակ՝ Են ժամանակ կիմանաք, թե *ինչ նստեց* նրա վրա փափախը *(ՀՀԵ, 463)*։ Ահա, տեր իմ, *բանն ինչ է (Շեքս., I, 104)*։

§ *448. Հարցական և հարաբերական՝* քանի, որքան, որչափ, ինչչափ, որպես, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ, որտեղ, ուր, ինչու, երբ, ինչպես *դերանունները, իբրև ստորոգելիական վերադիրներ, տարբեր ձևերով են հանդես գալիս։ Առանց հոդի են գործածվում՝* որքան, որչափ, որպես, որտեղ, ուր, երբ, ինչպես, ինչչափ *դերանունները. օրինակ՝ ու՞ր է* մեռելն *(Թ., I, 362)*։ Ինչպես էիր անջատման ժամին *(Թ., 352)*։ Ինչպիսի՞ք են *(ԴԴՎ, 262)*։ *Ու՞ր ես* սիրելիս, էլ չես երևում *(ՀՀԵ, 92)*։ Քեֆներդ *ինչպե՞ս է (ՆՁՀ, 240)*։ *Ո՞նց է՝* որ, հեռացված լինելը *(ՍԽՀ, II, 151)*։ Բայց էլ *ու՞ր է* ազգը *(ԴԴՎ, 479)*։ *Ե՞րբ է, ե՛րբ (ԴԴՎ, 476)*։ Իսկ հարսն *ու՞ր է (ՍԽՀ, II, 155)* *Որտե՞ղ է* արդյոք այն քարը հիմի *(Իսահակյան)*։

Ծանոթություն. Ուր, երբ, որտեղ *մեծ մասամբ պարագաներ են*։

Հոդով են ստորոգելիական վերադիր դառնում քանի (քանիսն), քանիերորդ, որերորդ, ո՛րպիսի *դերանունները. օրինակ՝* Սրանք քանիսն են, քանիերորդն է, որերորդն է:

Ծանոթություն. Որպիսի *դերանունն իբրև հարցական առանց հոդի է, իբրև հարաբերական՝ հոգնակին առանց հոդի է կիրառվում, իսկ եզակին հոդով. այս հարաբերականի եզակին անհոդ կիրառելը արդեն հնացած է Համեմատի՛ր.* Օտարազգի կրոնավորներին թույլ չէին տալիս եկեղեցու վարչական պաշտոնների մեջ մտնել, *որպիսի էր* վիճակային եպիսկոպոսությունը *(Ր., III, 222)*։ *Որպիսին ներկայացան* Կլոշարներները *(Իսահակյան)*։

ի) ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ *449. Ցուցական դերանուններից՝* այս, այդ, այն, սա, դա. նա, *իբրև ստորոգելիական վերադիր, կիրառվում են առանց հոդի*

օրինակ՝ Հա, բանն էլ այդ է (Շեքս., I, 164)։ Գուցե պատճառը այն է, որ սև եմ, կամ այն, որ չունիմ (Շեքս., I, 164)։ Ես նա եմ, որին ամենքն են նայում (Թ., II, 165)։ Սա է ռամկի ուժը (ԴԴՎ, 459)։ Էդ էլ չդառնա այն (ՀՀԵ, 463)։ Օգնելն այն կլինի, որ ընդունենք զրադաշտը (ԴԴՎ, 465)։ Ես նա եմ, որը Կոռնթոսից եկավ (Շեքս., II, 57)։

Ծանոթություն 1. Ցուցական վերադիրը շեշտելու նպատակով և ցույց տալու, որ բացառված է մի այլ բառի կիրառությունը նրա փոխարեն, ցուցականը կրկնվում է որ թարմատար հարաբերականով. օրինակ՝ Կա բե չկա, նա է որ նա (Թ., I, 337)։

Ծանոթություն 2. Ենթական կարող է իբրև որոշիչ ունենալ այն ցուցականը, որը դառնում է ստորոգելիական վերադիր։ Սրանով ավելի է բացահայտվում երկուսի տարբերությունը. օրինակ՝ Այն վաչխառուն այն է (Փափ., 590)։ Համեմատի՛ր նաև՝ Այդ այն չէ արդյոք (Շեքս., II, 96)։

§ 450. Սույն, դույն, նույն ցուցական դերանուններից այժմ գործածական է միայն նույն-ը, որ իբրև ստորոգելիական վերադիր կիրառվում է հոդով. օրինակ՝ Ախ, նույնն է միշտ երգն անձայր (ՉԸ, 496)։ Եվ Կատարինայի համար էլ նույնն է (Շեքս., II, 124)։ Ապրուստի եղանակը մնացել էր նույնը (Ր., I, 182)։ Նա մնացել էր նույնը (Շիրվ., VIII, 273)։

Այս դերանվան անհոդ գործածությունը իբրև ստորոգելիական վերադիր, այժմ պետք է հնացած համարել։ Համեմատի՛ր. կինն նույն է, ինչ որ երեխան (Ր., I, 552)։

Ծանոթություն Այս, այդ, այն, սա, դա, նա դերանունների սեռական հոլովները ուղղականի և սեռականի բազարկություն են կազմում այնպես, ինչպես անձնական դերանունների սեռականները (§ 444)։ Ասվում է՝ Այդ նրանն է (Ր., I, 67)։ Գլխարկը սրանն է և այլն։

§ 451. Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի ցուցականները իբրև ստորոգելիական վերադիր գերազանցապես հոդով են կիրառվում. օրինակ՝ Ղեկավարն այդպիսին պետք է լինի (ՆՁՀ, 109)։ Ես այնպիսին չեմ (Շեքս., II, 98)։ Ինչ որ դուք ասեք, հենց

այդպիսինն է (այս մի երկրորդ հոդը նա դերանվան փոխարեն է. պետք է լիներ՝ նա այդպիսին է) (Նույն տեղում, 124)։

§ 452. Միևնույն դերանունն իբրև վերադիր ենթակա ունեցող նախադասությունների մեջ հոդով է կիրառվում. օրինակ՝ Միջոցը միևնույնն է և միակն ամենուրեք (Շիրվ., VIII, 365)։ Միևնույնն էլ այս պարոնը չի դառնալ (Մուր., II, 283)։ Իսկ անենթակա նախադասությունների մեջ միևնույնը մնում է առանց հոդի. օրինակ՝ Միևնույն է, ինձ ոչինչ չի կարող պատահել: Ինձ միևնույն է (Շիրվ., VI, 517)։ Ինձ համար միևնույն է (Փափ., 28)։ Այս նախադասության մեջ ենթական մի ցուցական դերանուն է (դա)։

Ծանոթություն. Միևնույն դերանվան անհոդ կիրառությունը սակավ է և արդեն հնացած. օրինակ՝ Թոմաս էֆենդուն աղջիկ տալը միևնույն է, որպես գցել նրան գայլի կամ շան բերանը (Րծժ, III, 266)։ Բայց եթե ենթական սա, դա, նա, այս, այդ, այն ցուցական դերանուններն են, և բայական հանգույցը եմ հոդը պարտադիր չէ. օրինակ՝ Այդ միևնույն է (Րծժ, III, 272)։ Այդ միևնույն է, թե մենք մեր ձեռքով Բյուրականը հանձնենք թշնամուն (Մուր., III, 269)։ Համեմատի՛ր. Գալ Վան և հայոց առաջնորդին չտեսնել, դա միևնույն կլիներ, որպես գնալ Հռոմ և պապին չտեսնել (Րկ, 284)։

§ 453. Այսքան, այդքան, այնքան, այսպես, այդպես, այնպես. նույնքան ցուցականները իբրև ստորոգելիական վերադիր գործածվում են առանց հոդի. օրինակ՝ Այդքան է թոփչքդ (ՍխՀ, II, 492)։ Կոլխոզի դրությունն այնպես չէ (ՆՁՀ, 21)։ Նա այնքան էր, որ դեմքը չէր երևում (Նույն տեղում, 101)։ Գալիս էլ, ահա, էդպես դուրս եկավ (Թ., II, 63)։ Էսպես է կարգն աշխարհի (Նույն տեղում, 68)։ Տերության գործերը այդպես են (ԴԴվ, 479)։ Կյանքը հենց այդպես է (Նույն տեղում)։

§ 454. Ստորոգելիական վերադիր կարող են դառնալ նաև մյուս դերանունները. օրինակ՝ Անհուն, անես, ամենն եմ ես (Թ., II, 165)։ Ոչինչ է հինգ հարկանի կենտրոնը (Զե, 261)։ 0, Դոոզդովը մեծ է փոքր գործերում (ՌՊե, 458)։ Ով որ է (Թ., II, 302)։ Չէ, սա ով որ է (Նույն տեղում)։ Ծանոթ օքմին է, շունը սովոր է (Թ., II, 302)։ Որոշ ճաշակի տեր մեկն էր (Շիրվ., VIII, 281)։ Սոմիկոն անուղղելի մեկն էր (Նույն տեղում, 319)։

իա) ԹՎԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ.

§ 455. Քանակական թվականներն իբրև ստորոգելիական վերադիր իրենց գործածության ձևերով գրեթե ածականներից չեն տարբերվում։ Դրվում են ուղիղ ձևով և արտահայտում են ենթակայի քանակական հատկանիշը, այսինքն՝ թե այսինչ կամ այնինչ առարկան ինչ թվով է։ Եթե թվականը իբրև վերադիր կիրառվում է անհոդ, ապա անորոշ կերպով ցույց է տալիս այն թիվը, որով հանդես է գալիս առարկան։ Իսկ եթե թվական վերադիրը հոդով է կիրառվում, ապա կարող է նշանակել տվյալ թվանշանը և կամ փոխանունորեն այն առարկաները, որոնք թվարկված են. օրինակ՝ Սյունյակների թիվը յոթ է (Կիս., Թվաբ., 32)։ Ճամփեն մին է, ցավը հազար (Թ., II, 166)։ Այսինքն՝ ճամփեն մի հատ է (մին անհոդ է), իսկ ցավը՝ հազար։ Դուք նրանցից մեկն եք (ՐԿ, 398)։ Դարձել ես մեկն այն ողորմելիներից (Շիրվ., VII, 183)։ Այդ նկուղը մեկն էր այն որջանոցներից (Շիրվ., VIII, 277)։ Վերջին օրինակների մեջ թվականը անորոշ դերանվան նշանակություն ունի։

Իսկական իրենց թվական կիրառությամբ հանդես են գալիս հետևյալ օրինակների մեջ. Գծիկները կլինեն 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3, այսինքն՝ 3 × 7 (Կիս., Թվաբ., 32)։ Ընդհանուր գումարն է ծախսերի երեք հարյուր տասներկու հազար (Շիրվ., VI, 302)։ Արյուններս մեկ է, հողներս՝ մեկ, ցավներս՝ մեկ, թշնամիներս՝ մեկ (ԴԴՎ, 401)։ Ամուր անսասան կանգնած է նա մին (Թ., II, 272)։

Հաճախ մեկ թվականը ունի միևնույն ցուցականի նշանակությունը. օրինակ՝ Հիմա իմ ու քո ճալը մեկ է (ՍԽՀ, II, 151)։ Երազ թե իրոք, այդ մի՞թե մին չէ (Թ., II, 76)։ Հայը թեև շատ ցավ ունի, բայց ողջ մեկ չեն նրա համար (Թ., I, 252)։ Այս դեպքում թվականը առանց հոդի է մնում։

§ 456. Դասական թվականները գերազանցապես հանդես են գալիս առարկաների փոխարեն և հոդով են կիրառվում՝ ցույց տալով որևէ կարգում գտնվող առարկա, որ վերագրվում է ենթակային. օրինակ՝ Այդ կինը իր սեռի մեջ միակն է և առաջինը (Մուր., II, 7)։

§ 457. Մյուս թվականները կազմվում են ածականների և գոյականների ձևով, ուստի կիրառվում են ածականների և գոյականների կանոններով. օրինակ՝ Միակն եմ այդ բարձրության վրա

(Շիրվ., VIII, 338)։ Չորս իննսուներեք հարյուրերորդականը մոտավորապես *քառորդն է* մեկ հարյուրերորդականի ճշտությամբ *(Կիս., Թվաբ., 159)*։ Տասնավորը, հարյուրավորը, հազարավորը բազադրական *միավորներ են (Նույն տեղում, 11)*։ Հիսունի վրա բաժանվում են բոլոր այն և միայն այն թվերը, որոնց վերջին երկու թվանշանները զրոներ են *(Նույն տեղում, 66)*։ Դու դարձյալ *միայնակ ես (Շիրվ., VI, 59)*։

§ 458. Թե՛ թվականները և թե՛ ածականները, երբ իրենց բուն իմաստով են կիրառվում, այսինքն՝ չեն գոյականանում, միայն եզակի են դրվում. իսկ եթե գոյականանում են, կարող են նաև հոգնակի գործածվել։

իբ) ՄԱԿԲԱՅՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԵՐՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 459. Մակբայները և կապերը, իբրև ստորոգելիական վերադիր, կիրառվում են ճիշտ և ճիշտ ածականների նման, մանավանդ որ այս երեք խոսքի մասերի մեջ փոխանցումները ուժեղ են (ոչ բոլորը)։ Դրանք կիրառվում են միայն եզակի և առանց հոդի. իսկ եթե հոդ են ստանում և հոգնակի են կազմում, ապա հանդես են գալիս գոյականների դերով։ Երբեմն թանձրացյալ նշանակություն ունեցող բայերի մոտ մակբայները, մասամբ նաև կապերը լրացման դերով են հանդես գալիս, կամ ավելի ճիշտ գտնվում են անցողիկ մի շրջանում. կարելի է թե՛ վերադիր համարել և թե՛ հատկապես պարագա։ Ահա բոլորի համար օրինակներ՝ Սարեր ձորեր հեռու էր նա *(ԴԴՎ, 443)*։ Իմ տրտունջը իսկույն անտեղի երևաց *(ՐԿ, 328)*։ *Օրեն* մեկ օրը հիմի է *(ԴԴՎ, 476)*։ Երգը տեղին էր *(ՎԱՍԱ, 50)*։ Հեշտ է թվում փափագելին ու սիրածը միշտ մոտիկ։ Եվ ինձ այնպես հեշտ է թվում «անդարձ» ճամփեն էն քարոտ, Եվ այն աշխարքն այնպես հեշտին ու էն հավքը այնքան մոտ *(Թ., II, 166)*։ Հովասափին տուգանելը տեղին էր *(ՍԽՀ, II, 129)*։ Գործն *շտապով էր (մակբայ է գործիական ձևով, ՂԱ, IV, 267)*։ Երազն էլ նուրբ ու խուսափուկ *վռազ եղավ*, անցկացավ *(Թ., I, 211)*։ Դա շատ ուշ կլիներ *(ՐԿ, 208)*։ Բայց այլևս *ուշ էր* այդ մասին վիճելը *(Շիրվ., II, 484)*։ «Այոն» *այո է և* «ոչն»՝ *ոչ (Ր., I, 511)*։ Դեռ այդ *վաղ է (ԴԴՎ, 28)*։

§ 460. Կապերը առհասարակ առանձին, իբրև ստորոգելիական վերադիր, չեն կիրառվում։ Միշտ հանդես են գալիս իրենց գոյական խնդրի հետ միասին. իսկ եթե առանձին են կիրառվում, ապա ա-

ծականի, գոյականի կամ մի այլ խոսքի մասի պաշտոն են կատարում. օրինակ՝ Եզերքն ու մեջն եմ ես (Թ., II, 169)։ Նա կայծակի արագությամբ մի ռոպե քարավանի առջևումն էր, մյուս ռոպե նրա ետևումը (ՐԿ, 438)։ Այստեղ եմ բայը կարելի է առանձին ստորոգյալ համարել, իսկ առջևումը, ետևումը՝ տեղի պարագա։ Մեծ բախտը սակայն առաջևն էր դեռ (Թ., I, 292)։

Բացի այս, կապը կարող է որոշ բայերի հետ նաև կազմել դարձվածքային կապակցություն. օրինակ՝ Ժողովուրդը վրա եկավ (ԴԴՎ, 468)։— Աղջի Սոնա, գնա դուն էլ մեջ մտիր (Իս., III, 301)։ Հազարներով մարդն ու իր ձին տակովն եղան կոտորվեցին (Թ., I, 316)։

իգ) ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 461. Ձայնարկությունները նույնպես դառնում են ստորոգելիական վերադիր, բայց այս դեպքում դրանք ստանում են գոյականական առում և ցույց են տալիս այն բառը, որ ձայնարկության անունով է. կամ այն իմաստը, որ արտահայտում է ձայնարկությունը. օրինակ՝ Սա ախ է, իսկ մյուսը վայ։ Այս պահիս մեկի հայհայն է, մյուսի վայվայը (ԴԴ, 456)։ Հենց ձայնարկությունը առանց հանգույցի կարող է ստորոգում ցույց տալ. օրինակ՝ Գրպանս լցնեի մրգով ու հայդա դեպի դաշտ (ՍԶՄԿՊ, 174)։ Էս Դավիթն էլ գնոլը դըմբ հա դըմբ (Թ., III, 109)։

իդ) ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ, ԱՆՈՐՈՇ ԵՎ ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ԻԲՐԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

§ 462. Մեր նոր գրական լեզվում ենթակայական և անորոշ դերբայները որևէ ժամանակի կազմության մեջ չեն մասնակցում, ուստի երբ դրանք դառնում են բաղադրյալ ստորոգյալի մաս, ճիշտ այնպիսի դեր են կատարում, ինչպիսի դեր կատարում են գոյականը և ածականը։ Այս հանգամանքը նկատի առնելով, դրանք ևս մեր կողմից դիտվում են իբրև անուններ, և դրանցով կազմված բաղադրյալ ստորոգյալները համարվում են բաղադրյալ անվանական ստորոգյալներ։

§ 463. Անորոշ դերբայը սովորաբար կիրառվում է եմ և լինեմ բայական հանգույցների հետ և նշանակում է այն գործողության հատկանիշը, որ վերագրվում է ենթակային։ Այս դեպքում անորոշը

գերազանցապես հոդով գոյականանում է. օրինակ՝ Նրանց մոտ խիղճը ոչ թե *չանելն է,* այլ թաքցնելը *(Շեքս., I, 163)։* Եվ միակ ճարս նրան *ատելն է (Նույն տեղում, 165)։* Ամոթը կռվելը չէ, այլ ձեզ հետ *նստելը,* ձեզ հետ *խոսելը* ու մինչև անգամ ձեր երեսը *տեսնելը (Շիրվ., VIII, 104)։* Շան բնազդների մեջ ամենաուժեղ բնազդը տիրոջը անձնվիրաբար *ծառայելն է (ՎԱՍԱ, 60)։* Սակայն Սոմիկոյի դժկամության հիմնական պատճառը ոտքով *քայլելը չէ,* այլ ուրիշ բան *(Շիրվ., VIII, 287)։* Ուրիշների ծաղրի դեմ պաշտպանվելու ամենալավ միջոցը ինքն իրեն *ծաղրելն է (Շիրվ., VIII, 307)։*

§ 464. *Անորոշ դերբայը իբրև ստորոգելիական վերադիր սակավ կիրառվում է նաև առանց հոդի. այս դեպքում այն հանդես է գալիս իբրև բայ, անորոշ դերբայ և ոչ թե գոյականացված խոսքի մաս. օրինակ՝* Դա երևաց ինձ *մեղանչել* հայկական այժմյան բնավորության դեմ *(Ր., I, 560)։* Երբ իր կյանքի գլխավոր շահը և փոխարժեքը միմիայն *ուտել* և *քնել լինի (Շեքս., I, 79)։* Բայց նրա դիտավորությունը որևէ գավառական քաղաք *գնալ չէր (Մուր., II, 167)։* Դա չար *լինել չէ (Շեքս., I, 181)։* Եթե իմ դերը սուր *քաշել լիներ,* հուշարար պետք չէր *(Նույն տեղում, 124)։*

Ծանոթություն 1. Երբ ենթական անորոշ դերբայ է, ստորոգելիական վերադիր անորոշը հատուկ հնչերանգությամբ առանձնանում և դրվում է առանց հոդի. օրինակ՝ Մի անգամ կասկած հղանալ՝ իսկույն *վճռել է (Շեքս., I, 162)։* Այդ բանն ասելը՝ *ապացուցել չէ (Նույն տեղում, 128)։*

Ծանոթություն 2. Երբ բայական հանգույցը ենթակայի հետ է հանդես գալիս, իսկ անորոշ դերբայը հեռու է ընկնում (ետադաս), վերջինս դրվում է առանց հոդի. օրինակ՝ Իմ բարեկամական խորհուրդն է չգնալ *(Շիրվ., VIII, 293)։* Զինվորի կյանքն է՝ կռվի շաչյունից ցնցվել և ցատկել բալասան քնից *(Շեքս., I, 151)։ Այս դեպքում էլ գոյություն ունի հնչերանգության առանձնացում։*

§ 465. *Անորոշ դերբայը ուրիշ բառերի հետ կարող է ներկայացնել մի ամբողջական դարձվածքային կապակցություն. օրինակ՝ Եթե իմ դերը* սուր քաշել լիներ. *այս դեպքում ստորոգելիական վերադիր պետք է համարել ընդգծված ամբողջությունը։*

Երբեմն այդպիսի նախադասությունների մեջ անորոշ դերբայը ներկայանում է մի ամբողջ դերբայական դարձվածքով. օրինակ՝ Դա

չար լինել չէ։ Ամենատուժեղ բնազդը տիրողը անձնվիրաբար ծառայելն է. *այս դեպքում էլ ամբողջ դարձվածքը պետք է համարվի մի ստորոգելիական վերադիր։*

§ *466.* Ասել *անորոշը* եմ *բայական հանգույցի հետ ստանում է* նշանակում է *բայի իմաստը և մի այլ խոսքի մասի հետ կազմում է մի ամբողջական ստորոգյալ։ Այդպիսի ստորոգյալ պետք է համարել նաև* նշանակում է *բայը, միայն այն տարբերությամբ, որ առաջին դեպքում ունենք երկու ստորոգելիական վերադիր* (ասել *և հաջորդող որևէ խոսքի մաս), իսկ երկրորդ դեպքում մի բայ (որ բայական հանգույցի նշանակություն ունի) և մի վերադիր. օրինակ՝* Լենին՝ այսօր արդեն *ասել է գագաթ, ասել է ներքին կառուցում* Խո նոր բեմայի *(ՉԸ, 84)։ Եթե այս նախադասությունը դարձնենք այսպես՝* Լենին այսօր արդեն *նշանակում է գագաթ, ոչինչ չի փոխվի իմաստային առումով։* Նշանակում է *բայի հաջորդ վերադիրը կարող է նաև անորոշ դերբայ լինել. օրինակ՝* Իրավ մեծ լինել՝ *նշանակում է ուրքի չկանգնել* առանց մեծ դատի *(Շեքս., I, 79)։ Այսպիսի անորոշ չի բացառվում նաև նախորդ (ասել է) ձևի համար։*

§ *467.* Ասել *բայը այս գործածությամբ երբեմն* ինչ *հարցականի հետ կազմում է մի ստորոգյալ, որը ունի դարձվածքային նշանակություն. օրինակ՝ Ինչ ասել է* գեղեցկություն ասված բանը *(Շիրվ., VIII, 92)։ Ինչ ասել է* բախտ *(նույն տեղում, 105)։*

§ *468. Ենթակայական դերբայը իբրև վերադիր նույն ձևով ու իմաստով է հանդես գալիս, ինչ որ գոյականներն ու ածականները և ցույց է տալիս այնպիսի հատկանիշ, որ վերագրվում է ենթակային և նրան դարձնում է գործողության կատարող առարկա. օրինակ՝* Շատ աղաչում եմ, որ *ներող լինեք (Շեքս., I, 163)։* Կամ հին գերեզման *քանդող կլինի (Թ., II, 34)։ Ուտող է,* հասցրու, որ կշտացնես *(ԴԴՎ, 458)։*

§ *469. Հարակատար դերբայը հայերենում հաճախ հանդես է գալիս ածականի կիրառությամբ և նույնիսկ* եմ, լինեմ *բայերի հետ էլ որոշ դեպքերում չի կազմում բաղադրյալ ժամանակ, այլ ածականի դեր է կատարում. օրինակ՝* Այնպես անկարգ, *ցրված եղավ (Թ., I, 250)։ Այս օրինակի մեջ* ցրված *հարակատար դերբայը ոչնչով չի զանազանվում* անկարգ *ածականից. ուստի այդ կարգի ստորոգյալները ևս պետք է համարվեն անվանական ստորոգյալ և ոչ թե բայական։ Այսպես են՝* խմած է, հարբած է, կարած է, արդուկած է *և այլ բազմաթիվ ներգործական կառուցվածքներ, որոնք ածականային կի-*

բառությամբ են հանդես գալիս և ոչ թե բայական։ Այդպես կարող են լինել նաև չեզոք և կրավորական ձևերը։

Բացի սրանից, հարակատար դերբայը, հատկապես մնալ բայի հետ, կազմում է բաղադրյալ ստորոգյալ, որը չեզոք նշանակություն ունի։ Գուցե կարելի կլինի այս կառուցվածքը համարել երկրորդական բաղադրյալ ժամանակ, սակայն քանի որ հարակատար դերբայը աստիճանաբար իբրև այդպիսին ետ է զարգանում և հենց այս կարգի կապակցությունների մեջ այն հանդես է գալիս իբրև ածական, ուստի նրանով կազմված այդպիսի ձևերը համարում ենք բաղադրյալ անվանական ստորոգյալ, հարակատար դերբայը ընդունելով իբրև ստորոգելիական վերադիր, իսկ նրա հետ կապակցվող բայը իբրև մի կիսավերացական բայ. օրինակ՝ Մնացին մոտիկ քարերին նստած (Թ., II, 66)։ Մնացին կանգնած սրճարանի առաջ (Զե, 281)։ Զարմացած են մնացել (Նար., IV, 10)։ Նա շփոթված մնաց (ԲԿ, 335)։ Ես պետք է մնայի փակված այդ պարիսպների մեջ (նույն տեղում, 584)։ Այնտեղ հին պատից մնում են կախված Նրանց լայն վահանն ու սուրը՝ ժանգոտած (Թ., I, 351)։ Օլյան մնաց սառած (Նար., I, 479)։ Մնալ բայից ավելի իր նշանակությունը պահպանել է կանգնել չեզոք բայը. բայց սա ևս մոտենում է նրան. օրինակ՝ Ես կանգնեցի մի պահ շվարած (Շեքս., II, 89)։ Կանգնում եմ շվարած (ՍՋՄԿՊ, 69)։

Այսպիսի կազմությունները արդեն անկասկած ներկայացնում են մի բաղադրյալ ստորոգյալ։ Մինչդեռ ներգործական սեռի զգալ, գտնել և այլ բայերի հետ դեռևս այդ պրոցեսը չի վերջացած։ Այդ դեպքում հարակատար դերբայը ներկայացնում է ավելի լրացական բառի արժեք, քան վերադիրի, չնայած որ վերջին պարագայում ևս վերադիր լինելը չի բացառվում հատկապես զգալ բայի մոտ, որովհետև զգալ, գտնել ևս աստիճանաբար հեռանում են իրենց բառական նշանակություններից և ձեռք են բերում վերացական՝ հանգուցային նշանակություն. օրինակ՝ Երբ ես բավական զգաստացած էի զգում ինձ (ԲԿ, 335)։ Մենք նրան իր տեղում նստած գտանք (ԲԿ, 339)։ Ինձ մի խումբ աբեղաներից շրջապատված գտա (ԲԿ, 334)։ Ինձ քնից հանկարծ մեռած կտեսնես, այն ժամանակ խռ կհավատաս (Նար., I, 461)։

§ 470. Մի շարք ներգործական բայեր իրենց ուղիղ խնդրի հետ մի ամբողջական կապակցություն են կազմում։ Այդ կապակցությունները երբեմն մոտենում են վերադիրային, երբեմն էլ դարձվածքային կապակցությունների։ Անշուշտ սկզբնապես այդ բայերի խըն-

դիրները առանձին վերցվել են իբրև ուղիղ խնդիրներ, սակայն այժմ արդեն այդպես հաշվելը սխալ կլինի։ Խնդրի և ներգործական բայի ամբողջությունը պետք է մի ստորոգյալ համարել։ Օրինակ՝ Այս պատմությունը խիստ դառն *տպավորություն ունեցավ* իմ վրա *(Ր., I, 557)*։ Խոսակցությունը որոշ *ազդեցություն էր գործել* այդ կրթված երիտասարդի վրա *(Նար., IV, 104)*։ Այդ կեղծավորները ամեն ժամանակ *մեծամասնություն են ներկայացրել (ՐԿ, 338)*։ Ժամհարի գալն ինձ վրա *թողնում էր* այն աստիճանի միստիկական *տպավորություն (ԳՄԵ, 341)*։ Ի ներքուստ մի բան *հանգիստ չէր տալիս* Աննային *(Նար., II, 297)*։

III. ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 471. Ենթական և ստորոգյալը քննելիս տեսանք, որ դրանք մտնում են որոշ քերականական հարաբերությունների մեջ։ Ոչ միայն ենթական և ստորոգյալը, այլև նախադասության մեջ մտնող բոլոր անդամները միմյանց նկատմամբ երկու տեսակ հարաբերությունների մեջ են մտնում՝ համադասական և ստորադասական։ Համադասական կապակցության մեջ նախադասության այս կամ այն անդամը մյուսի կամ մյուսների նկատմամբ համազոր է լինում, իսկ ստորադասական կապակցության մեջ մեկը ենթարկվում է մյուսին, իբրև նրանից կախյալ, նրան ստորադաս բառ. օրինակ՝ Բարձր բերին և դրին ճանդակեն տաղավարի տակ. բերին աղանդեր և գինի (ԴԴՎ, 198)։ Այս նախադասության մեջ բերին և դրին բայերը իրար նկատմամբ հավասարազոր են, այդպես են նաև միմյանց նկատմամբ աղանդեր, գինի բառերը. սակայն նույնպիսի հարաբերության մեջ չեն գտնվում բարձր ու բերին բառերը, աղանդեր և բերին բառերը. մեկը մյուսի նկատմամբ գտնվում է ստորադասական հարաբերությունների մեջ. գոյականները ուղիղ խնդիր են բերել բայի համար և այս վերջինի պահանջով դրված են որոշակի հոլովով (հայցական), այսինքն՝ կախյալ հարաբերության մեջ են՝ ստորադասված։

Ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը համադասական հարաբերություն է, սակայն այդ երկուսը նախադասության մեջ գտնվում են որոշակի քերականական կապի մեջ. դրանք իրար հետ գործածվում են միևնույն դեմքով ու թվով։ Ենթակայի և ստորոգյալի քերականական այս փոխադարձ կապը կոչվում է ենթակայի և ստորոգյալի համաձայնություն։

Եթե ենթական և ստորոգյալը համաձայնում են և՛ թվով, և՛ դեմքով, ապա այս տեսակ համաձայնությունը կոչվում է լրիվ, իսկ երբ

համաձայնության մեջ քերականական հիշյալ կարգերից մեկնումեկի համաձայնությունը խախտված է, համաձայնությունը մասնակի է։

Մասնակի համաձայնության մեջ մեծ դեր է կատարում **բակառություն**ը, որը ոչ թե կատարվում է ըստ քերականական հիշյալ կարգերի պահանջմունքի, այլ՝ ըստ համաձայնող անդամների նշանակության. օրինակ՝ **ժողովուրդ** բառը եզակի է, սակայն խոսքի մտքում դա մարդկանց բազմություն է նշանակում, ուստի և հաճախ դրա և այդ կարգի բառերի ստորոգյալը հոգնակի է դրվում։ Ենթակայի և ստորոգյալի այսպիսի համաձայնությունը կոչվում է բակառություն։

1. ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄՔՈՎ

§ 472. Թվում է, թե ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունը որևէ դժվարություն չի ներկայացնում. խոսողը պատկանում է առաջին դեմքին, խոսակիցը երկրորդ դեմքին, իսկ մնացած բոլոր առարկաները երրորդ դեմքով են արտահայտվում։ Սակայն լեզվի մեջ ստեղծվում են ենթակայի և ստորոգյալի այնպիսի հարաբերություններ, որոնք խախտում են հիշյալ օրինաչափությունը։ ·

Առաջին և երկրորդ դեմքի ենթակաները սովորաբար արտահայտվում են անձնական I և II դեմքի դերանուններով. օրինակ՝ **Ես** պիտի գամ մայոր **Դեմենտևի մոտ** (Քոչար, 150)։ Դուք ասացիք, **որ** մենք գոհ կլինենք, **իսկ** ես կասեմ, **որ** մենք **արդեն** գոհ ենք̃ (Նույն տեղում, 118)։

Հայերենում բայերի բոլոր եղանակները և ժամանակները ենթակա են այս օրինաչափությանը և իբրև ստորոգյալ կարող են երկու դեմքով էլ դրվել, բացի հրամայականից, որ միայն երկրորդ դեմքով է արտահայտվում։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Անվանական ստորոգյալների և ենթակայի համաձայնության մեջ նկատի է առնվում հանգույցը և ոչ թե ստորոգելիական վերադիրը, որի համաձայնության մասին առանձին կխոսվի (§ 561)։

§ 473. Երրորդ դեմքին պատկանող ենթակաները կարող են լինել բոլոր խոսքի մասերը. օրինակ՝ Մարդիկ եկան **ճամբարի կողմից**

և հայտնեցին, որ պարսիկները պատրաստվում են հարձակման (ԴԴՎ, 432)։ Բայց կարող է նա այդ անել։ Ոչ, նա չի այսօր կյանքի հիմը։ Բարձրանում է աշխարհ մի անեզր, որ քոնն է անշուշտ և իմը (ՉԸ, 150)։

§ 474. Ասվեց, որ խոսողը հանդես է գալիս առաջին դեմքով և սովորաբար իբրև ենթակա իր փոխարեն գործածվում է առաջին դեմքի անձնական դերանունը։ Սակայն երբեմն պատահում է, որ խոսողը իրեն դնում է երրորդ դեմքի անձնավորության տեղ և իբրև ենթակա կիրառում է իր անունը, տիտղոսը, կամ որևէ շրջաբանական բառ և դրանց համապատասխան ստորոգյալը դնում է երրորդ դեմքով. օրինակ՝—Սեդա, ով ասաց քեզ, թե թագուհին ընկղմում է տխուր մտածմունքների մեջ, և թե այդպիսի ժամանակներ նա չէ իմանում, թե ինչ է կատարվում յուր շուրջը (խոսում է թագուհին ինքը. և այժմ նրան պատասխանում է նրա դայակը՝ Սեդան)։ — Ոչ ոք, իմ սիրելի տիկին, այդ ես ինքս եմ տեսնում: Սեդան պետք է կույր լինի, որ յուր տիրուհու դեմքի մշտական թախիծը և նրա ճակատի տխուր կնճիռները չտեսնե (Մուր., III, 14)։—Ինչու ես լուռ, Դրաստամատ (խոսում է Արշակ թագավորը)։—Դու կարծում ես, Արշակը այնքան թուլացել է սրտով, որ չէ կարող տանել նոր հարվածները (Ր., III, 262)։ Եվ զոռոզ Սահականույշը խոստովանություն անում է յուր թագավորին (խոսում է ինքը Սահականույշը, Մուր., III, 300)։ Նվաստս է, տեր իմ (Ր., III, 400)։ «Երկիր Նաիրի» վեպը լույս տեսնելուց հետո հեղինակն իր մի շարք հայրենակիցներից սկսեց ստանալ գրություններ (ՉԸԵ, 297)։ Շատ տարածված է շրջաբանությամբ ասել այս գրքի հեղինակը, տողերիս գրողը, ձեր ծառան, որոնց ստորոգյալը դրվում է երրորդ դեմքով։

§ 475. Դիմափոխանակման մի ավելի տարածված հնարն այն է, երբ խոսողը իրեն վերցնում է իբրև մի ընդհանրության ներկայացուցիչ և օգտագործում է այդ ընդհանրության մի որևէ հատկանիշը իր փոխարեն. օրինակ՝— է, կովկասցի, կովկասցի, չես կարող հարգանքով խոսել օտարական մարդու հետ. ինչով է նա արժանի քո ծաղրանքին (Քոչար, «Գեներալի քույրը»)։

§ 476. Գտնում ենք հազվագյուտ օրինակներ, որտեղ այս դեպքում ստորոգյալը դրված է առաջին դեմքով. օրինակ՝ էս քո գլխամեռ մերը ու էս զգզված հալիվորը՝ քո հերն (հայրն ինքն է խոսում) էն ենք ուզում (ՊՊ, III)։

§ 477. Ձևով սրանցից քիչ է տարբերվում այն հնարը, երբ ո՛չ թե խոսողն է իրեն դնում երրորդ անձնավորության դերում, այլ դի-

մացինին, այսինքն՝ երկրորդ դեմքին է վերագրում երրորդ դեմքի հատկանիշներ. օրինակ՝ Ես հուսով եմ, որ տեր ներքինապետը *(ասվում է իրեն ներքինապետին)* այս գիշեր *կհանգստանա* ճանապարհի հոգնածությունից և առավոտյան լուսով *կտեսնե* յուր թագավորին *(Ր., III, 257)։* Միթե միայնակ եմ ես... չէ որ ինձ մոտ է *Աշոտ թագավորը (թագուհին ասում է հենց իրեն թագավորին, Մուր., III, 298)։ Հնում ասվում էր՝* ձերդ մեծությունը, ձերդ գերազանցությունը, ձերդ վեհափառությունը, ձերդ նորին գերազանցությունը *և այլն, և սրանց ստորոգյալը երրորդ դեմքով էր լինում։*

Խոսակցության այս ձևերը ընդհանուր բնույթ էին կրում, այժմ այն հնարները, որոնք հատուկ են հասարակական տարբեր աստիճանների վրա գտնվող անձերի երկախոսությանը, վերացած են։ Նույնիսկ ծիծաղելի է ասել՝ Նվաստս է խոսում: Ձեր ծառան հայտնում է ձեզ. եթե մեղավորս լինեի, այդպես չէր վարվի *և այլն*

§ 478. Ինչպես տեսնում ենք, բացառությամբ մի օրինակի, բոլոր դեպքերում դեմքերի քերականական համաձայնությունը պահպանվում է։ Ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունը խախտվում է, երբ ենթական է ով *հարցական դերանունը. երբ խոսողը* ով *դերանունը կրկնում է, դիմելով երկրորդ դեմքի անձնավորության՝ ուզում է գործողություն կատարողների անունները իմանալ, որի մեջ պետք է լինի նաև խոսակիցը, այն ժամանակ* ով ու ով *կրկնվող ենթակայի ստորոգյալը դրվում է երկրորդ դեմքով. օրինակ՝* Ով ու ով խոսեցիք: Ով ու ով եք գնալու:

§ 479. Եթե միայն երկրորդ դեմքի անձնավորություն է գործողություն կատարողը, ով որ *հարաբերականի ստորոգյալը նույնպես կարող է երկրորդ դեմքով դրվել, մանավանդ, երբ ուղղակի դիմում է արվում. օրինակ՝* Քու ձեռը կոտրի, *ով որ հանեցիր (Թ., II, 56)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Այս և նախորդ պարբերության մեջ սկզբնապես ով դերանունը չէ, որ եղել է ենթակա, դրա հետ միասին կար (և այժմ էլ դեռևս գործածվում է) երկրորդ դեմքի մի դերանուն հետևյալ ձևով. Դուք ով ու ով գնացիք: Դու, ով որ ճանեցիր:

§ 480. Երրորդ դեմքի ենթակաները կարող են երկրորդ դեմքով ստորոգյալ ընդունել նաև այն դեպքում, երբ ստորոգելիական վերադիրը մի երկրորդ դեմքի անձնական դերանուն է. օրինակ՝ Այդ դու ես, միակ դու, բոլոր *սոսկումները* դու ես *(Իս., III, 216)։ Այս դեպքում երրորդ դեմքով դրված ենթական կարող է նաև առաջին դեմքի ստորոգյալ վերցնել. օրինակ՝ վերի նախադասությունը կլի-*

նք այսպես՝ Այդ ես եմ, միակ ես, բոլոր սովորումները ես եմ: *Այդ մենք ենք (Իս. Ե, 156)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Անհրաժեշտ է նշել, որ անձնական դերանունների և ստորոգյալի դիմային համաձայնությունը շատ ավելի սերտ է և անխախտ, քան մյուս կարգի բառերի և ստորոգյալի համաձայնությունը։ Այս է պատճառը, որ երբ ենթական ուրիշ խոսքի մաս է, իսկ անձնական դերանունները ստորոգելիական վերադիր, ապա ստորոգյալը համաձայնում է հենց այս դերանվան հետ, մանավանդ որ այսպիսի պարագաներում ենթական հաճախ մի ցուցական դերանուն է, որի ենթակա լինելու հանգամանքը շատ թույլ է զգացվում. օրինակ՝ Արյաց արքան *դու ես։* Ամենամեծ հույսը *մենք ենք (ԴԴ, 92, 104)։*

§ 481. *Երրորդ դեմքի ենթակաները կարող են երկրորդ դեմքով ստորոգյալի հետ գործածվել, երբ խոսողը խոսակցին դիմում է ոչ թե դերանունով, այլ նրանից համար բնութագրական այլ բառերով. օրինակ՝* Էլ ինչ մարդ ու կնիկ *թաքուն-թաքուն* խորհուրդներ եք անում *(Աբեղյան)։ Բայց այս դեպքում էլ* դուք *դերանունը եղել է և հետո զեղչվել։*

§ 482. *Եթե երրորդ դեմքով ստորոգյալի հետ կիրառվող հավաքական բառերը, թվականները, որոշյալ դերանունները և այլ բառեր ստանում են դիմորոշ* ս, դ *հոդերը, կարող են համաձայնել առաջին և երկրորդ դեմքի հոգնակի ստորոգյալների հետ. ըստ որում* ս *հոդով ենթական համաձայնում է առաջին դեմքի ստորոգյալի հետ, իսկ* դ-*ն՝ երկրորդ. օրինակ՝* Երե *ամեն մեկս* մեր մասին մտածենք *(ՎԱՍԱ, 226)։ Բոլորս կկործանվենք,* եթե չմիանանք *(ԴԴՎ, 105)։* Մի պահ լուռ *կանգնում ենք երկուսս էլ (Քոչար)։ Ամենքդ հավաքվեցեք* ազդանշանը լսելուն պես: Իսկ *նախարարներս ինչ ենք (ԴԴՎ, 100)։*

Սրանք էլ նախապես եղել են՝ մենք ամենքս, դուք բոլորդ, դուք երկուսդ *և այլն։*

§ 483. *Այդ ձևով* նրամանք *բառը* դ *հոդով երկրորդ դեմքի դերանվան պաշտոն է կատարում. ստրիճանով, դեմքով վար գտնըվողները մի ժամանակ* դու *ասելու փոխարեն կիրառում էին* նրամանք *բառը,* դ *հոդով և դրան համապատասխան ստորոգյալը՝ երկրորդ դեմքով։ Միաժամանակ դա քաղաքավարական ձև էր. այժմ այլևս չի գործածվում, կամ ստացել է ծաղրական բնույթ։ Համեմատի՛ր.—* Աղա, հարցնելը ամոթ չը լինի, *հրամանքդ* ինչ *մարդ ես* կամ որտեղից ուր *(Թ., II, 35)։*

§ 484. Հեքիաթային և ժողովրդա-խոսակցական ոճով կոչական բառը երրորդ դեմքի ստորոգյալի հետ է համաձայնում՝ կրկնությամբ և դու դերանվան առկայությամբ. օրինակ՝ Ու Նազար, դու աղա Նազար, էշը քշեց, ընկավ մեծ ճամփան (Իս., III, 262)։ Այստեղ երկու տարբեր նախադասությունների բաղարկություն է կատարվել. պետք է այսպես լիներ. Նազար, դու աղա Նազար լինես, սա էշը քշեց, ընկավ մեծ ճամփան:

§ 485. Անհետևողության (անակոլութի) հետևանք է որևէ հավաքական բառի (առանց դիմորոշ հոդերի) ստորոգյալը դնել առաջին դեմքով, երբ նրա մեջ ենթադրվում է նաև առաջին դեմքի անձնավորություն. եթե ձևական որևէ միջոց չկա այդ բանը մատնանշելու համար, համաձայնությունը միանգամայն սխալ է և անբնական. օրինակ՝ Բոլշևիկների մեր խումբը, չնայելով տարին մի քանի անգամ կատարված խուզարկություններին և ձերբակալություններին, այնուամենայնիվ հին, փորձված պողպատ աշխատանքը սիրելով, ամեն տարի մեծ անհամբերությամբ ու եռանդով մայիսմեկի մասին էինք մտածում ու շաբաթներ առաջ նրա թռուցիկները պատրաստում (ՀՀԵ, 477)։

§ 486. Սակավ պարագաներում ստորոգյալը համաձայնում է բացահայտիչի հետ։ Այն դեպքում խոսողը, իրեն վերցնելով հավաքականության մեջ, այդ հավաքականությունը առանձնացնում է և կտրում ներկայում գտնվող կապերից ու հարաբերություններից և զիտում է իբրև մի ամբողջություն, որ վերաբերում է անցյալին. օրինակ՝ Մենք՝ հին սերունդը դժրախտ եղավ (Թ., V, 468)։

2. ԲԱԶՄԱԿԻ ԵՆԹԱԿԱՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԴԻՄԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 487. Եթե բազմակի ենթակաները պատկանում են միևնույն երրորդ դեմքին, ապա բնականորեն ստորոգյալը դրվում է հենց այդ դեմքով։ Այսպիսի բազմակի ենթականեր կարող են լինել բոլոր բառերը (բացի առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններից)։ Դրանց հետ կարող է դրվել նաև մի երրորդ դեմքի անձնական դերանուն, բայց ոչ առաջին և երկրորդ դեմքի, որոնք բազմակի ենթակայի բաղադրիչներ դառնալով փոխում են համաձայնությունը. օրինակներ՝ Սարերն ընկած ջրի նշաններ էին փրնտրում նաև նախագահ Բագրատը, Արամ Հակոբյանը, կոլխոզի շինարարության բրիգադան և բոլոր այն կոլխոզնիկները, ովքեր ռազմա-

ճակատում սակրավոր էին եղել *(ՎԱՍԱ, 249)*։ Այդ ամենի վրա *հսկում էին* թե՛ *իրենք իշխանները* և թե՛ մանավանդ *Վահրամ սեպուհը* և *Գոռ իշխանիկը (Մուր., III, 396)*։

§ *488. Եթե բազմակի ենթական կազմված է առաջին, երկրորդ և երրորդ դեմք արտահայտող բառերից, ապա օրինաչափորեն ստորոգյալը դրվում է առաջին դեմքով։ Այդպես է նաև, երբ առաջին և երկրորդ դեմքով են դրված ենթակաները. օրինակ՝* Ես ու Քալին մնացինք մենակ *(Նար., IV, 104)*։ *Իսկ եթե երկրորդ և երրորդ դեմքով են դրված ենթակաները, ստորոգյալը համաձայնում է երկրորդ դեմքի հետ. օրինակ՝* Բայց լավ իմանաս, լեռների արքա, Որ օրը որ քեզ ժառանգ է տվել, էն օր կմեռնեմ՝ քու կինն էլ, դու էլ *(Թ., II, 104)*։ *Այսպես ուրեմն՝ ամենաուժեղը առաջին դեմքն է, որից հետո գալիս է երկրորդը, իսկ երրորդը ամենաթույլն է. օրինակ՝* Մնացինք մենք ու մեր խիղճը *(ԴԴՎ, 101)*։ Դուք և նրանք գնացիք: Երեք հոգի, որոնց թվում և ես օրևան գտանք *(Շիրվ., V, 287)*։

§ *489. Եթե նախադասությունը տրվում է իբրև անուղղակի* խոսք, *և նրա մեջ առկա են երեք տարբեր դեմքերի ենթականեր, հնարավոր է, որ ստորոգյալը դրվի երրորդ դեմքով. օրինակ՝* Նա ասաց, որ ես, դու և Արշավիրը կարող են գնալ. *չնայած օրինաչափականը դարձյալ առաջին դեմքով է*։

§ *490. Երբ խոսողը իրեն վերցնում է ուրիշների հետ, ստորոգյալը դցում է ենթականերից առաջ, իրեն մյուս ենթակաների շարքում հիշատակում է վերջում, իսկ խոսքը վերաբերում է անցյալին, այս դեպքում առաջին դեմքի դերանվան ուժը թուլանում է և դիտվում է իբրև մյուսներին համազոր մի երրորդ դեմքի առարկա. այսպիսի դեպքում հնարավոր է, որ ստորոգյալը դրվի նաև երրորդ դեմքով. օրինակ՝* Տղամարդկանցից գլխավոր ուժերն էին Ա. Մանդինյան, Ավալյան և ես *(Չմշկյան, 106)*։ *Այսպես է նաև վերևում Թումանյանից բերված օրինակը.* Մենք՝ հին սերունդը դժբախտ եղավ *(V, 468)*։ *Համեմատի՛ր.* Դու և քո սերունդը կկործին *(ՄԳԵ, 425)*։ *Բայց այս երևույթները օրինաչափություններ չեն. դրանք այստեղ բերվում են իբրև քերականական իրակություններ*։

3. ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՎՈՎ

§ *491. Ենթակայի և ստորոգյալի թվով համաձայնությունը ավելի շատ նրբություններ ու շեղումներ ունի, որովհետև իբրև ենթակա հանդես են գալիս բոլոր խոսքի մասերը, հավաքական բա-*

ները, իսկ այս ամենը թվական համաձայնության բազմազան միտումներ են հանդես բերում՝ չհաշված դեռևս գրողների ու խոսողների ըմբռնումներն այդ տարբեր ենթակաների թվի նկատմամբ։

Թվական համաձայնության մեջ գոյություն ունի երկու ուժեղ միտում. մի կողմից՝ քերականական համաձայնությունը, իսկ մյուս կողմից՝ իմաստայինը, այսինքն՝ բակառությունը։ Այս երկու միտումները միանգամայն հակառակ են միմյանց։ Մի կողմից քերականական համաձայնությունը միտում է գրական լեզուներում դառնալ միակ իշխող ձևը, մյուս կողմից էլ բակառությունը անընդհատ նորանոր բացառություններ է հանդես բերում։ Այս հակադիր երևույթները հատուկ են բոլոր լեզուներին և երկուսի առկայությունն էլ օրինաչափական է ու անհրաժեշտ որպես կենդանի խոսքի յուրահատկություն։

4. ԳՈՅԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԻ ԹՎԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԵՏ

§ 492. Եզակի գոյականի հետ դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի գոյականին համաձայնում է հոգնակի ստորոգյալ. օրինակ՝ Որքան *նման է եղել* պահն այդ՝ մարող կանթեղի: Նրա *կոպերը* երեկ երբ *քարացել են* խաղաղ (ՉԸ, 199)։ Իսկ զինվորական *գնացքն* այդ ժամանակ *սլանում էր* առաջ: *Անցան* Հայկական պարի *լեռնապատկերները*, *անցավ* Շիրակի հարթ *դաշտավայրը*, իրիկնային կապույտ մշուշում *ձուլվեցին* ու *անէացան* Արագածի գագաթները (Քուչար, 114)։

§ 493. Այս ընդհանուր օրինաչափությունից շեղվում են ամենից առաջ հավաքական գոյականները, որոնք ցույց են տալիս միատեսակ առարկաների խումբ, հավաքածու, մաս և այլն։ Այսպիսի բառերի թվին են պատկանում՝ խումբ, ժողովուրդ, ամբոխ, մաս, բազմություն, հոտ, նախիր, ուսանողություն, շարք, զույգ, կծիկ և այս կարգի շատ ուրիշ բառեր։ Սրանց հարում են նաև փոխանունաբար կիրառվող գյուղ, քաղաք, երկիր, լսարան, աշխարհ, շրջան, տուն և այլ բառեր, որոնք, իբրև պարունակողներ, վերցվում են իրենց պարունակյալների փոխարեն։

Հավաքական անունների հետ հոգնակի ստորոգյալ կիրառելը հատուկ է խոսակցական լեզվին, որից էլ անցնում է գրականին, բայց վերջինս խույս է տալիս դրանից, և հատուկ հսկողությամբ շեղումները հաճախ ուղղվում են։

Բոլոր հավաքական անունները միևնույն չափով չեն միտում դեպի հոգնակի ստորոգյալը. բացի դրանից, տարբեր բառերի միջավայրում ու նրանց հետ ունեցած այլևայլ հարաբերությունների մեջ հավաքական գոյականները կարող են որոշակի միտումներ հանդես բերել։

§ 494. Հավաքական գոյականները հոգնակի ստորոգյալ են առնում մեծ մասամբ այն դեպքում, երբ նշանակում են թանձրացյալ առարկաներ, հատեր։ Վերացականություն, երևույթներ (միճակ, ժամանակ, տարածություն) և նման ըմբռնումներ արտահայտող հավաքականները. միշտ միտում են դեպի եզակի ստորոգյալը։

Դեպի հոգնակի ստորոգյալ են միտում նաև այնպիսի հավաքական ենթականեր, որոնց ստորոգյալի գործողությունը ուղղվում է տարբեր կողմեր, այսինքն՝ հավաքականության մեջ մտնող առարկաները միևնույն գործողության ոլորտում արտահայտում են տարբեր միտումներ։ Հավաքական գոյականները հոգնակի ստորոգյալի ենթակա են դառնում նաև այն դեպքում, երբ ունեն այնպիսի որոշիչներ և հատկացուցիչներ, որոնք հավաքականությունը քանակական առումով ուժեղացնում են։ Եվ, վերջապես, այն հավաքական գոյականները, որոնք շարժվող են, ինքնուրույն գործողություն են կատարում, նույնպես հակվում են հոգնակի ստորոգյալի կողմը։ Օրինակները տե՛ս ներքևում։

Չնայած այս առանձնահատկություններին, հավաքական ենթակաների մոտ պետք է առաջնությունը հատկացնել եզակի ստորոգյալին, այլապես կառաջանա բակառություն։ Ահա օրինակներ՝ Մարա Մելիքի երկու *կեսը* թե ճավասար *չեկան* իրար *(Թ., II, 134)։ Գալարվում էին կծիկն* իժերի *(Իս., II, 166)։* Իմ ժողովուրդն եմ ուզում քեզանից: Ուզում եմ թողնես՝ *գնան* ուր *կուզեն (ժողովուրդը)* Ու ազատ իրենց կյանքի *ձենն ածեն (Թ., I, 335)։* Ամբողջ *բազմությունը,* որ կանգնած էին վրանի հանդեպ, մի մարդու նման *խոնարհվեցին* մինչև գետին *(Ր., III, 289)։* Բնակիչների *մեծ մասը բաղկացած էին* հայերից *(Րաֆֆի)։ Ընտանիքը կազմում էին* երեք հոգի *(նույնը)։ Խալխը* մեզ ամոթանք *կտան (Ընտ. էջեր)։*

§ 495. Ինչպես ասվեց, այս կարգի համաձայնությունը այժմ օրինաչափական չէ (չնայած հաճախ է պատահում) և հնում էլ միայն բակառություն է համարվել։

§ 496. Ճիշտը և օրինաչափականը այն է, որ բոլոր դեպքերում էլ հավաքական գոյական-ենթակայի հետ համաձայնի եզակի

ստորոգյալ. օրինակ՝ Ինչքան *ժողովուրդ մտնի* էն վանքը *(Թ., I, 335)*։ *Ժողովուրդը հավատում է* իր ղեկավարներին *(ՆՁՀ, 318)*։ Ամբողջ *մասսան է խոսում (նույն տեղում, 140)*։ Մի մարդու պես *վեր ցատկեց* ամբողջ *ընտանիքը (նույն տեղում, 414)*։ Կարծես՝ թե նրա առաջ *նստած է* շրջանային ակտիվի ամբողջ *բազմությունը (նույն տեղում, 376)*։ *Գնում է գերին, գնում է* նորից, Անցել է թիվը հարյուր հազարից *(Թ., I, 335)*։ Մարդկային մի հսկա *ալիք խուժեց* դեպի գետը *(Ընտ. էջեր, 629)*։ *Ամբոխը* քարերը *վայր նետեց* և խուլ որոտումով *հարձակվեց* նախարարների վրա *(ԴԴՎ, 305)*։ Նա առաջուց էլ զգում էր, որ նախարարների *մեծամասնությունը ներհակ է* իրեն *(նույն տեղում, 65)*։ Սրանց շուրջը *լցվել էր* ճանապարհ դնող հեռու-մոտիկ վայրերի *բնակչությունը (նույն տեղում, 680)*։ *Շարիշար խմբվել էր* բանվորական *մասսան (ՀՀԵ, 357)*։ Մի *մասը* հավաքվեց *(Մուր., I, 230)*։ Ժողովրդի ողջ մնացած *մասը վերադարձել էր* իր ավերակ բույները *(Իս., III, 151)*։ Զույգը վշտացավ *(Տերվ., III, 395)*։

§ 497. *Գոյականների թվական համաձայնությունը շեղումներ է տալիս նաև այն դեպքերում, երբ գոյական ենթական ունի այնպիսի որոշիչներ ու հատկացուցիչներ, որոնք ձևով եզակի ենթական իմաստով հոգնակիի են վերածում։ Այս վերաբերում է արդեն ամեն տեսակ գոյականներին։*

§ 498. *Եթե ենթական ունի երկու, երեք և դրանցից ավելի թվական որոշիչներ, ստորոգյալը թե՛ եզակի է դրվում, թե՛ հոգնակի. օրինակ՝* Եկան անցան հարյուր հազար ղարիբ *(ՍՁ, V, 389)*։ *Ուր* դրված էր երկու երկաթե մահճակալ *(Ընտ. էջեր, 954)*։ Այս երեք աղջիկն ով են *(նույն տեղում, 392)*։ Մրրկի հետևանքով սպանվել է երեսունհինգ և վիրավորվել յոթ հարյուր մարդ *(ՍՀ, 1953 թ., № 68)*։ Եղել է ևս երկու դեպք *(նույն տեղում)*։ Ռայոնում գործում է վաթսունվեց խմբակ *(նույն տեղում)*։ Լինում են, չեն լինում, երկու աղքատ ախպեր են լինում *(Թ., III, 151)*։ Ոստիկանական երկու աստիճանավոր արագ մտան ներս *(ԳՍԹ, I, 9)*։ Երկու ոտքս էլ խիստ ցավում են *(Քոչար, 224)*։ Ուր երկու ալիք շարժուն սարի պես իրար են վազում *(Հակոբյան)*։ Երեք ուսանողուհի գնում էին ինստիտուտ *(ԳՍԹ, I, 39)*։ Հեռվից երևացին երկու թիթեղածածկ շենք *(ՆՁՀ, 260)*։ Այնտեղ հնձում էին, փնչում, կալսում էին, Հարազատի նման երեք կոմբայնավար *(Սարյան)*։ Հազար շեփոր հնչեն թող այս առավոտ: Երկու հարյուր հայացք անհունորեն տխուր Ափի հայ բազմության սրտին էին նայում *(նույնը)*։ Երկու

ուսանող գան հետս (*ԳՍԹ, I, 111*)։ Միաժամանակ հետո չորս ընկերներն էլ եկան (*Ընտ. էջեր, 1005*)։ Երկու արագիլ՝ այր ու կին, իրենց բույնն էին հյուսել (*Իս., III, 169*)։ Իրար հանդիպեցին երկու հայացք (*Զորյան*)։ Խավարի մեջ ջրաղացի կողմից երկու ստվեր շարժվեցին (*ԴԴՎ, 454*)։ Տասը հազար ձիավոր, զինված, կատաղի վրեժը սրտում բռնել են լեռները (*Փափ., 450*)։ Տասը հազար ժողովուրդ սպասում է ինձ (*նույն տեղում*)։ Դուրս եկավ ընդամենը տասներեք աշխոր (*ՆՋՀ, 237*)։ Դահլիճում դրված էր ընդամենը քսան էժանագին մահճակալ (*ԳՍԹ, I, 39*)։

§ *499. Եթե թվականով որոշիչ ունեցող եզակի ենթական վերացական գոյական է և ցույց է տալիս ժամանակային, տարածական ու այլ տևական հատկանիշներ, ամբողջություններ ունեցող առարկաներ և ոչ թե հատեր, շարժվող, գործող առարկաներ, ապա եզակի ենթական համաձայնում է եզակի ստորոգյալի հետ։ Այս դեպքում որոշ դեր է խաղում նաև ստորոգյալի բնույթը. երբ ստորոգյալը ներգործական սեռի բայ է, առանձին-առանձին գործողություն է արտահայտում, մեծ մասամբ հոգնակի է դրվում, իսկ եթե ստորոգյալը չեզոք բայ է, հակվում է դեպի եզակին. օրինակ՝* Երկու միտք ինձ ոգևորում էր (*ԱԲՄ, 136*)։ Հանձնվել է տասնհինգ հազար մետր գործվածք (*ՍՀ, 1953 թ., № 68*)։ Հազար կայծակ փայլատակեց մրրիկներում արնաներկ (*Զարյան*)։ Էս է չորս քսան տարիս լրացավ (*Թումանյան*)։ Բայց մեզ մոտ երեք կամ հինգ ռուբլին ամենասովորական վարձատրությունն է (*Մուր., I, 360*)։ Տարածվեց հայ մասսաների մեջ երեսուն հազար օրինակ (*ՀՀԵ, 359*)։ Հինգ տարին լրացավ այն դժբախտ դեպքից (*Մուր., I, 142*)։ Անցավ երկու ժամ (*Անթ., 315*)։ Տաս տարի է անցել: Երեսունմեկ տարի անցել է այն օրից (*նույն տեղում, 139, 144*)։ Նրա մեջ խոսում էր երկու զգացմունք (*ՆՋՀ, 336*)։ *Չնայած կան և սրանց հակառակ օրինակներ.* Մի քիչ առաջ չորս բժիշկ կար այստեղ (*Քրիստ., 152*)։ Բարձրացավ միայն հինգ ձեռք (*ՆՋՀ, 55*)։

Նկատում ենք, որ մեր մամուլի մեջ այս դեպքում եզակի ստորոգյալն է գերիշխում, սակայն գեղարվեստական խոսքի մեջ իշխողը հոգնակի ստորոգյալն է։

§ *500. Երբ ստորոգյալը անվանական է և վերադիրը հոգնակի, այս դեպքում հանգույցը մեծ մասամբ հոգնակի է կիրառվում, որի հետևանքով ստացվում է հոգնակի ստորոգյալ. օրինակ՝* Այս հինգ հազար ռուբլին աշխատավարձեր են: Քսան օրինակը լավերն են: Տասնհինգ հոգի պրոպագանդիստներ են *և այլն*։

Երբ ստորոգելիական վերադիրը եզակի է, հանգույցն էլ բնականաբար եզակի է կիրառվում և դուրս է գալիս, որ ստորոգյալը ամբողջովին վերցրած եզակի է։

§ *501. Եթե թվականը դրված է ենթակայի հատկացուցիչի վրա, ապա ձևով եզակի ենթակայի ստորոգյալը պետք է եզակի դնել. օրինակ՝* Ութ մոր սիրտ է արյունոտվելու, ութ նոր սիրտ է թրատվելու *(ԳՍԹ, I, 163)։*

§ *502.* Քանի, քանի-քանի *որոշիչ ունեցող եզակի ենթական համաձայնում է եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Յուրաքանչյուր բրիգադից քանի հոգի է ներկայացել *(ՆՋՀ, 55)։* Քանի կին է զրկվում ամուսնուց, քանի մայր՝ որդուց *(ՍԶ, III, 72)։* Քանի-քանի մարդ կորավ իր տանից, Քանի-քանի մարդ դարձավ մարդասպան *(Թ., II, 42)։*

Հոգնակի ստորոգյալը այս դեպքում պետք է բացառություն համարվի. օրինակ՝ Քանի դաժան ոսոխ կամեցել են այրել, Մոխրացնել ձեր սուրբ անկրկնելի ոգին *(Բորյան)։ Իսկ եթե այս դեպքում ենթական հոգնակի է, բնականորեն ստորոգյալը հոգնակի պետք է դրվի։*

§ *503. Եթե եզակի ենթական գործող, շարժվող առարկա է, կամ առանձին հատ է և ունի* մի քանի *դերանունն իբրև որոշիչ, ստորոգյալը սովորաբար հոգնակի է դրվում. օրինակ՝* Մի քանի սայլ ըսպասում էին: Միաբերան հարցրին մի քանի զինվոր *(ՆՋՀ, 329)։ Իսկ եթե մի* քանի *անորոշը որոշիչ է դառնում որևէ վերացական առարկայի, տարածական, ժամանակային, ամբողջականություն արտահայտող հասկացողությունների, միշտ միասնաբար հանդես եկող ոչ-գործող առարկաների, ապա ստորոգյալը եզակի է դրվում. օրինակ՝* Մի քանի ռուբլին չնչին բան է *(Նար., VII, 274)։* Անց է կենում մի քանի օր *(Թ., III, 145)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Քանի *բառը համեմատելով* քանիսը *բառի հետ՝ նկատում ենք, որ առաջինը ավելի եզակի է, բայց երբ ստանում է* մի *անորոշը, արտահայտում է երկուսից ավելի առարկաներ։* Քանի մարդ *կապակցության մեջ* մարդ *հասկացությունը կարող է մեկից ավելի լինել, բայց և մեկ լինել, իսկ* մի քանի մարդ *կապակցության մեջ քանակը ոչ միայն մեկից, երկուսից, այլև երեքից էլ ավել է։*

§ *504. Եթե գոյական եզակի ենթակայի որոշիչը* շատ *բառն է, ստորոգյալը սովորաբար եզակի է դրվում. օրինակ՝* Այդ օրվանից շատ բան է կուլ գնացել *(Ընտ. էջեր, 804)։*

§ 505. Մինչև այժմ բերված այն օրինակները, որոնք շեղվում էին քերականական, ձևական համաձայնությունից, իրենց հիմքում ունեին շեղող այնպիսի գործոններ, որոնք բացահայտ են և լեզվի մեջ ձևակերպվում են իմաստային հիմունքներով՝ բակառությամբ։ Բացի սրանցից, կան այնպիսի շեղումներ, որոնք անուղղակի, հեռավոր կերպով են առնչվում բակառության հետ։ Ճիշտ կլիներ ասել՝ այս դեպքում համաձայնության վրա ազդում են ենթակայի և ստորոգյալի առնչակցության ավելի հեռավոր կապեր ու հարաբերություններ, որոնք կարող են բացատրվել առանձին օրինակներով՝ հիշյալ առնչությունների բացահայտմամբ. օրինակ՝ Մի նեղ և երկայն անցք երկու բնակարանները բաժանում էին միմյանցից *(Շիրվ., IV, 168)։* Շրթունքներից արյուն եկան *(Թ., V, 60)։* Նրա նիհարած, դեղնած դեմքը ցույց էին տալիս, որ նա կատարում է դիվական ծանր գործ *(ԴԴՎ, 223)։* Կարապետ Բերիժանովի զավոդը թե Թիֆլիսում և թե գծի վրա դարձան «Գաղթականների օջախ» *(ՀՀԵ, 359)։*

Նշենք, որ բերված օրինակները հակասում են մեր լեզվի համաձայնության կանոններին և թողնում են անկազմակերպ ոճի տպավորություն, չնայած, ինչպես ասվեց, գոյություն ունի որոշ պատճառաբանվածություն։ Առաջին օրինակի մեջ համաձայնությունը պայմանավորվում է ոչ թե բառի հավաքականությամբ, կամ տարբեր որոշիչներով, այլ խնդրի հոգնակիությամբ. ուղիղ խնդրի հոգնակի լինելը ազդել է իր ստորոգյալի վրա և այն ավելորդ կերպով դրվել է հոգնակի։ Երկրորդ օրինակում ստորոգյալը հոգնակի է անուղղակի խնդրի հոգնակիությամբ։ Երրորդ օրինակում պատճառ են հանդիսանում երկու տարբեր որոշիչները։ Իսկ վերջին օրինակը ցույց է տալիս, որ ենթական հեղինակի մտքում հոգնակի է եղել։ Բերիժանովը երկու զավոդ է ունեցել՝ Թիֆլիսում և գծի վրա և չնայած եզակի է գործածված, բայց մտքում առանձին-առանձին են հանդես գալիս։

§ 506. Լինում են պարագաներ, երբ է՛լ ավելի հեռավոր հանգամանքներ են միջամտում համաձայնության գործում. օրինակ՝ Ասվել էր ամեն ինչ, լսվել էր բոլոր գանգատները, արվել էր բոլոր ճիգը *(ԴԴԸ, 56)։ Այս օրինակի մեջ* գանգատներ *բառը (չնայած որ ունի* բոլոր *որոշիչը) համաձայնել է եզակի ստորոգյալի հետ, որովհետև համադասության մյուս երկու մասերի ստորոգյալները եզակի են դրված։*

§ 507. Հայերենում եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալը որոշ օրինականություն է ստանում, երբ ստորոգելիական վերադիրը հոգնակի է. օրինակ՝ Եղածը հիմար զուգադիպության խաղեր էին միայն (Փափ., 387)։ Այս երևույթը իշխող ձգտում է դառնում մանավանդ այն ժամանակ, երբ ենթակայի ենթակայական ըմբռնումը թուլանում է, այսինքն՝ երբ ենթական որևէ ցուցական դերանուն է, կամ այնպիսի մի բառ, որ իր նշանակությամբ ի վիճակի չէ իշխելու ստորոգյալին, իսկ հանգույցի մոտ գտնված ստորոգելիական վերադիրը ավելի ուժեղ է. օրինակ՝ Նորեկ աշխարհի օղակներն են այն (ՀՀԵ, 227)։ Դա նավթային արդյունաբերության զարկերակներն էին (Շիրվ., 137)։ Այդ ինչ սայլեր էին (Ընտ. էջեր, 516)։ Դա հոներն են (ԴԴՎ, 220)։

§ 508. Մեր քերականության մեծ երախտավոր Մ. Աբեղյանը օրինաչափական է համարում համաձայնության հետևյալ ձևերը. Ով որ այնտեղ կային: Խաղ կանչող տղաների ձայնը լսողի խելքն էին տանում: Բանաստեղծության և պերճախոսության պատմությունը գլխավոր տեղն են բռնում գրականության մեջ: Այսպիսի օրինակները, հատուկ լինելով խոսակցական լեզվին, այժմ միանգամայն հնացած են և անկազմակերպ։ Կամ պետք է ենթակաները լինեն ովքեր, ձայները, պատմությունները և կամ անպայման ստորոգյալները պետք է եզակի գործածվեն։

§ 509. Հաճախ խոսակցական լեզվում հոգնակի ենթակայի հետ կիրառվում է եզակի ստորոգյալը։ Այսպիսի համաձայնությունը կատարվում է հատկապես այն դեպքում, երբ հոգնակի ենթակայի մեջ մտնող առանձին մասերը մի ամբողջություն են կազմում և շատ հաճախ են միասին հանդես գալիս։ Բանավոր խոսքի մեջ միշտ լսում ենք՝ Ոտքերս հոգնեց, աչքերս ցավում է, ոսկորներս ջարդվեց և այլն։ Այսպիսի ձևերը երբեմն անցնում են գրական լեզվին. օրինակ՝ Աչքերս մթնեց (Թ., II, 198)։ Նրա աչքերը չպիտի թրջվի (Շիրվ., IV,)։ Հոնքերը այդպես է (Փափ., 393)։ Այս տարվա մույկերը՝ կոշիկները նոր էր կարվում (ԴԴՎ, 466)։ Արդեն լսում եմ, չանգերը կոճերին է դիպչում (Թ., III, 103)։

§ 510. Համաձայնության քերականական կապերը թուլանում են նաև այն ժամանակ, երբ հոգնակի ենթական վերացական գոյական է, տարբեր առարկաների միևնույն մասն է, հատով չի համարվում, անձ չէ, բառական նշանակությունը մասամբ կորցրած է։ Հաշվի պետք է առնել նաև ստորոգյալի բնույթը. չեզոք, կրավորական գործողություններ ու դրություններ արտահայտող բայական ստորոգյալները և այն անվանական ստորոգյալները, որոնց վերա-

դիրը եզակի է, միտում են դեպի եզակին. օրինակ՝ խելfիս տունը չի մտնի էգպիսի բաները (Իս., III, 290)։ Նրան դուր էր գալիս Համազասպի հեզ ու խելացի բացատրությունները (ԴԴՎ, 224)։ Պատերը ամբողջովին պատած էր գույնզգույն fարերի հագվածfով (Նույն տեղում, 192)։ Որտեղից երևում է թերակղզու բոլոր լեռների գագաթները (ՂԱ, IV, 503)։ Լավել էր բոլոր գանգատները (ԴԴԸԹ, 56)։ Բա ձկնկուլի ձվերը կուտվի (ՎԱՍԱ, 88)։ Տանը էր շարժվում միայն նրա ընտանիfի գործերը (Ընտ. էջեր, 903)։ Պարզ եղանակին այս լեռան գագաթից երևում է Արցախի, Գանձակի, Թիֆլ'իսի դաշտավայրերը (Շիրվ., II, 55)։ Տանեցիf, այժինfն՝ փախստական չղաոածներ, մի զառամյալ էր, սրա կույր թոռը և մի հիվանդ հասակավոր կին (ԴԴ, I, 380)։ Մինչդեռ Շիրակում օրը կեսօր էր, նրանց ժամերը երկուսն էր (Իս., III, 292)։

§ 511. Համաձայնության այս կարգի շեղումները մասամբ կապվում են գրողի ոճաբանական ըմբռնումների հետ։ Երբեմն բանավոր խոսքի երանգը պահպանելու նպատակով որոշ հեղինակներ (Թումանյան, Իսահակյան, Դեմիրճյան, Անանյան և այլք) դիտավորյալ շրջանցում են քերականական համաձայնության կանոնները, որպեսզի անհատականացնեն խոսքը. խոսքի տիպականացման այս հնարը հնանում է և ժամանակին է ստիճանաբար դրանից հրաժարվելու։

Քերականական համաձայնությունը մեր լեզվի արդի շրջանում կորցնում է իր գրքային որոշ առանձնահատկությունները, և բանավոր խոսքը սերտ հարելով գրականին՝ համաձայնական շեղումները դառնում են պարզունակ ու արհեստական, մանավանդ երբ գրողը չարաշահում է համաձայնության կանոնները, որոնք բերում են անփութություն, տարբերայնություն և առաջանում են լեզվի քերականական օրինաչափությունների նկատմամբ գիտակցական վերաբերմունքի բացակայությունից։

Գեղարվեստական խոսքը անշուշտ չպետք է սեղմել քերականական կանոնների հաճախ նեղ շրջանակներում։ Բայց հաճախ քերականական նորմաների անտեսումը խոսքի ազատությունը վերածում է թափթփվածության, փնթիության, որոնք գեղարվեստական խոսքի համար անպատշաճ առանձնահատկություններ են։

§ 512. Երբ ենթակայի հոգնակիությունը արտահայտում է ոչ թե ավյալ ենթակայի, այլ նրա հատկացուցիչի հոգնակի լինելը, ապա այդպիսի գոյական-ենթակայի ստորոգյալը եզակի է դրվում. օրինակ՝ Բաները վատ է երևում (Ընտ. էջեր, 957)։ Կերածները

քթածակերով դուրս գա (*ԳՍԹ, I, 95*)։ Հանգիստներս խանգարվեց (*ԴԴՎ, 15*)։ Տուններս լավ կշինվի (*նույն տեղում, 95*)։ *Ինչպես տեսնում ենք, այս ենթակաները ստացական հոդի միջոցով արտահայտում են իրենց հատկացուցիչների հոգնակիությունը. այսինքն՝ դրանք նշանակում են՝* նրանց բանը, մեր հանգիստը, մեր տունը *և այլն։ Բայց եթե այդ տեսակ հոգնակիությունը արտահայտվում է նաև ենթակայի նկատմամբ, ապա անպայման ստորոգյալը հոգնակի պետք է դնել. օրինակ՝* Մինչև թմրեց նրանց վիշտը և սրտները մի փոքր թեթևացան (*ԴԴՎ, 267*)։ *Այս օրինակը ճիշտ լինելով՝ անշուշտ սխալ է հետևյալ օրինակը.* Սև էր դեմքերը ու ձեռքերը (*այսինքն՝* դեմքըներն ու ձեռքըները. *Փափ., 352*), *որտեղ արդեն հենց բազմակի ենթակայի պատճառով ստորոգյալը հոգնակի պետք է դրվեր։*

§ *513. Մ. Աբեղյանը, խոսելով բարբառային այն կառուցվածքի մասին, ուր անենթակա գլխավոր նախադասության անվանական ստորոգյալի գոյական վերադիրը հոգնակի է դրվում, իսկ բայական հանգույցը եզակի, ասում է. հոգնակի ենթակայի հետ բայը կարող է եզակի դրվել առանց սխալ համարվելու հետևյալ դեպքերում.* Սպիտակ ու կարմրին տվող *գլխարկներ է,* որ երևում են: Կանայք *սփռոցներ է,* որ բաց են անում: Տասնավոր *տարիներ էր,* որ Սարգիսը քաղաքի երիցփոխն էր... Նախ *ապտակներ է,* որ տալիս են միմյանց (*Մուր., II, 199*)։ *Ինչպես տեսնում ենք օրինակներից, ընդգծված հոգնակի գոյականները ենթականեր չեն, այլ ստորոգելիական վերադիրներ։ Այդպիսի ստորոգյալների ենթակաները երկրորդական նախադասություններով են արտահայտված։ Պետք է նկատել նաև, որ այդպիսի հոգնակի գոյականների հետ հոգնակի բայական հանգույց էլ է կիրառվում. օրինակ՝* Սուր-սուր եղունգներ էին, որ ցցվում էին մարմինների մեջ, շորեր էին, որ ծվիկ-ծվիկ էին լինում, գլխի փաթաթաններ էին, որ տրորվում էին ոտների տակ, մազեր էին, որ փունջ-փունջ պոկվում էին գլխներից և ցրիվ գալիս գետնին (*Նար., IV, 119*)։ *Այժմ եզակի հանգույցը անսովոր է. ճիշտը և բնականը հոգնակին է։*

§ *514. Եթե գրքերի, պարբերական մամուլի, այլ տեսակ աշխատությունների և գեղարվեստական ստեղծագործությունների անվանումները հոգնակի են, ապա դրանք ենթակա դառնալով՝ պետք է համաձայնեն եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝ «Ընկերները»* լույս է տեսել նաև ռուսերեն լեզվով (*Շիրվ., IV, 527*)։ Բաֆ-

ֆու *«Կայծերը»* ընդգրկում է արևմտահայերի կյանքը 30-ական թվականների կեսերից մինչև 50-ական թվականների վերջերը *(ՐԿ, 1)*։ Նրա *«Կայծեր»*-ը ցասումով լի մի բողոք է թուրք ու պարսիկ ֆեոդալականության դեմ *(նույն տեղում, 2)*։

Սրան հակառակ հաճախ սխալ ձևով հոգնակի ստորոգյալի հետ են համաձայնում այդ կարգի գոյականները. օրինակ՝ «Կայծերը» լույս տեսան *(Ր., I, 37)*։ Նրա *«Մթնշաղի անուրջները»* լույսի նման արագ *տարածվեցին* որբանոցի պատերից ներս *(ԳՄՆ, 486)*։ *«Սրբերը» (նկարի անուն է)* ցուցահանդեսի *զարդն էին կազմում (ԳՍԹ, I, 70)*։

Այս սխալ համաձայնության հետևանքով այժմ արդեն օրինաչափ կերպով ասվում է. Ամերիկայի միացյալ նահանգները նմանօրինակ «օգնություն» *ցույց են տալիս* ամենից առաջ ամերիկյան զենք մատակարարելու ձևով *(ՍՀ, 1956, № 39)*։

Իսկ ԱՄՆ հապավված ձևը համաձայնում է եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝ Այդ նպատակով *ԱՄՆ-ը* Յապոնիային *պարտադրեց* սեպարատ պայմանագիր *(ՍՀ, 1952, № 265)*։

§ 515. Հայերենում երրորդ դեմքի եզակի ենթական չի կարող հոգնակի ստորոգյալի հետ համաձայնել, իբրև մեծարանքի արտահայտություն։ Այդպիսի հազվագյուտ երևույթները ընդօրինակումներ են ու բոլորովին ավելորդ։ Համեմատի՛ր. Պարոն Հոֆմարշալը նենց նոր *բարեհաճեցին* ժամանել *(Շիլլեր, Ընտիր երկեր, 241)*։

§ 516. Երբ հոգնակի ստորոգյալը անվանական ստորոգյալ է և անվանական մասը մի եզակի անձնական դերանուն է, հանգույցը ոչ միայն դեմքով է համաձայնում ստորոգելիական վերադիրին, այլև դրվում է եզակի. օրինակ՝ Բոլոր *սոսկումները դու ես (Իս., III, 216)*։

§ *517. Երբ եզակի թվով ենթական իր հետ ունի* հետ *կապով և միասնության գործիականով որևէ բառ, ստորոգյալը և՛ եզակի է դրվում, և՛ հոգնակի. օրինակ՝* Պապը յուր կնոջ՝ Զարմանդուխտի և երկու որդիների՝ Արշակի և Վաղարշակի հետ պահված էին Կ. Պոլսում *(Ր., III, 30)*։ Ամենից առաջ ներս մտավ Գևորգ Մարզպետունին Արարատյան գնդով *(Մուր., III, 473)*։ Նունուֆարն իրիկնամութին նրանց հետ ճանապարհ էր ընկնում դեպի գյուղ *(Ընտ. էջեր, 943)*։ Դավիթ Սեպունը տաս հոգիանոց հեծյալի հետ սլացավ առաջ *(ԴԴՎ, 396)*։ Մի առավոտ հերս եղբայրներիս հետ կացին, սղոց, ուրագ վերցրին ու գնացին բաղատեղերում ծառ կտրեն *(Անանյան)*։

Հոգնակի ստորոգյալը այս պարագայում ցույց է տալիս, որ հետ կապով և գործիական հոլովով դրված բառերը խոսողի կողմից դիտվում են իբրև ենթակային հավասար բառեր, ճիշտ այնպես, ինչպես բազմակի ենթակաները։ Իսկ եզակի ստորոգյալի դեպքում այդ հավասարությունը թուլանում է, խոսողը կամ գրողը գործողության կատարման մեջ կարևորությունը տալիս են ուղղական հոլովով դրված գոյականին։

Ծանոթություն. Հետ կապով դրված տարրերը ավելի ներգործուն են, անձեր են, իսկ գործիականով դրվածները ավելի կրավորական տարրեր են։ Այս դեպքում հոգնակի ստորոգյալ հաճախ է կիրառվում, երբ ենթակայի հետ գործածվող այդպիսի գոյականները անձեր են, միևնույն գործողությունն են կատարում, ինչ որ ենթական է անում։

§ 518. Րաֆֆու, Շիրվանզադեի, Մուրացանի և այլոց երկերում ք-ով վերջացող մի շարք բառեր հոգնակի են. իբրև գրաբարի հոգնակի ձևեր, դրանք այժմ այլևս չեն գիտակցվում, սակայն հիշյալ հեղինակների գրվածքներում այդ կարգի գոյականները բնականաբար համաձայնում են հոգնակի ստորոգյալի հետ։ Մի պահ թվում է, թե այս դեպքում առկա է անհամաձայնություն։ Արդարև, այժմյան ըմբռնումով այդպիսի համաձայնությունը ոճաբանական անփութության, անհետևողության տպավորություն է գործում. օրինակ՝ Երբեմն նրա գեղեցիկ շրթունքը ցնցվում էին (Րաֆֆի)։ Երբ նրա հայացքը հանդիպեցան իմ հայացքին (Հյուսիսափայլ, էջ 107)։ Ալիքը կայտառ գնում են գալիս (Հովհաննիսյան)։ Զգայարանքս սառսուռ զգային (Տերյ., I, 277)։ Ու ստինքը սառվածային խաղում էին վեր ու վար (Թ., II, 163)։

5. ԲԱԶՄԱԿԻ ԳՈՅԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԵՏ

§ 519. Իբրև ընդհանուր կանոն բազմակի ենթակաների ստորոգյալը հոգնակի է դրվում. օրինակ՝ Ծերունուն և երիտասարդին մոտեցան Վարդանը և Տիգրանը (ՔԹՈՀ, 269)։ Հայրապետը և Ավոն խորին ուշադրությամբ լսում էին (ՐԿ, 275)։ Պարզ է, որ եթե ենթականերից որևէ մեկը կամ մյուս բոլորը հոգնակի են, առավել ևս ստորոգյալը հոգնակի պետք է դրվի։

Այս ընդհանուր կանոնից դուրս գոյություն ունեն բազմաթիվ շեղումներ, որոնց մի մասը նույնիսկ չունի իր մեկնաբանման հիմունքները։

§ 520. Եթե բազմակի ենթակաները միևնույն առարկայի տարբեր կոչումներն ու անվանումներն են, ապա ստորոգյալը եզակի է դրվում. օրինակ՝ Թելոյան-Մանգասյան-Մանուկյանը սկսում է պատմել *(ՍՀ, 1954, № 293)։* Սեդա, իմ դուստրը և քո Սահականուշը միայնակ է *(Մուր., III, 91)։*

§ 521. Ժողովրդական առածների, կարճ ու հատու ասացվածքների, դարձվածքների մեջ հաճախ բազմակի ենթակաները համաձայնում են եզակի ստորոգյալի հետ։ Խոսելիս շատ անգամ խոսողը ուշադրությունը բևեռում է ոչ այնքան քերականական օրենքների, որքան խոսքի ձևավորման արտաքին հանգամանքների վրա, որոնք են կարճությունը, հանգավորումը, ամբողջականությունը և այլն. օրինակ՝ Վատ խոսքն ու վատ կնիկը տիրոջն է *(Առած., 95)։* Գիժն ու հարբածը մեկ է *(Նույն տեղում, 59)։* Արդարն ու մեղավորը դատաստանին հայտնի կլինի *(Նույն տեղում, 98)։* Կաշին ու ոսկորն է մնացել *(ԴԴՎ, 223)։*

§ 522. Այսպիսի դեպքերում հաճախ բազմակի ենթակաները իմաստով, տեղով մոտ են լինում, ձևով մասամբ նման են և հաճախակի են միմյանց հետ կիրառվում, որոնք պատճառ են դառնում ենթակաների ամբողջացման, ուստի և համաձայնության փոփոխման, այսինքն՝ աստիճանաբար համաձայնում են եզակի ստորոգյալի հետ, որը և օրինականացվում է։ Մանավանդ հաճախ այդ կարգի բազմակի ենթակաները կապակցվում են ու շաղկապով և դիտվում են իբրև մի միասնություն. օրինակ՝ Թնդաց լեռ ու ձոր, մռնչեց ջուր, ծով *(Փափ., 237)։* Արգելվեց անց ու դարձը *(Ընտ. էջեր, 237)։* Բարձրացավ կանանց ու երեխաների լաց ու կոծ, աղմուկ *(ԳՍԹ, I, 101)։ Սկսվում է կեր ու խումը, խոսքն ու ծիծաղը,* երգն ու պարը և երբեմն էլ տուր ու դմբոցը *(Մուր., II, 190)։ Վերջին օրինակում նույնիսկ տեսնում ենք այդպիսի միասնական ենթակաների չորս խումբ, որ համաձայնել է եզակի ստորոգյալի հետ։*

§ 523. Է՛լ ավելի սերտ միություն են կազմում այն բազմակի ենթակաները, որոնք գծիկով միանում և կազմում են մի բարդություն. այս դեպքում արդեն ստորոգյալը երբեք չի կարող հոգնակի դրվել. օրինակ՝ Եկող-գնացող չկա *(Նար., VII, 264)։* Մեր խեղճ գյուղի արտ-արոտիք նրա հուսովն էր ապրում *(ՀՀԵ, 44)։*

§ 524. *Եթե միևնույն գոյական-ենթական կրկնվում է, բնականաբար ստորոգյալը եզակի է դրվում. օրինակ՝* Անհրաժեշտ էր ծայրահեղ զգուշություն, զգուշություն, զգուշություն *(Ընտ. էջեր, 958)։*

Ծանոթություն 1. Դերանունների կրկնության դեպքում ստորոգյալը կարող է հոգնակի դրվել, որովհետև կրկնված դերանունը մեծ մասամբ միևնույն առարկան չի արտահայտում. նա ու նա, ով ու ով *առնված երկու տարբեր հասկացողություններ են. օրինակ՝* Ով ու ով գնացին: Նա ու նա եկան: *Այսպիսի դեպքում ստորոգյալը նաև եզակի է գործածվում, սակայն ճիշտը հոգնակին է։*

Ծանոթություն 2. Մեկ *թվականի կրկնությունը երկու ձևով է համաձայնում. օրինակ՝* Մեկն ու մեկը թող գա: Մեկն ու մեկդ գնացեք: *Առաջին դեպքում ընտրությունը մնում է մեկին, ուստի եզակի է, երկրորդ դեպքում դիմում է արվում երկուսին, ուստի խոսողը չի կարող ընտրություն կատարել, այլապես կստացվի դիմում ոչ թե երկուսին, այլ մեկին։*

§ 525. *Եթե բազմակի ենթակաները այնպես են կապված միմյանց հետ, որ մեկը մյուսի պարզաբանումն է, մեկը մտնում է մյուսի մեջ, կամ ուժեղացնում է մյուսի նշանակությունը, նրա արտահայտչական արժեքը, ապա ստորոգյալը դրվում է եզակի. օրինակ՝* Անց կացավ օրս, արևավորս *(Սահյան)։* Այդտեղ մի բան կա, մի խորհիմաստ խորհուրդ այդ նույնի մեջ *(ԴԴԿ, 415)։* Եթե մի բան, մի թեթև հեղաշրջում լինի *(Ընտ. էջեր, 958)։* Բժշկուհին կամ պարզապես Անահիտը օրումեջ ներթափանում էր *(նույն տեղում, 1097)։* Օդի մեջ հասունանում է արևի կենարար հյութը, մի բուրալից ջերմություն *(նույն տեղում, 902)։*

§ 526. *Բազմակի ենթակաների ստորոգյալը եզակի է կիրառվում նաև այն դեպքում, երբ դրանք առանձնացված են բաժանական շաղկապներով. այս դեպքում յուրաքանչյուր ենթակայի կատարած միևնույն գործողությունը առանձին է դիտվում. օրինակ՝* Գոնե սպասիր Գնունյաց նախարարը կամ մեկը մյուսներից զորք բերի մեզ օգնության *(ԴԴԿ, 442)։* Հաճելի է թե՛ նվազը, թե՛ երգը *(Ընտ. էջեր, 997, 973)։* Ամբողջ գյուղի մեջ որքան սայլ, ձի եզ, կամ էշ կար՝ բեռնելով, իր շավուշի հետ քաղաք ուղարկեց *(Փափ., 95)։ Այս դեպքում չի բացառվում նաև հոգնակի ստորոգյալը։*

§ 527. *Առհասարակ ենթակայի և ստորոգյալի հեռացումը այլևայլ միջնորդավորող օղակներով՝ նպաստում է համաձայնության խախտմանը։ Այս երևույթը հանդես է գալիս բազմաթիվ ձևերով։ Նույնիսկ շարադասությունը պատճառ է դառնում համաձայնության փոփոխման և նոր ձևերի առաջացման։*

§ 528. *Եթե բազմակի ենթակաները առանձին-առանձին ունեն ոչ շեշտավոր ժխտական շաղկապը, ստորոգյալը գերազանցապես եզակի է կիրառվում. օրինակ՝* Բախտավոր չի եղել ո՛չ իմ մանկությունը և ո՛չ էլ պատանեկությունը *(Շիրվ., VIII, 13)*։ Որպեսզի ո՛չ հողը լինի վկա իմ անպատվությանը և ո՛չ ջուրն, ու միայն Երկինքը *(Նույն տեղում, 48)*։ Դրա հետ ո՛չ Առոմի բնավորությունը կնաշտվեր և ո՛չ էլ նրա ռազմական հաշիվները *(ԴԴՎ, 409)*։ Ո՛չ սիրո խոստովանություն եղավ, ո՛չ էլ ակնարկ *(Նար., IV, 92)*։ Ո՛չ մի սատանա, ո՛չ մի դև չի կարող սրա հետ համեմատվել *(ԳՍԹ, I, 95)*։

§ 529. *Առհասարակ, երբ առաջին ենթական սերտ հարում է ստորոգյալին, իսկ մյուսները որևէ դադարով (միջանկյալ բառեր ու նախադասություններ, հնչերանգություն, շեշտ) անջատվում են, ստորոգյալը միտում է եզակին. օրինակ՝* Վարդանի աչքին պատկերացավ Արտաշատի ժողովը, ժողովրդի ուխտը, Հազկերտին պատասխան թղթի ընթերցումը *(ԴԴՎ, 414)*։ Լսվում էր քամու ձայնը, որ վնգում էր դուրսը, և վերջինի քայլվածքը հարևան սենյակում *(ՍԶ, III, 69)*։ Եթե գյուղական աղջկա այդքան աշխույժը, այդքան կենդանությունը գործ դրվեր ուրիշ ավելի օգտավետ կրթությունների մեջ *(ՐԿ, 329)*։ Բայց ավելի լավ է, երբ շարժում կա, աղմուկ *(ՄԳ, X, 100)*։

§ 530. *Երբ ստորոգյալը նախադաս է, իսկ բազմակի ենթակաները ետադաս, նկատվում է համաձայնության ավելի հաճախակի խախտում, քան շարադասության հակառակ ձևի առկայությամբ։ Այս երևույթը պետք է բացատրել այն բանով, որ հաճախ գրողը կամ խոսողը կանխավ չեն նախատեսում բազմակի ենթականեր։ Վերջինները առաջանում են խոսողության ընթացքում, երբ արդեն ստորոգյալը ձևավորված է. օրինակ՝* Պետք էր զգաստություն, հեղափոխական տոկունություն և աչալրջություն *(Ընտ. էջեր, 961)*։ Համիկին դուր չեկավ նրա սրածայր սապատավոր քիթն ու կապույտ աչքերը *(ՆԶՀ, 62)*։ Վասակի ականջներին չէր հասնում ծրղրիդների գիշերերգը, հովի շվշվոցը և մի ուրիշ գայլիքի ձայն *(ԴԴՎ,*

417)։ Շուրջս լի էր կապույտ համասփյուռ, երիցուկ, շահոքրամ *(Փափ., 401)*։

§ *531. Առանձնացումը նշում է յուրաքանչյուր ենթակայի ինքնուրույնությունը, առանձին և անկախ լինելը. կարծես դրանք պահանջում են ոչ թե ստորոգյալի հոգնակի լինելը, որ առաջ կբերեր ենթակաների միասնություն, այլ ստորոգյալի եզակի կրկնություն, որ հենց առանձնացնում է ենթակաները։ Այդ առանձնացումը հատկապես նկատվում է համեմատության, թվարկման դեպքում, մանավանդ երբ թվարկվող անդամները ունեն որևէ կրկնվող որոշիչ. օրինակ՝* Պարսիկ բանտը ինձ համար ավելի տանելի է, քան թե նրանց կեղծավորությամբ լի պալատները *(Ր., III, 52, 269)*։ Մի հայացք, մի խոսք, մի չնչին օգնություն միայն բավական էր *(Աբեղյան)*։ Թռիչք ու փառք է երազում ամեն մանուկ, ամեն ծեր *(Զարյան)*։ Բարձրացավ առավոտը, հողը, Արտաշատը, նայրենիքը, կյանքը *(ԴԴՎ, 65)*։

§ *532. Տողի և հնչյունակազմության միջոցով թվարկվող ենթակաների առանձնացումը ավելի զգալի է չափածո գրվածքներում։ Համեմատի՛ր.* Եվ այդ պահին հանկարծ լսվեց նժույգների խրխինջ, շների հաչ *(Զարյան)*։

Չափածո գրվածքներում հաճախ բազմակի ենթակաների համաձայնությունը կատարվում է նաև ուրիշ պայմանների առկայությամբ։ Եթե նախորդ տողի մեջ ըստ քերականական համաձայնության ստորոգյալը եզակի է, ապա հաջորդ տողում անհրաժեշտություն է զգացվում ստորոգյալը եզակի դնել, չնայած հաջորդ տողի ենթակաները բազմակի են։ Այդպես են պահանջում չափածո խոսքի կշռույթը, հանգավորումը, նախադասության անդամների համաչափ տեղադրումը, կրկնությունը և այլ հանգամանքներ, որոնք երբեմն շատ ավելի կարևոր են բանաստեղծի համար, քան քերականական կանոնի պահպանումը. օրինակ՝

Վաստակաբեկ ժողովրդի տրտունջը կա քո երգերում,
Կյանքի, սիրո հավերժական շշունջը կա քո երգերում,
Հորովելները թախծալուր, զնգոցն ու փայլը գերանդու,
Մեր լեռնային արշալույսի զով շունչը կա քո երգերում
(Զարյան)։

Ծերմակ են մազերը... Ասացեք այս ձյունը ի՞նչ գարուն,
Ի՞նչ մայիս կհալի... Այս ձյունը կհալի միայն
Բոցը ցասման, Վրեժի կրակը մեր միլիոն սրտերի *(Բորյան)*։

§ *533. Հիշյալ երևույթների հետ առնչակցվում է բազմակի ենթակաների համաձայնության մի այլ հնար. առաջին ենթական հա-*

մաձայնում է ստորոգյալի հետ, իսկ մյուսները ուժեղ դադարով կտրվում, հաջորդում են որպես հուշարտահայտչական տարրեր և կիսով չափ մոտենում են անվանական նախադասությունների. թվում է, թե դրանք ի միջի այլոց են թվարկվում. օրինակ՝ Դռում կյանք կար, բնություն, ամառանոց, արև *(ԴԴԸՊ, 94)։ Առհասարակ, երբ ստորոգյալը ընկնում է բազմակի ենթակաների միջև, ստորոգյալին հաջորդող ենթակաները առանձնացվում և դուրս են մնում համաձայնության շրջանակներից. օրինակ՝* Մի արջ պատահեր, մի գազան, մի գել, Որ չէի տեսել ձեր ջուրը մեկ էլ *(Թ., I, 286)։*

§ *534. Երբեմն այնպես կարող է լինել, որ ստորոգյալը համաձայնի ոչ թե ենթակայի, այլ վերջինիս եզակի բացահայտիչների հետ. օրինակ՝* Ժողովրդական հոծ բազմություններ՝ հայոց ժողովուրդը վեր կացած երկրի բոլոր կողմերից ալեկոծ հորձանքով գալիս էր ծովանում Արտաշատի շուրջը *(ԴԴՎ, 674)։*

§ *535. Սրան մասամբ մոտենում է ընդհանրացնող բառի համաձայնությունը. ստորոգյալը փոխանակ բազմակի ենթակաների հետ համաձայնելու համաձայնում է որևէ խոսքի մասով արտահայտված այդ բազմակի ենթակաները ընդհանրացնող բառի հետ. օրինակ՝* Որակն էլ, քանակն էլ, *ամեն ինչ կպահպանվի (Անթ., 497)։*

6. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ-ԵՆԹԱԿԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԵՏ

§ *536. Վերացական գոյականները, ժամանակ, տարածություն, երևույթներ ու գործողություններ արտահայտող բազմակի ենթակաները առհասարակ միտում են դեպի եզակի ստորոգյալը։ Այս երևույթը ակնհայտ երևում է բազմակի անորոշ դերբայով դրված ենթակաների և դրանց ստորոգյալների համաձայնությունից։* Կարելի է, պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է *և այս կարգի ստորոգյալների անորոշ դերբայ-ենթակաները ինչքան էլ բազմակի լինեն, ստորոգյալները եզակի են կիրառվում. օրինակ՝* Պետք էր մեղուներին նայել, շներին ու հավերին կերակրել, գնորդներին ճանապարհ դնել, դարձյալ հսկել *(Ընտ. էջեր, 942)։* Հարկ էր անպատճառ այնտեղ լինել և նրանց որոշումների վրա վճռական ազդեցություն անել *(ԴԴՎ, 409)։*

Այդպես էլ եզակի ստորոգյալների հետ են համաձայնում. բո-

լոր տեսակի անորոշ դերբայները (հոդով, թե առանց հոդի), ինչքան էլ բազմակի լինեն. օրինակ՝ Այս գիշեր իմ այստեղ գալը և քո այնտեղ գնալը պատահական մի զուգադիպություն է *(Նար., III, 148)*։ Մնում էր նստել և շարժվել *(ԴԴՎ, 462)*։ Նրա անկողնից վեր կենալը ու պառկելը մեկ եղավ *(Նար., IV, 55)*։ Եթե գալ ու գնալը այնքան հեշտ լիներ *(Անթ., 499)*։ Երբ լրագիր կարդալն ու հասկանալը ինձ համար հեշտացավ *(Մուր., II, 27)*։

Նույն ձևով, եթե բազմակի ենթակաները ամբողջ կապակցություններից, նախադասություններից են կազմված, ստորոգյալը հեշտությամբ հակվում է դեպի եզակին. օրինակ՝ Ինչ անցավոր է, ինչ մահացու, գործ չունի հնամենի լեռան հետ *(ԴԴՎ, 415)*։

§ *537. Եթե գրքերի, պարբերականների, գեղարվեստական այլ ստեղծագործությունների անունները կազմված են երկու կամ ավելի բառերից, ապա, իբրև հաստատուն կանոն, դրանց ստորոգյալները պետք է եզակի կիրառվեն. օրինակ՝* Լույս տեսավ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն»-ը, «Հայր և որդին» հուշերով խառը մի հոդված է *(Նար., VII, 335)*։

7. ԴԵՐԱՆՈՒՆ-ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ *538. Նկատելի է, որ անձնական դերանունները համաձայնության առնչությամբ ընդհանրապես շեղումներ չեն տալիս. այսինքն՝ եզակի անձնական դերանուն-ենթական համաձայնում է եզակի ստորոգյալի հետ, իսկ հոգնակին՝ հոգնակիի հետ։ Այս դեպքում նույնիսկ բացառություններ չենք նկատում։ Սա բացատրվում է նրանով, որ անձնական դերանուններով ենթակաները սովորաբար անձեր են, որոնց և՛ թիվն է որոշակի, և՛ դեմքը. բացի այս՝ խոսողը իր և իր հետ եղած անձերի քերականական թվի մեջ չի կարող սխալվել, ինչպես և չի շփոթի իր դիմացինի՝ խոսակցի և խոսակիցների թիվը։ Եթե նույնիսկ բազմակի ենթակաների մեջ կա որևէ անձնական դերանուն, բավական է, որ այդպիսի ենթակաների ստորոգյալը հոգնակի դրվի։ Եթե* ես *դերանունը խառն է այլ կարգի ենթակաների հետ, արդեն դեմքը որոշ է, իսկ ստորոգյալի թիվը չի կարող եզակի լինել, որովհետև խոսողը չի կարող անտես առնել գործողություն կատարող մյուս ենթակաները։ Այնպես էլ մյուս դեմքերը. օրինակ՝* Եթե դուք կարծում եք, թե նա կա-րող է բժշկել, դիմեցեք *(Մուր., II, 76)*։ Դու եսասիրության նշան-

ներ ես ցույց տալիս *(Նար., III, 323)*։ Ավելի լավ է, ինքս իմ բերանով կհայտնեմ բոլորին *(Նար., III, 150)*։ Նրանք նստում էին առվի եզրում, և երբ հանգչում էր զրույցը, լուռ լսում էին ջրերի ձայնը *(ԱԲԵ, 175)*։ Ես և իմ ընկեր Անդոն հաց ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար *(Նույն տեղում, 143)*։ Մենք հաստատեցինք, որ Իբիշն այդպես ասաց *(Նույն տեղում, 137)*։ Ինքներդ եք ասում, թե Բազենյանները ճարպիկ են *(Նար., III, 507)*։

§ *539. Եթե ցուցական դերանունները ենթակա են դառնում նախադասության մեջ, իսկ ստորոգյալը բայական է լինում, ապա այս դեպքում համաձայնության մեջ շեղումներ չեն պատահում։ Եզակի ցուցական դերանվան հետ կիրառվում է եզակի բայական ստորոգյալ, իսկ հոգնակի ցուցական դերանուն ենթական համաձայնում է հոգնակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Այդ թող չուրախացնե քեզ, անպիտան *(Ր., III, 460)*։ Այդ ինձ բոլորովին չի զարմացնում *(Ր., 494)*։ Այս ինչպես է հագնվում, այս ինչպես է ապրում սա *(Նար., III, 504)*։ Դրանք փող աշխատելու դյուրին ասպարեզ են հոտոտում. խավարի ծնունդ լինելով, խավարի մեջ էլ գործում են դրանք *(Նար., III, 305)*։

§ *540.* Այս, այդ, այն *ցուցականների եզակին, անվանական ստորոգյալի մոտ ենթակա դառնալով, թույլ է իշխում, և հանգույցը համաձայնում է ոչ թե սրանից, այլ իր ստորոգելիական վերադիրի հետ։ Եթե վերադիրը հոգնակի է, հանգույցը անխախտ հոգնակի է դրվում. սա բացատրվում է այն բանով, որ* այս, այդ, այն, սա, դա *ցուցականները, իբրև ենթականեր, թույլ են դրսևորվում. օրինակ՝* Նորեկ աշխարհի օղակներն են այն *(ՀՀԵ, 227)*։ Դա նավթային արդյունաբերության զարկերակներն էին *(Շիրվ., IV, 137)*։ Այդ ինչ սայլեր էին *(Ընտ. էջեր, 516)*։ Դա հոներն են *(ԴԴՎ, 220)*։

Իսկ սրանց հոգնակիները համաձայնում են հոգնակի ստորոգյալի հետ, ինչ թվով էլ որ դրված լինի ստորոգելիական վերադիրը. օրինակ՝ Դրանք երջանիկ են *(Ր., III, 239)*։ Դրանք անձավի նախկին բնակիչներն էին *(Նույն տեղում, 239)*։ Սրանք լավ մարդ են։ Ախր սրանք ուշադրության արժանի բաներ են *(Նար., III, 504)*։ *Իսկ եզակի գոյական ստորոգելիական վերադիր այս դեպքում սովորաբար սակավ է հանդիպում։*

§ *541. Եզակի ստորոգյալի հետ են համաձայնում* միևնույն, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան։ *Սրանցից հոգնակի են կազմում* մյուս *(մյուսները)*, այսպիսի *(այսպիսինե-րը)*, այդպիսի *(այդպիսիները)*, այնպիսի *(այնպիսիները)*։ Այսքան,

այդքան *համարյա հոգնակի չեն կազմում, իսկ միևնույնը հոգնակի սակավ է կիրառվում։ Այս ցուցականները համաձայնում են իրենց ստորոգյալի հետ թվով. օրինակ՝* Մյուսը նույնպես գրեց զորքին, ժողովրդին *(Թ., I, 332)։* Այսքանը միայն կա *(Մուր., II, 9)։* Այդպիսիներն էլ կոչվում էին Ննիչերի *(Փափ., 39)։* Այդքանն էլ բավական էր *(ՆՋՀ, 336)։* Միևնույնը կատարվեց ինձ հետ *և այլն։*

8. ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԵՆԹԱԿԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԵՏ

§ 542. *Հարցական և հարաբերական դերանուններից ենթակայի դերով հանդես են գալիս՝* ով, ինչ, որ, քանի, որքան, ով որ, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ: *Սրանցից հոգնակի են կազմում՝* ով *(ովքեր),* ինչ *(ինչեր),* որ *(որոնք),* քանի *(քանիսը),* որպիսի *(որպիսիները, որպիսիք),* ինչպիսի *(ինչպիսիները, ինչպիսիք)։ Մնացածի հոգնակին անսովոր է, իսկ* քանի *եզակին իբրև ենթակա չի կիրառվում։*

§ 543. *Սրանց եզակին համաձայնում է եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Իսկ *ո՞վ* ասաց, թե իմ սպարապետը դավաճան է *(ԴԴՎ, 390)։ Ովքե՞ր* անցան ձեզանով, ո՞ւր գնացին, ճամփաներ *(Թումանյան)։ Որպիսին* միայն Ադրիատիկի ափերումն է լինում *(Ընտ. էջեր, 718)։ Ի՞նչը* է պակաս, որ գլուխդ փորձանքի ես դու տալի *(Թումանյան)։ Ով որ* ցավ էր տվել ու աղետ *(Թ., II, 154)։ Որը* շուտով պիտի թողնի իր ծննդավայրը *(Նար., III, 331)։* Հանկարծ նրա աչքովն ընկան Մարությանի կինն ու աղջիկը, *որոնք* առաջանում էին դեպի նա *(Նար., III, 427)։* Նա այն լեռնցի ծերունիներից էր, *որոնք* իրենց կյանքում շատ անգամ են նայել մահի երեսին *(ԱԲԵ, 370)։ Ո՞րերորդը* անցավ: *Քանի՞երորդը* եկավ:

§ 544. *Հաճախ հարաբերական* որ *դերանվան եզակին հարաբերում է հոգնակի թվով որևէ խոսքի մասի. այս դեպքում* որ *հարաբերյալի ստորոգյալը սովորաբար հոգնակի է դրվում. օրինակ՝* Բոլորին պարզեց մեկն այն ժպիտներից, որ *ինքնըստինքյան* դառնում են բեմին ծառայողների հատկանիշը *(Շիրվ., IV, 85)։* Որովհետև չէր կարելի գարնանամուտի արևին քնել խուռուփի խաղաղ ձորում, լսել ջրի ձայնը, այն խորհրդավոր ձայները, որ հնչում են քարանձավներում *(ԱԲԵ, 371)։* Նվիրագործված էր մեծահռաչ և վսեմ ավանդություններով, որ ժողովրդի սրտին և հավատին շատ մոտ էին *(Բ., III, 209)։* Դա մեկն է այն արարածներից, որ զոհ են դարձել ձեր հաճույքին *(Շիրվ., VI, 56)։*

Այս դեպքում որ *հարաբերականը երբեք չի կարելի հոդով կիրառել. առանց հոդի* որ *հարաբերականն իբրև ենթակա թույլ է զգացվում. այն ներկայացնում է շաղկապի և ենթակայի միջին աստիճանը. իսկ երբ հոդով է դրվում, ստանում է որոշակի ենթակայի ուժ, ուստի և ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը զգացվում է իբրև բացասական անհետևողություն և թափթփվածություն. օրինակ՝* Մրգավաճառ թուրք խանութպանները, որոնք անկանոն կերպով պաշարել էին խանութների առաջը զանազան տեսակ մրգեղեններով *(Շիրվ., I, 31)։*

Ծանոթություն. Իբրև հարաբերական ինչ, ով *դերանունները նույնպես կարող են հոգնակի ստորոգյալի հետ համաձայնել. օրինակ՝* Որ էս երկրում ամենն, ինչ կան *(Թ., «Անբան կըկուն»)։* Անց են կացել, ով կային *(Թումանյան)։*

§ *545. Անհետևողությունը ավելի ուժեղ է զգացվում, երբ եզակի հարաբերյալի հարաբերականը համաձայնում է հոգնակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Լսելի էր լինում միայն ալիքների խուլ հառաչանքը, որ գիշերային լռության մեջ հնչում էին որպես մի սգավորի ողբաձայն աղաղակներ *(Ր., III, 305)։* Ամբողջ բազմությունը, որ կանգնած էին վրանի հանդեպ *(Նույն տեղում, 289)։*

Այս դեպքում անհետևողությանը նպաստում են այլ կողմնակի հանգամանքներ. հնարավոր է, որ այս օրինակների մեջ՝ մի դեպքում որ-ը *հարաբերում է* ալիքների *բառին և ոչ թե* հառաչանքը *ենթակային, իսկ երկրորդ դեպքում՝* որ *հարաբերականի ստորոգյալը հոգնակի է հավաքական* (բազմությունը) *գոյականի պատճառով։*

§ *546.* Քանիսը, մի քանիսը *հոգնակի են, ուստի համաձայնում են հոգնակի ստորոգյալի հետ.- օրինակ՝* Ատամներից մի քանիսը ծուռ են *(ՆՋՀ, 36)*· Ծերունիներից մի քանիսը հարց տվին *(Նույն տեղում, 311)։* Նրանցից մի քանիսը ծայրահեղության չհասան *(Մուր., Ընտիր երկեր, I, 231)։* Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ *(Թ., I, 211)։*

§ *547.* Ինչքան, որքան *ենթակա են դառնում բացառությամբ, այսինքն՝ բուն ենթական գրողի կամ խոսողի մտքում է, իսկ այս բառերը կիրառվում են մտքում եղող, բայց չասված բուն ենթակաների փոխարեն՝ իբրև նրանց համար քանակական որոշիչներ։ Եթե գրողի կամ խոսողի մտքում բուն ենթական հոգնակի է, ապա* ինչքան, որքան *համաձայնում են հոգնակի ստորոգյալի, իսկ եթե*

շասվող ենթական եզակի է, ապա սրանց ստորոգյալը եզակի է դրվում. օրինակ՝ Ինչքան աչք է նայել, մարել, Եվ կամ ինչքան դեռ պիտի գան, Որ անհայտից կյանք չեն առել (*Թումանյան*)։ Փող վեր առան բավականին, *Ինչքան պետք էր* իրենց բանին (*նույն տեղում*), Ամեն անգամ, երբ նայում եմ, Թե ինչքան է դեռ մնում (*նույն տեղում*)։

Երբ ինչքան, որքան *հոդով են կիրառվում, ավելի հակվում են դեպի եզակին, բայց այս դեպքում էլ բակառությունն է վճռում համաձայնության ձևը. եթե խոսողի մտքում որոշակի առանձին առարկաներ են, ստորոգյալը հոգնակի է դրվում, իսկ եթե որոշակի առարկաներ չեն, այլ տարածական, ժամանակային և վերացական հասկացողություններ են, ապա ստորոգյալը եզակի է դրվում։*

9. ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆ-ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ *548.* Ողջ *և* ամբողջ *դերանունները իբրև ենթականեր համաձայնում են եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Ողջը խոնարհվել, ողջը զսպվել է հանճարի առաջ (*Հ. Հակոբյան*)։ Այժմ ինձ համար ողջը մեկ է (*Քրեստ., 148*)։ Ամբողջը ոչնչացավ: Այդ ամբողջը պատկանում է մեզ *և այլն։ Սակայն իբրև հավաքական բառեր, հնարավոր է, որ սրանք ևս համաձայնեն հոգնակի ստորոգյալի հետ այնպես, ինչպես հավաքական գոյականները, մանավանդ երբ սրանց հետ կիրառվում է միասին մակբայը. օրինակ՝* Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհքում քեզանով, Ողջը քո մեջ՝ անմահ, անվերջ քեզ են երգում քո ձևով (*Թ., I, 214*)։ Ու ողջ միասին մի խորունկ թախիծ, Մի մութ զարզանդ են գիշերին տալի (*Թ., II, 37*)։•

§ *549. Հոգնակի ստորոգյալի հետ են համաձայնում* ամենքը, բոլորը. *օրինակ՝* Ամենքը փոխվել են (*Ր., III, 485*)։ Բոլորը մեկ մեկու խաբում էին (*Ր., II, 546*)։ Ամենքը, ամենքը, էստեղ ինչ որ կան, էսօր թե էգուց ամենքը կերթան (*Թ., II, 78*)։ Ամենքն էլ սուտ ասողներ են (*Շիրվ., I, 61*)։ Ամենքը վերջապես կտեղափոխվեն (*ՆԶՀ, 311*)։ Ամենքն էլ էնպես ուրախացան (*Թ., III, 324*)։ Մարությանների տանը վաղուց արդեն ամենքը քնած էին (*Նար., III, 331*)։ Հարվածը բոլորս կընդունենք (*ԴԴՎ, 14*)։ Բոլորն էլ իրենց տեղերում շտկվեցին (*ՆԶՀ, 44*)։ Բոլորը հետևեցին նրան (*Շիրվ.,*

291—14

IV, 12)։ Բոլորը ազդված էին *(ԴԴՎ, 681)*։ Ժողովում բոլորը խոսել էին *(ՆՋՀ, 299)*։ Ամենքդ քնած եք *(Նար., III, 147)*։

§ 550. Ամենքը *դերանունը միայն վերաբերում է անձերի, ուստի դրա հետ հոգնակի ստորոգյալ չի կարելի չդնել, իսկ* բոլոր*(ը) դերանունը ընդհանուր է, այսինքն՝ կարող է վերաբերել ամեն տեսակի առարկաների խմբի։ Երբ այս վերջինը արտահայտում է վերացական երևույթների, գործողությունների, ժամանակի, ոչ ներգործուն առարկաների ամբողջությունը, առնում է նաև եզակի ստորոգյալ. օրինակ՝* Բոլորը քաղցր է ինձ համար, բոլորը ախորժելի է ինձ համար *(Ր.,.III, 361)*։ Այդ բոլորը կատարվեցավ քո ազատության համար *(նույն տեղում, 466)*։ Այն բոլորը սուտ էր *(ՆՋՀ, 344)*։ Այդ բոլորը զրպարտություն է *(նույն տեղում, 274)*։ Այդ բոլորը ավելի էր սաստկացնում նրա վշտերը - *(ժամանակ, փառք կորցնելը, կռիվներին անմաս մնալը. Ր., III, 476)*։ Եվ այդ բոլորը մեկ ժամ չի տևի *(Շեքս., I, 221)*։

§ 551. Ամեն(ը) դերանունը իբրև ենթակա համաձայնում է եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝ Այս ամենը կանցնի *(ԱԲԵ, 378)*։ Այս ամենը բոլորովին ընդդեմ էր նրա կրոնական բնավորությանը *(ՐԿ, 208)*։ Ամենը բռնած կլիներ ուխտավորներով *(նույն տեղում, 174)*։

Սակայն իբրև հավաքական բառ դարձյալ շեղվում է ամեն*(ը) և համաձայնում է հոգնակի ստորոգյալին. օրինակ՝* Մանր են, շատ մանր այս ամենը *(ՀՀԵ, 337)*։ Եվ էն ամենը..... էնպես հասարակ դատարկ են էնպես *(Թ., I, 157)*։ Այդ ամենը վաղուց դարձել էին պատմություն *(Քոչար, 81)*։

§ 552. Ամեն մեկ*(ը)*, ամեն մին, ամեն ինչ, յուրաքանչյուր, ամեն ոք, յուրաքանչյուր ոք *դերանունները ենթակա դառնալով՝ համաձայնում են եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Ամեն, ամեն ինչ կանգնում է այդ վտանգի առաջ *(ԴԴՎ, 65)*։ Ամեն մինը մի զույգ ուներ *(Թ., III, 192)*։ Ամեն ոք իր վերարկուի տակ սուր էր ման ածում *(ՐԿ, 597)*։ Որոնցից յուրաքանչյուրը սպասում էր յուր հերթին *(Մուր., II, 12)*։ Ամեն ինչ պատրաստ էր: Կոլխոզում ամեն ինչ փայլուն վիճակի մեջ էր *(ՆՋՀ, 249, 296, 74, 275)*։ Յուրաքանչյուրը կամուրջի շինարարության փոնդին նվիրում էր երկուսից մինչև հինգ աշխօր *(նույն տեղում, 319)*։ Արդյոք մեզանից յուրաքանչյուրն յուր խղճի և մտքի ազատության վրա չի զգում կրոնի բռնության անտանելի լուծը *(Նար., VII, 130)*։ Ասվել էր ամեն ինչ

(ԴԴԸ, 56)։ Այստեղ ամեն ոք՝կարող էր ճանաչել նրան *(Ր., III, 347)։* Ամեն ինչ կպահպանվի *(Անթ., 497)։*

§ 553. *Երբ այս դերանունները արտահայտում են անձեր և անձերի առանձին-առանձին գործողություններ, կարող են համաձայնել նաև հոգնակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Ամեն մինը նույնպես բռնած ունեին մի-մի հատ փոքրիկ մոմ *(Րեժ, I, 554)։* Ամեն մեկս մենակ մեր մասին մտածենք, էլ ինչ ազնվություն կմնա *(ՎԱՍԱ, 226)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Երբեմն այս դերանունները իրենցից առաջ ունենում են հոգնակի թվով որևէ ենթակա, որը հետադայում գեղչվում է, և ենթակայի պաշտոնը սրանք են վերցնում իրենց վրա, իսկ ստորոգյալը մնում է հոգնակի. օրինակ՝ Էս գյուղերը *նարկ են տալի ամեն մինը* մի արքայի *(Թ., I, 332)։*

Մ. Աբեղյանը Պռոշյանից բերում է մի շարք օրինակներ, որտեղ հոգնակի ստորոգյալները այս դերանունների մոտ հնացած են (տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 163)։

§ 554. *Ժխտական* ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը, ոչ ով *դերանունները համաձայնում են եզակի ստորոգյալների հետ. օրինակ՝* Գուցե հավաքված պիոներներից ոչ մեկը այնքան անհանգիստ չէր *(ՍՁԵ, III, 387)։* Ասա՛ ինձ, քո՛ւյր, այստեղ բացի այդ մարդից ուրիշ ոչ ոք չի՞ եկել *(Շիրվ., VI, 87)։* Ինձ համար վախենալու ոչինչ չի մնացել *(նույն տեղում)։* Ոչ ով ինձ տեղափոխ չի անում *(Թ., III, 278)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Ինչպիսի պարագաներ էլ գոյություն ունենան, ժխտական դերանունների հետ հոգնակի ստորոգյալը անպատշաճ է, որովհետև սրանց եզակի լինելը չափազանց բացահայտ է, մանավանդ որ միայն եզակի են, հոգնակի չեն կազմում։ Անպատշաճությունը ցայտուն կերպով երևում է հետևյալ օրինակից՝ Ձեռ չավին ոչ ոք նարսին, Ոչ ասացին ավելորդ խոսք *(Զարյան)։*

10. ԹՎԱԿԱՆ-ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 555. *Քանակական թվականներից* մեկը *համաձայնում է եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Ուր է այն մեկը *(ՀՀԵ, 133)։* Մեկը թող լինի մեկ հիմար կարծվող ծաղրածու *(ԴԱՀ, 76)։*

Ծանոթություն. Եթե մեկ թվականը փոխադարձ գործողություն է արտահայտում, հնարավոր է, որ ստորոգյալը հոգնակի դրվի. օրինակ՝ օգնեն, աջակցեն և ուսուցանեն մեկը ամենքին *(Հակոբյան)*։ *Գրքի մասում առկա է նաև՝* ամենքը մեկին, *այսինքն՝* մեկը ամենքին, ամենքը՝ մեկին։ *Սակայն սխալ բակառություն է գրել՝* Մեկը մյուսի վրա էին շինած! Կցած էին մինը մյուսի հետ *(Րաֆֆի)*.

§ *556. Եթե մեկից ավելի քանակական թվականը կիրառվում է, իբրև թիվ, թվանշան, միշտ համաձայնում է եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Ինը բաժանվում է երեքի վրա։ Երեքը բաժանվում է երկուսի վրա մնացորդով։

Իսկ եթե քանակական թվականը վերցվում է առարկաների փոխարեն, այսինքն՝ երկուսը, երեքը, չորսը, հինգը, տասը, հազարը *և այլն ասելով հասկանում ենք այդքան առարկաներ, ապա դրանց ստորոգյալը գերազանցապես հոգնակի է դրվում. օրինակ՝* Քանի պիրամիդ կարող էին ջարդել երկուսը միասին *(Փափ., 59)* Հռոմ զորաբանակներից մի երկուսը վեր կացան ու շտապեցին դուրս *(Ընտ. էջեր, 974)*։ Երեքն էլ հագնված էին վրացնակ *(Նար., IV, 122)*։ Երեքն էլ մի րոպե լուռ կանգնած մնացին *(Նույն տեղում, 272)*։ Կարճ ժամանակ երեքն էլ քայլում էին լուռ *(Նար., III, 507)* Երկուսն էլ ոչ մի խոսք այլևս չկարողացան արտասանել *(Նար., II, 363)*։ Եվ շրջում են այդպես քսանվեցը *(ՉԸԵ, 120)*։ Քսանվեցը անխոս հեռանում են *(Նույն տեղում)*։ Գնդացիրներից քսանվեցն այն հնձած արտի պես կողք-կողքի ընկան... Գնացքը ետ գնաց... Մինչ քսանվեցը իրարու գրկած՝ Ախչա-Կումայի ավազուտ գոգում Ամեն լուսածեգ կոմունարների հիմն են երգում *(ՀՀԵ, 129—130)*։

Եթե այս թվականները հոգնակի կիրառվեն, բնականաբար ստորոգյալը չի կարող եզակի դրվել. օրինակ՝ Տարին մի անգամ, տարին մի անգամ գալիս են ահա այս հազարները *(ՀՀԵ, 232)*։

§ *557. Այսպիսի գործածությամբ թվականն ենթակայի հետ եզակի ստորոգյալ սակավ է կիրառվում. օրինակ՝* Կռիվ էր զարկել անգղների դեմ քսանվեցն այն *(ՀՀԵ, 129)*։ Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար *(ՀՀԵ, 190)*։

§ *558. Դասական թվականները իբրև ենթակա համաձայնում են եզակի ստորոգյալի հետ. օրինակ՝* Մի երրորդը գնում էր վճիտ, և ոչ ոք չէր ասի, թե նրա սկիզբը եղել է պղտոր հեղեղը *(ԱԲԵ, 373)*։ Մի երրորդը երիտասարդ էր *(Մուր., II, 293)*։ Երրորդը իբրև փայակ վազում էր նրանց առջևից ոտով *(Ր., III, 294)*։

Դասական թվականների հոգնակին համաձայնում է հոգնակի ստորոգյալի հետ. օրինակ՝ Թե՛ առաջինները և թե՛ վերջինները նրա համար անվնաս մարդիկ էին *(Ր., III, 348)։*

§ *559.* Հնգյակ, հարյուրակ, տասնյակ *և այս կարգի թվականները համաձայնում են եզակի ստորոգյալի հետ ինչպես հավաքական գոյականներ. օրինակ՝* Շուտով հյուրերի հարձակվող եռյակը սրընթաց ճեղքում է դինամոյականների պաշտպանության աջ թևը *(ՍՀ, 1953, № 111)։ Սրանց հոգնակին անշուշտ հոգնակի ստորոգյալ է առնում.* Մնացած տասնյակները՝ հինգ են *(Կիս., Թվաբ., 7)։*

§ *560.* Միավոր, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր *և այլն համաձայնում են, ինչպես այդ տեսանք թիվ ու թվանշան արտահայտող քանակական թվականների դեպքում։ Սակայն սրանք կանոնավոր հոգնակի ունեն՝* միավորներ, տասնավորներ, հազարավորներ *և այլն, որոնք ենթակա դառնալով, առանց բացառության առնում են հոգնակի ստորոգյալ. օրինակներ.* Իրենից առաջ մնացել են հազարավորները *(Մուր., I, 133)։* Տասնավորներից միավորը պակաս է տաս անգամ, հարյուրավորը տասնավորից ավել է նույնպես տաս անգամ։

11. ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ *561. Նախապես ենթական և ստորոգելիական վերադիրը միշտ հոլովով համաձայնել են։ Ուղղականից բացի, այլ հոլովով ստորոգելիական վերադիր չի եղել։*

Այլ հոլովով ստորոգելիական վերադիրները արդյունք են որոշ փոփոխությունների, որ առաջացել են հետագայում։ Երբ անհրաժեշտ է լինում ենթական կրկնել իբրև ստորոգելիական վերադիր, իսկ այդ վերադիրը ունենում է որևէ որոշիչ, հատկացուցիչ, ապա նույնաբանությունից խույս տալու համար գերազանցապես վերադիրը զեղչվում է, իսկ վերջինիս դերը իրենց վրա են վերցնում որոշիչը և հատկացուցիչը։ Ինչ ձևով դրանք հանդես են գալիս իբրև վերադիրի լրացումներ, այդ միևնույն ձևով էլ պահպանվում են, երբ իրենց վրա են վերցնում իրենց լրացյալի պաշտոնը։ Հետագայում այնքան է սովորական դառնում այդպիսի կիրառությունը, որ խոսելիս չենք զգում, որ ստորոգելիական վերադիրի դերը կատարում են նրա նախնական որոշիչն ու հատկացուցիչը. օրինակ՝ Այս

աստղերը մերն են *նախադասությունը նախապես եղել է.* Այս աստղերը մեր աստղերն են, *որտեղ երկրորդ եզրի կրկնությունը ստորոգելիական վերադիրն է. Հետագայում զեղչվելով այդ վերադիրը, նրա դերը վերցրել է* մեր *հատկացուցիչը և ստացվել է այնպես, որ ստորոգելիական վերադիրը դրվել է սեռական հոլովով, մինչդեռ ենթակայի և ստորոգելիական վերադիրի հոլովական կապը այնքան ուժեղ է, որ այդպիսի սեռականն էլ հոդով վերածվել է ուղղականի։ Իսկ ինչ վերաբերում է որոշիչին, ապա սա արդեն ուղղականի ձևով է և հոդն էլ առնելով իսկական գոյականական ուղղական է դառնում. օրինակ՝* Այս գիրքը լավ գիրք է՝ *դառնում է՝* Այս գիրքը լավն է, *որտեղ* լավն *ձևը արտահայտում է միաժամանակ* լավ գիրք *կապակցությունը և ստանում է նաև հոլովական արժեք (*լավ *որոշիչը այդ արժեքը չունի)։*

Ուստի ինչ ձևով էլ որ դրվում են որոշիչն ու հատկացուցիչը, այդ ձևն էլ պահպանվում է ստորոգելիական վերադիրը զեղչվելուց հետո։ Հաճախ այնքան է մթնում այդ զեղչումը, որ ստորոգելիական վերադիրի վերականգնումը այժմյան ըմբռնումով դառնում է անկարելի. օրինակ՝ Վատ խոսքն ու վատ կնիկը տիրոջն է *(Առած., 92)։* Այս և հետագա յոթ հեքիաթը... Գրիմ եղբայրների հեքիաթներից են *(Թ., III, 521)։* Այդ հագուստը նրա սրտով չէ։

Հաճախ զեղչված ստորոգելիական վերադիրի լրացումները բայական հանգույցի հետ այնպիսի մի սերտ միություն՝ դարձվածքային ամբողջություն են ներկայացնում, որ զեղչված ստորոգելիական վերադիրը մտքով անգամ վերականգնել անհնարին է դառնում։

Ուրեմն տեսականորեն ստորոգելիական վերադիրը ուղղական հոլովով է դրվում. սրա տարբեր հոլովներով հանդես գալը առաջացել է պատմականորեն և մեծ մասամբ այդ տարբեր հոլովները հոդով ուղղական են դառնում՝ իրենց մեջ թաքցնելով թե՛ լրացման, և թե՛ լրացյալի հատկանիշները։

§ 562. Ենթակայի և ստորոգելիական վերադիրի թվով համաձայնությունը պարտադիր չէ. երբեմն վերադիրը այնպիսի մի խոսքի մաս է, որ հոգնակի չունի, կամ ունի այնպիսի լրացումներ, որոնք հնարավորություն չեն տալիս հոգնակի կազմության համար։ Այսպիսի պարագաներում կարող է ենթական հոգնակի լինել, իսկ ստորոգելիական վերադիրը՝ եզակի։ Իսկ եթե ենթական եզակի է, գերազանցապես վերադիրը եզակի է դրվում։

§ 563. *Իբրև ստորոգելիական վերադիր ածականը միշտ եզակի է դրվում, եթե հոդով չի գոյականանում. օրինակ՝* Դուք էլ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր *(Թումանյան)։* Դևեր, հրեշներ դառնան անվնաս *(Թ., II, 167)։* Ծաղիկներն են դեռ արցունքաշաղախ *(Մարո Մարգարյան)։* Խանութները լիքն էին *(ԳՍԹ, II, 212)։* Մտածումները անկապ և անհարիր են դարձել *(Իս., III, 111)։*

Եթե ածականը հոդով գոյականանում է, կարող է իբրև ստորոգելիական վերադիր նաև հոգնակի կիրառվել, ճիշտ այնպես, ինչպես գոյականները. օրինակ՝ Ինչպես անենք, որ իմ այգին դառնա դրախտն առաջվան, Իմ մարդիկը գազանացած կրկին լավերն լեն վաղվան *(Թ., II, 156)։*

§ 564. *Ածականի՝ իբրև ստորոգելիական վերադիրի, հոգնակի անհոդ կիրառությունը անպատշաճ է մեր լեզվի ոգուն, և այդպիսին հնչում է չափազանց միամիտ ու պարզունակ. օրինակ՝* Հայերի տները փոքրիկներ էին *(Րաֆֆի)։*

§ 565. *Եզակի ստորոգելիական վերադիր են դառնում այն բոլոր դերանունները, որոնք հոգնակի չունեն. օրինակ՝* Աշխարհի բաները այսպես են *(ԳՍԹ, II, 213)։* Որոնք ոչ այլ ոք էին *(Մուր., IV, 33)։* Տերության գործերը այդպես են *(ԴԴՎ, 479)։*

Ծանոթություն. Մ. Աբեղյանը նշում է, թե ով *հարցական դերանվան հոգնակին, իբրև ստորոգելիական վերադիր, քիչ է տարածված, ուստի եզակի է դրվում. օրինակ՝* Ով եք դուք. ով էին խելքից հանողները *(Իս., III, 9)։ Պետք է նշել, որ այժմ այս պարագայում* ով *դերանվան եզակին բարբառային և անտրամաբանական է հնչում։ Ճիշտը և գրականը հոգնակին է։* Ով եք դուք *ասվում է այն դեպքում, երբ* դուք *քաղաքավարության հոգնակին է։*

§ 566. *Քանակական թվական ստորոգելիական վերադիրները նույնպես եզակի են կիրառվում, ինչ թվով էլ որ դրանց ենթական դրվի. օրինակ՝* Ամենագեղեցիկ տները այն երեքն էին *(ԳՍԹ, I, 264)։* Տարիքը կլիներ մոտ երեսուն *(Մուր., IV, 143)։ Եթե միևնույն կարգի տակ են ընկնում առարկաները, դասական թվականը նույնպես եզակի է կիրառվում. օրինակ՝* Դուք երկրորդն եք, նրանք՝ չորրորդը։ *Իսկ եթե առանձին-առանձին խմբերը ընկնում են միևնույն կարգի տակ, ասվում է՝* Դուք երկրորդներն եք, իսկ նրանք՝երրորդները, *այսինքն՝ առանձին-առանձին դասերի երկրորդները և երրորդները։ Եթե քանակականները հանդես են գալիս իբրև թվեր,*

Թվանշանները նույնպես կարող են հոգնակի կիրառվել. օրինակ՝ **Սրանք հինգեր են, իսկ մյուսները՝ տասեր:**

Մնացած թվականները կիրառվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի։

§ 567. *Համաձայնության մեջ ամենաբազմազան ձևով հանդես են գալիս գոյականները։ Այսպես՝ ստորոգելիական վերադիրը անկախ իր ենթակայից եզակի է դրվում, երբ ունի այնպիսի որոշիչներ, որոնք բացառում են դրա հոգնակի թվով կիրառությունը. օրինակ՝* **Հաստ ու բարակ մի գին է** *(Առած., 132)։* **Նրանք երկուսն էլ մարդ են:**

§ 568. **Դուք** *քաղաքավարական հոգնակի ենթակայի ստորոգելիական վերադիրը եզակի է դրվում. օրինակ՝* **Դուք ինչու նրա եղբայրը եղաք** *(Ընտ. էջեր, 961)։* **Դուք մեծ մարդ եք։** *Այսպես էլ եզակի ստորոգելիական վերադիր է գործածվում* **մենք** *համեստության հոգնակի դերանուն ենթակայի հետ. օրինակ՝* **Մենք էլ մարդ ենք** *(Մուր., IV, 316)։*

§ 569. *Հոգնակի և բազմակի ենթակաների ստորոգելիական վերադիրը եզակի է կիրառվում նաև այն դեպքում, երբ այդ վերադիրը որևէ վերացական գոյական է և արտահայտում է հոգնակի ու բազմակի ենթակաների ամբողջությունը, այսինքն՝ ենթակաները միասնաբար հավասարվելով ստորոգյալին՝ կազմում են ժամանակի, տարածության, քանակային և այլ հարաբերություններ արտահայտող ամբողջություններ, ընդհանրություններ. օրինակ՝* **Սովորաբար նրանց խոսակցության նյութը լինում էին աղա գույամյանցների ընտանեկան և առևտրական գործերը** *(Շիրվ., I, 69)։* **Ամենից ծանրն ու ամոթալին Շուռա Իվանչուկի դրությունն էր** *(Քոչար, 376)։* **Քաջություն, խելք, հաստատություն անարժեք են** *(Իս., III, 245)։*

Նույն ձևով համաձայնություն կարող են արտահայտել ավելի թանձրացական հասկացողություններ էլ. օրինակ՝ **Դարձել էին միջակ տնտեսություն** *(ՆՁՀ, 153)։* **Կանայք նրա համար կրակ էին** *(ԳՍԹ, 130)։*

§ 570. *Հոգնակի և բազմակի ենթակաների հետ ստորոգելիական վերադիրը եզակի է դրվում նաև այն պարագայում, երբ այդ վերադիրը ցույց է տալիս, թե ենթական դառնում է մի այնպիսի առարկա, որի մեջ հաշվի է առնվում միայն հատկանիշը, ընդհանուր գաղափարը և ոչ թե քանակը կամ առանձին թանձրացական առարկաները. օրինակ՝* **Գանձորդ մարդիկ դարձան գազան՝ գուրկ**

նշանից մարդկային (Թ., II, 153)։ Գորտ ու գազան մարդ են դառնել (նույն տեղում, 154)։ Նրանք թշնամի են մեր բոլոր շահերին (Մուր., IV, 45)։ Մարդիկ թղթակից են դառնում (նույն տեղում, 284)։

Ս ա ն ո թ ու թ յ ու ն. Այս դեպքում ստորոգելիական վերադիրները գերազանցապես անհոդ (անորոշ) են կիրառվում։

§ 571. *Իսկ երբ ուշադրության է առնվում քանակը, այսինքն՝ ենթակաները առանձին-առանձին դառնում են թանձրացական առարկաներ, ստորոգելիական վերադիրը հոգնակի է գործածվում։ Այս դեպքում վերադիրը կարող է հոդով և առանց հոդի դրվել, ընդ որում հոդը թվի վրա չի ներգործում. օրինակ՝* Անգետ ու մութ մարդիկ ենք մենք (Թ., II, 154)։ Հրացանի կրակոցը, խանումների նայտրընվելն անծանոթ արքայի և ժանդարմների հետ վատ նշաններ էին (ԳՍԹ, I, 98)։ Գյուղերն ավերակներ են հիշեցնում (նույն տեղում, 391)։ Տատերը նրանցից հասուն մարդիկ էին (Քոչար, 432)։

Նույնիսկ եթե ստորոգելիական վերադիրը վերացական գոյական է, բայց առանձին առարկաներ է արտահայտում, կիրառվում է հոգնակի. օրինակ՝ Տղամարդկանց գլխավոր ուժերն էին Ա. Մանդինյան, Ավալյան և ես (Չմշկյան, 106)։

§ 572. *Ոչ միայն հոգնակի և բազմակի ենթակաները եզակի ստորոգելիական վերադիր են ունենում, այլև եզակի ենթական կարող է հոգնակի և բազմակի ստորոգելիական վերադիր առնել. օրինակ՝* Ես մարդ եմ, պոետ ու քաղաքացի (Չb)։ Նա փոշու հատիկներ դարձավ։

§ 573. *Երբ ենթական մի հավաքական անուն է, իսկ վերադիրը կազմում է նրա այս կամ այն մասը, կամ այդ հավաքականության մեջ մտած առարկաները, այն ժամանակ ստորոգելիական վերադիրը հոգնակի է դրվում. օրինակ՝* Որոնց մի մասը պատանիներ էին, մյուս մասը՝ հասուն երիտասարդներ (ԴԴՎ, 84)։

§ 574. *Երբ ենթական մի ցուցական դերանուն է և որի ենթակա լինելը մասամբ արդեն մթնել է, այդ ժամանակ եզակի ցուցական ենթակայի ստորոգելիական վերադիրը կարող է նաև հոգնակի դրվել. օրինակ՝* Դա նավթային արդյունաբերության զարկերակներն էին (Շիրվ., IV, 137)։ Դա Անգղի զորագնդերն էին (ԴԴՎ, 465)։ Տեսնեմ դա ինչ իշխաններ են (նույն տեղում, 464)։ Դա հոներն են (նույն տեղում, 220)։ Այս ովքեր են իր հետ (Քոչար, 192)։ Այդ ինչ սայլեր էին (Ընտ. էջեր, 516)։ Այդ մենք ենք։ Նորեկ աշխարհի օղակներն են այն (ՀՀb, 297)։

Ծանոթություն. Սա, դա, նա *դերանունների հիշյալ կիրառությունները գրքային են և ոչ տրամաբանական. ճիշտը կլինի ասել՝* սրանք, դրանք, նրանք:

§ 575. Եզակի ենթակայի հետ ստորոգելիական վերադիրը կարող է հոգնակի և բազմակի լինել նաև այն դեպքում, երբ ենթական մեկից բարձր քանակական թվական է. օրինակ՝ Ներկաներից հին-գը տղամարդիկ էին *(ԳՍԹ, I, 396)։* Ութը դրանցից համագյուղացիներ էին *(նույն տեղում, 267)։*

§ 576. Եզակի ենթակայի ստորոգելիական վերադիրը կարող է հոգնակի դրվել, երբ ենթական վերածվում է հոգնակի առարկաների. օրինակ՝ Եղածը հիմար զուգադիպության խաղեր էին *(Փափ., 387)։* Նրա օրորոցը եղել է այն վայրենի ապառաժները *(Ր., I, 633)։*

§ 577. Եթե ստորոգելիական վերադիրը ունի այնպիսի որոշիչ, որ բացառում է եզակի որոշյալը, ապա այս դեպքում էլ եզակի ենթակայի մոտ կարող է հոգնակի ստորոգելիական վերադիր գործածվել. օրինակ՝ Նրա յուրաքանչյուր տանջանքն ինձ համար հազարավոր տանջանքներ են: *Մ. Աբեղյանը նշում է, որ եթե ստորոգելիական վերադիրը անորոշ է և մտածվում է անչափական նշանակությամբ, առանձին-առանձին, կամ թե, փոխադարձ իմաստով, կարող է հոգնակի գործածվել. օրինակ՝* Այս ծառերը մի-մի բուրգեր էին: Դպրոցի սաները պետք է մի-մի ջահեր դառնային: *Սակայն պետք է նշել, որ այս դեպքում այժմ խորթ չէ եզակի ստորոգելիական վերադիրը. օրինակ՝* Այստեղ ամեն տուն և ամեն մի շենք մի-մի քաղաք է մեծ ու փառաշեն *(ՀՀԵ, 223)։*

§ 578. Ինչպես արդեն նշել ենք, երբ ստորոգելիական վերադիրը հոգնակի է, բայական հանգույցը գերազանցապես համաձայնում է այս վերադիրի հետ. համաձայնության այս ձևը օրինաչափական է մանավանդ այն դեպքում, երբ եզակի ենթական այնպիսի մի բառ է, որ իբրև ենթակա թույլ է արտահայտվում, այսինքն՝ մասամբ կորցրել է իր բառական նշանակությունը, հավաքական անուն է և այլն։

IV ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

§ 579. Ինչպես տեսանք, նախադասության գլխավոր անդամներն են ենթական և ստորոգյալը. բայց այս երկու անդամներից բացի, գոյություն ունեն նախադասության այլ անդամներ, որոնք խմբավորվում են այդ երկու գլխավոր անդամների շուրջը և դառնում են դրանց համար երկու առանձին խմբի լրացումներ։ Այսպիսի լրացումները նախադասության մեջ անվանվում են նախադասության երկրորդական անդամներ, որոնք իրենց հերթին կարող են ունենալ նաև իրենց լրացումները։ Չի բացառված նաև, որ այս վերջինները էլ իրենց հերթին ունենան այլևայլ լրացումներ, որոնք կոչվում են լրացման լրացումներ՝ կազմելով լրացյալների ու լրացումների մի բարդ աստիճանական համակարգ, որտեղ յուրաքանչյուր լրացում ստորադասվում է իր լրացյալին. օրինակ՝ Սենյակի դուռն անլսելի կերպով բացվեցավ և հուշիկ քայլերով ներս մտավ տիկին Հարունյանը *(Նար., II, 115)*։ Ամեն առավոտ արծաթյա փողերի հնչյունը, որսորդական բարակների մռնչյունը, սիգապանծ նժույգների խրխինջը խռովում էին սորամուտ անասունների վաղորդյան հանգիստը *(Ր., III, 472)*։ Հանդեպի պատի մոտ դրված փոքրիկ մահճակալի վրա պառկած էր յուր զավակը՝ փոքրիկ Հայկանուշը *(Նույն տեղում, 114)*։ Արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով *(Ր., III, 471)*։

Այստեղ բերված նախադասություններից առաջինի մեջ դուռն *ենթական ունի մի լրացում (սենյակ), իսկ* բացվեցավ *ստորոգյալի լրացումն է՝* անլսելի կերպով *(այս երկու բառերը մի լրացման արժեք ունեն)։ Երկրորդ նախադասության մեջ* Հարունյանը *ենթական նույնպես ունի մի լրացում (տիկին), իսկ* ներս մտավ *ստորոգյալի լրացումը (քայլելով) իր հերթին լրացվում է* հուշիկ *բառով։ Հաջորդ նախադասությունները ավելի ևս աստիճանավորված են. օրինակ՝*

Րաֆֆուց վերցրած առաջին նախադասության մեջ ենթականերն են՝ ճնչյունը, մռնչյունը, խրխինջը, սրանց լրացումներն են՝ փողերի, բարակների, նժույգների, իսկ այս վերջինների համար իբրև լրացման լրացումներ ծառայում են արծաթյա, որսորդական, սիգապանծ։ Միևնույն նախադասության մեջ խռովում էին ստորոգյալի տարբեր բնույթի լրացումներ են առավոտ և հանգիստը բառերը, որոնք իրենց հերթին լրացվում են. օրինակ՝ հանգիստը խնդիր լրացումը ունի հատկացուցիչ (անասունների), իսկ այս վերջինը երրորդ աստիճանով լրացվում է սորամուտ բառով (որոշիչ)։

§ 580. Միևնույն լրացումը ոչ միայն ունենում է աստիճանավորված լրացումների շղթա, այլև միաժամանակ տարբեր տեսակի ու բնույթի լրացումներ կարող են շրջապատել նրան. մեր բերած վերջին օրինակի մեջ հանգիստը խնդիրն ունի հատկացուցիչ (անասունների), բայց միաժամանակ լրացվում է վաղորդյան բառով, որ որոշիչ է։ Րաֆֆուց վերցված մյուս նախադասության մեջ ճառագայթների ներքո ստորոգյալի լրացումը (տեղի պարագա) ունի երկու տարբեր լրացումներ՝ արևի (հատկացուցիչ) և առաջին (որոշիչ)։

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, նախադասության գլխավոր անդամներն ունեն ոչ միայն աստիճանավորված լրացումների բարդ ցանց, այլև այդ լրացումները զանազանվում են միմյանցից իրենց դերերով թե՛ իբրև առանձին գլխավոր անդամների առանձին լրացումներ և թե՛ հենց իբրև միևնույն անդամի համար տարբեր բնույթի լրացումներ։

Այս էլ պետք է նշել, որ ամեն տեսակի նախադասություն էլ կարող է ունենալ և չունենալ լրացումների և լրացման լրացումների այդ ցանցը։

§ 581. Լրացումների և լրացման լրացումների այս բազմազան քանակությունը բաժանվում է երկու խմբի. մի խումբը լրացնում է նախադասության գոյական և գոյականացված, ավելի ճիշտ առարկայացված անդամները, իսկ մյուս խումբը դառնում է լրացում այդ առարկայացած անդամների հատկանիշների համար։

Առարկայացած անդամների մեջ կարող են մտնել բոլոր խոսքի մասերը (դերանուն, թվական, բայ և այլն), բայց վերջիվերջո իբրև հիմնական լրացումներ այս դեպքում հանդես են գալիս գոյականները։

§ 582. Գոյականների և առարկայացած բառերի հիշյալ լրացումները իրենց լրացական բնույթով լինում են երեք տեսակ՝ **որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ**: Որոշիչ կարող են դառնալ այն բոլոր խոսքի մասերը, որոնք որոշիչային պաշտոն կատարելու ժամանակ ունակ են դառնում արտահայտելու հատկանիշ, որակ՝ թողնելով տվյալ դեպքում իրենց տարբեր խոսքի մասային առանձնահատկությունները։ Ուրեմն որոշիչը դրսևորվում է իր առարկայացած լրացյալի որակական, քանակական և այլ կարգի հատկանիշները։

Հատկացուցիչ լինում են գոյականները, դերանունները և այն բոլոր խոսքի մասերը, որոնք կարող են գոյականացվել։ Հատկացուցիչը կիրառվում է միայն սեռական հոլովով և ցույց է տալիս իր լրացյալ առարկայի այնպիսի հատկանիշը, որով որոշվում է, թե այդ լրացյալ առարկան ում, ինչի է պատկանում, ում այս կամ այն գործողության արդյունքն է, ում և ինչի մասն է, ինչից է կազմված կամ առաջացած և այլն։ Պետք է նշել, որ այս դեպքում հատկացուցիչը գերազանցապես սահմանափակվում է իր ձևով, այսինքն՝ որ այն կիրառվում է սեռական հոլովով, այլապես մյուս հոլովների տարբեր կիրառությունները հաճախ կարող են համընկնել սեռական հոլովի կիրառություններին, սակայն իբրև լրացումներ նախորդները մենք հատկացուցիչ չենք համարում։

Նախադասության առարկայացած անդամների մյուս լրացուցիչը բացահայտիչն է, որը նույնպես գոյական՝ առարկայացած լրացուցիչ է. սա տարբերվում է մի շարք առանձնահատկություններով. ամենից առաջ, ինչպես ասվեց, առարկայացած լրացուցիչ է, հոլովով և թվով գերազանցապես համաձայնում է իր լրացյալի հետ և վերջինիս նկատմամբ ունի իր որոշակի տեղը (ետադաս է)։

§ 583. Լրացումների մյուս խումբը, որ վերաբերում է նախադասության առարկայացած անդամների հատկանիշներին, բաժանվում է երկու տեսակի՝ խնդիրների և պարագաների։ Խնդիրները, չնայած հատկանիշների լրացումներ լինելուն, առարկայացած լրացումներ են, իսկ պարագաները առավել հատկանիշային լրացումներ են։

Խնդիրները այն առարկայացած լրացումներն են, որոնց վրա անցնում, և որոնց վերաբերում է նախադասության գլխավոր անդամ հանդիսացող ստորոգյալի արտահայտած գործողությունը, վիճակը, դրությունը։ Իսկ պարագաները մյուս կողմից լրացնում են ստորոգյալի գործողությունը՝ արտահայտելով այդ գործողության ձևը,

որակը, ժամանակը, տեղը, կատարման քանակական հատկանիշը, պատճառը, պայմանը և այլն։

1. ՈՐՈՇԻՉ

§ 584. Նախադասության այն երկրորդական անդամը, որ լրացնում է նախադասության որևէ գոյականի, գոյականացած, առարկայացած անդամի՝ արտահայտելով նրա որակական, քանակական, հարաբերական և նման կարգի հատկանիշներն ու յուրահատկությունները, կոչվում է որոշիչ։

Հայերենում որոշիչ կարող են դառնալ ածականները, թվականները, դերանունները (ոչ բոլորը), բայերը, գոյականները, մակբայները։ Այս բոլոր խոսքի մասերը հայերենում որոշիչ են դառնում գերազանցապես ուղիղ ձևով՝ առանց հոդի և առանց որևէ փոփոխության։

Որոշիչ են դառնում ոչ միայն առանձին խոսքի մասեր, այլև ամբողջական բառակապակցություններ, հոլովված բառեր և այլն։ Բառակապակցությունները և դարձվածքային այն արտահայտությունները, որոնք մի սերտ ամբողջություն են կազմում, համարվում են մի որոշիչ (տվյալ դեպքում հաշվի չենք առնում այդ կապակցությունների քերականական հին առնչությունները)։ Իսկ կապակցություններին, դարձվածքային արտահայտություններին. վերաբերող որոշիչը դիտվում է իբրև ամբողջության լրացում և ոչ թե այդ ամբողջության որևէ անդամի լրացում. օրինակ՝ Այդ **առևտրական տները նաև յուրահատուկ բանկեր էին** (ԱԲԵ, 308)։ **Կային** երեք **Ներսես բեյ** (նույն տեղում, 309)։ Հազար ու մեկ **մտքեր, միմյանցից սոսկալի, գալիս, անցնում էին նրա գլխով** (Շիրվ., V, 391)։ Աքցիզչի **Միրզա Ցարմասոն բեգի հետ մենք վերը ծանոթացանք** (ՊՊ, III, 29)։ **Այդ, երեք, աքցիզչի** որոշիչները վերաբերում են ամբողջական բառակապակցությունների, իսկ **հազար ու մեկ** որոշիչը մի բառակապակցություն է և վերաբերում է միայն մի բառի։

§ 585. Եթե որոշիչը և որոշյալը կազմում են մի դարձվածքային ամբողջություն կամ մի սերտ բառակապակցություն, ապա այս դեպքում որոշիչի և որոշյալի լրացում և լրացյալ լինելու հարաբերությունը շարահյուսորեն վերանում է, այդ հարաբերությունը փոխարինվում է բառակազմական հարաբերությամբ, որտեղ իշխում է նոր բառի նշանակությունը. օրինակ՝ **Երևում էր** Բզնունյաց ծովակի **միայն նեղ շերտը** (Ր., III, 24)։ **Իսկ** Վաղարշակ առաջինի **օրերում**

Սլկունիները ավելի նշանակություն ստացան *(Ր., III, 23)։ Այդպես ասվում է* Ներսես Մեծ, Միջերկրական ծով, Սև ծով. Կարմիր ծով *և այլն։*

ա) ԱԾԱԿԱՆ ԻԲՐԵՎ ՈՐՈՇԻՉ

§ 586. Ամենից հաճախ որոշիչ են դառնում ածականները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ որակական և հարաբերական։

Որակական ածականները ցույց են տալիս առարկայի որակական հատկանիշները, նրա ինչպիսի, որպիսի լինելը և իբրև որոշիչ արտահայտվում են երեք ձևով՝ դրական, բաղդատական և գերադրական աստիճաններով։ Դրական և գերադրական աստիճանները արտահայտվում են մի բառով, իսկ բաղդատական աստիճանը երկու առանձին բառերով, որոնք համարվում են մի որոշիչ. օրինակ՝ Սիմոնի կինը *մեծ* շերեփով խառնում էր կաթսան *(ԱԲԵ, 519)։* Գոմեշները քաշ կտան *ծանր* զերանները *(Նույն տեղում, 488)։* Տիկինը *ամենաքնքուշ* ողջագուրանքով ճանապարհ դրեց նրանց *(Ր., III, 126)։ Գեղեցիկ* կնոջ պայծառ դեմքը *ավելի հրապուրիչ* փայլ ստացավ *(Ր., III, 100)։* Երբ ես դրանց *փոքրագույն* մասի նկարագիրն իսկ անելու լինիմ, *ամբողջ* գիշերը պիտի խոսեմ *(Մուր., IV, 127)։* Նա այդ ասում էր *այնպիսի մի սրտաբաց* մտերմությամբ, որի մեջ նետին մտքերի *ամենափոքր* ստվեր չէր կարելի նշմարել *(Մուր., IV, 131)։* Նա կամենում էր իր *նոր* տան կողքին կառուցել մի *ավելի ընդարձակ* սենյակ *(ԱԲԵ, 292)։*

Ծանոթություն. 1. Գերադրական աստիճանը արտահայտվում է նաև ամենից *բառով, որ առանձին է գրվում. օրինակ՝* Սկսվում է *ամենից զվարթ* և *աղմկալի* երկու ռոպեն *(ԱԲԵ, 150)։* Ամենից *բառով կազմված ածականները նույնպես համարվում են մի որոշիչ։*

Ծանոթություն. 2. Ածականի բաղդատական և գերադրական աստիճանները արտահայտվում են նաև ածականի կրկնությամբ, երբ միևնույն ածականի բացառական հոլովը դառնում է հենց իրեն համար որոշիչ՝ ցույց տալով որոշյալի բաղդատական կամ գերադրական աստիճանը. օրինակ՝ Ու կատվեց էն խոսքն անա, թե *ուժեղից* ուժեղը կա *(Թ., I, 318)։* Եվ կանչեց նա իր *քաջերից* քաջին *(Շիրազ)։ Երբ բացառականը եզակի է, արտահայտում է բաղդատական աստիճանը, իսկ եթե հոգնակի է՝* գերադրականը։ *Պետք է նշել նաև, որ այդպիսի կա-*

պակցությունը սերտ միասնություն է կազմում, ուր վերանում է լրացման և լրացյալի հարաբերությունը։

§ 587. Հարաբերական ածական որոշիչները ցույց են տալիս այնպիսի հատկանիշ, որ հարաբերում է մի ուրիշ առարկայի հետ, այսինքն՝ տվյալ առարկայի այս կամ այն հատկանիշը արտահայտում է ուրիշ առարկաների միջնորդությամբ, որոնք որոշում են առարկայի ծագումը, կազմությունը, բաղադրությունը, պատկանելությունը, նրա գոյությունը՝ հատուկ այս կամ այն տեղին, ժամանակին և առհասարակ մի բանի հատուկ լինելը և այլն։ Դա բավական մեծ մի սենյակ է *հողե* հատակով, *կավյա* պատերով և *փայտյա* առաստաղով (*Շիրվ., V, 223*)։ Հատակի վրա մնացել էր բավական թանձրությամբ *աղային* խավ (*Ր., III, 238*)։ Նա գործիքների *կաշվե* պայուսակը դրեց անկյունում, կախեց *երկաթե* ձողով *կավե* ճրագը (*ԱԲԵ, 269*)։ Նա կգնի *երկաթյա* մահճակալ (*նույն տեղում, 292*)։ Ամբողջ վեց տարի *ամուսնական* այդպիսի կյանք վարելուց հետո, հանկարծ «չար ոգին» ներս է սողոսկում նրա անարատ սիրտը (*Նար., II, 284*)։ Դու խո գիտես, որ այնտեղ բավական *ժառանգական* կալվածքներ ունեմ (*նույն տեղում, 237*)։ Ամեն առավոտ *արծաթյա* փողերի հնչյունը, *որսորդական* բարակների մռնչյունը, սիգապանծ նժույգների խրխինջը խռովում էին սուրամուտ անասունների *վաղորդյան* հանգիստը (*Ր., III, 472*)։ Առջևից տանում էին *իշխանական* տան նժույգները (*նույն տեղում, 343*)։ Անհնարին խռովության մեջ կանգնած էր նա *հայրենական* տան մուտքի առջև (*նույն տեղում*)։ *Հայրենի* քաղաքի տխուր տպավորությունների ներքո, որոնք այնքան սաստիկ ազդեցին նրանց սրտերի վրա, նրանք մոռացան իրենց իշխանին (*նույն տեղում, 346*)։ Ու *լեռնային* վտակների Ալիքները պաղպաջուն (*Թումանյան, «Անուշ»*)։ Ես *տարաժամ*, թշվառ ձենից... (*Թ., «Մոծակն ու մրջյունը»*)։ Ամառվան իրիկունները մենակ ու միալար հնչում է *գյուղական* խաղաղ տան մի որևէ անկյունից (*Թ., III, 92*)։ Ինչքան են արդյոք տարիներ հոսել Մինչև *գարնային* այս օրը զվարթ (*ՉԸԵ, 211*)։ *Իրիկնային* փողոցում ես տեսա նրան (*նույն տեղում, 140*)։ Այդպիսի տխրություն է պատում *մարդկային* սրտին *գարնանային* առավոտները (*նույն տեղում, 398*)։ Վերջին ժամանակները ոչ միայն *իտալական*, այլև *եվրոպական* ու *ամերիկյան* ամբողջ մամուլը խոսում էր այդ նոր փայլուն աստղի մասին (*Նար., VII, 125*)։

բ) ԲԱՅՆ ԻԲՐԵՎ ՈՐՈՇԻՉ

§ 588. Հայերենում որոշիչ են դառնում բայի դերբայական ձևերը, դրանք արտահայտում են այնպիսի հատկանիշ, որը բնու-

թագրվում է գործողությամբ. այսինքն՝ որևէ առարկայի կատարած, կամ նրա նկատմամբ կատարված գործողությունը դարձվում է նրա համար մի այնպիսի որոշիչ հատկանիշ, որով այդ առարկան տարբերվում է մյուս առհասարակ գործողություն չկատարած, կամ տըվյալ առարկայի նկատմամբ գործողություն չկատարած առարկաներից։

§ 589 *Որոշիչ դառնում են՝ հարակատար, ենթակայական, ապառնի դերբայների ներգործական, կրավորական և չեզոք ձևերը. օրինակ՝ Կիտված* քարերը մեջքով կրում էր մի պատանի *(ԱԲԵ, 487)*։ Ձեռքը մեկնեց ձորակում *թափած* քարերին *(նույն տեղում, 488)*։ Տարօրինակ, մութ, *չհասկացված* դեպքեր պատահեցին նախրյան այդ քաղաքում *(ՉԸԵ, 371)*։ Գլուխը կախ, խոնարհ՝ վախից *դողացող* մարմնով ելնում է չիլ Մուկուչը դուրս *(նույն տեղում, 320)*։ Երիտասարդ ոսկանը պատասխանի փոխարեն հազավ իր *սպանած* կարմիր կարապներից մի զույգի թևերը *(Թ., III, 273)*։ Սառը քամին *չորացած* խոտերով ու *թառամած* ծաղիկներով ծածկում է նրա անհայտ գերեզմանը *(նույն տեղում, 96)*։ Ավելորդ շաղակրատանքներ, *գրելի* և *անգրելի* հայհոյանքներ Ադամի բերանից լսված չկար *(ՊՊ, III, 185)*։ *Ու-ով վերջավորվող ապառնի դերբայով ասվում է՝* ուտելու հաց, ցանելու սերմ, պահելու խնձոր, գրելու թուղթ *և այլն*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. 1. Ապառնի ու-*ով վերջավորվող դերբայը չպետք է շփոթել անորոշ դերբայի սեռական հոլովի հետ. ապառնի դերբայը ժամանակ է արտահայտում և կարող է փոխարինվել իր* ի, իք *տարբերակներով. օրինակ՝* պահելու խնձոր *նշանակում է այն խնձորը, որ պահվելու է.* պահելի, պահվելիք խնձոր: *Իսկ եթե ասենք՝* պահելու կերպը, պահելու տեսակը, պահելու ձևը, *չի հասկացվի* այն ձևը, տեսակը, կերպը, *որոնք պահվելու են և ո՛չ էլ կարելի է ասել՝* պահելի ձև, պահելիք տեսակ *և այլն. առաջին դեպքում ապառնի դերբայ է և որոշիչ, իսկ երկրորդ դեպքում ունենք անորոշ դերբայի սեռական հոլովը, որ հատկացուցիչ է։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. 2. Անկատար դերբայի իս-*ով վերջավորվող ձևի որոշիչային գործածությունը արդեն բոլորովին հնացած է. Համեմատի՛ր.* Կարծում էր, թե *գալիս* ժամանակը չէր նկատած *(Մուր., V, 161)*։ Գալիս ժամանակը *բարբառային, հնացած դարձվածք է։*

§ 590. *Դերբայները շատ հաճախ հանդես են գալիս այլևայլ բառերի սերտ կապակցությամբ, որոնք նախորդների կողմնակի ենթակա, կողմնակի լրացումներ և կամ միմյանց համար կողմնակի լրացումներ են, այսինքն՝ առնում են մի ամբողջ դերբայական դարձվածով։ Այս դեպքում դերբայ-որոշիչի հետ նաև այդ լրացումները համարվում են իբրև մի բաղադրյալ որոշիչ. օրինակ՝—* Այն, որ ասացիք, թե Քոից *մարդ կուլ տվող* ձկներ պիտի դուրս գան *(Մուր., II, 201)։* Հիշում եմ *նրա հետ ունեցած* վիճաբանություններս *(Նար., III, 354)։* Առավ *ոտի մեկը կոտրած* մի հավ և գնաց *սարսափ տարածող* դերվիշի մոտ *(ՂԱԽ, 319)։* Լուսաբացին, *օդի մեջ եղած* փոշին ցողի հետ իջել էր գետին *(ԱԲԽ, 426)։ Շրջակայքում տիրող* աղմուկն ու խռովությունը արթնացրին նրան *(Ր., III, 309)։*

գ) ԴԵՐԱՆՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՈՐՈՇԻՉ

§ 591. *Հայերենում որոշիչ է դառնում դերանունների մեծ մասը։ Այդ կիրառությամբ հանդես չեն գալիս անձնական, փոխադարձ և մյուս դերանուններից մի քանիսը, ինչպես՝ ցուցականներից՝* այստեղ, այնտեղ, նույնտեղ, այդտեղ, սա, դա, նա, *հարցական-հարաբերականներից՝* ով, ուր, որտեղ, երբ, ինչու, որպես, *ժխտականներից՝* ոչ ոք, ոչ ով, *որոշյալներից՝* ամենք *(ը)* ամեն *ինչ(ը),* յուրաքանչյուր ոք, ամեն ոք *և անորոշ դերանուններից՝* երբևէ, ուր որ է, ինչ որ է, ինչպես որ է, որքան որ է:

§ 592. *Ցուցական դերանունները որոշիչ դառնալով՝ մի առարկա մյուսից տարբերում են տարածական և ժամանակային հարաբերություններով, այսինքն՝ խոսողը ցուցական դերանունով որոշում է առարկայի տարածական և ժամանակային մոտիկությունն ու հեռավորությունն իր, խոսակցի և մի երրորդ անձնավորության նկատմամբ, ապա տարածությամբ ու ժամանակով որոշվող այդ առարկաները ցուցական դերանուններով արտահայտում են նաև քանակական ու որակական նույնություն, նմանություն՝ մի բոլորովին տարբեր առարկայի բաղդատությամբ։*

§ 593. *Ցուցական* այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս *դերանուններով որոշվող բառը միշտ որոշված է լինում և կիրառվում է հոդով։* Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այսպես, այդպես, այնպես, նույնպես *ցուցականներով որոշվող բառը կիրառվում է թե՛ հոդով և թե՛ առանց հոդի, եթե, իհարկե, որոշ-*

յալը իր քերականական ձևով ունակ է հոդ առնելու. օրինակներ՝ *Այս ու այսպիսի* հազարավոր մտքերի ճնշման տակ, հանկարծ հիմարություն և, որ ավելի վատ է, կեղծիք թվաց ինձ իմ անձնուրացությունը (*Նար., III, 410*)։ Քամին շարունակում էր շառաչել *նույն* սաստկությամբ (*Մուր., II, 19*)։ Սկսած *այն* օրից ես հետզհետե մեծ առաջադիմություն արեցի (*նույն տեղում, 67*)։ *Այդ* երեկոն ավելի շուտ մթնեց (*ԱԲԵ, 498*)։ *Այդքան* աշխատանքի ընթացքում ժամանակ է գտնում հարևանի տուն գնալու (*նույն տեղում, 505*)։ *Էսքան* (այսքան) մարդ չի հավաքվի (*նույն տեղում, 513*)։ *Այդպես* պիսեր մենք չենք ուզում (*Թ., «Պոետն ու մուսան»*)։ Լսում եմ նրա *նույնքան* անմիտ *թոթովանքը* (*Նար., II, 181*)։ *Այդպիսի* րոպեներին Մագդալինայի հոգու խորքից բարձրանում էր կասկածի թե հուսո նման մի բան (*Շիրվ., V, 323*)։ *Այնպիսի* դեպքերում պատրաստ է նրա արյունահեղ ձեռքը (*Ր., I, 307*)։ *Այնքան* հիվանդություններ ունեմ (*ԳՍԹ, I, 213*)։ Սեդրակը *նույն* հանգստությամբ ետ դարձավ իր տեղը (*ԳՄԵ, 359*)։ Հապա ուր կմնա էս նոր զորքերի ջարդվելու վրեժը և *այս* բանակի *այսքան* ժամանակ հոգնեցնելու արդյունքը (*Մուր., IV, 222*)։ *Սույն այս* վեպիս առաջին մասում ես փորձեցի պատկերել նաիրյան այդ քաղաքն (*ՉԸԵ, 322*)։ Մեջքը չէր կարողանում *միևնույն* կորությամբ պահել (*նույն տեղում, 322*)։ Որից զուրկ էին քաղաքի *մյուս* գինետները (*ԱԲԵ, 585*)։

Ծանոթություն. Այս, այդ, այն, նույն *և մյուս ցուցական դերանուն-որոշիչների հետ կիրառվում էր* իսկ *հին ածականը* նույն, հենց *նշանակություններով, որ ցուցականի հետ մի միասնական որոշիչ էր կազմում, այժմ արդեն հնացած է. օրինակ՝* Այդ իսկ կալվածքը քաշվեց առաքինի ծերունին (*ՂԱԵ, 170*)։

Այժմ դրա փոխարեն կիրառվում է հենց: *Համեմատի՛ր.* Հենց նույն տարին, Իմ պաշտոնից ինձ դուրս արին (*Թումանյան*)։ Հենց այդ «ոտեղն է», որ պետք է պարզել (*ՎԱՍԱ, 229*)։

§ 594. *Հարցական և հարաբերական դերանուններից որոշիչի պաշտոնով հանդես են գալիս՝* ինչ, որ, քանի, որքան, ինչքան, որչափ, ինչչափ, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ *բառերը, որոնք արտահայտում են առարկայի քանակական և որակական այնպիսի հատկանիշներ, որպիսիք անծանոթ են խոսողին և նա*

կամենում է հարցումով իմանալ. օրինակ՝ Ի՞նչքան ցավ եմ տեսել ես (*Թումանյան*)։ *Ինչքա՞ն* նեղիմ, *ինչքա՞ն* չառան, ինչքա՞ն բժիշկներ են գալիս (*ՂԱԾ, 217*)։ Բայց, ո՜հ, *ինչպի՞սի* դժոխք ռոպեներ պետք է ապրի նա (*Շեքս., I, 162*)։ Եվ որքա՞ն հիացմունքով, *որպի՞սի* հափշտակությամբ էինք լսում (*Մուր., II, 63*)։ *Ո՞ր* ժամանակից է շունը մարդուն ընկերացել (*Թ., III, 123*)։ *Ի՞նչ* վարձ էին ստանում նրանք (*ԱԹԾ, 316*)։ Ահա տունը. իր տունը, որ սարքել է *քանի՜* տարի (*նույն տեղում, 505*)։ Ասա ինձ, *որքա՞ն* զորք ունի Ջալալն յուր ամրոցում (*Մուր., IV, 220*)։ *Ինչպիսի՞* գանձ է այդ (*նույն տեղում, 222*)։ Բայց *ի՛նչ* գնով էլ լինի, ուզում է տեղ հասցնի (*ՉԸԾ, 322*)։ *Քանի՜-քանի՜* մարդ փախավ իր տանից, *Քանի՜-քանի՜* մարդ դառավ մարդասպան (*Թումանյան*)։ Ո՞վ գիտե *ինչ* մարդիկ էին և *ի՞նչ* ազգի էին և մեռել էին *որպիսի՞* մահով (*ԱԹԾ, 574*)։ *Քանիերորդ* տարին է, որ աշխատում ես միևնույն վայրում: *Ո՞րերորդ* դասարանում է սովորում ձեր որդին:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1. Վերևում ասվեց, որ ով *հարցական դերանունը որոշիչի պաշտոնով հանդես չի գալիս. բայց երբ* ինչ *հարցականի հետ է գործածվում, իբրև վերջինիս համազոր, դառնում է որոշիչ. օրինակ՝* Մնում էր, որ ինքս ծանոթանայի այդ կնոջ և նրա *ով* և *ինչ* անձնավորություն լինելը ստուգեի անձամբ (*Մուր., II, 30*)։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2. Ինչպես *հարցականը իբրև որոշիչ այժմ քիչ է գործածվում։ Համեմատի՛ր. Ահա ինչպես* ոմնի տվել եմ իմ աղջկանը (*ՈՊԾ, 446*)։

§ 595. *Անորոշ դերանուններից իբրև որոշիչ կիրառվում են՝* ինչ-որ, ինչ-ինչ, այսինչ, այնինչ, մի, մի քանի, ուրիշ, այլ, այլևայլ, որևէ, որևիցե *բառերը։ Սրանք արտահայտում են առարկայի այնպիսի հատկանիշը, որ խոսողին անհայտ է, այսինքն՝ այդ հատկանիշը որակական, քանակական առումով խոսողի համար անորոշ է, դրա ինչ լինելը նա չգիտե, ուստի արտահայտում է անորոշ բառերով, որոնցով տվյալ առարկան տարբերվում է որոշակի և հայտնի հատկանիշ ունեցող առարկաներից. օրինակ՝* Պեգասը գչլում է եղել *մի քանի* ծաղիկ սպիտակ կամ կարմիր առվույտից (*ՂԱՀ, 127*)։ Որոնք առանձին խորանների ձև ունեին և պատրաստված էին *այլևայլ* պետքերի համար (*Ր., III, 482*)։ Հանկարծ *ինչ-որ* անհայտ զորություն, կարծես, բռնում էր նրան (*Նար., II, 281*)։

Այդ մի ժամը ինձ համար անցավ *մի քանի* րոպեների պես (*Մուր.,
II, 86*)։ *Մի* երեկո ես հորաքրոջս մեր տնից իր տունն ուղեկցելուց
հետո՝ լապտերը ձեռքիս վերադառնում էի (*Շիրվ., V, 308*)։ Նա
լսում էր իր ընկերներից մեկի ինչ-որ պատմությունը (*նույն տե-
ղում*)։ Առևտրական *ինչ-որ* անհաջողությունից հուսահատված
(*նույն տեղում, 310*)։ Մենք սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական *ինչ-որ* կարոտ, *ինչ-որ* սեր (*ՋԸԵ, 141*)։ Թե ինչպես
ճնշված իր թագի տակին, *Այսինչ* թագավորն այս ժամանակին իր
ժողովուրդը հանձնեց ռուսին («*Մծիրի*»)։ Մի *ուրիշ* լուցկի ճթաց և
վառվեց (*Նար., III, 199*)։ Բայց թե հազիվ *որևէ* մարդ այնպես
թույլ և իրավազուրկ զգա իրեն (*նույն տեղում, 200*)։ Իրավունք ու-
նիմ *որևէ* բան ասելու (*նույն տեղում*)։ *Ուրիշ մի քանի* հարցեր էլ
տվեց Մարությանը (*նույն տեղում, 223*)։ Նա հարց պիտի դներ
սույն այս վեպիս ձևի ոչ ամբողջական լինելու, նրանում վեպի
էլեմենտար կանոնների բացակայության և հազար ու մի *այլ* թերու-
թյանց մասին (*ՋԸԵ, 395*)։ Մեր աշխատության մեջ գուցե և կան,
իհարկե, ավելի մեծ, թեկուզ մի քիչ *այլ* կարգի սխալներ ու թերու-
թյուններ (*նույն տեղում, 297*)։ Լսել եք, *այսինչ* տեսուչի դրամար-
կղում պակասորդ է եղել (*ՌՊԵ, 654*)։ Երբ նա մեկ *որևիցե* ան-
զգույշ շարժվածք անե, կսկսեն ծիծաղել (*Զմշկյան, 41*)։

§ 596. *Որոշյալ դերանուններից որոշիչի պաշտոնով հանդես
են գալիս*՝ ամեն, ամենայն, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, ողջ,
ամբողջ, համայն: *Սրանք իբրև որոշիչ արտահայտում են առար-
կայի քանակական ընդհանուր հատկանիշը. օրինակ*՝ Մուշեղի
հայր Վասակը *բոլոր* Մամիկոնյան եղբայրների մեջ ամենահա-
րուստն էր (*Ր., III, 127*)։ Դրա փոխարեն նա խոստանում էր *յու-
րաքանչյուր* տարի վճարել վեհափառ խանին ձեր կողմից որոշված
հարկը (*Մուր., IV, 226*)։ Իսկ ինքյանք՝ հիսուսյանք զրկվեցան *ա-
մենայն* արտոնությունից (*ՄՆ, II, 139*)։ Մի խոսքով՝ կատարում է
կանխող այն բոլոր գործողությունները, որ տարբեր էին *յուրաքան-
չյուր* տան ու բակի համար (*ԱԲԵ, 499*)։ Հարցրեց Մազդալինան,
տակավին լավ չըմբռնելով հաղորդված լուրի *ամբողջ* լրջությունը
(*Շիրվ., V, 314*)։ Նրանց հետ միասին մենք պայքարում ենք *հա-
մայն* աշխարհի ջուհակների ազատագրության մեծ գործի համար
(*ԳՄԵ, 361*)։ *Բոլոր* դուք, ով արևին է կարոտում, *բոլոր* դուք, ով
դարերով շղթայակապ (*ՀՀԵ, 153*)։ Բզիկ-բզիկ հոշոտվում էր նրա
ողջ էությունը (*Իս., III, 213*)։ Բայց իմ փունջը իբրև մի զարդ, Տես-
նում է միշտ *ամեն մի* մարդ (*Դողոխյան*)։ Եվրոպական և ամերի-

կյան *ամբողջ* ժամուլը խոսում էր այդ փայլուն ստողի մասին (*Նար., VII, 125*)։

Ծանոթություն 1. Բոլոր *դերանունը 19-րդ դարի մի շարք գրողների երկերում կիրառվում է* ամբողջ *բառի փոխարեն. այժմ այդ կիրառությունը բոլորովին հնացած է, չնայած ավագ սերունդի որոշ գրողներ մինչև վերջերս չեն հրաժարվել. օրինակ՝ Բոլոր* գիշերը մինչև լույս (*Իս., III, 246*)։ Թագավորի *բոլոր* պալատը դղրդում է (*ՂԱծ, 218*)։

Ծանոթություն 2. Ամենայն *դերանունը նույնպես հնացել և գործածությունից համարյա դուրս է եկել։ Համեմատի՛ր. Ամենայն* տեղ մահը մի է (*Մ. Նալբանդյան*)։ *Ամենայն* օր մատաղ է անում (*ՂԱծ, 217*)։

Ծանոթություն 3. Դուք բոլորդ *գերազանցապես մի բաղադրյալ ենթակա է (§ 66)* բոլոր դուք *կապակցության մեջ, որ* անսովոր է (*տե՛ս վերևի օրինակները*), բոլոր *նույնպես պետք է արդեն* դուք *դերանվան հետ ամբողջացած համարել, որովհետև դրա որոշիչային նշանակությունը անձնական դերանվան մոտ մթագնվում է*։

§ 597. *Ժխտական դերանուններից որոշիչի պաշտոնով գործածվում են* ոչ մի, ոչինչ, *որոնք արտահայտում են առարկայի այնպիսի հատկանիշը, որ ժխտում է առարկայի գոյությունը. օրինակ՝* Այդ անառկու մարդը, որի համար աշխարհում *ոչինչ* դժվարություններ, *ոչինչ* արգելքներ չկային, այժմ զանգվում էր անել և նուսակոտր դրության մեջ (*Ր., III, 343*)։ Ես չգտա ոչ մեկին Երազներից իմ շեղ, Եվ *ոչ մի* մարդ, *ոչ մի* կին՝ Հերոսներից իմ շեղ (*Թումանյան*)։ *Ոչ մի* «երկիր Նաիրի» (*ՉԸծ, 299*)։ Չի կարող տանել *ոչ մի* հնություն (*նույն տեղում, 300*)։ Գիշերային լռության մեջ *ոչ մի* ձայն, *ոչ մի* շշուկ չէ լսվում (*Րծ, 362*)։

Ծանոթություն. Ոչինչ *ժխտականը իբրև որոշիչ արդեն հնացած է։ Համեմատի՛ր.* Ոչինչ զանազանություն չկա (*ՄՆ, II, 288*)։ *Դրա փոխարեն կիրառվում է* ոչ մի։

§ 598. *Ինչպես ածական որոշիչները, այնպես էլ տարբեր դերանուններ միասին կարող են համազոր լրացումներ դառնալ գոյականների մոտ, սակայն հաճախ համազոր դերանուն-որոշիչները այնքան են սերտանում, որ մի որոշիչի դեր են կատարում,*

կամ մեկը մյուսի համար դառնում է թարմատար, մանավանդ երբ միևնույն տեսակի մեջ են մտնում։ Այս կողմից առանձնապես նկատելի է այս, այդ, այն *իսկական ցուցականների հետ երբեմն կիրառվող* սույն, նույն *նույնականների հանդես գալը, որ առանձնապես նշում է որոշյալ առարկայի նույնական լինելը. օրինակ՝* Որին *նույն այդ* դագաղը դրած պիտի հանձներ հողին *(ԶԸԵ, 322)։ Սույն իմ այս* վեպում չկա և երևի չի էլ լինելու և ոչ մի հերոս *(Նույն տեղում, 323)։ Սույն այս* վայրկյանին, երբ ես մտադրություն ունեմ մանրամասն նկարագրել այդ նշանավոր օրվա անցուդարձը *(Նույն տեղում)։* Պիտի վազենք *այդ մյուս* օրիորդի նման *(Փափ., 392)։*

§ *599. Երբեմն դերանուն-որոշիչները իրենց որոշյալների հետ (այդ որոշյալները կարող են տարբեր խոսքի մասեր, նույնիսկ դերանուններ լինել) այնքան սերտ ամբողջություն են կազմում, որ որոշիչի և որոշյալի հարաբերությունը միայն ձևական բնույթ է ստանում, կա՛մ երկուսը միասին մի բառի արժեք են ստանում, և կա՛մ որոշիչը աստիճանաբար խոսքի մասնիկի է վերածվում. օրինակ՝ Ուրիշ բան* ենք մենք: *Ուրիշ ոչինչ,* այո, *ուրիշ ոչինչ։* Իսկ 1917-ից առաջ ոչ այլ ինչ էր *(ԶԸԵ, 298, 299, 300)։* — Օ՜, *ի՛նչ* ասեղ, *իսկն* օձի քիստ *(Թումանյան)։* Ինչ *և* իսկ *որոշիչների* ինչպիսի, իսկական *նշանակությունները մթագնված են։*

դ) ԹՎԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՈՐՈՇԻՉ

§ *600. Հայերենի բոլոր թվականները որոշիչի պաշտոնով հանդես են գալիս և արտահայտում են առարկայի քանակական հատկանիշների բազմազան առնչություններ ու հարաբերություններ։ Ինչպես դերանունները, այնպես էլ թվականներն իբրև որոշիչ կիրառվում են եզակի, առանց հոդի և ուղիղ ձևով (չհոլովված)։*

§ *601. Քանակական թվականներն իբրև որոշիչ արտահայտում են առարկայի քանակական հատկանիշը, այսինքն՝ որոշում են, թե տվյալ առարկայից որքան, քանի հատ է վերցվում, առանձնացվում և հակադրվում միևնույն կամ այլ քանակական հատկանիշ կրող առարկաների. օրինակ՝* Հազիվ ազատվել է *երկու* ոստիկանի ձեռքից *(Անթ., 462)։ Մի* «վայ» արավ, *երկու* ձեռքով թակելով գլուխը *(Նար., VII, 44)։* — Ասում ես, որ *տաս հազար* ժողովուրդ սպասում է ինձ *(Փափ., 450)։* Ասատուրի նոր տունը բաղկացած է *երեք* սենյակից և *մի* գոմից *(ՆԶՀ, 243)։*

§ 602. *Երբ երկու առանձին քանակական թվականներ գծիկով միանում և կազմում են մի հարադրական բարդություն, որոշիչ դառնալով՝ արտահայտում են այդ երկու թվականի արտահայտած քանակի սահմաններում որոշյալի մոտավոր քանակական հատկանիշը. օրինակ՝ Ութը-տասը* գեղեցկուհիներ հասարակ սեղանի շուրջ բոլորը նստել էին *(ԱԹՆ, 293)*։ Էս որ պատահեց մեր Դավիթ հսկան, Մի մանուկ էր դեռ *յոթ-ութ* տարեկան *(Թումանյան)*։

§ 603. Հազար ու մեկ *(մի) թվականը չի նշանակում ուղղակի հազար և մեկ, այլ ցույց է տալիս անորոշ մեծ քանակ, որ կարող է կիրառվել հարյուրից էլ պակաս առարկան որոշելու համար. դա յուրահատուկ թվական չափազանցում է. օրինակ՝* Տեր Թոդիկի դպրոցում *հազար ու մեկ* խստություններ, *հազար ու մեկ* կանոններ կային *(ՐԿ, 278)*։ *Հազար ու մեկ* մտքեր միմյանցից սոսկալի, գալիս անցնում էին նրա գլխով *(Շիրվ., V, 391)*։ *Հազար ու մի* կասկածներ անցան նրա գլխով *(Նար., III, 334)*։

Այս կարգի ընդհանուր, անորոշ քանակական հատկանիշ է արտահայտում նաև հազար *թվականը, որի համաբանությամբ միևնույն կիրառությունն ունի նաև* միլիոնը: *Համեմատի՛ր. Հազար* չար ու շառ, *հազար* հարամի, *Հազար* ջահելներ վխտում են հիմի *(Թումանյան)*։ *Միևնույն իմաստային նշանակությունն է արտահայտում* հազարը, *երբ կրկնվում է. օրինակ՝ Հազար-հազար* տեսքով ու կերպարանքով պատկերանում է նա *(ՋԸՆ, 298)*։

§ 604. *Քանակական թվականը կրկնվելով ստանում է բաշխական նշանակություն և ցույց է տալիս քանակական այնպիսի հատկանիշ, որ կիրառվում է իբրև տվյալ առարկաների բաշխման չափանիշ. օրինակ՝* Յուրաքանչյուրին հանձնիր *երկու-երկու* փաքեթ, թող վեր բարձրացնեն: Մի ճար արեք, որ կոլխոզնիկներն իրենց ունեցած *մեկ-մեկ* կովից, երկու *(այսինքն՝ երկու-երկու)* ոչխարից չզրկվեն *(ՔԹՈՀ, 104)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Հատ *բառի հետ թվականը առանձին որոշիչ չի դառնում, դրանք միասին կազմում են մի որոշիչ և ցույց են տալիս քանակական այնպիսի հատկանիշ, որով առարկաները ավելի որոշակի են զատվում իբրև առանձին միավորներ. օրինակ՝* Քանի՞ տկլոր ձագ ունես դու:— *Երեք հատ* ձագ, ծառայդ եմ ես:— *Երեք հատ* ձագ ցույց կտամ քեզ *(Թումանյան, «Անբան կըկուն»)*։

Այս նշանակությամբ մի *թվականը այնպես է ձուլվել, որ բանավոր խոսքի մեջ շատ սովորական է դարձել, փոխանակ ասելու*

մի զնա՛, մի խոսի՛ր կամ մի անգամ գնա և այլն, ասվում է մի՝ նատ գնա: Մի նատ խոսիր նրա նետ: Մի նատ կեր և այլն, որտեղ մի նատ հանդես է գալիս իբրև ամբողջական պարագա։

Այդպես է նաև, երբ թվականը կիրառվում է անգամ բառի հետ (երկու անգամ, հինգ անգամ). երկուսը միասին մի ամբողջական պարագա են ներկայացնում։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1. Մի *թվականը* քիչ, փոքր *բառերի հետ նույնպես ամբողջական որոշիչ (նաև քանակի պարագա) է կազմում. օրինակ՝* Նստեց մի կոճղի՝ *մի քիչ* շունչ առնի *(ԱԲՇ, 5)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2. Անոց *ածանցով կազմված՝* ռուբլիանոց, գրամանոց, կոպեկանոց, կիլոանոց *և այս կարգի բառերի (ոչ թվականով կազմված) վրա դրված թվականը առանձին որոշիչ չպետք է համարել. օրինակ՝* Հինգ գրամանոց, քսանհինգ ռուբլիանոց, տասնհինգ կոպեկանոց, հինգ կիլոանոց *կապակցությունները մի-մի հասկացություններ են արտահայտում,* տասնհինգ կոպեկանոցը *ոչ թե նշանակում է* տասնհինգ նատ կոպեկանոց, *այլ մի հատ տասնհինգ կոպեկանոց։ Որպեսզի այս կարգի բառերը թվականով որոշենք, սովորաբար թվականի հետ կիրառում ենք* նատ *բառը. օրինակ՝* Երեք նատ ռուբլիանոց, երկու նատ կոպեկանոց *և այլն։*

Իսկ թվականով և անոց *ածանցով կազմված բառերի վրա դրված թվանշանը որոշիչ է. օրինակ՝* Հինգ տասանոց, երկու քսանհինգանոց, երեք հարյուրանոց *և այլն։*

§ *605. Մոտավորական թիվը արտահայտելու համար քանակական թվականից առաջ դրվում են՝* մոտ, մոտավորապես, շուրջ, զրեթե, համարյա, մի, մինչև *բառերը, որոնք թվականի հետ դիտվում են իբրև մի որոշիչ. օրինակ՝* Մեր գյուղը *մի հարյուր* տուն կլինի *(ՀԱԿԲ, I, 322)։* Եվ գյուղացիք արդեն *մոտ վաթսուն* դեսյատին հող խլած, այժմ մտնում էին անտառի կուրծքը *(Փափ., 170)։* Ամսական *մինչև 10—15* մանեթ եա էր ձգում *(նույն տեղում, 334)։* *Մի երեք* ոսկի չարժող մուշտակ առնեմ *(նույն տեղում, 36)։* Այդ միջոցով համաձեցինք *մոտավորապես երկու հարյուր* ռուբլի *(Զմըշկյան, 115)։* Առաջարկել վարձ առաջնակարգ դերասաններին ու դերասանուհիներին *մինչև 100* ռուբլի, իսկ երկրորդ դեր կատարողներին *մինչև 60 ռուբլի (նույն տեղում, 117)։* Տեր Մարտիրոսը յուր գանձարանից *շուրջ հինգ հարյուր (ռուբլի)* էր առել *(Փափ.,*

48)։ Նա *քառասունին մոտ* մարդ էր *(ՔԹՈՀ, 50)*։ Դա *վաթսունին մոտ* առույգ, պնդակերով մի տղամարդ էր *(նույն տեղում, 115)*։ *Մոտավորական թիվը արտահայտելու համար թվականը սեռական հոլովով կիրառվում է նաև չափ բառի հետ. օրինակ՝* Երկու շաբաթ հետո *քառասունի չափ* իմ աշակերտներին անունով էի կանչում *(ԱԲԵ, 120)*։ *Համեմատի՛ր.* Հավաքվեցինք *քառասունաչափ* հոգի *(Զմշկյան, 115)*։

Այդպես էլ ընդամենը *բառը, որ ամփոփում, ճշտում է քանակական հատկանիշը. օրինակ՝* Մղդսին *ընդամենը երեք* բարեկամ ուներ *(ՈՊԵ, 655)*։

Ծանոթություն. Մի, մեկ *թվական որոշիչը հատկապես* ուրիշ, այլ, բոլորովին ուրիշ, բոլորովին այլ *որոշիչներից և տարբեր տեսակի (տարօրինակ, զարմանալի, արտակարգ...) ածական որոշիչներից առաջ դրվելով՝ շեշտում, ընդգծում է որոշվող առարկայի առանձնացումը, տարբերությունը և հիշյալ որոշիչների հետ մի ամբողջություն է կազմում. օրինակ՝* Այս անգամ *մեկ բոլորովին ուրիշ* տեսակ հասարակություն կար թատրոնում *(Զմշկյան, 70)*։ *Մի ուրույն* աշխարհ է Մթնաձորը *(ԱԲԵ, 3)*։

Ծանոթություն. 2. Մի թվականը ունի նաև անորոշ դերանվան նշանակություն. օրինակ՝ Մթնաձորի ծերունի անտառապահը *մի* գարունքի տեսել է վարազի կմախքը *(ԱԲԵ, 4)*։

§ *606. Քանակական* հարյուր, հազար, հարյուր հազար, միլիոն *թվականները առանց որևէ որոշիչի կամ տասնյակ թվական որոշիչով կիրառվում են հոգնակի գործիական հոլովով իբրև որոշիչ և ցույց են տալիս այնպիսի առանձին-առանձին քանակներ, որոնք համարվում, հաշվվում են այդ խոշոր թվերով. օրինակ՝* Ապարդյուն կերպով մեռան *հարյուր հազարներով* մարդիկ *(Իսե, 257)*։ *Հազարներով* մարդն ու իր ձին Տակովն եղան կոտորվեցին *(Թումանյան, «Հսկան»)*։

§ *607. Որոշիչ են դառնում նաև դասական թվականները, որոնք, ըստ հաշվի, արտահայտում են որոշյալ առարկայի դասը, կարգը ուրիշ առարկաների շարքում. օրինակ՝* Լավ չեմ հիշում՝ *երկրորդ* թե *երրորդ* դասարանի աշակերտ էի *(Թ., III, 121)*։ Այսպիսով *առաջին* օրերն ու շաբաթներն անցան հուզող կասկածների, ծանր անձնաքննության և վերին աստիճանի տաղտկության մեջ *(Նար., III, 410)*։ Լսվեց *երրորդ* զանգի ձայնը: Վարագույրը բարձրացավ: Կոնցերտի *երկրորդ* բաժինն սկսվեց *(Նար., II, 278)*։ *Առաջին* հայացքը, որ նա

գցեց Զազունյանի·վրա, էր *(նույն տեղում, 257)։ Առաջին* կինը մոտենում է նրան *(ԱԲԵ, 149)։* Էն *առաջին* տարիները, Ղազախը, որ եկել *էր (նույն տեղում, 381)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Առաջին *թվականը կիրառվում է նաև որակական նշանակությամբ, որ առաջացել է հաշվի դասակարգման մեջ առաջին տեղում գտնվողին գերազանցություն տալուց. օրինակ՝* Դպրոցում առաջին աշակերտն է։ Մեր գյուղում առաջին մարդն է։

Սկզբնապես այդ նշանակությամբ կիրառվել է նաև երկրորդ *բառը, որ նշանակել է* երկրորդական, *սակայն այժմ այլևս չի գործածվում. օրինակ՝* Առաջարկել *երկրորդ* դերեր կատարողներին մինչև վաթսուն ռուբլի *(Զմշկյան, 147)։*

§ *608. Հավաքական թվականները սովորաբար գործածվում են իբրև գոյականներ, սակայն չի բացառված դրանց որոշիչային կիրառությունը. օրինակ՝* Եռյակ համաձայնություն, եռյակ միություն, տասնյակ ուսանողներ, մի երկու տասնյակ շենքեր։ *Սրանցից իբրև որոշիչ կիրառվում են՝* տասնյակ, եռյակ, հարյուրյակ։ *Մնացածները անսովոր են։*

Գերի են վերցվում *տասնյակ* հազարներով *(Շիրվ., V, 319)։ Տասնյակ* տարիներ հետո էլ հիշում ես նույնքան պայծառ, ասես երեկ ես տեսել *(ԱԲԵ, 118)։* Մի *տասնյակ* դպրոցական ընկերներս բարձրացրին ինձ... *(ՎՓՀՀ, 53)։* Մրցանակաբաշխության հանդեսից դուրս եկա դափնյա պսակով ու ոսկեկազմ պատկերազարդ *տասնյակ* գրքերով *(նույն տեղում, 54)։*

§ *609. Բաղկացական թվականներն են՝* միավոր, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր *և այլն։ Սրանք բոլորն էլ իբրև որոշիչ անխտիր կիրառվում և ցույց են տալիս առարկայի քանակական այնպիսի հատկանիշ, որ առարկան կարող է ունենալ նշված թվականի մինչև տասն անգամի չափով.* հազարավոր մարդիկ *հասկացողության մեջ մարդկանց քանակը կարող է հազարից մինչև ինն հազար ինն հարյուր իննսունինն լինել. օրինակ՝* Ժամանակ է գտնում... *Հարյուրավոր* մարդկանց մտքերին ու հույսերին տեղյակ լինելու *(ԱԲԵ, 505)։* Թվում էր, թե *հարյուրավոր* ասեղներ ծակծկում են նրա սրունքներն ու ազդրերը *(Քոչար, 288)։ Հազարավոր* բրամիններ քննում են գրքերը *(Ր., I, 408)։ Համեմատի՛ր.* Անհետացավ հայ թատրոնական բեմից այդ ապագա *քառասնանոց* խմբի հետ միասին *(Զմշկյան, 23)։ Քսանավոր* դիտակներ ուղղվեցին դեպի բեմը *(նույն տեղում, 36)։*

§ 610. Իբրև որոշիչ գործածվում են նաև բազմապատկական, կոտորակային և բաշխական թվականները, որոնք արտահայտում են առարկայի բազմապատիկ, կոտորակային և բաշխական քանակային հատկանիշներ. օրինակ՝ Որի համար ես կվճարեմ երկապատիկ գին (Զմշկյան, 19)։ Թատրոնի նախամուտքում ծախում էին եռապատիկ գներով (նույն տեղում)։ Դիմեցի յոթ ու կես ժամին Թիֆլիս քաղաքի թատրոնը (նույն տեղում)։ Առաջիններին առաջարկել ամեն մեկին երկու կես-կես բենեֆիս (նույն տեղում, 117)։ Խոսք չէր, միմի դանակ էր զարկում մարդու սրտի մեջ (ՔԹՈՀ, 40)։ Սովորություն էր ամեն օր ցերեկվա զբոսանքին երկուական խնձոր տալ աշակերտներին (ՎՓՀՀ, 86)։

ե) ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՈՐՈՇԻՉ

§ 611. Բազմաթիվ գոյականներ փոխանակ գոյականաբար կիրառվելու, վերցվում են իրենց ունեցած հիմնական հատկանիշի կիրառությամբ և դառնում են մի այլ գոյականի համար որոշիչ, որ արտահայտում է գերազանցապես որակական հատկանիշը այն առարկայի, որի վրա դրվում է. օրինակ՝ Քար սիրտ ասելով, քար գոյականը վերցնում ենք իր ամուր հատկանիշի փոխարեն, որ դրսևորում է որակական հատկանիշ. քար գոյականը, փոխարինելով հատկանիշին, բնականաբար նրա պաշտոնն է կատարում, որ հետագայում կարող է իմաստային և արտահայտչական բազմազան նրբություններ ձեռք բերել։

Կան գոյական որոշիչներ էլ, որոնք մի առարկա տարբերում, զանազանում են մյուս առարկաներից՝ առանց դրսևորելու նրա որևէ որակական հատկանիշը. հատկանիշը միայն ընդհանուր առումով զանազանումն է. օրինակ՝ Արսեն Տերտերյան ասելով Արսեն հատուկ անունով որոշում՝ առանձնացնում ենք Տերտերյան ազգանունը մյուս բոլոր տերտերյաններից՝ չհիշատակելով տվյալ գոյական ազգանվան որևէ որակական հատկանիշ. իրոք կան այդպիսի որակական հատկանիշներ, և դրանք բազմազան են, բայց ոչ մեկը դրանցից չի առանձնացվում, այլ ընկալվում է լռությամբ այն բոլոր մարդկանց կողմից, որոնք ճանաչում են հիշյալ անձնավորությանը։

§ 612. Որոշիչի պաշտոնով կիրառվում են այն բոլոր հասարակ գոյականները, որոնք ունեն ցայտուն, առանձնապես ընդգծվող, որակական յուրահատուկ մի այնպիսի հատկանիշ, որ իր կարևորությամբ ամբողջովին բնութագրում է որոշյալը և որի համեմատու-

թյամբ տվյալ գոյականի մյուս բոլոր հատկանիշները երկրորդական են։ Երբ այդ ուժեղ հատկանիշը ի վիճակի է հանդես գալու տվյալ գոյականի փոխարեն, այն ժամանակ գոյականը դառնում է որոշիչ։ Կատարվում է յուրահատուկ փոխաբերություն. առարկան արտահայտում է իր գլխավոր հատկանիշը և նմանեցվում է մի այլ առարկայի. օրինակ՝ Ինչպես *ծուխ* օրերս անցան *(Թ. «Տրտմության սաղմոսներից»)։ Պարոն Վարդանը* փոքր *մարդ է (սա անշուշտ արհեստական է. ՍՋՄԿՊ, 375)։* Բայց, ո՞ն, ինչպիսի՞ *դժոխք* ռոպեներ պետք է ապրի նա *(Շեքս., I, 162)։ Գոհար* աստղերի քարավաններն թափառում էին երկնի ճամփեքով *(Իսահակյան)։ Հովեր* կանչեին քարակ հևով, *Երազ* երգեր կը լվին *(Իս., II 27)։*

Հասարակ գոյականները կարող են որոշիչ դառնալ նաև հատուկ անունների համար. օրինակ՝ Ազատել նրան Նատալիայի և *տիկին* Սոփոյի ճալածանքից *(Շիրվ., II, 200)։* Գրավել *օրիորդ* Ռուզանի սիրտը *(Մուր., IV, 176)։*

§ 613. *Որոշիչ են դառնում նաև հատուկ անունները, որոնք կարող են դրվել և՛ հատուկ, և՛ հասարակ անունների վրա. օրինակ՝* Երևում է *Սիմ* լեռան կանաչազարդ շղթան *(Ր., III, 21)։* Իսկ ավելի հեռու, դեպի *Կրկուռ* և *Նեմրութ* լեռների կողմերը, մանիշակագույն ժապավենի նման երևում էր Բզնունյաց ծովակի միայն նեղ ջերտը *(նույն տեղում)։ Անձավներ* գյուղը սա է *(ՎԱՍԱ, 426)։ Սահականույշ* թագուհին ապրում էր Գառնո ամրոցում *(Մուր., II, 10)։ Գոհար* Մարզպետունի *(նույն տեղում, 6)։ Այդպես ասվում է՝ Գևորգ* Մարզպետունի, *Վասակ* Սյունի, *Գրիգոր* Կամսարյան *և այլն։ Բոլոր անունները ազգանունների համար որոշիչ են, սակայն ճիշտ կլինի դրանք միասին դիտել իբրև մի ամբողջություն։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. 1. Հատուկ անունները կարող են իբրև որոշիչ դրվել նաև այլ խոսքի մասերի վրա, բայց այս դեպքում այդ տարբեր խոսքի մասերը կիրառվում են իբրև գոյական. օրինակ՝ Աշոտ Ողորմած, *Տիգրան Մեծ, Դավիթ* Ուրացող, *Սահակ* Պարթև *և այլն, որոնք հնից են գալիս, որոնց նմանությամբ հետագայում էլ կազմվել են այդ կարգի կապակցություններ։ Այս վերջին կապակցությունները նույնպես պետք է դիտել իբրև մի ամբողջություն։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2. Գոյականներն իբրև որոշիչ կիրառվում են առանց հոդի. հոդով որոշիչ գոյականը բռնազբոսիկ է և մեր լեզվի ոգուն հակառակ։ Համեմատի՛ր. Հավատա-

ռիմ *ծառան* Սոկրատ էր արքայի ավան-շավան (*Թ., II, 283*), *որտեղ հնարավոր է, որ* ծառան *չլինի որոշիչը, այլ ետադաս* Սոկրատ *հատուկ անունը*։

§ *614. Գոյականները դյուրությամբ որոշիչ են դառնում նաև գործիական հոլովով, որ ցույց է տալիս առարկայի այնպիսի արտաքին կամ ներքին մի ունեցվածք, որ առարկան իր վրա կրում է ի բնե և կամ արհեստական կերպով, որոնցով իսկ նա որոշվում, տարբերվում է իր տեսակի մյուս առարկաներից. օրինակ՝* Սև երկար սյուրտուկով, սև տաբատով, սև փողկապով, սև փայլուն կոշիկներով, սև ձեռնոցով, սև եբենոսե ձեռնափայտով, նույնպես և թանաքի պես սև ներկած մազերով ու հոնքերով և, վերջապես, սև երկար փարթամ ընչացքով մի մարդ էր նա (*ՎՓՀՀ, 47*)։ *Համեմատի՛ր.* «Սպիտակ ճակատով շնիկը», «Սարավութով տունը», «Պատյանով մարդը», «Շնիկով տիկինը» (*Չեխով, Ընտիր երկեր, II, 202, 209, 274, 415*)։

Ծանոթություն. Բացառական հոլովով բաղդատությամբ ասվում է՝ քաջերից քաջը, գազաններից գազանը, հերոսներից հերոսը։ *Համեմատի՛ր.* Ընտրի, զարկի ձեռքիդ խընձորն *անհաղթներից անհաղթին*, Որ ողջ աշխարհ մայիլ մնա անզուգական քո բախտին (*Թ., «Փարվանա»*)։ *Այսպիսի կապակցությունները, որ կազմվում են միևնույն բառով, արդեն մի ամբողջություն են ներկայացնում և որոշիչի ու որոշյալի հարաբերությունն աստիճանաբար մթնում է, մանավանդ գոյականները բացառական հոլովով մեծ մասամբ դառնում են թվականների, դերանունների որոշիչ. օրինակ՝* Ես չգտա ոչ մեկին երազներից իմ շքեղ և ոչ մի մարդ, ոչ մի կին հերոսներից իմ շքեղ (*Թումանյան*)։

§ *615. Եթե որոշյալը բայից կազմված որևէ գոյական է, նրա կապով խնդիրը փաստորեն դառնում է հենց իր համար որոշիչ. օրինակ՝* Առաջին և երկրորդ կետերի վերաբերմամբ հաղորդելիքս թերի պիտի լինի (*Մուր., II, 264*)*. Սովորաբար որոշիչ են դառնում* պես, նման, չափ *կապերը իրենց կապակցություններով հանդերձ և ցույց են տալիս որոշյալի և կապի խնդրի որակական և քանակական նմանությունը, զուգադրությունը. իսկ այս դեպքում կապի խնդիրները մեծ մասամբ անձնական դերանուններ են. օրինակ՝* Ձեր հայրը կենդանի է դեռ, քանի որ ունի *ձեզ պես* զավակներ

(ՂԱԵ, 189)։ Այդ ռոպեին *գժի պես* մի բան էի *(ՌՊԵ, 672)*։ Այդ երկիրը պատկանում է *մեզ նման* աշխատավորներին *(Ալաջաջյան, «Անապատում»)*։ Երբ մի որևէ *ինձ պես* հարուստ օրիորդի հագին տեսել եմ մի որևէ նորաձև շրջազգեստ *(Նար., II, 188)*։ Պարահանդես էին տալիս ու պատիվ *իրենց նման* ուրիշ ողորմելիների *(ՎՓՀՀ, 55)*։ *Տան իմ չափ* եռանդ ունիս *(Շիրվ., V, 31)*։

§ 616. Զանազան ձևերով որոշիչ են դառնում նաև մյուս խոսքի մասերը, որոնք առանձնակի երևույթներ են և երբեմն էլ պատահում են այս կամ այն լրացման ու որոշիչի միջև, այսինքն՝ պատկանում են այնպիսի լրացումների շարքին, որոնք համատեղում են տարբեր պաշտոններ. օրինակ՝ Հետո *դում-դում* մի ձայն եկավ *(ԱԲԵ, 269)*։ Թիֆլիսը *իսկ և իսկ* Կովկասի մայրաքաղաք է *(Մուր., II, 264)*։ Այդ ինձ համար *չափազանց* մեծ շնորհ է *(Ր., III, 354)*։ Ժլատները առհասարակ չունեն հայրական զգացմունք, ինչպես չունեն և ոչ մի ուրիշ լավ *«ական»* զգացմունք *(Նար., I, 411)*։ Դամիենը իր պատասխանի մեջ գործ էր ածում *«մենք»* բառը *(ՄՆ, II, 137)*։ *Մշտապես* հալածանքներից հետո եկել է պատերազմ *(Շիրվ., V, 225)*։ Եվ բոլոր վերջերի *վերջ* այդ բազմիմաստ *լռությունը* մնում էր երկար բեմի և սրահի վրա *(ՎՓՀՀ, 118)*։

գ) ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 617. Որոշիչը լրացում է, իսկ որոշյալը՝ լրացյալ. նախադասության մեջ առաջինը ստորադասվում է երկրորդին։ Այդ ստորադասումը բազմաթիվ լեզուներում արտահայտվում է նրանով, որ որոշիչը սեռով, թվով ու հոլովով համաձայնում է իր լրացյալ որոշյալի հետ. այսինքն՝ եթե որոշյալը եզակի, ուղղական հոլովով և արական սեռով է դրված, որոշիչը պարտադիր կերպով նույն ձևերով է արտահայտվում։ Հայերենում համաձայնության այս օրենքը շատ հնուց գոյություն չունի։ Ամենից առաջ նշենք, որ որոշիչը երբեք հոգնակի չի կիրառվում. եթե որևէ խոսքի մաս հոգնակի թվով որոշիչ է դառնում, այն դիտվում է իբրև եզակի։ Բացի գործիական հոլովից, որ սկզբնապես եղել է ձևի պարագա, մյուս թեք հոլովներով մեր լեզվի որոշիչները գրեթե չեն արտահայտվում։ Միակ օրինաչափական որոշիչը բառի ուղիղ ձևն է. ուղղական չենք ասում, որովհետև որոշիչը կորցրել է իր հոլովական հատկանիշը։ Նրա ձևը յուրահատուկ որոշիչային ձև է, որ համընկնում է ուղղականին, ա-

վելի ճիշտ՝ պատմական որոշ պարզացման հետևանքով որոշիչ է մնացել բառի ուղղական ձևը, որը, անշուշտ, գերիշխող ձև է եղել իր գործածության հաճախությամբ։

§ 618. Հայերենում, ինչպես նկատվեց, հոլովի, սեռի համաձայնություն որոշիչի և որոշյալի միջև գոյություն չունի։ Իսկական քերականական տեսանկյունով չկա նաև թվական համաձայնություն, միայն մի շարք ածականներ, թվականներ, դերանուններ դառնալով որոշիչ՝ հաճախ պահանջում են հոգնակի որոշյալ։ Ուրեմն ոչ թե որոշյալն է իր թիվը պարտադրում որոշիչին, այլ, ընդհակառակը, որոշիչը եզակի լինելով, բայց ունենալով հոգնակի նշանակություն, իր իմաստը պարտադրում է որոշյալին և վերջինս այդ հոգնակի իմաստը արտահայտում է հոգնակի ձևով։ Նշենք նաև, որ նկատված երևույթը նույնպես բացարձակ օրենք չէ, այլ պայմանական բնույթ է կրում։ Ամենից առաջ որոշյալի հոգնակի լինելը պայմանավորվում է նրա այս կամ այն խմբի մաս լինելով, այդ խմբի մասի բնույթով (վերացական, թանձրացական, երևույթ, իր, հավաքական, հատով համարվող, չափվող, կշռվող և այլն)։

Որոշյալի հոգնակի կամ եզակի գործածությունը որոշիչ ածականներով, թվականներով, դերանուններով՝ կապվում է նաև անհատական ըմբռնումների հետ, մասամբ վճռվում է հողառությամբ, որոնց հիմունքն էլ, սակայն, այն է, թե երբ այսինչ կարգի գոյական որոշյալը հոգնակի է կիրառվում, իսկ մյուս կարգը եզակի, ապա փոխանցումներ մի կարգից մյուսը դառնում են բնական, և որոշակի սահմանները խախտվում են։

§ 619. Մի շարք ածականներ, որոշիչ դառնալով, թանձրացական հատով արտահայտվող իրերի, անձերի համար, մեծ մասամբ պահանջում են, որ որոշյալները դրվեն հոգնակի։ Այդպիսի ածականներից են՝ շատ, բազմազան, բազմատեսակ, այլազան, բազմաթիվ, տարբեր, զանազանաձև, բազմապիսի *և նույն տիպի մի քանի ուրիշներ. օրինակ՝ Շատ* զարմանալի պատմություններ էր անում *(Թ., III, 349)։ Բազմաթիվ* ձեռքեր բահերով ու բրիչներով հարթում էին նրա ուղին *(Ր., III, 324)։* Ինստիտուտի *տարբեր* ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողներ էին *(ԳՍԹ, I, 238)։* Եվ հին ժամանակ էլ ռուսական բանակում *շատ* հայեր կային *(Քոչար, 335)։ Բազմաթիվ* ուրիշ բժիշկներ ասել էին *(ԳՍԹ, I, 211)։* Լևոնն զգում էր իր մարմնի վրա *բազմաթիվ* առվակների հոսանք *(ՆԶՀ, 241)։ Բազմապիսի* ուտելեղեններով *(Նույն տեղում, 267)։* Նա իր վարքով

տարբեր բամբասանքների համար նյութ էր (*ԳՍԹ, II, 61*)։ Կոմերիտականը չի քաշվի հիշատակել *բազմաթիվ* փաստեր (*ՆՁՀ, 192*)։ *Զանազանաձև* սնդուկներ (*ՁԸԵ, 300*)։ Մեկից ավելի *շատ այլազան* նախապայմաններ ունի մտնելու համար (*ՎՎՀՀ, 166*)։ Եզրիցն սկսած՝ խոփիվ մազերի պես դուրս է ցցվում իր խորշերից բազմատեսակ ծաղիկներ (*Փափ., 184*)։ *Տարբեր ըմբռնումով է գրված*՝ Բայց նրանց կհետևի *բազմաթիվ թշնամին (այսինքն՝ բազում թիվ ունեցող թշնամին. Մուր., IV, 232)*։

Վերացական գոյականները հիշյալ ածական-որոշիչների հետ կարող են նաև եզակի գրվել. օրինակ՝ Տարբեր ուղղությամբ վազում էին (*ՔԹՈՀ, 28*)։ *Բազմաթիվ անգամ* զնդան է նետվել (*Քոչար, 244*)։ Վերջին օրինակի *մեջ կարելի է նույնիսկ* բազմաթիվ անգամ *համարել մի ամբողջական ձևի պարագա, այնքան որ* անգամ-*ը կորցրել է իր թանձրացական նշանակությունը*։

Ծանոթություն. Եթե տարբեր *նշանակում է* այլ, *ապա դրա որոշյալը կարող է նաև եզակի գրվել. օրինակ՝* Ճակատագիրը, սակայն, *տարբեր* ուղի էր գծել իմ կյանքին (*ՎՓՀՀ, 168*)։

§ 620. *Կրկնությամբ կազմված մի շարք ածականներ ստանում են հոգնակի նշանակություն և որոշում են այնպիսի առարկաներ, որոնք շատ են և դիտվում են իբրև միևնույն առարկաների տարբեր տեսակներ, առանձին-առանձին հատկանիշներ ունեցողներ։ Բայց կրկնությունը պետք է ցույց տա բազմազանություն և ոչ թե ուժեղացում։ Կրկնությամբ կազմված այդպիսի ածականներ են՝* փունջ-փունջ, տեսակ-տեսակ, մեծ-մեծ, հին-հին, հաստ-հաստ, լավ-լավ, նոր-նոր, սուր-սուր, քիչ-քիչ, խոր-խոր *և այլն. օրինակ՝* Ահա *փունջ-փունջ* դրանիկներ, նաժիշտներ (*Թ., «Փարվանա»*)։ *Շարե-շար*, անվերջ միահարկ տներ (*ՀՀԵ, 227*)։ *Զանազան* գործեր (*Ընտ. էջեր, 441*)։ *Շարեշար* հպարտ, գեղեցիկ, սիրուն գործարաններ են վեհապանծ իշխում (*ՀՀԵ, 223*)։ Տեսակ-տեսակ լուրեր լսեցին (*ԻՊԵ, 652*)։ *Խուլ-խուլ հսկաներ հնոց աշխարհի* (*Թ., II, 46*)։ Անցել են որպես ծաղկունքը *պես-պես* (*նույն տեղում, 47*)։ *Փունջ-փունջ* աղջիկներ սարերը ելան (*նույն տեղում, 54*)։ *Հին-հին* դարուց հիշատակ Այյաց մեջը պտրում եմ (*ՌՊԵ, 68*)։ Անցնում էին *հատ-հատ* սայլեր (*Քոչար, 272*)։ Նա էլ *հին-հին* գրքեր սիրող մարդ է (*նույն տեղում, 333*)։ *Նոր-նոր* մարդիկ են գալիս նրա մոտ (*Շիրվ., V, 200*)։ *Այսպես ասվում է՝ լավ-լավ* ջրեր, *քիչ-քիչ* գործեր, *սուր-սուր* փշեր, *պես-պես* ձևեր, *տեսակ-տեսակ* գույներ, *խումբ-խումբ* մարդիկ, *մեծ-մեծ* խոսքեր *և այլն*։

291—16

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Ճիշտ չէ գրել՝ Սեղանի վրա դրված էր *զանազան ուտելիք (ԳՍԹ, II, 202)։*

§ *621. Իսկ այն գոյականները, որոնք հատով չեն համարվում, առանձին-առանձին առարկաներ չեն, այլ գոյական են իրենց ամբողջության մեջ, այդպիսիները կրկնվող որոշիչներից հետո կարող են նաև եզակի դրվել. օրինակ՝—* Ինչո՞ւ, ասավ, սոխակ սիրուն, Ինչո՞ւ կուլաս *կուց-կուց* արուն *(Թ., «Սոխակի վիշտը»)։* Գանձարանից *բուռ-բուռ* ոսկին վերցնում է *(ԳՍԹ, I, 14)։*

§ *622. Բաղհյուսական հարադրությամբ կազմված մի քանի ածականներ, որոնք ստանում են կրկնական ածականների նշանակություն, նույնպես որոշիչ դառնալով ստանում են հոգնակի որոշյալ. օրինակ՝ Հատ ու կենտ* անմարդաբնակ թվացող խրճիթներ *(ԳՍԹ, I, 96)։ Հատ ու կենտ* ձայները շուտ-շուտ մարում էին *(ՔԹՈՀ, 21)։* Ինչո՞ւ ես *ավել-պակաս* բաներ ասում *(Նույն տեղում, 44)։* Նրա գլխում ծնվող *թեր և դեմ* մտածմունքները մի կատարյալ քաոս էին ներկայացնում *(Նար., II, 379)։*

§ *623. Եթե բազմակի որոշիչները չեն վերաբերում միևնույն առարկային, այլ մեկը վերաբերում է մի առարկայի, իսկ մյուսը՝ նույնանման մի այլ առարկայի, ապա որոշյալը հոգնակի է դրվում. օրինակ՝* Միջանցքի *աջ ու ձախ* դռները տանում են դեպի երկու ընդարձակ սենյակներ *(ՆԶՀ, 467)։* Իսկ սեղանին կային *կիսատ* ու *դատարկ* շշեր *(Քոչար, 467)։* Ստացվել են *բուրումնավետ* ու *դեկորատիվ* բույսերի սերմեր *(Նույն տեղում, 472)։* Աջ ու *ձախ* պատերից կախված էին *մանր* ու *խոշոր* կտավի յուղանկարները *(ԳՍԹ, I, 70)։ Մետաքսե* ու *ատլասե* շրջազգեստներ *(Նույն տեղում, 78)։* Վազում էին *դեղին, կարմիր* լույսեր *(ՔԹՈՀ, 28)։* Այգիները ձուլվում էին *կանաչ, դեղին, կարմրաբոսոր* գույների հետ *(Նույն տեղում, 34)։*

§ *624. Իսկ եթե բազմակի որոշիչները վերաբերում են միևնույն կենտ առարկային, ապա պարզ է, որ որոշյալը կգործածվի ըստ իմաստի, ըստ խոսողի, գրողի ցանկության. օրինակ՝* Իմ *սուրբ, արթուն* ականջում, Մի խոր ձեն է ինձ կանչում. *Անհուն, անքուն* կարոտով Իրեն մոտ է ինձ կանչում *(Թումանյան)։* Հապա ինչու դու օրն ի բուն, էս *լուս* ու *մութ* առավոտուն, էս շատ անուշ զով հովերուն Ախ ու վախով կուլաս արուն *(Թ. I, 162)։*

§ *625. Եթե միանման առարկաների որոշիչները երկու կամ*

ավելի տարբեր հասարակ ու հատուկ գոյականներ են, ապա դրանց որոշյալը դրվում է հոգնակի. օրինակ՝ Բակում խաղում էին *տղա* ու *աղջիկ* երեխաներ: *Աստղիկ և Սիրանույշ* քույրերը *(Զմշկյան, 167)*: *Երևան և Լենինական* քաղաքները: Տեր ու տիկին Մարկոսյանները:

Երբ ազգանունը դառնում է երկու տարբեր անձնավորությունների որոշիչ, որոշյալը կիրառվում է հոգնակի. օրինակ՝ Գրիմմ եղբայրներ, Գոնկուր եղբայրներ, Աստղիկ քույրերը: *Զմշկյանը գրում է նաև՝* Աստղիկներ քույրեր *(Զմշկյան, 166)*:

§ *626.* Մի խումբ, մի շարք, մի կարգ *կապակցությունները որոշիչ լինելով պահանջում են հոգնակի որոշյալ. օրինակ՝* Չնայած նրա *մի շարք* ավելի քան խստագույն հրամաններին *(ՉԸԵ, 386)*: *Մի շարք տարիներ* շրջանը չի կատարում պետական առաջադրանքները *(ՍՀ, 1953, № 298)*: *Մի շարք* կոպիտ կատակներից բացի *(ԳՍԹ, I, 76)*: *Մի խումբ մարդիկ* աղմկում էին *(նույն տեղում, 115)*: Գյուղից սլացան *մի խումբ կտրիճներ (Թ., II, 65)*:

§ *627. Եթե վերոհիշյալ որոշիչների որոշյալը այնպիսի գոյական է, որ հոգնակի չի գործածվում, հոգնակին մի այլ նշանակություն ունի, հավաքականություն է արտահայտում, վերացական բառ է և այլն, ապա եզակի է դրվում. օրինակ՝* Վերջին ժամանակները ոչ միայն իտալական, այլև *եվրոպական, ամերիկյան ամբողջ* մամուլը խոսում էր այդ նոր փայլուն աստղի մասին *(Նար., VII, 125)*: *Տնտեսական և կուլտուրական* շինարարությունը ավելի լավ կազմակերպելու համար *(ՍՀ, 1953, № 110)*: *Իսկ եթե որոշյալը ցույց է տալիս առանձին մարմիններ, ապա հոգնակի է կիրառվում. օրինակ՝ Շրջանային, քաղաքային և գյուղական Սովետներից* շատերը արդեն ամփոփել են ընտրողների նակազները *(ՍՀ, 1953, № 110)*:

Եթե այս կարգի որոշիչները անջատվում են անջատական շաղկապներով, ապա որոշյալը կարող է եզակի դրվել. օրինակ՝ Շրջանային կամ գյուղական Սովետը. թե՛ կարմիր և՝ թե՛ սպիտակ գույնը. ոչ թե լավ, այլ վատ ընկերն է արել *և այլն: Պետք է նկատի առնել, սակայն, որ առանձին որոշիչներ հոգնակի սորոգյալ չպահանջեն: Համեմատի՛ր.* Պեգասը գչլում է եղել մի քանի ծաղիկ *սպիտակ* կամ *կարմիր* առվույտից *(ՂԱՀ, 127)*:

§ *628. Անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում էլ որոշակի սահմանումները հաճախ խախտվում են. եզակին արտահայտում է բառի ավելի ընդհանուր, հավաքական և վերացական լինելը, իսկ դրա*

համեմատությամբ հոգնակին առավել թանձրացական է, ուստի համաձայնության համար մեծ նշանակություն է ստանում որոշյալի բնույթը։ Սրանից դուրս կան և այլ հանգամանքներ. խոսողը հաճախ ինքն է որոշում հոգնակի և եզակի լինելու հանգամանքը. օրինակ՝ կարելի է ասել՝ Մեր երկրի *միջնակարգ* ու *բարձրագույն* դպրոցը *(դպրոցը վերցնելով իբրև հավաքական, ընդհանրացնող հասկացողություն), և՝* Մեր երկրի *միջնակարգ* և *բարձրագույն դպրոցները (առանձնացնելով միջնակարգ ու բարձրագույն դպրոցները և շեշտելով քանակական կողմը)։*

է) ԹՎԱԿԱՆ-ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

§ *629. Հայերենում առավել հեղհեղուկ է քանակական թվական-որոշիչի և որոշյալի համաձայնությունը. օրինակ՝ քանակականներից միայն մեկ թվականի որոշյալն է հաստատուն. մնացած բոլոր քանակականները կարող են և՛ եզակի, և՛ հոգնակի որոշյալ ունենալ. այս դեպքում վճռական դեր են խաղում որոշյալի բնույթը և խոսողի ըմբռնումը տվյալ որոշյալի նկատմամբ։*

Մեկ *թվական որոշիչը առնում է եզակի որոշյալ, իսկ* երկու *և դրանից բարձր որոշիչները համաձայնում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի որոշյալների հետ։*

§ *630. Այն բառերը, որոնք արտահայտում են ժամանակային, տարածական, չափի, գնի, արժեքի, կշռի և նման հասկացողություններ, թվական որոշիչ ունենալով՝ գերազանցապես եզակի են կիրառվում, մանավանդ երբ դրանք նախադասության մեջ պարագաների կիրառություն ունեն. օրինակ՝ ասվում է երկու* կիլոգրամ, հինգ մետր, քսան րոպե, տասնհինգ կոպեկ *և այլն։*

Նվիրում եմ երկուսից մինչև հինգ աշխոր *(ՆԶՀ, 349)։* Յոթից ինը կիլոմետրի չափ հեռանում է Վոլգա քաղաքից *(Քոչար, 132)։* Հյուրանոցի դեպքից երկու օր հետո նա արդեն ուղևորվում էր իր բնակավայրը *(Նար., II, 404)։* Երբ մի ձիավոր արշավակի մեկնի մի ծայրից՝ մյուսին կհասնի միայն հինգ հարյուր տարվա ընթացքում *(Փափ., 472)։* Նստել հիսուն թուման է պահանջում *(Նույն տեղում, 463)։* Ձայնը հայրենի երգի, բարբառի Հնչեց քո երկրում տասնհինգ տարի *(ՁԸԵ, 278)։* Ոսկը միլիոնեն ավելի է և ապահով կեցած է տերության բանկում *(ՌՊԵ, 417)։* Իսկ այս հինգ հարյուր մանեթը ստացել ինձնից *(Նույն տեղում)։*

§ *631. Թվական որոշիչի հետ համարյա միշտ եզակի են կիրառվում*՝ անգամ, թվական, ամբողջ, հատ, թիվ, տոկոս, տակ, մաս, աստիճան, տարեկան *և այս կարգի այլ բառեր, որոնք թվական որոշիչի հետ կազմում են նախադասության մի երկրորդական անդամ. օրինակ*՝ Երեք ժամ մեջլիսում սուտ խոսեցի, *երեք տակ* ֆռռնեցի, գնացի տուն. *երեք անգամ* սպիտակեղեն փոխեցի... *Երեք զույգ* էլ հետս բերել եմ այստեղ *(ԳՍԹ, I, 76)*։ Նրա *չորս բոլորը* պտտվում էին *(ՆԶՀ, 331)*։ *Ինը մասից* մյուս հինգը չեն կարող ողորմել *(Փափ., 360)*։ Հետո հանեց գրպանից և *տասնհինգ հատ* հին դրամներ համրեց ծախողի բաց ափի մեջ *(նույն տեղում, 337)*։ Տոկոսով առել էին... *քառասուն տոկոսով (նույն տեղում, 101)*։ Մինչև *1868 թվականը*... դեռևս կարելի էր տեսնել *(Փափ., 52)*։

Այսպես էլ, երբ որևէ գոյական թվականի հետ միասնաբար դառնում է մի ուրիշ գոյականի համար որոշիչ, թվականի հետ միասնաբար հանդես եկող այդ գոյականը եզակի է գործածվում. օրինակ՝ *Հազար տեսակ* ցավի տուն է *(Թ., II, 154)*։ Տարեկան *հարյուր քսան խարվար* ցորեն, *քառասուն-հիսուն խարվար* գարի, *մի քսան խարվար* կորեկ *(ԳՍԹ, I, 89)*։ Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից *երկու կտոր շաքար* պակասեց *(Նար., I, 63)*։ Երբ *հարյուր մանեթ առնելիք* ունենաս *(Փափ., 333)*։ Դրա համար ստանում էր *մի սոմար ցորեն, երեք գրվանքա* շաքար *(ԱԲԵ, 10)*։ *Այսպես ասվում է*՝ երկու փութ ցորեն..., երեք, հարյուր խուրձ խոտ, քսան թև հավ, երկու կտոր շաքար, երկու ձեռք հագուստ *և այլն*։

§ *632.* Տունչ, հոգի, անձ *բառերը ունենալով թվական որոշիչ, գերազանցապես եզակի են գործածվում. օրինակ*՝ *հինգ հոգով* իրար կողքի պառկեցին *(Քոչար, 291)*։ *Երկու հոգի* այս պահուն ծառերի տակովն անցան *(Թ., III, 19)*։ Մեր ընտանիքը բաղկացած է երեք շնչից *(ՐԿ)*։ Նրանք վեց անձ են *և այլն*։

Այս ձևով մեծ մասամբ եզակի են կիրառվում մարդ, կին, աղջիկ, տղա, երեխա, *մանավանդ երբ այս վերջին երեքը նշանակում են զավակներ. օրինակ*՝ Հազար մարդի մոտ կերթա, կխոսա *(Թ., II, 51)*։ Երկու տղամարդ, երեք կին *(ԳՍԹ, I, 227)*։ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1953 թ. մարտի 6-ի հրամանով, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության անունից պարգևատրվել են Երևանի Կիրովյան, Մոլոտովյան ռայոնների *ութ երեխա* ծնած ու դաստիարակած մայրերը *(ՍՀ, 1953 թ., № 69)*։ *Այս ձևով հայրը կամ մայրը երբեք չեն ասի*՝ հինգ աղջիկներ ունեմ, երեք տղաներ, այլ հինգ աղջիկ, երեք տղա, չորս երեխա *և այլն*։

§ 633. Մ. Աբեղյանը նկատել է[1], որ մեկից ավելի թվականների հետ անորոշ բառերը իբրև որոշյալ սովորաբար եզակի են դրվում, իսկ որոշվածները՝ հոգնակի։ Այժմ այս տարբերությունը առանձնապես չի զգացվում։ Առհասարակ թվական որոշիչի հետ որոշյալը թե՛ եզակի և թե՛ հոգնակի է կիրառվում. մեկի կամ մյուսի գերազանցությունը կապված է բազմաթիվ պայմանականությունների հետ, որոնք մասամբ ունեն քերականական, մասամբ էլ իմաստային արժեք։ Որոշ հոլովներով գոյականներ թվականի մոտ ավելի վայելուչ են հոգնակի, կամ ընդհակառակը. օրինակ՝ չորս կին, հինգ տղամարդ, վեց երեխա, բայց չորս կանանցից, չորս կանանց, վեց երեխաներով, հինգ մարդկանցից. ուրեմն մի դեպքում վայելուչ է եզակին, մյուս դեպքում հոգնակին։

§ 634. Կան մի շարք բառեր, որոնց հոգնակին դժվարությամբ է կազմվում, ուստի այդպիսի բառերը գերազանցապես թվական որոշիչի մոտ եզակի են կիրառվում. օրինակ՝ երեք հյուսն, հինգ վարգ, երկու կղեր, չորս դուստր և այլն։

§ 635. Թվականի մոտ հոգնակի և եզակի որոշյալի գործածությունը պայմանավորված է նաև ամբողջ նախադասության ընդհանուր, և առանձին հոլովների արտահայտած թանձրացական նշանակություններով։ Եթե որոշյալների միջև գոյություն ունի հակադրություն, դրանք արտահայտում են փոխադարձ գործողություններ և այնպիսի հանգամանքներ, որոնք գրողի, խոսողի միտքը բևեռում են քանակական կողմի վրա, մեծ մասամբ որոշյալը թվականի մոտ հոգնակի է կիրառվում։ Սրան հակադիր՝ եթե առարկաների միջև գոյություն ունի միասնություն, չկան փոխադարձ հակադրվածություն, առանձին մասնակի առնչակցություններ, ապա որոշյալը եզակի է գործածվում։ Որոշ տարբերություններ դրսևորում են նաև շնչավոր և անշունչ առարկաները. այս վերջինները ավելի են հակվում հոգնակին։

Կենդանի խոսքի մեջ թվականի որոշյալը սովորաբար եզակի է. հոգնակին ավելի գրքային բնույթ ունի։ Իբրև օրինակ բերում ենք մի շարք նախադասություններ, որոնց մեջ մասամբ արտահայտվում են վերևում նկատված մեր դիտողությունները։ Հազար ու մի միտք գալիս անցնում էր նրա գլխով (ԱԲՆ, 11)։ Մի քանի հարյուր քայլ դեպի ձախ (Փափ., 385)։ Հազար ծառայից, հազար կանանցից և տասը մինիստրից բացի (ԳՍԹ, I, 137)։ Զաքին վերադարձավ

[1] Մ. Աբեղյան, «Աշխարհաբարի շարահյուսություն», 179։

չորս փաթեթ ձեռքին։ *Երկու շարքային* նարդի էին խաղում։ *Երեք ուսանողուհի գնում էին ինստիտուտ* (*Նույն տեղում*, 4, 27, 39, 42, 60, 78 *և այլն*)։ Փայլփլում էր արտասուքը *երկու կանանց* բիբերում։ *Ճանապարհի երկու կողմերից* վազող առվակներ։ Միջանցքի աջ ու ձախ դռները տանում էին դեպի *երկու* ընդարձակ *սենյակներ*։ Երկու ձեռքով։ Երկու քարտուղարների *տարբերությունը*։ Բնում *չորս արագիլ* էին՝ հայրն ու մայրը *և երկու ձագ* (*ՆՋՀ*, 401, 241, 243, 183, 195,383 *և այլն*)։ *Երեք նախարարներ* փաստորեն անցան Վասակի կողմը (*ԴԴՎ*, 63)։ Հազար չար ու շառ, հազար հարամի, հազար ջահելներ վխտում են հիմի (*Թ.*, *II*, 52)։ Գոռում են գոչում *երկու բանակից* (*Նույն տեղում*, 58)։ *Երկու* մարդկային սև կերպարանքներ (*Նույն տեղում*, 62)։ Սկսվեց անհավասար կռիվ երկու անզեն (*կանանց*) և *երեք ավազակների* միջև (*Շիրվ.*, V, 56)։ *Հսկայի մուրճեր հազար բողոքով* աղմկում էին (*ՀՀԵ*, 204)։ Անցել են *վեց* երկար *տարիներ* (*Մուր.*, *IV*, 327)։ Եվ թվում է ինձ *կրակներն հազար* հարազատներիս աչքերն են անմար (*Բորյան*)։ Տեր Թոդիկի դպրոցում *հազար ու մեկ* խստություններ, հազար ու մեկ կանոններ կային (*ՐԿ*, 278)։ Հազար ու մի փորձանք (*Թ.*, *III*, 95)։ Իմանալու համար *հազար ու մի լուր* (*ԱԲԵ*, 505)։

•

ը) ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՄՅՈՒՍ ԹՎԱԿԱՆՆԵՐՈՎ ՈՐՈՇԻՉԻ ՈՒ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ *636. Դասական թվականները, որպես որոշիչ կիրառվելով, պահանջում են եզակի որոշյալ. օրինակ՝* Մի հանգամանք, որ *քսաներորդ դարից* է գալիս (*ԶԸԵ*, 299)։ Ուղղված է *12-րդ* խալիֆային (*Փափ.*, 479)։ Աշխարհ եմ գալիս ես՝ *երրորդ* արական *զավակս* (*Ջմշկյան*, 4)։

Իսկ եթե երկու կամ ավելի դասականներ են վերցվում իբրև որոշիչ, ապա որոշյալը հոգնակի է. օրինակ՝ Հաշվառման-էկոնոմիկական ֆակուլտետների *I—V կուրսերում* սովորում են հինգ հարյուր վաթսուն մարդ (*ՍՀ*, 1953, № 298)։ Որոնք 18—19-րդ *դարերում* պատրաստվել են տարբեր երկրների գործարաններում (*Նույն տեղում*)։ Առաջին և երկրորդ կետերի վերաբերյալ (*Մուր.*, *II*, 264)։

Երբ դասական թվականը իբրև որոշիչ է վերցվում մի ամբողջ խումբ առարկաների համար, ապա որպեսզի քանակը արտահայտ-

վի, որոշյալը դարձյալ հոգնակի է դրվում. օրինակ՝ Էն *առաջին տարիները* Ղազախը որ եկել էր (*ԱԲԵ, 381*)։

§ *637. Բաղկացական*՝ հարյուրավոր, միլիոնավոր, տասը հազարավոր, հարյուր հազարավոր, տասնյակ հազարավոր *թվականները սովորաբար հոգնակի որոշյալ են պահանջում. օրինակ*՝ Նրա յուրաքանչյուր տանջանքն ինձ համար *հազարավոր տանջանքներ* արժե (*Նար., IV, 38*)։ Ինչ պիտի անեն այն *հարյուրավոր հարսունք*, ով պիտի մխիթարե այն *հազարավոր մանուկներին* (*Մուր., IV, 236*)։ Այս ու այսպիսի *հազարավոր* մտքերի ճնշման տակ (*Նար., III, 410*)։ Թվում էր, թե *հարյուրավոր* ասեղներ ծակծկում են նրա սրունքներն ու ազդրերը (*Քուչար, 288*)։ Տասնյակ հազարավոր անգործներ, տասնյակ հազարավոր մարդիկ խեղդվում են (*ԳՍԹ, I, 185, 206*)։ Մինչ այդ *հարյուրավոր դեպքեր* էին եղել։ Որոնք կլանում էին *միլիոնավոր մարդկանց* կյանքը (*Նույն տեղում, 211, 215*)։

§ *638. Նույն ձևով հոգնակի որոշյալ են պահանջում գործիական հոլովով կազմված բաղկացական*՝ հազարներով, տասնյակ հազարներով, հարյուրներով *թվականները. օրինակ*՝ Ապարդյուն կերպով մեռան *հարյուր հազարներով* մարդիկ (*Իսհ, 257*)։ Հազարներով *մարդն ու իր ձին (այստեղ Թումանյանը բազմակի որոշյալներ է դրել, և դրանք առանձին-առանձին հոգնակի են մտածվում)* տակովն եղան կոտորվեցին (*Թումանյան*)։

§ *639. Երբ այս թվականները վերաբերում են այնպիսի որոշյալի, որ հավաքական բառ է, այսինքն՝ եզակի ձևով հոգնակի նշանակություն ունի, ապա այս վերջինը կարող է եզակի դրվել (եթե առանձին-առանձին հավաքական խմբեր չեն). օրինակ*՝ Եվ մենք երեքս պիտի պաշտպանեինք հազարավոր խուժանի դեմ հարյուր քսան հազարի ապրանք (*Շիրվ., V, 35*)։

§ *640. Հավաքական*՝ տասնյակ, մի տասնյակ, երկու տասնյակ, երեք տասնյակ, հարյուրյակ *թվականները որոշիչ դառնալով գերազանցապես հոգնակի որոշյալ են ընդունում. օրինակ*՝ Կապկի ճարպկությամբ դուրս պրծավ *տասնյակ ձեռքերից* (*Շիրվ., V, 37*)։— Գիտես երբեմն մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ *տասնյակ տարիներ* հետո էլ հիշում ես նույնքան պայծառ (*ԱԲԵ, 118*)։ Հակառակ դեպքում ես *տասնյակ տարիներով* ետ կմնայի (*Մուր., II, 263*)։

§ *641. Եթե կրկնվող թվականը արտահայտում է բաշխականություն և որոշիչ է, որոշյալը եզակի է դրվում, իսկ եթե կրկնու-*

թյունը ցույց չի տալիս բաշխում, առանձին-առանձին խմբավորում, այլ նպատակ ունի շեշտելու, ընդգծելու քանակային մեծությունը, ապա որոշյալը հոգնակի է լինում. օրինակ՝ Նստարանների վրա գրված է Ազատիի «Ֆիզիկա» դասագրքից մի-մի օրինակ (ԳՍԹ, I, 29)։ Առաջարկել ամեն մեկին երկու կես-կես բենեֆիս (Զմըշկյան, 128)։ Էյ հազար-հազար ավտոմոբիլներ (ՀՀՑ, 226)։ Գնացին երեք-երեք զլխարկ ոսկի բերին ավին ջուհակին (ՂԱՑ, 319)։

§ 642. Մոտավորական թվականները որոշիչ դառնալով՝ սովորաբար եզակի որոշյալ են պահանջում, մանավանդ երբ սկզբից ունեն մի թվականը. օրինակ՝ Մի երկու օր մնալ Քաղաքում (ՆՋՀ, 406)։ Ձեզանից մի հինգ երիտասարդ այստեղ գան (Քոչար, 276)։ Մի երկու ամսակից հետո այլևս տեղեկություն չստացվեց (նույն տեղում, 338)։ Ամեն դռան մի տասը հավ կա (ԳՍԹ, I, 89)։ Մի երկու-երեք հարյուր բանվոր (նույն տեղում, 185)։ Մեր գյուղը չորս-հինգ հազար տուն է (ՀԱՃՀՔ, I, 321)։ Ձես թույլ տա Արամիկին մի-երկու օրով տանեմ ինձ մոտ (Նար., II, 390)։ Դռնից մի երկու Քայլ հեռու դրված էին երկու գրապահարան (ՔԹՈՀ, 6)։

§ 643. Մնացած դեպքերում մոտավորական թվականները քանակական թվականների նման են կիրառվում, այսինքն՝ կարող են երկու թվով էլ որոշյալ ունենալ. օրինակ՝ Մոտակա երկու-երեք տարիների ընթացքում (ՍՀ, 1953, № 298)։ Ութը-տասը գեղջկուհիներ հասարակ սեղանի շուրջը բոլոր նստել էին (ԱԲՑ, 293)։ Մոտ քսան-երեսուն մարդ է հավաքվել այնտեղ (Փափ., 507)։ Երևան եկան հինգից վեց ծերունիներ (նույն տեղում, 113)։ Տնից ելնելով չորս-հինգ հոգի (նույն տեղում, 532)։ Երկու-երեք տարբեր անուններով (ԳՍԹ, II, 50)։

§ 644. Քառասունական, վաթսունական, Քսանական, երեսունական և այս կարգի տասնյակներով տարեթվային որոշիչների մոտ թվական (թիվ) որոշյալները առանց բացառության հոգնակի են գործածվում. օրինակ՝ Պատկանյանի գրական-հասարակական գործունեությունը սկսվում է 19-րդ դարի 50-ական թվականների առաջին տարիներից (ՌՊՑ, I, 3)։ Աբովյանը 40-ական թվականներին մի ամբողջ ողբերգություն ապրեց (նույն տեղում, 5)։ Արձագանքելով 90-ական թվականների սկզբներին արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցած դեպքերին (Նար., I, էջ IX)։

§ 645. Մի տարեթիվ արտահայտող թվական որոշիչը, ինչպես ասվել է, եզակի որոշյալ է ընդունում. օրինակ՝ Պետի տներ մինչև 1913 թվականի ամռան վերջերը (ՎՓՀՀ, 273)։ Բայց օդի մեջ ար-

դեն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը, որ գուժկան էր *1890—91 թվականի (երկու թիվը մի տարեթիվ է արտահայտում* խստաշունչ ձմռան *(Նար., III, 213)*։

§ 646. *Բազմապատկական, չափական, կոտորակային թվականները, որոշիչ լինելով, պահանջում են եզակի որոշյալ. օրինակ՝* Կրկնապատիկ հետաքրքրությամբ հարցրեց էմման *(Նար., II, 374)*։ Քառորդ ժամից հետո եկավ Արամիկն աղախնի հետ միասին *(Նույն տեղում, 389)*։ Աննետացավ հայ թատրոնական բեմից այդ ապագա *քառասունանոց* խմբի հետ միասին *(Զմշկյան, 23)*։

թ) ԴԵՐԱՆՈՒՆ-ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 647. *Ցուցական* այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այսպես, այնպես, նույնպես, մյուս *դերանունները որոշիչ դառնալ, հավասարապես կարող են թե՛ եզակի և թե՛ հոգնակի որոշյալ ունենալ։ Միայն* այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այնչափ, նույնչափ *հակվում են ավելի հոգնակիին, որովհետև սրանց որոշյալը մի առարկա չի կարող լինել. եթե նույնիսկ ասում ենք՝* այսքան գիրք, այսքան սեղան, *ապա* գիրք, սեղան *եզակի դրված որոշյալների ավելի մեծ քանակ ենք ըմբռնում*։

Այդ աղաղակները լսելի էին լինում հրային սաստիկ ժայթքումներից հետո *(Ր., III, 306)*։ Ինչու եմ այստեղ, *այս շղթաների* մեջ, այդ քարեղեն *բանտում (Նույն տեղում, 311)*։ Նրա *այդպիսի ընդունակության* համար էլ մեր վարժապետական խումբը նրան «անհրաժեշտ մարդ» էր անվանում *(Մուր., II, 261)*։ Եվ *այդքան օրվա* անջատումից ետ, արդարև քաղցր և հաճոյական էր գրել նրան մի նամակ *(Մուր., II, 263)*։ Կային *այնպիսի առևտրականներ,* որոնք իրենց մահալում միահեծան տեր էին *(ԱԲԵ, 309)*։ *Այդ թվականից* մի քանի տարի հետո *նույն վայրով* անցել է մի վարդապետ *(Նույն տեղում)*։ Զրույցի նստած ժամանակ գետի մյուս *ափից* կանչում էին *(Նույն տեղում, 450)*։ *Այսպիսի մտատանջություններով* նա մեկ օր ծպտած ման էր գալիս *(ՂԱԸԵ, 317)*։ *Այսքան տարի* միասին ապրելուց հետո, հանկարծ թողնում, հեռանում ես *(Նար., III, 323)*։ Կարծես *այդքան* թագակիր *ստվերներ* վերլուծելուց հետո *(ՎՓՀՀ, 298)*։ *Միևնույն պահին* ահասաատ էր *(ՁԸԵ, 249)*։

§ 648. *Հարցական և հարաբերական* որ, որքան, որչափ, ինչ, որպիսի, ինչպիսի *դերանունները նույնպես կարող են թե՛ եզակի և թե՛ հոգնակի որոշյալ ստանալ. օրինակ՝ Ի՞նչ* անսովոր *լույս* է աշխարհում և իմ մեջ: Այդ որտե՞ղից, ինչպե՞ս և *ի՞նչ առեղծված* (*ՎՓՀՀ, 289*)։ Ի՞նչ անհատական անջրպետ... աշխարհի կերպարանքի ի՞նչ փոփոխություն (*Նույն տեղում, 291*)։ Ո՞ր սև սարում, ո՞ր անտառում, Ո՞ր թփի տակ կորավ մենակ (*Թումանյան*)։ *Ինչպիսի՜ էներգիայով, ի՛նչ մեծությամբ* է հանդես բերում Շեքսպիրը այդ անհատականությունը (*ՎՓՀՀ, 295*)։ Քանի՜ տառապանք, *որքա՜ն անարգանք* անգիտակցաբար դարմանել ես դու իմ հանդեպ խորունկ բարեկամությամբ, մտերիմ քաղաք (*Նույն տեղում, 362*)։ Ճակատագրական *ինչպիսի՛ րոպեներում*, հուսալքության *ինչպիսի՜* ծանր *ժամերում* և հաղթանակի *ինչպիսի՛ արշալույսներում*, և ի՛նչ *երկրներում*, հաճախ *ինչքա՜ն հեռուներում* պակասել է ինձ իմ ժողովուրդը, *ինչպիսի՜* հուսահատ *անձկությամբ* փնտրել եմ ես նրան (*Նույն տեղում, 381*)։ *Ի՜նչ ըղձերով* արդյոք նորինած (*ՉԸԵ, 246*)։ Իսկ դրանից *որքա՜ն թշվառություններ* պետք է ծագեն (*Նար., II, 347*)։

§ 649. Քանի *հարցականը գերազանցապես եզակի որոշյալ է պահանջում. օրինակ՝* Քանի՞ մարդ կա: *Քանի՞ բանվոր* է աշխատում ձեր գործարանում: էն ժամանակ *քանի՞ ծուխ* կար մեր գյուղում (*ԱԲԵ, 449*)։ *Քանի՜ ձեռքից* եմ վառվել (*Թումանյան*)։ *Քանի՜ երկրակալ, քանի՜ պետություն* բարձրացել, տիրել, անցել են հերթով (*ՉԸԵ, 277*)։

Նույնն է նաև քանի-քանի *կրկնական ձևը. օրինակ՝ Քանի-քանի՜ մարդ* փախավ իր տանից, *Քանի-քանի՜ մարդ* դառավ մարդասպան (*Թումանյան*)։ Ու *քանի-քանի՜* կրել եմ *տանջանք* (*ՀՀԵ, 223*)։

Քանիերորդ, որերորդ *հարցականները միայն եզակի որոշյալ են առնում.* Քանի՞երորդ տարին է, որ աշխատում ես: Ո՞րերորդ դասարանում ես սովորում:

ժ) ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆ-ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 650. *Որոշյալ* ամեն (*ամենայն*), ամեն մի, յուրաքանչյուր *դերանունները որոշիչ դառնալով՝ առնում են միայն եզակի որոշյալ. օրինակ՝ Յուրաքանչյուր հոտը* միագույն է և մի տեսակ (*Ր., III, 351*)։ *Ամեն բանի* մասին հարց ու փորձ կանի (*Նույն տեղում,*

352)։ *Յուրաքանչյուր* ստացավ *բարեկամի* վրա արքազան պարտականություն է դրվում (*Նար., II, 397*)։ Սարսափել է ինքն ու ակնկալել *Ամենայն չարիք* ու *դժբախտություն* (*ՉԸԵ, 209*)։ Եվ այդ գիրքը իր արյունով, սրտի *յուրաքանչյուր նյարդով*, իր վերջին ճիգով հորինած (*նույն տեղում, 247*)։ *Ամենայն օր* միևնույն ժամին նա ջոկվում էր և վազում մանուկը (*ՂԱԸԵ, 309*)։ *Ամեն կյանքում* ու երակում անտես, անկեզ բորբոքում (*Թումանյան*)։ *Ամեն մի սիրտ* ցավով լցվեց մեր դարում (*Թումանյան*)։ *Ամենայն մանրամասնությամբ* հիշում եմ պատմական այն օրը (*ՉԸԵ, 323*)։ *Ամենայն տեղ* մահը մի է (*Նալբանդյան*)։

Ծանոթություն. Հնացած կամ սխալ պետք է համարել հետևյալ օրինակները։ Որպես չգիտեին նրա *յուրաքանչյուր անդամները* (*Րաֆֆի*)։ *Յուրաքանչյուր այս աստիճանավորք* ունեին յուրյանց պաշտոնքը (*ՄՆ, II, 101*)։

§ *651*. Բոլոր *դերանունն իբրև որոշիչ հոգնակի որոշյալ է առնում. օրինակ՝* Եվ այնպես, ինչպես *բոլոր դարերում* կապված է եղել մարդը իր դարին (*ՉԸԵ, 187*)։ Այս *բոլոր լաթերն* ու *իրերը* որոնք պատկանում էին նրան (*Նար., II, 533*)։ Նա սիրում էր աշխարհով հետաքրքրվող *բոլոր մարդկանց* (*Քոչար, 337*)։ Մուշեղի հայր Վասակը *բոլոր* Մամիկոնյան *եղբայրների* մեջ ամենահարուստն էր (*Ր., III, 127*)։

Ծանոթություն. Բոլոր *դերանուն-որոշիչը եզակի որոշյալի մոտ նշանակում է ամբողջ, որ այժմ արդեն հազվադեպ է, օրինակ՝* Բոլոր երկինքը ծածկվեց մուգ-մոխրագույն ամպերով (*Շիրվ., II, 66*)։ *Բոլոր ժողովուրդը* սպասեց մինչև վերջին (*Մուր., II, 34*)։ Այդ պարզ երևաց բոլոր այն զրույցի ժամանակ (*Մուր., IV, 327*)։ Այդ կինը գրավեց իմ *բոլոր ուշադրությունը* (*նույն տեղում, 349*)։ Արվել էր *բոլոր ճիգը* (*ԴԴԸ, 56*)։ Եվ մեռնում են միասին հազարավոր կյանքեր, տանելով իրենց անկման հետ չարատանջ հոգևարքի, սպանիչ կասկածի ու անհատական թավալումի բոլոր սարսափը (*ՎՓՀՀ, 297*) (*տե՛ս § 596-ի ծանոթությունը*)։

§ *652*. Ամբողջ, ողջ, համայն *որոշյալ դերանունները գերազանցապես որոշիչ են դառնում հավաքական գոյականների և ընդհանուր, մասերից կազմված ամբողջական ու վերացական առարկաների համար. այդպիսի որոշյալները գերազանցապես եզակի*

են դրվում. օրինակ՝ *Ամբողջ գյուղին* էր հայտնի, որ Ավան ամու նման ո՞չ ոք ոչ պատվաստը գիտեր... *(ԱԲե, 485)*։ *Օ՜, աշխարհում ամբողջ* դժվար լինի մի այլ Այսման անխոնջ, զգաստ, խստաբարո քաղաք *(ՁԸե, 183)*։ Այդպես անցկացրեց նա *ամբողջ օրը (Նար., II, 348)*։ Երկյուղալի զգացմունքը տիրում է նրա *ամբողջ մարմնին (ՂԱԸե, 355)*։ Նրանց հետ միասին մենք պայքարում ենք *համայն աշխարհի* ջուլհակների ազատագրության համար *(ԳՄե, 361)*։ Հոշոտվում էր նրա *ողջ էությունը (Իս., III, 213)*։ Գիժ մոծակի համար եմ ես *Ողջ ամառը* արևակեզ՝ էնքան ջանքով Ու տանջանքով տուն տեղ դրել *(Թ., «Մոծակն ու մրջյունը»)*։ Աշխարհը և *համայն տիեզերքն* ինձ համար ամփոփված էին նրա մեջ *(Շիրվ., V, 355)*։

ժա) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ-ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ *653. Անորոշ* ինչոր, այսինչ, այնինչ, այլ *դերանունները իբրև որոշիչ առնում են եզակի և հոգնակի որոշյալ. օրինակ՝ Ինչ-որ* ուրիշ *կյանքի* ընթացք բարբառող *(ՁԸե, 246)*։ Դու դեռ երես ես ունեցել ոչ միայն մոտենալու նրան, այլև *ինչ-որ* զզվել՝ *առաջարկ* անելու *(Նար., II, 518)*։ Զարթեցի սենյակիս մեջ լսված *ինչ-որ քայլերի* ձայնից *(նույն տեղում, 527)*։ Դուք կամենում եք արիստոկրատիայի այսինչ շրջանում ձեր թերթը մտցնել։ *Այսինչ խմբի անդամներին* ձեր մասին խոսել տալ, *այնինչ օրիորդներին և երիտասարդներին* ձեր կողմը գրավել։ Ձեզ համար դժվար է առանց հարգելի առիթի այսինչ հայ իշխանին կամ *իշխանուհուն, այսինչ հարուստին* կամ *պաշտոնյային* գնալ այցելության *(Մուր., II, 260)*։ Ինքը կարող էր ասել *այսինչ անտառամասում* քանի ծառ կա *(ԱԲե, 485)*։ Եվ միայն մանուկ հասակից ինձ պարտադրված *ինչ-որ* իդեալիստական *մնացորդները (ՎՓՀՀ, 382)*։ Սակայն թողեց. քաղեց *թերթերում այլ (ՁԸե, 247)*։ Նա *այլ ձայներ* էր լսում, նոր ու կատաղի՝ *(նույն տեղում, 209)*։

§ *654*. Որևէ, ունիցե *անորոշ դերանունները, որոշիչ դառնալով, պահանջում են եզակի որոշյալ. օրինակ՝* Դուրս էր բերել այդ պարոնին առանց *որևիցե պատճառի (Ջմշկյան, 42)*։ Քանիցս ուսումնասիրել եմ, որ մեկ *որևիցե բնավորության* գաղափար կազմեմ *(նույն տեղում)*։ Բայց թե հազիվ *որևէ մարդ* այնպես թույլ և իրավազուրկ զգա իրեն *(Նար., III, 200)*։ Այս կարգ՝ արտակարգ դեպքերում օգտակար լինելու *որևէ հայ անհատի (ՎՓՀՀ, 455)*։ *Որևէ միջոցի* կարիք չունենի *(նույն տեղում)*։

§ 655. *Հավասարապես եզակի և հոգնակի որոշյալ են առնում* նաև մի քանի, որոշ *անորոշ դերանունները*. *օրինակ՝* Հատակի վրա նշմարում եմ *մի քանի կանայք (Շիրվ., V, 223)*։ Իսկ ձեր այսօրվա *մի քանի խոսքերից* արդեն ես գուշակեցի *(Մուր., II, 258)*։ Յուրաքանչյուր գործի *որոշ ժամերն* են հատկացված *(նույն տեղում, 256)*։ Խանութի առաջ *մի քանի* ձի արևից նեղվում էին *(ԱԲԾ, 486)*։ Պատավը *մի քանի օր* վրա-վրա զարկվեց *(ԳԱԾ, 309)*։ Վատնված էներգիային պետք է հաջորդեր որոշ սպառում *(ՎՓՀՀ, 299)*։ Թեև ուներ կազմակերպչական *որոշ տվյալներ (նույն տեղում, 446)*։ Ինչ որ տեսա և զգացի այդ *մի քանի րոպեում (Նար., II, 523)*։ *Մի քանի խոսքով* պատմեցի եղելությունը *(նույն տեղում, 524)*։ Հեռավոր սենյակից *մի քանի մարդկանց* ձայներ էին լսվում *(նույն տեղում, 348)*։ Նրա հետևից հայտնվեցին *մի, քանի երիտասարդ (ՔԹՈՀ, 115)*։

ժբ) ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ-ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 656. *Ժխտական* ոչ մի *դերանունը իբրև որոշիչ առնում է եզակի որոշյալ, իսկ ոչինչ բառը որոշիչի նշանակությամբ այժմ սակավ է կիրառվում։ Եթե դառնում է որոշիչ, հավասարապես եզակի և հոգնակի որոշյալ է ընդունում, իսկ եթե ունի* ոչ մի *դերանվան նշանակություն, որոշյալը եզակի է. օրինակ՝ Ոչ մի եռանդ, ոչ մի ձգտում* և այդ ձգտման հասնելու կամք չի ունեցել *(Նար., III, 243)*։ Փողոցներում *ոչ մի կենդանի շունչ* չէր երևում *(Նար., II, 524)*։ *Ոչինչ երկյուղի* նշան չի ցույց տալիս *(ԳԱԾ, 357)*։ Ամբողջ հայ հասարակությունը *ոչինչ միջոց* չէր խնայում *(Զմշկյան, 81)*։ *Սակայն ասվում է՝* ոչինչ մարդ է: Ոչինչ մարդիկ են, *որ փոխարինվում է այժմ* չնչին *ածականով.* չնչին մարդ է, չնչին մարդիկ են:

Ծանոթություն. Ոչ ոք *իբրև որոշիչ այժմ այլևս չի կիրառվում։ Համեմատի՛ր.* Ուրիշ *ոչ ոք* մտերիմ մարդ չուներ *(Զմշկյան, 13)*։

2. ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

§ 657. *Հատկացուցիչը սեռական հոլովով հոլովված այն լրացումն է, որ լրացնում է ստացականություն դոյական կամ գոյականացած (առարկայացած) անդամներին։ Հատկացուցիչը որոշիչից*

տարբերվում է երկու հիմնական հատկանիշներով. մեկ՝ որ որոշիչը հոլովական ձև չունի (նրա ուղղական ձևը հոլովական ձև չենք համարում) և գլխավորաբար ոչ գոյականական լրացում է իր բնույթով, իր մեջ, չնայած լրացնում է գոյականի. մյուսն էլ այն է, որ որոշիչի հիմնական դերը իր լրացյալի հատկանիշները, յուրահատկությունները դրսևորելն է։

Սրան հակադիր հատկացուցիչը սեռական հոլովով հոլովված որևէ խոսքի մաս է. այս նշանակում է, որ դա ինքնին գոյականական, առարկայական լրացում է, որովհետև երբ որևէ խոսքի մաս հոլովվում է, ապա առավել կամ պակաս չափով ձեռք է բերում առարկայական հատկանիշ, եթե այդպիսին չունի, իսկ եթե ունի, հոլովով ավելի են շեշտվում մյուս հատկանիշները։ Հատկացուցիչի իմաստային տարբերությունն էլ այն է, որ հատկացուցիչը հիմնականում արտահայտում է ոչ թե առարկայի հատկանիշները, նրա առանձնահատկությունները, այլ ցույց է տալիս ստացական հարաբերություններ (խոսքը հիմնական նշանակության մասին է)։ Հատկացուցիչի որակական, հատկանիշային դերի դրսևորումը նրա մի երկրորդական պաշտոնն է, որի մեջ, սակայն, դարձյալ առկա է հատկացման, ստացականության իմաստը։ Հատկացուցիչի և որոշիչի նմանությունն այն է, որ դրանք երկուսն էլ նախադասության մեջ լրացում են դառնում միևնույն կարգի բառերի համար. նախադասության ինչ անդամ որոշիչ ունենա, այն կարող է և հատկացուցիչ ունենալ։

Իմաստային առումների տեսանկյունից դատելով պետք է նկատել, որ հատկացուցիչը շատ ավելի բարդ ու բազմազան հարաբերություններ է դրսևորում, քան թե որոշիչը. հատկացուցիչը ստացականությունից՝ իր հիմնական նշանակությունից բացի, արտահայտում է կողմնակի ենթակա լինելը, առարկայի որակական հատկանիշը, խնդիր լինելը, ծագումը, քանակական, ժամանակային, տարածական և այլ հարաբերություններ։ Այս հարաբերությունները այնքան բազմազան են և նուրբ՝ իրենց արտահայտման մեջ, որ դժվար է մի սահմանումի ենթարկել։

ա) ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

§ 658. Հայերենում գրեթե բոլոր գոյականներն էլ հոլովվում են, ուստի կարող են հատկացուցիչ դառնալ և արտահայտել այն բոլոր հարաբերությունները, որոնք համառոտակի նշեցինք վերևում։ Այժմ առանձին-առանձին քննենք այն հարաբերությունների

ու հատկանիշները, որոնք բացահայտվում են հատկացուցիչի միջոցով։

§ 659. Ինչպես արդեն նշեցինք, հատկացուցիչի հիմնական նշանակությունը ստացականության, պատկանելության հարաբերությունն է, որը տարբեր գոյականների մեջ միանգամայն տարբեր ձևով է հանդես գալիս. օրինակ՝ Աշակերտի գիրքը, Երևանի բնակիչը, երրորդ դասարանի աշակերտը: *Այս երեք կապակցության մեջ էլ առկա է պատկանելության, ստացականության հարաբերությունը, սակայն երեքն էլ միմյանցից զանազանվում են առանձին և տարբեր նշանակություններով, այսինքն՝ հենց պատկանելություն ցույց տալու բնույթով. մինչդեռ առաջին կապակցության մեջ հատկացուցիչը արտահայտում է սեփականություն, իսկական պատկանելություն, երկրորդի մեջ գոյություն ունի պատկանելության հասկացողությունը, բայց սեփականության իմաստը չկա. բացի այդ, ուժեղ է տարածական հարաբերության դրսևորումը։ Երրորդ կապակցության մեջ էլ չկա սեփականության հարաբերություն, պատկանելությունը այնքանով է առկա, որքանով աշակերտը պատկանում է մի որոշ հանրության, որտեղ առկա է նաև մասի ու ամբողջի հարաբերությունը։*

Ուրեմն ստացականությունը իր հերթին առանձին նրբություններ ունի. սեփականություն, բարոյական հատկություն, ունակություն, տարբեր անձերի փոխադարձ կապ, առարկաների և նրանց առանձին անդամների փոխադարձ կապեր և այլն։ Ահա օրինակներ՝ Խնայեցին միայն Մամիկոնյան *իշխանի* շիկակարմիր *վրանին (Ր., III, 589)։* Տեղի էր ունեցել հենց այդ նույն *Կոլոպոտյանի* հարևան կաթոլիկ *Սիմոնի խանութում (Զե, 286)։ Իվանու բակը* մի թուղթ է զգում *(ԹՊԵ, 592)։* Չկար մի զորապետ, որ նրա նման առատաձեռն կերպով վարձատրեր *զինվորի քաջությունը (Ր., III, 574)։* Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր *մութ գյուղի,* Բերել էր իր մկաններում բեղմնավորված *ուժը հողի (Զե, 13)։* Հոծ խմբերով, հազարանուն, *արեգակի հրով* վառված *(նույն տեղում, 19)։ Սմիռնովի ընտանիքի* ողբերգությունն էր, որ չէր հեռանում նրա մտքից *(Անթ., 201)։* Պիտի չմաշե *սիրտը հորն* ու *մոր (ԹՊԵ, 289)։*

§ 660. Հատկացուցիչը պատկանելության հետ կարող է արտահայտել ենթակա լինելը, այսինքն՝ դառնալ իր հատկացյալի գործողության կատարողը. այս պարագայում հատկացյալը պետք է լինի որևէ բայանուն, դերբայ, գործողություն դրսևորող որևէ

գոյական. այլապես հատկացուցիչի մեջ այդ իմաստը չի արտահայտվի. օրինակ՝ Որ հայելին չի ցոլացնի մարդու *մտածմունքը,* գաղտնի *խորհուրդները (ՈՊԵ, 730)։ Այստեղ* մտածմունքը, խորհուրդները *ոչ միայն պատկանում են* մարդու *հատկացուցիչին, այլև արտահայտում են գործողություն, որ մարդը կատարել է, այսինքն՝ մտածել է, խորհուրդ է արել։ Որքան այդ կարգի հատկացուցիչների մեջ գործողությունը ցայտուն է արտահայտվում, այնքան հատկացուցիչի ենթակա լինելը իշխում է նրա մյուս իմաստների վրա, առանձնանում է նրանից իբրև գերակշիռ նշանակություն. օրինակ՝* Զար *վհուկի դյութելով՝* ամբողջ քաղաքը իր պարիսպներով, տներով և բնակիչներով անշարժ պղինձ է դառնում *(ՐԿ, 294)։* Բոլոր վայրերում, բոլոր կողմերում, *Երկաթի, բրոնզի, հողի ու հանքի Երգով* օրորված իմ բյուր եղրայրներ *(Զե, 20)։ Եղբոր դուրս գալուց* հետո Մկրտումը միանգամ էլ նայեց թղթին *(ԱԲԵ, 483)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Եթե հատկացյալը որևէ դերբայ է և իր հատկացուցիչի հետ կազմում է մի դերբայական դարձված, ապա դրանք միասին վերցվում են իբրև մի լրացում. օրինակ՝ Եփրեմի բերած թուղթը իր ծրագրի մի մասն էր *(ԱԲԵ, 483)։ Քամու բերած,* հողմի տարած սեր-գիշերներ էլ ձերը չեմ *(Շիրազ)։ Այստեղ* Եփրեմի բերած, քամու բերած, հողմի տարած *հատկացուցիչի և հաջորդող հատկացյալի կապակցությունները մի-մի որոշիչներ են։*

§ 661. Հատկացուցիչը ոչ միայն արտահայտում է իր և իր կատարած գործողության հարաբերությունը, այսինքն՝ ցույց է տալիս, որ գործողությունը ինքն է կատարել և պատկանում է իրեն, այլև դրսևորվում է իր նկատմամբ մի այլ առարկայի կատարած գործողության և իր հարաբերությունը, այն, որ ինքը մի այլ առարկայի կատարած գործողության խնդիրն է։ Այս պարագայում էլ հատկացյալը որևէ բայանուն, դերբայ, գործողություն արտահայտող գոյական է. օրինակ՝ Ջարեհավանի տիրող հիանը *(Ր., II, 247)։* Բաց թողնել թեփ *խոզերի կերակրման* համար *(ՍՀ, 1952, № 297)։ Դաշինքի կռումը* զարմացրեց Վարդանին *(ԴԴՎ, 581)։* Փառաբանում էր *հայրենիքի պաշտումը* անձնվեր *(Իս., III, 191)։* Եվ արագոտն սուրհանդակ ուղարկեց բանաստեղծի մոտ *դարձի շնորհով (նույն տեղում, 192)։ Զգացմունքների սիրահար մարդիկ (ՍՀ, 1952, № 298)։* Աղջիկներից ինչ են ուզում *Տերերը* մեր սրտերի

(Անթ., 365)։ Վրաստանի իշխանները վճռում էին Հազկերտի *հրովարտակի պատասխանը (ԴԴՎ, 185)*։ *Լավի դարձի* նույն չկա *(Իսահակյան)*։ *Այս օրինակի մեջ* լավի, դարձի, *երկուսն էլ խնդիր հատկացուցիչ են* (դարձ դեպի լավը, լավին, նույն դեպի դարձ, դարձի նկատմամբ)։

Ըստ բայի խնդրառության բնույթի այդպիսի հատկացուցիչը կարող է ստանալ ուղղակի, անուղղակի կապով խնդիրների նշանակություն։

Ս ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Եթե հատկացուցիչը որևէ ոչ գոյական բառի, այսինքն՝ դերբայի լրացում է, ապա դերբայի հետ միասին դիտվում է իբրև մի լրացում. այստեղ պահպանվում է միայն սեռական հոլովը, իսկ հատկացուցիչային նշանակությունը վերանում է. օրինակ՝ Ջարենցավանի տիրող խանը *կապակցության մեջ առաջին երկու բառերը միասին մի որոշիչ են* խան *բառի համար։*

§ 662. *Պատկանելության նշանակության հետ հատկացուցիչը կարող է արտահայտել ծագման, սերման հարաբերություն՝ ցույց տալով որ հատկացյալը ծագում, առաջանում է հատկացյալից, կամ ընդհակառակը. օրինակ՝* Գևորգ *Նահապետի* միակ *ժառանգը* այդ աղջիկն էր *(Մուր., III, 53)*։ Հակինթե վարդերի և դրախտային *ծաղիկների բույրը* ծովացել էր այնտեղ *(Իս., III, 167)*։ Զնդյած *ցեխի աղյուսով,* կառուցվածքի անշքության *(ԴԴՎ, 189)*։ Գնաց, նորից նոր մեր Դավթի ոտի Մի ջուխտ նոր *տրեխ* բերավ *երկաթի,* Երկաթի մի *կոռ* նարյուր լդրական *(Թ., «Սասունցի Դավիթ»)*։

Այս նշանակությանը մոտ են հեղինակային, բաղկացության հատկացուցիչները, որոնք ցույց են տալիս, որ առարկան մեկի հեղինակությունն է, բաղկացած է հատկացուցիչի արտահայտած առարկաներից. օրինակ՝ Մուրացանի «Գևորգ Մարզպետունին», Րաֆֆու «Սամվելը», Դեմիրճյանի «Վարդանանքը»: Սարի լանջին զտնվում է ներմակ չենքերի մի ավան *(Անթ., 496)*։ Արածում էր ծովի ափին *բազմությունը* էո *հոտերի (Թումանյան)*։ Այնտեղ խեղդող *գազերի ամպերը* տոթ ու դեղին Պիտի ճանկարծ իջնեին բանակների վրա էն *(Զն, 27)*։ *Արևների* ավելի շատ *հայեր, մոլորակների* անթիվ *երամներ (Իս., III, 204)*։ *Զինվորյալների* մի *խումբ* հետևեց նրան *(ԴԴՎ, 339)*։ Ներքև է նայում, տեսնում է *մրջյունների* մի *բազմություն (Թ., III, 335)*։ Դա հանդուգն և կատաղի *մարդկանց* մի *զանգված է (ԴԴՎ, 437)*։

§ 663. *Այս վերջին օրինակների մեջ նկատվում է մասի և ամ-*

քողջի հարաբերությամբ, այսինքն՝ հատկացուցիչը արտահայտում է այն մասը, որից գոյանում է ամբողջը. սրան հակառակ հատկացուցիչ դառնում է ամբողջը, իսկ մասը լինում է հատկացյալ։ Ուրեմն հատկացուցիչը ցույց է տալիս այն ամբողջը, որից վերցվում են, անջատվում են նրա որոշ մասերը. օրինակ՝ Ամեն մի բանակ ընտրեց փահլևան Կանգնեց թիկունքին *տղերանց մեկի (Թում., «Անուշ»)։* Մեր *արցունքի* ամեն մի կաթիլի դիմաց *(Զարյան)։ Օրերի օրն է,* տղերք *(ԴԴՎ, 434)։* Էսօր *ամսու քանիսն* ենք *(Իս., III, 314)։* Յուրաքանչյուր *ժամի սկզբին* ու *վերջին* մեռնելու չափ քաղցում էր *(Նույն տեղում, 75)։ Այս կարգի հատկացուցիչի համար հատկացյալ են դառնում* կտոր, մաս, կես, ծայր, գագաթ, լայնք, երկայնք, կողմ, հատ *բառերը, թվականներ և մաս արտահայտող այլ խոսքի մասեր, գոյականացած ածականներ և այլն, եթե հատկացուցիչը մասերից կազմված ընդհանրություն, ամբողջություն է արտահայտում։*

§ *664. Երբ հատկացուցիչը իր հատկացյալի կրկնությունն է (մեծ մասամբ հոգնակի), ապա թվում է, թե պետք է արտահայտի մասի և ամբողջի հարաբերություն. օրինակ՝* Ոճիրների ոճիր, *բայց իրականում այդպես չէ. այս դեպքում այդ կապակցությունը արտահայտում է գերադրություն. հատկացյալը իր որակով, հատկանիշով գերազանց է հատկացուցիչի ցույց տված առարկաների որակից. օրինակ՝* Սա հասցրել է *աստղերի աստղին, արեգակների արեգակին (Թ., III, 281)։* Ավելի մեծ ոճիր է վտանգված թույլերին զրկել օգնությունից, քան թե կատարել *ոճիրների ոճիրը (Իս., III, 184)։ Արքայից արքայի* այդ ամոթալի պարտությունը *(Ր., III, 395)։* Որոնց վրայով տանելու էր ինձ իմ նավը բոլոր *վերջերի վերջը (ՎՓՀՀ, 89)։* Ամեն մի արվեստի *խորքի խորքում* կա մի բան *(Նույն տեղում, 137)։* Արվեստ, որ հասնում է *նրբերի նրբին,* առանց *վերջերի վերջին* հանգելու *(Նույն տեղում, 135)։ Այսպես ասվում է՝* լավերի լավը, քաջերի քաջը, ընտիրների ընտիրը, մեծերի մեծը *և այլն։*

§ *665. Հատկացուցիչը արտահայտում է իր հատկացյալի գինը, արժեքը՝ այն չափանիշը, որով գնահատվում է հատկացյալը. օրինակ՝* Ունեմ մի քանի չնչին բանկային *տոմսեր՝ արժողությամբ* 18,385 *ռուբլու (Շիրվ., V, 298)։* Կոլտնտեսությունը ստացել է ավելի քան 45 միլիոն *ռուբլու եկամուտ (ՍՀ, 1953, № 215)։* Յոթ *ամսվա* տան *վարձ* է *(Թ., V, 217)։* Տո, երկու *գրոշի նավթն* ինչ է, որ չես առնում *(Նար., VII, 82)։*

§ 666. Հատկացուցիչը նաև արտահայտում է այն տեղն ու ժամանակը, որտեղ և երբ գտնվում է հատկացյալը, այսինքն՝ դրսևորում է առարկաների տարածական և ժամանակային հարաբերությունները. օրինակ՝ Ինչ սարի արծիվ կը հասնի քաջին: Կամ թե կը համրի ծմակի ծառերը (Թումանյան)։ Ուզում եմ ես երգել իմ օրերի հեռուն, բայց ոչ այնպես, ինչպես անտառների քամին (Չն, 213)։ Անցել ձեր գլխի հերվան ձյունի պես (Թ., «Անուշ»)։ Դաշտից ահա սուրում է զով, մարմանդ քամին առավոտի (Չն, 18)։ Աշնան ամպին ու ղամպին մոլոր նստած իր ճրմբին (Թ., I, 208)։

§ 667. Եթե տեղի մասամբ նաև ժամանակ արտահայտող հատկացուցիչը դարձնենք հատկացյալ, ապա այս դեպքում կարտահայտվի պարունակողի և պարունակյալի հարաբերությունը. օրինակ՝ Սարի որս կապակցության մեջ սար ցույց է տալիս այն տեղը, որտեղ գտնվում է որսը, իսկ որսի սար կապակցության մեջ որսի սեռական ձևը պարունակյալ է, սար-ը՝ պարունակող։ Համեմատի՛ր. Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ, Որսով մեջը լի որսի սար ուներ (Թ., Սասունցի Դավիթ»)։ Եղավ վայելքի ապարանքներում (Իս., III, 167)։ Վարդի և սոխակի երկիր, սիրելու և երազելու անկյուններ (Փափ., 228)։

Այս հարաբերությանը մոտ է նաև այն կապակցությունը, որտեղ հատկացուցիչը մի որևէ գործողության անուն է, իսկ հատկացյալը տեղ և ժամանակ արտահայտող բառեր։ Նման դեպքում հատկացուցիչը ցույց է տալիս այն գործողությունը, որ կատարվել է որոշ տեղում ու ժամանակում. օրինակ՝ Հիմա գործի տաք ժամանակն է (ԴԴՎ, 186)։ Համբույրների և սիրո գիշերներ (Իս., III, 207)։ Հնձի օրեր էին (ԴԴՎ, 354)։ Թաքնվելու միակ տեղը թերևս կից սենյակը տանող դուռն էր (ԳՍԹ, 1,79)։

§ 668. Հատկացուցիչը ցույց կարող է տալ այն առարկան, որին վերաբերում, որի մասին հիշատակում, խոսում է հատկացյալը։ Այսպիսի հատկացուցիչի հատկացյալները բայարմատներ, սահմանումի անուններ, գործողության անուններ են և այլն։ Սա մոտենում է խնդիր հատկացուցիչին, սակայն ունի յուրահատուկ առանձնացում. նախ՝ գործողության ըմբռնումը մեծ մասամբ մթագնված, երկրորդ՝ հատկապես, արտահայտում է մասին, վերաբերյալ նշանակությունը. օրինակ՝ Եվ իրենց անհուն վիշտն ու ցասումը մարմնավորեց պարիսպների երգի մեջ (Իս., III, 252) Այստեղ երգը վերաբերում է պարիսպներին, երգվում է նրա մասին։ Տեսնում ես ինչպես են դրել հավատքի պահանջը (ԴԴՎ, 183, այն

պահանջը, որ վերաբերում է հավատքին)։ Չէ որ լուծված են մեզ համար բոլոր հարցերը, անգամ *սիրո պրոբլեմը (ՉԵ, 211)։* Պալատականների ականջը հասավ ուրացյալների *ուխտի լուրը (ԴԴՎ, 195)։* Կյանքի ու մահվան վեճը *(Թ., II, 214)։* Երգիր, պոետ, երգիր *երգը քամու,* երգիր *երգը սիրո* ու *պայքարի (ՉԵ, 184)։* «Աշխատանքի երգ» *(Հակոբյան)։* «Խոսք եղբայրության» *(Ն. Զարյան)։* «Սիրո վեպը» *(Իսահակյան)։* «Սիրո երգը» *(Նույնը)։* Խաղի կանոններ *և այլն։*

§ *669. Եթե վերաբերության հատկացուցիչը անձ է, ավելի շատ արտահայտվում է* մասին *կապով. օրինակ՝* «Բալլադ ձկնորսի մասին» *(Էմին)։* «Երգ ժողովրդի մասին» *(Չարենց)*, «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին» *(Չարենց)։* «Բալլադ 26-ի մասին» *(Նույնը)։ Այսպես է արվում, որպեսզի չշփոթվի ենթական հատկացուցիչի հետ. օրինակ՝* «Շինականի առավոտյան *երգը»։* «Շինականի երեկոյան *երգը» (ԲՊԵ, 41, 42)։* «Աղասու *մոր երգը» (Նույն տեղում, 117), այսինքն՝ այն երգը, որ երգում են շինականը, Աղասու մայրը։ Չի բացառված, որ վերաբերության հատկացուցիչը նաև անձ լինի, օրինակ՝* «Մանկալ Սաքոյի պատմությունը» *(Չարենց), այսինքն՝ պատմություն, որ վերաբերում է մանկալ Սաքոյին և ոչ թե այն պատմությանը, որ մանկալ Սաքոն էր պատմում. Ճիշտ այնպես, ինչպես որ ոչ անձ արտահայտող վերաբերության հատկացուցիչի իմաստը նույնպես կարող է* մասին *կապով արտահայտվել. օրինակ՝* «Երգ Սևանի մասին». «Բալլադ անմահության մասին» *(Հ. Պողոսյան)։ Այս բոլոր դեպքերում հատկացուցիչը ճշտում, բացահայտում է հատկացյալի նշանակությունը։*

§ *670. Հատկացուցիչը կարող է արտահայտել նաև իր հատկացյալի որակական հատկանիշները, որով հատկացուցիչը իր նշանակությամբ մոտենում է որոշիչին։ Հատկացուցիչի այս նշանակությունը պետք է որոշվի տվյալ բնագրով, որովհետև դա արտահայտվում է բազմաթիվ կապակցություններով, որոնք կարող են դրսևորել հատկացուցիչի և հատկացյալի այլ կարգի հարաբերություններ. օրինակ՝* Երեխայի խելք, թագավորի պալատ, գինու աման, թեյի բաժակ, դաշտի վարդ, աղբյուրի ջուր, սարի մարալ *կապակցությունները կարող են նշանակել՝* երեխայական խելք, թագավորական պալատ, դաշտային վարդ, *բայց կունենան նաև այլ նշանակություններ (ստացական, տեղի)։ Այդպես էլ՝* գինու աման, թեյի բաժակ, աղբյուրի ջուր *կարող են արտահայտել տեղի, ծագման և որակական հարաբերություններ։* Երկաթի դուռ, արծաթի

գղալ *արտահայտում են և՛ ծագման, և՛ որոշիչային հարաբերու-թյուններ։*

§ 671. *Մ. Աբեղյանը հատկացուցիչի որոշիչային նշանակու-թյունը ամփոփում է հետևյալ հինգ կետերում. ա) այն առարկան է արտահայտում հատկացուցիչը, ինչի ընդունակ, ունակ է մի ա-ռարկա, օրինակ՝* գործի մարդ, կյանքի մարդ, արվեստի մարդ, *բ) ինչի սահմանված, հատկացված, պիտանի, արժանի է մի ա-ռարկա. օրինակ՝* ուտելու ճաշ, խմելու ջուր, վառելու փայտ, ծեծե-լու մարդ *և այլն. գ) այն գործողությունը, որով բնութագրվում է առարկան. օրինակ՝* փայտ ջարդելու կացին, տաշի ուրագ, ճաղճա-նի ուրագ, խմելու գավաթ *և այլն. դ) այն առարկան, որով մի բան կատարվում է. օրինակ՝* ձեռքի աշխատանք, մեքենայի կար, ճամու ջաղաց *և այլն. ե)* վիճակ, աստիճան, տարիք, ճասակ, տեսակ, չափ, կերպ, եղանակ, ձև, գույն, օրինակ, մեծություն, օր, ամիս, տարի *և մի շարք այլ բառերի հատկացուցիչը, որ կիրառվում է մեծ մասամբ որևէ որոշիչով, ցույց է տալիս, թե ինչ դրության, վիճակի, տարիքի, հատկության և այլ հանգամանքների մեջ է գտնվում ա-ռարկան կամ ինչ առանձնահատկություն ունի. օրինակ՝* վերին աս-տիճանի անփութություն, նոր ձևի ճագուստ, լավ տեսակի կտոր, տարբեր գույների մատիտներ, նույն խելքի մարդիկ, փոքր տարիքի երեխաներ, երկու օրվա ճյուր, միևնույն ճասակի, բարձրության, ճաշի, խելքի, բնավորության, սովորության մարդիկ, բեկնածուի աստիճան, դոցենտի, պրոֆեսորի կոչում, գեներալ-մայորի աստի-ճան *և այլն։*

Առաջ եկան ուրիշները, տարբեր *հասակի* երկաթագործական տարբեր *արհեստի բանվորներ (Քոչար, 77)։* Ես *ճանապարհի մարդ* եմ *(ԳՍԹ, I, 159)։* Ձեր զավակներից *կյանքի մարդիկ* չեք պատ-րաստել *(Շիրվ., VII, 272)։* Բարի *կամքի* ճարյուր միլիոնավոր մարդիկ *(ՍՀ, 1952, № 297)։* Ձինվորների մեծավորը զննեց Գյուտին և որոշեց նրա *իշխանի հանգամանքը (ԴԴՎ, 189)։* Գնում, գալիս են երկու *սեռի* և զանազան *ազգությունների* ու *տիպերի հաճա-խորդներ (Շիրվ., VII, 282)։* Հիրավի եղել էր *բացառությունների մարդ և ոչ օրենքների (Փափ., 372)։* Սկսվեց իմ՝ *արտիստի կյանքը (ՎՓՀՀ, 193)։* Պետը ինչ-որ իր *մաքի մարդ է (ԴԴ, 81)։* Երևում է մեծ *խելքի, ուժի տեր* է *(ՔԹՈՀ, 40)։* Կարող էինք բազմացնել *գործի* մարդկանց *թիվը (ԱԲԵ, 221)։* Բայց այնտեղ կարող էր երջանիկ լի-նել *գործի և գաղափարի մարդը (Բ., III, 225)։* Այնպես, ինչպես կարող էր վիրավորվել իմ *հասակի* մի *պատանի (Շիրվ., V, 356)։*

§ 672. *Որոշիչային նշանակություն արտահայտող հատկացուցիչի մի տեսակն էլ արտահայտվում է գոյականացած ածականով։ Փոխանակ ասելու՝* չար լեզու, *ասվում է* չարության լեզու, *կամ՝* լեզու *չարության, այսինքն՝ հատկանիշ արտահայտող ածականը վերացական գոյական է դառնում և այդ ձևով արտահայտում է հատկացյալի որակական հատկանիշը. կապակցության այդ ձևը հատուկ է վեհ և մեծափառ ոճին. օրինակ՝* Ամենուրեք ծփում է *չարության* մի *ծով։* Գոռոզ ոճին պատասխանել *ոճով խոնարհության։* Ասուր-Գարու, եղիր *սուրհանդակներ արդարության (ՆՋԱ, 103, 115, 128)։* Որ բախտը նրանից հեռացներ նրան մատուցված *դառնության բաժակը (ԴԴՎ, 14)։* Որ իր կնոջ անարատ պատիվը այնպես անարդար կերպով անարգում էին *չարության լեզուները (Իս., III, 150)։ Զգուշության միջոցներ* ձեռք առնել: Այդպիսի *արիության գործը* միայն կարող էր մոռացնել տալ *(Մուր., III, 433, 333)։* Կախված էին տարբեր *մեծության ու գույնի լուսանկարներ (ՔԹՈՀ, 6)։ Այսպես ասվում է՝* վրեժխնդրության աստված, *փոխանակ՝ վրեժխնդիր աստված։*

Ս ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Այս կազմության շուռ տված տարբերակն է հատկացյալ գոյականացած ածականը. մինչդեռ առաջին դեպքում հատկացուցիչ է, այս դեպքում հատկացյալ է և ունի գոյականական հատկացուցիչ. օրինակ՝ լուռ անտառ *կապակցությունը դառնում է՝* անտառների լռություն: Եվ *գեղեցկության* մի *անհուն* ծավալվեց ու խորացավ իր առջև *(Իս., III, 221)։* Դեպի *հեռուն* պիտի երթան դեռ չծնված *արևների (Չե, 18)։* Ախ, այդ դաշտերի *հեռուն* ոսկեգույն: Այդ *երկինքների կապույտը* պայծառ *(նույն տեղում, 2)։* Այտերի վրա այրվում էր սիրած էակի *մարմնի մետաքսը (ԴԴՎ, 179)։* Ով եկել էր թողած հեռուն *մութը գյուղի (Չե, 250)։ Վերջիվերջո այս կապակցությունները նշանակում են՝* անհուն գեղեցկություն, հեռու արևներ, կապույտ երկինքներ *և այլն։*

Որոշիչային նշանակություն ունեն նաև՝ ծիրանի, խաղողի, խնձորի, տանձի, դեղձի *և այլ ծառերի բույսերի անվան այս ձևերը, երբ դրվում են՝* ծառ, թուփ, տունկ, փայտ *և այլ հատկացյալների վրա. օրինակ՝* Վարդի թուփը, բամբակի թուփը, ցորենի ցողունը *և այլն։*

§ 673. *Որոշիչային նշանակություն ունի նաև անվանումի հատկացուցիչը. հատուկ կամ հասարակ անունը սեռական հոլովով դրվում է մի ուրիշ անվան վրա՝ իբրև նրա անունը, կոչումը, անվա-*

նումը. օրինակ՝ Կոտայքի շրջան, Կոմիտասի փողոց, Լենինի պողոտա, Կոունկի աղբյուր *(ՔԹՈՀ, 106)։ Հնուց քարացած մնացել են՝* Մարութա սար, Սևանա լիճ, Գեղամա լեռ, Ազմաղանի լեռներ, Վանա լիճ *և այլն, որտեղ հատկացուցիչի և հատկացյալի հարաբերությունները արդեն մթնել են։*

բ) ԴԵՐԱՆՈՒՆԸ ԵՎ ՄՅՈՒՍ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ ԻԲՐԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

§ 674. Դերանունների հատկացուցիչային նշանակությունները գոյականների համեմատությամբ ավելի սահմանափակ են։ Դերանուն-հատկացուցիչները հիմնականում արտահայտում են ստացականություն, ենթակայի, խնդրի, ծագման, մասնական հարաբերություններ, որոնց մեջ գլխավորը ստացականությունն է։

Անձնական բոլոր դերանունները կարող են հատկացուցիչ լինել և արտահայտել վերոհիշյալ հարաբերությունները, օրինակ՝ Եվ ահա ես թողած *իմ ձին՝* այն մռայլ դղյակը մտա *(ՉԵ, 153)։* Ինչպես անենք, որ *իմ այգին* դառնա դրախտն առաջվան *(Թ., II, 156)։* Արածում էր ծովի ափին բազմությունը *ու հոտերի (Թ., «Լուսկան»)։ Իմ միտն է* գալիս առուն մեր դռան *(Անթ., 419)։* Անցած գարնան կային *ձեր լանջում (Թ., «Անուշ»)։ Իր լեռներից* բացի, ուրիշ ոչինչ չի տեսել *(ԱԲԵ, 606)։* Ցրվեցին՝ ինչ-որ նշան անելով *իրենց ընկերոջը (Նույն տեղում, 609)։* Մենք ունեցել ենք արդյոք *մեր* առօրյա *գործում, մեր երգերում,* գրած *ոտքերում մեր,*— Ունեցել ենք արդյոք *մեր խոհերի* խորքում, Այս խստությունը խոր ու անչափ վեհ *(ՉԸԵ, 184)։* Յուրաքանչյուրը զբաղված էր յուր գործով. յուրաքանչյուրը խորասուզված էր իր խոկումների մեջ *(Ր., III, 228)։*

§ 675. *Ցուցական դերանուններից հատկացուցիչի պաշտոնով հանդես են գալիս՝* սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, մյուս, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այստեղ, այդտեղ, նույնտեղ, այսպիսի, այդպիսի, այնպիսի. *օրինակ՝ Նրանց երթը* գլխավորում էին Մարգարիտն ու Անուշը *(ՉԸԵ, 419)։* Ժողովուրդը լսեց *նրա երգերը* և սրտագին սիրեց նրան *(Իս., 290)։* Եվ մեկը *մյուսի* բերնի կոնակից բռնած պրեֆերանսի հնարքները էր սովորեցնում *(ՌՊԵ, 660)։* Թագավորը շատ զգացվեց *սրանց* եղբայրական *սիրուց (ՂԱԵ, 187)։* Հետադարձ շարժումները դիմակազերծ էր անում *այդպիսիների* ապազգա գործունեությունը *(Փափ., 413)։* Եվ մեր աստվածներիս շատ հաճելի կլինի *այսպիսիների* արյան հեղումը *(Ր., III, 368)։* Ինչու մեկի աշխարհն գալով չենք ուրախանում, *մյուսի* էլ աշխարհից *հեռանալուն չենք տխրում (ՌՊԵ, 664)։ Այստեղի* բժիշկները ամե-

որ ճանաչում են մեզ (*Շիրվ., II, 308*)։ *Այսքանի* խոսքը գետին ես ցցում։ *Այդպիսիների* խոսքին չպետք է հավատալ *և այլն*։

§ 676. *Հատկացուցիչ է դառնում նաև մյուս դերանունների մեծ մասը. օրինակ՝ Ում* սիրտը ուրախացրի, *ում* աչքի արտասուքը կտրեցի, *ում* վիրավոր սրտի վրա սպեղանի դրի (*Նույն տեղում*, 638)։ Խոջա-Հիքանի մահից հետո այդ խանութն էր ավելացել Կարմրաքարում, *որի* շաքարն ու չիրը գնված էին այն դրամով (*ԱԲԵ, 471*)։ Մեզանից *ոչ ոքի* անունը գոնե չի տալիս (*Նար., II, 186*)։ Նա պահում էր *բոլորի* փողերը (*ՎՓՀՀ, 183*)։ Կարդում էր *յուրաքանչյուրի* ֆինանսական դրությունը (*նույն տեղում*)։ Հուբերտի դեմքից կնճիռները քանդվում են *իրար* հետևից (*Ալաջաջյան, «Անապատում», 184*)։ *Որոնց հնչյունները* հարազատ էին թվում ինձ (*ԻսԵ, 293*)։ Ամենքի լավն ասա (*ԳՍԹ, I, 54*)։ Ես կուզեի այդ բոլորի վրեժը հանել (*Փափ., 494*)։ Բայց *ամենի* գլուխ գործոցը եղավ մեր սեղանը (*Մուր., IV, 136*)։

§ 677. *Մնացած խոսքի մասերը նույնպես հատկացուցիչ են դառնում. օրինակ՝* Եվ երգերս խնդուն՝ ես խրում եմ *Հնի* սիրտը, ինչպես մի դաշույն (*ՋԸԵ, 253*)։ Այնքան թանկ արյուններով՝ *դրսի* թշնամիներից, օտար տերերից ազատված Իտալիան ընկավ մի նոր տեսակի գերության մեջ (*ԻսԵ, 188*)։ *Լավի* դարձի հույս չկա (*Իսահակյան*)։ Ամեն մի բանակն ընտրեց փահլևան, կանգնեց թիկունքին տղերանց *մեկի* (*Թումանյան*)։ Որ հին ամուսնուդ *մեկ տասներորդի* քսաներորդն էլ չկա (*Շեքս., I, 69*)։ Թող *գալիքի* երգը մեզ հուշարձան լինի (*Հուլյան*)։ Երեք *հազարի* ամբողջ գումարը (*Շեքս., I, 510*)։ *Միլիոնների* բանակներ են դուրս եկել իրարու դեմ (*Շիրվ., V, 319*)։ *Առաջվա* անորոշ մտախոհությամբ շարունակ նայում էր դեպի լուսամուտը (*Նար., II, 182*)։ Մի գիշեր ժամը այսպես, *տասներկուսի* մոտերքը, կլուբից եկա (*ՌՊԵ, 635*)։ Էլ *ընչի* մուժիկ, կամ էլ ինչ թավադ (*Թ., «Հառաչանք»*)։ Նազարի *տակի* ձիուկը... խրխնջում է (*Թ., «Քաջ Նազար»*)։ Սրան տանում են իր դրոշակով սուփրի *վերի* ծերին բազմեցնում (*նույն տեղում*)։ *Ներքևի* ծերից մինը բոռում է։ Բացականչում է *պարծենկոտի* մինը (*նույն տեղում*)։

գ) ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉԻ ԵՎ ՀԱՏԿԱՑՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 678. *Հատկացուցիչը անկախ հատկացյալի թվից, նրա այս կամ այն խոսքի մասի լինելուց, ըստ իմաստի թե՛ եզակի է կիրառ-*

վում, թե՝ հոգնակի։ Բայց հատկացյալը թվով որոշ չափով կախվածության մեջ է գտնվում հատկացուցիչից, այսինքն՝ որոշ դեպքերում հատկացյալը անպատճառ հոգնակի է դրվում. օրինակ՝ Գինետների սեղանների տակն է որոնում անկումն *(Փափ., 413)։* Մեծ արձակուրդները լինում էին *զատկի և ծննդյան տոների* ժամանակ: Մեր վարժապետը *աշակերտների ոտները* դնում էր ֆալախկայի մեջ *(Ր., IV, 259)։* Գուցե աշակերտները արձակուրդի ժամանակ *իրանց տներում* կամ դրսում որևիցե անկարգություն արած լինեին *(նույն տեղում)։* Նրա աչքերի առաջ հառնում էր վանքը՝ *զարմանի* և *ցորենի շեղջակույտերով (ԱԲԵ, 566)։*

§ 679. Հատկացուցիչի պահանջով հատկացյալը հոգնակի է դրվում, երբ հատկացուցիչը հոգնակի է և հոգնակի հատկացուցիչի մեջ մտնող յուրաքանչյուրին պատկանում է հատկացյալից մի-մի հատ. եթե հատկացյալը եզակի դրվի, կստացվի, որ երկուսով միասին մի հատ ունեն. օրինակ՝ Մեզ ուղեկցեցին մինչև նավահանգիստ՝ ուսերի վրա բերելով *մեր իրերը (ՎՓՀՀ, 226)։* Ինչպես են հաշտվում ձեր *տեմպերամենտները (Նար., III, 45)։* Շտապ մտան *իրենց տները (ԳՍԹ, I, 97)։* Ցեխային պարտիական *կազմակերպությունների քարտուղարների* հետ կատարվող աշխատանքը *(ՍՀ, 1953, № 108)։* Պատրաստել են տարբեր երկրների գործարաններում *(ՍՀ, 1953, № 298)։*

§ 680. Հատկացյալը հոգնակի է դրվում, երբ ունի երկու կամ ավելի հատկացուցիչներ, որոնք տարբեր առարկաներ են ներկայացնում. օրինակ՝ Որի պրպտող լուսավոր միտքը մարդկային դատողության հիմքն էր դրել՝ իր *պլատոնների* և *սոկրատների* ոսկեմատյան *գործերով (ՎՓՀՀ, 233)։ Յագոյի,* մանավանդ *Դեզդեմոնայի դերակատարներից* օգտվեցի *(նույն տեղում, 237)։* Բակում *ուռու* և *թթի ծառեր* կային *(ԳՍԹ, I, 213)։ Ֆիզիկայի և քիմիայի առարկաներում (նույն տեղում, 212)։ Տամայի և նարդու խաղերը (Իս., III, 311)։* Որին ծանոթացա *Մոսկվայի* և *Պետերբուրգի համալսարաններում (Անթ., 463)։ Հողի, քարի, կրի, աղյուսների և փայտերի* անպիտան *կտորտանքը* դիզվում էին նրա մոտ *(Ր., IV, 7)։*

§ 681. Հատկացյալը եզակի է դրվում այն ժամանակ, երբ հոգնակին անսովոր է և եզակիի համեմատությամբ այլ նշանակություն ունի. օրինակ՝ Ամոթի և նվաստացման կարմիրն երեսին *(Նար., VII, 178)։ Մեր մամուլը* նրա այս թերության պատճառը համարում է այն *(Շիրվ., IX, 110)։* Հայ *պարբերականների թիվը*

հասել էր վաքսունևուքի *(ՎՓՀՀ, 248)*. *Չի կարելի գրել ամոթի և՛ նվաստացման* կարմիրները և մեր մամուլները, *եթե դա վերաբերի նույնիսկ* Ռուսաստանի և մեր մամուլին:

§ *682. Հոգնակի և բազմակի հատկացուցիչների հատկացյալը եզակի է դրվում, երբ հատկացյալը պատկանում է բոլոր հատկացուցիչներին. օրինակ՝* Լեղապատառ ներս ընկավ տուն *իր հոտերի վերակացուն (Թ., «Հսկան»)։* Որոնք ուխտեցին *մեր* Սահակ *հոր* և Մեսրոպի առջև գնալ *(Ր., IV, 178)։ Մեր հայրը իմ և քրոջս տունը* խլեց: Շարունակում էին *իրենց ճանապարհը (Իս., III, 305)։* Ճանփա են ընկնում դեպի տուն՝ *իրենց* պառավ *մոր* մոտ *(Թ., III, 279)։*

Այսպես է նաև այն ժամանակ, երբ հատկացյալը մոտենում է կապական բառերի կամ ունի դարձվածքային նշանակություն. օրինակ՝ Հոր ու մոր մեղքը տղային կհարցնեն *(Առած., 31)։* Հոր ու մոր հարգը չիմացող զավակը *(Նույն տեղում)։* Գերի ընկավ պարսիկների ձեռքում *(Ր., IV, 395)։*

§ *683. Հատկացյալը եզակի է դրվում, երբ ունի այնպիսի հատկացուցիչ, որ առանձին-առանձին է նշում յուրաքանչյուր հատկացյալ. օրինակ՝* Ազատամիտ մարդիկ *իրենց* յուրաքանչյուր ազատ *մտքի* համար դատապարտվում են աքսորի *(Անթ., 467)։*

§ *684. Բազմակի և հոգնակի հատկացուցիչների հատկացյալը եզակի է դրվում, երբ դա հանդես է գալիս իբրև առանձին վերացական երևույթ և կամ բազմակի ու հոգնակի հատկացուցիչների առանձին հատկացյալները միացած մի ամբողջություն, մի որակ, մի զանգված են կազմում. այս դեպքում թիվը հաշվի չի առնվում. օրինակ՝ Կանանց ճիչ* ու *ծղրտոցի* տեղ այժմ *ծղրիդների* ֆուն բեռող անդադրում *ճռինչ* էր լսվում *(Նար., IV, 120)։* Լսում է վառոդի հոտն առած ու գրգռված *ձիերի խրխինջը,* նրանց *սմբակների դոփն* ու *դոփյունը, փողերի* ու *թմբուկների* ռազմիկ ոգևորիչ *ձայնը (Իս., III, 310)։* Թագավորը շրջապատված կլինի իրեն *մոտիկների* ու *մեծամեծերի* էն տեսակ *բազմությունով (Թ., III, 282)։* Այդ *երիտասարդների ընկերակցությունը* չէր գրավում ինձ *(Փափ., 415)։* Գոյանում էր անթիվ, անհամար *բղեզների* ու *մեղուների բզզոցից, թռչունների կանչից* ու վար *անողների* երկար ու ձիգ *հորովելից (ԱԲԵ, 485)։* Տեսնում է *թագավորների* անթիվ *շարանը (ՎՓՀՀ, 292)։* Իսկ *ներկայացումների հայտարարման* կարգը նախապատմական ձևով էր կատարվում *(Նույն տեղում, 225)։*

Իսկ եթե հատկացյալները չափազանց վերացական են, հոգնակին գրեթե չի կիրառվում. օրինակ՝ Նրանք պահանջեցին կազմակերպել մեր *քաղաքների ու գյուղերի բարեկարգումը (ՍՀ, 1953, № 110)*։ Խոսքի և երաժշտության ուժեղացումը *(նույն տեղում, № 107)*։ Մեծ դահլիճների, կայարանների, հրապարակների ներդաշնակավորման տեխնիկան *(նույն տեղում)*։

§ 685. *Անշուշտ վերևում բերվածները ընդհանուր օրինաչափություններ են։ Երբեմն նույնիսկ թանձրացյալ առարկաները նույնպես եզակի են դրվում միևնույն տիպի հատկացուցիչներ ունենալով, որ անտրամաբանական է, եթե հատկացյալները չեն ստացել ընդհանուր վերացական նշանակություն, կամ մասամբ կապական արժեք. օրինակ՝* Կլսեի աղջիկ փախցնող *քրդերի ոտքի* ձայնը *(Իս., III, 313)*։ Հազիվ ազատվել է երկու ոստիկանի *(ոստիկանների)* ձեռքից *(Անթ., 462)*։ Որոնք պահում էին զանազան *սուրբերի մարմնի (փոխանակ մարմինների)* փշրանքները *(Ր., IV, 394)*։ Որոնք գրված էին սուրբ *մարդերի գրիչով նույն տեղում, 396)*։ *Համեմատի՛ր նաև՝* Տղամարդկանց ու կանանց, ծերերի ու երեխաների *կերպարանքներով (Թ., III, 353)*։

§ 686. *Բազմակի հատկացուցիչների հատկացյալը կարող է օրինաչափ կերպով եզակի դրվել, եթե հատկացուցիչները անջատված են անջատական շաղկապներով. օրինակ՝* Նա չէր կարող *սրա* կամ *նրա* մորուքին խունկ ծխել *(ՎՓՀՀ, 187)*։ Թե՛ մեր, թե՛ ձեր տունը նոր է: Նա չէր կարող և իմ և քո գիրքը միաժամանակ կարդալ:

§ 687. *Մասնական հատկացուցիչը, եթե հավաքական անուն չէ, գերազանցապես հոգնակի է դրվում։ Այսպես է նաև գերադրության հատկացուցիչը. օրինակ՝ Որոնցից* մեկը իր կողմը ձգելով Շատախու, մյուսը Սասնո կիսավայրենի հայ լեռնականներին *(Ր., IV, 397)*։ Որոնց վրայով տանելու էր ինձ իմ նավը մինչև բոլոր *վերջերի վերջը (ՎՓՀՀ, 89)*։ Հասնում էր *նրբերի նրբին*, առանց *վերջերի վերջին* հանգելու *(նույն տեղում, 135)* Ներե՞նք էն վիրավորանքը, որ սա հասցրել է մեր ամենախիմաստուն, ամենազերազույն, ամենաանհետատես, ամենասուրատես թագավորին, աշխարհքի կենտրոնին, աստծու ատվերին, *աստղերի աստղին, արեգակների արեգակին (Թ., III, 281)*։ Որ կարող էր իմ *գիշերների վերջինը* լինել *(ՎՓՀՀ, 248)*։

3. ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

§ 688. Բացահայտիչը նախադասության գոյական կամ գոյականացած որևէ անդամի այնպիսի գոյական կամ գոյականացած լրացում է, որը ետադաս դիրք ունի, սովորաբար համաձայնում է իր բացահայտյալի հետ թվով, հոլովով, հոդառությամբ և հատուկ արտաբերումով անջատվում է նրանից. օրինակ՝ **Դավիթը՝ իմ որդին ընդունակ երեխա է:**

§ 689. Նախադասության գոյականացած անդամ ասելով պետք է հասկանալ այն բոլոր խոսքի մասերը, որոնք կարող են գոյականի կիրառությամբ հանդես գալ, այսինքն՝ որևէ ձևով գոյականանալ։ Նախադասության մեջ չկան այնպիսի գոյական կամ գոյականի կիրառություն ունեցող բառեր, որոնք միայն բացահայտիչ կամ բացահայտյալ լինեն։ Որևէ բառի բացահայտիչ կամ բացահայտյալ լինելը կախված է այն բանից, թե ունի՞ այդ բառը գոյականի կիրառություն և երկրորդ՝ եթե բացահայտիչ է, որևէ կողմից բացահայտում է բացահայտյալը։

§ 690. Բացահայտիչն ու բացահայտյալը իրար հետ այնպիսի հարաբերությունների մեջ են մտնում, որտեղ ընդհանուրը բացահայտվում է մասնավորով, կամ ընդհակառակը՝ մասնավորը բացահայտվում է ընդհանուրով, հասարակ անունը՝ հատուկ անունով, հատուկը՝ հասարակով, առարկաների ու երևույթների անունները զանազան հատկանիշների անուններով և ընդհակառակը։

§ 691. Հիշյալ բառերից որն էլ լինի բացահայտիչ, քերականական կախման մեջ է գտնվում իր բացահայտյալի նկատմամբ։ Ուրեմն բացահայտիչը ունի նաև քերականական ձևավորվածություն, այսինքն՝ սովորաբար հանդես է գալիս այն հոլովով ու թվով, ինչ հոլովով և թվով դրված է իր բացահայտյալը։

Լեզուներում բացահայտիչ հասկացողությունը կապվում է գոյական լրացման հետ. այսինքն՝ որևէ գոյական կամ գոյականացած լրացում ինչ դիրքով էլ լրացնի նախադասության մեջ իր նման մի անդամի, դառնում է բացահայտիչ։ Մեր տաղանդավոր քերական Այտընյանը նույնպես է ձևակերպում. ամեն գոյականական լրացում բացահայտիչ է, այսինքն՝ թե՛ **Դավիթը՝ իմ որդին** կապակցության մեջ՝ **իմ որդին** և թե՛ **իմ որդի Դավիթը** կապակցության մեջ՝ **իմ որդի**:

Սակայն մեր քերականության մեջ այժմ բացահայտիչ է հա-

մարվում միայն ետադաս ձևը, իսկ նախադասը համարվում է որոշիչ և իսկապես իր կիրառությամբ չի տարբերվում որոշիչից։

§ 692. Ետադաս գոյական կամ գոյականացած լրացումն ունի մի քանի այնպիսի առանձնահատկություններ, որոնք նախադաս վիճակում վերանում են։ Նախադաս գոյականական լրացումները ոչ մի դեպքում քերականական ձևավորված համաձայնության մեջ չեն մտնում իրենց լրացյալների հետ. դրանք կիրառվում են ճիշտ այնպես, ինչպես ածական, թվական լրացումները։ Նախադաս լրացումը իր լրացյալի հետ ավել կամ պակաս չափով մի արտաքերական ամբողջություն է ներկայացնում և զուրկ է քերականական ինքնուրույնությունից։

Իսկ ետադաս լրացումը ունի արտաքերական անկախություն, որի պատճառով կրում է հատուկ առանձնացման, բացահայտման նշան։ Հիմնականում հոլովով, թվով, դեմքով, հոդառությամբ համաձայնում է իր լրացյալի հետ՝ ձեռք բերելով, սակայն, որոշ քերականական ինքնուրույնություն, որ դրսևորվում է հիշյալ քերականական կարգերով ձևավորված լինելու հետևանքով։ Ուրեմն չնայած այդ ձևավորությունը արդյունք է քերականական կախվածության, բայց այնուամենայնիվ դրանով իսկ ետադաս գոյականական լրացումը ստանում է դիմային և քերականական որոշ ինքնուրույնություն։ Այս վերջինը արտահայտվում է նրանով, որ երբեմն բացահայտիչը խլում է ենթակայի պաշտոնը և մտնում է ստորոգյալի հետ որոշ հարաբերության մեջ. օրինակ՝ Ժողովրդական հոծ բազմություններ՝ Հայոց ժողովուրդը, վեր կացած երկրի բոլոր կողմերից, ալեկոծ հորձանքով գալիս էր, ծովանում (ԴԴՎ, 674)։ Այս նախադասության մեջ ենթական է բազմություններ բառը, որ միաժամանակ բացահայտյալ է. իսկ ժողովուրդը բառը գոյականական ետադաս լրացում է, այսինքն՝ բացահայտիչ է, որ, սակայն, իր վրա է առել հենց իր բացահայտյալի (ենթակայի) պաշտոնը և դարձել է ենթակա։ Այս կիրառությունը ձեռք է բերված քերականական ձևավորվածությամբ, այսինքն՝ որոշվածությամբ (մինչդեռ բացահայտյալը անորոշ է) եզակի է (բացահայտյալը հոգնակի է), թվով համաձայնել է ստորոգյալի հետ. միայն հոլովով և դեմքով է համընկնում իր բացահայտյալին։

§ 693. Բացահայտիչի անկախությունը երբեմն արտահայտվում է նաև նրանով, որ թեք հոլովներով գործածվելիս հաճախ բացահայտիչը խլում է իր բացահայտյալի հետ առնչակցվող այս կամ այն բառը. օրինակ՝ Նրանց՝ այդ երկու քույրերի մեջ քիչ նմա-

նություն կա (ԳՍԹ, I, 131)։ Եթե նկատի չառնենք այդ և երկու բառերը, որ արդարև պատկանում են բացահայտիչին, ապա մեջ կապը նրանց դերանուն բացահայտյալին է առնչվում, բայց եկել միացել է քույրերի բացահայտիչ բառին։ Իսկ որոշիչը այսպիսի առանձնահատկություններ չունի։

Բացահայտիչը իբրև լրացում արտահայտում է գոյականի մի. այլ հատկանիշի անունը անկախ կերպով, իսկ որոշիչը ցույց է տալիս ոչ թե առարկայի հատկանիշի անունը, այլ հատկանիշը, որ առարկայից անկախ չէ, այլ կապված է լրացյալ գոյականի պատկերացման հետ. օրինակ՝ Բերեց մատիտները՝ կարմիրը, կանաչը, դեղինը. բերեց կարմիր, կանաչ, դեղին մատիտները: Մի այլ օրինակ՝ Այն նառը՝ Վսուղին համարձակվում է ինստիտուտից դուրս անել (ԳՍԹ, I, 291)։ Այստեղ Վսուղին բացահայտիչ է նառ բառի համար և դրանք զուգադրված են միմյանց՝ մեկը ընդհանուրի անունով, մյուսը՝ մասնավորի, որոնցից մասնավորը լրացնում է ընդհանուրին, իսկ այն Վսուղի նառը կապակցության մեջ այդ առանձնացումը և քերականական ձևավորվածությունը չկա, այստեղ արդեն Վսուղի դառնում է որոշիչ։

§ 694. Իրենց նշանակություններով բացահայտիչները բազմազան են և կարող են բացահայտել ամեն տիպի ու տեսակի հարաբերություն. օրինակ՝ բացահայտիչը մասնավորում, ընդհանրացնում, անվանում, հատկանշում, որակավորում և առհասարակ ամեն կողմով լրացնում է բացահայտյալը։

§ 695. Հատուկ անունները, դառնալով հասարակ անունների բացահայտիչ, ճշտում, մասնավորում և անվանում են այն. օրինակ՝ Հորս հետ գալիս էին պարսից երկու նշանավոր զորապետները՝ Ձիկ և Կարեն (Ր., III, 125)։ Գնում էր դեպի յուր նախահարց ոստանը՝ իշխանական մայրաքաղաք Հաղամակերտ (նույն տեղում, 341)։ Սկսեցինք փորձերը Ռուբեն Ջալալյանի եղբոր՝ Արշակի տնօրինության տակ եղած «Փարիզ» հյուրանոցում (Զմշկյան, 98)։ Այս և հետագա յոթ հեքիաթը՝ «Սագարած աղջիկը», «Զարմանալի աշուղը», «Գորտը», «Հենզելն ու Գրետելը», «Կարմրիկը», «Մոխրոտը» և «Ճերմակ օձը» Գրիմմ եղբայրների հեքիաթներից են (Թ., III, 521)։ Վսուղին ծաղրածուի պես ձգվում էր, շատ էր ձգվում, որպեսզի երկարի անգամ իրենից՝ Վսուղիից էլ բարձր երևա (ԳՍԹ, I, 120)։ Գոյացավ մի փոքրիկ խումբ հետևյալ անձերից՝ Գրիգոր Արծրունուց, Շահվերդյանից, Պերճ Պռոշյանից, Իզմայիլյանից

(Զմշկյան, 109)։ Դա միջոց էր ծածկելու համար բուն նպատակը՝ *Վասակը (ԴԴՎ., 297)*։

§ *696. Սրան հակառակ հատուկ անունը կարող է բացահայտվել հասարակ անունով, որ ցույց է տալիս զբաղմունքը, կոչումը, հատկանիշի անունը, ինչ լինելը, յուրահատկությունները և այլն։ Օրինակ՝* Պարոն, պարոն Ամերիկյան, Սուքիասյան, Մատինյան՝ ապագա երևելի *տաղանդներ (Զմշկյան, 23)*։ *Հետևյալ նախադասության մեջ երկու տեսակի բացահայտիչներն էլ հանդես են գալիս. օրինակ՝* Ես մեկ առանձին ուրախություն զգացի՝ տեսնելո՛ այդ գործիչներին՝ հանգուցյալ *Սարինյանին* և *Պ. Պատկանյանին*՝ իմ *ուսուցիչներիս* Ներսիսյան ուսումնարանում եղած ժամանակ *(Զմշկյան, 22)*։ Երեք օր հետո Ջեհրաբին Մադինեին տարավ Շիմրան՝ Թեհրանից ոչ այնքան հեռու գտնվող *ամառանոցը (ԳՍԹ, I, 84)*։

§ *697. Բացահայտիչ կարող է դառնալ այն վայրը, որտեղ գտնվում է բացահայտյալը, բայց փոխանունաբար մեկը նշանակում է մյուսը. օրինակ՝* Վերադառնալու էր իր աթոռը՝ *Դվին (Մուր., III, 357)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Մասամբ բացահայտիչի, մասամբ ճշտող, որոշող նշանակություն է ստանում այն բառը կամ կապակցությունը, որ իբրև մասնավոր, կամ ընդհանուր տարածություն արտահայտող հասկացություն, պարփակում է ճշտվող, մեկնաբանվող բառը կամ, ընդհակառակը, պարփակվում է նրա մեջ։ Օրինակ՝ Մտնելու էր բժշկականության բարձրագույն դպրոցը՝ *Պետերբուրգ (Փափ., 388)*։ *Նախապես եղել է...* դպրոցը, որ գտնվում էր Պետերբուրգում: Գնաց Փարիզ՝ *քեռու մոտ (ԳՍԹ, I, 83)*։ Նրա գահույքի պատվանդանի ներքև՝ *հատակի վրա* գետնատարած *(Իս., III, 298)*։

§ *698. Բացահայտիչը նշում է ավելի ճիշտ, ավելի հասկանալի անվանումը, բացահայտյալի ինչ լինելը. օրինակ՝* Ահա սկսվեց իմ՝ *արտիստի* կյանքը: Եվ խղճմտորեն կիրառում էր այդ մեթոդները մեր՝ *կրտսերներիս* վերաբերմամբ *(ՎՓՀՀ, 193, 110)*։ Նրա երեք ընկերները՝ հեղկոմի երեք *անդամը* սպասում են *(Ընտ. էջեր, 961)*։ Մենք՝ *բանվորներս (Անթ., 45)*։

§ *699. Բացահայտիչը բացահայտում է բացահայտյալի ինչ լինելը, ցույց է տալիս սրա մեջ մտնող առարկաների, երևույթների անվանումը, թվարկումը, ընդհանուրի մեջ մտնող մասնավորն է,*

հանդիսանում. օրինակ՝ Մաղինեն ուղղակի ճրճվում էր իր տեսածով՝ մեծ շենքերով, չտեսնված մեծ *խանութներով, մզկիթներով,* աղմկոտ բազմամարդ *փողոցներով (ԳՍԹ, I, 84)։* Մեր ճումբը՝ *բուրդը, նավթը, բամբակը, ջութը (Նույն տեղում, 421)։*

§ 700. Վերջինին հակադիր՝ բացահայտիչը թվարկված մասնավոր երևույթները ընդհանրացնում է մի ամբողջի մեջ և արտահայտում ընդհանուր բառերով. օրինակ՝ Պաշտպանել հայրենիքը չկորցնել ազատությունը՝ *դա* վերաբերում է նաև իրեն և իր որդիներին *(ԴԴՎ, 267)։* Իմ թագավորի վիճակը վայելուչ դրության մեջ դնելը և նրա վշտերը թեթևացնելը՝ այդ *բոլորը* իմ գործը պետք է լինի *(Ր., III, 257)։ Այսպիսի բացահայտիչները միայն ձևական բնույթ են կրում և ստանում են ընդհանրացնող արժեք։*

§ 701. Գեղարվեստական խոսքի մեջ հաճախ բացահայտիչը հանդես է գալիս իբրև փոխաբերություն, պատկերավոր շրջաբանական արտահայտություն, այսինքն՝ սովորական բացահայտյալը դառնում է արտահայտիչ ու գեղեցիկ. օրինակ՝ Էյ աստղեր, աստղեր՝ երկնքի *աչքեր,* որ այդպես վառ-վառ ժպտում եք պայծառ *(Թ., I, 74)։* Սիրիուս՝ երկնից անեղ *անցվոր,* Ուրկի՞ց եկել, Ո՞ւր ես թեքել *(Նույն տեղում, 198)։*

Այս նույն ոճով բացահայտիչի հետ դրվում է անձնական դերանուն, երբ բացահայտյալը կոչական է՝ շեշտելու համար. օրինակ՝ Մոսկվա, Պետրոգրադ՝ *Դուք* մեր *աղբյուրը* ոգևորության *(ՀՀե, 154)։*

§ 702. Բացահայտիչը կարող է բացահայտյալի կրկնությունը լինել, որը նույնաբանական (տավտալոգիա) արժեք ունի. բայց նույնաբանությունը վերանում է, երբ կրկնվող բացահայտիչը ունենում է որևէ լրացում, որպիսի լրացումից զուրկ է բացահայտյալը (այն կարող է ուրիշ լրացում ունենալ). այսպիսի կրկնությունը կորցնում է բացահայտող նշանակությունը։ Այս դեպքում բացահայտիչը ձևավորվում է իր լրացումների միջոցով. օրինակ՝ Տանտերս հայ էր՝ *թիֆլիսեցի հայ (Նար., IV, 68)։ Գիշեր* էր՝ *մութ գիշեր (ԳՍԹ, I, 252)։* Եվ դու տաղտկալի ունայնություն ես՝ *սին անմիտ ունայնություն (Իս., III, 216)։ Այս նույնը կարող է այլ միջոցով ձևավորվել. օրինակ՝* Ընդհակառակն՝ նրա քույրը տեղն ու տեղը *կրակ էր՝ կրակ շարժումների մեջ, կրակ քայլվածքի մեջ, կրակ խոսակցության մեջ (Նար., II, 551)։*

§ 703. Կրկնվող բացահայտիչը կարող է ձևավորվել նաև հատկացուցիչով. օրինակ՝ Խարույկները ծխում էին ու ծխանոտը խառ-

291—18

նում բանակի հատուկ հոտին՝ *ձիու, կաշվի, մետաղի և քրտինքի* *(ԴԴՎ, 466)։ Այստեղ բուն բացահայտիչը զեղչված է։ Այս նույնը լինում է որոշիչների նկատմամբ, այսինքն՝ բացահայտիչը զեղչվում է, և նրան փոխարինում են իր որոշիչները, ավելի ճիշտ նշում են բացահայտիչի գոյության փաստը. օրինակ՝* Օ՜հ, ի՜նչ սիրուն են այս մանր քարերը, ի՜նչ սիրուն գույներ ունեն՝ *կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե (Իս., III, 228)։ Պետք է լիներ՝* կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե գույներ։ Ղափանի անտառներում երկու տեսակ արջ կա՝ մսակեր և բուսակեր *(ՎԱՈՊ), այսինքն* մսակեր ու բուսակեր արջ։

§ *704. Այսպիսի պարագաներում բացահայտիչի լրացումները կարող են գոյականանալ և դառնալ սղված բացահայտիչին փոխարինող իսկական բացահայտիչներ. օրինակ՝* Ես սիրել եմ հորս, սիրում եմ մորս, բայց ինչպես զոհեմ այդ սիրույն մի ուրիշ ավելի զորավոր սեր՝ *հայրականը (Շիրվ., IV, 41)։*

§ *705. Կրկնվող բացահայտիչը շատ ավելի է ուժեղանում, երբ նրա լրացումները բացահայտիչ են դառնում բացահայտյալի լրացումների համար. օրինակ՝* Նա կատարում է Ռիշելիեի դերը՝ այդ երևելի քաղաքագետ *ֆրանսիացու դերը,* պարթև, միևնույն ժամանակ թույլ կազմվածքով, բայց հոգով հզոր և խորամանկ *կարդինալի դերը (Զմշկյան, 91)։*

§ *706. Կրկնությանը մոտենում է այնպիսի բացահայտիչ կրկնությունը կամ կիսակրկնությունը, որ որոշվում է* մի *անորոշով և* այն *ցուցականով ու հիմք է ծառայում մի հարաբերական երկրորդական նախադասության համար. օրինակ՝* Ամբողջ սարը կազմված է վիթխարի կտոր ժայռից՝ *մի սպիտակ ժայռ,* որի ճակատը... *(ՎԱՈՊ, 42)։* Կանաչին է տալիս լեռնային «թոփալախոտը»՝ *այն խոտը*, որ ձյան տակ անգամ չի կորցնում իր կանաչ գույնն ու թարմությունը *(Նույն տեղում, 43)։*

§ *707. Վերևում մենք քննեցինք, այսպես կոչված, կրկնության ձևերը. այժմ տեսնենք մյուս բացահայտիչները ինչ ձևերով են հանդես գալիս, և այս կամ այն խոսքի մասը ինչպես է բացահայտիչ դառնում։*

Ինչպես արդեն նշվել է, բացահայտիչ դառնում են բոլոր խոսքի մասերը, եթե գոյականանում կամ գոյականաբար են գործածվում։ Ահա մի քանի օրինակներ, որոնց մեջ բացահայտիչները դերանուն, բայ, թվական, ածական և այլ խոսքի մասեր են։

Երբ արյաց հազարապետի՝ *իրեն* խաղերը չեն *(ԴԴՎ, 26)։* Ձեզ

բոլորից հեշտ բան է թվում շահի հետ վեճի մտնելը (*ԳՍԹ, 421*)։ Ժամացույցը դանդաղ խփեց ինչ-որ ժամի՝ հավանորեն *ինն*, երեք քառորդը (*Չեխով, I, 591*)։ Մինչև հանդես եկա նվաստս՝ *ես* (*ՉԸ, 480*)։ Իսկ ես՝ *հիմարս*, կարծում էի, թե դու արդեն կորար (*Շիրվ., VII, 183*)։ Նրան և Վասակյաններին շատ վիրավորեց Վարդանի անարգանքը՝ անծեսավոր *ներս մտնելը* (*ԴԴՎ, 437*)։ Ամեն բանի մեջ՝ *ուտելում, խմելում, հագնելում* սաստիկ խնայողություն էին անում (*Նար., IV, 42*)։

Այսպես բացահայտիչ կարող են դառնալ հոլովվող բոլոր խոսքի մասերը բոլոր հոլովներով, թվերով և դեմքերով։ Ինչ խոսքի մաս որ բացահայտիչ է դառնում, նույնը և կարող է լինել բացահայտյալը։ Համեմատի՛ր նաև հետևյալ օրինակները։ Մաղինեն երևի նենց *դրանից*՝ *գնից* էլ վախենում էր (*ԳՍԹ, I, 357*)։ Ծովի մի *կտոր*՝ Բզնունյաց ծովը (*ԴԴՎ, 177*)։ Նրանցից մեկը՝ երազող աչքերով և մոլեռանդ դեմքով մի հասուն երիտասարդ (*ԴԴՎ, 4*)։ *Եկվորները*՝ *նախարարները* իրենց համհարզներով կամուրջը ծեծելով եկան դեպի քաղաքադուռը (*Նույն տեղում, 53*)։ *Ճաշը*՝ նրա գնալու *ժամը*, վաղուց անցել էր (*Ընտ. էջեր, 963*)։ Նա՝ այդ քայքայված հնամաշ *միլիոնները* (*Շիրվ., III, 374*)։

§ 708. *Բացահայտիչներ կարող են լինել ամբողջ կապակցություններ, կապերով արտահայտություններ. օրինակ*՝ Ինձ արդեն հայտնի էր հեղինակի դիտավորությունը՝ *գրել «Քանդած օջախ» անունով մի նոր պիեսա* (*Զմշկյան, 99*)։ Տարօրինակ սովորություն ունեն այդ միամիտ թռչունները՝ *ողջ շրջակայքում բույն դնել բացառապես Ավագյանենց տանիքի բազմաթիվ խոռոչներում* (*ՆԶՀ, 20*)։

§ 709. *Առանձնապես տարբերվում է* իբրև, որպես, ինչպես *բառերով արտահայտված բացահայտիչը, որը կողմնակի կերպով է բացահայտում առարկան. մի կողմից բացահայտիչ է, իսկ մյուս կողմից՝ գործողության հիմունքի ձևի պարագա է, որոնք երկուսն էլ թույլ են արտահայտվում. օրինակ*՝ Այդ օրից երկու շաբաթ անցած՝ Դիմաքսյանը սկսեց այցելել Ներսիսյան դպրոցը *ինչպես ուսուցիչ* (*Շիրվ., III, 17*)։ Արոյանցը՝ *ինչպես* հին վաճառական և չափազանց միամիտ *մարդ*, տեղեկություն չի ունեցել (*Շիրվ., I, 53*)։ Դա նրա գյուտն էր՝ իբրև *կրոնավորի* (*ԴԴՎ, 444*)։ Գոհարն անպայման հավատում էր նրան՝ *իբրև* յուր հարազատ եղբոր (*Մուր., II, 180*)։ Այս առանձին պատիվը նա վայելում էր *իբրև* ժողովարանի ինը վերակացուներից մեկը և որ գլխավորն է՝ *իբրև*

հարուստ ամուրի, առատաձեռն Հալաբյանը *(Շիրվ., II, 162)*։ Լոռին *իբրև* լեռնային երկիր հաճախակի երկարատև անձրևներով հացը կտրվում է *(Թ., III, 10)*։ Տերյանը որպես բանաստեղծ տագնապավոր քնարերգու է:

Ծանոթություն 1. Այսպիսի բացահայտիչները կարող են նաև նախադաս կիրառվել. օրինակ՝ Իբրև Սյունյաց *Իշխանի՝* նրան կպատկանի Բագրատունյաց տոհմի աղջկա հետ ամուսնանալու առաջին իրավունքը *(Մուր., IV, 185)*։

Ծանոթություն 2. Որպես, ինչպես, իբրև *բառերով արտահայտված բացահայտիչը անորոշ է կիրառվում։*

§ *710. Բացահայտիչը ուժեղ ընդգծվում է, երբ արտահայտվում է՝ որևէ առարկայի հետ ունեցած փոխհարաբերությունը, տեղը մատնանշող* այս, այդ, այն *ցուցական դերանունների միջոցով, որոնք տվյալ դեպքում բացահայտիչի անառարկելի, կտրուկ լինելը դրսևորող որոշիչներ են. օրինակ՝* Թող չքանա կյանքը՝ *այդ* անագորույն *կռիվը* հացի համար *(Իս., III, 214)*։ Մի տեսակ հիվանդություն կա, որ բժշկական նոմենկլատուրայում տեղ չունի, ընթերցո՛ղ, որին ենթակա են լինում ջղային և դյուրազգաց հոգիները. *անտունների հոգեբանությունն է այդ (ՎՓՀՀ, 170)*։

§ *711. Բացահայտիչները շատ հաճախ ուղեկցվում են* այսինքն, այն է *մեկնական ու ընդհանրացնող բառերով, որոնք բացահայտիչը օժտում են ուժեղ տրամաբանական կտրուկությամբ, սահմանազատումով և առանձնապես գիտական խոսքի յուրահատկությամբ. օրինակ՝* Նրանցից մեկը վանական եղբայր էր, *այսինքն՝* վանքում ապրող *աշխարհական (ԴԴՎ, 4)*։ Նա խորհուրդ արավ յուր *զինակիցների,* այն է՝ Վահրամ *սեպուհի,* Մուշեղ *բերդակալի* և Գոռ *որդու հետ (Մուր., III, 357)*։ Իզուր կվառնեք ձեր թանկագին հարստությունը, *այն է՝* երիտասարդական հասակի աննման *եռանդն* ու *կորովը (Մուր., II, 63)*։ Հասարակ դիտողները, *այսինքն՝ ոչ-նկարիչները (ԳՍԹ, I, 421)*։

Ծանոթություն. Այն է *համանիշ է* այսինքն *բառին, որ սկզբնապես եղել է* այն ինքն է *(այսինքն է)։ Այժմ վերջին ձևերը, որոնք եղել են ամբողջական մեկնական նախադասություններ, այլևս չեն կիրառվում։ Համեմատի՛ր հետևյալ օրինակը.* Այն հատկությունները, *որոնց մասին կարելի է ասել՝* զորեղություն, ճարպկություն և թուլություն *(ՂԱ. IV, 11)*։ Որոնց մասին կարելի է ասել *ամբողջ նախադասությունը նշանակում է՝ այսինքն կամ* այն է:

§ *712. Երբ բացահայտիչը շատ է հեռանում բացահայտյալից, և կտրվում են նրանց հարակցական կապերը, հարկ է լինում որևէ ձևով նշել բացահայտիչի և բացահայտյալի շարահյուսական առընչությունը. այս պարագայում օգտագործվում են ընդհանրացնող, եզրակացնող* օրինակ, այսպես, մի բան *բառերն ու բառակապակցությունները և վերևում հիշատակված մյուս մեկնական ձևերը, որոնք ուժեղ արտաբերական դադար են ստեղծում, և բացահայտիչն ու նրա լրացումները ընդգծվում են տրամաբանական շեշտված առանձնացումով. օրինակ՝* Առհասարակ նոր մտքի, նոր գաղափարների «ինիցիատորը» միշտ հալածանքի է ենթարկվել, նույնիսկ մահվան. *օրինակ՝ Գալիլեյը, Հուսը, Լութերը և* այլն *(Նար., VII, 131)*։ Վերջապես կարողացա ռուս Թիֆլիս զգել՝ *մի բան,* որ վաղուց-վա տենչանքս էր *(Նար., VII, 67)*։

Ծանոթություն. Այս պարագայում մեկնական հիշյալ բառերի բացակայությունը հատուկ է առօրյա, պարզունակ խոսքին, օրինակ՝ Ամեն մեծ մարդոց ժամացույցի հետ կխոսա. Խրիմյան Հայրիկի, եպիսկոպոսների *(Իս., III, 292)*։

§ *713.* Մասնագիտությամբ, արհեստով, զբաղմունքով *բառերից հետո եկող՝* հյուսն, մեքենավար, ինժեներ, հաշվապահ, տեխնիկ *և այս կարգի բոլոր բառերը համարվում են առաջինների համար մասնավորող բացահայտիչներ. օրինակ՝* Մասնագիտությամբ ինժեներ, բժիշկ. արհեստով հյուսն, զբաղմունքով տնտեսուհի *և այլն։ Այդպես էլ ասվում է՝ մի մարդ՝* Հալաբյան *ազգանունով։* Երկրորդական դերերի համար ունեինք ծագումով հրեա երկու քույր՝ ֆոն Բրեններ *ազգանունով (Զմշկյան, 98)։* Այդ աղջիկը հայտնի էր անունով *Սալբի (Րաֆֆի) և այլն։*

§ *714.* Ինքս, ինքդ, ինքը *դրվում են* ես, դու, նա *դերանուններից հետո իբրև բացահայտիչներ և ցույց են տալիս առանձնահատկություն, ինքնուրույնություն, կտրականություն. սակայն դրանք իրար նկատմամբ բացահայտիչ և բացահայտյալ չպետք է համարվեն, այլ երկուսը միասին համապատասխան իրենց կիրառության՝ նախադասության այս կամ այն անդամը (§ 62)։ Այդպես է նաև ինքս անձամբ, դու ինքդ անձամբ և այլն։ Ահա մի քանի օրինակներ. Ես ինքս անձամբ* մեծ և շատ մեծ սփոփանք եմ զգում *(ՂԱ, III, 243)*։ Նա ինքն էր, որ շուք տվավ՝քո գոյությանը *(Մուր., IV, 158)*։ Ռզա շահի և Սարդար խանի բարեկամության մասին դու ինքդ շատ լավ գիտես *(ԳՍԹ, I, 160)*։ Ես ինքս զգվել եմ *(Շիրվ., III, 397)*։ Նա

ինքն իր մասին անհոգ է *(ՐԿ, 210)*։ Հենց նա ինքն է, որ կա *(Թ., III, 353)*։

Այդպես էլ բացահայտիչ և բացահայտյալ չեն համարվի սրանց ջուր տված ձևերը։

§ 715. *Եթե* ինքս, ինքդ, ինքը *դերանուններին բացահայտիչ է դառնում որևէ գոյական, այդ ժամանակ պետք է դրանք բացահայտիչ համարվեն. օրինակ՝* Եվ ով ավելի շատ կցանկանար, որ այդպես լիներ, եթե ոչ հենց ինքը՝ *դրողը (Թ., IV, 175)*։ Ինքը՝ *Թաշիրը* նոր միայն մտնում էր *(ԳՄԹ, I, 63)*։ Եվ *իրենք՝ հայերն* են միայն, որ իրենց անվանում են հայեր *(Մանանդյան, 9)*։ Ինքը՝ կինը վրեժխնդիր է լինում *(ԲԿ, 146)*։ Իսկ *նրանք բոլորն* էլ շատ նման են միմյանց *(Նույն տեղում, 201)*։ *Նախադասության մեջ* նրանք բոլորը *մի ամբողջություն է կազմում։*

§ 716. *Բացահայտիչ չի համարվի նաև այն դրությունը, երբ* ինքը *կիրառվում է մի գոյականից հետո. օրինակ՝ «Ճահրանդան» ինքն է* գնահատում, ինքն է գրում իր տետրակների մեջ *(ՐԿ, 200)*։ Մի ամբողջ *ժողովուրդ ինքն է* կանգնում ոտքի վրա *(Նույն տեղում, 206)*։ *Քրիստոնյան* ստիպված էր *ինքը* խոսել իր գործի մասին *(Նույն տեղում, 128)*։

ա) ԲԱՑԱՀԱՅՏԻՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 717. *Բացահայտիչը բացահայտյալի հետ համաձայնում է հոլովով, թվով, դեմքով և հոդառությամբ, այսինքն՝ որոշված կամ անորոշ լինելով։ Այս համաձայնությունը ընդհանուր օրինաչափություն է, որը, սակայն, ունի իր բացառությունները. դրանք պայմանավորված են բազմապիսի քերականական առանձնահատկություններով ու տվյալ բնագրի բնույթով՝ կապված բացահայտիչ ու բացահայտյալ հանդիսացող այս կամ այն առանձին խոսքի մասի հետ. օրինակ՝ կան բառեր, որոնք հոդ չեն ստանում. բնական է՝ բացահայտիչ դառնալով՝ դրանք կմնան առանց հոդի, եթե նույնիսկ բացահայտյալը հոդով որոշված լինի։*

բ) ԲԱՑԱՀԱՅՏԻՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԼՈՎՈՎ

§ 718. *Բացահայտիչը բացահայտյալի հետ համաձայնում է հոլովով. այս համաձայնությունը կայուն է և օրինաչափական. օրինակ՝* Եվ դա ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն իմ *ազատիչը*, իմ *բարե-*

կամը՝ Ասլանը (ՐԿ, 334)։ Աշխարհ եմ գալիս *ես՝* երրորդ արական *զավակս (Զմշկյան, 4)։* Դու համարձակվում ես վիրավորել ինձ՝ չինովնիկ *մարդուս (նույն տեղում, 27)։* Ջեռ-ձեռի տված *մեր՝* երեք դերասաններիս միակ նպատակն էր միացնել երկու հակառակ կուսակցությունները *(նույն տեղում)։ Ես էլ՝ հիմարս,* իսկույն ևեթ վեճ բաց արի ամենքի հետ *(Թ., II, 94)։* Ինչ որ պատահեց իր աղջիկներից *մեկի՝ Սոնայի* հետ *(Ր., II, 527)։* Մարդից՝ *իրենից* ոչինչ կախված չէ *(Ր., IV, 347)։ Ինքը՝ որսորդը,* իր միակ *զավակի՝ Մարոյի* հետ *(նույն տեղում, IV, 247)։*

§ 719. Բացահայտիչի և բացահայտյալի անհամաձայնությունը հոլովով կա՛մ սխալ է, անհետևողություն և կա՛մ բանաստեղծական չափի պահանջով բացահայտիչը փոխում է իր հոլովը. օրինակ՝ Ու դուրս քաշեցին զոռով երկուսին՝ Մինը մեր *Սարոն (փոխանակ՝ Սարոյին),* իսկ մյուսը Անուշի Անդրանիկ եղբայր գառնարած *Մոսին (փոխանակ Մոսուն. իսկ այստեղ հանգի պատճառով չի դառել Մոսին). (Թ., II, 58)։ Չնայած այդ ձևերին, այնուամենայնիվ վերոհիշյալ բառերը պետք է հայցական համարել։* Տարվա երեք *եղանակներում՝ գարուն, ամառ և աշուն,* նա մշակում էր իր հողերը *(Րաֆֆի)։*

Երբեմն հոլովական համաձայնությունը խախտվում է որպես, իբրև *կապերի միջոցով արտահայտված բացահայտիչների ու բացահայտյալների միջև. օրինակ՝* Որսորդը *մեզ* տալիս է վառոդ, *որպես երեխաներ* խաղ անելու համար *(Րաֆֆի)։* Որպես դաշտային երկրի բնակիչ՝ լեռը միշտ *ինձ* վրա մի առանձին դյութական տպավորություն էր գործում *(Ր., IV, 317)։ Պետք է լինի՝ բնակչի։ Պարզ է, որ վերոհիշյալ համաձայնական ձևերը սխալ և մերժելի են։*

գ) ԲԱՑԱՀԱՅՏԻՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՎՈՎ

§ 720. Բացահայտիչի և բացահայտյալի թվական համաձայնությունը համեմատաբար ավելի թույլ է։ Սովորաբար եզակի բացահայտյալը պահանջում է եզակի բացահայտիչ, հոգնակի բացահայտյալը՝ հոգնակի բացահայտիչ. օրինակ՝ Ահա և *նրանք՝ պարծարանները* նոր սերունդների, Ահա և նրանք՝ *ստեղծողները* այս նոր աշխարհի *(ՀՀԵ, 228)։* Երբեմն էլ ես տեսնում եմ *նրան... Հորս Աբգար աղայի* դեղնած, դեղնափայլ մազերում *(ՉԸԵ, 298)։*

Մի կատարյալ սփոփանք էր ինձ համար Քալլի ինձ նվիրած *թաշկինակը՝* միակ *առարկան*, որին նայելով... *(Նար., IV, 96)*։ Դուքսը և դքսուհին դը Շառանսները կանչում են իրենց հոգևոր *հորը՝* աբբա *Թուրին (Շիրվ., IX, 352)*։

§ 721. *Բացահայտիչի և բացահայտյալի թվական համաձայնությունը կարող է խախտվել, եթե որևէ մեկը հոգնակի կամ եզակի չի կիրառվում և կամ տվյալ դեպքում անպատշաճ է մեկի եզակին, իսկ մյուսի՝ հոգնակին. օրինակ՝* Հիշո՞ւմ ես, *մեզ՝* տաս *հոգու* բանտ պետք է ուղարկեր *(ԳՍԹ, I, 99)*։

§ 722. *Եթե բացահայտյալը այնպիսի բառ է (վերացական, հավաքական), որ եզակի լինելով, իր մեջ ամփոփում է շատ երևույթներ, բացահայտիչը կարող է հոգնակի կամ բազմակի լինել. օրինակ՝* Մադինեն ուղղակի հրճվում էր *իր տեսածով՝* մեծ շենքերով, չտեսնված մեծ *խանութներով, մզկիթներով,* աղմկոտ բազմամարդ *փողոցներով (ԳՍԹ, I, 84)։ Նույն ձևով բացահայտյալը կարող է հոգնակի լինել, իսկ բացահայտիչը՝ եզակի հավաքական բառ. օրինակ՝ Մենք Ռուսիան,* աշխարհի տավիղն ենք *(Գորկի)։ Սավառնակները* մեր՝ երկնքի տիրակալ *(Հուրյան)*։

§ 723. *Եթե բազմակի բացահայտիչները մտքով նույնանում են մի ընդհանուր հասկացողությամբ, բացահայտյալը կարող է եզակի լինել. օրինակ՝* Այսօրից հետո մենք միայն մի տեղ ունենք *ուխտատեղ՝* Կարմիր *Պետրոգրադ* և *Մոսկվան* շքեղ *(ՀՀԵ, 154)*։

դ) ԲԱՑԱՀԱՅՏԻՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԴՈՎ

§ 724. *Բացահայտիչը և բացահայտյալը ավելի ազատ են հոդառության մեջ։ Հոդով համաձայնությունը ոչ միայն պարտադիր օրինաչափություն չէ, այլ հաճախ անհրաժեշտ է անհամաձայնությունը և վայելուչ։*

Բացահայտիչը անպայման հոդով է կիրառվում, երբ գոյականացման անհրաժեշտություն կա, այսինքն՝ գոյական չէ. օրինակ՝ Նա՝ գնդակը մարմնի միջից անցած *վիրավորը (ՀՀԵ, 488)*։ Վառվում է ճանցավոր կրծքով դեպի միակ դուստրը՝ *ամենագեղեցիկը* գեղեցիկների *(Շիրվ., VIII, 47)*։

§ 725. *Անձնական դերանունների բացահայտիչները դիմորոշ հոդով են կիրառվում։ Օրինակ՝* Ես՝ հայ *բանաստեղծս* ձեզ տանում եմ մարտի (*Հովյան*)։ Ինձ մնում էր հիմա՝ մոտ տասնհինգ տարեկան *պատանուս* մտածել ապագայի մասին (*Զմշկյան, 15*)։ Քույր Աննան և նրա գործերը մեր՝ *գյուղացիներիս* աչքում են մեծ բան երևում (*Մուր., II, 28*)։ Մենք՝ *բանվորներս* վշտի, արցունքի, կիսաքաղց կյանքի անբաժան ընկեր (*Կուրղինյան*)։ Եվ խղճմտորեն կիրառում էր այդ միջոցները մեր՝ *կրտսերներիս* վերաբերմամբ (*ՎՓՀՀ, 110*)։

Բայց, որովհետև դերանուն բացահայտյալը արդեն դեմքը որոշում է՝ այժմ արդեն հաճախ բացահայտիչը մնում է առանց հոդի. օրինակ՝ Հիշո՞ւմ ես, մեզ՝ տաս հոգու բանտ պետք է դնեին (*ԳՍԹ, I, 99*)։ Ես՝ հազարերորդ թագավոր և կրոնապետ, տեր աշխարհի, *հաղթող* ամենից և ամենայն (*Անթ., 74*)։ Ահա սկսվեց իմ՝ արտիստի կյանքը (*ՎՓՀՀ, 193*)։

§ 726. *Դիմորոշ հոդը պարտադիր է այն դեպքում, երբ անձնական դերանուն բացահայտյալը զեղչված է, այլապես դեմքը չի որոշվի. օրինակ՝* Հույս ունեմ, որ *մեծամեծներիդ* իմը չէ, որ շահագրգռում է (*ԴԴՎ, 61*)։ Սիրելի Ջիվան, *ընկերդ* իմ հոգու (*Թ., I, 448*)։ Բարի ճամփա, *հյուրդ* մեր հին (*նույն տեղում, 199*)։ *Դերասաններիս* ուժերն էին (*Զմշկյան, 98*)։ *Դերասաններս* բոլորս էլ առանձին ոգևորություն էինք զգում (*նույն տեղում, 97*)։ Ախ, *թշվառականս* ինչ եմ ստացել (*Նար., IV, 42*)։ *Հետևյալ օրինակի մեջ առաջին դեմքը հոդ ունի, իսկ երրորդին պակասում է հոդը, որովհետև առանց հոդի արդեն երրորդ դեմք է։* Բոլոր *դերասաններս և դերասանուհիք* համաձայնության եկանք մեր վերաբերմունքի շուրջը (*Զմշկյան, 30*)։

§ 727. *Մ. Աբեղյանը ձևակերպում է մի այսպիսի կանոն, երբ բացահայտիչը կամ բացահայտյալը հատուկ անուն է, մանավանդ պատմական անուն, գրաբարի ձևով մնում է առանց հոդի (այս երևույթը դիտել է նաև Այտընյանը «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի», էջ 145, § 362)։ Օրինակ՝* Տիգրանի ժամանակակից էր Մարաց թագավորի թոռը՝ Կյուրոս (*Մ. Աբեղյան, Աշխ. շարահյուսություն, 175*)։ *Այս երևույթը մենք նկատում ենք Րաֆֆու և այլոց մոտ։ Համեմատի՛ր.* Հորս հետ գալիս են պարսից երկու զորապետները՝ *Զիկ և Կարեն* (*Ր., III, 125*)։ *Այժմ անձնանունների նկատմամբ այս կանոնը իսպառ վերացել է. միանգամայն խորթ է անձնանուն բացահայտիչը առանց հոդի։ Ընդհակառակը՝ եթե*

Նույնիսկ բացահայտյալը անորոշ է, անձնանուն բացահայտիչը դարձյալ հոդով է. *օրինակ*՝ Արտաշատ էին հավաքվել նոր նախարարներ՝ Ուրձա Ներսեհը, Աղավենից Արտենը... *(ԴԴՎ, 466)*։

§ *728. Առանց հոդի են մնում ուղղորման հայցականով դրվող տեղանուն բացահայտիչները. օրինակ*՝ Գնում էր դեպի յուր նախահարց ոստանը՝ իշխանական քաղաք *Հաղամակերտ (Ր., III, 341)*։ Մտնելու էր բժշկականության բարձրագույն դպրոցը՝ *Պետերբուրգ (Փափ., 388)*։

§ *729. Երբ բացահայտիչը դրված է թվական որոշիչներով, կամ ընդհանրապես թվարկություն է, կարող է առանց հոդի կիրառվել՝ չնայած բացահայտյալը հոդով է. օրինակ*՝ Միայն նրանցից մեկը՝ երազող աչքերով և մոլեռանդ դեմքով մի հասուն *երիտասարդ... (ԴԴՎ, 4)*։ Ասաց տասնապետը՝ կարճահասակ, լայն քթանցքներով և թրիաք ծխողի թխավուն մազերով մի *մարդ (ԳՍԹ, I, 97)*։

§ *730. Ինչպես նկատում ենք, համաձայնությունը հոդառության վերաբերմամբ շատ դեպքերում պարտադիր չէ։ Համեմատի՛ր.* Անհայտ ճանապարհորդ Անտոնիո Ջիովանելլին՝ *կապուցին վանական*, որ ճանապարհորդել է Տրապիզոնից մինչև Պարսից ծովը *(ԱԲՆ, 670)*։ Գրեթե ամեն մի սեղանի մոտ կանգնած կամ նստած էին հետաքրքիր *չեզոքները՝ մարդիկ*, որ միշտ սիրում են ուրիշների բախտի ընթացքին հետևել *(Շիրվ., II, 163)*։

Շատ դեպքերում որևէ բառ պարզապես հոդ չի առնում, ուստի դա բացահայտիչ կամ բացահայտյալ լինելով մնում է առանց հոդի, իսկ մի ուրիշ բառ հոդ է առնում. օրինակ՝ Իր բոլոր մթերքները *այնտեղ* էին՝ բժիշկ Տատինյանի *տանը (ԳՍԹ, I, 66)*։ *Կամ՝ բացահայտիչը, լինելով բացահայտյալի կրկնությունը, առնում է այնպիսի լրացուցիչներ, որոնք բացառում են իրենց լրացյալի անհոդ կիրառությունը. օրինակ*՝ Տիգրան Արշակյանը *կարոտ* զգաց, սիրած *կնոջ* և իր խաղաղ *աշխատասենյակի կարոտը (Քոչար, 5)*։

§ *731. Բացահայտիչը, ինչպես տեսանք, սովորաբար համաձայնում է նաև դեմքով, բայց դա ևս պարտադիր չէ։ Արդեն § 725-ում նկատեցինք, որ անձնական դերանուն բացահայտյալի մոտ բացահայտիչը երբեմն մնում է առանց հոդի, ուստի և խախտվում է դեմքի համաձայնությունը. օրինակ*՝ Ահա սկսվեց իմ՝ արտիստի կյանքը: *Այս դեպքում հեղինակը կարող էր նաև ասել՝* իմ՝ արտիստիս կյանքը, *բայց և կան այնպիսի բացահայտիչ-գոյականներ, որոնց վրա դիմորոշ հոդը պատշաճ չէ. օրինակ՝ Մենք՝ Ռուսիան,* աշխարհի

եղևնյա տավիղն են (*Գորկի, X, 61*)։ *Ծվ կամ բացահայտիչը անձնական դերանուն է, որի դեմքը որոշ է, իսկ բացահայտյալը մի գոյական է, որ դեմք չունի, կամ երրորդ դեմքին է պատկանում առհասարակ. օրինակ՝* Բոլորը խանգարում են ինձ ապրել, իսկ օգնում է միայն *մեկ մարդ՝ դուք,* Պետրուշա (*նույն տեղում, 79*)։

Ինչպես տեսնում ենք, բացահայտիչի և բացահայտյալի համաձայնությունը այս կամ այն քերականական կարգով հաճախ խախտվում է, որովհետև իրար բացահայտիչ և բացահայտյալ կարող են լինել տարբեր քերականական պահանջներ ներկայացնող բառեր. օրինակ՝ Նրա մտքերը ուրիշ *տեղ* էին՝ *Ազադի մոտ* (*ԳՍԹ, II, 174*)։

4. ԽՆԴԻՐ

§ 732. Խնդիրը թեք հոլովներով կիրառվող այն գոյականական լրացումն է, որ ընկնում է ստորոգյալի արտահայտած գործողության ոլորտում ուղղակի կամ անուղղակի կերպով, և որի ինչ խնդիր լինելը պայմանավորվում է հենց այդ գործողություն արտահայտող խնդրառու բայ-ստորոգյալի քերականական սեռով։

Խնդիրները արտահայտվում են առանձին բառերով և կապական արտահայտություններով։

§ 733. Խնդիրներ հայերենում դառնում են բոլոր այն խոսքի մասերը, որոնք առարկայական կիրառություն են ստանում, այսինքն՝ հոլովվում են կամ հոլովվելու ունակություն են ձեռք բերում։ Իսկ հայերենում բոլոր խոսքի մասերն էլ կարող են այդ ունակությունը ձեռք բերել, եթե չունեն այդպիսին։ Ամենից հաճախ խնդիր են դառնում գոյականները, դերանունների մեծ մասը։ Ածականները, թվականները, բայի դերբայական ձևերը և մյուս խոսքի մասերը խնդիր են դառնում, երբ հոդով գոյականանում և ստանում են առարկայական կիրառություն։ Խնդիր կարող են դառնալ ամբողջ բառական կապակցություններ, նույնիսկ նախադասություններ, երբ ածականի, թվականի և այլ խոսքի մասերի պես հոդով գոյականական կիրառություն են ստանում։

§ 734. Խնդիրները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ուղիղ և անուղղակի խնդիրներ։ Այս բաժանումը չի պայմանավորված առանձին խնդրի պաշտոնով հանդես եկող բառի այս կամ այն նշանակությամբ, այլ թե՝ այդ բառը խնդրառու բայ-ստորոգյալի գործողությանը ինչպես է առնչվում։

Եթե բայի գործողությունը ուղղակի կերպով անցնում է խնդիր հանդիսացող բառի վրա, այս վերջինին առնում է իր գործողության ոլորտում և դառնում է նյութական օբյեկտ, մտքի քննության, ասվածի, զգացման վերացական օբյեկտը և վերջապես գործողության հետևանք, ապա այս կարգի օբյեկտները կոչվում են ուղղակի խնդիրներ։ Այսպիսի խնդիրներ են առնում հատկապես ներգործական սեռի բայերը։

Ծանոթություն. Ուղիղ խնդիր են դառնում նաև առանձնապես շարժում արտահայտող մի քանի չեզոք բայեր, որոնց խնդիրը նախապես եղել է նախդրավոր հայցական. նախդիրը ընկնելուց հետո, մնացել է միայն հայցական հոլովը և ստացել է ճիշտ այնպիսի խնդիր, ինչպիսի խնդիր առնում են ներգործական սեռի բայերը։ Պետք է նշել նաև, որ գրաբարում էլ որոշ չեզոք բայեր (շարժման) առնում են հայցական հոլովով ուղիղ խնդիր։ Այժմ շարժում արտահայտող այդ բայերը մեծ մասամբ չեզոքից անցնում են ներգործականի։ Համեմատի՛ր. Վերայցելում ես լուսնի շողքերը (Շեքս., I, 22)։ Հիմա ճետապնդիր այդ կատակը (նույն տեղում, 443)։ «Նավերը գրոճում են բրգամրոցները»։ Գյուղացիները առաջին անգամ էին այդքան ճանդիսավոր դիմավորում գարնանացանը (ՆՁՀ, 83)։

§ 735. Եթե խնդրառու բայի գործողությունը տարածվում է խնդիր հանդիսացող բառի վրա անուղղակի կերպով, այսինքն՝ այդ բառը չի դառնում գործողության նյութական կամ վերացական օբյեկտը ուղղակիորեն, այլ մի մասով է առնչվում գործողությանը, այս վերջինս ուղղվում է դեպի այն՝ առանց նրա վրա ներգործելու, կամ առանց նրան փոխելու նյութապես, ֆիզիկապես, ապա այդպիսի խնդիրը կոչվում է անուղղակի խնդիր։

Անուղղակի խնդիրներ կարող են առնել և՛ ներգործական, և՛ չեզոք բայերը. ներգործական սեռի բայի գործողությունը անցնելով, ներգործելով մի առարկայի վրա ուղղակի կերպով՝ կարող է անուղղակիորեն ուղղվել մի այլ առարկայի. օրինակ՝ Ես փայտը մոտեցնում եմ կրակին նախադասության մեջ փայտը ուղղակի կերպով ընկնում է մոտեցնել բայի գործողության ծիրում, իսկ անուղղակի կերպով այդ գործողությունը ուղղվում է կրակին՝ առանց վերջինիս վրա ներգործելու, առանց այն բանի, որ վերջինս ընկնի գործողու-

թյան ոլորտը, փոխվի նրա շնորհիվ և այլն։ Ուրեմն՝ բերված նախադասության մեջ փայտը ուղիղ խնդիր է, իսկ կրակին՝ անուղղակի։

§ 736. Կան, սակայն, այնպիսի ստորոգյալներ, որոնք ի վիճակի չեն ուղիղ խնդիր առնելու. դրանք չեն արտահայտում այնպիսի գործողություն, որ ազդի, ներգործի, փոփոխի, գոյացնի որևէ առարկա, այլ նրանց գործողությունը ուղղվում է առարկային՝ առանց նրանց վրա ներգործելու անուղղակի կերպով. օրինակ՝ Ես մոտենում եմ կրակին. մոտենալ բայը ի վիճակի չէ մոտեցնել բայի նման ունենալ փայտը խնդիրը և ապա ուղղվել կրակին։

Ծանոթություն. Ուղիղ և անուղղակի խնդիրները երբեմն ձևով են որոշվում. եթե խնդիրը հայցական է, ապա ուղղակի է, իսկ եթե տրական, բացառական է, ապա անուղղակի է։ Որոշ թվով բայերի ներգործական և չեզոք լինելը առաձգական է, ուստի դրանք երբեմն հայցական հոլովով են խնդիր առնում, երբեմն տրական։ Կան մի քանի բայեր էլ, որոնք ներգործական լինելով՝ առնում են տրականով խնդիրներ և ընդհանուր ավանդությամբ վերջիններս համարվում են անուղղակի խնդիրներ։ Այստեղ, ուրեմն, վճռող նշանակություն է ստանում ձևը. օրինակ՝ Կարոտել եմ գլուխդ (Նար., VII, 142)։ Այնքան կարոտել էի մեր հայրենի լեռները, դաշտերն ու ջրերը (Փափ., 567)։ Գրադարանս շատ եմ կարոտել (Թ., V, 418)։ Այս խնդիրները կարոտել բայի համար անսովոր են. սովորականը տրական հոլովով խնդիրն է. օրինակ՝ Կարոտել եմ ծոցիդ զարդին (Իսահակյան)։ Բայց որովհետև այդ օրինակների մեջ խնդիրները դրված են հայցական հոլովով, ուստի դրանք ուղիղ խնդիրներ են։ Նույնը վերաբերում է նաև հետևյալ օրինակների մեջ բերված խնդիրներին։ Բանակի բոլոր ավագներն ու ստորինանավորները ողջունում էին հրամանատարի առավոտը (Ր., III, 557)։ Ողջունում է նա, գլխարկը ձեռքին, շաչող ջրերին (Զե., 225)։ Լսում են մեկտեղ իմ արդար խոսքին (Իս., II, 175)։ Լսում են նրա անուշ փաղաքուշ խոսքերը, խոր ու խելացի մտքերը (Թ., III, 344)։ Գնացել է մի աշխարհ է տիրել (Իս., III, 120)։ Լամիյեի սերը մի օր պիտի հաղթե մորս մոլեռանդությանն ու կամակորությունը (Շիրվ., V, 446)։ Մանավանդ այս վերջին երկու բայերը սովորաբար տրականով խնդիր են առնում։ Ելնելով ձևական չափանիշներից, այդպիսի բայերի հայ-

ցական հոլովով խնդիրները պետք է ուղիղ խնդիր համարել, իսկ տրական հոլովով խնդիրները (եթե անձ չէ ցույց տալիս)՝ անուղղակի։ Այսպիսի բայ-ստորոգյալները անցման շրջանում են գտնվում։

§ 737. *Անուղղակի խնդիրները, ինչպես արդեն ասվեց, ոչ միայն արտահայտվում են հոլովներով, այլև հոլովների հետ սերտ առնչվող կապերով. օրինակ՝* Պատմեց այն ճանապարհի *մասին*, որով դրանք բռնել են *(ԱԲԵ, 288)*։ Նաիրյան այդ հաղափում մի անհուն վախով ու պատկառանքով են խոսում այն *անձնավորության մասին (ՉԸԵ, 300)*։

ա) ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

§ 738. *Ինչպես ասվեց, ուղիղ խնդիրները ներգործական բայ-ստորոգյալների նյութական կամ վերացական օբյեկտներն են, որոնք ուղղակի ընկնում են այդ բայ-ստորոգյալների գործողության ոլորտում։ Նայած ինչպիսի, ինչ նշանակությամբ բայերի խնդիրներ են դառնում, ըստ այդմ էլ ուղիղ խնդիրները արտահայտում են տարբեր նշանակություններ։ Ըստ ստորոգյալի և վերջինիս հետ կապվող խնդրի առնչակցության բնույթի՝ ուղիղ խնդիրները լինում են՝ արտաքին, հետևանքի, ներքին և երկրորդական։*

բ) ԱՐՏԱՔԻՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

§ 739. *Բնության մեջ, անկախ որևէ բայի գործողությունից, գտնվում են բազմահազար առարկաներ. երբ այդ առարկաները դառնում են մեր խոսքի նյութը և ընկնում են մեր խոսքի ներգործական բայ-ստորոգյալների գործողության ոլորտում իբրև դրանց խնդիր, կոչվում են* արտաքին ուղիղ խնդիրներ: *Այս իմաստով՝ տարբերություն չկա՝ խնդիրը նյութական առարկա է, թե վերացական երևույթ. եթե այն հանդես չի գալիս տվյալ բայի գործողության հետևանքով, այլ անկախ այդ բայից կա և կարող է խնդիր դառնալ նաև այլ ներգործական բայ-ստորոգյալների, ապա դա արտաքին ուղիղ խնդիր է. օրինակ՝* Թամարան *դաշնամուր* է նվագում *(Շիրվ., VII, 355)*։ Նա վերցնում է դաշնամուրի վրա դրված խալիֆյանի փոքրիկ *ծաղկեփունջը (նույն տեղում)*։ Աշխույժ մանկությամբ զարդա-

ռում էր նա Ծերության *օրերն* ու *սարերն* իր հոր *(Թ., I, 292)։ Այս երեք նախադասության մեջ էլ ուղիղ խնդիրները (դաշնամուր, ծաղկեփունջ, օրեր, սարեր), անկախ բայ-ստորոգյալների գործողությունից, գոյություն ունեն. դրանք հետևանք կամ արդյունք չեն հիշյալ գործողությունների։*

§ 740. Ինչպես որ արտաքին խնդիրները կարող են լինել նյութական և վերացական նշանակություն արտահայտող զանազան գոյականներ, այնպես էլ այլ խոսքի մասեր, որովհետև, ինչպես ասվեց, այդ խնդիրների բնույթը պայմանավորվում է բայ-ստորոգյալի նշանակությամբ և ոչ թե իրենց ներքին բնույթով. քանի որ իրոք որևէ գործողության հետևանքով առաջացած ուղիղ խնդիրը մի այլ ներգործական բայ-ստորոգյալի մոտ կարող է դառնալ արտաքին խնդիր. օրինակ՝ Ես թխում եմ հաց *(Հացը հետևանքի խնդիր է)։* Ես ուտում եմ հաց *(Հացը արտաքին խնդիր է)։*

Ամենից որոշակի արտաքին ուղիղ խնդիրներ են դառնում գոյականները. օրինակ՝ Գյուղից դուրս տեսավ մի մարդ, պարկով *ցորենը* դրել էր գետին: Խեղճ մարդը մեկ՝ *ցորենն* է հավաքում, լցնում պարկը, մեկ՝ մատներով *գետինն* է քրքրում, *հողն* է մաղմրղում *(Իս., III, 281)։* Հեռախոսավարները *հրամաններ* էին ընդունում ու հաղորդում, զինվորական թղթակիցները որոնում ու գտնում էին *հերոսներին* ստորաբաժանումներում *(Քոչար, 231)։* Ձյունի վրա նա տեսնում է գազանների *հետքեր (ԱԲՆ, 225)։* Տեղատարափ անձրևին նա բախեց տան *դուռը (նույն տեղում, 269)։* Ուժերս ներածին համեմատ՝ ես նախ նկարագրեցի *քաղաքը (ՉԸՆ, 323)։*

§ 741. Ինչպես նկատելի է, գոյականների ուղիղ խնդրի կիրառությամբ հանդես գալը սովորական երևույթ է։ Արտաքին ուղղակի խնդրի պաշտոնով հանդես են գալիս նաև մյուս խոսքի մասերը, որոնք իրենց առարկայական նշանակությամբ համեմատաբար ավելի թույլ են։ Հետևյալ օրինակներում համարյա ընդգրկվում են բոլոր խոսքի մասերը։

Վրաս պարտք դրեց գրասենյակ *մաքրելը, ավլելը,* տանից ջուր և կերակուր *կրելը* և առհասարակ մանր հանձնարարություններ *կատարելը (ՀՀՆ, 333)։* Սիրում է *ողջ ու ամենքին (Թ., «Երկու հոգի մի»)։* Կտոր-կտոր կանեմ *այդպիսուն (Շիրվ., VI, 521)։* Տիկին Մանուկյանը շարունակում է *նույնը (Փափ., 563)։* Աղջի *մեծն* ու *պստիկը* մենակ գիտեն *(Իս., III, 291)։* Կկատարես *բոլորը,* ինչ որ կհրամայեմ *(Շիրվ., I, 26)։* Մարդ էլ ուրախությամբ, զվարթու-

թյամբ, խնջույքով և կեցցեներով *ինքնզինքը* անասունի կփոխարկի (*Շեքս.*, I, 152)։ Չեմ հասկանում աշխարհի «*կան ու չկան*» ես հիմա (*Թ.*, I, 240)։ Հոր *բերածը* կերել է, մոր *մանածը* հագել է (*Առած.*, 75)։ Տենչում է *ինչ-որ* (*ԴԴԸ*, 192)։ Կամոն հանել էր *բլոկնոտը* և նրա մեջ նշում էր *տեսածները* (*ՎԱՍԱ*, 55)։ *Ով* ունիմ այնտեղ, որ կարոտեմ (*Շիրվ.*, VI, 560)։ Հետո ֆաղեց *երկրորդը*, *երրորդը* (*ՐԿ*, 604)։ Որն յուր մեջ չունի այլևս *ոչինչ* նոր ու ջերմացնող (*Մուր.*, II, 8)։ Թող մյուսները մանրամասնաբար նկարագրեն ձեզ այդ տոնախմբության *մի ըստ միոջեքը* (*ՄՆ*, II, 290)։ *Այդպիսում* բառի բուն նշանակությամբ սեղմում էր պատին (*Շիրվ.*, VIII, 69)։ Ու կերազեմ ֆո կապույտ *լայնը* (*ԳՄԵ*, 200)։ *Այոն* ֆեզ պահի (*ՎԱՍԱ*, 347)։ *Այոն* ու *ոչը* գեներալները կարող են պահանջել (*Թ.*, V, 277)։ *Իմ* ու *քու* չունեինք (*Նույն տեղում*, 69)։ Տեսնես էս սարի գլխին նա մեր *օրերից ինչ* գիտե (*ԱԲԵ*, 265)։ Իսկ անհայտ *ոմնին* համարում է աննյութեղեն տեսիլք (*Նույն տեղում*, 577)։ Մի ֆանի *տասնյակ* տալիս է ինձ ու Տիգրանին (*ՍԶՄԿՊ*, 407)։

դ) ՀԵՏԵՎԱՆՔԻ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

§ 742. *Հետևանքի ուղիղ խնդիրը առաջանում է խնդրառու բայ-ստորոգյալի գործողության հետևանքով. այդ խնդիրը գոյանում, առարկայանում է շնորհիվ բայ-ստորոգյալի այդ պահին կատարվող գործողության, որից անկախ՝ խնդիրը գոյություն չունի։ Ուրեմն ուղիղ խնդիրը լինում է իբրև արդյունք, իբրև հետևանք. օրինակ՝* Երթանք անապատներուն մեջ *տուն* շինենք, նստենք (*Իս.*, III, 294)։ Նրանք հնարեցին առանձին *գիր*, *կարդալ* և *լեզու* (*Ր.*, II, 245)։ Աղջիկը մոտեցավ Արմենին *ինչ-որ ասաց* (*Շիրվ.*, VIII, 378)։ Նա մի անգամ բռնվեց, երբ յուր ընկերն իր հետ նստած կեղծ *թղթադրամներ* էր շինում (*Նույն տեղում*, 246)։ Վարաժը մի *քայլ* արեց առաջ (*ԴԴՎ*, 467)։ Հետո նա *ինչ-որ* շշնջաց աղջկա ականջին և ծիծաղեց (*Շիրվ.*, VIII, 87)։ «*Բուհ*» են անում, դուրս են թափվում (*Թ.*, I, 331)։ Ցույց էր տվել, թե որտեղ պիտի շինեն ջրի *ամբարտակն* ու երկարավուն *ծածկը* (*ԱԲԵ*, 487)։ Նրա ցույց տված տեղով *հիմքը* փորել էին (*Նույն տեղում*)։ Գրել ենք մենք անթիվ *երգեր* և երգերում, Մեր երգերում գործածել ենք անթիվ չափեր (*ՁԸԵ*, 219)։ Մեր պարտեզի բարձր բարդիի վրա երկու արագիլ՝ այր ու կին, իրենց բույնն էին հյուսել (*Իս.*, 279)։ Տաճարներում *զեկուցագրեր* էին գրում (*Քոչար*, 231)։

§ 743. *Հետևանքի ուղիղ խնդիրը մեծ մասամբ առաջացել է փոխանունության օրենքով. փոխանակ գործածելու այն առարկան, որը ուղղակի ենթարկվում է գործողությանը, ընկնում է նրա ազդեցության ոլորտը, կիրառում ենք այն արդյունքը, որ ստացվում է առաջին առարկայի վրա նախապես ազդած գործողության հետևանքով. օրինակ՝* Դաշտային փուռը բարմ *հաց* էր թխում զորամասերի համար *(Քոչար, 231)։ Բուն* չինեցի էն սարում, Զաք հանեցի անմահ *(Թումանյան)։ Այսպես ասում ենք՝* ալյուր աղալ, ճավար ծեծել, փլավ եփել, վերարկու կարել, դուռ շինել *և այլն, որտեղ սրանք ստացվում են գործողության ավարտից հետո։ Ոչ թե* ալյուր ենք աղում, *այլ աղում ենք ցորենը, որի հետևանքով ստացվում է ալյուրը. այդպես էլ մյուսները։*

դ) ՆԵՐՔԻՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

§ 744. *Հետևանքի ուղիղ խնդրին իր բնույթով մոտենում է ներքին ուղիղ խնդիրը, որը ոչ թե արդյունք է տարբեր բայ-ստորոգյալների գործողության, այլ հենց տվյալ բայի գործողության անունն է, որ առարկայացվում և դառնում է հենց իրեն՝ բայի ուղիղ խնդիրը։ Սա նույնպես հետևանք է, բայց հետևանք է ոչ թե տվյալ գործողության, այլ՝ ընդհանուր տեսակի գործողության, որի հետևանքը դիտվում է իբրև անկախ առարկայացած գոյական և դառնում է բայի տվյալ կիրառության ուղիղ խնդիր. օրինակ՝* Բարձրության մեջ ես *խորհուրդդ* խորհում *(Թ., II, 323)։* Եվ *տուն* կտռնենք էնպես խնդագին *(նույն տեղում, 171)։* Ինձ հարկավոր է անվհատ սրտով *գործ* գործել *(ՂԱ, IV, 473)։* Թվում էր՝ մեկը երգում է *երգ (Չե, 100)։ Կոչ* կոչենք հանուն մարդկության: Ում կոչենք *կոչ... կոչ* կոչենք նախ մեզ *(ԴԴԿ, 103)։ Երգ է* երգում սայլապանը *(ԱԲԵ, 623)։*

Հաճախ նույնաբանությունից խույս տալու համար՝ ասվում է. խոսք ասել, հառ խոսել, խոկ խորհել (խորհում էր իր անռելի *խոկը. ԴԴԿ, 416)։* Բան ասել *և այլն, որտեղ կամ բայն է փոխվում, կամ խնդիրը։*

Պետք է նշել, որ այս կարգի խնդիրները իրենց բայերի հետ ստիճանաբար կազմում են դարձվածքային կապակցություններ։

§ 745. *Ներքին ուղիղ խնդիր են առնում նաև որոշ թվով չեզոք բայեր. օրինակ՝* Ռազմիկը պիտի կռվի իր *կռիվը (ԴԴԿ, 123)։* Ես

ազատամարտ եմ մարտնչում (Նույն տեղում, 150)։ Քնած էի քնողի
քուն (Իսահակյան)։ Պարիկը նինջ է ննջում (Ր., III, 119)։
Այսպես ասվում է՝ նինջ ննջել, լաց լալ, պար պարել: Ես անա-
վոր երգում երգվեցա (Մուր., III, 326)։

ե) ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

§ 746. Մի շարք ներգործական բայեր ի վիճակի են ունենալու
երկու ուղիղ խնդիր. մի խնդիրը այն առարկան է, որի վրա ան-
միջապես անցնում է բայի գործողությունը, իսկ մյուսը առաջանում
է այդ գործողության շնորհիվ, ուղիղ խնդրի հետևանքով. օրի-
նակ՝ Փայտը շինեցի սեղան. անմիջապես շինել բայի գործողությու-
նը անցնում է փայտ խնդրի վրա և ապա այդ ամբողջ գործողության
հետևանքը լինում է սեղան, որ երկրորդական ուղիղ կամ կրկ-
նակի խնդիր է։ Ինչպես նկատում ենք, երկրորդական ուղիղ խըն-
դիրը յուրահատուկ հետևանքի խնդիր է, միայն այն տարբերու-
թյամբ, որ այս դեպքում դեռևս բուն ուղիղ խնդիրը մնում է։
Սկզբնապես հետևանքի խնդիրներն էլ այդպես են առաջացել. օրի-
նակ՝ խմորը թխեցի հաց. բրինձը եփեցի փլավ. կտորը կարեցի վե-
րարկու և այլն. հետագայում ցորենը, խմորը, բրինձը, կտորը ընկել
են, և մնացել է միայն հետևանքի խնդիրը, որը արդեն դառնում է
բուն ուղիղ խնդիր։ Երկրորդական կամ կրկնակի խնդիրը հակա-
դրվում է միևնույն նախադասության մի այլ ուղիղ խնդրի, որի
վրա գործողությունը անցնելուց հետո երկրորդաբար անցնում է
նաև մյուսի վրա։ Երբ ասում ենք՝ խմորը հաց թխել, ապա վերա-
կանգնում ենք բուն ուղիղ խնդիրը, որի հետևանքով էլ հաց դառ-
նում է երկրորդական խնդիր։

§ 747. Երկու ուղիղ խնդիրներ առնող բայերը մի տեսակ «գեր-
ներգործական» բայեր են, այսինքն՝ դրանց նշանակությունը գոր-
ծողության կողմից ավելի ուժեղ է, ներգործությունը ավելի ծավա-
լուն է, քան մյուս բայերի, որոնք երկու ուղիղ խնդիրներ չեն կարող
ունենալ։

Երկու ուղիղ խնդիր են առնում գործողության, իմացական,
համարողական, ասացական և մի քանի ուրիշ բայեր։

§ 748. Բուն ուղիղ խնդիրը դրվում է անպայման որոշիչ հոդով
(եթե ունակ է այդ բառը հոդառության), իսկ երկրորդական ուղիղ

խնդիրը մնում է առանց հոդի։ Բացի սրանից, ուղիղ խնդիրը կարող է դրվել տրականաձև հայցականով, իսկ երկրորդականը կիրառվում է միայն և միայն ուղղականաձև հայցականով։ Ահա օրինակներ։ Փուշը *վարդ* կփոխեմ թավշական երգով Ու գազանը *մարդ*՝ քանական հոգով *(Թ., II, 170)*։ Կրկին գունատվեց ու նետվեց այն հին գետը, որին անվանում են մարդիկ *մոռացում (Զարյան)*։ Մի քանիսը սատանայի *որդի* են համարում նրանց *(ՄՆ, II, 288)*։ *Ցերեկ* է արել խավար գիշերը *(Թ., II, 145)*։ Տղան չծնված անունը *Շատարև* են դնում *(Առած., 190)*։ Անվանիր նրան հայոց *արքա (Զարյան)*։ Թուշդ կսմթե, քեզ *«մուկիկ»* կանչե *(Շեքս., I, 71)*։ Ընտրիր ինձ քո իմաստության *սպասուհի (Զարյան)*։ Թող ավազներն այստեղ վնռեն ազատահան և *թագավոր* կարգեն կամ Նինոսին կամ ինձ *(ՆԶԱ, 53)*։ Կաղնին արմատահան անեմ *մկունդ (նույն տեղում, 65)*։ Դուք ինձ ձեզ *երախտապարտ* հայտարարեցիք *(Թ., V, 101)*։ Բանաստեղծությունններս շուտով ուղարկում եմ Հայրիկին *ընծա (Թ., V, 79)*։ *Ընդգծված են երկրորդական խնդիրները*

Ծանոթություն. Երբեմն խնդիրներից մեկը կամ երկուսն էլ բայ-ստորոգյալի հետ միասին մի ամբողջական դարձվածք են ներկայացնում. օրինակ՝ Իրեն ներկայացնել գործերի գլուխ ու շարժիչ անձ *(ԴԴՎ, 57)*։ Կամոն տիկ հանեց հովազին *(ՎԱՍԱ, 425)*։

§ 749. *Խնդրային և տարածական խառը նշանակություն են արտահայտում շարժման և մի քանի այլ բայերի ուղիղ խնդիրները։ Նայած ինչպիսի բառ է դրանց ուղիղ խնդիրը, ըստ այդմ էլ երբեմն տարածական նշանակությունն է ուժեղանում, երբեմն խնդրային։ Այս վերջին նշանակություններով էլ որոշվում է խնդրառու բայ-ստորոգյալի ներգործության կամ չեզոքության աստիճանը։ Ահա մի քանի օրինակներ.* Այսօր Սովետական *ռազմանավերն* այցելեցին բազմաթիվ դելեգացիաներ *(ՍՀ, 1954, № 164)*։ Զորահանդեսի հրամանատարի հետ շրջագայում է *զորքերը (նույն տեղում, 1953, № 265)*։ Լայն հասարակությունը ցերեկը կազմակերպված կերպով այցելեց Սովետական *նավերը (նույն տեղում, 1954, № 164)*։ Նայիր *ներսս*, նայիր *սիրտս* ու *հոգիս (Ընտ. էջեր, 669)*։ *Անցավ Կուր գետը* արծվի նման *(Թ., II, 327)*։ Կարող էր մտնել Թովմասի *դրությունը (Նար., VII, 206)*։ Կովերն ընկել էին կանաչ *առվույտը (Զարյան)*։

զ) ԱՌԱՆՑ ԿԱՊԵՐԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 750. Անուղղակի խնդիրները կիրառվում են տրական, բացառական և գործիական հոլովներով։ Իրենց կիրառական նշանակություններով տրական և բացառական հոլովները միմյանց հակադիր են. տրականը հիմնականում արտահայտում է մատուցման, հանգման, իսկ բացառականը՝ անջատման, զատման հարաբերություն։ Գործիականը գործողության համար գործիքի անուղղակի խնդիր է։

է) ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 751. Մի քանի բայերի մոտ տրական հոլովով անուղղակի խնդիրը ավելի մոտենում է ուղիղ խնդրին, քան տրական հոլովով կիրառվող մյուս խնդիրներին։ Այդպիսի անուղղակի խնդիրն, ըստ բայի գործողության արտահայտման՝ ավել կամ պակաս չափով դառնում է բայի նյութական առարկայական օբեկտը, որի վրա անցնում է գործողությունը։ Այսպիսի անուղղակի խնդիրը մենք կոչում ենք գործողության անուղղակի խնդիր։

Պետք է նշել, որ այս կարգի խնդիրները մեր լեզվին անցել են գրաբարից և պահպանվում են ավանդությամբ։ Սակայն ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ սրանք չեն փոխարինվում ուղիղ խնդրով, այսինքն՝ տրականը չի փոխվում հայցականի։ Մեր լեզում ուղիղ խնդրի համար ունի երկու տեսակ հայցական՝ ուղղականաձև և տրականաձև։ Այս վերջին ձևով կիրառվում են անձի ուղիղ խնդիրները. օրինակ՝ Ես տեսա իմ ուսուցչին։ Ուսուցչին ուղիղ խնդիր է, սակայն տրականի ձևով է կիրառված։ Այս երևույթը, կենսունակ լինելով մեր լեզվում, նպաստում է, որ ավանդաբար, հնից եկած տրականով անուղղակի խնդիրները պահպանվեն, չնայած այժմ դրանց խնդրառու բայերը ստացել են ներգործական նշանակություն։ Եվ մինչև այսօր պահպանված այդ անուղղակի խնդիրները արդեն մոտենում են ուղիղ խնդրի, ուստի և դրանք կոչում ենք գործողության անուղղակի խնդիր։

§ 752. Գործողության անուղղակի խնդիր են առնում՝ **տիրել, հաղթել, տիրապետել, խանգարել, օգնել, աղաչել, դավաճանել, դրժել, դիմադրել, պաշտել, ծանոթանալ, տեղեկանալ, ազդել, զարկել** և մի քանի ուրիշ բայ-ստորոգյալներ։ Այս բայերի շարքում կան այնպիսիները, որոնք հաճախ արդեն ուղիղ խնդիր են առնում,

ուստի այդպիսիները ըստ խնդրառության անցնում են ներգործական բայերի շարքը, իսկ նրանց խնդիրները համարվում են ուղիղ։

§ 753. Վերևում թվարկված բայերի մեջ կան այնպիսիները, որոնք առաջացել են հարադրական բարդությամբ. սկզբնապես հարադիր մասը գիտակցվել է բայի համար իբրև ուղիղ խնդիր, իսկ հաջորդ խնդիրը եղել է տրականով անուղղակի խնդիր. օրինակ՝ Ձեռնարկել գործի. ձեռն *ըմբռնվել է իբրև ուղիղ, իսկ* գործի՝ *անուղղակի խնդիր։ Հետագայում* ձեռն *բառը իբրև ուղիղ խնդիր այլևս չի գիտակցվում, ուստի* գործի *բառը դառնում է անմիջական խնդիր՝ պահպանելով, սակայն, իր հին հոլովաձևը. օրինակ՝* Եվ մի աճեղածայր կարմիր մատիտ ձեռքին *գործի* է ձեռնարկում նա բուռն ու կենսաճորղ *(ՆԶ, III, 9)*։ Նա որոշեց ձեռնարկել այնպիսի մի զորավոր *միջոցի (Մուր., III, 357)*։ Այս իր ներքին ազդեց նրա արբանյակներին *(ԴԴՎ, 113)*։ Այդ անկեղծությունն էլ երկյուղ է ազդում *Մացակին (ՆԶՀ, 292)*։ Երկրպագելու սրբոց *մասունքին (Թ., II, 21)*։

§ 754. Պետք է նշել նաև, որ այս բայերը իբրև գործողության բայեր, մասամբ թույլ են և տատանվում են ներգործական և չեզոք բայերի սահմանագծում։ Այսպիսով՝ գործողության անուղղակի խնդիրը գտնվում է անցման պրոցեսում և հնարավոր է, որ դրանք հետագայում փոխարինվեն ուղիղ խնդրով, օրինակներ. Երբեք չդավաճանեցին հայրենի *աշխարհին (Թ., III, 549)*։ Այդ մարդը դեռ ինքն էր դավաճանում ամուսնական *անկողնին (Շիրվ., IV, 62)*։ Գարնանային վարարումը սպառնում էր նրա հին *սյուներին (ԴԴՎ, 52)*։ Լավ տիրապետելով արտադրության *տեխնոլոգիային (ՍՀ, 1952, № 278)*։ Հայ տերտերը դրժած *ուխտին (Թ., I, 252)*։ Ճրշագայության է ելել՝ *երկրին* ծանոթանալու *(Անթ., 127)*։ Արտաշատի կամուրջը դիմադրում էր Արաքսի *հարվածներին (ԴԴՎ, 52)*։ Գիշերային խավարը վաղուց արդեն տիրել էր *աշխարհին (Ր., I, 165)*։ Կարող էր երկար ընդդիմադրել նրանց ցած *դավադրություններին (նույն տեղում, 180)*։ Ձգտում ես խանգարելու համաձայնագրի *կատարմանը (ՍՀ, 1954, № 220)*։

§ 755. Գործողության անուղղակի խնդիր են առնում նաև ներքին հոգեկան կարողություններ արտահայտող մի քանի բայեր, որոնց բովանդակությունը ամբողջանում է տրական խնդիրներով, իսկ այս վերջինները հանդիսանում են այդ զգացմունքային բայերի խնդիրները. օրինակ՝ Եվ նուսացին արդարության մի խուլ ատտծու՝

դատաստանի (Անթ., 56)։ Չէ, լավ է կրկին, որ երկրում մնամ, *Ծաղրի, նեղության* մի կերպ դիմանամ *(Թ., II, 99)*։ *Քեզ* չպետք է խղճալ *(ԳՄԹ, I, 322)*։ Մենք չէինք կարող խղճալ *ոչ ոքի (Չն, 3)*։ Օ՜, գթացե՛ք հիմա Այդ *ծառերին* խաչված, *բուլվարներին* ամա *(Նույն տեղում, 144)*։ Ես Լամիյեին չէի կարեկցիլ *(Շիրվ., V, 424)*։

§ 756. *Գործողության անուղղակի խնդիր են առնում նաև* սիրահարվել, վարժվել, ընտելանալ, հակադրվել, հակառակվել, խփվել, զարկվել, բախվել *և մի քանի ուրիշ բայ-ստորոգյալներ. օրինակ՝* Ուր ես բախվում այնպիսի *մարդու (Շեքս., I, 468)*։ Ընտելանալ *այցերին (Անթ., 497)*։ Սիրտս ամուսնուս բուն իսկ *արհեստին* սիրահարված է *(Շեքս., I, 131)*։ Նա սիրահարված է իր փոքրիկ *դրացուհուն (Մուր., Ընտ., I, 61)*։ *Իրար* չհակառակվել *(ՆՋՀ, 304)*։

ը) ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 757. *Տրական հոլովով անուղղակի խնդրի հիմնական նշանակությունը այն է, որ ցույց է տալիս մի առարկա, որին մի բան մատուցվում, հանձնվում, փոխանցվում, տրվում, մոտեցվում է։ Խնդիրը այս նշանակությամբ ստանում է* տալ, հանձնել, մատուցել, մատակարարել, նվիրել, առաջարկել, պարգևել, ընծայել, մատնել, ընձեռել, վճարել, կարկառել, ավանդել, կտակել, վաճառել, ծախել, մոտենալ, մերձենալ, վարձատրել *և այս կարգի այլ բայ-ստորոգյալների մոտ. օրինակ՝* Եվ կյանքս տվի պարզ ու սրտաբաց վառվող *աշխարհին (Չն, 10)*։ Եվ հրամայեց, որ բովանդակ Չինաստանը տասը տարի սնունդ մատակարարե *բանվորներին (Անթ., 60)*։ Կնքեց իր մատանու տոհմանիշով, հանձնեց *սուրհանդակներին (ՍՉ, V, 283)*։ Նրա փառքին ու հերոսական *շնորհքին* է, որ նվիրել եմ հոգիս ու բախտս *(Շեքս., I, 131)*։ Ինչո՞ւ մատնում ես դու նրանց օտար *գազանին (Նույն տեղում)*։ Բայց չեմ մոռանում ես երբեք, երբեք, որ տրված է *ինձ* մարդկային մի սիրտ *(Չն, 181)*։ Բա մենք *մարզպանին* ոնց ենք տալիս, *վանքին* ոնց տվինք *(ԴԴՎ, 18)*։ Մոտեցավ հայելուն *(ԳՄԹ, I, 324)*։ Ու հոսում է գիշերը մութ, մոտենում է *առավոտին (Չն, 18)*։

§ 758. *Մատուցման անուղղակի խնդիր են առնում նաև այնպիսի բայեր, որոնք փոխաբերաբար կամ կողմնակի կերպով են արտահայտում նախորդ բայերի նշանակությունը. օրինակ՝* Մենք կեր ենք նետում անկուշտ *անդունդին (Չն, 8)*։ Իմ ապրանքները չեմ

վատաճացել մի *նավի (Շեքս., I, 502)*։ Խոստացի *նրան* իմ ոսկի գանը, խոստացի նրան ամեն, ամեն բան, Ինչ որ կարող է խոստանալ շահը Երկրակալ շահը իր սիրած *կնկան (Թ., II, 144)*։ Բեշիրզորապետի կողմից պատգամ եմ բերել *թագավորին (Մուր., III, 337)*։ *Պետք է այդ բայերից հետո ենթադրել* տալ, հանձնել... *բայերը*։ *Վերջին օրինակում* թագավորին *կարող է մտածվել նաև շահի անուղղակի խնդիր*։

§ 759. *Մատուցման անուղղակի խնդիր են առնում նաև բուն մատուցման բայարմատներով, դրանցից կազմված գոյականներով, ածականներով բաղադրյալ անվանական ստորոգյալները. օրինակ՝* Անձնվեր եմ *մայրին*՝ իմ տիրոջը *(Շեքս., I, 130)*։ Այդ *բաշլուղին* եմ պարտական իմ երկու ականջով *(Թ., V, 60)*։ Այդ մասին *բախտիս* երախտապարտ եմ *(Շեքս., I, 502)*։ *Այդպես ասվում է.* ես նրան պարտք *եմ*. տալիք եմ մեկին. ավանդատու եմ բանկին *և այլն*։

թ) ՀԱՆԳՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 760. *Մատուցման անուղղակի խնդրին իր նշանակությամբ մոտենում է հանգման անուղղակի խնդիրը. սա ցույց է տալիս մի այնպիսի առարկա, որին մի բան կպչում, հանգում, կառչում է։ Հանգման անուղղակի խնդիր են առնում մի շարք այնպիսի բայստորոգյալներ, որոնք արտահայտում են կպչելը, հանգում, փակչում և այդ կարգի հարաբերություններ. օրինակ՝* Եվ այնպես, ինչպես բոլոր դարերում կապված է եղել մարդը իր *դարին*... Կապված եմ ես այս ճսկա *պայքարին*։ Կարոտ է ձուլվում նրա *երգին (Չե, 181, 182)*։ Հայ և հոռոմ զինվորները խառնվեցին *իրար (Անթ., 132)*։ Սրա օրով ես կցեցի իմ իշխանության *կալվածքներին (Նույն տեղում, 74)*։ Սրտով ես միացա ձեր *նամակին (Անթ., 198)*։ Խնմտանքս փաթաթվում է սրտիս *շինքին (Շեքս., I, 516)*։ Որ կարենայի դիպչել այն *այտին (Շեքս., I, 434)*։ Խորիշան պինդ սեղմվեց Արսենի *կրծքին (ԴԴՎ, 298)*։ Կառչեցին այդ *հույսին (Նույն տեղում, 292)*։ Նորից ստիպված եղավ *պատին* կպչել ճաշին *(ՉԸե, 370)*։ Ագուցվեն *իրար (Անթ., 60)*։ Այս որոշման գալով, եթե խոշոր *դիմադրության* չհանդիպեն *(Տիրվ., V, 289)*։ Հայրենի աղբյուր, երգերս վճիտ ճյուսել կուզայի բյուրեղ *կարկաչիդ (Իս., I, 228)*։ Իմ օրերի ոլորապտույտ առանետը եկել հանգել էր վերջապես այն լայն, ուղիղ *ճանապարհին (ՎՓՀՀ, 89)*։

ժ) ՓՈԽԱԴԱՐՁ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 761. *Փոխադարձ գործողության և կապվածության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին մի առարկա գործակցում, որի հետ ներքին, հոգեկան և ֆիզիկական կապվածության մեջ է մտնում։ Այսպիսի խնդիր են առնում* մասնակցել, գործակցել, աջակցել, համաձայնել, աշխատակցել, հաշտվել, ձայնակցել, ուղեկցել, դաշնակցել *բայ-ստորոգյալները և սրանց արմատներից կազմված գոյականով, ածականով և այլ խոսքի մասերով բաղադրյալ ստորոգյալները. օրինակ՝* Պետք է գործակցել *կառավարությանը (Թ., V, 460)։* Երբ խոսքն արդեն *սրտին* էր դաշնակից *(Անթ., 196)։* Ես համաձայն չեմ ընկեր *Վասակին (ՆՁՀ, 160)։* Հաշտվել է արյունոտ *փաստին (նույն տեղում, 192)։* Փափագելով փափագում էր մասնակցել վարժուհիների հոգեզվարճ *բամբասանքներին (Մուր., IV, 23)։ Վարդուհու մայրը խնդակցում էր աղջկանը (Մուր., I, 194)։* Կուղեկցե *քեզ* երգը զուռնայի *(Զե, 148)։* Իմ աղոթքներս *նրան* ուղեկից *(Շեքս., I, 254)։* Ամեն տեղ արմնյական *գրքին* աջակցեց *(Մուր., III, 424)։* Մասնակցել է նրա *ուրախության ու տխրության (նույն տեղում, 430)։* Այս կապակցությամբ չի կարելի չհամաձայնել *Ներուին (ՍՀ, 1954, № 220)։ Փոխադարձ կապվածության խնդիր պետք է համարել՝* բարեկամանալ, մտերմանալ, ծանոթանալ, ընկերանալ, հաղորդակից լինել *և այս կարգի ուրիշ բայ-ստորոգյալների տրական հոլովով փոխադարձ գերադաս-խնդիրները. օրինակ՝* Բարեկամանալ միմյանց. ծանոթանալ իրար. հաղորդակից լինել միմյանց *և այլն. այս բայերը գերադասնցապես հետ կապով անուղղակի խնդիր են պահանջում։*

ժա) ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 762. *Տրական հոլովով դրվում է նաև հաղորդման անուղղակի խնդիրը. այս խնդիրը ցույց է տալիս այնպիսի առարկա, որին մի բան ասվում, հաղորդվում, հարցվում է։ Հաղորդման անուղղակի խնդիր են առնում առանձնապես ասացական բայերը. այսպես՝* ասել, հաղորդել, հայտնել, բելադրել, գուժել, հրամայել, պատասխանել, խոստովանել, պատմել, բացատրել, զանգահարել, հարցնել, զեկուցել *և այս կարգի այլ բայեր։*

Հաղորդման անուղղակի խնդիր են դառնում հատկապես անձ արտահայտող բառերը. մյուս բառերը այդպիսի խնդիր դառնալով գերազանցապես փոխաբերական նշանակություն են ստանում։

Փափսալով են ասում միմյանց *ականջի (Շեքս., I, 315)*։ Իմ ողջույնները հայտնեք ձեր *դստեր (Նույն տեղում, 465)*։ Ո՞վ պիտի զեկուցի *Միհրներսեհին* իր ժամանումը *(ԴԴՎ, 190)*։ Ու լի դառնությամբ հարցնում է նա Դալուկ մարմարիոն Թմկա *տիրուհուն (Թ., II, 149)*։ Իմ ո՞ր գաղտնիքը *հորդ* պետք է հայտնես *(ԳՍԹ, I 323)*։ Այդ բանը դժվար կարող էր բացատրել *ընկերոջը (ՍԶ, V, 138)*։ *Նրան* էլ հայտնիր իր ուրախությունը *(Նույն տեղում, 154)*։ Որպեսզի կրկին, երբ երկրի հրից Երկնի աստղերը գանգատվեն *քարին (Զե, 10)*։ Եվ Բաթը կարգադրեց *Գնելին (Անթ., 126)*։

Ծանոթություն. Պետք է նկատի ունենալ, որ պատմել, ասել, բացատրել, զեկուցել *և նման բայերի տրական հոլովով անուղղակի խնդիրը կարող է լինել շահի անուղղակի խնդիր. օրինակ՝* էյ, լա՛վ կենաք, ակա՛նջ արեք, Մի բան պատմեմ հիմի *ձեզ. այս նախադասության մեջ* ձեզ *կարող է նշանակել նաև՝* ձեզ համար, *որ* շահի *անուղղակի խնդիր է։*

§ 763. *Հաղորդման անուղղակի խնդիր ենք համարում նաև տրականով այն խնդիրը, որին ունկնդրվում, լսվում է. այս իմաստով անուղղակի խնդիր են առնում՝* լսել, ականջ դնել, ունկնդրել, անսալ *բայերը. օրինակ՝* Հե՜յ, պարոննե՛ր, ակա՛նջ արեք Թափառական *աշուղին*, Սիրուն տիկնա՛յք, ջահել տղե՛րք, լավ ուշ դրեք իմ *խաղին (Թումանյան)*։ Ռամիկը չի անսա ոչ մի *սաստման (ԴԴՎ, 123)*։ Բայց օտարի պես էի ունկնդրում Ինչպես իմ *հոգուն*, ինչպես իմ *լացին (Տերյան)*։ Լսում են մեկտեղ իմ արդար *խոսքին (Իս., II, 175)*։ Լևոնը ցրում էր կնոջ կասկածները և հորդորում չլսել *բամբասանքներին (ՆԶՀ, 153)*։

ժբ) ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 764. *Տրական հոլովով նմանության կամ համապատասխանության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան նմանվում, հավասարվում, համապատասխանում է։ Այսպիսի խնդիր են առնում* ընկերանալ, նմանվել, հավասարվել, համակերպվել, հարմարվել, համապատասխանել, համեմատվել, ներդաշնակել *բայերը և դրանց համապատասխան մի շարք ածական-*

ներ, գոյականներ, որոնք կազմում են անվանական բաղադրյալ ստորոգյալներ. ինչպես՝ հարմար է, հավասար է, համեմատ է, ընկեր է, ներդաշնակ է *և այլն։ Այս նշանակությամբ անուղղակի խընդիր կարող են առնել նաև* հասնել, մոտենալ *բայերը,* մոտիկ, մոտ *ածականները, որոնք ունեն հավասարվել նշանակությունը։* Նրան իր տեսքով, հասակով, ասին, Չի հասնի չքնաղ հուրին Իրանի *(Թ., II, 143)*։ Ի՛նչ սարի արծիվ կը հասնի *քաջին,* Ի՛նչ շահ կը կանգնի նրա առաջին *(նույն տեղում, 146)*։ Ո՞վ կանի նրան *գետնին* հավասար *(Թ., II, 144)*։ Հավասար է *լավագույններին* *(Շեքս., I, 394)*։ Իմ *ընտրությանը* ներդաշնակ է իմ *հավանությունը* *(նույն տեղում, 318)*։ Նման է գինետների *տկճորներին*, քան թե ադամորդու *(Ր., I, 471)*։ Մի օրը հավասար է եղել երկրի մի *տարում* *(Թ., III, 237)*։ Ճաշը ներդաշնակ լինի ձեր բարի *գալուն* *(Շեքս., II, 25)*։ *Խինդի* էր՝ նման ռռնոցը տխուր, *լացի* էր նման խինդը կարկաչուն *(Չե, 5)*։ Այնտեղ ու՛ր ընդմիշտ տանջանքն է լռում, Եվ հոգին դառնում *անհունին* ընկեր *(նույն տեղում, 8)*։ Որոնք չեն համապատասխանում գաղութային խոշոր տերությունների *շահերին* և նրանց *հաշիվներին* *(ՍՀ, 1954, № 220)*։ Մարզպետունու հաղորդած լուրը չէր հարմարում այս անակնկալ *նորության*։

§ 765. *Նմանության կամ համապատասխանության խնդիրներին մոտենում են՝* արժան է, վայել է, անկ է, սազական է, սազում է *և նման ստորոգյալների տրական հոլովով խնդիրները. օրինակ՝* Նա արժան է *գովեստի* *(Շեքս., I, 508)*։ Վայել է թագավորի *բարեհիշության* *(նույն տեղում, 33)*։ Արժան գտան այս *անարգանքին* *(նույն տեղում, 141)*։ Արցունքներդ *կնոջ* են վայել *(նույն տեղում, 463)*։ Տեր Մարզպետունին *քեզ* չի հասնիլ հրահանգել իշխանապետին *(Մուր., III, 434)*։ Ում որ անկ էր *(Մուր., IV, 13)*։ Գլխարկը խիստ սազում է *օրիորդին և այլն*։

ժգ) ՎԵՐԱԾՄԱՆ ԿԱՄ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 766. Վերածման, փոխարկման մի՛ շարք բայեր առնում են երկու խնդիր՝ նմանվելով կրկնակի հայցական հոլովով խնդիր առնող բայերին (§§ 746—749), միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում երկրորդական խնդիրը տրական հոլովով անուղղակի խնդիր է և ցույց է տալիս այն առարկան, որին մի բան՝ վերածվում, փոխարկվում է։

Վերածման կամ փոխարկման անուղղակի խնդիր են առնում՝ փոխել, բաժանել, կիսել, ճեղքել, վերածել, թարգմանել, փոխարկել, փոխադրել *և այդպիսի մի քանի ուրիշ բայեր։ Այս փոխարկումը կարող է լինել որակական, քանակական, մի առարկայից մի այլի փոխարկման ուղղությամբ. օրինակ՝* Նրա սև անփայլ մազերը կարճես խանձում էին նրա ճակատն ու վիզը՝ ածուխի *գույնի* վերածելով ամեն ինչ *(ԴԴՎ, 156)*։ Կայծակը բաժանեց երեք հավասար *մասերի (Գերցեն)*։ Ու դարը այս մեծ փոխվի *երազի (ՉՆ, 181)*։ Ճեղքեց ամբոխն Երկու *մասի*, Մեկն աջ թալեց ու մեկը՝ ձախ *(Իս., II, 102)*։ Նա իր ունեցած հեծելազորը չորս հառաջապահ *գնդերի* բաժանեց *(Մուր., III, 447)*։ Շուտով դրությունը լրջից փոխվեց *կոմիկականի (Անթ., 71)*։ Նրա խաղաղության օրևանը *դժոխքի* փոխարկեցի *(Մուր., III, 309)*։ *Այսպես ասվում է.* Ռուսերենից թարգմանել, փոխադրել *հայերենի*։ Կիսել երկու *մասի*։ Ջուրը վերածել *թթվածնի և ջրածնի*։ *Համեմատի՛ր նաև հետևյալ նախադասությունը.* Նրա ձեռները ծալվեցին *բռունցքի (Ընտ. էջեր, 977)*։

§ 767. *Գրաբարում այս անուղղակի խնդիրը կիրառվում էր ի նախդիր ունեցող հայցականով։ Հետագայում, երբ* ի *նախդիրը ընկնում է, 19-րդ դարի մեր մի շարք գրողներ այդ անուղղակի խնդիրը կիրառում են ուղղակի հայցականով. օրինակ՝* Մի չահավետ բան էր յուր արծաթը փոխել *ակցիաներ (Հյուս., 1858 թ., 275)*։ Յուր զորքերը երկու *մասն* էր բաժանել *(Ր., III, 300)*։ Ճեղքում են մարդու սիրտը երկու *կտոր (Հյուս., 1858, 139)*։ Ասպարեզը բաժանված էր երկու *մասն (Ր., I, 41)*։ Հնդկացիք բոլոր չորս *կարգ* են բաժանված *(ԽԱ, V, 265)*։ Բնությունը բաժանվեց *երկինք և երկիր (Հյուս., 1858, 139)*։ *Այժմ այդպիսի հայցականով խնդիրը իսպառ վերացել է։ Անտարակույս անհետևողության կամ բայի նշանակության փոփոխություն պետք է նկատել հետևյալ նախադասության այդ կարգի խնդիրը.* Այդ հասարակ տեխնիկական աշխատանքն էլ նա վերածում էր աշխատանքային կարգապահությունը բարձրացնելու *միջոց (ՆԶՀ, 55)*։

ժդ) ՍՏԱՑՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 768. *Ստացման անուղղակի խնդիրը տրական հոլովով դրված այն բառն է, որին վերագրվում, պատկանում, վերապահվում է մի բան՝ իբրև նրա ստանալիքը։ Այս նշանակությամբ անուղղակի*

խնդիր են առնում՝ պատկանել, վերաբերել, վիճակվել, վերապահել, վերագրել, հատուկ լինել *և այս կարգի այլ բայեր. օրինակ*՝ *Զորսին* վիճակված էր շուտով գերի ընկնել թուրքերի ձեռքը *(Շիրվ., V, 289)*։ Սեղանի վրա խոսելու իրավունքը վերապահում էին իրենց *մեծերին (Անթ., 129)*։ Վերագրել կամ քո *դավադրության (Շեքս., I, 317)*։ Որի հետևանքները՝ թերևս տարբեր՝ պիտի վերաբերի նաև *իրենց (ԴԴՎ, 113)*։ Սիրեց այն հանգստությունը, որ հատուկ է *մարդկանց (Նույն տեղում)*։ Թե փլավը, թե ցամաք հացը *նրան* է պատկանում *(Բ., III, 150)*։ Էնքան տուն, տեղ, էնքան հարստություն *նրան* է պատկանում *(Նույն տեղում, 160)*։ Էդ երկուսից *որին* է պատկանում գտած ոսկին *(Թ., III, 150)*։ Ծածկել եմ այն ամենը, ինչ այս *մենաստանին* և ոչ թե *ձեզ* է պատկանում *(Մուր., III, 217)*։ Նա վիճակված է *մեզ (Նույն տեղում, 419)*։

§ 769. *Այս պարագաներում՝ կապված խնդրի բառական նշանակության հետ, ստացականության իմաստը սկսում է մթնել. օրինակ*՝ Դա վերաբերում է նախարարների *կյանքին (ԴԴՎ, 299)*։ Առժամանակյա խստությունը պետք է վերագրել այն *հանգամանքին (Մուր., III, 348)*։ *Ավելի շուտ այս կապակցությունների մեջ անուղղակի խնդիրը արտահայտում է առնչակցություն։ Այն, ինչ որ սկզբում ստացականություն է արտահայտել, հետագայում խնդրի վերացական դառնալու հետ՝ վերածվել է կապվածական հարաբերության.* Վերաբերում է կյանքին *նշանակում է՝ կապված է կյանքի հետ, ինչպես որ՝* հատուկ է մարդկանց *նշանակում է՝ բնութագրական է մարդկանց։*

§ 770. *Ստացականություն շատ ավելի ցայտուն են արտահայտում* եմ, լինեմ, կամ *բայերի տրական հոլովով անուղղակի խնդիրները, որոնք ցույց են տալիս, թե մի բան ունեն, մի բան իրենց է պատկանում. օրինակ*՝ Մեր *երթին* վախճան չկա, Մեր պայծառ *գործին*՝ պարտություն *(ՉԵ, 113)*։ *Կեր ու խումին* հաշիվ չկար *(Աղայան)*։ Թիվ կա *աստղերին, թիվ չկա* զորքին *(Թ., II, 120)*։ Ջենթաբիից *ո՞ւմ* է օգուտ եղել, որ *մեզ* լինի *(ԳՄԹ, I, 86)*։

§ 771. *Այս դեպքում հաճախ ստորոգյալը սղվում է, բայց խնդիրը մնում է նույնը. օրինակ*՝ Որ ապրանքը գոմը մտնի՝ *քեզ*, որը դուրս մնա՝ *ինձ (Թ., III, 155)*։ Ինչքա՞ն որ հուր կա իմ սրտում, բոլորը *քեզ*, Ինչքա՞ն կրակ ու վառ խինդում, բոլորը *քեզ*. Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա, Դու չմրսես ձմռան ցրտում, բոլորը *քեզ (ՉԵ, 143)*։

Ծանոթություն. Ստացական խնդրի այս ձևը հին երևույթ է մեր լեզվում. գրաբարում ստացականություն արտահայտող խնդիրը եմ, լինիմ, կամ բայերի մոտ դրվում էր թե՛ տրականով և թե՛ սեռականով։ Այժմ դա մենք միայն իբրև տրական ենք ըմբռնում նույնիսկ ամենահին արտահայտությունների մեջ. օրինակ՝ orենf չէր կանանց (Ր., II, 251), որտեղ կանանց բառը կարող է և սեռական եղած լինել։ Կամ՝ Մարմնավորաց են բանf վարդիս և սեր աշխարհի է (ԴԴԸՊ, 197)։ Այսպիսի բացարձակ գրաբարյան արտահայտություններում նույնիսկ պետք է դրանք համարել միայն տրականով ստացման անուղղակի խնդիրներ։

§ 772. Խոսվածքներում ստացական անուղղակի խնդիր են առնում ընկնել, հասնել բայերը, որ թափանցել են նաև գրական լեզում. օրինակ՝ Լսիր, Սողո, ամեն շնչին հասնում է ուղիղ fսան փուք: (Զարյան)։ Քո կոլոտ Գալոն, թեկուզ երազում, տեսել էր շնչին fըսան փուք ցորեն (այսինքն՝ հասնի, ընկնի. Զարյան)

§ 773. Խոսվածքներից գրական լեզվին անցել է նաև ունենալ բայի մոտ ստացական անուղղակի խնդիրը, որ այժմ դադարում է կիրառվելուց։ Մ. Աբեղյանը բերում է հետևյալ օրինակները, որոնք բոլորն էլ առածներ են. օրինակ՝ Մեզ մի գիժ ունեինf, մինն էլ շամա եկավ: Խեղճին հաց չունի ուտելու, էժան մսին խաշու չի ունենալ: Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի (Թ., «Հառաչանք»)։ Հովհաննես, քեզ նամակ ունես (Թ., V, 167)։ (Այս վերջինները մեր օրինակներ են)։

Ստացման անուղղակի խնդրի այս ձևը արդյունք է երկու տարբեր կառուցվածքների բաղարկության (կոնտամինացիա). մի կողմից՝ ես ունեմ, մյուս կողմից՝ ինձ կա բաղարկվել են և տվել նաև՝ ինձ ունեմ:

ժե) ՈՒՂՂՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 774. Ուղղորման կամ ուղղության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին ուղղվում, դեպի որը գնում է մի այլ առարկա։ Այսպիսի խնդիր են առնում՝ ուղղել, գրել, նայել, հառել, դառնալ, դիմել, անցնել, այցելել, գալ, ուղարկել, գնալ, մեկնել, պարզել, fաղել և այս կարգի մի քանի այլ բայեր. օրինակ՝

Որոնք անթարթ ուղղված էին *լուսնին* (*Մուր., III, 312*)։ Նրանք անմիջապես դիմում են *գործի* (*Շիրվանզադե*)։ Կաթողիկոսը դարձավ *ժողովականներին* (*ԴԴՎ, 101*)։ *Ձեզ* այցի ենք եկել (*Շեքս., I, 39*)։ *Քեզ* էի գալիս (*նույն տեղում, I, 175*)։ Ուր եք, սարեր, *ձեզ* եմ գալիս (*Թումանյան, «Անբուն կկուն»*)։ Պիտի դառնամ նորեն *Հոմերոսին* (*Մուր., III, 169*)։ Վարագուրած պատուհաններից նայում էին *փողոցին* (*ԳՍԹ, II, 227*)։ Իշխանն *արքային* գրեց մի նամակ (*Մուր., III, 423*)։ *Մորս* չգրե իմ մահը (*Ր., I, 487*)։ Կանգնի մի այլ *խենթության* (*ԴԴՎ, 79*)։ (Գրել *բայի խնդիրը կարող է նաև հաղորդման նշանակություն ունենալ*)։ Դիմեց իր շուրջը համախմբված *բանվորներին և ուսանողներին* (*ԳՍԹ, II, 530*)։ Թողիր կրոնդ և դարձիր մեր *հավատին* (*Մուր., V, 305*)։ *Ինձ* պարզեցին երկու նախատինքի սրեր: Տոկացեք, ընկերներ անգին, Ձեր ամեն մի փորած նավթահորը մի քայլ է ցանկալի *կյանքին* (*ՉԵ, 183, 113*)։ Աչքներս ձյունոտ *գագաթին* հառած (*նույն տեղում, 3*)։ Վախվխելով աչքերը *կարիքին* (*էին ուղղված*), Բնության ու մարդու *դավերին* (*ՉԳԾ, 135*)։

§ 775. *Ուղղության կամ ուղղորդման անուղղակի խնդիր են առնում՝ ա) հոգեկան վիճակ արտահայտող մի շարք բայեր, որոնք ցույց են տալիս ձգտում, հակում, տենչ դեպի մի բան. բ) մի քանի ածականներով անվանական ստորոգյալներ, որոնք սույն նշանակությունը ունեն։ Հիշատակելի են՝* ձգտել կարոտել, հետամտել, ծարավել, փափագել, տենչալ, պապակել, ծարավ, պապակ, կարոտ (*է*), հետամուտ լինել *և այլն. օրինակ՝* Հոգիս ձգտում է միայն մի *գործի* (*Մուր., III, 171*)։ Սիրտս *սիրուդ* է լոկ պապակ (*ՆԶՀ, 35*)։ Եվ տենչալով տենչում եմ *քեզ* (*նույն տեղում, 109*)։ Դու գիտես, թե որքան իրավունք ունեմ *մահվան* փափագելու (*Մուր., III, 340*)։ Բայց այդ զոհը կլինի նա, ով հետամուտ է *մահվան* (*նույն տեղում*)։ *Այդպես ասվում է՝ արյան* ծարավի է: *Լույսի* ենք կարոտ *և այլն*։

Ծանոթություն. Այս բայերից տենչալ *և* փափագել *արդեն առնում են նաև հայցական հոլովով ուղիղ խնդիր, սակայն բերված օրինակներում դրանց խնդիրները անուղղակի են*։

§ 776. *Ուղղության կամ ուղղորդման անուղղակի խնդիր են առնում նաև* հետևել, դիմավորել, ընդառաջել, հաջորդել, պատահել, հանդիպել, հետապնդել *և սրանց կարգին պատկանող այլ բայեր. օրինակ՝* Թող որ հայոց թագուհին իր կոչման մեջ հանդիպե *մահվան* (*Մուր., III, 312*)։ Թագուհին հետևեց *նրան* (*նույն*

տեղում, 312)։ Գնդապետին պետք է հանդիպեմ բերդաքաղաքում (Շեքս., I, 159)։ Օտար հայացքներով հետևում էին իրեն (ԴԴՎ, 305)։ Եզնիկը հետևեց նրան (Մուր., III, 172)։ Ու կարողանամ պատրաստվել և պարտ ու պատշաճ դիմավորել գնդապետին (Նույն տեղում, 338)։

Տ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր բայ միայն մի նշանակությամբ խնդիր ունենա. խնդրի նշանակությունը և հոլովը կախված են խնդրառու բառի նշանակություններից։ Որքան խնդրառու բառը բազմիմաստ լինի, այնքան տարբեր կարող են լինել խնդրի նշանակությունները, և ըստ այդմ էլ կփոխվեն դրանց հոլովները. օրինակ՝ հանդիպել *բայի տրականով խնդիրը կարող է մտածվել նաև հանգման անուղղակի խնդիր։*

ժզ) ՇԱՀԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 777. Բազմաթիվ անցողական և անանցողական բայեր առնում են տրական հոլովով մի անուղղակի խնդիր, որ ցույց է տալիս, թե գործողությունը կատարվում, մի բան լինում, դառնում, տեղի է ունենում այդ անուղղակի խնդրի օգտին, վնասին, նրա համար։ Այսպիսի խնդիրը կոչվում է շահի անուղղակի խնդիր։

§ 778. Շահի անուղղակի խնդիր են առնում մի քանի ներգործական բայեր. դրանցից հիշատակելի են՝ ցանկանալ, պատրաստել, պատմել, ասել, անել, գնել, կարդալ, երգել, չափել, կազմակերպել, թողնել, խմել, գործել *և ուրիշ բայեր. օրինակ՝* Թագավորը այժմ խմում է Համլետի *բախտին (Շեքս., I, 109)։* Այդ *ում* ես խոսում *(ում համար, նույն տեղում, 70)։* Մենք *միմյանց* գործել ենք անհամար բարիք *(ՆԶԱ, 27)։* Խմում ենք կռվող քաջերի *փառքին,* Որ կռվի դաշտում կյանք չեն խնայում, Եվ ընկածների սուրբ *հիշատակին,* Որ երկնքից են այժմ իրենց նայում *(Թ., II, 146)։* Չարիքը չափում է *հանցավորին,* իսկ բարիքը՝ արդար *մարդուն* *(Մուր., III, 221)։* Խլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց *նրան* կին *(Թ., II, 136)։* Մենք *ձեզ* ուրախություն ենք բերել *(Ընտ. էջեր, 424)։* *Ինձ* էլ չի բաց անում իր սիրտը *(Նույն տեղում, 422)։* Կարա-Մուրզա, պարպում եմ բաժակս քո *կենացին* *(ՀՀb, 368)։* (Կենաց, *որ գրաբարում շահի անուղղակի խնդիր էր, այժմ ուղիղ խնդիր է)։*

Ծանոթություն. Գրաբարում շահի անուղղակի խնդիրը ներգործական բայերի մոտ չափազանց ընդարձակ կիրառություն ունի. իսկ այժմ խիստ սահմանափակված է, որովհետև ներգործական բայերի ուղիղ խնդիրը հաճախ մեր գրական լեզվում դրվում է նաև տրականաձև, ուստի, երբ ներգործական բայերի մոտ դրվում է տրական հոլովով շահի անուղղակի խնդիր, ըմբռնվում է իբրև ուղիղ խնդիր. օրինակ՝ գրաբարում ասվում է. Զի՞նչ արասցուք քեռ *մերում (Երգ երգոց, Ը, 8), որ նշանակում է՝* ինչ անենք մեր քրոջ համար, *իսկ եթե բառացի (առանց* համար *կապի) արտահայտենք, այն ժամանակ* քրոջը *կհասկացվի ուղիղ խնդիր, այսինքն՝* ինչ դարձնենք մեր քրոջը: *Մեր գրական լեզվում անձ արտահայտող բառերը շահի անուղղակի խնդրի կիրառությամբ, մանավանդ ներգործական բայերի մոտ, քիչ են գործածվում, որովհետև այս պարագայում երկիմաստությունը անխուսափելի է. օրինակ՝ ասվում է.* Նրա պատվին խնջույք կազմակերպել. մի բան անել նրա օգտին, վնասին, *բայց չի ասվում՝* խնջույք կազմակերպել նրան, մարդուն:

Այս միտքը պարզելու համար մի օրինակ վերցնենք. Բավական է, ինչքան *ձեզ* խաղան Անտիգոնե, Նամուս, Օթելլո, Քին *(Չե, 47)։ Այստեղ ընդգծված* ձեզ *բառը շահի անուղղակի խնդիր է, բայց այդ իմաստը այս տողերում դժվարությամբ է ընկալվում, որովհետև անսովոր է. այդ դեպքում պետք է ասվեր՝* ձեզ համար: *Ներգործական բայերի շահի անուղղակի խնդիրը աստիճանաբար վերանալով՝ նպաստում է* համար *կապի կիրառման հաճախության։*

§ 779. Ներգործական բայերին հակառակ՝ շահի անուղղակի խնդիրը ճկուն ու բազմազան է չեզոք բայերի մոտ։ Այստեղ արդեն երկդիմության հնարավորությունը վերանում է. անուղղակի խնդիրը չի կարող ուղիղ խնդիր մտածվել, որովհետև չեզոք բայերի մոտ ուղիղ խնդիրը հազվագյուտ է պատահում. իսկ եթե այդպիսի դեպք լինում է, դարձյալ երկդիմությունը առկա է. օրինակ՝ Լալիս եմ քեզ կարոտագին, Ի՛մ հայրենիք, իմ հեռավոր *(Իս., III, 293)։* Քեզ *այստեղ կարող է մտածվել իբրև ուղիղ խնդիր՝ նմանությամբ* գլուխը լալ, օրը լալ. *սակայն այստեղ* քեզ *իսկապես շահի անուղղակի խնդիր է։ Օրինակներ.* Նա կարող է լինել արքա *Մավրերի* կամ *ցեղին* արաբ *(Չե, 153)։* Թե կյանք, թե բարիք մնում է

մահվան (Շեքս., I, 482)։ Ելնում է *մեկին* իր երազն ու սեր, Մյուսի մուրազը սրտումն է մնում *(Թ., II, 55)*։ Սրտանց կուրախանամ ձեր *հաջողությանը (Թ., V, 323)*։ *Ժողովուրդներին* արև կծագի *(Սարյան)*։ Սա էլ երևի թագավորի *պատվին* է կազմակերպված *(Անթ., 129)*։ Այդ իրավունքը ձեռք բերելն էլ *քեզ* բան չարժե *(ԳՍԹ, II, 200)*։

§ *780. Նույն ձևով շահի անուղղակի խնդիրը հեշտությամբ ընկալվում է մի շարք ածականներով, գոյականներով կազմված բաղադրյալ ստորոգյալների մոտ. օրինակ՝* Ճարտարապետ որդի ունեմ, մատաղ լինիմ ջինջ *հոգուն (Սարյան)*։ Այդ վիճակի մեջ սառը ջուրը վնաս է *մարդուն (Ընտ. էջեր, 420)*։ Շատ ուրախ են այդ *բանին (նույն տեղում, 423)*։ Այդ գաղտնի *գործին* հարկավոր և ազդեցիկ մարդիկ էին *(ԴԴՎ, 179)*։ *Օտարին* մահ է միշտ հողն օտար *(Շիրազ)*։ Նա պիտանի կլինի *երկրին (Մուր., III, 211)*։

§ *781. Երբեմն շահի անուղղակի խնդիրը երկդիմի է լինում, այսինքն՝ արտահայտում է նաև այլ հարաբերություններ. Ճշտիվ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է դիմել բնագրին։ Իհարկե չի բացառված, որ միաժամանակ խնդիրը երկու կամ ավելի նշանակություն ունենա. օրինակ՝* Ես այժմ շատ ուրախ եմ *դրությանը (Շիրվ., VI, 160)*։ Ուրախ եմ քո *գալուն (նույն տեղում, 173)*։ Ծույլ եմ *նամակագրության (Թ., V, 394, 397)*։ Հայերն ու թուրքերը *եղբայրության* երդվեցին *(նույն տեղում, 295)*։ Մանոթ ընկեր լավ բարեկամ՝ *Տերտերության* տվին խորհուրդ *(Թումանյան)*։ *Այստեղ բերված օրինակներից առաջին երկուսը կարող են դիտվել ոչ միայն շահի անուղղակի խնդիրներ, այլև պատճառի պարագաներ. այսինքն՝* Ուրախ եմ դրության, գալու առթիվ, պատճառով: *Երրորդ օրինակը կարող է մտածվել իբրև սահմանափակման անուղղակի խնդիր, այսինքն՝* ծույլ եմ միայն նամակագրության մեջ: *Վերջին երկու օրինակներում խառը հանդես են գալիս նպատակի և շահի հարաբերությունները*։

§ *782. Շահի անուղղակի խնդիրը կարող է խաչաձևվել վերաբերության կամ պատճառական անուղղակի խնդրի հետ, որ մեր լեզվում արտահայտվում է* մասին *կապով և բացառական հոլովով. օրինակ՝* Զարմանում ես դու, որ երգ եմ գրել Ես այսօր ահա մաքառման մասին, Եվ չթառամող խոսքերով նրե Գովք եմ կարդացել անդուլ *երազին* Եվ բարձունքների *ցնորքին* անհաս *(ՉԵ, 210)*։

Երազին, ցնորքին *բառերը կարող են համանիշ լինել* մաքառ-

ման մասին *կապակցությանը, բայց և չի բացառված, որ նշանակեն*՝ երազի, ցնորքի համար: *Բանաստեղծն օգտագործել է հոլովի բազմիմաստությունը։*

ժէ) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆ ՈՒՂԻՂ ԽՆԴՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ

§ 783. Երբ ներգործական բայերը վերածվում են դերբայական ձևերի, բայանունների, գործողություններ արտահայտող գոյականների, իսկ այս վերջինները դառնում են ստորոգելիական վերադիրներ, ապա առնում են տրական հոլովով անուղղակի խնդիր, որ իմաստով նույնանում է դրանց բայական խնդրին. օրինակ՝ Աշխարհը գիտակ է իմ հանցավոր *սիրույն (Մուր., III, 309)։* Պահպանություն էին անում *բերդին (Նույն տեղում, 327)։ Վտանգին* անգետ է *(Շեքս., I, 22)։* Մեր ազգի անունին խայտառակիչ մի լինիլ *(Մ. Աբեղյան, Շար., 89)։ Այս նախադասությունների ընդգծված խնդիրները կարելի է արտահայտել ուղիղ խնդիրներով, եթե գործողության բառերը փոխարինենք բայերով։* Աշխարհը գիտե իմ հանցավոր սերը: Պահպանում էին բերդը *և այլն։*

ժը) ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 784. Տրական հոլովով դրված այն բառը, որ կրավորական և որոշ չեզոք բայերի մոտ ցույց է տալիս գործողություն անող, կատարող առարկան, կոչվում է ներգործող անուղղակի խնդիր. օրինակ՝ ...Գրքի էջերից երազվում էր *նրան* տիտանային մի մարդ *(Չե, 196)։* Եվ *աստծուն* լսելի եղավ խայամի զղջումն ու իմաստալից խոսքը *(Իս., III, 220)։* Թողված, կախարդված, տարված էն *երգին*՝ Վերացավ թռավ իմ վշտոտ հոգին *(Թ., II, 81)։* Ինչպես իզուր խաբվել ես դու Սուտ *խոսքերին* չար աղվեսի *(Թ., I, 310)։* Զոհվել է զոհվող լույսերին: Ահա պոետն էլ պատրանքով հարբած՝ Գերվեց մի անգամ ժպտուն աչքերին *(Նույն տեղում, 120)։* Ու կույր էր գնում ջրի ալիքին *(Թ., II, 189)։* Մինչև այսօր բյուր մեզ նմանները զոհվել են թշնամու *սրին (Մուր., III, 326)։*

§ 785. Ժամանակակից հայերենում տրականով ներգործող անուղղակի խնդրի ըմբռնումը թույլ է։ Սրա ուժեղ դրսևորմանը խանգարում են բացառական և գործիական հոլովները, որոնք այդ կիրառությունը (մանավանդ բացառականը) շատ ավելի ուժեղ են

արտահայտում։ Մյուս կողմից այդ խնդրի դրսևորմանը խանգարում են տրական հոլովով կիրառվող մյուս խնդիրները։

Այդ թույլ լինելը և երկդիմությունը ավելի ցայտուն երևում է դերբայական ձևերով, ածականներով և գործողություն արտահայտող ուրիշ գոյականներով կազմված բաղադրյալ ստորոգյալների մոտ. օրինակ՝ Լավ է *գիտունի* գերի, քան անգետի սիրելի *(լինել. Առած., 59)։* Նրանք գիտեն ապրել լուսնի լույսին *գերի (Զն, 141)։* Լսելի է լինում *ամենքին։* Ցանկալի է *ինձ։* Սիրելի է բոլորին *և այլն։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Այս կարգի ներգործող անուղղակի խնդիրը տարբերվում է գրաբարի տրական հոլովով ենթական անորոշ դերբայի մոտ *կապակցությունից, որտեղ երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է անորոշ դերբայով, իսկ ենթական տրականով. օրինակ՝* Ոչ կամիմ նմա գնալ *(չեմ կամենում, որ նա գնա)։ Դրան մոտիկ մի նախադասություն գտնում ենք Րաֆֆու մոտ.* Ինչու չլինել *մեզ* մի զույգ անտառային եղջերուներից և բնակվել միշտ այդ սարերի, այդ ձորերի և այդ ծառերի լռության մեջ *(Ր., I, 379)։ Որտեղ* մեզ *ենթակա է և ոչ թե անուղղակի խնդիր։*

ժթ) ՓՈԽԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ *786. Փոխարինության անուղղակի խնդիրը տրական հոլովով կիրառվող այն բառն է, որի դիմաց, փոխարեն, կատարվում, տրըվում է մի ուրիշ առարկա, մի բան. օրինակ՝ Որին* չի կարող փոխարինել ոչ մի ինժեներ *(Շիրվ., VII, 368)։* Ինչ որ ուներ տանը, նագին, Ողջ հավաքեց տվավ պարտքին *(Թ., I, 271)։ Լավությանը* լավություն ամեն մարդու բանն է *(Առած., 55)։* Նախարարությունը ես պատասխանատու է հնարավոր *արյունահեղության (ԴԴՎ, 63)։* Պիտի ետ տաս տոկոսներով *հարյուրին* հարյուր *(Շիրվ., VII, 269)։* Էս ձեռքերը, որ աշխատանքի գործիքներ էին շինում, զենքեր կշինեին *մեկին* տաս, *տասին՝* հարյուր *(Քոչար, 77)։ (Այս վերջին օրինակում* մեկին տաս, տասին հարյուր *կապակցությունները ավելի քանակի պարագա են)։* Երբ տասը *հրամանին* հինգը կկատարենք *(Մուր., V, 242)։*

§ *787. Փոխարինության անուղղակի խնդրին մոտենում է գնի կամ արժեքի անուղղակի խնդիրը. օրինակ՝* Հերը տղին քսան *թումանի* չի տա *(Իս., III, 292)։ Այստեղ* թումանի *բառը* դարձել է *գնի չափանիշ և հին փոխարինության նշանակությունը յուրահա-*

տուկ սահմանափակում է ստացել: Համեմատի՛ր. Աշխատածդ տուր գինու արաղի (Նար-Դոս):

Ծանոթություն 1. Եթե փոխարինության և գնի խնդիրները ունեն ուժեղ առարկայական նշանակություն, ապա դրանք պետք է համարել անուղղակի խնդիրներ, իսկ եթե ստացել են մակբայական արժեք, ապա դրանք արդեն պարագաներ են. օրինակ՝ նրա արժանիքը գնահատվեց մեծագնի (Մուր., IV, 164): Բայց այդ բարիքը թեթևագնի չպիտի վաճառեր (Մուր., V, 318): Այս երկու օրինակի մեջ ընդգծված բառերը ավելի պարագաներ են, քան խնդիրներ: Վերևի օրինակում քսան թումանի նույնպես կարելի է չափ ու քանակի պարագա համարել:

Ծանոթություն 2. Նշանակությամբ որոշ չափով սրանց մոտենում է համապատասխանության, նմանության անուղղակի խնդիրը՝ արժան է, վայել է և այս կարգի բաղադրյալ ստորոգյալների մոտ: Համեմատի՛ր. Ես արժանի չեմ նըրան (Մուր., III, 309): Նրան վայելում է այդ պատիվը (§§ 764—765):

ի) ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 788. Տրական հոլովով հնազանդության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան ենթարկվում, հնազանդվում, խոնարհվում է. օրինակ՝ Քո ժողովուրդը ամենայն հնազանդությամբ կխոնարհվի քեզ (Ր., III, 567): Հնազանդ ենք քեզ (Շեքս., I, 33): Դուքսի անունով հարկադրում եմ ձեզ՝ հնազանդվել ինձ (Շեքս., II, 37): Քո կամքը դու պետք է ենթարկես նրա կամքին (Շեքս., II, 15): Բարեկամ, դու պետք է ենթարկվես մարդկանց (Անթոլոգիա): Այսպիսի խնդիր են առնում՝ հավատարիմ է, հլու է, հնազանդ է, հպատակ է և այս կարգի անվանական բաղադրյալ ստորոգյալները:

Երբ հնազանդություն արտահայտող հիշյալ բնորոշ բառերը զեղչվում են, անուղղակի խնդիրը համատեղում է ժամանակի, տեղի, շահի, նպատակի հարաբերություններ. օրինակ՝ Ղեկավարի կանչին, սերունդների կոչին գալիս են նրանք հազարներով (ՁԳԾ, 128): Աշխատանքի այս մեծ զորակոչին գալիս են երկաթյա շարքերով: Գոռնելով մի նոր, կամքավոր ուղի, Բարձրացել են կոչին

դասակարգի մի նոր, Բարձրացել են *մարտին* մեր ընդհանուր (*նույն տեղում, 129, 134*)։

իա) ԱՊԱՎԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ *789. Ապավինության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին մի ուրիշ առարկա ապավինում է, որին հույս է դնում. օրինակ՝* Եթե թողնող լինի մնաս քո *հաց ու ջրին (ԴԴՎ, 184)*։ Որդի ու կին թողած (են) *բախտին (Թ., II, 90)*։ Չեմ կարող վստահանալ քո *խոստման (Մուր., V, 243)*։ *Այսպես ասվում է.* Ես մնում եմ քո *հույսին*։ Երեխան թողնում եմ քո *խնամքին և այլն*։

իբ) ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ *790. Տրական հոլովով բաղդատության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին համեմատվելով մի այլ առարկա՝ այս կամ այն չափով գերակշռում, գերադասվում է բաղդատական տրականով անուղղակի խնդրին։ Այդ կարող է լինել նվազեցման և առավելության, բացասական և դրական առումով. օրինակ՝* Գերակշռում է հանույքին *(Մուր., II, 49)*։ Հոր հրամանը գերադասում է յուր զգացումներին *(Մուր., Ընտ., I, 233)*։ Միթե մարդ արարածը չի գերազանցում նրանց *(Մուր., III, 418)*։

իգ) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *791. Ինչպես արդեն ասացինք, բացառական հոլովով անուղղակի խնդիրը հակադիր է տրական հոլովով անուղղակի խնդրին. չնայած այս հակադրության, այնուամենայնիվ, որոշ առումներով դրանք նույնիսկ համանիշներ են. օրինակ՝* Վրեժխնդիր լինել մեկին. վրեժխնդիր լինել մեկից: *Բայց համանիշ կապակցությունների մեջ էլ դրանք միմյանցից որոշ նրբություններով տարբերվում են. օրինակ՝* Կառչել մի բանի, կառչել մի բանից. *առաջինը կպչելու, սեղմվելու, մոտենալու միտում է արտահայտում, իսկ երկրորդը՝ կախվելու, անջատվելու, պոկվելու, ընկնելու։ Համեմատի՛ր.* Երբ չկպչենք բառերի նեղ բառարանական *նշանակությունից (Թ., V, 224)*։ Դուք անհիմն կերպով կառչել եք քոչելու սխալ *մտքից (ՍԽՀ, I, 385)*։

Ուրեմն՝ տարբեր հոլովներով համանիշ խնդիրները միաժամանակ արտահայտում են առանձին նրբություններ, որոնք բխում են նրանց հիմնական նշանակություններից՝ իբրև դրանց յուրահատուկ իմաստային արտահայտություններ։

Բացառական հոլովով անուղղակի խնդրի հիմնական առումը անջատման անուղղակի խնդիր լինելն է, որով բացառականով խնդիրը զանազանվում է մյուս հոլովներից, հակադրվում և ձևավորվում է։

բդ) ԱՆՋԱՏՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 792. Բացառական հոլովով անջատման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից, իբրև մի անկախ առարկայից (որը առանձին տեղ է զբաղեցնում և որտեղ գտնվում է նաև անջատվող առարկան), անջատվում, առանձնանում է մի այլ առարկա։ Անջատման անուղղակի խնդիրը թե՛ դադարի վիճակում է գտնվում և թե՛ շարժման, իսկ նրանից անջատվողը բոլոր դեպքերում շարժման վիճակում է։

§ 793. Անջատման անուղղակի խնդիր են առնում շարժում արտահայտող մի շարք չեզոք և կրավորական բայեր և դրանց հիմքերից կազմված անվանական բաղադրյալ ստորոգյալներ։ Այդ բայերից հիշատակելի են՝ հեռանալ, փախչել, անջատվել, խուսափել, զատվել, հրաժարվել, մեկուսանալ, առանձնանալ, կղզիանալ, բաժանվել *և այլն։ Այդպիսի խնդիր են առնում նաև հիշյալ բայերի ներգործականները, պատճառականները. օրինակ՝* Այսպես զատվեցան նրանք *իրարից (Շեքս., I, 530)։* Հեռու է հայրենի *օջախից*, հեռու ծնողաց քնքույշ *հոգատարությունից (Ր., I, 484)։* Ջոկել չգիտե դեռ չորը *թացից (Չն, 224)։* Դու հրաժարվում ես իմ *խնամակալությունից (Շիրվ., VII, 331)։* Եվ խաղաղության փափկասուն *ոճից* Իսպառ անբաժին *(է) (Շեքս., I, 127)։* Արջից խույս կտա *(նույն տեղում, 344)։* Զերծ են *կոշտերից (նույն տեղում, 427)։* Հեռացնում էին որդին *ծնողից*, եղբայրը *եղբորից*, կինը *ամուսնուց (Մուր., V, 184)։* Եվ ոչ մի ժանիք ինձ չի բաժանի լենինյան *դարից*, ինչպես ոչ մի ուժ ինձ չի բաժանի իմ շռնդալից պայծառ *քնարից (Չն, 221)։* Միշտ քո քամով էի թռչում, Ու միշտ *բախտից* հեռու փախչում *(Թումանյան)։* Որը իր նման անջատված էր կորած *եղբորից (Շեքս., II, 10)։* Ով դու անիրավ, ինչ եմ արել քեզ, Որ ինձ իմ *տանից* էդպես բաժանես *(Թումանյան)։* Այդ երկու նավերը տասը մղոն էին *իրարից* հեռու *(Շեքս.,*

II, 9)։ Թյուրքերի աչքից ճողոպրած (է) (Իս., III, 32)։ Գեներալ Գայանովը մեզնից գնացել է (Քոչար, 295)։

իե) ԵԼՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 794. Անջատման անուղղակի խնդիրը և անջատվող առարկան, ինչպես տեսանք, գտնվում են միևնույն տեղում՝ իբրև իրար հավասար և անկախ առարկաներ, որոնցից մեկը անջատվում է։ Սակայն սրանից տարբերվում է այն դրությունը, երբ անջատվող առարկան գտնվում է մյուս առարկայի մոտ, նրա որևէ մասում, որ չի դիտվում իբրև տարածություն, տեղ. օրինակ՝ Նրանից ստացա գիրքը. այս դեպքում էլ առկա է անջատվածության հանգամանքը, սակայն անջատվող առարկաները հավասար պայմաններում չեն գտնվում։ Բացի սրանից, այս դեպքում հաճախ առկա է տարածական հասկացողությունը. օրինակ՝ Խլեցի նրա ձեռքից. ձեռքից անուղղակի խնդրի մեջ կա և՛ տարածական հարաբերություն։ Նկատի ունենալով այս պարագան՝ մենք ստանալ, առնել, վերցնել, խլել, կորզել, հափշտակել, ընդունել, ձեռք բերել, փախցնել, շորթել, գնել, գրավել և այս կարգի այլ բայերի բացառական հոլովով անուղղակի խնդիրը համարում ենք ելման անուղղակի խնդիր. օրինակ՝ Ճամփարկղը շտապով խլեց (բնագրում՝ խլելով) աղախնից (Շիրվ., VII, 329)։ Խլում է սպասավորից չիչը (Նույն տեղում, 345)։ Երկրի ամեն հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից (Մուր., 186)։ Ծանրագույն հոգսը ինձ կորզեց կնոջս արբեցնող գրկից (սա կարող է նաև տեղի պարագա դիտվել)։ Ուզեցին անգամ այն ձկնորսներից կնոջս էլ վերցնել (Տեքս., II, 10)։ Պոկում էր հայրենի հողից (ԴԴՎ, 258)։

§ 795. Ելման անուղղակի խնդրին մոտենում է պահանջարկի մի շարք բայերով արտահայտված ստորոգյալների անուղղակի խնդիրը, որից մի բան պահանջվում է։ Այս խնդիրը նախորդից տարբերվում է նրանով, որ ելման հանգամանքը տեղի չի ունենում, կամ բոլոր դեպքերում չի ենթադրվում, որ կարող է տեղի ունենալ. սա կարելի է անվանել պահանջարկի անուղղակի խնդիր. օրինակ՝ Ներողություն խնդրիր հարսնացվի մորաքրոջից (Շիրվ., VII, 316)։ Չէր համարձակվել բացատրություն խնդրել շահից (Մուր., V, 192)։ Նա խանից հազար ոսկի պահանջեց (Տեքս., II, 16)։ Էգուց թող գա հորից ուզի (ՊՊ, II, 43)։

§ 796. Անջատման անուղղակի խնդրին մոտ է պակասության

անուղղակի խնդիրը, որ ցույց է տալիս այն առարկան, որից զուրկ է մի առարկա, որը պակասում է մի այլ առարկայի. օրինակ՝ Զրկված մնացի կյանքում *բոլորից (Թ., II, 90)*։ Որ *բախտից* եմ ես քեզ զրկել *(նույն տեղում, 93)*։ Հարյուր *մարկից* պակաս է նույնիսկ *(Շեքս., II, 7)*։ Զրկվում է *սիրեկանից (Շիրվ., VII, 342)*։ Խորհուրդ են արել, որ այսուհետև իր թախտից զրկվի, ով կռիվ անի *(Թումանյան)*։ *Խելքից* հանեց ջահել տղաների *(Քոչար, 347)*։ Զրկեց նրան իր *օրհնությունից (Շեքս., I, 369)*։

§797. Անջատման, ելման անուղղակի խնդիր են առնում ներգործական և չեզոք մի շարք այնպիսի բայեր, որոնք կողմնակի, փոխաբերական կերպով են արտահայտում անջատումը, ելումը. այդպիսի բայերից հիշատակելի են ազատել, սպասել, ուշանալ, մաքրել, քաղել, ծածկել, փրկել, պոկել, ապահովել, գողանալ, վեր կենալ *և այլն։ Ինչից* ազատվեց,—*բանտից,* միամիտ քույրիկիս, *բանտից (Շիրվ., VII, 332)*։ Ես ուրիշ բան չեմ սպասում այդ *անասունից (նույն տեղում, 334)*։ *Ինչից* կուշանաք *(նույն տեղում, 328)*։ *Ինձանից* էլ ծածուկ չէ *(Մուր., V, 197)*։ Մաքրիր հոգնած քո սիրտը *կարոտներից* չնչին *(Չն, 183)*։ Օգուտ են քաղում մեր նեղ *դրությունից (Մուր., V, 194)*։ Շուտով ծածկվեցան *աչքից (նույն տեղում, 196)*։ Այն երեքին էլ փրկեցին *մահից (Շեքս., II, 10)*։ Մեղսապարտ մաշկս դու չէիր պոկի իմ պոռնկային *ճակատից (նույն տեղում, 22)*։ Հույս ունի *(բնագրում՝ հուսալով)* ապահովել իր ժառանգությունը ժորժի *շռայլությունից (Շիրվ., VII, 337)*։ Նա վեր է կենում *սեղանից (նույն տեղում, 365)*։ Դեռ որքան շատ բան են թաքցնում նրա հզոր *աչքերից (Մուր., V, 229)*։

§ 798. Մասամբ անջատման անուղղակի խնդիր, մասամբ հիմունքի պարագա են արտահայտում տարբերել, զանազանել, որոշել, սահմանազատել *բայերի բացառական հոլովով խնդիրները. օրինակ՝* Ու այդ *ձայներից* որոշում էի թնդանոթաձիգ Ստյոպայի տեղը *(Անթ., 289)*։ Ես զարմանում եմ, թե ինչպես է *իրարից* տարբերել ձեր մայրը *(ԳՍԹ, I, 131)*։ Մարմնով *փայտից* չենք զանազանվում *(Թ., V, 60)*։

իզ) ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ 799. Բացառական հոլովով ներգործող անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից, որի կողմից կատարվում է գործողությունը, և որը անցնում է ենթակայի վրա։ Բացառական

հոլովով ներգործող խնդիր առնում են կրավորական բայերը. օրինակ՝ Եվ զորքը հանձնեցիր ստրկահան ֆռ Ջոպպերին, Որ ջախջախվի *Արա Ոսկեպատացուց (ՆՁԱ, 52)։* Լույսիկը մնում է միշտ բարի, գեղեցիկ ու սիրված *ամենքից (Թ., III, 462)։ Թագավորից* խիստ հանդիմանվեց *(Շեքս., I, 34)։* Սեղաններր դատարկվում են *ընթրողներից (Շիրվ., VII, 365). սա կարող է նաև անջատման խնդիր ըմբռնվել։* Որոնք հարգվել են մեր արժանավոր *նախարարներից և* որոնք պիտի հարգվեն նրանց *հետնորդներից (Մուր., IV, 193)։*

§ 800. Ներգործող անուղղակի խնդիր են առնում սովորաբար զգացում, հույզ, հոգեկան վիճակ, գործողություն արտահայտող բայեր. ինչպես՝ զգացվել, վիրավորվել, վրդովվել, հուզվել, ազդվել, գրգռվել, խաբվել, սիրվել, պաշտպանվել, հարգվել, փառաբանվել, հրապուրվել, գրավվել, հափշտակվել *և այլն, բայց այն պայմանով, որ բացառականով անուղղակի խնդիրը լինի գործողություն կատարողը, այլապես չի ստացվի այդպիսի անուղղակի խնդիր. օրինակ՝* Ես պաշտպանվում եմ քեզանից *նախադասության մեջ քեզանից կարող է ներգործող խնդիր լինել, երբ նախադասությունը նշանակե.* Ուրիշը ինձ հալածում է, իսկ դու պաշտպանում ես ինձ. *իսկ եթե դու հարձակվում ես ինձ վրա, իսկ ես քեզանից պաշտպանվում եմ, այս դեպքում* քեզանից *անջատման խնդիր է՝ կողմնակի, փոխաբերաբար արտահայտված։*

§ 801. Ներգործող անուղղակի խնդիր են առնում նաև դարձվածքային նշանակություն ստացած այնպիսի ներգործական բայակապակցություններ, որոնք ունեն կրավորական նշանակություն. օրինակ՝ Քո սիրելի *աղջիկներից* այնքան ցավեր ես քաշել *(Շեքս., I, 328)։* Մենք էլ շատ բաներ ենք տեսել *թուրքերից (Քոչար, 337)։* Ինչպիսի վերաբերում պիտի ունենա *որդիներից (Իս., II, 144)։*

Ծանոթություն. Բացառական հոլովով ներգործող անուղղակի խնդիր միանգամայն բացահայտ կերպով դառնում են անձերը. իրերը ավելի պատճառի, միջոցի նշանակություն էլ են ստանում. օրինակ՝ Քանի *ձեռքից* եմ վառվել *(Թ., I, 216)։* Օ՜ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ էս անիծված լվի *ձեռից (Թ., II, 127)։* Առաջնորդվելով իմ դեպի երգն ունեցած *սիրուց (Թ., IV, 413)։* Ինչպես երգեցիկ անիվն է արագ պտտվում ահա վահանի *ուժից (Չե, 207)։*

իէ) ՊԱՍՍԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 802. Վերևում տեսանք, որ ներգործող խնդիր են առնում կրավորական բայերը, բայց կան նաև մի խումբ չեզոք բայեր, որոնք նույնպես բացառական հոլովով խնդիր են առնում, որը ներգործող նշանակություն չունի. օրինակ՝ աղջիկը ամաչում է հորից *նախադասության մեջ հայրը ոչ մի գործողություն չի կատարում, սակայն թեև հոգեբանական դրություն, իբրև սովորույթ՝* աղջիկը հորից ամաչում է: *Այսպիսի անուղղակի խնդիրը ոմանք համարում են անջատման՝ պատճառի պարագա, ոմանք էլ՝ ներգործող անուղղակի խնդիր։ Այս երեք նշանակությունն էլ հավասարապես արտահայտվում է, որովհետև հայրը պատճառ է դառնում, որ աղջիկը ամաչի, ամաչելով որոշ ներքին անջատում է լինում (գուցե և ֆիզիկական), և կա նաև ներգործության վիճակը։ Մենք այսպիսի անուղղակի խնդիրը կոչում ենք պասսիվ ներգործության։ Տրական հոլովով անուղղակի խնդիրը քննելիս այս կարգի բաժանումներ չկատարվեցին, որովհետև քննվելիք կիրառությունը տրականով անուղղակի խնդրի համար պատահական երևույթ է։*

Պասսիվ ներգործության անուղղակի խնդիրը գործուն մասնակցություն չի ունենում գործողության մեջ, որևէ գործ չի կատարում, հոգեկան փոփոխությունները կատարվում են ներքին շարժառիթներով։

Այսպիսի անուղղակի խնդիր են առնում՝ ձանձրանալ, ակնածել, ամաչել, վախենալ, զարհուրել, սոսկալ, զզվել, հոգնել, խորշել, խռովել, դժգոհել, հիասթափվել, խորթանալ, վշտանալ, կշտանալ, հագենալ, նեղանալ, երկնչել, վախենալ, սարսափել, գարշել, բավականանալ, գոհ մնալ, շնորհակալ լինել, զգալ *և այս կարգի մի քանի ուրիշ չեզոք բայեր, որոնք արտահայտում են հոգեկան այս կամ այն վիճակը՝ կապված արտաքին և ներքին բազմազան երևույթների հետ։*

Նշենք նաև, որ կապված այս կամ այն առանձին բայի հետ՝ անուղղակի խնդիրը ստանում է իմաստային յուրահատուկ նրբերանգ, որ մերթ մոտենում է պատճառի պարագայի, մերթ անջատման խնդրի, իսկ հիմնականը, անշուշտ, պասսիվ ներգործությունն է. օրինակներ՝ Ամուսնուց վաղուց է ձանձրացել *(Շիրվ., VII, 336)։* Դժգոհել *(է)* կեղծ ուրախության *քայլից (ԴԴՎ, 305)։* Թող զգուշանա *հետևանքից (Շիրվ., VII, 341)։* Եվ խորշեցի ես ինքս իմ նոտանատ *երգից (Չճ, 183)։* Առատ, անհատ աստծու նման միշտ *տե-*

զալուց հոգնել եմ ես, Հոգիս ծարավ՝ սրան, նրան *մտիկ տալուց* հոգնել եմ ես. Մինը պիտի գար իմ դեմը՝ նոխ ու շռայլ անհաշիվ, Ամեն նամփում *սպասելուց* ու *փնտրելուց* հոգնել եմ ես (*Թ., I, 213*)։ Եթե ուխտյալները կողմ են դիմադրության՝ գոհ կլինեն ինձանից (*ԴԴՎ, 354*)։ Որ փարթամ կյանքի շքեղ *կենցաղից* չի էլ զգացել երբեք մի հաճույք (*ՀՀԵ, 58*)։ Դրանից նրա զայրույթը չգոհացավ (*Անթ., 133*)։ Շնորհակալ եմ *քեզանից* (*նույն տեղում, 190*)։ *Որից* դժգոհ են լինում (*Քոչար, 83*)։ Ոչ էլ ես վախենում եմ որևէ *մեկից* (*Շիրվ., VII, 293*)։ Մարմնիս ուժերը հոգնել են իրենց *պարտքերից* (*Շեքս., I, 58*)։ Զանձրացել եք խաղաղ ու հաշտ Հողագործի *օր ու կյանքից* (*Թ., II, 135*)։ Նրանք այլևս չէին վախենում ոչ *սրից*, ոչ *նիզակներից*, ոչ *տապարներից* (*Անթ., 132*)։ Երկյուղածում էին *ժայռերից* (*ՎԱՍԱ, 8*)։ Անհնար է հագենալ Վեզըլեի անպատմելի *գեղեցկությունից* (*Իս., II, 134*)։ Իրենից և իր. տնից սոսկում էին (*ԳՍԹ, I, 266*)։ Չէիր ձանձրանա դու *գիտությունից*, Չէիր ձանձրանա *սիրուց* ու *կյանքից* (*ԶԵ, 275*)։

իը) ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ 803. *Բաղդատության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի հետ համեմատվում է մի այլ առարկա՝ դրանց ժամանակային, տարածական, որակական, քանակական և այլ հարաբերություններով՝ մեկը մյուսի նկատմամբ ավել կամ պակաս լինելը արտահայտելու համար. օրինակ՝* Մեկը *մեկից* լիքն ու գինով (*է*)... Մեկը *մեկից* նոխ ու ծաղկած (*է*), Մեկը *մեկից* նորով հաղթած, Մեկը *մեկից* շռայլ ու շեն (*Շիրազ*)։ Նրա արինը կարմիր է *մերից* (*Թ., II, 42*)։ Ու *սեղանից* հսկայական լույս է տալիս աշխարհին (*Թ., I, 297*)։Նա ինքն իր *գլխից* *մեծ* չի երևում (*Շեքս., I, 373*)։ Իմ տերը ձեր *տիրոջից* առավել է (*նույն տեղում, 412*)։ Գերազանց է այդ անզուգական *գեղեցկությունից* (*նույն տեղում, 417*)։ *Մահից* վատ չէր միթե (*ԶԵ, 87*)։ Ջոլոները թվով այստեղի *հայերից* շատ փոքր են (*ՐԿ, 211*)։ Բծախնդրությունը անգամ չի կարող գերադասել մեկի բաժինը *մյուսից* (*Շեքս., I, 285*)։ Սիրահարները միշտ *ժամացույցից* առաջ են ընկնում (*նույն տեղում, 524*)։ Անց է վարպետի նարտարությունից (*նույն տեղում, 138*)։ *Ինձանից* փոքր էր երկու տարով (*Մուր., IV, 326*)։ Դու *հորից* առաջ ես մեռնելու (*Շիրվ., VII, 340*)։ Երբեք դու–

կատ է ավել այն *փողից (Շեքս., II, 36)*։ Քո *մարմնից* քանի խ մասն է դարձած *(նույն տեղում, 21)*։ Գազարի արմատը *թփերից* համեղ է *(ՊՊ, II, 270)*։ Տղամարդու ուժը կարող է գերակշռել կնոջ *ուժից (Նար., II, 60, 192)*։

§ 804. Երբ համեմատվող առարկան ալվում է և մանավանդ չկան բաղդատություն նշող յուրահատուկ բառեր, կամ բացահայտ չեն; բաղդատության անուղղակի խնդիրը կարող է երկդիմի լինել. օրինակ՝ Դե, *ձեզանից* հավատարիմ չունեմ ես իմ աշխարհում *(ԴԴՎ, 180)*։ Ազնվականները մեկին *գիշերից* մոայլ են նստած *(Շեքսպիր)*։ Կնիկը *մարդուց* էր ժրացել, մարդը *կնկանից*, աղջըկերքը՝ *երկուսից* էլ *(ՍՁ, III, 62)*։ *Առաջին օրինակում անուղղակի խնդիրը կարող է մտածվել նաև մասնական, երկրորդ օրինակում՝ ժամանակի պարագա, իսկ երրորդում՝ ներգործության խնդիր։*

իթ) ԾԱԳՄԱՆ ԿԱՄ ՍԵՐՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 805. Ծագման կամ սերման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից սերվում, ծնվում, առաջանում է մի առարկա, երևույթ և այլն։

Ծագման կամ սերման անուղղակի խնդիր են առնում՝ գոյանալ, կազմվել, լինել, ծնել, սերել, ծագել, ստեղծել, առաջ գալ *և այս կարգի ուրիշ բայեր. օրինակ՝* Հաղթ մեքենաներ ու գործարաններ, որ *քար ու հողից* բարիք են ծնում *(Հակոբյան)*։ Հուր *տանջանքից* ծնվեց հաղթանակ *(ՀՀԵ, 194)*։ Ծլում են սրտի *ավերակներից (Թումանյան)*։ Թե չորս ոտը ուներ *մորից*՝ Մի չորսն էլ փոխ առավ նորից *(Թ., «Անբան կկուն»)*։ Տեսնում եմ այդ, որ *արծվից* է սերվել *(Անթ., 288)*։ Ասպատաժ *քարից* կրակ դուրս թռավ *(Թ., «Սասունցի Դավիթ»)*։ *Քրտինքից* սպիտակ-զոլշավուն աղաշերտեր էին առաջացել *(Քոչար, 81)*։ Եվ նրա բեկբեկուն, հախուռն *բոցերից* ստեղծեց Լիլիթին *(Իս., III, 221)*։ Ձեր *մսից* եմ ես էլ *(Ձե, 87)*։ Ֆոսֆորածին *նյութից* եք դուք ստեղծված *(ԳՍԹ, I, 183)*։

Երբեմն ծագման խնդիր առնող բայը զեղչվում է, և մնում է միայն օժանդակ բայը. օրինակ՝ Արդյոք գիտես թե ով եմ ես, ինչ *ցեղից* եմ, Ինչ *տեղից* եմ... Գիտեմ-գիտեմ ինչ *ցեխից* ես *(Թ., I, 607)*։

Ծանոթություն. Ծագման կամ սերման անուղղակի խնդիրը երկդիմի է լինում այն դեպքում, երբ բացարձակորեն տարածականություն, տեղ արտահայտող առարկա է, այսին-

քըմ՝ այդպիսի խնդիրը կարող է մտածվել և իբրև տեղի պարագա. վերջին օրինակում ինչ ցեխից ես. բխում է ընդերքից և այլ նախադասությունների մեջ ցեխից, ընդերքից կարող են լինել ոչ միայն սերման անուղղակի խնդիր, այլև տեղի պարագա։ Այդ դեպքում բայիմաստով պետք է որոշվի։ Ձեր մսից եմ, ֆուֆուրածին նյութից եք օրինակների մեջ անուղղակի խընդիրը կարող է նաև բաղկացության, նյութի անուղղակի խնդիր համարվել։

ը) ԲԱՂԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 806. Բացառական հոլովով բաղկացության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից՝ իբրև մի նյութից՝ բաղկանում, գոյանում է մի ուրիշ առարկա, նյութ։ Քերականները այդ համարում են ծագման անուղղակի խնդիր, սակայն այդ երկու խնդիրների մեջ մենք տարբերություն ենք դնում. ծագման անուղղակի խնդիրը սերում է մի առարկա՝ առանց իր նյութական մասնակցության, առանց ոչնչացման, իսկ բաղկացության խնդիրը ինքը մասնակցում է նոր առարկայի, նոր նյութի գոյացմանը։ Բաղկացության անուղղակի խնդրի մեջ առկա է նաև մասնականությունը, բայց դա մղվում է ետին գիծը և ուշադրությունը բևեռվում է բաղկացության վրա. օրինակ՝ Պատերը մարջանից էին, ծառերի տերևները՝ զմրուխտից, պտուղները՝ հակինթից, ձկների թեփերը՝ արծաթից, Վիշապների տոները մաքուր ոսկուց (Թ., III, 235—236)։ Ստեղծում ենք այս թելերից Մետաքսագործ մեր ապագան. Այս թելերից խեղդող պարան Մենք հյուսում ենք մեր թշնամուն (Հակոբյան). Ժողովուրդն այնտեղ ներքև հովիտում Ասված է շինել ոսկուց, արծաթից (Թ., I, 149)։ Աստուրի նոր տունը բաղկացած էր երեք սենյակից և մի գոմից (Անթ., 189)։ Իր կառանիվի շառավիղները շինված են սարդի երկար ոտներից, ծածկոցը՝ ճպուռի բարակ թևերից, երասանները ամենափոքրիկ սարդի ոստայնից, ձիերի սարքը՝ լուսնի խոնավիկ ճառագայթներից, և խարազանը՝ ծղրիդի ոսկրից, իսկ նրա փունջը ոստայնի թելից (Շեքս., I, 425)։ Հիանալի կոնյակներ ու այլ հաճելի ոգելից խմիչքներ է պատրաստում ելակից (Քոչար)։

ը) ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 807. Մասնական անուղղակի խնդիրը այն ամբողջ առարկան է, քանակությունը, որից վերցվում է մի մասը, կամ որոշ քանակ։

եթե ամբողջը վերցվի, ապա կդառնա ուղիղ խնդիր։ Միայն պետք է նկատի առնել, որ որոշ առարկաներ կարող են մտածվել իբրև տեղի պարագաներ. օրինակ՝ Ծովից ջուր խմեցի, ծովից *տեղ է արտահայտում, իսկ՝* փայտից կտրեցի, փայտից *չի կարող արդեն տեղ մտածվել։*

§ *808. Երբ մասնական խնդրի հետ դրվում է նաև վերցված մասը, ապա այդ պարագայում մասնական խնդիրը կարող է դիտվել իբրև որոշիչ հենց այդ վերցվող մասի համար և կամ երկուսը միասին՝ իբրև նախադասության մի բաղադրյալ անդամ. օրինակ՝* Ձորի մյուս ափին իրար էին խառնված *գյուղերից մեկի* տները *(ԳՍԹ, I, 264)։* Կայսրը հրամայեց, որ արու *չինացիներից տասնից մեկը* բանվոր գա պարիսպները շինելու *(Անթ., 60)։* Ես չգտա ոչ մեկին *եղբայրներից* իմ չճեղ եվ ոչ մի մարդ, ոչ մի կին *Հերոսներից* իմ չճեղ *(Թ., I, 190)։*

§ *809. Մասնական բացառական հոլովով դրված բառերը երեք տեսակ դեր են կատարում՝ ա) դրանք առնչվում են ստորոգյալի հետ, ուստի խնդիր են, բայց բ) միաժամանակ կապված են իրենցից բաժանվող մասի, թվի, որոշ քանակի հետ, ուստի և պատկանելություն են արտահայտում և գ) որոշիչ են. օրինակ՝* Զուներ ու չգիտեր կանացիական *իմաստությունից* դեռ ոչինչ *(Իս., III, 36)։* Թե *որն իրենցից* շատ տարի կապրի *(Թ., I, 288)։ Չորսից* ոչ ոք ուշադրություն չի դարձնում *(Շիրվ., VII, 363)։* Ինը *մասից մյուս հինգը* չեն կարող ողորմել *(Փափ., 360)։ Կանանցից մեկը* բաժանվում է խմբից *(Անթոլոգիա)։*

§ *810. Բուն մասնական խնդիր կարելի է համարել այն խնդիրը, որի մոտ հանվող մասը առկա չէ, այլ կա միայն ընդհանուրը. օրինակ՝* Տանը եղած բոլոր *ուտելիքներից* շարեց *(Անթ., 287)։* Յարըս էլ խմեց էդ *ջրից (Թումանյան)։* Գառների *մսիցն* է ուզում *(Թ., I, 305)։* Երկու *սեռից* էլ մտել են այստեղ *(ՀՀԵ, 230)։* Դու հո նրա *մսից* չես կտրելու *(Շեքս., I, 535)։ Արյունիցս տաս, կխմի (ԳՍԹ, I, 136)։ Հեքիաթից, առակից* կիմանաս, պատմի լսեմ *(Թ., III, 167)։*

լբ) ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *811. Բացառական հոլովով հաղորդման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի կողմից հաղորդվում է որևէ լուր, տեղեկություն։ Հաղորդման անուղղակի խնդիրը՝ բացառական*

հոլովով տարբերվում է տրական հոլովով հաղորդման անուղղակի խնդրից. մինչդեռ այս վերջինը ցույց է տալիս այն անձը, որին հաղորդվում է մեկ ուրիշի կողմից, բացառականով հաղորդման խնդիրը, ընդհակառակը, հաղորդողն է։

Այս խնդիրը գերազանցապես անձի խնդիր է, որ դրվում է՝ հարցնել, լսել, իմանալ, տեղեկանալ, հասկանալ, հավաստիանալ, սովորել, ուսանել, ընդօրինակել *բայերի մոտ. օրինակ՝* Դու լսեցիր *ինձանից* ծածուկ իմ անկեղծ սիրո անզուսպ պոռթկումը *(Շեքս., I, 496)*։ Ես էն հանգուցյալ *լավերից* նույնպես լսել եմ հաճախ գանգատներ պեսպես *(Թ., II, 97)*։ Ես *քեզանից* եմ լսում էսօր *(Թ., II, 120)*։ Կարեկցական խոսքեր նա *ոչ մեկից*, անգամ հարազատ *մորից* չէր լսել *(ԳՍԹ, I, 199)*։ Շատ սպասեցի, որ խորհուրդը վերջանար, և ես իմ *հորից* խորհրդի ինչ լինելը իմանայի *(Մուր., II, 57)*։ Շատ-շատ զուցե մի նախատինք, հանդիմանություն լսեմ *նրանից* *(Նույն տեղում, 73)*։ Ով իմ որդիք, իմ որդիք, Ականջ դրեք իմաստության, Ականջ դրեք խրատներին Ձեր արարիչ, ձեր ստեղծող Հզոր ոգու *շրթունքներից* *(Թ., II, 221)*։

լգ) ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 812. Բացառական հոլովով պատմական կամ վերաբերության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում, որի մասին ասվում է խոսքը, պատմվում է, տեղեկություն է տրվում և այլն։ Եթե հաղորդման խնդիրը աղբյուր է, որից դուրս է գալիս խոսքը, ապա պատմական անուղղակի խնդիրը օբյեկտ է, որին վերաբերում է ա՛յն, ինչ որ ասվում, հաղորդվում է։

Պատմական կամ վերաբերության անուղղակի խնդիր են առնում ասել, խոսել, բամբասել, չարախոսել, պատմել, գանգատվել, տեղեկանալ *և այս կարգի այլ բայեր. օրինակ՝* Ճամփին *որսից* էինք խոսում *(Թ., III, 74)*։ Տղերք, որ *պախրիցը* խոսք ընկավ *(Նույն տեղում, 75)*։ Տեղիք չունենք գանգատվելու կյանքի *տխրությունից* *(ԴԴՎ, 352)*։ Ինչ կա քաղաքում, դե պատմիր տեսնեմ, իմանամ ես էլ ուրիշին ասեմ. *Մեռնող-ապրողից, թանկ ու էժանից* Կամ նոր դուրս եկած *գազեթից, բանից* *(Թ., II, 37)*։ Երկար խոսեցինք անցած *օրերից* *(Իս., III, 322)*։ Մի խոսիր ինձ *մխիթարությունից* *(Մուր., III, 422)*։ Միստր Բենտոնը բազմաթիվ հարցեր տվեց խանին, տեղեկացավ նրա *գործերից* *(ԴՍԹ, I, 268)*։ Վերադառնա խարկով տեղե-

կության սատանա իր *ամուսնուց (Քոչար, 286. ամուսնու մասին ոտիչները պետք է հաղորդեն)։* Երբ խոսում էին ծով ամբոխի մեջ *վիշտ ու կարիքից։*

լդ) ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ, ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

§ 813. Ածականով, մակբայով վերադիր ունեցող ստորոգյալները առնում են բացառական հոլովով մի անուղղակի խնդիր, որ սահմանափակում է ածականի ընդհանուր նշանակությունը անուղղակի խնդրի սահմաններում. օրինակ՝ Ջանել է, *խելքից* թեթև *(ԱՋ, III, 19)։* Նա էլ *չնչից* շատ է *(ՆՋՀԸ, 160)։ Այս երկու օրինակի մեջ* շատ և թեթև *բառերը սահմանափակվում են* չնչից և խելքից *բառերի սահմաններում. որովհետև մարդ կարող է ոչ միայն խելքից թեթև լինել, այլև մարմնից, այլև ոտքից..., այսպես էլ մյուս դեպքում։ Հաճախ դպրոցում լսում ենք՝* նա ճայոց լեզվից գերազանց է, բույլ է, լավ է, միջակ է *և այլն։ Սովորական արտահայտություններ են՝* խելքից պակաս է, ոտքից չուստ է, մորից խորթ է, տեսողությունից սուր է, ականջներից ծանր է *և այլն. կամ՝* կարդալու կողմից շատ լավ է, ընտանիքի կողմից դժբախտ է *և այլն։*

§ 814. Նմանության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին նմանեցվում, համապատասխանում է մի այլ առարկա ըստ ձևի, գույնի, նյութի և այլ առնչությունների. օրինակ՝ Իմ *գըլխարկից* այլևս ոչ ոք չի ծածկում *(Նար., VII, 133)։*

§ 815. Ընդօրինակման անուղղակի խնդիրը այն առարկան է, որից ընդօրինակվում, որի օրինակով պատրաստվում է մի այլ առարկա. օրինակ՝ Նար-Դոսը թարգմանել է մի երկու դրամատիկական գործ *Լ. Տոլստոյից* և *Լ. Անդրեևից,* ինչպես և մի ճանի պատմվածք *Մ. Գորկուց, Ա. Չեխովից (Նար., IV, 281)։ Բնագրից* թարգմանեց Խաչիկ Դաշտենցը *(Շեքս., II)։*

լե) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

ՄԻՋՈՑԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ 816. Գործիական հոլովով ամենահիմնական անուղղակի խնդիրը միջոցի խնդիրն է, որը միջոց է հանդիսանում որևէ գործ կատարելու համար։ Օրինակ՝ Ընկեր Աստղիկ, սիրտս *թրով* են կիսել *(ՆՋՀԸ, 228)։* Օխտն աղբյուրից ջուր է առել Կույս *սափորով* լուռ ու մունջ *(Թումանյան)։*

Միջոց են դառնում գործիքները, ամանը (սափորով), անձը, մարմնի մասերը, կենդանիները և այլ առարկաներ. օրինակ՝ Զորացած *մատներով* երկաթն էր կռում *(ՀՀԵ, 193)։* Փաքաքվել է, ոնց է գրկել Շիրահարքը երկու *թաթով (Հակոբյան)։* Սուր *ժանիքներով* պղպջատ թերթերի կողերն են ճերում *(ՀՀԵ, 96)։* Եվ լուսեղեն *մատներով* շոյեց բանաստեղծի ճակատի մռայլը *(Իս., III, 182)։ Անձի փոխարեն կիրառվում են արդեն կապի կիրառությունն ձեռք բերած՝* միջոցով, ձեռքով *բառերը.* Այդ գործը արվեց Վարդանի *ձեռքով։* Ուրիշի *միջոցով* կամենում են շազանակ հանել կրակից: *Միջոցի անուղղակի խնդիր են դառնում այլևայլ երևույթներ. օրինակ՝* Գիշերային խուլ լռությունը խանգարվեց մի խուլ *աղմուկով։* Կնոջ *մատնությամբ* ամրոց չի առել *(Թ., II, 149)։*

ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ *817. Ներգործության անուղղակի խնդիրը այնպես պարզ ու մեկին չէ, ինչպես այդ խնդիրը բացառական հոլովով. գործիական հոլովով անուղղակի խնդիրը համառեղում է միջոցի, պատճառի հարաբերությունները, որոնց հետևանքով թուլանում է բուն ներգործության ըմբռնումը. Համեմատի՛ր հետևյալ օրինակները.* Խռախուսված էի երշանիկ *սիրով (Ընտ. էջեր, 716)։* Ինքը տարված է այդ *գրքով (ՎԱՍԱ, 266)։* Դասերի ժամանակ տարված էր իր *մըտքերով (նույն տեղում, 267)։* Ուշադրությունս գրավված էր նորատի կնոջ անսպասելի ներս *գալով (Մուր., II, 142)։* Անուշադիր էր թողնում ուսուցչի դասը դպրոցում և տարվում էր ծառեր, տակավին պնլուծելի *հարցով (ՍՁ, V, 138)։*

ԲԱՂԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ *818. Բաղկացության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, նյութը, որից կազմվում, բաղկանում է մի այլ առարկա կամ երևույթ. օրինակ՝* Եվ ազգերի հազար-հազար ու բյուր *գանդերով* բուրգ ու աշտարակ շինեց *(Իս., III, 206)։ Սա չպետք է շփոթել միջոցի անուղղակի խնդրի հետ, որը մասնակցում է գործողությանը ոչ իբրև նյութ, այլ միջոց։*

§ *819. Բաղկացության անուղղակի խնդրից տարբերվում է նյութի անուղղակի խնդիրը, որով լցվում, զարդարվում, հագեցվում է մի ուրիշ առարկա։ Սա մասամբ մոտենում է միջոցի անուղղակի*

291—21

խնդրին, որից, սակայն, տարբերվում է նրանով, որ միջոցի անուղղակի խնդիրը չի միանում գործողության օբյեկտի հետ, իսկ նյութի անուղղակի խնդիրը գործողության օբյեկտի հետ միասին է հանդես գալիս՝ առանց նրա բաղկացուցիչ մասը լինելու. օրինակ՝ **Ներկեցեք փողոց ու գործարաններ ձեր տաք** *արյունով (ՀՀԵ, 78)։* **Եվ ձերունուն պարուրեց** *վարդերով (Իս., III, 181)։* **Բնությունը լցվեց նրա** *շնչով* **ու** *աշխուժով (Վ. Անանյան)։*

ՓՈԽԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

§ *820. Փոխարինության անուղղակի խնդիրը մասամբ մոտենում է միջոցի խնդրին, բայց սրա առանձին նշանակությունը այն է, որ մի ուրիշ առարկա փոխարինվում է դրանով. օրինակ՝* **Համբույրն** *համբույրով,* **սերը** *սիրով* **է միշտ փոխարինվում։ Իմ ուխտը փոխադարձ սիրո** *ուխտով* **հատուցես** *(Շեքս., I, 441, 436)։* **Պարտ եմ ձեր սիրո հավատարմությանը** *կյանքով (ՆՋԱ, 42)։* **Որոնք. խռովությունը փոխարինեն** *խաղաղությամբ,* **ատելությունը՝** *սիրով,* **գայթակղությունը՝ ուղիղ** *հավատով (Մուր., II, 147)։*

գ) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐԸ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

§ *821. Այն բոլոր հարաբերությունները, որ արտահայտում են առանց կապի անուղղակի խնդիրները տրական, բացառական, գործիական հոլովներով, այդքան և ավելի հարաբերություններ, երբեմն բազմազան նրբություններով, դրսևորում են կապերը՝ սեռական, հայցական, բացառական, գործիական հոլովներով, որոնք միասնաբար (հոլովը և կապը միասին) հանդիսանում են ստորոգյալի անուղղակի խնդիրներ։*

ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԿԱՊԱԿԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

§ *822. Սովորաբար սեռական հոլովով խնդիր են առնում անիսկական կապերը, որոնք ծագում են գոյականներից։ Սկզբնապես սեռական հոլովով դրված բառը լինում է այդ գոյականների համար հատկացուցիչ, իսկ գոյականները նախադասության խնդիրներ կամ պարագաներ։ Երբ աստիճանաբար գոյականները*

կորցնում են իրենց նյութական թանձրացական նշանակությունը և դառնում են հարաբերություն արտահայտող բառեր, սեռական հոլովով հատկացուցիչն էլ կորցնում է իր հատկացուցիչային կիրառությունը, և երկուսը միասին դառնալով մի բառակապակցություն, ստանում են նաև մի կիրառական նշանակություն, այսինքն՝ միասնաբար նախադասության մի անդամի պաշտոն են կատարում՝ լինելով անուղղակի խնդիր, կամ պարագա։

§ 823. Ինչպես առանց կապի անուղղակի խնդիրները, այնպես էլ կապով անուղղակի խնդիրները տարբեր բնույթի են լինում՝ կապված այն ստորոգյալների նշանակությունների հետ, որոնց խնդիրն են դառնում դրանք։

Սեռական հոլովով արտահայտված կապերը իրենց ծագման բնույթով, ավելի նոր լինելով և դեռևս մասամբ պահպանելով իրենց նախնական նշանակությունը՝ մեծ մասամբ նախադասության մեջ խնդիրներ են լինում։

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ ԱՌՆՈՂ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

§ 824. Վերաբերության կամ պատմական անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի մասին, վերաբերմամբ, շուրջը խոսվում, ասվում, պատմվում, հոգացվում, կասկածվում, մտածվում է և այլն. այսինքն՝ դառնում է գործողության՝ խոսքի, մտածողության օբյեկտը, բայց ոչ առանձին, ինչպես տեսանք § 812-ում, այլ կապերի միջոցով։ Այս դեպքում անուղղակի խնդիր է համարվում այս կամ այն հոլովով դրված գոյականը իր կապի հետ միասնաբար։

Սեռական հոլովով դրված գոյականի հետ միասին վերաբերության անուղղակի խնդիր են դառնում՝ մասին, շուրջ(ը), վերաբերյալ, վերաբերմամբ, վրա, համար, առթիվ *կապերը. օրինակ՝* Միայն ծերուկ փիլիսոփան կամ գեղեցկուհուց մերժված սիրահարը կարող էին այդպիսի ախորժելի երեկոյին փակվել տան խորշերում և մտածել մինը՝ աշխարհի *ունայնության* և մյուսը իր վշտի *ծանրության վրա (Մուր., V, 7)։* Եկել էր իմ մոտ հարցանե *նորությունների մասին (ՄՆ, I, 303)։* Ու խոսում էին կարծես միասին Երկնքի-երկրի *գաղտնիքի մասին (Թ., II, 188)։ Դրա համար (այսինքն՝ մասին)* մի լավ ճողված եմ գրելու *(Թ., V, 88)։* Այժմ արդեն կխո-

սեմ այդ *հիվանդության համար*, որ ինձ պատահեց գրեթե անսպաս (*Մուր., II, 148*)։ Քո *հարցի առթիվ* շատ խոսեցինք: Վիճում էին ինչ-որ գիտական *հարցերի շուրջը* (*Ընտ. էջեր, 1099*)։ Նրանք խոսում էին այլ *հարցերի շուրջը* (*ԴՍԹ, I, 248*)։ Սկսեցին խոսել *կովի* վրա, *հացի թանկության վրա* (*Թ., III, 36*)։ Տիրուհին շատ սիրուն ոտանավորներ է հորինել *դրա, ձեր և Ռոզմարիի վրա* (*Տեքս. I, 446*)։ Ով է մտածում *ժողովրդի համար* (*Մուր., IV, 186*)։ Ոչ մի քացասական խոսք չէր ասել *Արուսի վերաբերյալ* (*ՆԶՀ, 350*)։ *Դու նրա վերաբերյալ* սխալվում ես (*ՍխՀ, I, 365*)։ Սկսեց պատմել *Ազադիի մասին* (*ԳՍԹ, I, 106*)։

§ *825. Սեռական հոլովի հետ միասին կապերը դառնում են նաև մի շարք զգացական, ասացական, իմացական բայերի վերաբերության անուղղակի խնդիր, որին անուղղակիորեն վերաբերում է այդ բայերի արտահայտած գործողությունը. օրինակ՝* Շատ հոգատար էին այդ *վարդապետի վերաբերմամբ* (*ՉՆ, 406*)։ Ինչ իրավունք ունիմ ես կասկածելու այնպիսի մարդկանց *առատաձեռնության վրա* (*Մուր., IV, 13*)։ Մի զղջա երբեք քո բարեկամիդ *կորցնելու վրա* (*Տեքս., I, 324, 346, 559*)։ Աշխատում էր, ուր շատ հիանա այս *գեղեցկության վրա* (*Թ., III, 30*)։ Հանցանք է գործում իմ *դեմ* (*Մուր., III, 419*)։ Իմ հայրը *իմ դեմ* մեղանչեց, սակայն ես *ոչ ոքի դեմ չմեղանչեցի* (*Իս., II, 64*)։

§ *826. Սեռական հոլովով խնդիր առնող՝* դիմաց, դեպ, փոխարեն, հանուն, համար, ի տրիտուր *կապերը իրենց խնդրի հետ միասնաբար դառնում են փոխարինության, փոխհատուցման անուղղակի խնդիրներ, որոնք ցույց են տալիս այն առարկան, որի դիմաց, փոխարեն գործողության մեջ է դրվում մի այլ առարկա, օրինակ՝* Նա հրամայեց *հանուն իմ և իմ փոխարեն* (*Տեքս., I, 394*)։ Վազներից էնքան օգուտ չի գալի, *ինչ նրանց համար* ես փող եմ տալի: Ջախ եմ հավաքում, կրակ եմ վառում, *Սրա համար* էլ փող եմ վճարում (*Թ., II, 38*)։ Առան տարան բեռով-բեռով Հա՛րկի դիմաց, *վաշխ* ու *պարտքին* Իր աչքի լույս ցորեն ոսկին (*Իս., II, 91*)։ Ընծաներն աստվածաընտիր, Որ քեզ համար բերել է իմ հայոց արքան *ի տրիտուր* քո վեհ *ուշադրության* (*ՆԶԱ, 19*)։ Որ հողն առնող՝ անգույ հերկողը չոր քար է կրծում իր *հացի հանդեպ* (*Իս., II, 72*)։ *Որի փոխարեն* ես էլ քեզանից այս բանն եմ խնդրում (*Տեքս., I, 160*)։ Խոսիր, տեր Աստանուկի, ասավ Բագրատունին *բոլորի փոխարեն* (*ՍՁ, V, 297*)։

§ *827. Սեռական հոլովով խնդիր առնող* հանձին, հանուն, կողմից, միջոցով *կապերը իրենց խնդրի հետ դառնում են նաև միջոցի,*

ներգործության անուղղակի խնդիր, որոնք ցույց են տալիս այնպիսի մի առարկա, որով, որի միջոցով տեղի է ունենում, կատարվում է որևէ գործողություն. օրինակ՝ Գուցե նույնիսկ գրականությունը *ի դեմս քո* ունենա մի լավ բարեկամ *(Թ. V, 384)։ Լրտեսների միջոցով* հասնում է թշնամուն *(Թ., III, 195)։* Որոնք չզլացան *հանձինս իրենց* իրենց հարզանքը բերել նվիրական գործին *(Զծ, 314)։ Հանձին* պարոն *Նամվարի* ես ունեցել եմ անշահախնդիր մի ընկեր *(ԳՍԹ, II, 194)։ Հանուն օրենքի* ձեզ կոչ եմ անում վճիռ արձակել *(Շեքս., I, 558)։* Չէր կարող տանել բարեկամի կողմից իրան հասած անխիղճ զրկանքը *(Մուր., III, 423)։* Եյուշը *ձոթծովիմերանի միջոցով* տեղեկություններ հավաքեց *(ՆՋՀ, 171)։* Գիտի տառապի *հաչորդի ձեռից (Շեքս., I, 452)։* Մաշվեցա, տրորվեցա *Աղասի ձեռից (Բ., I, 469)։*

§ 828. *Սեռական հոլովով խնդիր առնող՝* համար, հանուն, խաթրին, խաթեր *կապերը իրենց խնդիրների հետ դառնում են շահի (օգուտի, վնասի) անուղղակի խնդիր, որ ցույց է տալիս այն առարկան, որի օգտին, վնասին կատարվում է մի բան. օրինակ՝* Պարձնում են նրանց պատենշները փոշի՝ *հանուն հացի* լույսի, աշխատանքի վսեմ *(ՉԳճ, 255)։* Քնարով մարտի կոչեցի ես նոցա հանուն անցյալի *(սա կարող է նշանակել նաև անցյալի անունով. ՉԳճ 72)։* Ջեռքիցս եկածը կանեմ *քո համար (Շեքս., I, 157)։ Ո՞վ է* մտածում *ժողովրդի համար (Մուր., IV, 186)։* Մեր *օգտի համար է* անում *(ՆՋՀ, 294)։* Իրենց գլուխը մահու տան *Կոլոմբոսի խաթեր (ԽԱ, V, 250)։* Քո թանկագին *խաթեր համար* Ուրբաթ օրը համեցեք տար *(Թ., I, 265)։*

§ 829. *Կարմունքի մի քանի բայեր անուղղակի խնդիր են առնում սեռական հոլով պահանջող՝* հետ, նկատմամբ, վերաբերմամբ *կապերով, որոնք իրենց սեռական խնդրի հետ ցույց են տալիս այն առարկան, որ դառնում է այդ բայերի գործողության անուղղակի խնդիրը. օրինակ՝* Մարդիկ հանաչելով ինձ՝ զգաստ լինեն *իմ վերաբերմամբ,* զզույշ վարվեն *հետս (Մուր., IV, 68)։* Երկնքի և արեգակի որդին վարվում էր յուր օգնականի *գերիի հետ* որպես մի բարբարոս *(Բ., III, 248)։* Ինչո՞ւ, ինչո՞ւ հիմա այսպես. Չար ես այսպես, չար *ինձ հետ (Իս., I, 275)։* Մարսեցիք հավաքվում ու չեն իմանում, թե ինչ անեն *մարդասպանի հետ (ՆՋՀ, 336)։* Շատ հոզատար էր այդ *վարդապետի վերաբերմամբ (Զծ, 406)։*

§ 830. *Հետ,* դեմ *կապերը իրենց սեռական խնդրով դառնում են* կռվել, պատերազմել, թշնամանալ, ընդհարվել, վիճել, խոսել *և մի քանի այլ բայերի փոխադարձ, կամ միակողմ գործողության*

հակադրվելու, հակառակության անուղղակի խնդիր. օրինակ՝ Մաքառելով անցա ուղին ես իմ, Պայքարելով այն սև *բռնության դեմ* (*Չե, 198*)։ Սուր բարձրացրեց *ղզլբաշի դեմ* (*Թ., III, 28*)։ Սիրով ընդունեցին այն բոլոր առաջարկությունները, որ արավ իշխանը *աբխազացիների դեմ* գործելու նկատմամբ (*Մուր., III, 425*)։ Եվ դա տերերի պայքարն է եղել իր երթին ելած *ժողովրդի դեմ* (*Չե, 173*)։ Հայրս քո *հոր հետ* թշնամացել է, նույնպես և *ինձ հետ* (*Շեքս., I, 186*)։ Գոնե կպատերազմեր *Աշոտի հետ* (*Մուր., III, 423*)։ Շրջկոմի *քարտուղարի հետ* ընդհարվել է (*ՆՁՀ, 246*)։ Գիտունների և *իմաստունների հետ* վեճի մտավ (*Իս., II, 59*)։ Նախափանը գժտված էր իր *կնոջ հետ* (*ՆՁՀ, 348*)։

§ *831.* Խառնվել, ձուլվել, միանալ, կցվել, հյուսվել *և մի քանի այս կարգի ուրիշ բայերի մոտ սեռական հոլովով խնդրի հետ միասին* հետ *կապը դառնում է միացման, ձուլման, յուրահատուկ հանգման անուղղակի խնդիր.* օրինակ՝ Ստվերը միացավ Առաքել ամու բրոնզափայլ *բեղերի հետ* (*ՆՁՀ, 331*)։ Հարյուր քառասուն վտակ ու վետ Կը խառնվեն *իրարու հետ* (*Իս., II, 96*)։ Չեն կպչում այն առասպելական դրամայի ընդհանուր *հյուսվածքի հետ* (*Թ., IV, 13*)։ Առնչություն ունին փողի *հաշվի հետ* (*Մուր., IV, 66*)։

§ *832.* Հետ *կապը իր սեռական խնդրով դառնում է փոխադարձ հաղորդակցման, համաձայնության անուղղակի խնդիր և ցույց է տալիս այն առարկան, որի հետ տեղի է ունենում հաղորդակցումը, համաձայնությունը, հաշտությունը.* օրինակ՝ Հրամայեց, որ իր *հետ խոսեն* (*Շեքս., I, 241*)։ *Որոնց հետ* ես էլ զրույց եմ արած (*Իս., I, 374*)։ Խոսք եմ խոսում իմ *սրտի հետ* (*նույն տեղում, 246*)։ Լավ է նախապես խորհրդակցել *Շմավոնի հետ* (*ՆՁՀ, 383*)։ Համաձայնում էր մասամբ *առաջինի* և մասամբ *երկրորդի հետ* (*Մուր., IV, 115*)։ Ինչպես է Մադինեն համաձայնել քրոջը Բինան Չադեին *տալու հետ* (*ԳՍԹ, II, 52*)։ Սիրածներիս *կորուստի հետ* Չհաշտվեցի ես երբեք. Անհրաժեշտի *իմաստի հետ* Չհաշտվեցի ես երբեք: Իզուր ինչքան միտքս ջանաց սրտիս մի խոսք հասկացնել, Իրերի նորման *փաստի հետ* Չհաշտվեցի ես երբեք (*Իս., I, 265*)։ Դժվար է *նրա համար* հաշտվել այդ *իրողության հետ* (*ՆՁՀ, 214*)։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Այս դեպքում երկու ըմբռնում գոյություն ունի, մեկ այն, որ կապը իր խնդրի հետ միասին անուղղակի օբյեկտ է, որովհետև այն, ում հետ որ ենթական խոսում, հաշտվում է, հնարավոր է, որ բոլորովին չխոսի, չհաշտ-

վի, և մեկ էլ այն, որ այդ անուղղակի խնդիրները հասկացվեն միասնության պարագաներ. օրինակ՝ Ես ճաշավում եմ այդ *կոպտության հետ նախադասության մեջ միասնության պարագայի հասկացողությունն բոլորովին գոյություն չունի, իսկ* մենք համաձայնեցինք *միմյանց հետ նախադասության մեջ առկա է միասնության պարագան։*

§ *833.* Հետ *կապը իր սեռական խնդրի հետ միասնաբար դառնում է բաղդատության անուղղակի խնդիր և ցույց է տալիս այն առարկան, որի հետ, որին բաղդատվում է մի այլ առարկա. օրինակ՝* Խստապահանջ աչքով բաղդատիր դու նրա դեմքը մի այլ *դեմքի հետ (Շեքս., I, 420)։* Նա կշռվել է միայն ինքն *իր հետ (նույն տեղում)։* Ամենեն մեծ մարդոց *ժամացույցի հետ* կխոսա *(Իս., III, 293)։* Նրան համեմատեցին մեր ամենալավ *թարգմանությունների հետ (Թ., IV, 26)։* Ի՞նչ բշվառ ես, իմ բարեկամ, քեզ տեսնողը կանգ կառնի եվ մի վայրկյան կբաղդատե *գայլուկի հետ* աշունքվա *(Իս., II, 202)։*

§ *834. Տարածական նշանակությունից բաղդատականի են անցնում* դեմ, հանդեպ *կապերը. օրինակ՝* Եվ *օրերիս հանդեպ* այդ մեծ քող երգս ձեզ թվա չնչին *(ՉԸ, 495)։* Ոչինչ է մարդը *տիեզերքի դեմ (Իս., II, 200)։* Կյանքն ակնթարթ է *հավերժության դեմ (նույն տեղում)։*

§ *835. Տեղի պարագա, բայց միաժամանակ նաև ուղղման, ուղղության անուղղակի խնդրի նշանակություն ունի* վրա *կապը իր սեռական խնդրով հատկապես՝* նայել, հառել, ուշադրություն դարձնել, հայացք գցել, աչք գցել, ակնարկ նետել, գցել, դնել, առնել *և այլ բայերի մոտ. օրինակ՝* Իշխանը հառեց յուր աչքերը *երիտասարդի վրա (Մուր., 172)։* Սարսափ է գցում *ժողովրդի վրա (Թ., III, 193)։* Այդ մեղքն ընկնում է մի ազնիվ *պարոնի վրա (Թ., V, 74)։*

Վրա *կապը այս դեպքում տարածական հասկացողությունն ուժեղ է արտահայտում, մանավանդ որ բայերի գործողություններն էլ իրենց բնույթով տեղ են պահանջում, բայց քանի որ անձ հանդիսացող սեռականով խնդիրները տեղ չեն ցույց տալիս, ուստի մասամբ կա նաև ուղղման, ուղղության անուղղակի խնդրի հասկացողությունը։ Այսպիսի խնդիրներ պետք է տեղի պարագա համարել։* Վրա *կապի ուղղման, ուղևորության տեղի պարագայի նշանակությունը ավելի ցայտուն դրսևորվում է* գնալ *բայի հետ. օրի-*

նակ՝ Մտածում է աղջիկն ու գնում է *կրակի վրա*. *այսինքն՝ դեպի կրակը (Թ., III, 219)*։

§ *836. Սակայն մի քանի իշխման բայերի մոտ արդեն այդ կապը չի կարող տեղի պարագա ցույց տալ, որովհետև իշխման գործողությունը այս դեպքում խնդիր է պահանջում. օրինակ*՝ Նա թույլ չի տա՝ իշխեն *իր վրա (Շեքս., I, 301)*։ Նա թագուհի էր իր *վշտի վրա*, իսկ նրա վիշտը իբրև ապստամբ ճգնում էր *նրա վրա* թագավոր լինել *(նույն տեղում, 368)*։ Աչքներդ բացեք ձեր *կնոջ վրա (նույն տեղում, 162)*։

§ *837.* Վրա *կապը սեռական խնդրով արտահայտում է վաճառքի, վերադրման անուղղակի խնդիր. օրինակ*՝ Բամբակը *Փեփելի* ու *Կեկելի վրա* ծախեցի *(Թ., III, 177)*։ Ծախեն *իրենց վրա (Շիրվ., I, 38)*։ Ամեն մի կոլխոզնիկ համոզված լինի, որ իր աշխատանքը *ուրիշի վրա* չեն գրի *(ՆՋՀ, 275)*։ Աշխարհքը *իրան վրա* ծախես, մեկ կոպեկի չի առնի *(Իս., III, 70)*։

ԿԱՊՈՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *838. Հայցական հոլովով խնդիր առնող կապերը գերազանցապես արտահայտում են ժամանակային և տարածական հարաբերություններ, ուստի նախադասության մեջ իրենց խնդրով հանդերձ դառնում են տեղի և ժամանակի պարագաներ։ Խնդրային հարաբերությունները շատ հազվագյուտ են և արտահայտվում են միայն մի քանի կապերով։ Դա պետք է բացատրել հետևյալ հանգամանքով. հայցական հոլովով խնդիր առնող կապերը գերազանցապես ցույց են տալիս ուղղորդում տարածության, ժամանակի մի կետից, պահից մինչև մյուս կետը, պահը։ Ծվ եթե կապի խնդիրը նույնիսկ ոչ տարածական և ոչ ժամանակային հասկացողություն է, այլ, ասենք, անձ է, ապա դարձյալ կապի տարածական հարաբերության դրսևորումը այնքան ուժեղ է, որ ոչ թե կապի խնդիրն է դրսևորվում, որ անձ է, այլ երկու ոչ տարածական հարաբերություն արտահայտող առարկաների միջև ընկած տարածությունը. օրինակ*՝ Ես գալիս եմ *դեպի քեզ*. Ես գնում եմ *դեպի Դավիթը կապակցությունները հասկացվում են ոչ թե իբրև մոտեցում, հանգում* Քեզ, Դավիթին, *այլ ուղղորդում դեպի այն տարածությունը, որտեղ գտնվում է երկրորդ դեմքի անձնավորությունը, որտեղ կանգնած է Դավիթը*։

Այն բոլոր կապերը, որոնք հայցական խնդրով դրսևորում են խնդրային հարաբերություններ, գերազանցապես ընկել են. իսկ եթե մնում են, մասամբ պահպանում են իրենց գրաբարյան ըմբռնումն ու շարահյուսական կապակցությունը։

§ *839.* Առ, դեպի *կապերը հայցական խնդրով դառնում են վերաբերմունք, զգացմունք արտահայտող մի քանի բայերի անուղղակի խնդիր, որոնց վրա անցնում է, կամ ավելի ճիշտ, որոնց ուղղվում է այդ բայերի արտահայտած գործողությունը։ Այս կիրառությամբ* առ *և* դեպի *կապերը ստանում են* վերաբերմամբ, նկատմամբ *կապերի նշանակությունը. օրինակ՝ Այսպիսի խնդիրները կոչում ենք զգացմունքի անուղղակի խնդիրներ. օրինակ՝* Սէր ու զօրովանք ունիմ *դեպի քեզ (Շեքս., I, 12)։* Դու անսահման բարի ես *դեպի* քո *դուստրը (Մուր., IV, 199)։* Բարյացակամություն եմ տածում *դեպի երիտասարդները (Նույն տեղում, 123)։ Դեպի ամուսինը* նա հենց սկզբից ոչինչ չէր տածում *(Նար.)։* Նա սկսեց երկյուղ տածել *դեպի* այդ *անձնավորությունը (ՆԶՀ, 125)։* Թող որ *առ քեզ* տածած իմ զգացմունքը արտահայտեմ. *այսինքն՝* այն զգացմունքը, որ *առ քեզ* եմ տածում *(Մուր., IV, 194)։ Առ քեզ* ունեցած ատելությունս չի թելադրում ավելի լավ բառ. *այսինքն՝* այն ատելությունը, որ *առ քեզ* ունեմ *(Շեքս., I, 452)։*

§ *840.* Առ *նախդիրը հայցական խնդրով դառնում է այն անուղղակի օբյեկտը, որին, իբրև հեռվում գտնվող մեկին, ուղարկվում, առաքվում է մի բան։ Այս անվանում ենք առաքման անուղղակի խնդիր. օրինակ՝* Ես մի վերջին խնդիր ունեմ *առ ձեզ (ՍԶ, V, 297)։ Առ* իմ երկնային, հոգևին *Օֆելիա (Շեքս.)։* Ներբող *առ քննադատն (Զճ, 210)։*

§ *841.* Ի *կապը հայցական հոլովով խնդրի հետ մի քանի հին արտահայտությունների մեջ սակավ դառնում է մատուցման անուղղակի խնդիր. օրինակ՝* Մարմինն ՛ուր ես թաքցրել, վերադարձրու *ի տեր (ՆԶԱ, 138)։*

§ *842.* Ի *կապը քարացած գործածությամբ հայցական խնդրով դառնում է նաև վերածման, փոխարկման անուղղակի խնդիր. օրինակ՝* Մութ գիշերը *ի լույս* ընծայեց *(Շեքս., I, 436)։ Ի գործ* կերպավորենք վճիռը մեր *(ՆԶԱ, 39)։ Այս նշանակությամբ մի քանի շարահյուսական կապակցություններ վերածվել են դարձվածքների. օրինակ՝* Որ իմանան, թե գիշերը՛ իրենց տեսած երազը *ի բարին կկատարվի,* թե *ի չարը (Նար., IV, 121)։* Բոլորը պահանջում են, որ որոշումը *ի կատար ածվի (Զճ, 390)։* Մինչ սիրուհին դևերով

Նրան *ի չիք* դարձներ (*Շեքս.*, *I*, *436*)։ *Ի դերև* հանեց մեր նպատակը (*Նույն տեղում*, *493*)։

§ *843*. Բացի *կապը հայցական խնդրով ցույց է տալիս, այն անուղղակի խնդիրը, որը բացառվում է ստորոգյալի արտահայտած գործողության, հատկանիշի ոլորտից. ինչ որ արտահայտում է ստորոգյալը տվյալ վայրկյանին, այն բացառվում է, նույնիսկ եթե վերցվի էլ գործողության մեջ, այնուամենայնիվ առանձնացվում և հակադրվում է մյուս առարկաներին։ Այսպիսի խնդիրը կոչում ենք բացառման անուղղակի խնդիր. օրինակ՝* Տեսնելու արժանի ոչինչ չուներ յուր. շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը (*Մուր.*, *IV*, *70*)։

Բացի *կապով, այսպես կոչված, բացառման խնդիրն ունի մասամբ բաղդատական նշանակություն. օրինակ՝ Բացի սենյակներն* այստեղ ամեն բան էժան է (*Թ.*, *V*, *328*)։ Ձեզ մոտ ամեն բան լավ է, *բացի* այս *սանդուղքները* (*Մուր.*, *I*, *311*)։ *Այսինքն՝ այս վերջին օրինակների մեջ* ամեն բան *ենթական որոշվում է նրանով, որ նրանից դուրս է բերվում մի առարկա և անուղղակի կերպով բաղդատվում մյուսների հետ. Բացի* պառավ *Դեդին* ամենքը նեղացնում էին նրան (*Թ.*, *III*, *39*)։

Ծանոթություն. Գրաբարում առ *կապը* համարել, ունել, դնել *և մի քանի այլ բայերի հայցական հոլովով խնդիրների հետ կազմում է երկրորդական անուղղակի խնդիր. իբրև քարացած ձևեր դրանք անցել են մասամբ նոր գրական լեզվին. օրինակ՝* Բայց նա ամենը *առ ոչինչ* դրեց (*Մուր.*, *IV*, *233*)։ Սա այժմ բոլորովին մեռած է:

ԿԱՊՈՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *844*. *Կապերը տրական խնդրով գլխավորապես պարագայական նշանակություն են արտահայտում. միայն* ըստ *կապն է, որ մի քանի կապակցությունների մեջ տրական խնդրով դառնում է վերաբերության կամ պատճառական անուղղակի խնդիր. օրինակ՝* Լավում է գործ *ըստ մեղադրանքի* (*Չb*, *387*)։ Ես խոսում եմ *ըստ կարգի*։ Ով է ցանկանում արտահայտվել *ըստ էության*։ Ժողովներում *ըստ էության* բազմաթիվ ելույթներ եղան *և այլն*։

§ *845*. *Կապերը, բացառական և գործիական հոլովներով խընդիրներ առնելով, գերազանցապես դառնում են տեղի, ժամանակի*

և ձևի պարագաներ։ Անուղղակի խնդրի նշանակությամբ գրեթե հանդես չեն գալիս։ Բացառական հոլովով ունենք բացի, դուրս, զատ *կապերը, որոնք համանիշներ են և որոնց անուղղակի խնդրային նշանակությունը խիստ թեական է։*

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՆ ԻԲՐԵՎ ԽՆԴԻՐ

§ 846. *Անորոշ դերբայն իբրև խնդիր համահավասար բոլոր բայերի մոտ չի կիրառվում։ Ցանկություն, ձգտում, զգացմունք արտահայտող բայերի մոտ անորոշ դերբայը գերազանցապես միանում է դիմավոր բայերի հետ և կազմում է մի բաղադրյալ բայական ստորոգյալ. օրինակ՝* Փափագելով *փափագում էր մասնակցել* վարժուհիների «հոգեզվարճ բամբասանքներին» *(Մուր., IV, 23)։* Դավանանեցի մի գիշեր ես քեզ, *Ուզեցի ըմպել* սիրունի մի սառ *(Չե, 168)։ Մանրամասն §§ 372—384։*

§ 847. *Ինչպես երևում է օրինակներից, դիմավոր բայը և անորոշ դերբայը արտահայտում են միևնույն ենթակայի գործողությունը. ահա հենց այս դեպքում երկուսը միասին կազմում են մի ստորոգյալ։ Սակայն այնպիսի բայեր, ինչպես՝* հարկադրել, պարտադրել, ստիպել, բռնադատել, հորդորել, կարգադրել, արգելել, մերժել, հրամայել, համոզել, առաջարկել *և այս կարգի այլ բայեր պահանջում են այնպիսի անորոշ դերբայ, որի գործողության կատարողը տարբեր է վերոհիշյալ դիմավոր բայերի գործողության կատարողից. օրինակ՝* Ես արգելում եմ գնալ, արգելում եմ *բայի ենթական առաջին դեմքի անձնական դերանունն է, իսկ* գնալ *անորոշի ենթական մի այլ առարկա է։ Այս կարգի դիմավոր բայերի մոտ անորոշ դերբայն ուղիղ խնդիր է. օրինակ՝* Կարգադրեց *զորք հանել (ԳՍԹ, II, 208)։* Հրամայեց *ողջ պահել (Մուր., III, 219)։* Կարգադրեց ներս բերել *(Անթ., 310)։* Կյանքի դաժանությունը ստիպել էր նրան *բռնել* իր միակ որդու ձեռը և *գցել* անհայտության ծովը *(Շիրվ., VIII, 7)։ Այսպիսի անորոշները գերազանցապես ուղիղ կամ անուղղակի խնդիր երկրորդական նախադասության ստորոգյալներ են, որոնք հաճախ տվյալ կապակցությունների մեջ հանդես են գալիս իրենց լրացումներով։*

5. ՊԱՐԱԳԱ

§ 848. *Պարագան ստորոգյալի այն լրացումն է, որը բնութագրում է ստորոգյալի գործողության ձևը, որակական, քանակական*

առանձնահատկությունները, արտահայտում է գործողության կատարման ժամանակը, տեղը, նպատակը, պատճառը, պայմանը։ Պարագաներ կարող են դառնալ համարյա բոլոր խոսքի մասերը, սակայն դրանցից պարագաների համար իբրև ամենաբնորոշ խոսքի մաս մակբայներ են, որոնք ամենից հաճախ են կիրառվում իբրև ստորոգյալի լրացում, իբրև պարագա։ Պարագաներ են դառնում բայի դերբայական ձևերը, դերբայական դարձվածները, կապերով արտահայտված հոլովական կապակցությունները, գոյականների զանազան հոլովները, դարձվածքային արտահայտությունները և այլն, որոնք բազմազան առնչություններով լրացնում են նախադասության ստորոգյալը, մասամբ վերաբերում են ամբողջ նախադասությանը և մասամբ էլ ստորոգյալին և ենթակային, այսինքն՝ ունենում են համատեղող նշանակություններ։

§ 849. *Պարագաներն են՝* **ձևի, տեղի, ժամանակի, պատճառի, հակառակ հիմունքի, չափ ու քանակի, նպատակի, պայմանի, միասնության:**

ա) ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

§ 850. Ձևի պարագան բնութագրում է գործողության որակը, հատկանիշը, կատարման ձևը և աստիճանը։ Ձևի պարագա են դառնում ձևի մակբայները, որակական ածականները, դերբայները և դերբայական դարձվածները, գոյականների որոշ հոլովաձևեր՝ առանց կապի և կապով, դարձվածքային կապակցություններ, որոշ դերանուններ և այլն։

բ) ՄԱԿԲԱՅՆԵՐԸ ԵՎ ԱԾԱԿԱՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

§ 851. Մակբայներն իբրև ձևի պարագա կարող են հանդես գալ և առանձին-առանձին և այլ լրացումներով։ Եթե մակբայները իրենց հետ ունենում են որևէ լրացում, այդ լրացումը մակբայի հետ միասին համարվում է մի ամբողջական ձևի պարագա. օրինակ՝ երբ ասվում է՝ Աշակերտը շատ արագ է խոսում, այստեղ շատ արագ կապակցությունը պետք է դիտել իբրև մի ձևի պարագա, որովհետև շատ բնութագրում է արագ մակբայի աստիճանը, իսկ երկուսը միասին դառնում են խոսում է ստորոգյալի ձևի պարագան. օրինակներ՝ Մոխրոտն ամանն առնում է *ուրախ-ուրախ* տանում տալիս է խորթ մորը (Թ., III, 328)։ *Հանկարծ* մի թփի տակից դուրս եկավ ու վրեն հարձակվեց մի վայրի վարազ (նույն տեղում, 210)։ *Հազիվ էր* զըս-

պում արցունքը *(ԱԲԾ, 529)*։ Ուստի նա լավ է ապրում և *լավապես* գործում է միայն այն ժամանակ *(Մուր., II, 145)*։ Այսպիսով *հետըզ-հետե* մեր հոգևոր աշխարհից կհալածվի ազնվությունը *(Նույն տեղում, 147)*։ Ոսկեպատ ակնոցների հետևից, չարանենգ ակնարկով, *հարևանցի* պատասխանեց *(ՎՓՀՀ, 313)*։ *Հանկարծ* իմ ականջին զարկեց մի երգի ձայն *(Ր., IV, 343)*։ Հովհաննեսը ամենից առաջ ընկավ ծխախոտի վրա, *հապճեպով* պատռեց կապոցը *(ՌՊԾ, 340)*։ *Սովորաբար* ընտրում էին ձախ ոտքը *(Նույն տեղում, 255)*։ Նա *ամենևին* չէր քնել *(Նույն տեղում, 176)*։ Էն ում յարն է նստած լալի *Հոնգուր-հոնգուր* էն սարում *(Թ., «Անուշ»)*։ Կանչում է *կրկին*, կանչում *անդադար* էն չքնաղ երկրի կարոտը անքուն *(Նույն տեղում)*։ Սարերը կընկնեմ՝ կորչեմ *անգյուման* *(Նույն տեղում)*։ Բայց ինքնաեռը սկսավ *ուրախ-ուրախ-* խշխշալ *(ՌՊԾ, 342)*։

§ 852. Ձևի պարագաներ են լինում նաև որակական ածականները, մանավանդ այնպիսիները, որոնց մակբայական կիրառությունները սովորական են և որոնք արտահայտում են որոշիչային հարաբերություններ. օրինակ՝ Թիթեղյա վառարանից ծուխը *բարակ* ելնում էր *(ԱԲԾ, 402)*։ *Անսահման* ուրախացավ պառավ մերը *(Թ., III, 273)*։ *Երկար, երկար* երգեցին ու պարեցին *(Նույն տեղում)*։ Մի քիչ էլ, որ ուշ գայիր, *ավելի լավ* կանեիր *(Նար., III, 318)*։ *Սաստիկ անհանգիստ*, վեր կացավ, նստեց մի ուրիշ աթոռի վրա *(Նույն տեղում, 481)*։ Ոչ, ոչ,—*ցասկոտ* ընդհատեց ինձ Մարին *(ԽաԸե. 208)*։ Նազարը զայրացած, *քնաթաթախ*՝ տարավ-բերավ ափով *ամուր* զարկեց իր քթին ու բերանին *(Նույն տեղում, 334)*։ Ճարլատան որդին *ավելի ազնիվ* է դառնում, քան խելոքը *(Շիրվ., VI, 297)*։

§ 853. Մի շարք այնպիսի ներգործական բայերի մոտ, որոնք առնում են կրկնակի ուղիղ խնդիր (§§ 746—749), ածականը, որ բռնում է երկրորդական խնդրի տեղը, համատեղող նշանակություն է ստանում։ Խնդիր է այն չափով, որքանով արտահայտում է օբյեկտային հարաբերություն, բայց որովհետև առարկայացած չէ, ուստի ցույց է տալիս նաև գործողության ձևը. օրինակ՝ Ես *լավագույն* համարում եմ այն ընկերոջը *(ՆԶՀ, 307)*։ Այժմ նա իրեն զգում էր ավելի *բախտավոր* *(Շիրվ., III, 326)*։ Վատը *լավ* եմ տեսել ես *(Թումանյան)*։ Դարձնում է գիշերն օրվա *զուգակից* աշխատավորը *(Շեքս., I, 7)*։ *Ածականը մասամբ այդպիսի դեր է կատարում, երբ ստորոգելիական վերադիր է. օրինակ՝* Ինքը կարող է մնալ միշտ *կանգուն* և *զորավոր* *(Մուր., II, 146)*։

գ) ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ ԻԲՐԵՎ ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

§ 854. Դերբայները և դերբայական դարձվածները հաճախ իբրև լրացում վերաբերում են ոչ միայն ստորոգյալին, այլև ամբողջ նախադասությանը։ Լինելով ձևի պարագա՝ դրանք ցույց են տալիս ստորոգյալի հետ կատարվող զուգահեռ գործողություն, որով հենց տվյալ ստորոգյալի համար դառնում են ձևի պարագա։ Օրինակ՝ դերբայական դարձվածները հաճախ բազմազան լրացումներ ունեցող նախադասությունից են ձևավորվում՝ պահպանելով գրեթե այդ նախադասության բոլոր անդամները. դառնալով ձևի պարագա՝ դերբայական կառուցվածքը վերցվում է իր ամբողջությամբ իբրև մի լրացում, ուստի և իբրև այդպիսին բազմակողմանի կերպով է բնութագրում ստորոգյալը և հաճախ ամբողջ նախադասությունը. օրինակ՝ Առաջ սողալով շշնջաց Դիշտրիան *(ԴԴՎ, 204)*։ Ձեր նամակը զուր եք *պատվիրած* ուղարկում *(բնագրում՝ ղրկում. Թ., V, 241)*։ Կամուրջի տակ զորտերը մեկ-մեկ կռկռում էին, ջրից գլուխները հանում և *պլշած* սպասում *(ԱԲԵ, 531)*։ Դռան բացվելու պես, կարծես, հանկարծ սթափվեց իր մտախոհությունից *և արագ շուռ գալով*՝ առաջ շտապեց դեպի Եվան *(Նար., III, 479)*։ Իսկույն վեր կացավ և *մռմռալով* հեռացավ գնաց *(ՂԱԵ, 319)*։ Իսկ մարդն ու թագավորի տղեն *ապուշ կտրած* սպասում են վերջին *(Թ., III, 168)*։ *Կժերն ուսած թռվռալով* Ջուրն են իջնում աղջիկներ, Խնդում *իրար ուսի տալով*, Երգը գնգում սարն ի վեր *(Թ., «Անուշ»)*։ *Երեխեն դոշիցը կպած*՝ Լուսիկը գնում է *լալով* *(Թ., III, 165)*։ Դասարանը *սարսափ կտրած չռած աչքերով* սպասում էր դրության վախճանին *(ՁԲԵ, 320)*։

Ծանոթություն. 1. Երբեմն դերբայական դարձվածը ձևավորվում է կապի միջոցով. օրինակ՝ Լույսի տակ բացվող մի տերևի պես Ուրախ սարսուռով սպասում ես *(ՆԶ, II, 101)*։

Ծանոթություն. 2. Երբեմն անորոշ դերբայը գործիական հոլովով դառնում է իր դիմավոր ձևի համար ձևի պարագա՝ բնութագրելով գործողության աստիճանը. օրինակ՝ Փափագելով փափագում էր մասնակցել վարժուհիների «հոգեզվարճ բամբասանքներին» *(Մուր., IV, 23)*։ Սա վաղուց *հրաժարվելով* պիտի հրաժարվեր *(ՌՊԵ, 501)*։

դ) ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՏԱՐԲԵՐ ՀՈԼՈՎՈՎ ԴՐՎԱԾ ԲԱՌԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

§ 855. Ձևի պարագա կարող են դառնալ նաև այն բոլոր խոսքի մասերը, որոնք ինքնուրույն կերպով հոլովվում են. սակայն որոշակիորեն ձևի պարագայի նշանակությամբ հաճախ հանդես է գալիս գործիական հոլովով կիրառված բառը. հենց այդ է պատճառը, որ գործիականի ձևերը լեզվի զարգացման ընթացքում հաճախ փոխվում են մակբայների։ Եթե այս առումով բնութագրենք, ապա կտեսնենք, որ հայցականը, տրականը և բացառականը գերազանցապես խնդրային հարաբերություններ են արտահայտում, ներգոյականը հատկացված է տարածական հարաբերությանը, սեռականը որոշիչ է, այսինքն՝ լրացում է գոյականների համար (հատկացուցիչ լինելը որոշիչային նշանակություն է), իսկ գործիականը գլխավորապես հանդես է գալիս իբրև միջոցի անուղղակի խնդիր, որ հաճախ համատեղում է ձևը, և ձևի պարագայի նշանակությունները։

§ 856. Սեռական, հայցական, տրական և բացառական հոլովներով ձևի պարագաներ գրեթե չկան. հայցական և տրական հոլովներով ձևի պարագաներ առաջանում են հոլովվող խոսքի մասերի կրկնությամբ։ Գոյականները կրկնվում են հայցական հոլովով, իսկ դերանունները՝ տրական. օրինակ՝ Դաշտում *տեղ-տեղ* կրակներ էին վառել (*ԱԲԵ, 531*)։ Արախսի ափին ճատաբուն ընկուզենու տակ *խումբ-խումբ*, ճասարակ նստարանների վրա, տեղավորվել էին բավական մեծ թվով մանուկներ և պատանիներ (*ԻսԸԵ, 193*)։ Եկել էր պարուշիկը, և *բերնե-բերան* տարածվել էր նրա նրամանը (*ԱԲԵ, 558*)։ Այսպես ասվում է՝ *խումբ-խումբ* եկան: Արյունը *գունդ-գունդ* ճոսում էր և այլն: Դերանուններն իբրև ձևի պարագա կրկնվում են տրական հոլովով, օրինակ՝ էս մի բան չի, ասում եմ *ինձ ու ինձ* (*ՍԶ, III, 48*)։ Աղվակատս էլ բեղի տակ ծիծաղում է *իրան-իրան* (*Նույն տեղում, 34*)։ Համեմատի՛ր. Կնոջ սիրտը միայնակ մնացած ժամանակ չի ջերմանում *ինքն իրեն* (*Մուր., II, 145*)։ Նա *ինքն իրեն* մեռավ (*ԳՍԹ, I, 261*)։ Ես Մտածեցի *ինքս ինձ* (*Նար., III, 370*)։

Ծանոթություն. 1. Հազվագյուտ է պատահում, որ գոյականը առանց կրկնության ձևի պարագայի նշանակություն արտահայտի։ Համեմատի՛ր. *Գեղ-գեղովի* էսոր տեսան, *Գոմար* փախան, եղան ցրիվ (*ԻսԵ, 121*)։

Ծանոթություն. 2. Բացառական հոլովով ձևի պարագան այժմ պետք է մեռած համարել. միայն հին քարացած ձևեր են մնացել, որոնք արդեն մակբայական նշանակություն ունեն, ինչպես որ վերևում բերված կրկնված ձևերը։ Համեմատի՛ր. Ի սրտե ցանկանում եմ երջանկություն: Նոր այն ժամանակ կգրեմ ձեռաց (Թումանյան)։ Իսկ երբ բառը նոր ձևով է հոլովվում, ձևի պարագայի նշանակությունը այնքան հստակ չէ. օրինակ՝ «Անուշը» այն փաղաքուշ մակդիրն է, որով պոլսուհին ժլատ չէ, երբ սրտից է խոսում (ՎՓՀՀ, 311)։

§ 857. Ինչպես ասվեց, ձևի պարագայի պաշտոնով հաճախ հանդես են գալիս գործիական հոլովով կիրառված բառերը, որոնց մեջ խնդրային հարաբերությունները համեմատաբար թույլ են. օրինակ՝ Կառքով ուղևորվեցին նախադասության մեջ կառքով բառը կարող է երկու կերպ հասկացվել՝ միջոց և ձև։ Բանաստեղծը գրում է. Նրա հոգու հետ խոսեցինք հոգով (Անթ., 57)։ Եթե հոգով բառը մտածենք այնպես, ինչպես որ ասվում է սրտանց, սրտով, ապա պարզ է, որ դա ձևի պարագա է, իսկ եթե հոգով բառը հակադրվում է լեզվով բառին, այսինքն՝ ոչ թե խոսեցինք լեզվի միջոցով, այլ՝ հոգու, ապա հոգով միջոցի անուղղակի խնդիր է։ Ուրեմն միևնույն բառը գործիական հոլովով երբեմն կարող է ձևի պարագա լինել, երբեմն միջոցի անուղղակի խնդիր, և երբեմն էլ այդ երկու նշանակությունները կարող են համատեղվել. օրինակ՝ Ոչ սրով եկար, Սրով ընկար (Շիրազ)։ Առաջին սրով-ը ձևի պարագա է, իսկ երկրորդը՝ միջոցի անուղղակի խնդիր։ Համեմատի՛ր նաև Թումանյանի բանաստեղծությունը՝ Տաղով եկավ, Ախով գնաց Սայաթ-Նովան. Երգով եկավ. վերքով գնաց Սայաթ-Նովան. Սիրով եկավ, Սրով գնաց Սայաթ-Նովան. Սիրով մնաց Սայաթ-Նովան (Թ., I, 169)։ Վերջին օրինակում գործիականով դրված բոլոր բառերը ձևի պարագա են, բացի սրով բառից։ Պատմիչները մեր վշտահար մեղմ կանթեղի լույսով անշեջ, Մի՛ նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն, Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն (Իս., I, 297)։ Կորար գլխով ու ոտով (Զարյան)։ Այդ մենք ենք գալիս երբեմն դժգույն, երբեմն անխռով, երբեմն քաղցի լուռ տառապանքի սև կնճիռների անջինջ կնիքով, երբեմն ըմբոստ արհամարհանքի անզուսպ զայրույթի վրեժի թույնով (Կուրղինյան)։ Հանգիստ սրտով սպասում է եղել (ՌՊԵ, 474)։ Այժմ նրանք ընկել էին լճի եզերքը և գնում էին խաղաղ ընթացքով (ԴԴՎ, 230)։ Պատա-

կան պրիստավը վեր կացավ և նույն քաղաքավարի *տոնով* հարցրեց (*Նար., I, 97*)։ Փափագ *սրտով* խնդիրք արել՝ Բարի ժպտան իր սերին (*Թ., «Անուշ»*)։ Նա Ազադիին դիմեց *«դու»-ով (ԳՍԹ, II, 175)*։ Օդակը չարունակում էր վարել *խարակով (ՆՁՀ, 212)*։

§ 858. Ձևի պարագային հաճախ ուղեկցում են միասնության, առկայության կամ հարակցության պարագաները։ Եթե միմյանց հետ վերցվում են հավասարազոր առարկաներ, ապա գործիականով դրված բառը միասնության պարագա է, որ նաև ձև է ցույց տալիս. օրինակ՝ Նրանք իրենց *ընկերներով* աշխատեցին և միասին վերջացրին այդ գործը: *Իսկ եթե գործիականով դրված բառը այնպիսին է, որ չի կարող իրեն կից առարկայի հետ հավասար միասնություն կազմել, ապա դա առկայության կամ հարակցության պարագա է, որ սովորաբար համարվում է ձևի պարագա. օրինակ՝* Նավը լողում է Սովետական *դրոշակով*։ Րաֆֆու հոդվածները Հայկունու դեմ հրապարակվեցին Փավստոս կեղծ *անունով*։ Նա առաջ ընկավ բարձր բռնած *հրացանով*։

ե) ԿԱՊԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻԲՐԵՎ ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

§ 859. Կապով հոլովները նույնպես դառնում են պարագա։ Այս կամ այն հոլովի հետ ձևի պարագայի նշանակությամբ հանդես են գալիս անկախ, առ, առանց, առընթեր, զերդ, ըստ, ի, հանդերձ, հետ, նման, որպես, վրա, քանց *և մի քանի ուրիշ կապեր, որոնք արտահայտում են ստորոգյալի հետ կապված այս կամ այն առընչակցությունը, այսինքն՝ բնութագրում են նրա այս կամ այն հատկանիշը, աստիճանը, նմանությունը, գործողության կատարման այս կամ այն եղանակը. օրինակ՝* Մենք շտապում ենք շտկել բոլոր այն սխալներն ու թերությունները, որ մեր *կամքից անկախ* տեղ էին գտել մեր աշխատության էջերում *(ՁԸԵ, 297)*։ *Մի առ մի* մեռան յուր քրոջ որդիքը *(Փափ., 54)*։ Սիրահար փեսան *վայրկյան առ վայրկյան* սպասում էր *(Մուր., I, 243)*։ Արյուն է ծորում կրծքից *շիթ առ շիթ (Իս., II, 194)*։ Գնա ու գնա *առանց հանգրվան (Իս., II, 71)*։ Պետք է ճաշեմ *առանց* նրա *ընկերության (Մուր., IV, 136)*։ Հարցրեց օրիորդին՝ *առանց* նստել *առաջարկելու (Նույն տեղում, 16)*։ Ունեցիր աչքեր սրատես, որ անես *այգին առընթեր (ՁԳԾ, 214)*։ Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին ոռնում է *զերթ գազան (Թ., I, 379)*։ Մետաքսյա հագուստը, որ կարված էր *ըստ վերջին տարազու*։ *Եթե*

ձեր բախտից ճիշտածս խնդիրը *ըստ իմ ցանկության* լուծումն ստանա *(Մուր., IV, 16, 17)*։ Եթե մենք *սուր ի ձեռին* կռվելու լինենք *(նույն տեղում, 228)*։ Հենց նոր դուրս եկավ «Մուրճը» *ձեր դատավճռով հանդերձ (Թ., V, 64)*։ *Ըստ արժանյաց վար-ձատրելով հանդերձ* ազատեց իր վտիտ ուսերը *(Զե, 263)*։ *Նա-խագահի հետ* տուն էի վերադառնում: *Որոնց հետ* սեղան եմք նստել: Ես էլ եմ *քեզ հետ* գալիս *(ՆՁՀ, 225, 269, 345)*։ *Սրանց հետ* միասին Բաքվից տեղեկություն էին տվել *(Թ., V, 177)*։ Մոլոր շրջում է *ագռա-վի նման (Թ., I, 35)*։ *Ոնց հիշատակ անմեռ* դուք ապրում եք ու կաք *(Ընտ. էջեր, 1118)*։ Ճչում էր սուր, ճուսակտուր ու ճուսաճատ ձայ-նը նրա *Որպես անդարձ մահի մի լուր* տարածվում էր դաշտի վրա: Ու ցցված էր ուղիների խաչակնքման սև ճանգույցում Կայարանը *որպես մի հարց, որպես հսկա մի քարացում (Զե, 14)*։ Լույսի տակ բացվող մի *տերևի պես* ուրախ սարսուռով սպասում ես *(ՆՁ, II, 101)*։ Դեմքը *մագաղաթի պես* գունատ էր *(Ընտ. էջեր, 617)*։ Ադա-մյանի առողջությունը քայքայվում էր օր օրի վրա *(Շիրվ., VIII, 177)*։ Գացիր Սասուն *քանց գել* գազան, Ետ ես գալիս *քանց* շուն *վա-զան (Թ., II, 118)*։ Արևը ճասուն *մրգի նման* թեքվել էր *(ԱԲե, 529)*։ Դարբին Վանեսը մեկնվել էր *մեջքի վրա (նույն տեղում)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Կապի և նրա խնդրի հետ կապված բոլոր լրացումները պետք է համարել մի ամբողջական ձևի պարագա, ճիշտ այնպես, ինչպես դերբայական դարձվածը. օրինակ՝ Թավշյա թաթերի վրա անշշուկ մոտենում էր ամառվա լուսնյակ գիշերը *(ԱԲե, 531)*։ *Դրանից հետո միայն՝ կարելի է տվյալ կապակցության առանձին մասերը վերլուծել և ցույց տալ միմյանց հետ ունեցած հարաբերությունը*։

§ 860. Ձևի պարագա է դառնում նաև սղված համեմատությու-նը, որը տվյալ արտահայտության մեջ սկսում է մթնել. օրինակ՝ Պատերազմի լուրը պայթեց, *ինչպես որոտը պարզկա երկնքում (ԱԲե, 531)*։ *Այսինքն՝ ինչպես որ որոտը պայթում է պարզկա եր-կնքում։ Համեմատի՛ր վերևում բերված այլ օրինակներ* Ես փախա նրանից *ինչպես գող (Շիրվ., VI, 316)*։ *Այսինքն՝* Ես փախա նրա-նից, ինչպես գողն է *փախչում. Համեմատության այդ կապակցու-թյունները առաջացել են համեմատության, նմանության երկրորդա-կան նախադասություններից*։

§ 861. Ձևի պարագա են դառնում նաև զանազան տեսակի բա-ռակապակցություններ, դարձվածքային արտահայտություններ, կա-

յուն կապակցություններ և այլն. օրինակ՝ Արամյանը սկզբում կարդում էր *այն սատիճանի ցածրաձայն (ՍԳԱ, 1955, № 3, էջ 40)*։ Նրա կուրծքը *նկատելի կերպով* բարձրանում ու ցածրանում էր *(Նար-Դոս)*։ Վճիռդ ինձ *մի տեսակ* հանկարծակիի էր բերել *(Նար., III, 331)*։ Ու կոտորեց *սուրը ձեռքին* Մեր սիրելի զավակներին *(Թ., «Մի կաթիլ մեղրը»)*։ Առաջ է գնում տղեն *օրն օրին (Թ., «Էնպես չի մնա»)*։ Ես աչքս *մեկ չորս* բացի *(ԳՄԵ, 345)*։ Վարդանի հոնքերը միացան *մի դժվար կնճիռի կծկումով (ԴԴՎ, 219)*։ Արանից հետո անտառն էր սկսում աղմկել՝ *միայն թե ուրիշ տեսակ (Թ., III, 349)*։ *Ընդհանուր առմամբ* նրանք ավելի փոքր են քան պարսիկները *(ԱԲԵ, 671)*։ Այսքան ամիսների ընթացքում *ոչ մի կերպ* չվճռվեց այս գործը *(ԱԲԵ, 686)*։

§ *862. Ձևի պարագաները իրենց ամբողջության մեջ բաժանվում են երկու հիմնական խմբի։ Առաջին խումբը բնութագրում է գործողության որակը, նրա արտահայտման աստիճանը, իսկ երկրորդ խումբը ցույց է տալիս գործողության կատարման եղանակը։ Վերևում բերված պարագաների տարբեր ձևերը ըստ իրենց նշանակության կարող են բաժանվել այս կամ այն խմբի վրա։ Այն ձևի պարագաները, որոնք բնութագրում են գործողության որակը, հատկանիշը, նրա արտահայտման աստիճանը, կմտնեն առաջին խմբի մեջ, իսկ մյուս պարագաները, որոնք ցույց են տալիս գործողության կատարման ձևը, եղանակը, բնականաբար պատկանում են երկրորդ խմբին. օրինակ՝ Բեթևակի* գլխով արավ *(Նար., III, 257)*։ *Այս նախադասության մեջ* թեթևակի *պարագան բնութագրում է գործողության որակը, նրա արտահայտման աստիճանը։ Թող՝ խմբով* վրադ կթափվին *ու այնպես* կկծեն *(ՌՊԷ, 595)*. *Նախադասության մեջ* խմբով և այնպես *պարագաները ցույց են տալիս գործողության ձևը, եղանակը, այսինքն՝ հայտնի չէ՝* արագ են թափվում, դանդաղ են *թափվում, որ կլինեն գործողության բնութագրումը*։

§ *863. Բնութագրական պարագաներ կարող են դառնալ որակ ցույց տվող մակբայները, ածականները, գործիական հոլովով այն գոյականները, որոնք բնութագրում են գործողությունը և այլ կարգի բառեր ու բառակապակցություններ. օրինակ՝ Անակնթարթ* նայում էր մեյդանում անց ու դարձ անող մարդկանցը *(ՂԱԵ, 462)*։ Քույրը *մոլեգին* աշխատում էր *(ԴԴ, II, 8)*։ Բազմությունը *կատաղի թափով* օռռվեց, խանդվեց ու բեկոր-բեկոր եկավ սեղմվեց Վասակին *(ԴԴՎ, 252)*։ Վասակը *ծանրաքայլ* դուրս եկավ իրայիններին հետ և նույնպես գնաց համբար *(նույն տեղում, 432)*։ Անկասկած *արժանավորապես*

կդիմավորեն պարսից զորաբանակին (նույն տեղում, 468)։ Գրերն արագ-արագ շարվում էին իրար հետևից (Նար., III,331)։

§ 864. Երբեմն, երբ նախադասությունը ունենում է բաղադրյալ ստորոգյալ, ձևի պարագան կարող է լրացնել բաղադրիչներից մեկին կամ մյուսին. օրինակ՝ Բայց կամաց-կամաց սկսեց ձանձրանալ ամպեղեն պտուղներից (Թ., III, 273)։ Այստեղ կամաց-կամաց վերաբերում է ձանձրանալ անորոշ դերբային։ Նորա կուրծքը սկսավ մեղմ ու պարզորակ լճակի երեսին խաղացող հեզասահ զեփյուռից պատճառած ծածանումի նման ելևէջ առնել (ՊՊ, II, 285)։ Ամբողջ դերբայական դարձվածը վերաբերում է միայն ելևէջ առնել կապակցությանը։ Անվիշտ քուն լինինք օրեր տարիներ (ՀՀՀԸ, 73)։ Այնպես անխինդ են և նման լացին Երգերն իմ երկրի, այնպես տխրագին (Տ., 294)։ Այդպես կարող էին լողալ թեկուզ մի դար (ԱԲԵ, 656)։ Սակայն ինչքան էլ ստորոգյալի մի բաղադրիչին վերաբերեն այդպիսի լրացումները, դրանք վերցվում են ամբողջի համար։

§ 865. Գործողության կատարման ձևը, եղանակը կարող են արտահայտվել նույնպես այն բոլոր պարագայական բառերով, որոնք մենք վերևում քննեցինք. օրինակ՝ Վռամ սկսեց մտրակահարել աջ ու ձախ (ԴԴՎ, 252)։ Վասակը՝ նախարարներին հետևը գցած իբրև շքախումբ, շրջեց հրապարակի չորս բոլորը (նույն տեղում, 468)։ Ձմեռն եկավ, ձմռան հետ էլ ցրտերն եկան (ԱԲԵ, 402)։ Բոլորը միասին իջնում են սանդուղքներով (Ր., I, Ն., 408)։ Վեր-թռավ ու խենթի նման, սպանած կարապներն էլ ուսին՝ ընկավ զամբյուղը (Թ., III, 273)։ Պետք չէ, որ մարդը հեկեկա անձուկ (ՁԸ, 221)։ Գնացեք զինվեցեք և խումբ-խումբ տեղավորվեցեք շենքերում, այգիներում (ԴԴՎ, 337)։ Ու՝ թևերն ահա փռած տիրաբար թռչում է հոգիս, թռչում դեպի տուն (Թ., «Անուշ»)։ Խաղում էր մոր ոտների տակ իբրև մանուկ, մոր աչքերի տակ դասերը սերտում իբրև աշակերտ և արհեստը բանում իբրև պատանի (ԽաԸԵ, 208)։ Եվ վերջապես մի քանի օրից հետո մեր տնից գնաց Մարին այնպես անմխիթար, ինչպես եկել էր (նույն տեղում, 209)։

գ) ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

§ 866. Տեղի պարագան ստորոգյալի այն լրացումն է, որ ցույց է տալիս ստորոգյալի գործողության կատարման տարածական

հարաբերությունները։ Տարածական հարաբերություններ ասելով պետք է հասկանանք ոչ միայն այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, այլև՝ դեպի ուր ուղղվում, որտեղից դուրս է գալիս, որտեղ գտնվում և որով անցնում է այն։ Այս հիմնական հարաբերությունները, նայած տեղի պարագա հանդիսացող խոսքի մասի բնույթին՝ կարող են այլևայլ նրբություններ և համատեղող նշանակություններ ևս դրսևորել։

§ 867. *Թվարկված տարածական հարաբերությունները ըստ կարգի կարելի է կոչել՝* բուն տեղի պարագա, անցման տեղի պարագա, ուղևորման և ժամանման տեղի պարագա, ելման տեղի պարագա:

§ 868. *Բուն տեղի պարագան ցույց է տալիս այն տեղը, որտեղ իբրև մի տեղում, կատարվում, տեղի է ունենում ստորոգյալի արտահայտած գործողությունը։*

§ 869. *Բուն տեղի պարագան կարող է արտահայտվել տեղի մակբայներով, դերանուններով, գոյականների և հոլովվող մյուս խոսքի մասերի հայցական, տրական, ներգոյական հոլովներով, տարածական կապերով և դրանց համապատասխան խնդիրներով և այլ կարգի կապակցություններով, որոնք ստանում են տեղի մակբայական նշանակություն։*

է) ՏԵՂԻ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ ԻԲՐԵՎ ԲՈՒՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

§ 870. *Տեղի մակբայներն իբրև բուն տեղի պարագաներ գերազանցապես ցույց են տալիս այն անորոշ տեղը, որտեղ կատարվում է գործողությունը. օրինակ՝* Կկվի ձենը, որ չլսեց՝ *Տեղնուտեղը* խա պպզեց *(Թ., «Անբան կկուն»)։* Լեռնանում են, շաչում *ամենուր (ՉԸԵ, 35)։* Ուղիները երկաթագիծ ձգվում էին *ամենուրեք (նույն տեղում, 18)։ Դեմը* փաղանգն էր տարածվել՝ հազարամյա մի թշնամի *(նույն տեղում, 19)։ Դես* չոքեցին, *դեն* պառկեցին *(Թ., «Հսկան»)։ Ամենուրեք* տիրում էր տխուր անապատական դատարկություն *(Ր., III, 473)։* Գերադասում էին իրենց կրած վիրավորանքների համար *տեղնուտեղը* դատաստան անել *(ԱԲԵ, 575)։* Ես շնչում եմ միշտ կենդանի աստծու շունչը *ամենուր,* Ես լսում եմ իրեն անլուռ կանչն ու հունչը *ամենուր.* Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին Տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը *ամենուր (Թումանյան)։* Հարկավ՝ ազատ նա ժպտում է *ամենուրեք ամենին (նույն տեղում)։*

§ 871. *Ամենից հաճախ բուն տեղի պարագաներ են դառնում՝*

ցուցական այստեղ, այդտեղ, այնտեղ, *անորոշ*՝ ուր-որ, *հարցական-հարաբերական* որտեղ, ուր *դերանունները. օրինակ*՝— *Ո՞ւր է,* հայրիկ *(Թ., «Փարվանա»)։ Որտեղ* նրազ, *որտեղ* կրակ, *Որտեղ* լույս է հենց վառվում *(նույն տեղում)։* Տեսավ *այնտեղ* ոչ ոք չկա *(ՂԱԵ, 266)։ Այստեղ* ևեք հարկավոր է սանել *(ՉՇԵ, 335)։ Այստեղ* երիտասարդը կանգ առեց *(Ր., III, 474)։ Ուր որ* հայրենի օջախի առաջ Վաղուց կարոտով սպասում են ինձ *(Թ., «Անուշ»)։ Ուր* պահվում են նրանք *(Ր., III, 422)։*

§ *872. Ամենից հաստատուն կերպով բուն տեղի պարագայի նշանակությամբ կիրառվում են տարածական հարաբերության արտահայտող հոլովվելու ունակ բոլոր խոսքի մասերի ներգոյական հոլովները. օրինակ*՝ Լինում է մի սար, էս *սարում* մի ծառ, էն ծառում փչակ, *Փչակում* մի բուն, *Բնում* երեք ձագ *(Թ., «Անբուն կկուն»)։* Նստած է հետս *դրսում* Անխոս ու մեղմ-հնազանդ *(Տ., I, 297)։* Արևը հանգչում է *հեռվում (նույն տեղում, 296)։* Այդ գիշեր *թատրոնում*, կոտեսնի Զազունյանին *(Նար., II, 275)։* Թյուրքիայի *գավառներում* և *մայրաքաղաքում* խաղացվում էր Մոլիերի գործերի գրեթե ամբողջությունը *(ՎՓՀՀ, 154)։ Ինչումն* է ձեր տարակուսանքը *(Ր., IV, 196)։* Մեր *ձեռքումը* ոչինչ չկա *(նույն տեղում, 465)։* Այդ մորթին բերելիս *քաղաքում* մեկը չի տեսել նրան *(ՍՁ, V, 355)։ Դրսում* մնաց Տիտոսը *(ԱՐԵ, 408)։*

§ *873.* Մակերես, ծայր, գագաթ, կլորություն *և այս կարգի հասկացություն արտահայտող բառերի ներգոյականը մեր լեզվում սովորական չէ և այժմ խույս է տրվում այդպիսի ներգոյականից։ Համեմատի՛ր.* Մատանին փայլում է դեսպանի *մատումը (Հյուս., 1858, 95)։* Իրենց կտրում աղավնի է՞ բոցնում *(Շիրվ., II, 74)։* Նրանեց կտուրի *ծայրում (նույն տեղում, 83)։* Մազերը խճճվել էին և հավաքվել *գագաթում (Շիրվ., III, 114)։* Վրանի *դռնում* բիկնապահներին պատահեց *(Մուր., III, 343)։*

Ահա մատում, կտրում, ծայրում, գագաթում, դռնում *և այս կարգի ուրիշ շատ բառերի ներգոյականը իբրև բուն տեղի պարագա անսովոր է. դրանք գերազանցապես կիրառվում են տրական հոլովով։*

§ *874. Տրական հոլովով տեղի պարագա են դառնում. ա) մարմնի որոշ մասերը. օրինակ*՝ երես, ոտ, ուս, դեմք, ձեռք, ճակատ, մատ, այտ *և, այլն. բ) տարածական հարաբերություն արտահայտող այնպիսի բառեր, որոնք միայն մակերես են ցույց տա-*

լիս. օրինակ՝ գետին, ճանապարհ, կտուր, հատակ, գագաթ, ծայր, սեղան, քար, ծառ, տախտ, գահ, թառ, երդիկ, պատ, ճյուղ, գերան, փայտ *և այս կարգի ուրիշ շատ բառեր. գ) մի շարք այնպիսի բառեր, որոնք ներգոյականով ընդհանրապես չեն կիրառվում՝ վերևում նշված նկատառումներով. օրինակ՝* դուռ, տուն, սյուն *և ուրիշ շատ բառեր։ Ահա այս կարգի բառեր իբրև տեղի պարագա գերազանցապես տրականով են հանդես գալիս. օրինակ՝* Աշխարհի բեռը *ուսերիս* առած *(Չե, 3)։* Փերիները սարի *գլխին* հավաքվեցին գիշերով *(Թ., II, 45)։* Առավոտները նա ծլվլում էր մեր *երդիկին (Թ., III, 72)։* Հենց իմանում եմ դեռ նեն թփի *կողքին* եմ կանգնած: Վեր ընկա *տակին (Թ., III, 76, 54)։* Երբ կգա կնստի մեր *գլխին (Փափ., 5)։* Ծառայել էր քաղաքի մի աղայի *տանը (Փափ., 5, 6)։* Գետի *եզերքին* ջրջում է մոլոր... Ա՜խ, էն կանաչ սարի *լանջին* Ո՞վ է քնած էն՝ տղեն *(Թ., «Անուշ»)։* Լռության կնիքն իրեն *շրթունքին (Թ., «Պարոդիա»)։* Սա *պպին* է կանգնում, թե՝ չէ որ չէ *(Թ., III, 111)։* Արածում էր ծովի *ափին* բազմություն քո հոտերի *(Թ., «Հսկան»)։*

§ 875. Տրական հոլովով տեղի պարագա հաճախ կիրառվում է հանգավորման պահանջներով և մանավանդ ժողովրդական խոսքի մեջ այն խոսվածքներում, որոնք ներգոյական չունեն. օրինակ՝ Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի, ինչ դարդ ունեմ քանի նա կա *աշխարհի (Թ., II, 55)։* Եկել մեր *դաշտին* բանակ է զարկել *(Թ., II, 120)։* Կանաչ *մարգին* ման կուգան, Ջոր *խաշամին* ման կուգան *(Թ., I, 520, 521)։*

§ 876. Բուն տեղի պարագան գոյականների հայցական հոլովով անսովոր է և գրական լեզվի ոճաբանական պահանջներին ոչ վայելուչ. չնայած սրան՝ թե՛ անցյալում և թե՛ այժմ բուն տեղի պարագան երբեմ կիրառվում է նաև հայցական հոլովով, որ խոսվածքների ազդեցության հետևանք է. օրինակ՝ Դու ապաստանեցիր այդ *ամրոցը (Ր., III, 461)։* Նա հագուստով պառկեց *անկողին՝* *հանգստանալու (Շիրվ., III, 103)։* Մի օր ժողովուրդը հարա-հրոցով հավաքվում, ափ է առնում քաղաքի առաջավոր մարդկանց *դռները (Իս., III, 273)։* Վիճակված եմ այս *երկիրն* իբրև լրտես *(ՆՁՀ, 58)։* Երբ ես գտնվում էի *Վարշավ (Մուր., IV, 325)։ Սրան հակադիր տեղ արտահայտող* այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ *դերանունները բուն տեղի պարագա են դառնում հայցական հոլովով. օրինակ՝ Այստեղ* պետք է մնամ մի երկու-երեք ամիս *(Թ., V, 225)։ Որտեղ* սիրուն կին կտեսնեմ *(Իսահակյան)։*

ը) ԿԱՊԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻԲՐԵՎ ԲՈՒՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

§ *877. Բուն տեղի պարագայի կիրառությամբ հանդես են գալիս* առաջ, առաջին, առջև, դեմ, դեմառդեմ, դեմուդեմ, դիմաց, ետև, մեջ, միջև, մոտ, ներքո, շուրջ, վրա, տակ, քով *կապերը, որոնք իրենց խնդիրների հետ միասին ցույց են տալիս մի անորոշ տեղ, որտեղ գտնվում է կապի խնդիրը և որտեղ կատարվում է մի գործողություն՝ տարածական հարաբերությամբ առնչակցված կապի խնդրին. օրինակ՝* Մեքենան կանգ առավ կոլխոզի *գրասենյակի առաջ (ՆԶՀ, 444)*։ Եկավ կանգնեց ձնի *կիտուկների առաջ (Անթ., 294)*։ Փնթփնթացնում էր նա *իմ առաջին (Թ., II, 34)*։ Նա երբեմն նստած քնում է *խանութի առաջին (Թ., III, 45)*։ *Մեր առջև* ձորն է թշշում խավարշտին, *Մեր դեմը* խաղում ձորերի շունչը *(Թ., II, 36)*։ Կանգնել եմ մոլոր *քողիկիդ առջև (Իս., II, 94)*։ Ու նստոտեցինք *իրար դեմ ու դեմ (Թ., II, 36)*։ Ղուրանին նստած էր *դիրեկտորին դեմուդեմ (Գ. Սևունց)*։ Նայում է նա կայարանին, որ կանգնած է *իրա դիմաց (Զե, 17)*։ Մարդ ու կին քարացան *իրար դիմաց (ՆԶՀ, 324)*։ Էս ով կտրից անցավ թեթև, Շունչ է քաշում *դռան ետև (Թ., II, 14)*։ Ինչ կա *մեր ետև (Իս., II, 71)*։ Նրանք շարունակում էին կանգնած մնալ *իրար հանդիման (ՆԶՀ, 324)*։ Եվ վաշերը շառաչուն՝ հաղթողների կանգ առան Արարատյան *դաշտի մեջ Մասիսների հանդիման (Իսե, 139)*։ Ամպերի նախիրն անհետացավ *սարերի հետև (ՆԶՀ, 74)*։ Լեռների և բլուրների տիտանական *պարի մեջ* գոյացել է մի կարսա *(Նույն տեղում, 234)*։ Պատվար է եղել արքայի *ցասման և նրա միջև (Ճեքս., I, 66)*։ Իմ սերն այնտեղ է, լեռների գլխին, *արծիվների մոտ (Անթ., 54)*։ *Գազանների մոտ* հացի կնստեմ *(Իսահակյան)*։ Նրա անմիջական *հովանավորության ներքո* էին գտնվում *(Ր., III, 122)*։ Որի *ներքև* կային այս խոսքերը *(Ընտ., էջեր, 499)*։ Երկրագունդը պտտվում է *արեգակի շուրջը*։ Գտնվում էին բաց *դաշտի վրա (Մուր., IV, 66)*։ Ընկերների հետ շարվում էին մի երկար *ձողի վրա (Թ., III, 72)*։ *Մատի վրա* փայլում էր գոհար մատանի *(Ր., I, 434)*։ Հիմի էսպես սոված, մենակ մնացել եմ *պատերի տակ (Թ., I, 342)*։ *Պատուհանների տակ* նվագում էր սերենադներ *(Ընտ. էջեր, 721)*։ Մենք ճաշում էինք միևնույն սենյակում, միևնույն *սեղանի քով (Նույն տեղում, 609)*։ Չգիտեմ երբ, և որ շենում իրեն *որդու, հարսի քով* Մի խեղճ պա–

ռավ մայր էր կենում *(Իս., II, 116)*։ Իզուր ես մտածում, թե ես չգիտեմ՝ ինչ է կատարվում *մեր շուրջը (Ր., III, 418)*։

թ) ՈՒՂԵՎՈՐՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆՄԱՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ *878. Ուղեորման և ժամանման տեղի պարագաները ցույց են տալիս այն տեղը, դեպի որը ուղղվում, ուղեորվում է և որտեղ հասնում է մի առարկա։ Ժամանման, ուղեորման տեղի պարագաներ կարող են լինել տեղի մակբայները, տեղ արտահայտող ցուցական, անորոշ, հարցական-հարաբերական դերանունները, ուղեվորման և ժամանման հայցական հոլովով դրված այն բոլոր խոսքի մասերը, որոնք տարածական հարաբերություն են արտահայտում և համարյա այն բոլոր կապերը, որոնք վերևում բերվեցին իբրև բուն տեղի պարագաների օրինակներ։ Ուղեորման և ժամանման տեղի պարագաների տարբերությունը պայմանավորվում է բայի նշանակությամբ.* գնում եմ *տուն.* հասնում եմ տուն. *առաջին նախադասության մեջ* տուն *ուղեորման, իսկ երկրորդի մեջ ժամանման պարագա է։*

§ *879. Մակբայները, ցուցական, հարցական-հարաբերական դերանունները արտահայտում են այն անորոշ տարածությունը, դեպի որը ուղղվում, ուղեորվում է մի առարկա, կամ որտեղ հասնում է իբրև վերջնակետ. օրինակ՝* Տանն էյ *հեռու, հեռու (ԴԴ, II, 264)*։ Փախիր *այլուր*, հեռացիր, հոգուդ տանջանքն ու երկյուղը վանիր էնտեղ ու կացիր *(Թ.)*։ Եկել էր արձակուրդով և ինձ բերել *այստեղ (ԴԴ, II, 268)*։ Ահա, ահա *վայր* կշպրտի բահը *(նույն տեղում, 479)*։ Բայց *ուր* են քշում *(նույն տեղում, 479)*։ Այնտեղ էին շտապում հասնել հովիվները *(նույն տեղում, 481)*։ Կթռչի *ներքև, ներքև էլ որ վազեն* բռնելու՝ թրոռ պատուհանը *(նույն տեղում, 258)*։ Դանդաղ մղվեցին *առաջ (ԴԴՎ, 234)*։ Կանչեցեք նրան *այստեղ (Մուր., III, 426)*։ Ահա գալիս են քեզ տանեն *այնտեղ (ԱԲԵ, 565)*։ Քանի՛ դուրս թռչես, նայես *դես ու դեն (Թումանյան)*։ Գնում է *ուր որ (ԴԴՎ, 187)*։ Մին թև է առնում, ուզում է թռչի, Չգիտեմ՝ թե *ո՞ւր*, չգիտեմ թե *ո՞ւր (Թումանյան)*։ Կարծես, ասում լիներ, *ուր* ես գնում *(Ր., III, 265)*։

§ *880. Տարածական հարաբերություն արտահայտող համարյա բոլոր խոսքի մասերը հայցական հոլովով դառնում են ուղեորման և ժամանման տեղի պարագաներ՝ շարժում արտահայտող և շարժում ենթադրող ներգործական, չեզոք բայ-ստորոգյալների համար*

և ցույց են տալիս այն տեղը, որտեղ ուղևորվում, ժամանում է մի առարկա. օրինակ՝ Ուշ իրիկուն էր, երբ մի գյուղ մտանք (Զն, 2)։ Ասատուրին կանչեցին գյուղսովետի գրասենյակ (ՎԱՍԱ, 411)։ Քիչ նետո իջավ լորենիների ձորը (ԱԲՆ, 233)։ Շատ եմ վախենում Պարսկաստան կանչվենք (ԴԴՎ, 222)։ Առավոտը վաղ եկ մոտս (նույն տեղում, 225)։ Աչքի տակով նայում էր աջ կամ ձախ (նույն տեղում, 227)։ Նրանց արգելված էր մի տնից մյուսը գնալ (ԱԲՆ, 576)։ Դիմացի տունն եմ մտնում առջևս մի տարեց կին է դուրս գալիս (ՌՊՆ, 593)։

§ 881. Մի շարք ստորոգյալների տեղի պարագան հայերենում այնքան որոշ չէ, այսինքն՝ տատանվում է բուն տեղի և ուղևորման պարագաների միջև։ Այդ երկդիմությունը առաջանում է բայերի անորոշ նշանակության պատճառով. դրանք ոչ լրիվ ուղևորման, շարժման բայեր են և ոչ էլ դադարման։ Այդ է պատճառը, որ հիշյալ բայ-ստորոգյալների տեղի պարագան երբեմն ներգոյական, երբեմն էլ հայցական հոլովով է դրվում. օրինակ՝ Սև կապան նա գցեց պահարանը (ԱԲՆ, 573)։ Ինչպես էր նա ընկել այդտեղ (նույն տեղում, 337)։ Մարդ արարածը չի կարող ոտք դնել այնտեղ (նույն տեղում, 569)։ Մեր թագավորն էլ մի անգամ էնպես Մահին է ընկնում (սա ստացել է դարձվածքային նշանակություն. Թ., «էնպես չի մնա»)։ Նամակատարը վերադարձին կրկին նյութ է ընկնում նույն տունը (Թ., III, 168)։ Թշնամին սրով և արյունով մտցրեց յուր պղծությունը մեր սուրբ տաճարներում (Ր., III, 386)։ Այսպիսի դեպքերում վայելուչը և ճիշտը հայցականն է։

§ 882. Ուղևորման տեղի պարագան ներգոյական հոլովով կիրառելը բոլորովին անթույլատրելի է և սխալ։ Այդ երևույթը այժմ տեղի է ունենում, երբ իրար մոտ կիրառվում են շարժման և դադարման բայեր, որոնցից մեկն է ունենում տեղի պարագա և հենց այս տեղի պարագան սխալմամբ անցնում է մեկից մյուսին, կամ բայերից մեկը ս զվում է, և սղվածի տեղի պարագան մնում է մյուսին. օրինակ՝ Գնաց քաղաքում սովորի: Համեմատի՛ր. Երկու անձինք մուտք գործեցին Ողական ամրոցում։ Իսկ Արշակ թագավորը աքսորված էր Անհուշ բերդում։ Քաշվում էին նանապարհի մի եզրում։ Տեղափոխվել է Տայոց երկրի Երախանի բերդում (Ր., III, 23, 53, 72, 88, 252, 556) և այլն։

§ 883. Չափազանց թույլ և սահմանափակ է տրական հոլովով ուղևորման, ուղղման տեղի պարագան. օրինակ՝ Իմաստություն է իմ սրտին իջել (Զն, 181)։ Դեղնած դաշտերին իջել է աշուն (Թ., I,

110)։ *Համեմատի՛ր.* Իջել է իմ *սրտի վրա* Զարմանալի հանգստություն (*ՉԵ, 174*)։ Դեղնած տերևն էն *քարերին* թափեց, մնաց տերևաթափ (*Թ., «Անբուն կկուն»*)։ *Համեմատի՛ր.* Հրամայեց սպասել *ժայռի տակին* (*ԴԴ, I, 81*)։

§ 884. *Տարածական հարաբերություններ արտահայտող կապերը և սրանց խնդիրները, դառնալով ուղևորման, ժամանման տեղի պարագա, ավելի թանձրացական կերպով են որոշում այն տեղը, դեպի որը ուղղվում, ուղևորվում կամ հասնում է առարկան. օրինակ՝* Կգնանք *առ ոտս* արյաց արքային՝ հանձնվելու (*ԴԴՎ, 9*)։ Արհավիրքները պատմելու համար եկավ *իմ առաջ* (*Շեքս., I, 31*)։ Ու մյուս իրիկուն մեր *տան դեմ* ելա (*Թ., II, 77*)։ *Դեմ Մհերին* խոյաց, վարգեց (*Իս., II, 96*)։ Անվախ ու վեհ դեկդ վարե անծանոթին *դեմ-դեմի* (*Իս., I, 254*)։ Երե խեցգետնի նման կարողանայի *դեպի ետ* գնալ (*Շեքս., I, 38*)։ Վազում է *դեպի Լոռու ձորերը* (*Թ., III, 9*)։ Հանկարծ խուժեցին *դեպի բլուրն ի վեր* (*ԴԴՎ, 234*)։ Ու խոլ պատկերներ ազեղ, այլանդակ, Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ, Ծանրաշարժ եկան *Սաքոյի դիմաց* (*Թ., II, 14*)։ Եկան *ձեզ ընդառաջ* (*ԴԴ, II, 484*)։ Դարձյալ սուլելով կարձակեմ նրան *դեպի հողմն ի վար* (*Շեքս., I, 164*)։ Երբ ալիքները մոլեգնած ինձ բռնեցին, ոլորեցին և իրենց հետ *անդունդն ի վայր տարան* (*ՆԶԱ, 101*)։ Վարդերի միջով *ձորն ի վար* կերթա (*Իս., I, 125*)։ Կմագլցեր քերձերն *ի վեր* (*Իս., 84*)։ Մեկ ապառաժ վեմ վիթխարի... բերեց ձգեց էն *գետի մեջ* (*Իս., II, 97*)։ Ուլի պես բարձրացրեց նրան իր ամբողջ հասակով ու շպրտեց *հերկի մեջ* (*ՆԶՀ, 165*)։ Երթը հրապարակից երկարեց *մինչև* կամուրջը (*նույն տեղում, 78*)։ Եվ հորիզոնից *մինչև հորիզոն* երկինքը լցվեց մռայլ ամպերով (*Իս., II, 68*)։ Հեյ, արևմուտքից *մինչև արևելք* պիտի հրդեհեմ ու քանդեմ հիմա (*ՉԵ, 9*)։ Նա վեր կացավ գնաց *տիկնոջ մոտ* (*ԴԴՎ, 322*)։ Իշխանը հառեց յուր աչքերը *երիտասարդի վրա* (*Մուր., III, 172*)։ Այդ մեղքն ընկնում է մի ազնիվ *պարոնի վրա* (*Թ., V, 74*)։ Դուք եք կանչում ինձ *ձեր քով* (*Թ., I, 208*)։

ժ) ԵԼՄԱՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

§ 885. *Ելման տեղի պարագան ցույց է տալիս այն տեղը, որտեղից սկսվում է ստորոգյալի գործողությունը, որտեղից դուրս է գալիս մի առարկա։ Ելման տեղի պարագայի հիմնական հոլովը բացառականն է, որով կարող են դրվել տարածական հարաբերություններ արտահայտող բոլոր խոսքի մասերը։*

§ 886. *Ելման տեղի պարագայի կիրառությամբ գործածվում են տարածական հարաբերություն արտահայտող և իբրև տեղ մտածվող գոյականների բացառական հոլովները. օրինակ՝* Դուրս եկեք կրկին *շիրմից, խավարից*։ Եվ մութ *այրերից մամռոտ* ժայռերի, Թավուտ ծմակի լռին *խորքերից* Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի Արձագանքն ահա լսում եմ նորից *(Թ., «Անուշ»)*։ Վաղուց վայր է ընկել տիրոջ *ուսերից (ԱԲԵ, 573)*։ Պարսիկները մեզ կհարվածեն ոչ *հարավից*, այլ *հյուսիսից, որտեղից* չենք սպասում *(ԴԴՎ, 222)*։ Եվ հազարավոր քո գաղտնիքները *սրտիցդ* քաշեմ *(Տեքս., II, 23)*։ Կրակն էր ցայտում նրանց *աչք-ունքից*, շանթը *շրթունքից (Հակոբյան)*։ Թևավոր ձիով ճանապարհորդող սիրուն երիտասարդը *Օլիմպոսից* կլինի իրենց մոտ հյուր եկած *(ՂԱԵ, 156)*։ Դուրս եկանք *քաղաքից* ձիով՝ հայրենի գավառակի գյուղերը շրջելու *(Մուր., IV, 65)*։ Արեգակը բավական բարձրացել էր *հորիզոնից (Ր., IV, 300)*։

§ 887. *Երբեմն ելման տեղի պարագան խառնվում է բացառական հոլովով դրված խնդիրների հետ և առաջանում է երկդիմություն. օրինակ՝* Նրա արինը կարմիր է մերից, թե ավել հունար դուրս կգա *ձեռից (Թումանյան)*։ Ես կպակսեմ մեր *աշխարհից (Թ., II, 124)*։ Մի օր էլ երբ իր *որսից* դարձավ *(Թումանյան)*։ *Ողկույզներից ջրի կաթիլները ցայտում են (Իս., II, 207)*։ Մետեխի *ժայռից* ծորել են հերթով *(ՀՀԵ, 176)*։ *Ընդգծված ելման տեղի պարագաները տարբեր չափով են արտահայտում տեղի հասկացողությունը։ Առաջին և երկրորդ օրինակներում բացառականը տեղի հետ կարող է մտածվել նաև իբրև անջատման անուղղակի խնդիր։ Իսկ երրորդ օրինակում, չնայած* որս *բառը տարածական հարաբերություն չի արտահայտում, բայց փոխաբերաբար նշանակում է որսատեղ, այսինքն՝ ելման տեղի պարագա է։*

§ 888. *Նշվեց, որ ելման տեղի պարագա են դառնում տարածական հարաբերություն արտահայտող գոյականների բացառական հոլովները. սակայն դա ընդհանուր ըմբռնում է. տեղի հասկացողության ստույգ կողմնորոշումը պայմանավորվում է ստորոգյալի բնույթով. օրինակ՝* Շենքից դուրս եկա *նախադասության մեջ* շենքից *ելման տեղի պարագա է. իսկ շենքից* հեռացա *նախադասության մեջ բացառականը կարող է երկու կերպ հասկացվել. եթե դա նշանակում է շենքի միջից հեռացա, ապա բացառականը ելման տեղի պարագա է, իսկ եթե նշանակում է՝* կանգնած էի շենքի մոտ և նրանցից հեռացա, *ապա* շենքից *անջատման անուղղակի խնդիր է։*

§ 889. *Այս տարբերությունները հաճախ այնքան նուրբ են, որ նախադասության այս կամ այն անցումը որոշելիս պետք է ելնել այն իմաստից, որը տվյալ դեպքում ավելի է գերակշռում, քանի որ, ինչպես տեսանք, համատեղող հասկացողությունները բառերի և նրանց քերականական ձևերի մեջ այնքան էլ հազվադյուտ երևույթներ չեն: Այս կամ այն լրացումը սահմանելիս պետք է ելակետ ունենալ տվյալ բնագիրը, այսինքն՝ ստորոգյալի և նրա լրացման բնույթը անհրաժեշտ է որոշել բնագրի վրա:*

§ 890. *Ելման տեղի պարագա են արտահայտում անիսկական կապերի, մակբայական բառերի բացառական հոլովները, որոնց տեղի պարագայական հասկացողությունը ավելի բացահայտ է. օրինակ՝* Դուրս եկավ թեթև ամպերի *տակից*: Օրհասն առաջին, գրընդակն *ետևից (Թումանյան)*: Ես ինքս կգամ ձեր *ետևից (Շիրվ., VII, 295)*: Աթոռի *վրայից* նայում էր քաղաքին *(ՋԸԵ, 300)*: Հյուրերն սկսեցին թագավորի հետևից *չուխտ-չուխտ* մտնել սեղանատուն *(ՂԱԾ, 263)*:

§ 891. *Ելման տեղի պարագա են դառնում* այստեղից, այդտեղից, այնտեղից, որտեղից *դերանունները,* վերուստ, ուրկից, ուսկից, ուստի *մասամբ հնացած մակբայները կամ հարաբերական բառերը:*

Թագավորն ուզում է ինձ հալածել *այստեղից (Մուր., III, 397)*: *Որտեղից* լսվում էր սքանչելի երգը *(Ր., III, 445)*: *Որտեղից* եկար *(նույն տեղում, 455)*: Հեռացիր *այստեղից (նույն տեղում)*: Պետք էր այժմ վերադառնալ քաղաք, *ուսկից* ամբողջ երեք ամիս բացակա էի *(Մուր., II, 131)*: Ես էլ գնացի մոտակա շենը, *ուսկից* և բերինք նրա նորատի և գեղեցիկ հարսնացուն *(նույն տեղում, 128)*: *Այստեղից* մեր առաջ տարածվում են ցորենի ընդարձակ արտորաներ *(նույն տեղում, 9)*: Սիրիուս, երկնից անեղ անցվոր, *ուրկից* եկել, ուր ես թեքել ու նեպում ես էդքան հզոր *(Թ., «Սիրիուսի հրաժեշտը»)*: Քշեց գնաց մինչ Դիարբեքիր Ու *էնտեղից* եկավ կըրկին *(Թ., «Սասունցի Դավիթը»)*: Կռունկ, *ուստի՞* կուգաս: *Ուսկից* հայտնվեցավ այդ ղարաչի կինը *(Ր., II, 344)*: Պիտի ժառանգենք մեր դարերի կորուստը, Որ բոլոր ակլորներին սահմանված է *վերուստ (Չարենց)*:

ժա) ԱՆՑՄԱՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

§ 892. *Անցման տեղի պարագան կիրառվում է տարածական հարաբերություն արտահայտող խոսքի մասերի գործիական, մա-*

սամբ բացառական հոլովներով և կապական արտահայտություն-ներով։ Այս տեղի պարագան ստորոգյալի այն տարածական լրացումն է, որով իբրև մի տեղով, մի տարածության միջով, արանքով, զուգահեռ, ուղղությամբ, մոտով, կողքով, տակով, վերևով անցնում է մի առարկա, կատարվում, տեղի է ունենում մի գործողություն. օրինակ՝ Անցնում է մի խուլ *փողոցով (Թ., III, 199)*։ Կարբ *խողովակներով* հոսում էր *(Իս., III, 305)*։ Շատ անգամ վճռեցի իմ հին *սովորական* ճանապարհով գնալ *(Մուր., I, 527)*։ Անցավ բակի *երկայնքով (Ընտ. էջեր, 722)*։ Լևոն Լամբարյանը արշավում էր իր հաղթական *դաշտերով (Անթ., 186)*։ Լույսի կուրացուցիչ մի զանգված սլանում էր ձիու պարանոցի *տակով (նույն տեղում, 188)*։ Կայծակի արագությամբ անցնում էր Լևոնի *մոտով*։ Վտանգավոր էր անց կենալ կամուրջի *վրայով (նույն տեղում, 190)*։ *Գլխովը* շատ ամպեր կանցնեն: Խելագար թռչում ճարերի *գլխով (Թումանյան)*։ *Կողքովն* ով որ անց է կենում, Քաշում է փեշն ու հարցրնում *(Թ., I, 271)*։ Զգվում էր Թարթառի *ափովը (Ընտ. էջեր, 418)*։ Ջուրը որ *կողմով* է շարժվում *(ԴԴՎ, 222)*։ Մի սևինճ սողում էր նույն *ուղղությամբ (նույն տեղում, 227)*։ Ես միջոցին կեռիկ-մեռիկ, ճազով-մազով սանամերիկ Աղվեսն... Անց էր կենում էն *կրծմերով (Թ., «Անբան կկուն»)*։ Մրջիմի նման բարձրանում են դեպի տան *սյունը (սյունինքն՝ սյունի վրայով. ԲԿ, 30)*։ Կմազլցեր *քերծերն ի վեր (Իս., II, 84)*։ Վարդերի *միջով* ձորն ի վար կերթա *(Իս., I, 125)*։ *Այսպես ասվում է նաև՝* Այս կողմերից անցավ գնաց: Անտառից անցավ. գետից անցավ։ *Այդպես էլ՝* հեռևից, առջևից, վրայից, տակից, ներքևից *անցավ ավելի շատ անցման տեղի պարագաներ են, քան ելման*։

ժբ) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ **893.** *Ժամանակի պարագան բայի այն լրացումն է, որ ցույց է տալիս նրա գործողության կատարման, սկսման և վերջացման ժամանակները։ Ըստ այդ ժամանակի պարագան բաժանվում է երեք խմբի՝ գործողության կատարման, սկզբնավորման և վախճանի։*

§ *894. Ժամանակի պարագա են դառնում ժամանակային մակբայները, ժամանակային հարաբերություններ արտահայտող գոյականների հայցական, տրական, բացառական, գործիական, ներգո-*

յական հոլովները, գործողություն արտահայտող գոյականները, որոշ դերբայներ, դերբայական դարձվածներ, այլևայլ բառակապակցություններ, կապական արտահայտություններ։

ժգ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 895. *Գործողության կատարման ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակը, երբ կատարվում է գործողությունը՝ առանց նշելու սկզբնավորման և վախճանի պահերը. օրինակ՝* *Մի առավոտ* երգեցին ծխնելույզները *(Չե, 25)*։ Առավոտ *բառը չի ցույց տալիս գործողության սկսման և վախճանի ժամանակակետերը, այլ պարզապես արտահայտում է այն ժամանակը, երբ կատարվում է գործողությունը. օրինակ՝* Հավատում էր, որ նա *ժամանակին* դառնալու էր ամենամեծ արծիվներից *(Թ., III, 216)*։ *Մի օր*, այսինքն՝ *մի գիշեր*, ժամը մոտավորապես *երեքին*, քաղաքի բոլոր տների պատուհանների ապակիները հանկարծ զրնգում են *(ՉՀԾ, 306)*։ *Դեռ մի տարի սրանից առաջ* որքան ինձ ուժեղ և անընկնելի էի համարում *(Մուր., II, 144)*։ Համալսարան մտած *տարիս* հայրս մեռավ *(ԽՊԵ, 432)*։ Այդ *միջոցին* դռները շառաչմամբ ետ գնացին *(Ր., III, 174)*։ Այս *առավոտ* միայն ինձ ասացին, որ դու գնալու ես հորդ դիմավորելու *(Նույն տեղում)*։ *Հետո* պաղ գետի պես ձորավերևից հոսեց աշունը և գնաց ձորնիվայր *(ԴԴ, II, 174)*։ Ավելի ու ավելի համառ *օր ու գիշեր* նրա ականջում հնչում էր էն կոչը *(Թ., III, 218)*։ Նույն *րոպեին* դուռը բացվեց աղմուկով և ներս վազեց մոտ 7—8 տարեկան մի տղա *(Նար., I, 216)*։ Ինձ մի վերք տվեցիր, որ *հավիտյանս հավիտենից* չի բուժվի *(Շիրվ., V, 203)*։

ժդ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 896. *Գործողության սկզբնավորման ժամանակի պարագան ցույց է տալիս այն ժամանակակետը, երբվանից սկսվում է գործողությունը՝ առանց ցույց տալու շարունակվում է այդ, թե վերջացել է։*

Ախ, ես *դեռ մանկուց* շատ ցավեր տեսա *(Թ., I, 371)*։ *Հիմիկուց դեն* էլ չեմ ապրի առանց կին ու գինի *(Իսահակյան)*։ Մի երգ կա *մանկուց*, մի երգ կար *մանկուց* *(Նույն տեղում, 383)*։ Նրանք մտերիմ բարեկամներ էին *պատանեկան հասակից* *(Շիրվ., V, 201)*։

Այժմյանից արդեն սարսափում եմ հիշելով այն ժամերը (*Մուր., IV, 342*)։ Երկու *օրից հետո* Կարո Դարայանը մեկնեց բանակ (*ՉԸԾ, 355*)։ Էն *օրվանից մինչև օրս էլ* շունն ես բանը չի մոռացել (*Թ., «Շունն ու կատուն»*)։ Այս օրինակում արտահայտված են և *սկզբնավորման և վախճանի ժամանակակետերը, որ միասին ցույց են տալիս ժամանակի ողջ տևողությունը*։

ժե) ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *897*. *Գործողության վախճանի ժամանակի պարագան ցույց է տալիս այն վերջնական ժամանակակետը, երբ վերջանում է գործողությունը, որ կարող է սկսված լինել շատ վաղուց. օրինակ՝* Ես *մինչ ի մահ, կախաղան, Մինչև անարգ մահու սյուն* Պիտի գոռամ, պիտի կրկնեմ Անդադար ազատություն (*ՄՆ, I, 31*)։ Ժամանակ նըշանակում են *մինչև* մին էլ *կկվի ձեն ածելը* (*Թ., III, 151*)։ Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում *մինչև իրիկուն* (*նույն տեղում, 153*)։ *Մի շաբաթ անցած* եկավ մի ուրիշ այցելու (*Շիրվ., V, 179*)։ Օրիորդը, որ *մինչև այն* նստած էր փոքրիկ ծակոտկեն աթոռի վրա... (*Մուր., IV, 14*)։

ժզ) ՄԱԿԲԱՅՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐՆ ԻԲՐԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *898*. Հիմա, հիմի, այժմ, այնժամ, երբևէ, երբևիցե, նոր, վաղուց, այժմյանից, հենց, դեռ, մանկուց, հնուց, ուշ, տակավին, դեռևս, տարեցտարի, ժամեժամ, երբեք, երբեմն, մանկուց, փոքրուց, առաջուց, երեկոյան, առավոտյան, էգուց-էլօր, կանխավ, հիմիկուց, ցայժմ, այսուհետև, այնուհետև, արդեն, վերջիվերջո, օրեցօր, ժամանակ առ ժամանակ, էգուց, այսօր, վաղը, էքսօրը, ապա, նախ, հետո *և այլ մակբայները տարբեր չափով ու գրական լեզվում իրենց տարածվածությամբ դառնում են ստորոգյալի ժամանակի պարագա և ընդհանուր կերպով ըստ իրենց նշանակության արտահայտում են ժամանակի երեք ժամանակակետերը. օրինակ՝ Այնուհետև* անցավ դարձյալ մի երկու օր (*Նար., III, 478*)։ Հիմի միթե նա էնքան հիմար է (*ՂԱԾ, 473*)։ Արմաղանի երեխայքը *ուշ* էին սկսում տնական հոգսերին մասնակցել (*նույն տեղում, 202*)։ Աղաջանի հետ մենք արտով *մանկուց* ախպեր ենք (*ՊՊ, I, 345*)։ *Էգուց-էլօր* աշխատանքի օրերը դուրս կգան (*նույն տեղում, 363*)։ Անծայրածիր մի անսահման երբ տարուբերվում էր քաղաքում *հար* (*ՉԳԾ, 193*)։ *Նա*

կանխավ ասել է «այո» *(Մուր., IV, 45)*։ Ապրանքներին *վաղուց* ձեռք չէին տվել *(ԱԲԵ, 315)*։ Որ *էգուց-էլօր* ոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ *(Թ., II, 104)*։ Երկաթը շիկնած կսառի *այնժամ (ՀՀԵ, 94)*։ *Էգուց* ուզում եմ հիմերը քանդել տամ *(ԱԲԵ, 482)*։ Ընտրածս ասպարեզի վրա *տակավին* կատարելու գործեր ունեի *(Մուր., II, 144)*։ Իմ մեջ *տակավին* ապրում է կինը *(նույն տեղում)*։ Առավոտյան ցողը *դեռ* չէր բարձրացել խոտերից *(Ր., IV, 342)*։. *Այժմ* պատրաստվում է հանգստանալ *(նույն տեղում, 176)*։ Ու *հենց* շողաց ցոլքն արևի *(Թ., «Անուշ»)*։ *Հիմա* ինչպես ձգեմ նրան անմայր, երեսի վրա *(Իսե, 209)*։ *Երբեք* չի տալ յուր հոժարությունը *(ՌՊԵ, 474)*։ *Վերջիվերջո* պիտի գան թե չէ *(Քոչար, 324)*։ Ես *երբեմն* լինում եմ այդ ներկայացումներին *(Շիրվ., IX, 437)*։ Միթե կարծում ես, որ ես *երբևիցե* կարող կլինեմ մոռանալ նրան *(Նար., II, 159)*։ Միթե այդպիսի եղբորը *երբևէ* կարելի է մոռանալ *(նույն տեղում, 214)*։ *Երբեմն* նրանց թվում էր, թե քայլում են մի անսահման դաշտով *(ԱԲԵ, 607)*։ Կապույտ էլ կմնան *միշտ, միշտ, միշտ (ԴԴ, II, 271)*։ *Երբեմն* դաշտային ճագարներն ու շներն էին այստեղ, այնտեղ երևում ու թաքնըվում սեզերում *(Թ., III, 215)*։ Տխուր այդ երգը *վաղուց* եմ լսել *(Տ., I, 112)*։ *Երբ որ* հեռացա, երբ որ հեռացա, Լիքն էր ողջ ու շեն: *Երբ որ* ետ դարձա, երբ որ ետ դարձա, դատարկ էր արդեն *(Թ., I, 383)*։ Ու ես *էնժամ* զգում էի *(նույն տեղում, 388)*։ Ծուխդ կելնի պատուհանից *երբևէ*, Հավքդ կերթա իրեն բնից *երբևէ*, Թեկուզ մի դար ապրես սրտով մտերմիդ, Զարի սրտով կելնես տանից *երբևէ* *(նույն տեղում, 395)*։ Երկուսն էլ *տակավին* առողջ էին *(Շիրվ., V, 182)*։ Մի վռազիր ...մահին կհասնիս *վաղ-ուշ (Իսե, 45)*։ *Այսուհետ* քեզ չեմ տեսնելու *(նույն տեղում, 69)*։ Երգիր ոնց էր աղջիկը *վաղ*, Ջուրը գնում մինչ արփին *(Թ., I, 379)*։

Ծանոթություն. Արդեն, տակավին, դեռ, դեռևս *ժամանակային մակբայները դառնում են այնպիսի ժամանակի պարագա, որ ցույց են տալիս առհասարակ անորոշ ձևով ներկա ժամանակամիջոց, որը հեռավոր կերպով է առնչվում գործողության բուն ժամանակամիջոցի հետ. կամ գործողությունը արդեն այլ ժամանակամիջոցում կատարված է, կամ դեռևս չի հասել տվյալ ժամանակամիջոցին, կամ գործողությունը մասամբ է համընկնում. օրինակ՝* Բայց *տակավին* պահպանել էր յուր երիտասարդական ժրությունը *(Ր., III, 331)*։ Բայց բոլոր խոսքերը իզուր են *արդեն (Տ., I, 77)*։ Սակայն *տակավին* Փա-

րիզն է համարվում եկարչության գլխավոր ժամանակակից ծննդավայրը *(Շիրվ., IX, 222)*։ Եվ կամ ինչևան *դեռ* պիտի գան *(Թ., «Սիրիուսի հրաժեշտը»)*։

ժէ) ԺԱՄԱՆԱԿ ՆՇԱՆԱԿՈՂ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԻ ԲԱՌԵՐՆ ԻԲՐԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 899. Ժամանակ նշանակող և այլ կարգի բառերը իբրև ժամանակի պարագա կիրառվում են հայցական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատուկ կիրառությունը և իմաստային նրբությունները։

ժը) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ 900. Իբրև ժամանակի պարագա հայցական հոլովով կիրառվում է ժամանակ արտահայտող բառերի մի մասը։ Այդ բառերից են՝ տարի, ժամանակ, օր, գիշեր, ցերեկ, երեկ, այսօր, վաղը, էգուց, առավոտ, իրիկուն, աշուն, ձմեռ, գարուն, ամիս, շաբաթ, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի:

Այս բոլոր բառերը իբրև ժամանակի պարագա հայցական հոլովով կիրառվելիս երեք կերպ են հանդես գալիս՝ ա) առանց որոշող բառերի *(որոշիչ, հատկացուցիչ), բ)* միայն որոշող բառերով *և* գ) թե՛ որոշող բառերով և թե՛ առանց դրանց:

§ 901. Առանց որոշող բառերի հայցական հոլովով ժամանակի պարագա են դառնում՝ երեկ, վաղը, այսօր, էգուց, *որոնք անորոշ կերպով ցույց են տալիս միայն մի ամբողջ ցերեկ՝ առանց ճշելու այդ ցերեկվա որևէ ժամը.* այսօր *հասկացվում է առավոտից մինչև ուշ երեկո, որից հետո արդեն գիշեր է համարվում*։ Գիշերվա ժամը մեկից հետո *համար սովորաբար տեսականորեն է* այսօր *ասվում, կամ եթե անցել է արդեն, չի ասվում* երեկ, *այլ՝* երեկ գիշեր. վաղը, էգուց *ասելով սովորաբար հասկացվում է եկող ցերեկվա առավոտից. փոխաբերաբար երեկ ասվում է նաև անցյալի համար, իսկ այսօր ներկայի նշանակությամբ. օրինակ՝* Երեկ ես էի, *այսօր* երեխաս *(Իսն, 64)*։ Բայց *այսօր* գունատվեց ինչ-որ անեղ զզացումից *(ԴԴՎ, 374)*։ Վաղը կվերադառնա գյուղից: էգուց կգամ և ամեն ինչ կպատմեմ: Ինչ բնտանեկան խնդիր է, որի մասին երեկ և այսօր

ակնարկեց տիկինը (*Մուր., IV, 21*)։ Փող եմ ավել, շուտով կարի. թե չէ սաս *էգուց* արի (*Թ., «Շունն ու կատուն»*)։

Ծանոթություն. Այս բառերը հաճախ կիրառվում են իրիկուն, գիշեր, ցերեկ, առավոտ *բառերի հայցական հոլովնե-րի հետ և միասնաբար կազմում են ժամանակի այնպիսի պարագա, որ ցույց է տալիս այդ անորոշ տևողության (այսօր, վաղը, էգուց, երեկ) որոշ պահը. օրինակ՝ Երեկ իրիկուն* այդ կողքի սենքից կախ էին արած երեք հրացան (*Թ., II, 42*)։ *Վաղն առավոտ* բնակչությունը քշիր հրապարակ (*ԴԴՎ, 363*)։ *Երեկ երեկո* ես Մարջանի հետ խոսեցի (*Շիրվ., V, 309*)։ *Համեմատի՛ր. օրը մինչև երեկո* վազվզում ես փողոցներում (*Նույն տեղում, 341*)։ Էգուց ցերեկը նա կգա: *Այդպես ասվում է՝* վաղը (*էգուց, երեկ, այսօր*) այսինչ ժամին *և այլն*։

§ 902. *Առանց որոշող բառերի հայցական հոլովով իբրև ժամանակի պարագա չեն կիրառվում* տարի, երեկո, ժամանակ, օր, ուրբաթ, ամիս *բառերը. օրինակ՝* Միևնույն է, թե *զատկի շաբաթը* մատաղաշ գառան մսից երշիկ, ապուխտ շինել տաս (*ՌՊԵ, 657*)։ Եվ ահա *մի օր* մենք մտանք մի գյուղ (*ՁԵ, 3*)։ Նախընթաց *երեկո* խընդրել էինք (*Շիրվ., V, 211*)։ *Հետևյալ օրը* այնքան խաղաղ էր քաղաքավանում (*ԴԴՎ, 363*)։ Աստղիկը *վերջին օրերը* նկատեց մի այլ արտասովոր երևույթ (*Նույն տեղում, 374*)։ *Մի կերի տարի* ես ու մեր Ավագը Մաարեքում խոզ էինք պահում (*Թ., III, 52*)։ Գիշերվա *մի ժամանակը* մի թմբմփոց անցավ վրանների մոտից (*Նույն տեղում, 69*)։ Դատապարտված եմ *որոշ ժամանակ* գիշերը շրջել (*Շեքս., I, 24*)։ *Ամեն տարի ծննդի ժամանակները* ապրանքի համար Մոսկվա էի գնում (*ՌՊԵ, 667*)։ Օրիորդ Սևիկյանը չէր հավատալ ընկերուհու խոսքերին, եթե *նախընթաց օրը* յուր ականջով լսած չլիներ (*Մուր., IV, 21—22*)։ *Մի երեկո* ես հորաքրոջս մեր տնից իր տունն ուղեկցելուց հետո՝ լապտերը ձեռքիս վերադառնում էի վախվըխելով (*Շիրվ., V, 308*)։ *Նախընթաց երեկո* Մարտիրոսը չգիտեմ, որ քաղաքից թե գյուղից ձիով վերադառնում է (*Շիրվ., V, 310*)։

Ծանոթություն. Ուրբաթ և շաբաթ *բառերը իբրև ժամանակի պարագա կիրառվում են* օր *բառի հետ միասին և կազմում են մի հասկացողություն. օրինակ՝* Ուրբաթ օրը քեռի Քուչին՝ Ոստից առաջ՝ բաց-բաց կունին Թափ-թափ տալով՝ ծանր ու մեծ Ոստա կատվի շեմքում կանգնեց: Քու թանկագին

խաբեր համար Ուրբաթ օրը համեցեք տար (*Թ., «Շունն ու կատուն»*)։ *Շաբաթ օրը* նա վերադարձավ քաղաքից: Բայց այժմ ասվում է *նաև*՝ Ուրբաթ, ցերեկվա ժամը տասներկուսին տեղի կունենա... (*ԳՍԹ, I, 14*)։ Շաբաթ, ցերեկը եկեք մեզ մոտ *և այլն*։

§ *903. Մնացած շաբաթանունները, եղանակների անունները.* գիշեր, ցերեկ, իրիկուն, առավոտ *կարող են կիրառվել և որոշող բառերով և առանց դրանց. օրինակ*՝ Եվ կատարեց անցյալ *կիրակի* (*Շիրվ., IX, 204*)։ *Երկուշաբթի* կվերադառնամ գյուղից: *Իրիկունը* Գիքորը կուչ էր եկել խոհանոցում (*Թ., III, 43*)։ Ամառս կլինի (*ԴԴՎ, 222*)։ Բա չես ասիլ՝ էսպես, էսպես. *Ամառն* ամբողջ, ուրախ, առողջ, Պայծառ ու տաք արևի տակ Կինս աշխույժ սազ էր ածում... Որ *ամառը* ծույլ պտտի, *Ձմեռը* գա նստի ուտի (*Թ., I, 342—343*)։ Միշտ *առավոտ* ու *իրիկուն* Ջեն էր ածում մարիկ կկուն (*Նույն տեղում, 596*)։ Ամբողջ *ամառը* առանց տաքիլեք պտիտ եմ գալի էս ձորի միջին (*Թ., «Հառաչանք»*)։ *Մի առավոտ* երգեցին ծխնելույզները (*Զե, 25*)։ *Մի առավոտ էլ* վեր կացա, տեսնեմ տանեցիք տխուր են (*Թ., III, 66*)։ *Մի գարնան իրիկուն* դռանը նստած զրույց էինք անում (*Նույն տեղում, 72*)։ *Ամեն գարուն* ձնծաղիկները երևալուն պես գալիս էին արագիլները (*Իսե, 279*)։ *Առավոտ* այցելության եկան (*Շիրվ., V, 208*)։ Եվ փոքրիկ ու փայլուն ավտոն փափուկ անիվների վրա *մի արև առավոտ* սահեց քաղաքի փողոցով (*ԱԲԵ, 393*)։ *Մի առավոտ* էլ Եփրեմն եկավ (*Նույն տեղում, 466*)։ *Աշունքն* ուզում եմ Բաքու գնամ (*Նույն տեղում, 490*)։ Ինչքան ծիծաղեցին *էն գիշեր* (*Թ., III, 89*)։ *Գիշերն* էս տեսակ տեղերում անսովոր մարդը չի կարողանում քնել (*Թ., «Եղջերուն»*)։ Եվ ինչ քաղցր էր, երբ *առավոտները* նա ծլվլում էր մեր երդիկին (*Թ., «Մայրը»*)։ Այնուհետև իր նամուսից Աղջիկը՝ մերկ փախած լույսից, *Ցերեկները* դեսդեն քաշում. *Գիշերն* էր միշտ մթնում թռչում (*Թ., I, 271*)։

§ *904. Մասամբ ժամանակի պարագա, մասամբ ժամանակի տևողության չափ են արտահայտում* զոր-գիշեր, գիշեր ու զոր, լուսելուս, գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ *բառերը, որոնք կիրառվում են առանց որոշող բառերի և հոդի. օրինակ*՝ *Ամառ-ձմեռ* վրայից չէր հանում (*ԱԲԵ. 450*)։ Գիշեր ու ցերեկ կգնաս ծառայելու օտար աստվածների (*Թ., III, 460*)։ Որ *գիշեր-ցերեկ* ինձ սիրո մասին արտաքուխ մի երգ քաղցրաձայն հնչեր (*Իե, 177*)։ Բայց *օր ու գիշեր* անքուն ոտքի վրա, հաց էին տանում կռվողներին (*Նույն տեղում, 191*)։

Բայց չէ որ *գիշեր-ցերեկ* էիր անում *(ԴԴՎ, 350)*։ *Զոր ու գիշեր* կուլա, ֆուն-դադար չունի *(ԻՇ, 43)*։ *Գիշեր ու զոր* Կերթա, կերթա *(Նույն տեղում, 58)*։ *Լուսելուս* ընկերների հետ խմում է *(ՌՊԵ, 594)*։

Ծանոթություն 1. Գարուն, ամառ, աշուն, ձմեռ *բառերը հայցական հոլովով ժամանակի պարագա են դառնում խոսակցական լեզվում, որից անցել են նաև գրականին։ Մասամբ այդ նույն բնույթի են* առավոտ, երեկո: *Հիշյալ բառերը ժամանակի պարագայի կիրառությամբ տրականով են հանդես գալիս, այսինքն՝ լինում են՝* գարնանը, ամռանը, աշնանը, ձմռանը, առավոտյան, երեկոյան: *Համեմատի՛ր.* Հրես տես, պսակվելու եմ էս *աշունքը* *(ԱԲԵ, 463)*։ Ձմեռն ուսումնարանում այնքան բան չի կարող սովորել երեխան, ինչքան *ամառը* դաշտում *(ՂԱԵ, 95)*։ Բա իմ երեխեքը *ձմեռն* ում հույսին եմ թողում *(ԱԲԵ, 475)*։

Ծանոթություն 2. Առավոտյան, երեկոյան *ձևերը մակբայական նշանակություն են ստացել*։

Ծանոթություն 3. օր *բառը հոգնակի թվով և ս ցուցական հոդով արտահայտում է մոտակա մի քանի օրերը, որոնք կարող են և արդեն անցած լինել և արտահայտեն գալիք մոտակա օրերը։ Այդ կախված է բայ-ստորոգյալի արտահայտած ժամանակից. օրինակ՝ օրերս* Մոսկվայում և Թեհրանում կարծիքների փոխանակություն տեղի ունեցավ *(ՍՀ, 1956, № 95)*։ *Եթե ստորոգյալը լիներ* տեղի կունենա, *այն ժամանակ կհասկացվեր գալիք մի քանի օրը*։

§ *905*. Տարի, օր, գիշեր, ժամ, ամիս, շաբաթ *բառերի հոգնակի հայցականը անորոշ ձևով ավելի շատ արտահայտում է ժամանակի տևողության չափն ու քանակը, քան թե ժամանակը. օրինակ՝* Կռիվը *օրեր* տևեց *(ԻսԵ, 191)*։ Էսպես երկար *տարիներ ժողովուրդը տառապեց* *(ՉԸԵ, 31)*։ Ինչպես է արդյոք ձեր բարձրությունը այսքան շատ *օրեր* *(Շեքս., I, 50)*։ Մինչ Անահիտը *ժամեր շարունակ* միգամած հայացքը սուզում էր հեռու *(ԴԴՎ, 373)*։

§ *906*. Ամառ, ձմեռ, երեկո, առավոտ, ցերեկ, գիշեր *բառերի հոգնակի հայցականը հոդով ցույց է տալիս այնպիսի ժամանակ, որ նշում է սովորույթը, պարբերաբար միևնույն ժամանակում նույն գործողության կրկնումը։ Համեմատի՛ր.* Ձմեռները մեզանում շատ վտանգավոր է մենակ ճանապարհորդել *(Թ., III, 102)*։ Դատապարտված եմ որոշ ժամանակ գիշերը շրջել և *ցերեկները* փակված

ծոմ պահել կրակների մեջ (*Շեքս., I, 24*)։ Սմբատը *ձմեռները* ուսումնարան էր գնում, *ամառներն* այգին (*ՊՊ, I, 366*)։

§ *907*. Անգամ *բառը* այս, այն, այդ, ուրիշ, մյուս, հաջորդ, հետևյալ *և այլ որոշիչներով հաճախ ժամանակի պարագա է դառնում՝ քանակային թույլ արտահայտությամբ, որ հետևանք է նրա քանակային պարագայի կիրառության։ Համեմատիր.* Եվ *աղաչում էր նա* մեռած որդուն *մի անգամ* խոսի, աչքը բաց անի (*Թ., II, 66—67*)։ *Այս օրինակում* մի անգամ *չափ ու քանակի պարագա է, իսկ հետևյալ օրինակներում անպայման առկա է ժամանակային հարաբերությունը։* Մին էլ եկավ դարձյալ չկար, *էս անգամը* դիպան *իրար* (*Թ., I, 266*)։ *Այս անգամ*, կեսօրվա ուղիղ տասներկու ժամին, նրա կառքը կանգ առավ քաղաքի հարուստ տներից մեկի առաջ (*Շիրվ., II, 310*)։ *Մի անգամ* Նատալիան նրան «չեչոտ սատանա» անվանեց (*նույն տեղում, 322*)։ *Ուրիշ անգամ* չէին համարձակվի այսպես ազատ խոսել (*ԴԴՎ, 337*)։

§ *908*. *Թվական որոշիչներ ունեցող ժամանակային բառերը ավելի շուտ չափ ու քանակի պարագաներ են արտահայտում, քան թե ժամանակ են ցույց տալիս։ Ժամանակային պահը դրսևորվում է ժամանակային քանակի ձևով. օրինակ՝ Հազար տարի* կովեցին (*ՁԸԵ, 28*)։ *Երեք օր երեք գիշեր* մարդու չէիր հանդիպի (*ԱԲԵ, 453*)։

§ *909*. Առավոտից իրիկուն *կապակցությունը առաջացել է* առավոտից մինչև երեկո (*իրիկուն*) *կապական արտահայտություններից՝* մինչև *կապի անկումով, որ տեղի է ունեցել խոսվածքներում և անցել է նաև գրականությանը։ Այդ կապակցությունը այժմ ըմբռնվում է հայցական հոլովով ժամանակի պարագա, օրինակ՝* Ուրիշի հողն էր վարում *առավոտից-իրիկուն* (*ՁԸԵ, 27*)։

ժթ) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *910*. *Տրական հոլովով ժամանակի պարագան ավելի է տարածված մեր նոր գրական լեզվում։ Ամենայն հավանականությամբ դրանց մի մասը գրաբարի ժամանակային ներգոյականն է, որ, ինչպես հայտնի է, արտահայտվում է* ի *նախդիրով և ժամանակային բառի տրական հոլովով։ Հետագայում* ի *նախդիրը ընկնում է, և ժամանակային բառը մնում է իբրև աննախդիր տրական։ Բավական է, որ այս երևույթը գոյություն ունի լեզվում, դրանից հետո նույնի նմանությամբ ժամանակային այլևայլ բառեր իբրև պարագա կիրառվում են տրական հոլովով. և ոչ միայն ժամանակային, այլև անուղ-*

դակի կերպով ժամանակ արտահայտող ուրիշ բառեր նույն կանոնով ժամանակի պարագա են դառնում միայն տրական հոլովով։

§ *911. Ժամանակային բառերից միայն տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում*՝ լուսաբաց, արշալույս, կեսօր, միջօրե, մայրամուտ, ճաշ, վերջալույս, իրիկնապահ, լուսադեմ, ծագ, լուսածագ, իրիկնաժամ, արևածագ, ճգնաժամ, մթնշաղ, աղջամուղջ, արևամուտ *և մի քանի ուրիշ բառեր. օրինակ*՝ Եթե *լուսադեմին* մառախուղ է լինում, ապա ցերեկով ինչ եղանակ պիտի լինի (*ԱԲԵ, 452*)։ Մեկ էլ *լուսաբացին* գալիս է (*նույն տեղում, 454*)։ Հին օրերի *վերջալույսին, Արշալույսին* նոր կյանքի երգենք սրտանց ու միասին երգը հանուր բերկրանքի (*Թ., I, 196*)։ Այս *ճգնաժամին* մեր հովվապետի մահը ծանրանում էր սրտիս (*Թ., V, 50*)։ *Էգուց, ծեգը ծեգին* եկած ճանապարհով ետ կդառնաս (*ՄԲԵ, 481*)։ Եվ նորից կանուխ, *առավոտ ծեգին* մենք ճամփա ընկանք անխոնջ ու համառ (*ՉԸԵ, 6*)։ *Կեսօրին* թատրոնի առաջ չտեսնված բազմություն էր հավաքվել (*ԳՍԹ, I, 12*)։ Առաջարկում էր նրան *կեսօրին* գյուղը լինել (*Անթ., 346*)։ *Իրիկնաժամին* փշերն օրորող հովի պես թեթև մի ուրու անցավ (*Տերյան*)։ *Իրիկնապահին* նրան գտան մի խոր անտառում (*Թ., III, 79*)։ *Լուսաբացին* Արսենը դուրս եկավ դաշտ (*Քոչար, 37*)։ *Իրիկնադեմին* Զվարթենք և բոլոր ուխտավորները քաշվեցին (*ԴԴ, II, 157*)։ Մի օր *իրիկնադեմին* ես գնացի Բաղամովների տունը (*Շիրվ., I, 199*)։ *Երեկոյան մայրամուտին* հասանք Ազոխ (*ՎՓՀՀ, 76*)։ *Լուսադեմին* տղերքը վերադարձան (*Թ., III, 70*). *Իրիկնապահերին* իր ընկերների հետ շարվում էին մի երկար ձողի վրա (*նույն տեղում, 72*)։ *Արշալույսին* երևացին Անիի ավերակները (*Թ., V, 268*)։ Գառների հետ *լուսածագին* եկա սարը, չան աղջիկ (*Իսե, 6*)։ Արևը կիզող էր ինչպես *միջօրեին* (*Իս., III, 32*)։ Քեզ... նվիրել ցանկացա բազում տարիների իմ վաստակը իմ օրերի *իրիկնամուտին* (*ՎՓՀՀ, 1*)։ *Լուսաբացին* ցողը սառչում էր, դառնում եղյամ (*ԱԲԵ, 414*)։ *Գարնանամուտին* Ունանը սանդուղքը տեղափոխում էր սրահից բակ (*նույն տեղում, 431*)։

Ծանոթություն. Այս բառերից մի քանիսի իբրև ժամանակի պարագա հայցական հոլովով կիրառությունը բարբառային բնույթ է կրում և այժմ հնացած պետք է համարել։ Համեմատի՛ր. Մի *իրիկնադեմ* Ունանես բիձու դռան գերաններ-րի վրա նստոտած զրույց էինք անում (*Թ., III, 62*)։ Մի *իրիկնադեմ* վրանում թիկն տված նա զրույց էր անում (*նույն*

տեղում, 68)։ Իսկ *իրիկնադեմ* չիրիդ էր նշանակված *(նույն տեղում, 30)*։

§ *912. Ամսանունները իբրև ժամանակի պարագա միայն տրականով են կիրառվում. օրինակ՝* Անդրկովկասի սովետականացումից հետո, 1926 թվականին, *սեպտեմբերին*, առաջին անգամ Եվրոպայից դառնում էի հայրենիք *(Իսճ, 293)*։ 1906 թվին, ամառը. *հուլիսին*, գնացի Դսեղ գյուղը *(նույն տեղում, 366)*։ Իսկ Ձոլայի անյունը *հունիսին կանցրնեն* պանթեոն *(Շիրվ., IX, 297)*։ Մի *սեպտեմբերի* մեր գյուղացի ոռսկան Օսեփը ինձ գիշերակաց ոռսի տարավ Եղնուտի կիրճը *(Թ., III, 74)*։

§ *913.* Գարուն, ամառ, աշուն, ձմեռ *բառերը գրական բարձր ոճով գրվածքների մեջ ժամանակի պարագա են դառնում տրական հոլովով, իսկ ավելի ժողովրդական ոճով գրված երկերում հավասարապես կիրառվում են թե՛ հայցականը, թե՛ տրականը. իսկ դրանցից էլ* աշուն և գարուն *բառերը առանց որոշող բառերի հայցականով սահմանափակ են կիրառվում՝* ամառ և ձմեռ *բառերի համեմատությամբ։ Օրինակներ.* Ով չի սիրել քեզ ամբողջ սրտով իր կյանքի գարունքին *(Մ. Գորկի, V, 596)*։ *Գարունքին* ամեն ինչ նոր է ծլում *(ՂԱճ, 93)*։ Խորը *աշունքին* Լոռու սարերով անց կենալիս մի գյուղում մութը վրա հասավ *(Թ., III, 98)*։ Նրանք *գարնանը* գալիս էին հողերը հերկում, սերմանում, ամառվա արևի տակ չարաչար աշխատում և ուշ *աշնանը* վերադառնում էին իրենց երկիրը *(Իս., III, 123)*։ Ուրիշ վարդեր կշողշողան *գարունքին* *(Իսճ, 44)*։ Ծիլ ու ճյուղս գարնան չորացան *(նույն տեղում, 26)*։ 1907 թվականի *աշնանը* Ղ. Աղայանին, Հովհ. Թումանյանին և ինձ ճաշի հրավիրեց *(նույն տեղում, 370)*։ *Գարնանը* և խորը *աշունքին* Ծմակի խաչին երկու շալակ մորթի էր բերում: *Գարնանը* գետը հորդանում էր *(ԱԲճ, 306, 452)*։

§ *914. Տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում նաև ամսաթվերն ու տարեթվերը, թվականով արտահայտվող ժամանակային բառերը. օրինակ՝* 1826 *թվականին* բացվեց Երևանի պատերազմը *(Թ., III, 25)*։ 1870 *թվականին* ես Վարշավ էի գնացել *(ՌՊճ, 420)*։ 1898 *թվին* նոր էր բացվել Թիֆլիսից Կարս գնացող երկաթուղին *(Թ., III, 62)*։ 1913 *թվականին* Բերա-Պալասի սրահներից մեկում դեմս ցցվեց Նշան էֆենդին *(ՎՓՀՀ, 313)*։ Երեկոյան ժամը *10-ին* Օլեն ...աղջիկ ծնեց *(Թ., V, 48)*։ Թումանյանը երկրորդ անգամ ձերբակալվում է 1911 թվի նոյեմբերի *7-ին* Թիֆ-

լսում (Թ., V, 349)։ Նոյեմբերի *19-ին* հազիվ զարթնել էինք (Շիրվ., V, 211)։ Ուրբաթ ցերեկվա ժամը *տասներկուսին* տեղի կունենա դոկտոր Շամս Ազադի դասախոսությունը (ԳՍԹ, I, 14)։ Եվ ահա տասերկու *թվին* ...առաջին անգամ... այնտեղ համբույրս տվի քեզ (ՉԸԵ, 46)։ Բարդուսը թուրքերը գրավել են երեկ ցերեկվա ժամը *երեքին* (Շիրվ., V, 289)։

Ծանոթություն. Մի քանի գրողներ օտարաբանությամբ օրվա ժամը արտահայտում էին հետևյալ ձևով, որ այժմ վերացված է. Գնացի առավոտյան *12-ժամին* (Շիրվ., I, 172)։ Այս երեկո *յոթն ժամին* ինձ մոտ անցնել (Ր., I, 149)։ Գիշերվա ճիշտ *տասներկու ժամին* Լազարյանների փողոցը մտան ...կառքերը (Մուր., I, 195)։ Որոշել էինք ճանապարհ ընկնել ոչ ուշ քան *ութ ժամին* (Շիրվ., V, 216)։ *Նույնիսկ ուղղականը արտահայտվում էր միևնույն շարադասությամբ.* Գիշերվա երկու, թե երեք ժամն էր (Շիրվ., III, 404)։

§ *915.* Առավոտ, երեկո, օր *բառերի եզակի տրականը իբրև ժամանակի պարագա այնքան էլ սովորական չէ։ Համեմատի՛ր.* Ես շարունակում էի ամեն առավոտ վաղ գնալ մագազին և *երեկոյին* վերադառնալ տուն (Շիրվ., I, 49)։ Իմ հոժար կամքով իմ վերջին *օրին* Այն էլ տալիս եմ մեր մայր աթոռին (Թ., I, 260)։ Հայտնել մյուս *օրին* (Հյուս., 1858, 164, 241)։ Որոնցից ամեն մեկն իր տեսքն ուներ և բոլորը միասին ընդհանուր սովորույթ՝ *շոգ օրին* տուն վազելու (ԱԲԵ, 409)։ *Երեկոյին* բոլոր քաղվորները մի-մի քաղլակ խաղողով լցրին (ՂԱԵ, 101)։ Միևնույն *երեկոյին* Պետրոսենց Գայոյի տանը պատրաստություն կար (ՊՊ, II, 96)։

Օր, գիշեր *և* երեկո *բառերի հոգնակին իբրև ժամանակի պարագա՝ տրական հոլովով սովորական է, ինչպես որ սովորական է* գիշեր *բառի եզակի տրականը. օրինակ՝* Նա չէր սխալվում նույնիսկ այնպիսի *օրերին* (Ընտ. էջեր, 656)։ Իշխանությունը նույն *օրերին* արգելեց թուրքերին (Շիրվ., V, 428)։ Մանկության *օրերին* խաղացել եմ նրա հետ (Իս., III, 173)։ Այդպիսի *երեկոներին* ես փախչում էի տուն։ Լուսին *երեկոներին* չէի դուրս գալիս փողոց (Շիրվ., I, 194)։ Արձակուրդի վերջին *օրերին* Եվրոպայից եկավ հանգստանալու Դանիել Վարուժանը (ՎՓՀՀ, 78)։ Թեև մայիսի առաջին *օրերին* սկսած են (ՌՊԵ, 429)։ Այն լի *օրերին* իր մտքով երբեք չէր անցնում այսօրվա օրը (ԱԲԵ, 393)։ Միայն Իվան Բեյն էր կես *գի-*

չերներին արքուն պանակի պես հսկում քնած քաղաքին *(ԱԲԵ, 401)*։ Այդ *օրերին* մի քանի տասնյակ ձիեր կապված էին խանութի առաջ *(նույն տեղում, 474)*։

Ծանոթություն 1. Առավոտյան, երեկոյան *ձևերը ունեն մակբայական արժեք և իբրև այդպիսիք հաճախ են կիրառվում ժամանակի պարագայի պաշտոնով. օրինակ՝* Այդ առավոտ *երեկոյան* Սոփին գնաց *(Մուր., IV, 17)*։ Նույն օրը *երեկոյան* նրանք նրավիրված էին մի ծանոթ բնտանիք բեյի *(Շիրվ., 226)*։ Առավոտը *բառի հոգնակին իբրև ժամանակի պարագա հայցականով է կիրառվում (§ 903)*։

Ծանոթություն 2. Գիշեր, օր, երեկո *բառերի տրականը իբրև ժամանակի պարագա առանց որոշող բառի սովորական չէ. ասվում է՝* կես գիշերին, մութ գիշերին, լուսնյակ գիշերին *և այլն.* խաղաղ երեկոներին, այդ օրերին *և այլն*։ Ձմռան երկար *գիշերներին* Իվան բեյը երկյուղ էր զգում *(ԱԲԵ, 402)*։ Տերերը էլ անձրև *օրերին* բրչվում էին *(նույն տեղում, 408)*։ Նա պատմում էր ամեն տեղ, չաղացում ձմեռվա երկար *գիշերներին (նույն տեղում, 452)*։ Ես մթնկա *գիշերին* ծորեռում հազար ան *(նույն տեղում, 454)*։

§ *916.* Ժամ, ռոպե, վայրկյան *բառերը ժամանակի պարագա են դառնում տրական հոլովով, բայց ոչ առանց որոշող բառի. օրինակ՝* Գիժ մոծակի պարի *ժամին* Զարկեց հանկարծ աշնան քամին *(Թ., I, 341)*։ Եվ աղջոք մեջը մարդ կա այս *ժամին (ԴԴ, II, 292)*։ Իմ կյանքի վճռական *ռոպեներին* ճակատագրական է եղել *(ՎՓՀՀ, 89)*։ Հայտնվեց հետևյալ *վայրկյանին*։ Ինչ ասել կուզե, որ ես այնտեղ չէի լինիլ այս *ռոպեիս (ՌՊԵ, 368)*։ Այս *ռոպեիս* ինքս էի ազգամ գալ *(Նար., III, 469)*։ Ներկայացման առաջին *ռոպեներին* հանդիսատեսը իմ բշնամին է *(ՎՓՀՀ, 34)*։ Գիշերվա մի *ժամին* դուրս եկա դաշտ գնալ *(Թ., III, 77)*։ Վտանգի *ռոպեին* մարդս հնարագետ է դառնում *(ԳՄԵ, 331)*։ Մարդ այստեղ ամաչում է, երբ չասենք ափսոսում, առավոտյան զով *ժամերին* քնին նվիրվի *(Մուր., II, 30)*։

§ *917. Տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում* ժամանակ *և* ամիս *բառերը, ըստ որում* ժամանակ *բառը կիրառվում է նաև առանց որոշող բառի, իսկ ամիս՝ միայն որոշող բառով. օրինակ՝ ժամանակին* կիմանաս *(Շիրվ., VII, 273)*։ *Այդ ժամանակներին Էղմոնդ Քինը արդեն հանգչել էր Թայմզի ափերում (ՎՓՀՀ,*

209)։ Այդ *ամիսներին* էր նույնպես, որ դպրոցում տրված ներկայացումների գլխավոր դերասանը դարձա *(նույն տեղում, 99)*։

§ *918. Տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում* պահ, միջոց *բառերը. օրինակ՝* Այդ *միջոցին* բարձրացավ հանկարծ մի սաստանի քամի *(Իսб, 308)*։ Ուրախության այդ թունդ *միջոցին* ծերունի Մեհրաբը վերցրեց գինով լիքը հազարփեշեն *(Թ., III, 32)*։ Լուր էր տարածվել, թե պարտեզիս մեջ քնած *միջոցիս* օձ է ինձ խայթել *(Շեքս., I, 246)*։ Առավոտ *պահին* դալար դաշտերում իմ մանկանս հետ պտույտ եմ անում *(Իսб, 64)*։ Երեկոյան, տանը ընթրիքի *պահին*, երբ ցույց տվի նկարը ծնողներիս, տեսա, որ ճանաչում էին նրան *(ՎՓՀՀ, 62)*։ Մեկնելու *պահին* մի անակնկալ դժվարություն ցցվեց առաջս *(նույն տեղում, 219)*։ *Համեմատի՛ր նաև՝* Մի օր էլ *դասամիջոցին*, գաղտնի կարդաց ինձ անհուն գիշերներին գրած մի ոտանավոր *(նույն տեղում, 52)*։ Այդ ճանապարհորդության *միջոցին* Սիրանույշն ամուսնանում է մի ջութակահար իտալացու հետ *(Զմշկյան, 167)*։

§ *919. Բացի ժամանակային բառերից, ժամանակի պարագա են դառնում նաև ոչ ժամանակային մի շարք բառեր։ Դրանց մեջ առանձնապես պետք է նշել այս կամ այն չափով գործողություն արտահայտող գոյականները, որոնց գործողության ժամանակը անուղղակի կերպով ցույց է տալիս նաև այն ժամանակը, երբ կատարվում է տվյալ նախադասության ստորոգյալի գործողությունը։ Այսպիսի գոյականներ ժամանակի պարագաներ են դարձել մի քանի ճանապարհով։ Դրանցից մի մասը կարող էր լինել որևէ ժամանակային բառի համար հատկացուցիչ. հետագայում, երբ հատկացյալը զեղչվում է, հատկացուցիչը իր վրա է վերցնում հատկացյալի պարագայական պաշտոնը. օրինակ՝ փոխանակ ասելու՝* Քո *կանչի ժամանակ* ես եկա, *ասվում է՝* Քո *կանչին* ես եկա: *Այս դեպքում սեռականով հատկացուցիչը հոդավորվում է և հետագայում մտածվում է իբրև տրական։*

Հնարավոր է, որ հիշյալ գործողության բառերը եղած լինեն կապերի խնդիրներ և նախապես կապի հետ միասին արտահայտած լինեն ժամանակի պարագան։ Հետագայում կապը զեղչվում է և կապի խնդիրը միայնակ է դրսևորում տեղի պարագայի պաշտոնը։

Գործողություն արտահայտող գոյականների ժամանակի պարագա դառնալու մյուս միջոցը ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների վերածումն է դարձվածքային կապակցության. օրինակ՝ Մնաս բարևիս զավակներուս նվերներ տվավ

(Իս., III, 322)։ Մնաս բարևիս *ձևը առաջացել է*՝ մնաս բարև ասելու ժամանակ, մնաս բարևիս վրա, մնաս բարևիս ժամանակ, *որոնք էլ անշուշտ հետևանք են*՝ Երբ մնաս բարև էի ասում *(անում)* *նախադասության։ Ահա մի քանի օրինակներ.* Բայց ինչ էր պատանել իր *բացակայությանը* *(Թ., III, 236)*։ Ահա այս բոլոր բարեկամության *ներկայությանը* երդվում եմ հենց այդ սիրուն աչքերովդ *(Շեքս., I, 57)*։ Ես պատշաճ համարեցի հրավիրել ձեզ պալատ արքայի պաշտոնյաների *ներկայության* *(ԴԴՎ, 60)*։ Եկել է կեղեքելու ծերունու սիրտը իր վերջին *շունչին* *(Թ., IV, 24)*։ Կարող է դառնալ մի չքնաղ ծաղիկ հաջորդ *համդիպման* *(Շեքս., I, 436)*։ Լույսը բացվեց երրորդ *կանչին* *(Թ., I, 221)*։ Յուրաքանչյուրն իր հատուկ փառավոր պատմությունն ուներ իրավունքով ձեռք բերած Բեյրութովի *պատերազմին*, Շամիլի և Վարշավայի *կռիվներին* *(Իս., III, 304)*։ *Դագարին* զինվորը ծխախոտ է փաթաթում *(Անթ., 508)*։ Ապստամբության առաջին իսկ *նշանին* կոչնչացնես պարսից զորագունդը *(ԴԴՎ, 336)*։

Ծանոթություն. Այստեղ որոշ բառեր ժամանակը թույլ են արտահայտում. օրինակ՝ ներկայության, նշանին, *որոնք դառնում են միաժամանակություն և հարակից գործողություն, կամ միասնական գործողություն. այս երևույթը ավելի պարզ է դառնում, երբ տրականը փոխարկում ենք գործիականի. օրինակ՝* Ինչպես ես անում հյուրերի *ներկայությամբ* *(Ծիրվ., VI, 342)*։ *Տվյալ իմաստը արտահայտվում է նաև* վրա *կապով. օրինակ՝ Զանգի վրա* ներս մտավ: *Չնայած սրան, այնուամենայնիվ այստեղ հիմնականը ժամանակային հարաբերությունն է. Համեմատի՛ր.* Սովորություն էր ամեն օր ցերեկվա *զբոսանքին* երկուական խնձոր տալ աշակերտներին *(ՎՓՀՀ, 86)*։ Կովի երկրորդ *բառաչին* հորթը պոչը ցցած դուրս եկավ պարտեզից *(ԱԲԵ, 437)*։

§ 920. *Ժամանակի պարագա են դառնում նաև բնության երևույթներ արտահայտող բառերի տրական հոլովները. այդ բառերի տրական ձևերը յուրահատուկ պարագայական գունավորում են ստացել. դրանցից հիշատակելի են՝* ցրտին, շոգին, տաքին, զովին, հովին, ձյանը, անձրևին, մութին *(մթին)*, եղանակին, քամուն, լույսին, ամպին, արևին, տապին *և մի քանի այլ, այս կարգի բառաձևեր. օրինակ՝* Աշնան *ամպին* ու *զամպին* Մոլոր նստած իր նրմբին, Լոռու հանդում մի արտուտ Սպասում է իմ նամփին *(Թ., I,*

208)։ Ուզում էր իրիկվա *կիսամութին* մի անգամ էլ տեսնել այն *(ԱԲե, 397)*։ Կանգնած է դեռ ու *շոգին*, Հով է տալիս մշակին *(Թ., «Մարոն»)*։ Լիլիթը փախավ գիշերվա *մթին* *(Իսե, 318)*։ Տարվա այդ *եղանակին* Վենետիկը հիշեցնում էր մի լալկան սգավոր կնոջ *(ՎՓՀՀ, 82)*։ Գլոր-գլոր իջնում էր ձորագետը, գարնանը՝ հեղեղների աղմուկով. ամառվա *տապին*՝ զով կոհակներով և աշնանը՝ դեղնակարմիր տերևներով *(ԱԲե, 275)*։— Չէ, ով է լսել, որ տարու էս *եղանակին*, ձմեռվա կեսին կկուն ձեն ածի *(Թ., «Տերն ու ծառան»)*։ Ամառվա *շոգին* գյուղ եկավ Տիտոսի մանկության ընկերը *(ԱԲե, 412)*։

§ *921*. *Տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում տարվա որոշ ժամանակամիջոցում կատարվող, տեղի ունեցող որոշակի տևական ժամանակ պահանջող աշխատանքների, գործողությունների, տոների, դադարների անուններ, որոնցով նշվում է տարվա այդ ժամանակաշրջանի անունը։ Այդպիսի անուններից են՝* բերքահավաքին, կալին, հնձին, տոներին, արձակուրդներին, քաղին, պահքին, զատկին, *ապա*՝ հարսանիքին, նշանդրեքին, ծաղկազարդին, վարդավառին *և այլն. օրինակ*՝ *Զատկին* խաղանք, քեֆ անենք *(ՊՊ, I, 40)*։ *Համբարձմանն* էլ կխնդրեմ *(նույն տեղում, 87)*։ Ծանր ու բարակ միտք անելով էրթում էր Սոսը սուրբ խաչի *պասին* դեպի իր փեսի տունը *(նույն տեղում, 179)*։ *Բարիկենդանին* ով է առանց քեֆի մնում *(նույն տեղում, 345)*։ *Կաղանդին* Մովրովին ու քոմակչուն գնացած գինի արաղն իմ կարասիցն ու տկիցն էր *(նույն տեղում, 426)*։ Մի *պատարագի* երեցին հարցնում են *(ԱԲե, 313)*։

§ *922*. *Տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում նաև* սկիզբ *և* վերջ *բառերի եզակին և հոգնակին. սրանց եզակի հայցականը, մանավանդ* սկիզբ *բառի համար անսովոր է։ Տրականին ավելի շուտ հաճախ փոխարինում է ներգոյականը։ Հոգնակին հավասարապես երեք հոլովներով կիրառվում է։ Համեմատի՛ր.* Տեր իմ, *վերջերս* շատ ապացույցներ տվել է *(Շեքս., I, 19)*։ Քսանչորս տարի առաջ ամառվա *վերջերին* ես մի անգամ եղել էի Իգդիրում *(Շիրվ., V, 208)*։ Գարնան *սկզբին* փող էր բաշխում և աշնանը փողի դիմաց վերցնում մսացու, բուրդ, ոչխար, պանիր *(ԱԲե, 470)*։ *Սկզբում* երգում է իրեն համար *(Թ., III, 95)*։ Լուրը նրա վրա *սկզբում* չազդեց *(նույն տեղում, 395)*։ *Վերջը* իմ սամծին կգա *(նույն տեղում, 480)*։ Ափսոս մենք *վերջում* (*բնագրում վերջումը*) Հերիքնազի երեսին չնայեցանք *(ՊՊ, I, 378)*։ *Սկզբում* Հերիքնազը կարծես, թե նոր է սկսել *(նույն տեղում, 412)*։ Ձմեռվա *վերջերին* ամենի կերակուրը պակասում է *(ՂԱե, 92)*։ Դեռ *աքլորականչին* ամեն

մարդ շուտ վեր է կացել *(ՊՊ, I, 347)*։ Կենդանական մի հանույք էր ապրում Պետին գարնան *սկզբին (ԱԲԵ, 31)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Իբրև ժամանակի պարագա սկիզբ *և* վերջ *բառերի տրականը առանց ժամանակային բառերի հատկացուցիչի չի կիրառվում, իսկ հայցականը, ներգոյականը կիրառվում են նաև առանց դրանց. ասվում է՝* վերջում եկավ, վերջերս հաճախ է գնում, սկզբում չխոսեց, սկզբներում էլի լավ էր *և այլն, սակայն ավելի հաճախ ասվում է՝ տարվա* վերջին, սկզբին, ամսվա սկզբներին, վերջերին *և այլն*։

ի) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *923. Բացառական հոլովով ժամանակի պարագան ցույց է տալիս ժամանակի սկզբնական պահը, այդ պահից սկսած մինչև մի որոշ ժամանակ տևող ժամանակամիջոցը և այն ժամանակը, որ ընկնում է բացառական հոլովով դրված բառի ցույց տված ժամանակից հետո*։

§ *924. Բացառական հոլովով ժամանակի պարագա են դառնում բոլոր ժամանակային բառերը. օրինակ՝* Քեզ հետ մտերիմ դառնալու *օրից զրկված* մնացի կյանքում *բոլորից (Թ., II, 90)*։

Գարունքից սկսում են սանատորիայի շինությունը *(Թ., V, 332)*։ Որքան բաներ կան, որ հարմար *ժամից* հարգի են դառնում *(Շեքս., I, 568)*։ Երանի նրան, ով մանուկ օրից վիշտն ու զրկանքն է համարել հանույք *(ՀՀԵ, 58)*։ Քսանհինգ տարի է անցել այդ *օրից (ԱնԹ., 298)*։ Լիլիթին տեսնելու *վայրկյանից* սիրտը լցված է մի հեշտալի ու քաղցր զգացմունքով *(Իսե, 314)*։ Դատապարտված ենք մահվան այս *օրից (ՀՀԵ, 127)*։ Իմ զրկանքը կվերջանա այսօրվանից, Քոնր. թշվառ, սկսվում է հենց *վաղվանից (նույն տեղում, 135)*։ Այդ *օրվանից* ես ենթարկվեցի տնային բանտարկության *(ԳՄԵ, 330)*։ Խույս տվավ դեպի մերձակա փողոցը՝ որոշելով այցելել նրանց *մի երկու ժամից (Մուր., IV, 12)*։

§ *925. Գոյականի ցույց տված ժամանակի հաջորդող բացառականով ժամանակի պարագան գալիս է խոսվածքներից և, թվում է, առաջացել է* հետո *կապի անկումով։ Այսպիսի տեղի պարագան ժամանակի սկզբնական մոմենտը չի նշում, այլ ցույց է տալիս մի անորոշ ժամանակ, որից հետո պետք է կատարվի գործողությունը. օրինակ՝* Պետք է բաժանվենք այն էլ քիչ *օրից (Շեքս., I, 58)*։ Մի

քանի *շաբաթից* պետք է ուղևորվեի Միլան *(ՎՓՀՀ, 99)։ Այսպես ասվում է՝* մի ժամից կգամ, երկու րոպեից կվերջացնեմ։ Որոշեց այցելել նրանց մի երկու ժամից *(Մուր., IV, 12)։* Այն *օրից* նրան չէր տեսել *(ԱԲԵ, 412)։* Մեկ կես *սհաթից* կգամ *(Փափ., 155)։* Գյուղի մոտիկ կանաչուտին *հասնելուց* հորթերը կանգ առան *(ԱԲԵ, 412)։*

§ *926.* Մանկուց, փոքրուց, մանկութ, վաղուց, հնուց *բառերը կորցրել են իրենց հոլովական նշանակությունը և այժմ դիտվում են իբրև մակբայներ (§ 898)։ Համեմատի՛ր. Հնուց անտի* կար այս ժողովրդի մեջ *(ԴԴՎ, 718)։* Ես քո հորն էլ եմ ճանաչում *փոքրուց (Թ., III, 58)։* Երազեցի շարունակ իմ կյանքի մեջ ես *մանկուց* ու մնացի միշտ մենակ պատրանքի մեջ ես *մանկուց (Թ., I, 190)։ Մանկութ* ընտրեցի ճամփորդական ցուպ *(Տ., I, 46)։*

§ *927. Բացառական հոլովով ժամանակի պարագա են դառնում նաև այնպիսի բառեր, որոնք ժամանակի հարաբերությունը համատեղում են այլ նշանակությունների հետ և հենց ժամանակային նշանակությամբ հաճախ են կիրառվում կամ առնչվում այդ նշանակության. օրինակ՝* Մանկության խաղերի *շրջանից* մի ընկեր ունեի *(Իս., III, 35)։ Սկզբից* ամաչկոտ դուրս եկան *(Անթ., 287)։* Նա *մանկությունից* զգում է ատելություն *(Շիրվ., VII, 337)։* Մեր տարբերությունը նկատելի է եղել դեռ փոքր *հասակից (ԳՍԹ, I, 132)։* Ուզում եմ օգոստոսի *սկզբից* դուրս գամ *(Թ., V, 188)։ Էն գլխից* սիրել և հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով *(Թ., IV, 98)։* Աղջիկը *երեխայությունից* նշանած լինի *(ըլի) (ՊՊ, I, 413)։*

§ *928. Բացառական հոլովով ժամանակի պարագա է դառնում նաև անորոշ դերբայը. հավանորեն այդ բացառականը կազմվել է անկատար դերբայից ժողովրդական ստուգաբանությամբ։ Մուրացանը ունի այսպիսի մի նախադասություն.* Քաղաք *վերադառնալուս* պիտի ընտրեր *(Մուր., I, 534)։ Այստեղ* վերադառնալուս *կարող է նշանակել իմ վերադառնալու ժամանակ և կարող է լինել* վերադառնալիս *ձևի մի փոփոխակը։ Հետագայում հեշտությամբ* ս-*ն փոխվում է* ց-*ի, և* վերադառնալուս *դառնում է* վերադառնալուց։ Ս-ն *կարող է* ց-*ի փոխվել նաև* իս-*ով ձևի մեջ։ Համեմատի՛ր.* Գործատան դուռը *բացվելից* մինչև փակվելը այդտեղ ներկա են *(ՊՊ, III, 204)։ Հենց այս* ց-*ով ձևերը այժմ ընդունվում են իբրև բացառականներ. օրինակ՝* Քիչ էր մնում, որ այս գովեստը *լսելուց* խելքս թռցնեի *(Մուր. IV, 292)։* Ինձ *տեսնելուց* նա բարձրացավ տեղից *(Մուր.,*

I, 534)։ Որպեսզի կրկին անգամ յուր եղբորից առաջարկություն *ստանալուց* այդ պակասության առարկությամբ ազատվեր նրանից *(Մուր., I, 238)*։ Ամեն իրիկուն նախիրը *գալուց* կովը դարբասի մոտ բառաչում է *(ԱԲԾ, 432)*։ Գործից *գալուց* ուզեց ասի, բայց փոշմանեց *(Նույն տեղում, 398)*։

իա) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ 929. *Գործիական հոլովով ժամանակի պարագան, ըստ Մ. Աբեղյանի, ցույց է տալիս սովորաբար անպատեհ, չնախատեսված ժամանակը, մոտավոր ժամանակը, պայմանավորված ժամանակը, այսինքն՝ պայմանաժամը, այն տևողությունը, որի ընթացքում լինում, կատարվում է որևէ գործողություն։ Սրան պետք է ավելացնել և՛ այն, որ ժամանակի գործիականով արտահայտվում է նաև հեռավոր, հեքիաթային ժամանակը։*

§ 930. *Գործիականով ժամանակի պարագա են դառնում ամենից առաջ ժամանակային բառերը. օրինակ՝* Ծղրիդը մի *ժամանակով* մարդ է եղել *(Թ., III, 94)*։ Վեց նահանգ սրա *օրով* ես կցեցի իմ իշխանության սահմաններին *(Անթ., 74)*։ Կես *ժամով* վաղ էի դուրս գալիս տանից *(Մուր., I, 524)*։ Փերիները սարի գլխին հավաքվեցին *գիշերով (Թ., II, 45)*։ Ցերեկով նա, եթե սրտնեղում էր *(ԱԲԾ, 403)*։ Ես ուզում եմ այնպես անել, որ դու *ժամանակով* օրինավոր մարդ դառնաս *(Շիրվ., I, 131)*։ *Ժամանակով* մի աղքատ մարդ կար *(Թ., III, 13)*։ *Ժամանակով* լինում են, չեն լինում, մի քույր ու մի ախպեր են լինում *(Թ., III, 162)*։ Էն, որ *գիշերով* չհու եմ փչում *(Թ., II, 53)*։ Նա ծնվեց խաղաղ *գիշերով (Թ., III, 459)*։

§ 931. *Ժողովրդախոսակցական ոճին հատուկ է եղանակ ցույց տվող, գործողության և՛ այնպիսի բառեր, որոնք առնչվում են ժամանակի հետ, իբրև ժամանակի պարագա՝ գործիականով արտահայտել. օրինակ՝* Եվ երազում եմ այն տեսությունը, որ լինելու է մի ուրիշ *կյանքով (Թ., I, 641)*։ Մարդիկ ուրախ թոն ու *ձյունով* Ձի են խաղում չափ տալի *(Թ., II, 70)*։ Հորս *կնունքով*, մորս *ծնունդով* վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով թրով, թվանքով որսի գնացինք *(Թ., III, 174)*։ *Արևով* կհասնես *(ԱԲԾ, 417)*։ *Լուսով* հացդ կեր, տեղդ մտի *(ԱԲԾ, 464)*։ Որ տավարը *մթնով* տանեն ու մինչև լուսանալը գյուղի մոտակա հանդերում կշտացնեն *(Նույն տեղում, 464)*։

Ծանոթություն. Օր, տարի, ժամ, ամիս, շաբաթ *բառերի հոգնակի գործիականը արտահայտում է ժամանակի անորոշ և*

երկար տևողությունը, որ որոշվում է նշված ժամանակային բառի մի քանի պատիկով. օրինակ՝ Եվ *օրերով* դարբասի կապը գցած էր մնում *(ԱԲԵ, 402)*։ Բայց թե ինչպես կարելի էր բացեիբաց *ժամերով* առանձնանալ *(ԴԴՎ, 33)*։ *Այս նշանակությունն ունեն նաև դրանց եզակիները. օրինակ՝* Քանի անգամ ես նրանց տանը *շաբթով, ամսով* կացել եմ *(ՂԱԵ, 466)*։ *Ամսով, տարով* տանը չէր կենում *(նույն տեղում, 472)*։ Ով *տարով* կմեծանար, մենք օրով էինք մեծանում *(նույն տեղում, 453)*։

իբ) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

§ *932. Ներգոյական հոլովով ժամանակի պարագան ցույց է տալիս այն ամբողջ ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է որևէ գործողություն՝ առանց ցույց տալու սկզբան և վախճանի պահերը։*

§ *933. Ժամանակի ներգոյականով կիրառվում են ոչ բոլոր ժամանակային բառերը։ Ներգոյականով չեն գործածվում* ամսանունները, շաբաթանունները (շաբաթում, շաբթում *վերաբերվում են ամբողջ շաբաթվան),* տարեթվերն *ու* ամսաթվերը, տոների անունները *և այլն։*

Բուն ժամանակի անունները՝ ժամանակ, դար, տարի, ամիս. շաբաթ, օր, ժամ, րոպե, վայրկյան, գիշեր *կիրառվում են ներգոյականով, սակայն համարյա միշտ որոշող բառերով (որոշիչ, հատկացուցիչ). օրինակ՝* Էս *դարում* Մըսր անհաղթ ու հզոր Մըսրա-Մելիքն էր նստած թագավոր *(Թ., «Սասունցի Դավիթ»)*։ Այս *ժամանակներում ամեն մի* քաջ տղամարդի համբավ ու գործ կայծակի արագությամբ տարածվում էր երկրե-երկիր, բերանե-բերան *(Թ., III, 28)*։ Այդ *րոպեում* հրճվում էր *(Ր., III, 420)*։ Դա իր *օրումը* լսած չէր լինիլ *(ՂԱԵ, 475)*։ 188... թվականի հունիս *ամսում* Վահան Սարյանը յուր ընկերակիցների հետ միասին ստացավ թեմական դպրանոցից ավարտման վկայականը *(Մուր., II, 157)*։ Ոչ մի բան նույն *րոպեներում* ինձ համար գոյություն չուներ *(Շիրվ., I, 179)*։ Չորրորդ *դարում*, երբ Հայաստանից շատ մանուկներ դիմում էին Աթենք՝ ուսում առնելու *(Ր., I, 177)*։ Այդ մի *րոպեում* Թինան ամբողջ էությամբ գնաց իր հայրենի ափերը *(ՎՓՀՀ, 418)*։ Ես եմ, դու ես, ես ու դու *Գիշերում* այս դյութական *(Տ., I, 175)*։

§ *934. Մի շարք բառեր, որոնք փոխաբերաբար ժամանակ են նշանակում, կամ հիմնականում առնչվում են ժամանակի հետ, ար-*

տահայտում են ժամանակի այս կամ այն մասը, ժամանակի պարագա են դառնում ներգոյական հոլովով։ Այդ բառերից կարելի է հիշատակել՝ սկիզբ, վերջ, ընթացք, կյանք, հասակ, տարիք, օր *(իմ օրում)*։

Սկզբում շատ նեղություն քաշեցին *(ԽՊԵ, 593)*։ Երկար տարիների *ընթացքում* ապաստարան էր գտել Մուրադյան Լիցեում *(ՎՓՀՀ, 102)*։ Խմբագիրն *սկզբում* չէր խառնվում *(Նար., I, 202)*։ Ես զարմացա, թե որքան առաջադիմել է այս քանի տարվա *ընթացքում (Թ., V, 267)*։ *Վերջերում* ես իմացա, թե Եվգենյան սուտ է ասում *(Շիրվ., I, 73)*։ Ծերության *հասակում* շատ օրեր քաղցած են անցկացնում *(նույն տեղում, 73)*։ *Համեմատի՛ր.* էս *հասակին* որ սա վախ չունի *(ԱԲԵ, 417)*։ Որ ձևացավ ամբողջ *կյանքում* Առաքինի, ազգասեր *(Թ., I, 256)*։ Իր *կյանքում* նա երբեք նման գումարների հետ չի խաղացել *(Անթ., 369)*։ Օրում՝ *կյանք նշանակությամբ պետք է հնացած համարել.* Իմ *օրում* այդպես ախորժակով ջուր չէի խմել: Թող չասեն, թե Սոսն իր *օրում* կաշառք է կերել: Գայլի փորն իր *օրում* չի կշտացել *(Մ. Աբեղյան, «Շարահյուսություն», 128)*։ Ոչ մի խնդություն տեսա իմ *օրում (Թ., «Հառաչանք»)*։ Նա հալածվում է ամեն *քայլում (Շիրվ., IX, 223)*։

իգ) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՊԵՐՈՎ

§ *935. Ժամանակի պարագա են դառնում նաև կապերը՝ իրենց խնդիրների հետ միասին և ցույց տալիս ժամանակային այն բոլոր հարաբերությունները, որոնք արտահայտվում են հոլովների միջոցով։ Կապերի և իրենց խնդիրների արտահայտած ժամանակային նրբությունները ավելի որոշակի են. ավելի բացահայտ են տարբերվում ժամանակային սկզբնական, վախճանի և կատարման պահերը։*

§ *936. Իրենց խնդիրներով ժամանակի պարագա են դառնում հետևյալ իսկական և անիսկական կապերը.* Անց, առ, առաջ, դեմ, դեն, ետ, ետև, ի, հար, հետե, հետո, մեջ, միջև, նախընթաց, պես, վրա:

§ *937.* Անց *կապը, հայցական խնդիր առնելով, դառնում է ժամանակի պարագա և ցույց է տալիս մի ժամանակ, որ սկսվում է խնդրի արտահայտած ժամանակի տևողության լրանալուց անմիջապես հետո. օրինակ*՝ Վերջապես երկու *տարի անց* կրկին վերադար-

ձա հայրենիք *(Իս., III, 47)։ Հինգ րոպե անց* ոչ մի կտոր չմնաց *(Զե, 417)։ Տասներկուսից տասնհինգ անց* այդ ժողովը բացվեց *(նույն տեղում, 298)։ Բացառական խնդրով ասվում է. Հինգից անց քառն րոպե* գնացքը ժամանեց։

§ *938. Առ կապը հայցական խնդրով ժամանակ բառի հետ նշանակում է մի անորոշ ժամանակ, որի ընթացքում կատարվում է մի գործողություն։ Սակայն* առ *կապը ժամանակ բառի հետ այժմ մի համակցություն է դարձել. օրինակ՝* Համբերի՛ր մի *առ ժամանակ (Մուր., IV, 199)։* Ես *առ ժամանակ* միայնակ կթողնեմ ձեզ *(նույն տեղում, 185)։* Եկա *առ ժամանակ* մնալու դիտավորությամբ. *այս գործողությամբ* առ *կապը իր խնդրով հանդերձ ավելի ժամանակի չափ ու քանակ է արտահայտում, քան իսկական ժամանակի պարագա։*

Առ *կապը իսկական ժամանակի պարագա է դառնում հատկապես ամսաթվերի, տարեթվերի և այլ ժամանակային համակցությունների հետ և ցույց է տալիս անցյալում սկսված մինչև իր խնդիրների ցույց տված սկզբնական վայրկյանը տևած ժամանակահատվածը. օրինակ՝ Առ քառնը օգոստոսի* պլանը կատարվել է ութսուն տոկոսով: Հրամանը ուժի մեջ է *առ հազար ինն հարյուր հիսուն թվականի հունվարի մեկը։ Առ 5-ը նոյեմբերի 1954 թվականի* կոլտնտեսությունները և սովխոզները ժամկետից շուտ 100,1 տոկոսով կատարեցին նացանատիկի մթերումների ու գնումների պետական պլանը *(ՍՀ, 54 թ., № 266)։*

§ *939.* Առաջ *կապը ժամանակային բառերի հայցական հոլովով ժամանակի պարագա է դառնում և ցույց է տալիս այնպիսի ժամանակ, որ ընկած է հիշյալ բառերի ցույց տված ժամանակից անմիջապես առաջ։ Այս դեպքում ժամանակային բառերը եզակի են լինում և ունենում են թվական որոշիչ. օրինակ՝* Մի *օր առաջ* քննում են նարցը *(ՆՋՀ, 414)։* Հասս բառտրոն ներկայացումից կես *ժամ առաջ (ՎՓՀՀ, 90)։* Երկու *տարի առաջ* մահացել է նրա կինը *(ՆՋՀ, 32)։*

Իսկ եթե ժամանակային բառերը եզակի են ու որոշիչ չունեն, կամ հոգնակի են, ապա ժամանակի պարագան ոչ թե նշանակում է ժամանակային բառերի ցույց տված ժամանակից անմիջապես ստույգ առաջ ընկած ժամանակը, այլ ընդհանրապես առաջ, շուտ, վաղ. օրինակ՝ Այդ պատճառով աշխատում ենք *ժամ առաջ* հասնել

գյուղը *(Մուր., IV, 66)։ Դարեր առաջ* կար բարձրաբերձ պարիսպներով մի դղյակ *(Հ. Հովհաննիսյան, Հատընտիր, 161)։*

Գործիական խնդրով առաջ *կապը իբրև ժամանակի պարագա այժմ հնացած է, ավելի ճիշտ, մեր լեզվում դա բարբառային ծագում ունի։ Համեմատի՛ր.* Վաղուց *ամսով առաջ* բունն էր մտել *(ԽԱ, III, 7)։ Մեկ Ամսով առաջ* էնպես էի կարծում *(ԽԱ, V, 159)։* Այդպես էր այդ քարաժայռը *դարերով,* անհիշելի շատ *դարերով առաջ (Ր., III, 243)։* Ուր *ժամով առաջ* ժողովվել էին Թիֆլիսի քահանաների մեծամասնությունը *(ՊՊ, III, 91)։*

Առաջ *կապը ժամանակի պարագա է դառնում նաև ոչ ժամանակային բառեր խնդիր ունենալով. այս դեպքում խնդիրը դրվում է բացառական հոլովով։ Այսպիսի ժամանակի պարագան ցույց է տալիս մի այնպիսի ժամանակ, որ ընկած է կապի խնդրի կատարած գործողության ժամանակից առաջ։ Այս դեպքում իսկապես կապի խնդիրը կամ գործողություն արտահայտող բառ է, կամ այնպիսի բառ է, որ ենթադրվում է, թե գործողություն է կատարել. օրինակ՝* Հեյ ագահ մարդ, հեյ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի քանիսն անցան քեզ պես, *քեզնից առաջ,* քո առաջ *(Թ., I, 211)։ Այստեղ* քեզանից առաջ *նշանակում է* քո ծնվելուց, քո ապրած ժամանակից առաջ: *Ես քեզանից առաջ,* այնտեղ կլինեմ *(Շեքս., I, 313)։* Ամեն մի *ասելուց* առաջ... *(նույն տեղում, 161)։* Այո, սակայն *մահիցս առաջ* կը ցանկամ Իսկությունը այդ արվեստի իմանալ *(Իս., II, 157)։ Ամենից առաջ* բացատրում էր *(ՆՋՀ, 194)։*

§ *940.* Դեմ *ժամանակային բառերի սեռական հոլովի հետ դառնում է ժամանակի պարագա և ցույց է տալիս այնպիսի ժամանակ, որ ընկնում է ժամանակային բառի արտահայտած ժամանակից քիչ առաջ, գրեթե այդ ժամանակի սկիզբը, նրա սկսման ժամանակամիջոցը. օրինակ՝* Մոլլան ելավ *կեսօրվա դեմ* Բարձր ու ոլոր մինարեն *(Իս., II, 165)։ Երեկոյան դեմ* բավական մեծ տարածություն նրանք փլել, հատակել էին *(Մուր., III, 466)։ Երեկոյան դեմ* եղբայրները լեռն անցան *(ՊՊ, III, 256)։ (Այս օրինակների մեջ* երեկոյան *սեռական հոլովի արժեք ունի)։*

§ *941.* Դեն *(դես, դեհ) բարբառային ծագում ունի. առնում է բացառական հոլովով խնդիր և դառնալով ժամանակի պարագա՝ ցույց է տալիս այն ժամանակը, որ ընկնում է խնդրի ցույց տված ժամանակից հետո՝ անմիջականորեն սկսվելով հենց այդ վայրկյանից. օրինակ՝* Մինչև այժմ մեր ժողովրդի սոսկալի վիճակի առջև

տեղի էինք տալիս ու լռում, բայց *սրանից դենը* լռելն այլևս հան-ցանք կլինի *(Թ., IV, 415)*։ *Հիմիկուց դեն* էլ չեմ ապրի Առանց կին ու գինի. *Հիմիկուց դեն* պիտի պաշտեմ վարդն ու աղջիկն ու գինին *(Իս., II, 192)*։

§ *942*. Եր, եւ *կապերը, ժամանակի պարագա դառնալով՝ իրենց խնդիրների հետ ցույց են տալիս այնպիսի ժամանակ, որ ընկնում է խնդրի ցույց տված ժամանակից հետո. օրինակ՝* Այդ *անելուց եր՝* եկ և ինձ զոհիր պատնեշի վրա *(Շեքս., I, 157)*։ Մի քառորդ *ժամից եր* նա արդեն կանգնած էր Փիլարյանի տան առաջ *(Մուր., IV, 12)*։ Մի երկու *օրից եռը* Համբոն գնում էր իրենց գյու-ղը *(Թ., III, 48)*։ Մի ժառանգ չունեմ իմ *անցման եւև (Թ., II, 103)*։ Փոքր Ասիո և Եգիպտոսի *տիրելեն եւև՝* անթիվ զորք եկավ, որ Պարսկաստան առնի *(ԽԱ, V, 85)*։

§ *943*. Ի *կապը մեծ մասամբ իր խնդիրների հետ կազմել է կայուն կապակցություններ. հատկապես այդ երևույթը նկատելի է հին բացառական հոլովով խնդիրների առնչությամբ։ Իբրև ժամա-նակի պարագա այդպիսի կապակցությունները ցույց են տալիս ժա-մանակի սկսման պահը և դրանից հետո ընկնող ժամանակը։ Դրանք էլ ժամանակի հետ մասամբ արտահայտում են նաև այլ հարաբե-րություններ. Համեմատի՛ր.* Կորցրին և սիրտ և քնքշություն, որ *ի ծնե* ունեին *(Թ., II, 154)*։ *Ի ծնե* այնքան անմիտ չէ *(Շեքս., I, 541)*։ Այդ որոշումները լինում են *ի ծնե և ի բնե (Թ., V, 173)*։ Կա-րող ես *ի վերջո* զղջալ *(ՆՋԱ, 37)*։ *Հայրս* գրոսաեր էր *ի բնե (Մուր., III, 37)*։ *(*Ի վերջո *նշանակում է վերջում)*։

Այս դրությունը այնքան է առաջ գնում, որ ի *կապը իր հին խնդրի հետ ստանում է մի կապի արժեք. օրինակ՝* ի վեր *ժամանա-կային կապ է, բացառական խնդրով դառնում է ժամանակի պա-րագա և ցույց է տալիս խնդրի արտահայտած ժամանակից հետո ընկնող, բայց չվերջացող ժամանակամիջոց. օրինակ՝* Ապրում են սիրով *երեխուց ի վեր (Թ., II, 12)*։ Տեր իմ, ձեզանից հիշատակներ ունիմ ստացած, որ *վաղուց ի վեր* ուզում եմ ետ տալ *(Շեքս., I, 50)*։ Եվ երիտասարդ *տարիքից ի վեր* այսպես է եղել *(նույն տե-ղում, 248)*։

Այսպես է նաև հայցական հոլովով. օրինակ՝ Ուր հարյուրավոր տարիներ *ի վեր* բոլոր պատերիս ոսկերքն են դիզված *(նույն տե-ղում, 479)*։

Համեմատի՛ր նաև *ժամանակի պարագայի հետևյալ կիրառու-թյունները. Եվ ի վերջ բանի* ուղիղ մերժում է բարեխոսներիս *(նույն*

տեղում, 117)։ *Ես մինչև ի մահ, կախաղան,* Մինչև անարգ մահու սյուն պիտի գոռամ, պիտի կրկնեմ Անդադար ազատություն *(ՄՆ, I, 318)*։ Բայց գերում են, կապում *մինչև ի մահ (ՉԳԾ, 247)*։

§ *944*. Մինչև, հար (*վերջինը բարբառային*) *կապերը արտահայտում են իրենց խնդրի ցույց տված ժամանակից առաջ ընկած ժամանակը և ավելի շուտ արտահայտում են ժամանակի տևողության չափը, մի ժամանակ, որ ընկած է խնդրի ցույց տված ժամանակից առաջ. օրինակ՝* Քեզ *հար լուս* սրտիս վըրեն գրկած լացի սար ու հար *(Իս., I, 191)*։ Նվագում են, կաքավում են ու երգում Գիշերները առավոտուց *մինչ գիշեր (Իս., II, 123)*։ Սպասում են, որ *մինչև լույս* գոնե մի քիչ հանգստանան *(Չն, 16)*։ Ինչքան են արդյոք տարիներ հոսել *մինչև* գարնային այս *օրը* զվարթ *(նույն տեղում, 205)*։ Մեր գյուղից վեր *մինչ էսօր* Կա ուռենի մի սգվոր *(Թ., II, 3)*։ Ձեր նամակը կամ գրվածքները *մինչև* նշված *ժամանակը* ուղարկեք հետևյալ հասցեով *(Թ., V, 107)*։ *Մինչև ուշ երեկո* Արտակն սպասում էր *(ԴԳՎ, 147)*։ *Մինչև լույս* իր հետ խաղացել, պարել, քեֆ էին արել *(Մուր., I, 37)*։

§ *945*. *Ժամանակի պարագա է դառնում նաև* հետո *իսկական կապը՝ բացառական խնդրով և ցույց է տալիս այն ժամանակը, որ սկսվում է խնդրի ցույց տված ժամանակակետից (իբրև սկզբնակետ) և շարունակվում է առանց վախճանակետի նշման. օրինակ՝* Որոնք առաջին անդրանիկ խմբի հեռացած *օրից հետո* անբաժան ընկերներ էին *(ՊՊ, III, 563)*։ Միմյանց դեմ էր հարուցել երկար *տարիներից հետո (նույն տեղում, 408)*։ Վաղուց *խնդրով* հետո *կապը ցույց է տալիս պարզապես երկար ժամանակ. օրինակ՝* Թիֆլիսցի Արշակը *վաղուց հետո* զբաղվում էր իր բժշկական պրակտիկայով *(Չն, 263)*։ Մի կյանք, որի վրա *վաղուց հետո* կախված էր մազութանման մշուշը, որը *վաղուց հետո* ծածկել էր նաիրյան այդ քաղաքն ու բնակիչներին, շենքերն ու մարդկանց *(նույն տեղում, 336)*։

§ *946*. *Ավելի ընդարձակ կիրառություն ունի* հետո *կապը իբրև ժամանակի պարագա՝ խնդիր ունենալով ոչ միայն ժամանակային, այլև ամեն կարգի բառեր. օրինակ՝* Մեղադրականը *կարդալուց հետո* դատարանի կազմը նստեց *(Չն, 387)*։ Ինչ պիտ լինեմ *կյանքից հետո*, Հարցնում արի ես բնության *(Իս., I, 289)*։ Կանաչ հրվանդանը պտույտ գալու *օրվանից հետո* նա այլևս չեկավ մեր ամառանոցը *(Փափ., 400)*։ *Տաս-տասնհինգ րոպեից հետո* տեսողությունս էլ կենտրոնացավ միմիայն ջրի վրա *(նույն տեղում, 402)*։ Հետո *առ-*

նում է նաև հայցական հոլովով խնդիր. օրինակ՝ Տարիներ հետո քեզ տեսա նորից *(Իս., I, 107)։ Երկու-երեք օր հետո* վերադարձվում էր *(ԳՍԹ, II, 188)։* Մոտ քսան *րոպե հետո* նրանք կանգ առան *(նույն տեղում, 213)։*

§ *947.* Մեջ *կապը ժամանակի պարագա է դառնում* կյանք, հասակ, տարիք *բառերը խնդիր ունենալով և ցույց է տալիս այդ բառերի տևողության ամբողջ ժամանակաշրջանը՝ նույնանալով դրանց ներգոյական հոլովով ժամանակի պարագայի հետ. օրինակ՝* Ծերունիները չէին հիշում իրենց *կյանքի մեջ* այդպիսի բարձր բերք *(ՆԶՀ, 318)։* Աղջիկս իր ծաղիկ *հասակի մեջ է (Շեքս., I, 421)։*

§ *948. Ժամանակի պարագա են դառնում նաև* նախընթաց, նախքան *կապերը, որոնք ցույց են տալիս խնդրի արտահայտած ժամկետից առաջ ընկած ժամանակը. օրինակ՝* Պետք է ասել, որ այդ *գրքին նախընթաց* մի ավետավոր լուր էր պտտվում Թիֆլիսի գրական շրջաններում *(Թ., IV, 26)։ Նախքան* նորից լցնելը նստեց ինձ հետ *(Փափ., 165)։*

§ *949. Ժամանակի պարագա է արտահայտում նաև* պես *կապը իր դերբայական խնդրի հետ միասին՝ ցույց տալով այնպիսի մի ժամանակ, որ անմիջապես սկսվում է դերբայի գործողության վերջին ժամկետից հետո. օրինակ՝* Առավոտյան *արթնանալուն պես* զգաց, որ այնքան էլ հեշտ գործ չէ հանդես գալ *(ԳՍԹ, II, 196)։* Տունը *հասնելուն պես* Մացակը լամպը վառեց *(ՆԶՀ, 354)։* Այդ հոդվածը *կարդալուն պես* մի շատ ծիծաղելի կոմեդիա է սարքել *(Թ., V, 122, 123)։*

§ *950.* Վրա *կապը, ժամանակ արտահայտող բառերը խնդիր ունենալով՝ դառնում է ժամանակի պարագա և ցույց է տալիս այն մոտավոր ժամանակը, որից հետո կամ որի ընթացքում տեղի է ունենալու որևէ գործողություն. օրինակ՝* Շուտով մի *ամսեն վրա* այլ նամակ կստանամ *(Թ., V, 177)։* Մի *ամսվա վրա* ամեն ինչ վերջացրեց: Թե նամակդ մի տասն *օրեն վրա* կհասցնես *(կամ երկու շաբթեն),* գրիր *(Թ., V, 118)։* Գողությունը մի *ամսեն վրա* բացվեց *(Ընտ. էջեր, 930)։* Վրա *կապի այս կիրառությունը, մանավանդ բացառական խնդրով, այժմ հնացած է։*

Վրա *կապը մասամբ ժամանակի պարագա է արտահայտում սեռական հոլովով։ Համեմատի՛ր.* Աղմուկի *վրա* ծառան ներսից ձայն տվավ *(ԱԲԾ, 406)։* Քեզ տեսնելու *վրա* ուրախացա *(ՊՊԾ, I, 635)։*

իդ) ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆ ԻԲՐԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *951. Ժամանակի երկրորդական նախադասությունները, վերածվելով դերբայական դարձվածների՝ դառնում են պարզ նախադասության ստորոգյալի համար ժամանակի պարագա։ Դերբայական դարձվածների մեջ դերբայները հիմնականում արտահայտվում են ներկա դերբայի* իս *ձևով, անորոշ դերբայի սեռականով,* ժամանակ *բառի կապակցությամբ, անորոշ դերբայի գործիականով, հարակատար դերբայով. օրինակ՝ Չբռնելիս* տեսնում էինք խնձորի բլուրները *(ՎՓՀՀ, 87)։ Խնձորները որսալիս* մեխով հանդիպեցի նրա գլխին *(նույն տեղում)։ Վերջին անգամ Վենետիկ այցելելիս՝* այդ պսակը դեռևս իր տեղն էր *(նույն տեղում, 88)։ Ամեն մի ոտքը կոխելիս՝* հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում էր *(ԽԱ, III, 7)։ Օտարին ճանապարհ դնելուս (այսինքն՝ դնելիս)* հայերը պաշարը ճոխ են անում *(ՊՊ, III, 256)։* Կարծում էր *գալիս ժամանակը (այսինքն՝ գալու)* չէր նկատած *(Մուր., V, 161)։* Որին չեն դիմանում իմ ներվերը *մանկությունից սկսած (Շիրվ., .V, 208)։* Զազունյանը *ամեն գալովը* բերում էր նրա համար *(Նար., II, 319)։* Հոգեկան ինչ ալեկոծումներ ունեցավ քաղաքային բժիշկ Սերգեյ Կասպարիչը *կնոջը թաղելիս (ՉԸԾ, 323)։ Թաղումից մի երկու օր անցած* կանչում են ինձ *(Թ., V, 335)։ Երբ ոսոխի հանդիպած* պիտի կովես ակամա *(ՉԸԾ, 152)։* Նրա բնակարանում է ֆիշևանում նահանգապետը՝ *ամեն անգամ այդ քաղաքը այցելելիս (նույն տեղում, 309)։ Վարդանի կամուրջի դիմացը գտնվող այն հողե խրճիթը պայթելու ժամանակ* վարժապետ Կարոյի գրպանում գտնվեցին... մազուքի Համոյի ձեռքով գրված մի շարք նամակներ *(նույն տեղում, 312)։ Չանցած կես ժամ* եկավ *(ԳՄԾ, 331)։* Ոնց որ ձին էր վրնջում *հեծվորին սպասելիս (ԱԲԾ, 399)։ Գնալիս* էլ մի քանի օրվա պաշար միափին էր առնում *(ԱԲԾ, 402)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը ժամանակի պարագայի է վերածվում, մասամբ ստորոգյալը բայառական հոլովի փոխելով. այս երևույթը ավելի խոսակցական լեզվին է հատուկ (§ *928)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2. Ժամանակի պարագա է համարվում ամբողջ դերբայական դարձվածը և ոչ թե նրա այս կամ այն անդամը միայն։

իե) ՏԱՐԲԵՐ ԲՆՈՒՅԹԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *952. Ժամանակի պարագա կարող են դառնալ տարբեր բնույթի դարձվածքները, որոնք ավել կամ պակաս չափով մի ամբողջություն են դարձել. օրինակ՝ Օրը ցերեկով* երեք-չորս հոգով Կույրերը եկան փղի դեմ ընկան *(Թ., I, 419)։ Ժամը ժամին* սպասվում էին ահավոր լուրեր *(ԴԴՎ, 373)։ Վաղ թե ուշ* նրանք պետք է կամ օտարություն գնային, կամ ետ վերադառնային *(ԱԲԵ, 314)։ Օրն էգուց* ես իմ երեխին ականջիցը բռնած տանելու եմ *(ՊՊ)։* Գտնվում էի կյանքիս ամենավճռական *րոպեներից մեկում (ՎՓՀՀ, 89)։ Տարին տասներկու ամիս* քարի քոլի հետ կռիվ տաս *(ԱԲԵ, 457)։ Տարին բոլոր* Իվան Բեյը արագ վազելուց քռանել էր *(Նույն տեղում, 406)։* Նույնիսկ *օր ծերության* չէր մոռանում կանանց *(Նույն տեղում, 313)։*

իզ) ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *953. Չափ ու քանակի պարագան արտահայտում է ստորոգյալի գործողության, հատկանիշի, այս կամ այն վիճակի քանակական հարաբերությունը։ Չափ ու քանակի պարագան հիմնականում ցույց է տալիս գործողության կատարման քանակը, որը հենց բուն չափ ու քանակի պարագան է. օրինակ՝* Ընկերս երկու անգամ այցելեց ինձ: *Ապա չափ ու քանակի պարագան արտահայտում է ստորոգյալի ժամանակային, տարածական հարաբերությունների չափն ու քանակը, որոնք հաճախ շփոթվում են ժամանակի և տեղի պարագաների հետ. օրինակ՝* Ընկերս ինձ մոտ մնաց երկու օր. ընկերս քայլեց ամբողջ տարածությունը: *Այստեղ* տարածությունը *կարող է նաև իբրև խնդիր դիտվել։ Վերջապես չափ ու քանակի պարագան ցույց է տալիս նաև գնի ու արժեքի և ծանրության չափը. օրինակ՝* Այս ձին արժե հինգ հարյուր ռուբլի: Այս ձին ծախվեց 500 ռուբլով: Գնահատվեց հինգ հարյուր ռուբլի *և այլն։*

§ *954. Չափ ու քանակի պարագաները արտահայտվում են քանակական մակբայներով, գոյականներով, թվականներով, կապական արտահայտություններով, դարձվածքային և այլ կարգի բառակապակցություններով, քանակ արտահայտող հարցական-հարաբերական դերանուններով, ածականներով և այլն։*

իէ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *955. Գործողության կատարման չափ ու քանակի պարագան ամենից առաջ արտահայտվում է քանակական մակբայներով, թվականներով, հարցական-հարաբերական, ցուցական այնպիսի դերանուններով և մասամբ ածականներով, որոնք դրսևորում են քանակական հարաբերություններ. օրինակ՝* Փաղիշահը *քանիցս (անգամ)* ուզեցել է կալանավորել Քյոռօղլուն *(ՂԱԾ, 275)*։ Իր երկար գործունեության ընթացքում *բազմիցս* հանդիպել էր ինձ նման խելագարների *(ՎՓՀՀ, 91)*։ Թուրք թատրոնը *քանիցս* փորձեր արեց հրապուրել ինձ *(Նույն տեղում, 207)*։ Հետագայում *բազմիցս* առիթ եմ ունեցել ուշադրությամբ ծանոթանալ արվեստի այդ ծերունի տոյուծին *(Նույն տեղում, 61)*։ *Շատ* եմ վախենում Պարսկաստան կանչվենք *(ԴԴՎ, 222)*։ Եթե իմանաս, թե *որչափ* ուրախ եմ *(Մուր., III, 426)*։ Հիվանդանոցի բժիշկ Պ. Սերգեյ Կասպարիչը *քանիցս* ստիպված է եղել հիվանդներին անդամահատել *հազար* *(ՁԸԾ, 308)*։ Ինձ *այսքան* ցույց տվիր դու պատիվ ու սեր *(Թ., I, 507)*։ Բայց այս անգամ փորձանքն այնպիսի փորձանք էր, որից *հազար* էլ ուզենար, չէր կարող խույս տալ *(Նար., III, 268)*։ Ես *կրկին* պատանեցի երիտասարդ ուսուցչին *(Մուր., II, 60)*։ Չի կամենալ նա *վերստին* քեզ տանջել *(Տ., I, 32)*։ *Հազար-հազար* նավաքվեք, պիտի տանեմ այսօր ես *(ՁԸԾ, 28)*։ Հավաքվեցեք *բյուրավոր* հոսանքն ի վար էս գետի *(Նույն տեղում)*։ Մեզ մնում է՝ *մեկ* մեխին խփենք, *մեկ էլ* պայտին *(Աբիգ, 159)*։ *Ինչքան էլ* որ բաշխեմ ձրի *(Թ., I, 192)*։ Չէ որ գործը *որքան* քեզ, *նույնքան* ինձ է վերաբերում *(Շիրվ., VI, 307)*։ Դուք երկուսդ էլ նրան *բավական* ճանաչում եք *(Ր., III, 266)*։ *Ինչքան շատ* եմ դեռ քեզ տալու *(Թ., I, 214)*։ Օրիորդից *ոչ պակաս* գնծաց որդիասեր մայրը *(ՊՊ, II, 285)*։ *Չափազանց* զբաղված է *(Նար., III, 478)*։ Աշխարհիս երեսին *քիչ* կա այսպիսի մի վսեմ, ներդաշնակ, գեղաշուք կառուցում *(Իսծ, 256)*։ Ես չգիտեի, որ դու *այդչափ* նարպիկ ես *(Շիրվ., II, 317)*։ Դուք *դարձյալ* պիտի ջարունակեք սովորել *(Մուր., II, 62)*։ *Շատ* մի տխրիր, սիրելիս *(Իսծ, 47)*։ Քաղաքում *դարձյալ* մենք կտեսնվենք իրար հետ *(Նար., III, 226)*։ *Մին* երբ եկավ, Ծնված չէինք մենք մորից, *մին* էլ երբ գա, մեռած կլինենք ցավերից *(Թ., I, 395)*։ Պիտի սովրենք, սովրենք *էնքան* *(Թ., I, 420)*։ *Քանիցս* ես ներկա եմ եղել *(ՁԸԾ, 408)*։ *Կրկին* զարթեցան իմ մեջ նոր և նոր մտածմունքներ *(Ր., IV, 176)*։ Նրանք էլ *հաճախ* չէին գալիս *(ԱԲԾ, 403)*։

§ 956. *Գործողության չափ ու քանակը արտահայտվում է տար-բեր ձևի բառակապակցություններով. օրինակ՝* Քեզ սիրում, պաշ-տում եմ *ցայն սատիճան (ՌՊ, 306)*։ Ես Բաքինին ու Ատրճրսեճին սիրում եմ իմ *որդիներիս չափ (ԴԴՎ, 314)*։ *Չափից դուրս շատ են* վիրավորվում *(ՍԳ, IX, 345)*։ Այդ «մենք» *մի քանի անգամ* կրկըն-վեցավ *(Ր., III, 152)*։ Նախիջևանի բնակիչների թիվը հասնում է *մինչև 12 հազար (ՄՆԸ, 182)*։ Այնքան, որքան մարդ միշակ շտա-պով *մեկ հարյուր* համրե *(Շեքս., I, 16)*։ *(Այստեղ* մեկ հարյուր *կարծեք ուղիղ խնդրի բնույթ է ստացել, բայց* չափ ու քանակի *պարագա է*։ *Համեմատի՛ր. Քանի միլիոն* ես կերել. *ԳՍԹ., II, 206)*։ *Չենք հարցնում՝* ինչ ես կերել, *այլ՝* ինչքան ես կերել։ *Հարկ եղածի չափ* լավ պատկերացնես դրության ամբողջ խայտառակությունը *(Չե, 338)*։ *Մի փետրի չափ անգամ* բերացած չէի լինի *(Շեքս., I, 40)*։ Ինձ երևում էր *էնքան հաճախակի (Թ., III, 353)*։ Դու շաքա-քականե երեք *անգամ* գալիս ես ինձ մոտ *(Շիրվ., II, 321)*։ Ինձ էլ սիրես գոնե *մի քիչ (Թ., I, 401)*։ *Աշխարհքով* մին աետ էսպես շաղ եմ տալիս իմ բարձունքից *(Թումանյան)*։ Մենք ուրախացանք *հո-գով չափ (ԳԱ, IV, 432)*։ *Արյամբ չափ* հարգում ենք մարդկային ա-զատությունը և իրավունքը *(ՄՆԸ, 370)*։ Քանի–քանի անգամ ես մեզ ազատել մռայլ տրամադրությունից *(Շիրվ., V, 216)*։

իը) ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ

§ 957. *Ստորոգյալի գործողության ժամանակի տևողության չափի պարագան ցույց է տալիս ժամանակի այն չափը, որի ըն-թացքում տեղի է ունենում, կատարվում է գործողությունը։ Այս դեպքում ուշադրություն չի դարձվում գործողության ժամանակի վրա. ոչ թե գործողությունը ե՛րբ, ո՛ր ժամանակում կատարվեց, այլ թե որքա՛ն ժամանակ տևեց, ինչքա՛ն ժամանակի ընթացքում կատարվեց ստորոգյալի գործողությունը. նշվում է ոչ թե որևէ հայտնի ժամանակ, այլ ընդհանուր, հաճախ անորոշ ժամանակի տևողության չափը։*

§ 958. *Ամենից առաջ ժամանակի տևողության չափի պարա-գան արտահայտվում է ժամանակային և առհասարակ քանակային ու տարածական հասկացողություն արտահայտող մի շարք մակ-բայներով, ածականներով. օրինակ՝* Տկլոր ու սոված էսպես *տարին բոլոր* փարփ–հողի հետ կռիվ ենք տալի *(Թ., «Հառաչանք»)*։ Թողում է

հավերժ (*Իսն, 43*)։ *Օրնիբուն* շարժման մեջ էր (*ԱԲն, 402*)։ Եվ *միշտ* պայծառ է հոգիդ եղել (*ՉԸն, 176*)։ Ուզում եմ *առմիշտ* քուկդ լինել (*ՌՊն, 368*)։ Բայց քայլել ես *միշտ*, քայլել *անդուլ* տքնել *անդադար* (*ՉԸն, 176*)։ Պիտի տևեր գուցե *շատ երկար* (*Ր., III, 446*)։ *Երկար-երկար* կռվեցին (*ՉԸն, 28*)։ Բժիշկն *ընդմիշտ* ձեռք քաշեց իր մարդասիրական տրամադրություններից (*նույն տեղում, 308*)։ Դրանք *միշտ* մնում են կառչած (*ՎՓՀՀ, 58*)։ *Ջոր-գիշեր* կուլա, քուն դադար չունի (*Իսն, 43*)։ Եվ *անվերջ* քայլիր քո անհայտ ուղին. և դու *հավիտյան* անհաս աստղի պես ինձնից հեռու ես, ինձնից հեռու ես (*Իսն, 43*)։

§ 959. *Ժամանակի տևողությունը որոշակի կերպով արտահայտվում է թվական որոշիչ ունեցող ժամանակային բառերով. օրինակ՝ Մի պահ* չէի տեսնում (*ԱԲն, 448*)։ *Գոնե մի ժամով* մեզ հետ երկինք բարձրացիր (*Թ., III, 272*)։ *Մի շաբաթից* ավել չի ապրիլ (*ԱԲն, 257*)։ *Տասից-տասնհինգ րոպե* կարծես մրցության էին դուրս եկել (*Անթ., 147*)։ Գոնե *մեկ ամսով* կամ *մեկ շաբաթով* պսակս ուշացրեք (*Ծեքս., I, 471*)։ *Հազար տարի* էդ երկրում արևն ելավ արյունոտ (*ՉԸն, 28*)։ Մայրս գնացել է իր եղբոր որդու տունը *չորս օրով* ղոնաղ (*ԱԲն, 256*)։ Մեր գնալ գալը կտևե ոչ ավելի քան թե *մի շաբաթ* (*ՐԿ, 155*)։ *Մի րոպե* ես նրան պարապ չեմ տեսել (*ՂԱն, 466*)։ Չարժե *մի րոպե* անգամ ապրել առանց սիրելու (*Թ., V, 269*)։ Ու *քառսուն օր, քառսուն գիշեր* կռիվ տվին անդադար (*Թումանյան*)։ Թեկուզ *մի դար* ապրես սրտով մտերմիդ (*Թ., I, 395*)։ Շունն ապրում է 15-ից 20 տարի (*Թ., III, 122*)։ Ես *մի ամսական* եմ եղել (*ՂԱն, 467*)։ Գալու է *մի տարով* հանգստանալու (*Թ., V, 355*)։ *Մի աչքանկպելումը* մորս գլուխը պիտի թռչեր (*ՂԱն, 457*)։

§ 960. *Ժամանակի տևողության չափի պարագան արտահայտվում է նաև այնպիսի ժամանակային բառերով, որոնք ունեն իբրև որոշիչներ* ինչքան, որքան, քանի, ամեն, ամբողջ, այսքան, այդքան, այնքան, որքան, շատ, բազմաթիվ *բառերը. օրինակ՝* Այդ էլ տևեց *մի ամբողջ ժամ* (*Շիրվ., V, 212*)։ *Քանի ժամանակում* հայերենի կթարգմանեմ Շոթա Ռուսթավելու «Ընծենավորը» (*Թ., V, 336*)։ *Ամեն ամիս* քանի խուրձ խոտ է հարկավոր (*ԱԲն, 254*)։ Ապրել է մարդը *բազմպթիվ դարեր* (*ՉԸն, 187*)։ *Տարիներ շարունակ* թավուտները մնացել են սաղարթախիտ (*ԱԲն, 260*)։ *Քանի ժամանակ* է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալիս (*Թ., III, 141*)։ *Ամեն օր* էնքան կարք տա, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապ-

րեք *(նույն տեղում, 159)*։ *Ամբողջ օրն* աշխատում էր *(նույն տեղում, 178)*։ *Ամբողջ գիշերը* չկարողացավ քնի *(նույն տեղում, 183)*։ Կառքը *մի քանի ժամ* հանդարտ կերպով գնում էր կոկած քարուղիի վրա *(Ր., IV, 40)*։ *Քանի ձմեռ* են միասին անտառում խոզ պահել *(ԱԲԵ, 453)*։ *Այսքան տարի* ապրեցին. *ինչքան ամիս* մնացին. *և այլն*։

§ *961 Ժամանակի տևողության չափի պարագան արտահայտվում է նաև ժամանակային բառերի հոգնակի, մասամբ եզակի հայցական, գործիական, ներգոյական հոլովներով. օրինակ՝* Մտածել եք դժար *օրերով (Թ., II, 100)*։ *Ժամերով* քունը չէր տանում *(ԱԲԵ, 403)*։ *Ամիսներ, տարիներ* կքաշի *(Փափ., 148)*։ Իշխաններն են *դարեր* առևանգել, հարբել *(ՉԸԵ, 183)*։

§ *962. Ժամանակի տևողության չափի պարագան արտահայտվում է նաև մի քանի կապական արտահայտություններով. օրինակ՝* Ես *մինչ ի մահ*, կախաղան, *մինչև անարգ մահու սյուն* Պիտի՛ գոռամ, պիտ կրկնեմ անդադար ազատություն *(ՄՆ, I, 318)*։ Քեզի *հար լուս* արտիս վրեն գրկած լացի սար ու քար *(Իս., I, 191)*։ *Այս մեկ ու կես տարվա մեջ* ոչ ոք Եփրեմ խանին Հացավանում չի տեսել *(ՆԶՀ, 386)*։ Նվագում են ու երգում գիշերները *առավոտից մինչ գիշեր (Իս., II, 123)*։ Բայց գերում են, կապում *մինչև ի մահ (ՉԳԾ, 247)*։ *Մինչև ուշ երեկո* Արտակն սպասում էր *(ԴԴՎ, 147)*։ *Մինչև ի լույս* իր հետ խաղացել, պարել, քեֆ էին արել *(Մուր., I, 37)*։ Հարևանի կանայք մնացին *մինչև իրիկուն (ԱԲԵ, 404)*։ *Մինչև երբ* պետք է այսպես մնանք *(Թ., III, 141)*, *տե՛ս* § *944*։

ԻԹ) ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ

§ *963. Ստորոգյալի գործողության տարածության չափը արտահայտվում է տարածություն արտահայտող բառերով, թվական և քանակ ցույց տվող տարբեր խոսքի մասերով, որոշիչ ունեցող տարածական բառերով, կապական արտահայտություններով և այլն, որոնք ցույց են տալիս, թե ստորոգյալի գործողությունը ինչքան տարածության վրա է կատարվում, որքան տարածություն է բռնում*։

Ընտիր ձիերը կես և մի քիչ ավելի ժամում *(բնագրում՝ մի քիչ ավելի, քան կես ժամում)* Չիչիկովին տարան *տասը վերստ* տա-

լածություն (Գողը, V, 372)։ Բենտոնը բարկանում էր, սպառնում և կամ թափով քաշում ձեռքի թելը՝ *որոշ տեղ* բազեին քաշ տալիս գետնին (ԳՍԹ, II, 197)։ Մեկ ամսում թողնելը խորացվում էր *միայն տասը մետր* (Անթ., 496)։ Ջենը ոռնալով ու դռմդռմբալով գնում է հասնում ամեն կողմի վրա *հազար վերստ* (Թ., III, 252)։ Թունելը խորացրին *երեսուն մետրով* (Անթ., 495)։ *Հարյուրավոր հեկտարներով* բռնում են ամբողջ տարածությունը (*Նույն տեղում*, 184)։ Նրա հայրենական ավանը *կեսօրվա ճանապարհով* միայն հեռու էր Աշտիշատի վանքից (Ր., III, 81)։ Երբ *հրապարակից* երկարեց *մինչև կամուրջը* (ՆՋՀ, 78)։ Եվ *հորիզոնից մինչև հորիզոն* երկինքը լցվեց մռայլ ամպերով (Իս., II, 68)։ Հեյ, *արևմուտքից մինչև արևելք* Պիտի հրդեհեմ ու քանդեմ հիմա (Չե, 9)։ Արևելյան ճանապարհները դու նվաճիր *մինչև Ինդոսն արևամերձ* (ՆՋԱ, 16)։ *Մինչև կայարան* նրանք այլևս ոչ մի բառ չփոխանակեցին (ՆՋՀ, 304)։ Թե Համմիկը Լևոնի հետ *մինչև որտեղ* է գնացել (*Նույն տեղում*, 252)։ Նրան հասցրեց *մինչև այն անթույլատրելի* քայլը (*Նույն տեղում*, 255)։ Չէր կարող *մինչև այդ* կետն ստորանալ (*Մուր.*, IV, 13)։ *Այս երեք օրինակի մեջ տարածական հասկացողությունը վերցված է փոխաբերաբար։ Ավելի ճիշտ դրանք չափ ու քանակ են արտահայտում, որ կարելի է արտահայտել* ինչքան, այդքան, ինչչափ, որչափ *դերանուններով*։

լ) ԳԻՆԸ, ԱՐԺԵՔԸ ԵՎ ԿՇԻՌՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ

§ 964. Գնի և արժեքի պարագան ցույց է տալիս չափի այն քանակությունը, որով գնվում, արժեքավորվում է որևէ առարկա։ Կշռի-չափի պարագան ցույց է տալիս առարկայի ծանրության չափը, որ դառնում է ստորոգյալի համար պարագա։ Գնի ու արժեքի պարագան արտահայտվում է գոյականների հայցական, տրական, գործիական հոլովներով, մասամբ մակբայական բառերով. օրինակ՝ Բայց իր տափատը հինգ *շիլինգ արժեր* (Շեքս., I, 147)։ Քերթեցինք, քաշեցինք, դուրս եկավ *60 փութ* (Թ., III, 210) Իմ շնորհակալությունները *մի սև փող* չարժեն (Շեքս., I, 39)։ Պարիզից է բերել տված, արժե *հիսուն ռուբլի* (Շիրվ., VI, 264)։ Կյանքն ինձ համար *մի ասեղ* չարժե (Շեքս., I, 22)։ *Ինչ* նստեց այդ քեֆը,— Համեմատաբար *ոչինչ*, դատարկ բան՝ *վեց հարյուր ռուբլի* (Շիրվ., VI, 276)։

Նվարդի մեկ ճկույթն արժե *հազար քո Շամիրամ* (*ՆՉԱ, 69*)։ Հերը տղին *քսան թումանի* չի տա (*Իս., III, 292*)։ *Հարյուր մանեթի* մի ձի կառնեն (*Աբեղյան*)։ Լավ գնով էր ծախվում՝ *Հարյուր քսանով* (*ՌՊԵ, 657*)։ Նրա արժանիքը գնահատված է *մեծագնի* (*Մուր., IV, 164*)։ Բայց այդ քարիքը *թեթևագնի* չի պիտի վաճառեր (*Մուր., V, 318*)։ Աղամանդները ծախել ձեզ *քսան հազարով* (*ԳՍԹ, I, 368*)։ Հանձնեց տիկնոջ խնամքին ու առանձին ուշադրությամբ *ամսական երեսունհինգ ռուբլիով* (*Թ., V, 216*)։ Շամպանսկու շիշը *տասնուհինգ փռանգով* են ծախում (*Շիրվ., VII, 268*)։ *Քանիսով* տվեց հարցրի,—*վեց ու կեսով*,—ասաց։ Այդպիսով իմացա, որ *վեց ու կեսով* է տվել (*ՌՊԵ, 657*)։

Ծանոթություն. Գնահատման, արժեքավորման բառերը եթե իրենց հետ չունեն չափ, քանակ արտահայտող բառեր, ապա դադարում են գնի ու արժեքի պարագան արտահայտելուց. օրինակ՝ Սովը ստիպում էր *կյանքի գնով* մի այծ, մի ոչխար փախցնել (*ԴԴ, II, 290*)։ Մեզ ծախել են նրանք *ոսկով* (*ՉԵ, 29*)։ Հալալ էն հացը, ով *արյան գնով* կխլի նրան հնոցի կրծքից (*ՀՀԵ, 59*)։ Այդ «չկան» *փողով* չեն ծախում (*ԳՍԹ, I, 277*)։ Աշխատածդ տուր *գինու, արաղի* (*Նար-Դոս*)։

Այս օրինակների մեջ ընդգծված բառերը ավելի միջոցի, փոխարինության անուղղակի խնդիրներ են, քան թե պարագաներ։

լա) ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

§ *965. Պատճառի պարագան ստորոգյալի այնպիսի լրացումն է, որ պատճառ է դառնում նրա գործողության կատարմանը. օրինակ՝* Լիլիթը զարթնեց սոխակների սիրահույզ *դայլայլներից* (*Իս., III, 223*)։ Դայլայլներից *բացառական հոլովով դրված բառը պատճառ է դառնում զարթնեց գործողության համար։ Հայերենում հաճախ պատճառը և հիմունքը միասնաբար են վերցվում, սակայն սրանք իրարից նուրբ կերպով տարբերվում են։ Պատճառի պարագան՝ պատճառ է դառնում գործողության կատարման համար, իսկ հիմունքի պարագան դառնում է հիմունք, որի հիման վրա կատարվում է որևէ դատողություն, ճանաչողություն. օրինակ՝* Լիլիթը սոխակներին ճանաչեց նրանց *դայլայլներից*. *այստեղ* դայլայլներից *ճանաչողության հիմքն է։ Համեմատիր.* Իր սուր ճանկերից ճանաչեց նա ինձ, Ես *ականջներից* իմացա նրան (*ՉԵ, 227*)։ *Հիմունքի պարագան ծառայում է իբրև միջոց մի այլ երևույթ ըմբռնելու, ընկալե-*

յու, տարբերելու, իսկ պատճառի պարագան սոսկ պատճառ է դառնում գործողության կատարման համար առանց միջնորդական օգտագործության։

§ *966. Հայերենում պատճառի պարագան ամենից հաճախ արտահայտվում է գոյականների և մասամբ հոլովվող մյուս խոսքի մասերի բացառական, ապա գործիական և մասամբ տրական հոլովներով. օրինակ՝* Բորենիները ոռնում էին անհագ *ծարավից (Իս., III, 32)։* Այդ *դիպվածով* ճիշվեցան նրա ամեն ցույց տված երախտիքն *(ՌՊԵ, 688)։* Տանջվում է, մաշվում *սիրուց, կարոտից (Թ., I, 525)։* Խեղճը դողալով՝ *Դարդից* կռացավ, *Դարդից* չորացավ, Ուռենի դարձավ *(Թումանյան)։* Ցնծության *ձայնից,* ծափերի *զարկից* Շարժվում են, դողում պատեր ու օճորք *(Նույնը)։ Ուրախությունից* պար էր գալիս *(Անթ., 190)։* Նրա սիրտը տնքում է *հաճույքից (Անթ., 188)։* Եվ սիրտն էր քնդում այդ *միությունից (ՀՀԵ, 195)։* Այդ *բոլորից* նա մեռավ *(Թ., IV, 91)։ Շտապելուց* թև են առել *(Թ., «Փարվանա»)։* Բացատրեց, թե ինչ քաղաքական *հանգամանքներից* առաջ եկավ նրա օտարոտի հարսնախոսությունը *(Ր., III, 448)։* Օր. Նվարդը *հուզմունքից* քիչ էր մնում ուշաթափվի *(ՉԸԵ, 320)։ Վախից, ամոթից,* խիստ շառագունեցավ *(ՌՊԵ, 309)։ Բարկությունից* սաստիկ կատղեցավ *(Նույն տեղում, 307)։* Մի *տռիթով* սրտաբաց էր եղել *(ԱԲԵ, 453—454)։* Այս անգամ նրա *կոչին* շատերն եկան *(Մուր., III, 332)։* Երկրի ժողովուրդը զոհ է գնացել այն երկչոտ *զգացումներին (Նույն տեղում, 326)։* Տասնիքը մարդ *սովու* մեռան *(ԽԱ, V, 259)։* Շատի պռոշները *ահու* ու *դարդու* *պատռել,* արինը գնում էր *(ԽԱ, III, 220)։ Այսպես ասվում է՝ Կսկծու* փառք ստածու։ *Ծիծաղու* թուլացավ: Ահու լեղաճաք եղավ: Ամոթու հալվեց: Քո *սիրու* ինձ կսպանեմ: Մեղավոր եմ միայն իմ անհուն սիրով *(Շիրվ., VI, 204)։* Հայտնի է մեր մեջ յուր զարգացմամբ և կալվածների մեծ հարստությունով *(Մուր., I, 239)։ Այս իսկ պատճառով* իսկույն հանեցի հասարակ հագուստս *(Իս., III, 275)։* Չհայտնել պարզապես *այն պատճառով,* որ նրան բամբասում են *(Անթ., 189)։*

Ծանոթություն 1. Այս անգամ նրա կոչին շատերն եկան *նախադասության մեջ* կոչին *համատեղում է նաև ժամանակի պարագայի պաշտոն.* § *909.*

Ծանոթություն 2. Տրական հոլովով պատճառի պարագան, ինչպես երևում է մի քանի օրինակներից, մեծ մասամբ բարբառային ծագում ունի և այժմ այնքան էլ չի կիրառվում։

Ծանոթություն 3. Պատճառի գործիականով հաճախ կիրառվում են՝ առիթ, պատրվակ, շարժառիթ, դրդապատճառ *բառերը։*

§ *967. Պատճառի պարագան արտահայտվում է նաև դերբայական դարձվածների միջոցով, որտեղ դերբայը կիրառվում է գործիական հոլովով. օրինակ՝ Տկար ձևանալով չի* ներկայացել *(ՆԶԱ, 45)։* Նա այդ սիրտը չախչախեց *իմ սերը դավաճանելով (Մուր., III, 228)։* Մամիկոնյան իշխանը *վաղուց հասկացած լինելով այն ճշմարտությունը՝* նրանց թողել էր իրենց կամքին *(Ր., III, 327)։* Բոցարփի *մեռնելովը* կղզեցիք կորուսին յուրյանց ապահովությունը *(ՌՊՆ, 515)։*

§ *968. Պատճառի պարագան արտահայտվում է նաև կապական արտահայտություններով, մակբայացող բառերով, այլևայլ կապակցություններով, պատճառի գործիականով և այլն. օրինակ՝ Քո երեսից* հենց նույն տարին իմ պաշտոնից ինձ դուրս արին *(Ր., II, 94)։* Նա ինձ սիրեց *ի սեր իմ տեսած այն վտանգների,* և ես էլ՝ նրան *ի սեր ցույց տված իր կարեկցության (Շեքս., I, 129)։ Որի հետևանքով* ծանր վիրավորվեցին միսիայի մի աշխատակից և միսիայի մի ֆանի աշխատակիցների բնտանիքի անդամները *(ՍՀ, 1953, № 170)։ Զախողակ հանգամանքների շնորհիվ* արքայական բնտանիքը տեղափոխվեց Գառնի *(Մուր., III, 248)։* Դարձել էին միջակ տնտեսություն՝ *շնորհիվ Լենի քրտնաջան աշխատանքի (ՆԶՀ, 153)։ Քո շնորհիվ* նրեղեն եմ, թևավոր *(Իսահակյան)։ Սատանոք է,* ո՞ր չեկանք *(Իս., III, 296)։ Իրենց պատճառով* կարող եմ ես մրսել *(Մուր., I, 521)։* Առանց նկարիչ լինելու՝ *շնորհիվ ինձ ներարկված* էսթետիկայի սկզբունքների սկսեցի նաշակել մեծագույն նկարիչների գործերը *(ՎՓՀՀ, 99)։* Ուսանողները *ստիպմամբ* պաշտպանել են իրենց և ընկերների պատիվը *(ԱԲՆ, 601)։* Մեզ համար միանգամայն անհասկանալի *պատճառով* մարդիկ կապում էին այն հարցի հետ *(ՉԸՆ, 373)։ Փաստ չլինելու պատճառով* Համո Համբարձումովիչն արդարացավ *(նույն տեղում, 274)։*

ԺԲ) ՀԻՄՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

§ *969. Ինչպես տեսանք, հիմունքի պարագան մասամբ մոտենում է պատճառի պարագային, բայց նրանից տարբերվում է այն բանով, որ հիմունքը ծառայում է՝ իբրև հիմք, միջոց որևէ դատողության, ճանաչման համար։ Պատճառը ավելի գործուն է, քան հի-*

մունքը։ Հիմունքը վերցվում է գործողության կատարողի կողմից իբրև հիմք իր գործողության համար՝ այս կամ այն մեկնաբանություն տալու կամ ուղղակի կատարելու համար։ Իսկ պատճառի պարագան դրսից է հանդես գալիս, որ հետագայում կարող է հիմք ծառայել կատարված գործողության մեկնաբանման համար. օրինակ՝ Ռուսաստանը հիմնվելով միջազգային *դաշնագրերով* իր ունեցած իրավունքի վրա *(Թ., IV, 206)*։ Այստեղ դաշնագրերով բառը հիմունք է, որով Ռուսաստանը ունի իրավունքներ։

§ 970. Հիմունքի պարագան ամենից հաճախ կիրառվում է գործիական հոլովով. մանավանդ հաճախ հանդես են գալիս՝ օրենք, իրավունք, փորձ, կարծիք, թույլտվություն, փաստարկ, հիմք, հիմունք և այս կարգի ուրիշ բառեր ու կապական արտահայտություններ. օրինակ՝ Այս *հիման վրա* նրանց համար անհասկանալի է հայ հեղինակների ժամանակակից ոճը *(Շիրվ., IX, 225)*։ *Օրենքով* մահ է *(Շեքս., I, 482)*։ Խնդրում եմ տիրոջ այն սուրբ *օրենքով*, նաև մարդկային իմ *իրավունքով* *(Թ., II, 26)*։ Հիմնարկի *թույլտվությամբ* մեկնեցի Մոսկվա: Այդ *փաստարկներով* ապացուցել չես կարող: *Ըստ բրիգադների* կազմիր տաբելները *(ՆՋՀ, 123)*։ Վերակացուն *համաձայն իշխանի հետ դրած պայմանի* բերդն ու ավանը հանձնեց նրա ձեռքը *(Մուր., III, 425)*։ Մենք ուսուցչի *պատվերին համաձայն* տեղներիցս կանգնեցինք *(ՊՊ, III, 379)*։ Քու *խոսքովն են* ողջ նստում վեր կենում *(Թ., I, 320)*։ Գիտեմ ինչ կանեմ, եթե *ծնունդով* կալված չստացա *(Շեքս., I, 300)*։ Այն գործը նրա ցույց տված *ճանապարհով* ենք շարունակել *(Մուր., II, 29)*։ Պատգամավորներ ուղարկեցեք այս *մտքով* Աղա Նազարի մոտ *(Իս., III, 265)*։ Չի կարելի *օրինակ վերցնելով* ենթադրել *(Մուր., I, 520)*։ *Գուշակելով*, որ անձրևի պետք է հանդիպեմ, հովանոցս վերցրի *(Նույն տեղում, 521)*։ *Շորերին նայելով* ընդունում են, *խելքին նայելով* ճանապարհում: Դեռ Աստղիկը՝ Աշտիշատի գեղեցիկ դիցուհին իր վաղեմի *սովորության համեմատ* լողանում էր Մուրադ գետի ալիքների մեջ *(Ընտ. էջեր, 500)*։ Իրենց ամենօրյա *սովորության համաձայն* վայր են իջնում *(Ր., II, 37)*։

գ) ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

§ 971. Հակառակ հիմունքի պարագան ստորոգյալի այն լրացումն է, որին հակառակ է կատարվում գործողությունը. ըստ հիմունքի ենթադրվում է այլ գործողություն, բայց կատարվում է ենթադրածին, սպասելիքին հակադիր մի գործողություն։

Հակառակ հիմունքի պարագան արտահայտում է ընդդեմ, հակառակ, հանդերձ, չնայելով, չնայած *կապերով. օրինակ՝ Ընդդեմ* ամենայն *քաղաքավարության* եկել էր իմ մոտ *(ՄՆ, I, 303)*։ Այդ մենք ենք երևի այն ուղտը հաստակող, որ Հիսուսի *առակին հակառակ* Պիտի մտնենք անգամ ասեղի նուրբ ծակով *(ԶԳԾ, 53)*։ Ես սիրում եմ նրան *հակառակ* իմ *կամքին, հակառակ* իմ բոլոր ջանքերին *(ՆԶՀ, 25)*։ *Հակառակ* իր *կամքին* ու *ջանքերին* տարօրինակ կաշկանդում էր տիրել նրան *(Նար., VII, 202)*։ Ահա քննադատ, որ եվրոպացի եվ ինտելիգենտ *լինելով հանդերձ*՝ Ջոկել չգիտե դեռ շորը բացից *(Զե, 224)*։ Նրա խարդախությանը տեղյակ *լինելով հանդերձ*՝ ֆերման *նրան* է վստահել *(ՆԶՀ, 413)*։ *Հակառակ* իմ աթեիստական *համոզմունքներին*՝ երդվեցի *(ԳՄե, 331—332)*։ *Չնայած սրան*՝ Ասլան բիձեն միանգամայն անշառ մարդ էր *(ՉԸե, 372)*։ *Չնայելով* այդ *բոլորին*՝ հասարակաց կարծիքը շատ նպաստավոր էր *(Ր., II, 395)*։ Չնայած մազութի Համոյի այդքան մեծ *դեմքին* ու *հռչակին*, քիչ մնաց, որ նրա գրասենյակը զիջեր *(Զե, 266)*։

լգ) ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 972. *Նպատակի պարագան ստորոգյալի այնպիսի լրացումն է, որ ցույց է տալիս ստորոգյալի գործողության կատարման նպատակը, այսինքն՝ գործողությունը կատարվում է՝ ինչ արդյունք, ինչ բան ստանալու, ձեռք բերելու նպատակով։*

Նպատակի պարագան հայերենում ամենից առաջ արտահայտվում է գոյականների՝ հայցական, տրական, գործիական հոլովներով, անորոշ դերբայով և մասամբ կապական արտահայտություններով։

§ 973. *Հայցական հոլովով նպատակի պարագան ստորոգյալի այն գոյականական լրացումն է, որը ձեռք բերելու, որի նկատմամբ մի նոր գործողություն կիրառելու համար կատարվում է ստորոգյալի գործողությունը։ Գոյականի մեջ եղած նպատակայնությունը պոտենցյալ կերպով գտնվում է այն հարակից գործողության մեջ, որը չի արտահայտվում, բայց որի նպատակային իմաստը անցնում է գոյականին։* Անասունները գնում են ջուրը. *եթե ջուր բառը չենք մտածում իբրև տեղի պարագա, ապա այն այստեղ նշանակում է՝* ջուր խմելու. *հենց այս* խմելու *դերբայը, որ նպատակի պարագա է, իր նպատակայնությունը հաղորդում է իր կողմնակի*

խնդրին, և ինքը սղվում է։ Իսկ եթե նպատակի պարագան գործողություն արտահայտող գոյական է, ապա նպատակայնությունը արտահայտում է հենց իրեն՝ բառի գործողությամբ. Ոչխարը բեր կիթ *(Թումանյան).* կիթ *նպատակի պարագան նշանակում է* կթելու։ *Երբեմն գոյականական նպատակի պարագան կամ բայից կազմված գոյական է, բայարմատ է (որ գործողություն է արտահայտում), կամ կողմնակի ուղիղ խնդիր է։*

§ 974. *Հայցական հոլովով նպատակի պարագան մեր գրական լեզվին անցել է խոսվածքներից, որտեղ նպատակայնությունը խառնըվում է այլ հասկացողությունների հետ. օրինակ՝* Սաքո, Սաքո, մեզ մոտ արի, Արի մեզ մոտ *հարսանիք (Թ., II, 18)։* Հարսանիք *բառը կարելի է մասամբ նաև տեղի պարագա մտածել, չնայած* հարսանիքի, հարսանիք անելու, հարսանիքին մասնակցելու *նշանակությունները ավելի ուժեղ են, որոնք հենց նպատակայնություն են արտահայտում։* Կժերն ուսած թռվռալով *Ջուրն են* իջնում աղջիկներ *(Թ., II, 51)։* Խլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց նրան *կին (նույն տեղում, 136)։* Կին կարող *է հասկացվել նաև իբրև երկրորդական ուղիղ խնդիր։ Ավելի անխառն են հետևյալ օրինակները։* Վերևից մի մարդ եկավ *քննություն (Թ., II, 41)։* Ոչխարդ բեր *կիթ,* օրը ճաշ դառավ *(նույն տեղում, 69)։* Ամեն մարդ սկսեց գնալ իր *բանը (ԽԱ, III, 8)։ Մ. Աբեղյանը բերում է մի քանի այլ օրինակներ, որոնք կրկին հաստատում են, որ հայցականով նպատակի պարագան հատուկ է խոսվածքներին.* ուխտ գնալ, տեսություն գնալ, հավաքվել թամաշա, եկել են գողություն *և այլն։*

§ 975. *Տրական հոլովով նպատակի պարագան միանգամայն բնական և օրինաչափական է մեր լեզվի համար։ Բացի անձ ցույց տվող բառերից, մնացած բոլոր բառերը այս կամ այն չափով կարող են նպատակի պարագա դառնալ տրական հոլովով։ Բայց քանի որ տրական հոլովով նպատակի պարագայի ըմբռնումը շատ է ուժեղ, ուստի սակավ չափով անձերը նույնպես ենթարկվում են այդ ըմբռնմանը. օրինակ՝* Սուրհանդակ ուղարկի՛ր *նախարարներին և* հրավիրի՛ր *(ԴԴՎ, 59)։* Արի գնանք Կապույտ բերդի թագավորի *աղջկան (Թ., II, 136)։*

§ 976. *Ամենից հաճախ նպատակի պարագա են դառնում գործողություն արտահայտող գոյականները, ապա մյուս կարգի բառերը. օրինակ՝* Նա ինձ *ճաշի* պահեց *(Իս., III, 322)։* Այո, Շուշանիկ տիկին, եկանք *խրախճանքի,* գնում ենք *արհավիրքի (ԴԴՎ, 44)։* Շատ

անգամ եմ ես զինվորներ ուղարկել *մահվան* (*Նույն տեղում, 590*)։ Գյուղն էին իջել հովիվ պատանին՝ աղջիկ տեսնելու *պարի ու կոխի* (*Թ., II, 58*)։ Նա որոշեց գնալ Աստղիկին հրավիրել *զբոսանքի* (*ԳՍԹ, I, 66*)։ Մենք գնում էինք էն դաժան հրնվանքով, որով միայն *որսի* են գնում (*Թ., II, 74*)։ Էնքան անազին բազմություն էն որ Բաթմանա *ջրին* եկավ ու չոքեց (*Նույն տեղում, 119*)։ Ես քեզանով հարբած կանչեցի նրանց հրդեհի *պարին* (*ՉԵ, 10*)։ Միթե ձեռս կգնա իմ *հարազատին* (*այսինքն՝* ծեծելու. *ԴԴՎ, 300*)։ Խաղաց եկավ *պատերազմի* (*ՆՉԱ, 75*)։ Եկել էր իր թշնամու վերջին *տեսությանը* (*ԱԲԵ, 468*)։ Գնալ *տեսության* (*Շեքս., I, 431*)։ Այս գիշեր *պահակի* գնա (*Նույն տեղում, 143*)։ Բախտը եկավ ինձ *օգնության* (*ՎՓՀՀ, 103*)։ Վերադարձա Միլան Ակադեմիայի երկրորդ տարեշրջանի *դասերին* (*Նույն տեղում, 115*)։

§ *977. Ավելի սահմանափակ թվով բառեր նպատակի պարագա են դառնում գործիական հոլովով։ Այդպիսի բառերից պետք է հիշատակել՝* նպատակ, գործ, դիտավորություն, խնդիր, մտադրություն, հարց *և այդ կարգի մի քանի այլ բառեր. օրինակ՝*

— Այս անգամ պիտի գնաս Հռնաց թագավորի մոտ.

— Նժույգների *գործով*.

— Ոչ, ավելի դժվար *գործով* (*ԴԴՎ, 221*)։ Այդ *դիտմամբ* տարավ այծերուն հոտը Ձորի մեջ հոսող աղբյուրի մոտը (*ՌՊԵ, 308*)։ Ընդհատեց իշխանը *դիտմամբ* (*Մուր., III, 415*)։ Տղան *դիտմամբ* է անում (*ԱԲԵ, 421*)։ Այսօր ձեզ հրավիրել ենք մի շատ կարևոր *գործով* (*ԳՍԹ, I, 34*)։ *Այդպես ասվում է՝* ինչ նպատակով ես եկել։ Ինչ մտադրությամբ էիր գնացել *և այլն։*

§ *978. Նպատակի պարագա է դառնում շատ հաճախ բայերի անորոշ դերբայը։ Հայերենում այսպիսի նպատակի պարագան պետք է կիրառել տրականով։ Մանավանդ շարժում արտահայտող բայերի նպատակի պարագա անորոշը հայցականով բոլորովին հակառակ է հայերենի ոգուն։ 19-րդ դարի մի շարք գրողների երկերում կիրառված հայցական հոլովով նպատակի պարագան պետք է մերժել։ Համեմատի՛ր.* Ես գնացի բազար *գնել* մի քանի բաներ, այլև *դիտել* տեղային վաճառականությունը (*Ր., I, 558*)։ Կերթայի կիոսկ *գնել* լրագիր (*ՀՀԵ, 179*)։ Ինչն է, որ թիթեռին մղում է դեպի ճրագը՝ թևերն *այրել* (*Փափ., 379*)։ Յուր հետ յուր քաջ ծառաներ գնաց *վանել* թշնամին (*Ր., II, 271*)։ Եկել եմ պաշտպանություն *խնդրել* քեզանից (*Մուր., IV, 192*)։

Պետք է հնացած կամ սխալ համարել նաև իբրև նպատակի

պարագա հայցական հոլովով կիրառված անորոշը հետևյալ օրինակի մեջ. Մարզպանի մասին ասա, որ նա ենթարկվեց նախարարությանը, հոգևորականության և ժողովրդին՝ պաշտպանել հայրենիքը *(ԴԴՎ, 134)*։

Անորոշ դերբայի հոլովը որոշելիս պետք է նկատի առնել հետևյալ կարևոր հանգամանքը. եթե անորոշ դերբայի մեջ նկատելի չափով զգալի է նպատակայնության երանգը, ապա այն հայցականով չի կարելի գործածել։ Այս ասվում է նրա համար, քանի որ մի շարք բայերի մոտ նպատակայնությունը ցայտուն չի դրսևորվում. օրինակ՝ եպ հացը տալիս եմ նրան՝ ուտելու. *չի կարելի նպատակի պարագան* ուտել *ձևով արտահայտել. բայց այսպես որոշ չէ նպատակի պարագան* պատրաստել *բայի հետ.* Պատրաստվեցին *ընդունել (Ր., III, 250)*։ Պատրաստվում էր *թռչել (ՆԶՀ, 345)*։

§ 979. Նպատակի պարագա անորոշ դերբայը պետք է կիրառվի միայն և միայն տրական հոլովով. բացառությունները հանդուրժել կարելի է միայն չափածո գրվածքներում։ Նպատակի հայցական անորոշը, ինչպես տեսանք վերևի օրինակներում, խորթ է մեր լեզվի ոգուն և ոճաբանորեն ոչ մի ձևով չի արդարանում։ Համեմատի՛ր տրական հոլովով նպատակի պարագաները հայցականի հետ։

Անպատճառ կկանչե Լեկաց և Աղվանից թագավորներին՝ *մասնակցելու* այդ արշավանքին *(Ր., III, 417)*։ Մի անգամ մի այդպիսի թուղթիկ տվեց իրեն՝ *կարդալու (ԳՍԹ, I, 277)*։ Եկել է *կեղեքելու* ծերունու սիրտը *(Թ., IV, 24)*։ Գյուղն էին իջել հովիվ պատանիք Աղջիկ *տեսնելու (Թ., II, 58)*։ Նա փաղաք էր գնացել հատկապես *իմանալու* գները *(ԱԲԵ, 483)*։ Վերոհիշյալ բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասը առանձնացավ հարևան սենյակը վիստ խաղալու *(նույն տեղում, 577)*։ Վրա է վազում շլդոյին բռնելու *(ՉԸԵ, 320)*։ Գալիս են ամվերջ *մտնելու* այս հին դարպասներից *(նույն տեղում, 261)*։ Նալբանդյանը ելնում էր ազգի ներկա կացքից ու պահանջներից՝ անցյալը *վերագնահատելու* և նրանից ներկայի վերակառուցման համար դասեր առնելու նպատակով *(Աշ., Հովհան. Նալբ. և նրա ժամանակը, 104)*։

Ծանոթություն 1. Ինչպես նկատելի է, նպատակի պարագա անորոշը պետք է տրականով գործածել. բայց եթե տրականով անորոշը ունի կողմնակի նպատակի պարագա անորոշ, ապա այս դեպքում այդ վերջինը հայցականով է կիրառվում. օրինակ՝ Ամեն միջոցի դիմեց *համոզելու* և հրապուրելու

ինձ *մնալ* Թյուրքիայում և նվիրվել բյուրք զեղարվեստական թատրոնի ստեղծմանը *(ՎՓՀՀ, 207)*։

Ծանոթություն 2. Նպատակի պարագա անորոշը, եթե ունի այլևայլ լրացումներ, ապա այդ ամբողջը պետք է դիտել թերև մի դերբայական դարձված և համարել մի ամբողջական լրացում ստորոգյալի համար։

§ *980. Նպատակի պարագա են դառնում մասամբ նաև* առ, ի, համար, հանուն, դեպի *կապերը իրենց մասնակի գործածություններով. օրինակ՝* Պատերազմ պիտի գա *ի պաշտպանումն* հայաստանցի *(ԴԴՎ, 224)*։ Նա միշտ պատրաստ է խիզախել *առ այն (Շեքս., I, 435)*։ *Համեմատի՛ր.* Սրանով դիմում եմ ձեզ *առ այն*։ Շանշյանը գրեց նոր կանոնադրություն և առաջարկեց *ի հաստատություն (ՊՊ, III, 412)*։ Ես այս բարիքն արքայական ընծայեցի *ի հաստատում* սիրո և միության *(ՆՉԱ, 20)*։ Չէ արդյոք խեղճության ու սխալի արդյունքը՝ Սեռունդների երբին *ի մնաս (ՉԴԺ, 59)*։ Սիրեցի նետք *ապրելու համար (Շեքս., I, 131)*։ Մի հնար կգտնեմ նրա ձեռքից *ազատվելու համար (Նուրն տեղում, 508)*։ Խոտհարքներում բքացած գերանդիները ուղվում էին հացահատիկը հնձելու համար *(ՆՉՀ, 317)*։ Դարձնում են նրանց պատնեշները փոշի՝ *Հանուն հացի, լույսի, աշխատանքի* վսեմ *(ՉԴԺ, 255)*։ Մեռնք Հեկտորի հետ մեկտեղ մաքառեցին ընդդեմ զոռոզ Աքայացու *հանուն գեղեցկության (ՆԿ, III, 264)*։

Դեպի *կապը տրական խնդրով նույնպես հակվում է արտահայտելու նպատակայնություն. օրինակ՝* Եվ մղվում է պատռյանից դուրս *դեպի* արյան *արբեցումի (Իս., II, 147)*։ *Այսինքն՝ արյունով արբենալու*։

ԼԵ) ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ

§ 981. Պայմանի պարագան ստորոգյալի այնպիսի լրացում է, որ արտահայտում է ստորոգյալի գործողության կատարման պայմանը. օրինակ՝ Այդ պարագայում ես քեզ այլ պատասխան կտայի. *այս նախադասության մեջ* պարագայում *բառը այն պայմանն է, որով պետք է պայմանավորվեր ստորոգյալի գործողությունը*։

§ 982. Պայմանի պարագան գլխավորապես առաջանում է պայմանի երկրորդական նախադասության վերածումից, որի հետևանքով կիրառվում են դեպքում, պարագայում *ձևերը՝ անորոշ և հարա-*

կատար դերբայների, գործողության անունների կապակցությամբ. *օրինակ՝* Եթե ուզեն, արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի *(ՁԸ, 255)։ Այս բարդ նախադասության մեջ* եթե ուզեն *պայմանի երկ-րորդական նախադասություն է, որ վերածվելով՝ կդառնա* ուզելու դեպքում, ուզելու պարագայում *կամ* ուզած դեպքում, ուզած պարա-գայում, *որոնք հենց պարզ նախադասության մեջ դառնում են պայ-մանի պարագա։ Պայմանի պարագան անխառն չէ. այն հաճախ համատեղում է* ժամանակը, հիմունքը *և այլ հասկացողություններ։ Օրինակներ՝* Լավ և մտածված դաստիարակության դեպքում երեխան դառնում է հասարակության համար օգտակար անհատ, իսկ վատ դաստիարակության դեպքում խորացնում է իր բնավորության նոր գծերը *(Գ. Ստեփանյան, «Արփիար Արփիարյան», 101)։* Պատմում էր Ավան ամին հազվագյուտ դեպքում *(ԱԲԵ, 453)։*

§ *983. Պայմանի պարագան կարող է արտահայտվել անորոշ դերբայի գործիական հոլովով,* պայման *բառի գործիականով,* հա-կառակ դեպքում *կապակցությամբ, որ ունի նաև հակադրական նշանակություն, կապերի միջոցով և այլ ձևերով։ Օրինակներ՝* Ա-զատվում է այն *պայմանով,* որ հրապարակով իր մեղայականն ասի *(Աշ. Հովհաննիսյան, Նալբ. և նրա ժամանակը, 214)։ Անտարբեր թյուրքահայերի քաղաքական բախտի վերաբերմամբ՝* Նազարյանցն անտարբեր պիտի գտնվեր նաև հայերենի համազգային կոնսոլի-դացման նկատմամբ *(Նույն տեղում, 114)։ Գժտվելով հակախալի-բյան Սերոբե և Միքայել եղբայրների հետ՝* ուստա Ղազարի մահից հետո նրա անդրանիկ որդիները ևս օգտագործելու էին Մուխալի «Ապօրինի» ծնունդի տեսությունը *(Նույն տեղում, 17)։ Հեռացնելով Պատկանյանին* պիտի գցվեր նաև նրա վարժատունը *(Նույն տե-ղում, 41)։ Հակառակ դեպքում* ես քեզանից թե՛ կհեռանամ և թե՛ կվնասեմ քեզ *(Մուր., II, 361)։* Այս *պայմանով* միայն ես կարող էի ձեռք բերել Մուրադյան լիցեի ավարտական վկայականը *(ՎՓՀՀ, 98)։* Ինչ *պայմանով* հայերենի կթարգմանեմ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» *(Թ., V, 336)։ Պ. Մարուքեին նայած՝* այնպես էր դուրս գալիս, իբր Համո Համբարձումովիչի և բժիշկ Սերգե Կասպա-րիչի գործն է *(ՁԸԵ, 372)։*

§ *984. Ոչ տրամաբանական ըմբռնումով, բայց ըստ ձևության պայմանի պարագա ենք համարում* դեպք, պարագա, հանգամանք, պայման, դրություն, վիճակ *և այս կարգի այլ բառերի ներգոյական հոլովներով կիրառությունները և* մեջ *կապով արտահայտություն-ները, որոնք՝ չարտահայտելով տեղ, ժամանակ՝ ցույց են տալիս*

այն պայմանները, որոնց մեջ կատարվում է ստորոգյալի գործողությունը. օրինակ՝ Ցանկանում էի այդ *դեպքում* մինչև անգամ խաբվել *(Մուր., II, 377)։* Դժվարին *խնդիրներում* նա էր բանակցում օտար պետությունների հետ *(Ր., III, 204)։* Նման *դեպքերում* ամեն մի խիզախ նահրցի խիզույն պետք է նիշի Վարդան զորավոր քաջին *(ՉԸԵ, 301)։* Բոլոր *պարագաներում* Հոմերոսն ու Դանթեն, Միլտոնն ու Շեքսպիրը, Շիլլերն ու Գյոթեն, Բերանժեն ու Հայնեն նվիրական անուններ էին նրա համար *(Աշ. ՀովՀ., Նալբ. և նրա ժամանակը, 29)։* Հիմնադրի ռեզլամենտացիայի և վեքիլական ռեժիմի *պայմաններում* այդ դպրոցը դարձել էր «Մի կատարյալ ավազականոց» *(նույն տեղում, 52)։* Այդ *դեպքում* խիստ հաճախ էր պատահում *(Ր., III, 185)։* Ինչպես դա ընդունված է նման *պարագաներում (ՉԸԵ, 418)։*

լգ) ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱ

§ 985. *Գործիական հոլովով միասնության պարագան ցույց է տալիս այն առարկան, որ մասնակցում է գործողության, կամ քաշվում է գործողության մեջ մի այլ առարկայի հետ միասնաբար. օրինակ՝* Միայն թե էդպես մի ջնջիլ մեզ *Բնով-տեղով,* Ամբողջ *ցեղով (Թ., «Անբուն կկուն»)։* — Չէ, ասավ Մելիք, քու ամբողջ *ազգով* Անց պիտի կենաս իմ թրի տակով *(Թ., II, 104)։* Սարդար խանի ապարանքը շրջապատի փոքրիկ *գյուղով* ընկած էր լեռան լանջին *(ԳՍԹ, I, 263)։*

Միասնության պարագան հաճախ կիրառվում է միասին *բառի հետ. օրինակ՝ Երկուսով միասին* թողում էինք մեր առաջին սերը *(ՀՀԵ, 319)։*

լէ) ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

§ 986. *Վերաբերմունքի պարագա են դառնում երկբայական մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության թեական, ոչ հաստատուն լինելը։ Այդպիսի մակբայներ են՝* արդյոք, կարծես, ասես, գրեթե, կարծյոք, գուցե, գուցե թե, թերևս, համարյա, համարյա թե, հավանորեն, իցե թե, միթե, ըստ երևույթին, դժվար թե, իբր թե. *օրինակ՝ Կարծես* կայծիլներն ընկնում են պղնձե կուժի մեջ *(ԱԲԵ, 570)։ Ըստ երևույթին* ամեն ինչ կատարյալ էր *(ԳՄԵ, 332)։* Ու *կարծես* սպիտակ թիթեռնիկ լինի *(Թ., I, 402)։* Աչքը գցել

գառան չափ սպիտակ ամպին, որ ասես արածում էր *(ԱԹԾ, 329)*։ *Գրեթե* ամեն օր կկարդաք հայ լրագրներում *(Շիրվ., IX, 224)*։ Նա *ըստ երևույթին* շատ էր չարչարվում *(ԴԴՎ, 223)*։ *Թերևս* կա ձեր մեջ մեկը, որ հակամետ է զիջել Հազկերտին *(Նույն տեղում, 256)*։ *Արդյոք* կայրես սիրտս մաշող կարոտը հեզ... Զարտասանված, սրտում թաղված երազներս աստեղաշող *Արդյոք* կայրես... *Արդյոք* կզգաս սիրտս այրող սերս երազ... Այն խոսքերը, այն երգերը, որ քեզ ասել ես չեմ կարող, *Արդյոք* կզգաս *(Տ., I, 6)*։ *Գուցե* ես լամ բախտիդ համար, իմ անգին *(Նույն տեղում, 32)*։ Իսկ Բրձոլովի, Իվանովի հսկայական նկարները *միթե* օրերի և շաբաթների արտադրություն են *(Շիրվ., IX, 221)*։ *Կարծես* չես կարող ծրարը նորեն փակել *(Մուր., IV, 133)*։ Էս մին բանում *համարյա թե* բացառություն չկա *(ՁԸԾ, 412)*։ *Ասես թե* խմերը ինձ բավական չէին *(ՌՊԾ, 479)*։ Էլ *դժվար թե* նա քեզ իր փոքրությամբ ճնշի *(ՁԸԾ, 231)*։ *Իբր* վերոհիշյալ անձնավորություններին «վերստին ձերբակալել է» ոչ թե քաղաքի իշխանությունը։ *Երևի* հիշում եք էժանագին բացիկները *(Նույն տեղում, 411)*։

լը) ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱ

§ 987. *Վերաբերմունքի պարագային հակադիր է հավաստիության պարագան, որ արտահայտում է ստորոգյալի գործողության հաստատական, ոչ թեական լինելը։ Հավաստիության պարագա են դառնում* իհարկե, հավաստյավ, իրոք, անշուշտ, անպատճառ, անկասկած, անխոս, հարկավ, իսկապես, արդարև, իրավ *(որ)*, անպայման:

Ո՛չ, իմ դստրիկ, կգան *անշուշտ* *(Թ., «Փարվանա»)*։ Որոնք *իսկապես* ոչ մի լեզու չգիտեն *(Շիրվ., IX, 224)*։ Միթե *արդարև* կարծում ես *(Մուր., IV, 134)*։ Բայց *իրավ որ* քեզ նախատելու իրավունք չեմ ունեցել *(Նույն տեղում, 134)*։ Կրկին նույն սառն ու անըզգա աղջիկներն են դառնում, ինչ որ են *իսկապես* *(Մուր., II, 67)*։ Նամակն *իսկապես* գրված էր մեկի կողմից և ոչ թե հնարված օր. Սաքոյի ուղեղում *(ՁԸԾ, 376)*։ Եվ *անպատճառ* բաց չէին անի *(Ր., III, 343)*։ Լսի՛ր, Լևոն, ինչ եմ ասում։ Թիֆլիսում ուզում եմ *անպատճառ* քեզ տեսնել *(Նար., III, 217)*։ Դուք *անշուշտ* Քութայիսից եք գալիս *(Նույն տեղում, 221)*։ Առանց այդ հրաշալիքների նահրյան այդ քաղաքը եթե ոչ իր ամբողջ հմայքը, գոնե իր հմայքի կեսից ավելին *անպայման* կկորցներ *(ՁԸԾ, 300)*։

Ծանոթություն. Վերաբերմունքի պարագա արտահայտող բառերը այժմ դիտվում են իբրև եղանակավորող բառեր և ավել կամ պակաս չափով ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը իր կողմից ասվածի հանդեպ։ Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք արդարև միջանկյալ բառեր են և չեն կարող լրացում դառնալ, բայց և կան բառեր, որոնք խոսողի վերաբերմունքը արտահայտելով, հանդերձ՝ երանգավորում են ստորոգյալը այս կամ այն ուղղությամբ, այսինքն՝ յուրահատուկ լրացումներ են, որոնք միանգամից անտես առնել անհնար է։ Այս մասին տե՛ս Ս. Աբրահամյանի հմտալից հոդվածը (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958 թ., № 4)։

լթ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ 988. Կան այնպիսի պարագաներ, որոնք համատեղում են երկու կամ ավելի նշանակություններ և նայած իրենց գործածության հանգամանքներին՝ մեկ այս իմաստը կարող է ուժեղ լինել, մեկ էլ՝ մյուսը։ Այդպիսի պարագաները կոչում ենք ընդհանուր պարագաներ, որովհետև դրանք հենց տվյալ կիրառությամբ կարող են երկու կամ ավելի պարագաների պաշտոն արտահայտել. օրինակ՝ Նա *ամենևին* չէր քնել (Ր., IV, 176)։ Մենք *կամա-ակամա* պիտի Քյորօղլուն հպատակվենք (ՂԱԵ, 272)։ *Տեղ-տեղ* նա դուրս չեկավ իրականության սահմաններից (Շիրվ., II, 316)։ *Մերթ* հոսում էր որպես հորձանք (ՉԸԵ, 225)։ *Անմիջապես* չորս կողմից չեփորները ձգեցին իրենց խստաձայն կոչը (ԴԴՎ, 468)։ Բեմի վրա սայթաքելու վախը իմ մեջ *րոպեապես* փոխվում է հանդգնության (ՎՓՀՀ, 92)։ *Այլևս* չի լսվի երեխաների լացը (ԴԴ, II, 291)։ *Մին* մթնում, մռայլում է, *մին* բացվում ու ժպտում (Թ., V, 269)։ Որոշում էի ես *վերջապես* (Մուր., II, 73)։ Եվ *վերջապես* մի քանի օրից հետո մեր տնից գնաց Մարին (ԻսԵ, 209)։ Իրեն ուղղված հարցերին պատասխանում էր *իսկույն* (Նար., III, 229)։ *Իսկույն* շուռ եկավ (Մուր., IV, 131)։ *Սկզբում* կլուբում էլի *երբեմն-երբեմն* հանդիպում էինք իրար (Նար., III, 222)։ *Այսպես՝* ամենևին, մեկ, մերթ, երբեմն-երբեմն *արտահայտում են և քանակական և ժամանակային հարաբերություն,* տեղ-տեղ, չորս կողմից *ցույց են տալիս ձևը և տեղը,* կամա-ակամա *ձև է և պատճառ.* րոպեապես, վերջապես, անմիջապես, իսկույն *արտահայտում են ժամանակ և ձև։ Իհարկե այսքանով չեն սպառվում ընդհանուր պարագաներ արտահայտող բառերը. դրանց նշանակությունները պետք է որոշել տվյալ բնագրում։*

V ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

§ *989. Հաճախ նախադասությունն ունենում է երկու կամ ավելի այնպիսի անդամներ, որոնք տվյալ նախադասության մեջ կատարում են միևնույն շարահյուսական պաշտոնը, այսինքն՝ երկու կամ ավելի ենթականեր կապակցված են լինում միևնույն ստորոգյալի հետ, երկու կամ ավելի ստորոգյալներ են միևնույն ենթակայի համար, երկու կամ ավելի որոշիչներ, հատկացուցիչներ, բացահայտիչներ, պարագաներ են միևնույն լրացյալի համար. օրինակ՝* Միայն խնդրում եմ ներեք նրանց՝ *իմ խեղճ,* իմ *անբան* հայրենակիցներին *(ԱԲԵ, 567)։* Սպասավորները *խմբված էին* սեղանատանը, *ծիծաղում էին, հռհռում էին, կատակներ էին* անում և սեղանն *էին պատրաստում (Ր., III, 113)։ Օրերը* օրերի, *շաբաթները* շաբաթների ետևից անցնում էին Շահյանի համար *դանդաղ, միակերպ, տաղտկալի (Նար., III, 361)։ Այս երեք նախադասության մեջ ունենք մեկից ավելի այնպիսի որոշիչներ, ստորոգյալներ, ենթականեր, ձևի պարագաներ, որոնք ճիշտ և ճիշտ միևնույն շարահյուսական պաշտոնով են հանդես գալիս։ Այդպիսիք են առաջին նախադասության մեջ* խեղճ, անբան *որոշիչները, երկրորդ նախադասության բոլոր ստորոգյալները, երրորդ նախադասության ենթակաները և ձևի պարագաները։*

§ *990. Նախադասության մեկից ավելի այն անդամները, որոնք նախադասության մի այլ անդամի նկատմամբ կատարում են հար և նման պաշտոն և իրար նկատմամբ շարահյուսորեն համազոր են, այսինքն՝ մեկը մյուսին չի ստորադասվում, այլ երկուսը միաժամանակ համազոր կերպով ստորադասվում են մի այլ անդամի, կամ կապակցվում են նրա հետ, կոչվում են նախադասության* **բազմակի** *կամ* **միավորյալ** *անդամներ։*

Բազմակի կամ միավորյալ անդամները կարող են ունենալ նաև իրենց լրացուցիչները, կարող են լինել պարզ և բաղադրյալ, կարող են լինել մի ամբողջ դարձված, առանձին խմբավորումներով և այլն։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Այժմ հայերենում բազմակի ենթակա և բազմակի ստորոգյալ ունեցող նախադասությունները կոչվում են միավորյալ նախադասություն և դիտվում են իբրև բարդ նախադասություններ։ Մեծ հայագետ Մ. Աբեղյանը միավորյալ նախադասություն է համարում միայն այն նախադասությունը, որն ունի բազմակի ստորոգյալ. իսկ բազմակի ենթակա ունեցող նախադասությունը դիտվում է իբրև մի այնպիսի պարզ նախադասություն, որն ունի բազմակի անդամներ՝ ճիշտ այնպիսի նախադասությունների նման, որոնք ունեն բազմակի որոշիչներ, հատկացուցիչներ կամ պարագաներ։

Պետք է ասել, որ հանգուցյալ հայագետը հիմք ունի տարբերելու բազմակի ենթակա և բազմակի ստորոգյալ ունեցող նախադասությունները։ Բազմակի ստորոգյալ ունեցող նախադասությունն արտահայտում է միևնույն ենթակայի տարբեր գործողությունները, որոնք տվյալ դեպքում միավորվել են մի ամբողջության մեջ՝ մնալով իբրև առանձին, անկախ գործողություններ արտահայտող նախադասություններ, որոնց ստորոգյալները ենթակային վերագրվում են դարձյալ առանձին-առանձին. օրինակ՝ Եվան խոսում էր համարձակ, արագ, նախադասությունների կիսում հանկարծ կանգ էր առնում, մտառու աչքերով անթարթ նայում էր խոսակցի դեմքին, կարծես բառեր էր որոնում միտքը լավ արտահայտելու համար և շարունակում էր նույն համարձակությամբ, նույն արագությամբ *(Նար., III, 229)։ Այս առանձին ստորոգյալները մենք չենք կարող այնպես միավորել, որ կարողանանք մի բառով արտահայտել, իսկ միևնույն ստորոգյալի բազմակի ենթակաները կարելի է հոգնակի դերանունով արտահայտել. օրինակ՝* Նեսոն ու հին ընկերներս իմացել էին, թե վերադարձել եմ, առավոտից եկել էին մեր տան չորս կողմը պտտվում էին ու պատառակերիցը ծիկրակում... *Նրանք* էլ առաջվա նման մտերիմ ու համարձակ չէին ինձ հետ: Ամենից առաջ ուշադրություն դարձրին իմ շորերի վրա *(Թ., III, 118)։ Այս նախադասության մեջ միավորյալ ենթակաները ոչ միայն հոգնակի դերանունով են արտա-*

հայտված, այլև շարունակության մեջ արդեն զեղչված են։ Իսկ բազմակի ստորոգյալները մի բառով արտահայտել կամ զեղչել անհնար է։

§ 991. Այստեղ նախադասության բոլոր բազմակի անդամները ուսումնասիրվելու են իբրև բազմակի կամ միավորյալ անդամներ՝ անկախ այն բանից, որ բազմակի ստորոգյալ ունեցող նախադասությունը յուրահատուկ բարդ նախադասություն է։

. 1. ԲԱԶՄԱԿԻ ԵՆԹԱԿԱ

§ 992. Բազմակի ենթակաները լինում են երկանդամանի, բազմանդամանի և խմբավորումներով, այսինքն՝ երկու կամ ավելի անդամ մի ներփակ խումբ են կազմում և ապա միավորվում են մի այլ ներփակ խմբի կամ առանձին ենթակայի հետ։

Բազմակի ենթականերն ըստ իրենց կապակցման ձևերի՝ արտահայտվում են պարզ թվարկումով (առանց շաղկապի), միավորվում են բաղհյուսական, հակադրական, տրոհական շաղկապներով։

Ծանոթություն. Եթե բազմակի ենթակաները ունեն առանձին-առանձին լրացումներ, ապա յուրաքանչյուրը դիտվում է իր լրացումով, իսկ եթե լրացումը այնպիսի մի բառ է, որ արդեն կորցրել է իր լրացական դերը, այս դեպքում այդպիսի լրացումը վերցվում է իբրև միևնույն ենթակայի մաս և ենթակայի հետ համարվում է բաղադրյալ ենթակա։ Բազմակի ենթակաները ոչ միայն կարող են առանձին լրացումներ ունենալ, այլև լրացումը կարող է վերաբերել բոլորին։

ա) ԵՐԿԱՆԴԱՄԱՆԻ ԲԱԶՄԱԿԻ ԵՆԹԱԿԱ

§ 993. Երկանդամանի բազմակի ենթակաները միմյանց հետ միավորվում են առանց շաղկապների և շաղկապներով։

Անշաղկապ երկանդամանի ենթակաները միավորվում են թեթև դադարով, թվարկման թույլ հնչերանգությամբ և միմյանց հետ կազմում են աններփակ միավորյալ անդամների մի շարք, որտեղ այդ միավորյալ ենթակաների թվարկման հնարավորությունները չեն սահմանափակված, այսինքն՝ շարքը ամփոփված, ներփակված չէ. օրինակ՝ Ոչխարների անուշ *բառանչը*, արջառների ուռախ ձայ-

նարկությունը կենդանացնում էին խոտավետ հովիտները խիստ ախորժելի աղմուկով *(Ր., III, 472)*։ Մենք կոխում ենք այն հողերը, որով անցել են սուրբ Լյուդովիկոսը, *Ռիչարդ առյուծասիրտը (Իսհ, 257)*։ Բայց նրա յուրաքանչյուր *խոսքը, շարժումը* մատնում է նրա հուզումը *(ՍԶՄԿԳ, 322)*։ Բացվում են իմ առաջ ահա տխուր *օրեր, շաբաթներ*՝ տրտում խոհերով ու ցնորված երազներով *(նույն տեղում, 324)*։ Բայց թող *աշխարհներն, աստղերն* իմանան *(Շիրազ, ՀԸ, 156)*։

§ *994. Այսպիսի աններփակ թվարկվող բազմակի ենթակաների շարք են կազմվում նաև* ոչ մի *ժխտական դերանունը և* ոչ... ոչ *շաղկապը. օրինակ՝* Ոչ մի *շահ*, ոչ մի *թնդանոթ* չէ հաջողել որևէ սեյիդի մոլեռանդության արգելք հանդիսանալ *(Փափ., 520)*։ Երկար ժամանակ *ոչ ես* էի խոսում, *ոչ նա (ԶԸԾ, 437)*։ *Ոչ* Հայաստանի մարզպանը *ես* կլինեմ, *ոչ դու*, խոզենու պա՛րկ *(ԴԴՎ, 362)*։ Այստեղ *ոչ գնողներ* կային, *ոչ վաճառողներ (Մուր., I, 296)*։

§ *995. Երկանդամանի բազմակի ենթակաները միավորվում են* և, ու *բաղհյուսական (կապակցական) շաղկապներով և կազմում են մի ներփակ շարք առանց թվարկման հնչերանգության ու դադարի, այսինքն՝ հիշյալ շաղկապներով ենթակաների շարքը լրանում և ամփոփվում է. օրինակ՝ Մանուկն* ու *Աբգարը* վեր թռան տեղներից և գնացին *(ԴԴՎ, 409)*։ Մյուս օրը *թագուհին* և *օրիորդը*՝ Ալանառողանի հսկողության ներքո ճանապարհ ընկան դեպի պարսկաստան *(Ր., III, 467)*։ Սակայն մուտքի երկու կողմերը շղթան վզերին՝ որպես պահապաններ, կապված էին մի *վագր* կատաղի և մի *խոյ* ամեհի *(Իսհ, 339)*։ Վերին աստիճանի տարօրինակ էր թվում նրան Մանեի սառնության չափ հանգիստ *ընդունելությունը* և մանավանդ խորհրդավոր *լռությունը (Նար., III, 99)*։ Իսկ այդ *քարը* և ուլունքի կանաչ *շարանն* ստվերագծում էին նկարի կնոջ երիտասարդ և գեղեցիկ դեմքը *(ԱԲԾ, 637)*։ Ոչնչացան *երկիրներ* ու *ժողովուրդներ (Իսհ, 257)*։ Դեռ հնչում էին նրա ականջին Ամենի *խոսքեր* ու ոռնաձայներ *(ԶԸԾ, 210)*։ *Գյուղն* ու գյուղական *կյանքը* ինձ համար նորություն է *(Նար., III, 406)*։ Նույն լեռների բարձրավանդակների վրա դրած էին Տարոնի իշխանների անմատչելի *բերդերը* և նրանց անառիկ *ամրոցները (Ր., III, 22)*։

§ *996. Միայն* և *շաղկապով են միավորվում* թե, ոչ *բառերով թվարկվող բազմակի ենթակաները. օրինակ՝* Քեզ չեն օգնի *ոչ ցուպը* քո *և ոչ պսակն Ապոլոնի (ՀԻ, 36)*։ Իսկ այս առավոտ չէին երևում ոչ *հովիվը և* ոչ նրա *հոտերը (Ր., III, 472)*։ Այդ ստորերկրյա

խորշերում թե՛ տերը և թե՛ անասունը բավական պաշար ունեին *(Ր., III, 182)*։ Իմ մեջ արմատանում էր *թե՛* արվեստի *գիտակցությունը և թե՛* արվեստագետի *արժանապատվությունը (ՎՓՀՀ, 207)*։ *Չի ասվում՝* Ո՛չ նա ու ո՛չ ես. թե նա եկավ ու թե դու *և այլն*։

§ *997. Երկանդամանի բազմակի ենթակաները կարող են միավորվել կրկնվող բաղհյուսական և կրկնվող տրոհական շաղկապներով։ Այս դեպքում առաջանում են աններփակ բազմակի ենթակաների շարքեր՝ ուժեղ թվարկման հնչերանգությամբ. օրինակ՝* Իզուր են խոսում *Ավան ամին էլ,* Շուղանց *հավևորն էլ (ԱԲԾ, 529)*։ Շնչում է, ապրում և՛ *մութն, և՛ ահեղ (Թ., «Լոռեցի Սաքոն»)*։ Թե՛ գող, թե՛ գազան հենց դատարկ վախից Հեռու են փախչում նրա փարախից *(նույն տեղում)*։ Հաղթության փառքով ու գինով հարբած Քնած են բերդի և՛ զորքերն, և՛ տեր *(Թ., «Թմկաբերդի առումը»)*։ Որի երգերում *թե՛ քորեյ, թե՛ յամբ* Դյութում են իրենց տոկուն պարզությամբ *(ՉԸԾ, 215)*։

§ *998. Նախադասության երկանդամանի բազմակի ենթակաները կարող են միավորվել հակադրական և չկրկնվող տրոհական ու այնպիսի այլ շաղկապներով, որոնք նաև տրոհական նշանակություն ունեն։ Այս պարագայում առաջանում է ներփակ անդամների միավորում, որն անդամահատված է և արտահայտվում է զուգադրման հնչերանգությամբ. օրինակ՝* Երբ տանը *քաղցրավենիք* է լինում, *կամ կարկանդակ (ԱԲԾ, 641)*։ Ոնց իմանար *Սողոն, կամ* «ղարիբ» գաղթական *մշեցին (ՉԸԾ, 41)*։ Սրընթաց *պախրա, թե՛ գայլ* գիշատիչ Շեշտակի անցավ փարախի մոտով *(Թ., «Լոռեցի Սաքոն»)*։ Երակներում այրում է, *և ոչ թե մածուն (ՉԸԾ, 125)*։ Գերագույն *արվեստը*, կատարյալ *արվեստը* նա չէ, որ շնչավորում է հասարակ պաստառը, իմաստավորում է կամ ձևավորում համեստ մարմարը, կամ կենդանացնում տպագրված թուղթը, այլ մասսաների վրա գործած անմիջական ազդեցության շնորհիվ՝ *դրամատուրգիան (ՎՓՀՀ, 290)*։ *Լեռը* անմատչելի պատնեշ էր դրել նրանց մեջ, *իսկ ձորը*՝ անանցանելի խրամատ *(Ր., III, 179)*։ Բայց ինչու միայն *ես* երգեմ, միայն *ես, և ոչ թե նրանք (ՉԸԾ, 35)*։ Եվ ոչ թե վարժապետ *Սողոն, այլ Գողոսն է* հիմա քո որդին *(նույն տեղում, 40)*։ Թող իմ սիրտը *բուրմունքը* վարդի, իսկ ուղեղս կրակը խանձի *(նույն տեղում, 44)*։ *Առաջինը* ապրում էր եկեղեցու հարավային կողմը, իսկ *երկրորդը*՝ հյուսիսային *(Մուր., IV, 277)*։

Ծանոթություն 1. Զուգադրումը կարող է արտահայտվել առանց հակադրական շաղկապի. օրինակ՝ Պառավը հագնըված էր թիֆլիսեցի կնոջ տարազով, *Նատալին՝* եվրոպական *(Նար., III, 7)։*

Ծանոթություն 2. Երբեմն ստորոգյալն ընկնում է բազմակի ենթակաների մեջ. օրինակ՝ խորունկ լռություն կա և անեզր անդորրություն *(Իսհ, 257)։*

§ 999. Երկանդամանի բազմակի ենթակաները կարող են արտահայտվել նաև առանձին խմբերով, այսինքն՝ ենթակաները կազմվում են երկու իրար հետ սերտ առնչվող առանձին բաղհյուսական անդամներից (հատկապես ու *շաղկապով) և ապա թվարկվում, հակադրվում կամ ներփակվում են* և *շաղկապով։ Ըստ որում պարտադիր չէ, որ երկու անդամն էլ առանձին խմբավորված լինեն. մեկը կարող է նաև չունենալ իր զույգը. օրինակ՝ Տուն ու տեղը և ամբարները* այնքան լիքն էին *(Փափ., 239)։* Հուրհրացին ամեն *թերթ ու փերթ,* ամեն *քար ու գանձ (Իսհ, 287)։ Սար ու ձոր, դար ու դաշտ* պատած էր անթափանցիկ մառախուղով *(Ր., III, 20)։* Մի աչքում *մարդ ու կնիկ* էին պառկում, մյուսումն էլ *էշն ու տերերի ընտանիքը (Իսհ, 332)։*

բ) ԲԱԶՄԱՆԴԱՄԱՆԻ ԲԱԶՄԱԿԻ ԵՆԹԱԿԱ

§ 1000. Բազմանդամանի բազմակի ենթական կազմվում է երկուսից ավելի ենթականերից, որոնց միավորման ձևերը և բնույթը որոշ չափով տարբերվում են։ Ամենից առաջ նշենք թվարկման լայն հնարավորությունը, որ միավորման բոլոր ձևերում էլ կարող է հանդես գալ, ապա հակադրության որոշ սահմանափակությունը, որ այս կամ այն կերպ բազմանդամանի ենթական վերջիվերջո վերածում է երկանդամանու։

§ 1001. Բազմանդամի բազմակի ենթական կարող է միավորվել առանց շաղկապների, լոկ կապակցական դադարներով՝ թվարկման հնչերանգության մեծ հնարավորություններով։ Բազմակի ենթակաների այսպիսի միավորումը կազմում է աններփակ թվարկվող անդամների մի շարք. օրինակ՝ Ամեն առավոտ արծաթյա փողերի *հնչյունը,* որսորդական բարակների *մռնչյունը,* սիգապանծ նժույգների *խրխինջը,* խառնվում էին սորամուտ անասունների վաղորդյան հանգիստը *(Ր., III, 472)։* Ծառերի *տերևները,* խոտերի *ծղոտները,*

291—26

հովիտների նախշուն *ծաղիկները*՝ ցողված անձրևային կաթիլներով, կարծես սփռված լինեին գույնզգույն գոհարներով (*նույն տեղում, 20*)։ Բոլոր կողմերից հավաքված էլան *Թյուրք, Իտալացի, Հնդիկ, Վրացի, Ռուս, Շոտլանդացի, Հայ, Խունխուզ, Թաթար, Կիրգիզ, Չինացի* (*ՉԸԵ, 38*)։ Սակայն այս երեկո անձրևից պաշտպանող այս պարզունակ *առաստաղը*, ծղրիդի խաղաղիկ *դայլայլը*, անասունների անվրդով *աղորումը*, խոտի *բուրմունքը* խրճիթը լցնում էր մտերիմ և խոր իմաստով, կյանքի իմաստով (*ԴԴՎ, 406*)։ Ամրոցի բարձր *շրջապարիսպը*, ահագին *բուրգերը*, բարձր *աշտարակները* դարերով մարտնչում էին բնության արհավիրքի և թշնամու հարձակման դեմ (*Ր., III, 22*)։

§ *1002. Այս թվարկման վերջին անդամը կարող է միավորվել* և, ու *շաղկապներով և այդպիսով ներփակել թվարկվող շարքը։ Ներփակող անդամը երբեմն ուղեկցվում է թվարկման վերջը ազդարարող այլևայլ բառերով. օրինակ՝* Նրան էին նայում *Հազկերտը, Միհրներսեհը, Մոգերը, Վասակյանները և... երկիրը...* (*ԴԴՎ, 416*)։ Ուսուցչի իմաստալից *զրույցները* աշխարհի մասին, զվարթ *կատակները, երգը,* որին Կոմիտասը հաճախ անցնում էր երաժշտության մասին ունեցած խոսակցությունից հետո, տան *կոկիկությունը*, ծաղկամանների մեջ ու պատուհանի տակ հուրհրացող *ծաղիկները* և վերջապես նրա պարզ ու ընկերական *վերաբերմունքը* պարզապես թովում էին աշակերտներին (*ԼԹԿ, 73*)։ Այդ ցանցի մանր և անձուկ հյուսվածքի մեջ սեղմված էին խորին *ձո●եր*, մթին *հովիտներ* և նեղ *դաշտեր* (*Ր., III, 179*)։ Այդ էր պատճառը, որ նրանց աշխարհի *բարքը, վարքը, սովորությունները*, կենցաղավարության *եղանակը* և *առհասարակ* նրա հասարակական *կազմակերպությունը* յուր բոլոր երևույթներով հետևանք էր երկրի բնական պայմանների (*նույն տեղում, 183*)։ Այստեղ էր *տատս*, Սև Օհանանց *Մանիշակը*, Ափնանց *Զարմանը*, Տերանց *Զանազանը*, *Մանանը*, Շեկոյանց *Սուսամբարը* և բերդցի *Վարոն* (*ՍԶՄԿՊ, 131*)։

§ *1003. Բազմանդամանի բազմակի ենթակայի անդամները կարող են թվարկվել* և, թե, կամ, ոչ, *մասամբ*՝ ու *շաղկապներով, ըստ որում վերջին չորս շաղկապներով միավորվող շարքը կարող է* և *շաղկապով ներփակվել՝ ավարտելով թվարկումը. օրինակ՝ Ոչ մարքեր* են պետք, *ոչ ձիրք և ոչ խելք* (*Թ., «Պոետն ու Մուսան»*)։ Ահա գարուններ արևածին, *ու շինդ, ու փառք, ու կառուցում* (*ՉԸԵ, 191*)։ Որոնց *թե՛ խոսակցությունը, թե՛ վարմունքը և թե՛ դեմքերը* արտահայտում էին կատաղի վայրենություն (*Ր., IV, 278*)։ Աշխար-

Նային *ո՛չ մի բարիք, ո՛չ մի փառք և ո՛չ մի հրապույր* չի գայթակղեցրել ինձ (*Մուր., II, 93*)։ Ո՛չ տուն մնաց, ո՛չ իրավունք և ո՛չ շարժվելու տեղ (*Փափ., 541*)։ Այդ դեպքում թե՛ ռուս կառավարությունը, թե՛ կրոնավորությունը և թե՛ ժողովուրդը միացել էին անգլիացոց (*Նույն տեղում, 520*)։ Ինչո՞ւ համար կատարյալ հրաշալիքներ չեն կարող համարվել թեկուզ հենց *բերդը, կամ* Վարդանի *կամուրջը, կամ* վերջապես Առաքելոց *եկեղեցին* (*ՉԸԵ, 300*)։ *Ո՛չ* Աբաս *արքաեղբայրը, ո՛չ* Աշոտ *սպարապետը, ո՛չ* Գագիկ *Արծրունին* չէին կամեցել միության մեջ մտնել (*Մուր., III, 283—284*)։ Ե՛վ *տիկնայք* փափկասունք Հայոց աշխարհին, և՛ *գեղեցկուհիք* քաջակորովք, և՛ առհասարակ ժողովուրդն հայոց զինվորյալ... (*ԴԴՎ, 719*)։ Մեր գյուղում սովորական բան է և՛ գողությունը, և՛ հաչիցը կապելը, և՛ ծեծելը (*Թ., III, 120*)։

§ 1004. *Երբեմն ենթական լինում է մի ընդհանուր բառ, դերանուն, որոնք մասնավորվում են առանձին թվարկվող բառերով։ Այս վերջինները մասամբ բացահայտիչներ են, մասամբ էլ թվարկվող բազմակի ենթականեր. օրինակ՝* Ու՛ր գնացին *նրանք՝* այդ ծովածավալ *բանակը, նժույգները, ամբոխը* (*Իսե, 257*)։ Վեզըլեի *շրջակայքը՝* այս *արտերը, ուղիները, ժայռերը,* ինչ մեծամեծ անցքերի վկա են եղել (*Նույն տեղում, 257*)։ Ուրիշ մեծ *չարիք* էլ՝ ուժեղացավ պապական *իշխանությունը,* եկեղեցու *բռնապետությունը* (*Նույն տեղում*)։ Ամեն մի *արհեստավոր՝* թե՛ *դարբինը* և թե՛ *ոսկերիչը,* թե՛ *հյուսնը* և թե՛ *որմնադիրը,* թե՛ *գինեգործը* և թե՛ *երկրագործը* օրեցօր կատարելագործում էին իրենց արհեստը (*ՂԱԵ, 214*)։

§ 1005. *Նախորդ պարբերության մեջ ընդհանուրը մասնավորվում և թվարկվում է մասնավոր երևույթների միջոցով, հաճախ դրան հակադիր՝ թվարկվող մասնավորները ներփակվում են* այս ամենը, այս բոլորը, բոլորը, ամենը *ընդհանրացնող դերանուններով. օրինակ՝* Գեր ձիերը, նրանց նոր սարքը, արծաթ կոճակները, ձիերի վզից կախած գունավոր փնջերն ու զանգուլակները, վերջապես ֆուրգոնների տեսքը, նրանց վրա դարսած իրերը, առաջից գնացող ձիավորները,— *այս ամենը* մայիսյան արևի տակ փայլփըլում էին, շլացնում և հաղթական երթի նմանություն տալիս (ԱԲԵ, *516*)։ Ամեն օր մի տնակ, ամեն տեղ նոր խաղ ասող, մտերմական զրույցներ, հասարակ մարդկանց պարզ ընդունելություն, անպաճույճ կենցաղ, լեռների պես խիստ, բայց բարի բնավորություն, հեքիաթներ՝ հովվական վրանների տակ քրդական բլուլի սրտից

հասող հնչյուններ, սևափայլ աչքերի ամոթխած ժպիտ, աղջիկների հեզաճկուն պարը կտուրների վրա, սարն ի վար վազող ջրերի երգը, մանուկների զիլ ճիչը, գառների անուշ մայունը,— *ամենը, ամենը* զբաղեցնում էին Կոմիտասին *(ԼԹԿ, 83)*։ Հենց միմիայն գյուղի արտաքին տեսքը՝ նրա ծուռումուռ, անասունների մշտական աղբով ծածկված, ցեխոտ փողոցները, անճոռնի, շատ տեղ գետնափոր տները, վտիտ անասունները, ճռճռան ծանրաշարժ սայլերը, ահագին փափախների տակ ճնշված մարդիկ, բերանն ու քթները կապած կանայք, կեղտոտ ու գզգզված երեխաները, անհամար քոսոտ շները,— *ամեն, ամեն բան* ինձ վերին աստիճանի տգեղ և հակակրելի է թվում *(Նար., III, 409)*։

§ *1006. Բազմակի ենթակաները միավորվում են նաև հակադրական շաղկապներով՝ կազմելով ներփակ մի խումբ, որտեղ ենթակաները անդամազատված և զուգադրված են միմյանց։ Սովորաբար հակադրական շաղկապներով բազմակի ենթակաները երկանդամանի են լինում, սակայն երբեմն հակադրական շաղկապով միավորվող երկու ենթականերին բաղհյուսվում են և, ու շաղկապների միջոցով կամ առանց շաղկապի նաև այլ ենթականեր և կազմում բազմակի ենթակաների մի բարդ կապակցություն. օրինակ՝* Լուռ և մտամոլոր էին երևում *ոչ միայն մինիստրները*, այլև բոլոր *պաշտոնյաները* ու մինչև իսկ *ատրճանավորները (Փափ., 522)*։ Ոչ միայն *Մահմուդը*, այլև մի քանի ուրիշ *ծառաներ* էլ, հետո դրացի տնից ելնելով չորս-հինգ *հոգի* ևս, *ոմանք* ուղղակի պատերից ցած թռնելով վազեցին մթության մեջ դեպի աղաղակի կողմը *(Նույն տեղում, 582)*։ Մենք չենք *մարդասպանը, գողը, ավազակն ու հարստահարողը*, այլ այդ *մեծամեծները, պաշտոնյաները*, այդ *վեզիրվիզարեթը*, այդ բոլոր պաշտոնական *կողոպտողներն* ու *ավազակները (Փափ., 513)*։

2. ԲԱԶՄԱԿԻ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ *1007. Բազմակի ստորոգյալները նույնպես վերաբերում են մի ենթակայի և կամ մի խումբ բազմակի ենթակաների և միմյանց հետ միավորվում են քերականական տարբեր տիպի կապակցություններով։ Բազմակի կարող են լինել թե՛ բայական և թե՛ անվանական ստորոգյալները։*

ա) ԲԱԶՄԱԿԻ ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 1008. *Բազմակի ստորոգյալները նույնպես կարող են լինել երկանդամանի և բազմանդամանի։ Այստեղ երկանդամանի և բազմանդամանի ստորոգյալները չենք առանձնացնում՝ նկատի ունենալով նրանց միավորման ձևերի նմանությունը։*

§ 1009. *Բազմակի ստորոգյալները իրար հետ կարող են միավորվել բաղհյուսական դադարներով՝ առանց որևէ շաղկապի։ Այս պարագայում բազմակի ստորոգյալները գերազանցապես իրար հաջորդում են միևնույն ժամանակով և կազմում են մի աններփակ թվարկվող ստորոգյալների շարք. օրինակ՝* Սովերները *երկարում էին, ձգվում* դեպի արևելք *(ԱԲԵ, 529)։ Ասել էր* Արզումանը, մի քիչ *զայրացել,* հետո դառնացած *վերջացրել (Նույն տեղում)։* Էդպես դա *գնաց* գոմի ծերը, *հոտոտեց* ձիերին, մեկի կողքին *խփեց* մռութով, մյուսի պոչի վերևը *կծեց,* խեղճ ձիուն *ծուլ արավ (ՍՁ, V, 251)։* Անխոնջ Կողակն էր միայն *հոտոտում* ամեն կողմ, *ծանոթանում (ԴԴՎ, 194)։* Նա *դուրս գնաց* հարկաբաժնից, ամրոցի դարպասով *անցավ գնաց* անդնդի եզրը *(Նույն տեղում, 27)։* Նա *բռնեց* սիրելի որդու ձեռքից, *տարավ, նստեցրեց* յուր մոտ՝ փառավոր բազմոցի վրա *(Ր., III, 479)։* Մարդը իր կացինը գոտկից *հանեց* փայտը *ջարդեց, մանրեց, դարսեց* մյուս կողմը *(Թ., III, 142)։*

§ 1010. *Միանման ժամանակով արտահայտվող բազմակի ստորոգյալները կարող են արտահայտել թե՛ գործողության միաժամանակություն և թե՛ հետևողական հաջորդականություն. օրինակ՝* Աչքալույս *են գրում,* նամակը *տալիս են* սուրհանդակին, *ուղարկում են (Թ., III, 164—165)։* Իսկույն չորերս *հագա,* հրացանս *վերցրի, վազեցի (Թ., III, 209)։* Ուշի-ուշով *դիտում էին* արծվիկները ամեն բան իրենց շուրջը, *ծանոթանում էին* իրենց շրջապատող աշխարհի հետ *(Նույն տեղում, 215)։* Դրա համար էլ նա դանդաղ *էր բարձրանում,* մահակը *դեմ տալիս* քարին, երբեմն *կանգնում* շունչ առնելու *(ԱԲԵ, 196)։* Սիմոնի կինը մեծ շերեփով *խառնում էր* կաթսան, շուտ-շուտ ածխակոթերը կաթսայի տակ *հրում (Նույն տեղում, 519)։* Հրացանիս ոտը *վեր քաշեցի,* վառոդը *բաց արի,* հրացանը երեսս *կալա,* որքան ուժ ունեի *զարկեցի* ճակատիս *(Թ., III, 209)։*

§ 1011. *Անշաղկապ թվարկվող բազմակի ստորոգյալների բաղադրյալ ժամանակները սովորաբար օժանդակ բայը չեն կրկնում, եթե ճիշտ և ճիշտ միևնույն բայական ժամանակներով են արտա-*

հայտվում։ Ընդհանրապես օժանդակ բայը դրվում է առաջին ստորոգյալի հետ, իսկ մյուսները մնում են առանց օժանդակի. օրինակ՝ Իվան Բեյը խոնարհ երեխայի պես նստում էր վառարանի մոտ, սինու մեջ լցրած բրինձը մատով *չոկում* (ԱԲՆ, 402)։ Ցերեկով երբ նա *սրտնեղում էր,* թղթի մի կտորի վրա լրագրից կամ հին ժուռնալից *արտագրություններ էր անում,* գրածը *դարսում, համարակալում* ճիշտ առաջվա պես (Նույն տեղում, 403)։ Ամենքն էլ մեզ նայելիս նախ մեր շորերն *էին զննում,* ապա խորին ուշադրությամբ *լսում* մեզ, *դիտում* մեր դեմքի գծերը (Փափ., 115)։ Սիրանը տխրում է, *լալիս* թ՛ե հոր առաջ, թ՛ե մենակ ժամանակ (ՍԶ, V, 314)։

§ 1012. Օժանդակ բայը ընդհանրապես երկրորդ ստորոգյալի հետ է դրվում, երբ բազմակի երկու ստորոգյալը իրար մոտ են շարադասվում և երկուսը ավել կամ պակաս չափով իմաստային միասնություն են ձեռք բերում. օրինակ՝ Թագավորը *հրավիրում հավաքում՝ է* իր երկրի երիտասարդ արքայազուններին ու իշխանազուններին (Թ., III, 224)։ Ծառերը խմբովին թևերի ամբողջ թափով չեշտակի *գալիս նստում էին* բակի մեջ տնկված ճակակի ծառերի վրա, *ճվճվում-ծլվլում էին* արևի ճաճանչների տակ պեծին-պեծին տվող մատաղ տերևների մեջ (Նար., III, 8)։ Զմեռը մեր դասարանի լուսամուտի առաջ, հենց դրսի գոգին մեկ-մեկ *գալիս արևկող* էին անում երկու ճերմակ աղավնիներ (ՍԶՄԿՊ, 236)։

Անսովոր չեն նաև այս տիպի այնպիսի ստորոգյալները, երբ օժանդակ բայը դրվում է առաջին ստորոգյալից հետո. օրինակ՝ Ձենը ոռնալով ու դրմդրմբալով *գնում է հասնում* ամեն կողմի վրա հազար վերստ (Թ., III, 252)։

§ 1013. Օժանդակ բայի կրկնությունը բազմակի բոլոր ստորոգյալների վրա հատկապես լինում է այն պարագայում, երբ այդ ստորոգյալները իրենց երկրորդական անդամների հետ առանձին ինքնուրույն ամբողջություն են կազմում և դադարի ավելի մեծ միջոց են պահանջում, քան սովորական թվարկման դեպքում. օրինակ՝ Ամեն շաբաթ կեսօրից հետո սազը պատյանի մեջ վզից կախ *գալիս էր* նա մեր տունը, *մնում էր* ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի (Իսն, 249)։ Ես նախ *զարմանում եմ* նրա համարձակ ենթադրության վրա, երկրորդ՝ *մտածում եմ* (ՍԶՄԿՊ, 270)։ Կիրակոսը *մրսել էր,* անկողին *էր ընկել, տանջվում էր* տաքության մեջ (Թ., III, 80)։ Բագրատյանը տեղեկություն *էր տալիս* յուր մասին, *նկարագրում էր* յուր ձեռնարկության դժվարությունը (Շիրվ., II, 388)։ Ո՞ւր է *նայում,* ինչի՞ն *է ձգտում* Վասակը (ԴԴՎ, 258)։ Էն օրվանից ամեն

Եկվորի ինձ մոտ էի հրավիրում, *հարց ու փորձ էի անում, պատկերն էր ցույց տալի (Թ., III, 230)*։ Գուցե ծիտ է *թռնում,* գուցե մի բառ *է գտել,* գուցե բանի մեջ *է ընկել (ՍՁ, V, 271)*։

> *Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Ժխտական* չեմ, չես, չի *ձևերը զեղչվել չեն կարող. օրինակ՝* Նա *չի սիրում* հայ նախարարներին, *չի ծածկում* այդ *(ԴԴՎ, 258)*։

§ *1014. Բազմակի անշաղկապ ստորոգյալները միևնույն ընդհանուր ժամանակի սահմաններում (անցյալ, ապառնի) կարող են չհամաձայնել տվյալ առանձին ժամանակների ու եղանակների մեջ. այսինքն՝ իրար հաջորդող ստորոգյալները ապառնի կամ անցյալ ժամանակ են արտահայտում, բայց մեկը կարող է կիրառվել անցյալ կատարյալով, մյուսը վաղակատարով, կամ մեկը՝ պայմանական եղանակով, իսկ մյուսը՝ ըղձական և այլն։ Բազմակի ստորոգյալների այսպիսի միավորումը տեղի է ունենում այն պարագայում, երբ դրանք է՛լ ավելի անկախ հնչերանգային ամբողջություններ են կազմում և ավելի մեծ դադարներով են առանձնացված միմյանցից։ Այս դեպքում կարծես թվարկվում են ոչ թե բազմակի ստորոգյալները, այլ ամբողջ նախադասությունները. օրինակ՝* Նա *կկատարե,* նա կարող *է կատարել (Շիրվ., II, 389)*։ Նա էն օրը հաց *չէր դրել բերանը, ծեծվել ու լաց էր եղել,* այժմ էլ ճաղած պառկեց *(Թ., III, 44)*։ Ձին գելի հոտն *առավ* թե չէ, ականջները *սրում է, փռռացնում, փռնչացնում (նույն տեղում, 100)*։ Ես այժմ ոսկի քաղաքից *եմ գալի,* քո կախարդ մոր՝ Գոհար թագուհու ապարանքիցն *եմ վերադառնում,* քո մանկության ննջարանում *եմ եղել (նույն տեղում, 231)*։ Թվում է՝ *մեծացել են, լրջացել, հագնված են* սովորականից լավ *(ՍՋՄԿՊ, 273)*։ Մի անգամ Լիֆլանդիայում որսի *էի ման գալիս,* ճանփին մի մեխ *գտա (Թ., III, 210)*։ Մի առավոտ ննջարանիս լուսամուտից *նայում եմ, տեսնեմ* վայրի բադերի մի ամբողջ երամ... *(նույն տեղում, 209)*։

§ *1015. Անշաղկապ կարող են միավորվել նաև բաղադրյալ ստորոգյալի մեջ մտնող մի դիմավոր բայից կախված բազմակի անորոշ դերբայները, որոնք սովորաբար հաջորդում են իրենց իշխող դիմավոր՝ կամական, սկսողական զգացումային բնույթի բայերին և դրանց հետ կազմում են մի բաղադրյալ բայական ստորոգյալ. օրինակ՝* Այժմ էլ *ուզում են* մեր ծախած թամբաքուն ստարի ձեռքը տալ, տուրքի տակ *դնել,* մեր կրոնը *ծաղրել (Փափ., 517)*։ *Չեմ ուզում ստել* ամուսնու հարստությունը, *սիրել* ուրիշներին *(Շիրվ., III, 319)*։

§ *1016.* Եվ, ու *շաղկապներով միավորվում են բազմակի ստորոգյալները և կազմում են մի ներփակ շարք։ Ըստ որում երկանդամանի ստորոգյալը միավորվում է առանց որևէ թվարկման, իսկ բազմանդամանին թվարկվում է, և ապա վերջին անդամը շաղկապվելով՝ փակում է թվարկվող շարքը. օրինակ՝ Եկա* տուն, հաց *կերա,* քնեցի, առավոտը *վեր կացա,* մարդիկ *վերցրի* հետս, սայլը *լծեցի,* հրացանս *լցրի ու գնացի (Թ., III, 210)։* Կինը *նստել էր* օջախի առաջ, հաճախ *բարձրացնում էր* թեյամանի կափարիչը և *նայում* տաքացող ջրին *(ԱԲԵ, 194)։ Զարթնում եմ,* աչքերս *տրորում,* չորս կողմս *մտիկ եմ անում ու տեսնում՝* կանգնած եմ մի ահագին ճահճի եզերքին *(Թ., III, 208)։* Մարյամի դեմքը մերթ *մռայլվում էր* ավելի, մերթ *պայծառանում և փայլում* ներքին գոհունակությունից *(Տիրվ., II, 388)։* Սաթենիկը ինքը *ձևեց ու կարեց* իր զգեստը Մարյամի օգնությամբ *(նույն տեղում, 390)։* Նրա մեջ *ծնվել էր ու սնունդ էր առնում* այդ միտքը *(ԴԴՎ, 258)։* Ամբողջ ժամերով նա նրա վրա հաշիվներ *էր շինում,* պլաններ *էր սարքում* և ապագա գործերի համար ծրագրներ *էր պատրաստում (Մուր., I, 296)։* Կինը *մոտեցավ* օջախին, տղայի սունկերը *դեն դրեց, կռացավ ու փչեց մխացող աթարներին (ԱԲԵ, 193)։* Հնագետը մի անգամ էլ *պտույտ արեց* բերդի չորս կողմը, տետրում մի բան *նշանակեց* և ապա արագ քայլերով *հասավ* ձիերին *(ԱԲԵ, 192)։* Նա հենց առաջին վրանի մոտ ձիերն *արձակեց,* սանձով *կապեց* ձիերի ոտքը *ու ներս մտավ* վրանի նեղլիկ դռնից *(նույն տեղում)։*

§ *1017. Բազմակի ստորոգյալների այս տիպի միավորումը կարող է արտահայտել գործողության ժամանակի հաջորդականություն, այսինքն՝ իրար հաջորդող գործողություններ և միաժամանակ կատարվող գործողություններ։ Համեմատի՛ր* Իշխանը *գոհացավ* ծերունու խոսքերից, առատ *վարձատրեց* նրան և հետիոտն, գլուխը քարշ, դանդաղ քայլելով *գնաց* վրանը *(ԻսԵ, 324)։* Մարմինը *թփրտաց* նրա գրկի մեջ, *գալարվեց* ինչպես կրակը, որ վաղուց է բռնկվել տան ներսը, հետզհետե *լափել է* մերձակա իրերը, ապա չարագուշակ բոցերով *լուսավորել է* խավար պատուհանները, մոլեգնած *խփել է* առաստաղին և ինչպես հրեղեն սյուն ահա *այրվում է* խավարի մեջ *(ԱԲԵ, 651)։ Այս երկու օրինակների մեջ պարզ երևում է գործողությունների հաջորդականությունը միևնույն ժամանակում. Հետևյալ օրինակների մեջ դրա փոխարեն առկա է գործողության միաժամանակությունը.* Նրանք երկար ժամանակ *են անցել* և *չարչարվել են (ԱԲԵ, 654)։ Երգում են* փերիները կարոտի

և անուրջների երգերից, *երգում են* համբույրների և սիրո գիշերների մասին, *երգում են, պարում, պարում են ու երազանում* խաչի ջուրը և սիրո մոռացաբաշխ գիրկն *են հրապուրում* նրան *(Իսն, 301)*։

§ *1018. Գործողությունների հաջորդությունը և միաժամանակությունը կարող է տեղի ունենալ թե՛ միևնույն և թե՛ տարբեր քերականական ժամանակների սահմաններում։ Ըստ որում միևնույն շարքում գտնվող բազմակի ստորոգյալների մի մասը կարող է արտահայտել հաջորդություն, մյուս մասը՝ միաժամանակություն. օրինակ՝* Սանթրոսյանը դեռևս *նստած էր* և իզուր *աշխատում էր* խելքը գլուխը ժողովել *(Նար., III, 194)*։ Վիզը *ձգեց*, պնեղների վրա *կանգնեց ու ճգնում էր* անպատճառ տեսնի *(Թ., III, 43)*։ Գիքորն *հափշտակեց* հաց ու պանիրը, *գլուխը* տեղի տակը, թաքուն *ուտում էր ու մտածում (նույն տեղում, 44)*։ Որդին *աճել էր, գեղեցկացել էր* և բոլորովին այլական դեմք *էր ստացել (Ր., III, 479)*։ Կանգնում էին, տափանում, կղկղում ու թռչում *(ՍՉՄԿՊ, 236)*։

§ *1019. Միմյանց հետ կարող են միավորվել տարբեր կազմության ստորոգյալներ. օրինակ՝* Նա *ետ է գալիս*, տեղը *նստում* և *աշխատում է լսել (ՍՉՄԿՊ, 285)*։ Երբ *դուրս է գալիս* վանդակից՝ երկար *փքվում է*, փետուրները *ցցում, ղլղլացնում* և *սկսում* ինքն իրեն *հարդարել (նույն տեղում, 287)*։ *Շտապում* է հինգ րոպեում զգեստը *փոխել, հարդարել* իրեն, փոքր տղայի գոտին *շտկել*, աղջկանը *հիշեցնել*, որ Նազար Դյադյային հարկավոր է բարևել, և այդ տագնապի մեջ *մոռանում է* բութ մատի մուրը *(ԱԲԽ, 332)*։ Մավրն իմ մեջ արդեն *սկսել էր մեծանալ, հիմնավորվել էր*, խոր արմատներ գցել նում էին, տափանում, ղկկղում ու թռչում *(ՍՉՄԿՊ, 236)*։

§ *1020. Ժամանակային հաջորդականությունը շատ ավելի ցայտուն արտահայտվում է միևնույն (կամ համանիշ) բայի անցյալ, ներկա և ապառնի ժամանակներով։ Այս պարագայում բազմակի ստորոգյալները յուրահատուկ շեշտ են առնում. օրինակ՝* Վահրա՛մ. *եղե՛լ ես, կա՛ս և կլինե՛ս* մի թանկագին ոսկերել *բեհեզ (ՎՓՀՀ, 97)*։ Շեքսպիրը *է՛ր, կա՛ և կմնա՛* բոլոր ժամանակների ամենախոր և ամենալայն *թատերերգուն*, անկրկնելի *հոգեբանը, իմաստասեր բանաստեղծը, գերագույնը* բոլոր ողբերգուների *(ՎՓՀՀ, 294)*[1]։

§ *1021.* Եվ, ու *բաղհյուսական շաղկապներով կարող են միավորվել իրար հետ իմաստային որոշ առնչություն ունեցող ստորո-*

[1] *Այս օրինակները բայական ստորոգյալի օրինակներ չեն, բայց ձեռքի տակ չունենալով այդպիսիները, առաջ բերեցինք այս վերջինները։*

գյալներ, կամ իբրև այդպիսիք թվարկվել մի այլ այդպիսի զույգի հետ. օրինակ՝ Բոլոր մարդկանց պես նա էլ *եկել է ու գնացել (Իսհ, 324)։* Սավառնում էր ու հախրում, ժպտում էր ու ծիծաղում՝ հրաշալի, հրաշագեղ *(Իսհ, 291)։*

§ *1022.* Եվ, թե *շաղկապները կրկնվելով, կարող են բազմակի ստորոգյալները թվարկվել, ըստ որում այդ թվարկմանը կարող են ենթարկվել թե՛ բոլոր ստորոգյալները, թե՛ դրանց մի մասը։ Սովորաբար առաջին ստորոգյալը դուրս է մնում, մանավանդ երբ ենթակայից առաջ է ընկած։* Եվ, թե *շաղկապներով թվարկվող բազմակի ստորոգյալները կազմում են անմիջական մի շարք և ուժեղացվելով արտահայտում են միաժամանակություն. օրինակ՝* Նրբանկատ տղա է Ապոստոլը, *կատակ է անում և չի ուզում իր կատակից* նեղանամ *(ՍՁՄԿՊ, 275)։ Եվ հայհոյում էր, և* կուրծքը *ծեծում (Թ., «Անուշ»)։ Եվ ընկնում էին* անգին ընկերներ, Եվ վերջին անգամ մեզ *էին կանչում (ՉԸԵ, 11)։* Մոռացել էին արքա Աքիլլին: *Եվ հեգնում էին* երազը նրա... *Եվ կարծում էին,* որ մեռել է նա *(նույն տեղում, 13)։* Այստեղ ես թե՛ հանգստանում եմ, թե՛ տարվում խոհերով, թե՛ կարդում, կարդում այնքան... *(ՍՁՄԿՊ, 272)։*

§ *1023.* Եվ, ու *շաղկապներով բազմակի ստորոգյալները միավորվում են նաև հավելյալ նշանակությամբ, որտեղ վերջին ստորոգյալը կամ ստորոգյալները դիտվում են իբրև լրացական հաղորդում, իբրև պարզաբանում, ընդհանրացում նախորդ ստորոգյալների։ Այս դեպքում ստորոգյալները կազմում են մի ներփակ շարք, բայց հնչերանգության առումով հավելական նշանակությամբ միավորվող ստորոգյալները ուժեղ դադարներով կտրվում են մյուսներից։ Այդ կտրվածությունը ուժեղանում է նաև ժամանակների համակարծակի փոփոխությամբ. օրինակ՝* Հետները լավ *մտերմացել էի և* շատ բան *լսեցի* սրանցից հեքիաթական աշխարհի մասին *(Իսհ, 250)։* Սերմերը ծծել էին սևահողի ուժն ու հյութը, լցվել էին, արևով աճել և ուռճացել, հասունացել, հասել էին իրենց նպատակին *և* հիմա բոլորը *բուրում էին* հասունության տարփալից հոտերով և *թաթախել էին* ինձ տարերային մի մթնոլորտի մեջ *(նույն տեղում, 251)։* Կանգնած են շուրջը կանայք հարևան *Ու* խոսք *չեն գտնում* ասեն անարգված, Տարած ետ բերած, անբախտ աղջկան *(Թ., «Անուշ»)։* Բայց հայրը վերաբերում էր այդ նրա զգացված սրտին, *և* երկար նրա դողդոջուն ձեռքը *բաց չէր թողնում* յուր ափերի միջից, և դեռ խորին զմայլմունքով *շարունակում էր նայել* որդու վրա *(Ր., III, 479)։* Սպասավորը *գնաց և* վերադառնալով, *հայտնեց,*

թե դուրը ծեծողը նույն կառավարչի մարդիկն են (*ՍՁ, V, 291*)։ Մի քանի օր հետո մեծ տիկինը ապաքինվեց *և հայտնեց*, որ կարող է սպասել (*ԴԴՎ, 452*)։ Աշխատում է խաղաղություն գցել մեր ու պարսիկների մեջ *և* ինձ *պատվիրեց* խնդրել ձեզ... (*Նույն տեղում, 465*)։ Արշակունյաց թագավորները զգում էին, թե ինչ բանի մեջ է իրանց տկարությունը, և պետությունը մի ամբողջական և ուժեղ կազմության նպատակով *սկսեցին* փոքր առ փոքր ոչնչացնել նախարարների իշխանությունը (*Ր., III, 187*)։

§ 1024. *Հավելական նշանակությամբ միավորումը արտահայտում է անսպասելի մի գործողություն, գործողությունների անըսպասելի փոփոխություններ, որոնք արտահայտվում են մի ստորոգյալից մի այլ ստորոգյալի այնպիսի անցում, որ չի սպասվում, և նոր ստորոգյալների հավելում մի այնպիսի ստորոգյալից հետո, որ վերջանում է որոշակի դադարով։ Հավելական կապակցությամբ ստորոգյալները ունեն լրացական նշանակություն։*

§ 1025. *Բազմակի ստորոգյալները միավորվում են նաև* բայց, իսկ, սակայն *հակադրական շաղկապներով*։ Բայց, իսկ, սակայն *շաղկապներով հակադրվող ստորոգյալները արտահայտում են առաջին ստորոգյալի նկատմամբ հակադրական գործողություն և կամ այնպիսի մի գործողություն, որ բխում է առաջինից ոչ ամբողջապես։ Այսպիսի կապակցությամբ կազմվում է միավորյալ ստորոգյալների ներփակ, բայց անդամահատված մի շարք. օրինակ՝* Ամուսինները, սակայն, հատուկ խնամքով էին վերաբերվում մայր կատվին. մյուսներին *սիրում էին, բայց* նրան *տալիս էին* առանձին պատիվներ (*ՍՁ, V, 262*)։ Մարդ, պայքարող դու եղի՛ր, *պայքարի՛ր* դարից առընթեր, բայց քնքշությունդ երբեք քեզ առաջնորդ չկարգես (*ՉԸԾ, 269*)։ Մորթեցե՛ք, լափե՛ք ավել, առավել, սակայն իմացե՛ք (*ԻսԾ, 141*)։ Խոսրովին *ընդունեցին* պահականոցի առաջ, նժույգները թիկնապահի հետ *ուղարկեցին* ապարանքից դուրս՝ նրա հետևի ախոռները, *իսկ* իրեն *տարան* մի քանի բակով ներս (*ԴԴՎ, 192*)։ Նա *չէր հարցրել*, բայց *գլխի էր ընկել* (*Նույն տեղում, 272*)։ Աշուշայի մայրը *մռայլվում էր, բայց շարունակում էր* հպարտորեն *լռել* (*Նույն տեղում, 464*)։ Խոսրովը Երասխի զվարճալի ափերի մոտ *հիմնեց* Դվին քաղաքը, յուր արքունիքը *տեղափոխեց* այնտեղ, *իսկ* քաղաքից ոչ այնքան հեռու, Ազատ գետի ամբողջ հովիտը *ծածկեց* ծեռնատունկ անտառներով (*Ր., III, 187*)։ Այսպիսով մենք անցնում էինք մեծ ու փոքր ձորակներ, մանր ու խոշոր բլրակներ, քերում էինք սարերի կողերը, թեքվում աջ, թեքվում ձախ և սակայն

շարունակ *(գնում էինք)* անտառի միջով *(Մուր., II, 16)*։ Ոմանք բարձր կրթություն ստանալով՝ կարողություն են ձեռք բերում ժողովրդին ամեն կերպ ծառայելու, և սակայն այդ ծառայությունից փախչում են վատաբար *(Մուր., IV, 49)*։

§ *1026. Բազմակի ստորոգյալները միավորվում են նաև* կամ *անջատական շաղկապով, որը կազմում է միավորյալ անդամների երկու շարք։ Եթե շաղկապը կրկնվում է յուրաքանչյուր միավորյալ անդամից առաջ, ապա կազմվում է մի աններփակ խումբ։ Իսկ եթե* կամ *շաղկապը միավորում է միայն վերջին ստորոգյալը, ապա կազմվում է միավորյալ անդամների ներփակ շարք։ Ներփակ է համարվում նաև այն շարքը, երբ* կամ *շաղկապը կրկնվում է, բայց վերջին ստորոգյալը միավորվում է* և կամ *շաղկապներով։*

Կրկնվող կամ *շաղկապով ստորոգյալները արտահայտում են իրար փոխարինող, երբեմն էլ միմյանց բացառող գործողություններ։ Օրինակներ՝* Ոմանք *կա՛մ ճախարակն էին հավաքում, կա՛մ* հավերը *տուն անում և կամ* վառած թոնրի ու օջախի շուրջը *պտտում (Մուր., II, 13)*։ Ցանազան գաղտնի անցքեր ստորերկրյա ճանապարհներով իջնում էին ամրոցի բարձրությունից կամ դեպի ձորը և կամ տանում էին դեպի անտառի խորքերը *(Ր., III, 22)*։ Մեր կյանքի երկար ճանապարհին հանդիպում ենք նրանց հետագայում կամ դառնում են քներ ու մտերիմ, *կամ մնում են անցած* տարիների հետևը *(ԳԸԵ, 259)*։ Պառավն աշխատում էր նրան միշտ մի բանով զբաղեցնել. հին ժուռնալներ էր բերում, *կամ թե* բրինձ *էր տալիս* ջոկելու *(ԱԲԵ, 402)*։ *Կամ* այս ծայրից մի հարվածով մենք նրանից *առաջ կընկնենք, կամ* պոչում *կմնանք (ԴԴՎ, 412)*։ Ամեն անգամ նա *կռանում էր*, բարձրանում, *կամ* բոբիկ ոտքերով քայլում էր խսիրի վրա *(ԱԲԵ, 193)*։ Կանայք հեռվից էին նայում կամ փողոցով անց կենալիս քայլերը *դանդաղեցնում (Նույն տեղում, 518)*։ Գնում էր, կամ հայհոյում, կամ տխուր երգում *(Նույն տեղում, 175)*։ Սակայն դրանցից դուրս, շուկայի մեջ *գիշերով անցնում, կամ* նրանց պատվանդանի վրա նստած *երևում են* նաև ուրիշ տեսակ բնակիչներ *(Փափ., 504)*։ Որոնցից ոմանք կամ ցամաքած խոտն էին հավաքում, կամ սայլերի վրա բարձում *(Մուր., V, 59)*։

§ *1027. Բազմակի ստորոգյալները միավորվում են նաև* այլ, այլև *շաղկապներով։* Այլ *շաղկապով միավորվող ստորոգյալը կամ հակադրվում է իրենից առաջ գտնվող մի ժխտական ստորոգյալի, կամ բոլորովին տարբերվում է նրանից։ Իսկ* այլև *շաղկապով միավորվող ստորոգյալից առաջ գտնվող ստորոգյալը ունենում է* ոչ

միայն շաղկապը. այս վերջինս կարող է իր մոտ ունենալ թե՛ ժխտական և թե՛ դրական ստորոգյալ։ Եթե այդ ստորոգյալը դրական է, ապա երկրորդ ստորոգյալը հակադրվելով ոչ միայն չի ժխտում այն, այլև ուժեղ կերպով ընդգծում է երկու գործողության զուգահեռականությունը, միաժամանակ կատարվելը։ Իսկ եթե նախորդ ստորոգյալը արտահայտված է ժխտականով, ապա ժխտվում է նաև հաջորդը. օրինակներ՝ Նախարարների հավաքական զորությունք ոչ միայն կարող էր ճնշում գործ դնել թագավորի վրա, այլև նրա վիճակը կարող էր յուր ձեռքում պահել (Ր., III, 186)։ Իսկ Տիգրանն ու ես կարծում էինք, ոչ միայն կարծում, այլև համոզված էինք, որ նա պատրաստվում է (ՍՋՄԿՊ, 280)։ Դեռևս ոչ մի կրոն աշխարհիս երեսին ոչինչ չի վերածնել, ոչ մի բանի կյանք ու կենդանություն չի տվել, այլ միայն կործանել է (Նար., III, 26)։ Շահը միամտած ոչ միայն չէր աճապարում իր խոստումը կատարելու, այլև աշխատում էր ձգձգելու անգլիական ընկերության հետ անելիք բանակցությունը, մենավաճառը ջնջելու մասին (Փափ., 521)։ Ցրտերը ոչ միայն դեռ չէին սկսել, այլ սկսելու նշաններ անգամ չէին ցույց տալիս (Նույն տեղում, 522)։ Հայ մարտիկները ետ չմնացին, այլ արյունոտ ու կատաղի հայացքներով շարունակեցին ուղեկցել և արդեն պաշտպանել նախարարներին ամբոխից (ԴԴՎ, 294)։ Իսկ ես ոչ միայն այդպիսի բան չեմ կարող անել, այլև ամոթից կկարմրեմ (ՍՋՄԿՊ, 271)։

Ծանոթություն 1. Երբեմն այլ, այլև շաղկապների փոխանցում է տեղի ունենում։ Համեմատի՛ր. Ցրտերը ոչ միայն դեռ չէին սկսել, այլ սկսելու նշաններ անգամ չէին ցույց տալիս (Փափ., 522)։

Ծանոթություն 2. Շաղկապներով միավորվող բազմակի ստորոգյալները ժամանակների մեջ ավելի ազատ են, քան թե անշաղկապ միավորումները։ Այս պարագայում ժամանակների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը կախված է նաև նախադասության երկրորդական անդամներից, կապակցության ձևից։ Արագ միմյանց հետևից թվարկվող ստորոգյալները գերազանցապես համապատասխանում են ժամանակով, իսկ հավելական կապակցության մեջ սովորական է ժամանակների սուր ընդհարումը։

§ 1028. Բազմակի անդամներ են համարվում նաև այն անորոշ դերբայները, որոնք բաղադրյալ ստորոգյալի մաս են կազմում։

Մի դիմավոր բայի առնչվում են մեկից ավելի անորոշ դերբայներ, որոնք կամ պարզապես թվարկվում են առանց շաղկապների և կամ միավորվում են այն բոլոր շաղկապներով, որոնք վերևում քննվեցին. օրինակ՝ Նա կարող է լեզու գտնել նրա հետ խոսելու, այսինքն՝ կարող է *մերժել* նրա սերը, *խուսափել*. կարող է մինչև իսկ *ծիծաղել* վրան ու *ամաչեցնել (ՍՋՄԿՊ, 271)*։ Ո՞ւր կարողանում են նրանք լսել որևէ նորություն, *կամ հաջորդել* այնպիսին ընկեր հարևանի *(Մուր., II, 8)*։ *Ո՛չ հաղթահարել* կարող է նրան, *ո՛չ էլ* մոռանալ *(ՎՓՀՀ, 300)*։ Խոստացավ ծաղիկներ *բերել* և ավելի *մանրամասն պատմել* Լուսիկի մասին *(ԱԲԵ, 170)*։ Ինքդ կարող ես մտնել էլ, տեսնել էլ *(ՉԸԵ, 437)*։

§ *1029. Բազմակի անդամները կարող են նաև նախորդ անդամների ընդհանրացումը կամ մասնավորումը լինել. Համեմատի՛ր.* Այժմ նա իրավաբան է, կարող է ապրել քաղաքում և շրջապատել իրեն հարմարություններով, այսինքն կահավորել մի փառավոր տուն, ապա ընդարձակել ծանոթությունների շրջանը, այցելել բարձր դասակարգի անձանց, կապեր հաստատել, խնդրարկուներ ընդունել, դատեր պաշտպանել և յուր հասարակական գործունեությամբ անուն ու հռչակ վաստակել *(Մուր., V, 12)*։

§ *1030. Բազմակի ստորոգյալները կարող են իրար հետ միավորվել տարբեր բնույթի կապակցություններով, այսինքն՝ մի մասում կարող են թվարկվել առանց շաղկապների, կամ այլևայլ շաղկապներով կապակցվել, ապա երկրորդ մասում սրանց հետ կարող են միավորվել տարբեր շաղկապներով կապակցվող հակադրվող և կամ թվարկվող միավորյալ ուրիշ անդամներ և ընդհակառակը։ Բազմակի ստորոգյալների տարբեր բնույթի այդպիսի միավորումը համարվում է բազմակի անդամների բարդ կապակցություն. օրինակ՝* Մենակ ձիու էս կողմն, էն կողմն է թռչում գելը ու հանկարծ վրա է թռչում, բողազիցը բռնում կամ մի զարկով փորը պատռում *(Թ., III, 101)*։ Մարդիկ դուրս են գալիս հոգեկան նորմալ դրությունից, խելագարվում են, գազանանում և կամ իրենց են չարչարում ու մորթոտում և կամ ուրիշ իրենց նման արարածների *(Նար., III, 26)*։ Լծվում էր, բայց չէր ուզում գնալ, ձգվում էր, կանգնում, կամ գալիս, առաջի ոտները բարձրացնում, ետ-ետ գնում *(ՍԶ, V, 249)*։ Գիշերով Մկրտումն քնքն էր վեր կացել, իջել ներքև, Եփրեմին զարթեցրել, Գողուն պատվիրել ձին թամբելու և եղբորը ճանապարհ գցելուց մի անգամ էլ ապսպրել քաղաքում անելիքը և գնացել խանութ *(ԱԲԵ, 546)*։ Նրանք երբեմն-երբեմն ջոկվում էին, իրար հետ

մրցում, ջիրիդ արձակում, կամ խաբան էին տալիս, փախչում իրար առաջից, խաղ անում ձիու մեջքին ու փորի տակին, ձին չափ զգած ժամանակ իրար գլխարկ էին փախցնում, կամ գետնից բան էին վերցնում, և ընկերախաղի տալով, աշխատում էին իրենց շնորհքը ցույց տալ՝ առանց իրար ջիրիդով վնասելու կամ հաղթելու *(Թ., III, 30)*։ Էմման հասել է տուն և ներս է մտել, թե դեռ ճանապարհին է *(Նար., IX, 364)*։

բ) ԲԱԶՄԱԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 1031. *Բազմակի կարող են լինել նաև ամեն կարգի անվանական ստորոգյալները, որոնք միավորվում են գրեթե նույն ձևերով ու կապակցություններով, որոնցով միավորվում են բայական ստորոգյալները։ Ինչպես բաղադրյալ ժամանակների դեպքում հաճախ մի օժանդակ բայը միավորում է մի քանի դերբայ և կազմում բազմակի բայական ստորոգյալների մի շարք, այնպես էլ այս դեպքում անվանական ստորոգյալ ձևավորվող բայական հանգույցը հաճախ չի կրկնվում. միայն դրվում է մի անվանական մասի հետ, իսկ մյուսները միավորվում են արդեն առանց այդ հանգույցի։*

§ 1032. *Առանց շաղկապի թվարկվող բազմակի անվանական ստորոգյալները գերազանցապես ունենում են մի բայական հանգույց, որ մեծ մասամբ շարքի առաջին անդամի հետ է հանդես գալիս։ Այսպիսի բազմակի ստորոգյալները կազմում են մի աններփակ, թվարկվող ստորոգյալների խումբ, որ արտահայտվում է կապակցվող դադարներով. օրինակ՝* Բոլորն էլ հրաշք են, զարմանալի զարմանք, անկարելի հնարք *(ՉԸԵ, 300)*։ Ահա այդպիսի սերմնացան էր Սեթը, հողի մշակ *(ԱԲԵ, 239)*։ Որքան էլ ծանր, որքան էլ անտանելի էր Զազունյանի համար այդպիսի մի ակամա խաղալիք լինել Զազրուսկու ձեռքին *(Նար., II, 359)*։ Հայրենիքը մեր նախնիքն են, մեր ծնողներն են, մենք ենք *(ԻսԵ, 250)*։ Հողակույտ է հիմա այդ տնակը, անտառ, ավերակ *(ՉԸԵ, 303)*։

Ինչպես երևում է օրինակներից, բայական հանգույցները կարող են նաև կրկնվել յուրաքանչյուր անվանական մասի հետ. օրինակ՝ Ինչ լավն էին, ինչ թարմ էին վարդերը *(Թ., III, 213)*։

§ 1033. *Բազմակի ստորոգյալների հետ կարող է ենթական կրկնվել հատկապես բանաստեղծական խոսքի մեջ. օրինակ՝* Դու բարձր ես, մեծ ես, դու վիթխարի *(ՉԸԵ, 227)*։

§ 1034. *Բազմակի անվանական մասերը կարող են թվարկվել առանց որևէ հանգույցի, իսկ հանգույցը կառանձնանա ենթակայի հետ իբրև ընդհանրացում, իբրև առանձին անվանական ստորոգյալ, որի ենթական մի ցուցական դերանուն է. օրինակ՝* Աշխուժոտ ու կրակոտ մի երիտասարդ, աշխատելու ծարավ, նեղություններից չվախեցող, հայրենակիցների սիրույն անձնվեր, նրանց առաջադիմությանը նախանձախնդիր, նրանց վշտերին կարեկից—այդ Վահան Սարյանն էր *(Մուր., II, 157)*։

§ 1035. *Անվանական ստորոգյալը թվարկվում է նաև ոչ ժխտականով. օրինակ՝* Դու ոչ Գյոթե ես, ոչ Վերհարեն *(ՉԸԾ, 227)*։ Նա ո՛չ պոետ է, ո՛չ քննադատ, ո՛չ վիպագիր է, ո՛չ մտածող *(նույն տեղում, 229)*։

§ 1036. *Բազմակի անվանական ստորոգյալները նույնպես լինում են երկանդամանի և բազմանդամանի։ Երկանդամանի բազմակի ստորոգյալները* և, ու *բաղհյուսական շաղկապներով կապակցվում և կազմում են մի սերտ միակցվող ներփակ շարք՝ առանց որևէ թվարկման։ Իսկ բազմանդամանի ստորոգյալները թվարկվում են, ապա վերջին անդամը միավորվում է նախորդ թվարկվող անդամների հետ հիշյալ շաղկապներով և այդպիսով փակում է շարքը. օրինակ՝* «Գործը» ծխելն էր և այն զվարճալի զրույցը *(ԱԲԾ, 564)*։ Ավելի անհանգիստ ու նյարդային էր դառնում *(Շիրվ., II, 389)*։ Հետզհետե դառել էր որոշ ու անհանգստացող *(ԴԴՎ, 258)*։ *Թեթև, ճկուն, ճարպիկ, բարի, կատակասեր ու մանկան նման միամիտ էր նա (ԼԹԿ, 14)*։ Հրապարակը մերկ է և թափուր *(Իսծ, 257)*։ Այդ պատճառները բազմաթիվ են և բազմապիսի *(Նար., III, 403)*։ Հյումքարի ձորում ո՛չ կռիվ է եղել և ո՛չ կոտորած *(ԱԲԾ, 250)*։ Ինչ մաքուր ու քնքուշ է ջահել դեմքի տեսքը *(Թ., III, 213)*։ Մայրիկը տխուր էր ու լուռ *(Թ., III, 216)*։ Դու կլինես հզոր ու գեղեցիկ նրա պես *(նույն տեղում)*։ Նա ճարպիկ է, թեթևաշարժ և, ըստ երևույթին, քաջասիրտ *(Մուր., II, 9)*։ Մեր հյուրընկալը մի բարի, անկեղծ և ուրախ մարդ է *(նույն տեղում, 13)*։ Հասկացավ արքան, թե ինչու է դուստրը այնպես տրտում, տխուր և մտորուն *(Իսծ, 273)*։ Այդ կինը յուր սեռի մեջ միակն էր ու առաջինը *(Մուր., II, 7)*։ Որ ամենաճիշտը և ամենապարզն է *(Նար., II, 359)*։

§ 1037. *Բազմակի ստորոգյալները միավորվում են նաև հակադրական* բայց, սակայն *շաղկապներով, որոնցով կազմվում են միավորյալ ստորոգյալների ներփակ, բայց անդամահատված մի*

շարք. օրինակ՝ Հիրավի ես նա էի, բայց էլ նա չեմ *(Թ., III, 231)*։ Նրա պատմությունը մեծ չէ, բայց արժանի է ուշադրության *(Մուր., II, 8)*։ Սոփին երկչոտ չէր, բայց ճպարտ էր և պատվասեր *(Մուր., IV, 13)*։ Սա գյուղի ուսուցիչն է, բայց Ավալոնի բնակիչ, նրանց դրացի, բարեկամ *(Իսհ, 257)*։ Սխստեմը տրված նյութից արագ ու բարձրորակ արտադրություն ստանալու նաւապարհ է, բայց ոչ այդ նյութը ստանալու միջոց *(ՎՓՀՀ, 20—21)*։ Առանց որի մարդս ոչինչ է, սակայն ոչ թե ոչինչ, այլ ամենաանպիտանը, ամենազզվելին է բոլոր արարածների մեջ *(Նար., I, 329)*։

§ *1038. Անվանական ստորոգյալները միավորվում են նաև հակադրական այլ, այլև շաղկապներով։ Առաջինն շաղկապը նախատեսում է նախադասության սկզբի մասում ժխտական ստորոգյալ, իսկ երկրորդ մասում՝ այդ ժխտականին հակադրվող, իրար բերվող և բացասող դրական ստորոգյալ։ Երկրորդը միավորում է այնպիսի ստորոգյալներ, որոնցից նախադասության սկզբի մասի ստորոգյալը արտահայտվում է* ոչ միայն *շաղկապով, իսկ վերջինը՝* այլև, *ըստ որում վերջին ստորոգյալը հակադրվելով՝ չի ժխտում, այլ վերցվում է նախորդին զուգահեռ. օրինակ՝* Դա սովորական հանգիստ զանգահարություն չէ, այլ մի տխրագին ու աղիողորմ կանչ կարծես *(ՍՉՄԿՊ, 131)*։ Դա ոչ համակերպություն է եղել իմ մեջ և ոչ էլ նախատազրին ենթարկվող մի անճոռիզոն նոզու նիվանդ ցոլացում, այլ խոր հուզում *(ՎՓՀՀ, 18)*։ Դենշապունը կդառնար ոչ միայն ավելորդ, այլև արյաց արքայի առաջ մեղապարտ *(ԴԴՎ, 361)*։ Այս ինքնազովություն չէ, այլ ճշմարտություն *(Նար., II, 350)*։ Բայց քեռի Մարտինն աղյուծ չէ, այլ մի հեզ գառ *(ԱԲԵ, 614)*։

Ծանոթություն 1. Այս պարագայում բայական հանգույցը հակադրվող անդամի հետ սովորաբար չի կրկնվում։

Ծանոթություն 2. Այլև *շաղկապի փոխարեն* բայց և՝ *պետք է հնացած համարել։ Համեմատի՛ր.* Քրդերի ցեղապետ Ֆաթթահ-բեկը տանուտեր խաչոյի ոչ միայն լավ բարեկամն էր, *բայց և* ֆիրվան էր *(ԲԵԺ, III, 105)*։

§ *1039. Հակադրությունը կատարվում է նաև* ոչ այլ, եթե ոչ *շաղկապներով. ըստ որում այս դեպքում բազմակի անվանական ստորոգյալի առաջին անդամը կազմվում է* ինչ (ոչ) *անվանական մասով և* եմ *հանգույցով, իսկ երկրորդ անդամը մի բացահայտող այլ խոսքի մաս է՝ առանց բայական հանգույցի. օրինակ՝*

Մեր ամառանոցները ոչ այլ ինչ են, եթե ոչ մեր գավառի հով-հար գյուղերը *(Մուր., II, 8)։* Ձեր այդ պարոն Բազենյանը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կատարյալ խաբեբա *(Նար., III, 503)։*

§ *1040. Բազմակի անվանական ստորոգյալները միավորվում են նաև կամ, թե, և շաղկապներով, որոնք կրկնվելով յուրաքանչյուր բազմակի անդամից առաջ՝ կազմում են թվարկվող անների ավելի անդամների մի շարք՝ յուրահատուկ առանձնացող շեշտումով. օրինակ՝* Որ և՛ չար է, և՛ բարի, և՛ խելոք է, և՛ հիմար, և՛ վայրենի է, և՛ լուսավորյալ, և՛ զազան է, և՛ ոչխար *(ՂԱ, IV, 468—469)։* Արաբ էր արդյոք թե՛ խափշիկ, բոշա էր, թե՛ ղարաչի *(ՂԱծ, 327)։* Կա՛մ եկել է, կա՛մ պիտի գա Ղարիբը *(Ջիվանի)։*

գ) ԽԱՌԸ ԲԱԶՄԱԿԻ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐ

§ *1041. Իրար հետ կարող են միավորվել բայական և անվանական ստորոգյալները այն բոլոր կապակցական ձևերով ու միջոցներով, որոնք քննվեցին վերևում. օրինակ՝* Նրանք էլ ցեղ են և սատված ունեն, և հող են վարում, և մանր երեխաներ ունեն *(ԱԲծ, 629)։* Բայց ուսանողն, հո գիտեք, անձնիշխան է ամեն դեպքում, հետևապես և կարող է նման հարցեր քննել *(Մուր., V, 9)։* Կարդացել է՝ թե բարի մարդիկ են, ազնիվ և աշխատասեր, թե սեփական շահի համար ոչ ոքի չեն վնասում, այլ ապրում են իրենց ճակատի արդար քրտինքով *(նույն տեղում, 13)։* Կարծես նա խուլ և մունջ էր և լսում էր լայն բացած աչքերով *(ԱԲծ, 628)։* Տղաս մեծի որդի խոսրով փոքրը թեև ոչ հոր հսկայական տիպարն ուներ և ոչ նրա անպարտելի քաջությունը, բայց խելացի մարդ էր *(Ր., III, 187)։* Նրանք բոլորը բարձրախոս էին և չունեին հանդարտ ու խուլ ձայն *(ԱԲծ, 679)։* Աղջիկը մերկ էր, չէր կարող ջրիցը դուրս գալ *(ՂԱծ, 327)։* Սաղրազամը զայրացած ոտքի ելավ նույնպես և մինիստրները, հետո բոլոր ժողովականներն էլ *(Փափ., 547)։*

3. ԲԱԶՄԱԿԻ ՈՐՈՇԻՉ

§ *1042. Բազմակի որոշիչներ են կոչվում նախադասության գոյականական որևէ անդամի այնպիսի լրացումներ, որոնք միմյանց հետ կիրառվելով՝ նույն շարահյուսական դերով համանման և համազոր կերպով վերաբերում են իրենց լրացյալին իբրև այս վերջինիս հատկանիշային տարբերակիչ. օրինակ՝* Մկրտումը խանութի

հատակին փռել էր գույնզգույն և էժանանոց քաշկինակներ (ԱԲՆ, 546)։ Գույնզգույն և էժանանոց բառերը համազոր կերպով վերաբերում են քաշկինակներ բառին իբրև այս վերջինիս բազմակի որոշիչներ։

§ 1043. Բազմակի որոշիչները կարող են որոշել թե՛ եզակի և թե՛ հոգնակի (նաև բազմակի) որոշյալներ. բազմակի որոշիչները մի եզակի որոշյալի վերաբերելով՝ գլխավորապես արտահայտում են վերջինի տարբեր հատկանիշները, որոնք պարփակվում են միևնույն առարկայի մեջ։ Իսկ հոգնակի և բազմակի որոշիչները գերազանցապես ցույց են տալիս տարբեր որոշյալների նույնանման և տարբերակիչ հատկանիշներ. օրինակ՝ Դսեղը յուր անառիկ ու ղըռնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի (Թ., III, 25)։ Այս երկու սահմանների մեջ կան թանձրախիտ, կուսական անտառներ (նույն տեղում, 26)։ Ուներ անթիվ ու անհամար Ոչխարի հոտ, մարդի բանակ, Կովի նախիր, խոզի բոլուկ, Երամակներ ձիու, ջորու (Թ., «Հըսկան»)։ Լվանում էին պնակները, կաթսաները, մեծ ու փոքր ափսեները (ԱԲՆ, 333)։ Կդառնան բարակ ու լայն տախտակներ (նույն տեղում, 483)։ Առաջին նախադասության մեջ անառիկ ու չքնաղ բազմակի որոշիչները վերաբերում են մի եզակի որոշյալի և ցույց են տալիս նրա տարբեր հատկանիշները։ Երկրորդ և չորրորդ նախադասության մեջ բարձրախիտ, կուսական, բարակ, լայն բազմակի որոշիչները արտահայտում են շատ առարկաների նույնանման հատկանիշներ, իսկ երրորդ նախադասության մեծ ու փոքր որոշիչները՝ շատ առարկաների տարբերակիչ հատկանիշներ։

§ 1044. Բազմակի որոշիչները միավորվում են առանց շաղկապների և շաղկապներով՝ ըստ որում կարող են իրենց որոշյալից թե՛ առաջ և թե՛ հետո շարադասվել։ Չի բացառված նաև, որ բազմակի անդամներից մի մասը նախադաս լինեն, իսկ մյուս մասը՝ ետադաս։

§ 1045. Բազմակի այն որոշիչները, որոնք թվարկվում են առանց շաղկապների, այսինքն՝ միավորվում են կապակցական դադարներով և թվարկման հնչերանգությամբ, կազմում են որոշիչների անընդհատ շարք. դրանցից յուրաքանչյուրը արտաբերվում է յուրահատուկ առանձնացող շեշտով։ Թվարկման ինտոնացիան և կապակցական դադարները յուրահատուկ առանձնացող շեշտադրությամբ ավելի որոշ և զգալի են դառնում, երբ բազմակի որոշիչները երկուսից ավելի են. օրինակ՝ Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, որպես կարմիր, դեղին կապույտ ծաղիկներ, սփռված էին լինում հրաշք այգիներում, բանջարանոցներում և ագարակներում (Ր., III,

473)։ Դրում տիրում էր *ջերմ, լուսապայծառ օր* (*նույն տեղում, 40*)։ Աշխարհիս երեսին քիչ կա այսպիսի մի *վսեմ, ներդաշնակ, գեղաշուք* կառուցում (*Իսб, 256*)։ Նրանց *ճկուն, ոլացիկ* պարանոցները կախարդել էին նրան (*նույն տեղում, 310*)։ Ես *տարաժամ, թշվառ* ձենից *կոպիտ, թուխ-թուխ*, հաստազլուխ մի պահապան զարթնեց քնից (*Թ., «Մոծակն ու մրջյունը»*)։ Ներենք էն վիրավորանքը, որ սա հասցրել է մեր ամենախիմաստուն, ամենազերազույն, ամենահնատես թագավորին (*Թ., III, 280*)։

§ *1046. Անշաղկապ թվարկվող բազմակի որոշիչները իրարից բաժանվում են ստորակետով, որ ցույց է տալիս, թե դրանք համազոր անդամներ են և միևնույն շարահյուսական պաշտոնով վերաբերում են մի որոշյալի։ Եթե որոշիչները առանց այդպիսի առանձնացող դադարների են վերաբերում միևնույն որոշյալին, ապա այդ նշանակում է, որ որոշիչներից մեկը (կամ երկուսը) ոչ թե մյուսներին համազոր վերաբերում է միևնույն որոշյալին, այլ առնչվում է իր հետ գործածվող որոշիչին և որոշյալին միաժամանակ։ Այս դեպքում արդեն այդ առանձին որոշիչը բազմակի անդամ չի համարվում․ օրինակ՝* Զկային նախարարական իշխանազն պատանիները, որոնց որսորդական ուրախ զվարճությունները մի առանձին կենդանություն էին բաշխում երեսշատ դաշտավայրին (*Բ., III, 472*)։ *Այս նախադասությունների մեջ* նախարարական և որսորդական *որոշիչները վերաբերում են թե՛ իրենց որոշյալներին (պատանիները, զվարճությունները) և թե՛ այս վերջիններին նախորդող* իշխանազն, ուրախ *որոշիչներին միաժամանակ, ուստի այստեղ չկան բազմակի որոշիչներ։*

§ *1047. Այս երևույթը առկա է հատկապես այն դեպքում, երբ մի որևէ որոշյալ, բացի իր հետ ավել կամ պակաս սերտ կապված ածական, գոյական որոշիչից, ունի նաև* մի, ոչ մի, ամեն, ամբողջ, *ողջ*, ուրիշ, բոլոր, այսպես, այդպես, ինչ, այս, այդ, այն, այլ, որպիսի, ինչպիսի, այսպիսի, այդպիսի, այնպիսի *և առհասարակ թվական ու դերանվանական որոշիչներ, որոնք նախորդում կամ հաջորդում են վերոհիշյալ որոշիչին ու որոշյալին. օրինակ՝* Հանկարծ ջրերի վրա տեսավ *մի հրաշալի, մի հրաբորբոք* պատկեր (*Իսб, 310*)։ Այդ նոր ռներից ու խանութներից մի քանիսը նույնիսկ թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ ունեն (*ՁՐб, 299*)։ Այլևս *ոչ մի գերբնական* զորություն չի կարող ինձ բաժանել նրանից (*Շիրվ., V, 367*)։ *Մի ուրիշ սևագույն* ժապավեն գրկել էր նրա կարապյա սպիտակ պարանոցը (*նույն տեղում, 352*)։ Մի խու-

քով կատարում էին *կանխող* այն բոլոր գործողությունները *(ԱԲԵ, 499)։* *Անցած տասներկու* տարվա ընթացքում և ոչ մի անգամ մայրը որդուն չէր պատմել *(նույն տեղում, 500)։* *Ինչ որ անհայտ մի* զգացմունք ետ էր մղում նրան *(Նար., II, 321)։* *Ուրիշ* ավելի քաղցր, ավելի հոգեզմայլ ցնորքներ շարունակ վխտում էին նրա գլխում *(Նար., II, 333)։* *Այնպես նուրբ, այնպես մեղմ* ձայներ ունեն նրանք *(ՍԶՄԿՊ, 5)։* *Ինչ զարմանալի* բաներ էր պատմում *(Թ., III, 207)։* Իսկ ես կարծում էի, թե դուք *հազարավոր ոսկեզմբեթ* տաճարներ ունեք *(նույն տեղում, 229)։*

§ *1048. Բազմակի որոշիչների բաղկացուցիչ մաս չեն կազմում առհասարակ այնպիսի որոշիչները, որոնք վերաբերում են ոչ միայն որոշյալին, այլև վերջինիս այլ որոշիչների։ Այս երևույթը հատկապես առկա է այն ժամանակ, երբ ա) մի որակական ածական դրված է հարաբերական ածականով որոշիչ ունեցող որոշյալի վրա կամ ընդհակառակը. բ) երբ որևէ որոշիչ իր որոշյալի հետ սերտ իմաստային ամբողջություն է կազմում. գ) երբ որոշիչները միմյանց հետ սերտ կերպով միացած են բառական, կա՛մ էլ քերականական առընչություններով. դ) երբ ածական որոշիչները ունենում են իրենցից առաջ մակբայական լրացումներ, որոնք գերազանցապես վերաբերում են որոշիչներին, ուստի և այս վերջիններին համազոր չեն. Եվ այն բոլոր կարգի լրացումները, որոնք կիրառվելով բազմակի որոշյալների հետ՝ այս վերջիններիս հետ քերականական համանիշներ չեն հանդիսանում. վերջապես՝ միմյանց հետ բազմակի որոշիչներ են լինում քերականորեն համանիշ հանդիսացող լրացումներ, իսկ անհամանիշը մեծ մասամբ առաջադաս վիճակում վերցվում է իբրև ընդհանուր լրացում և դադարում է բազմակի անդամ լինելուց. օրինակ՝* Շահյանը շփոթվեց նրա *տարօրինակ* համառ հայացքից *(Նար., III, 263)։* Նրա *լայն բացված* աչքերի մեջ նկատվում էր մի ինչ-որ խիստ ցանկություն *(Նար., I, 325)։* *Բարակ անիրական* հովը շշնջում է ականջիս *(Իսհ, 256)։* *Փոքրիկ նահանգական* քաղաքում եղելությունն իրարու պատմում են աղավաղած *(Շիրվ., V, 366)։* *Փոքրիկ երկաթե* սանրով մազերի փնջերը ոլորում էր *(ԱԲԵ, 495)։* Ինչ էր նշանակում *այն մշտական տենդային* դրությունը *(Նար., II, 319)։* Կռվի վերջում *պատռված-զարկված* Սպիտակ դևը վշվշալով ու թըշ-թըշալով, լացով ու թացով քաշվում է նորից իր մռայլ թագավորությունը *(Թ., III, 187)։* Դարձյալ փակում է իր *բյուրեղյա սառն* ապարանքը *(նույն տեղում)։* Եթե իմ *ընկեր* Բարոն *Մյունխհաու-*

զենին լսեք (*նույն տեղում, 207*)։ Առաջը մի էն տեսակ *սպիտակ, մաքուր, փափուկ* անկողին է փռվում (*Թ., III, 340*)։ Մի *բարակ մանիշակագույն* ժապավեն զարդարում էր այդ մազերը բարձր ճակատից վեր (*Շիրվ., V, 352*)։

§ 1049. Եթե մի որոշիչ կամ մի քանիսը հանդես են գալիս իբրև իրենցից առաջ գտնվող մի այլ որոշիչի համար բացահայտող նշանակությամբ, ապա այսպես ասած բացահայտվող որոշիչը իր բացահայտողների հետ չի կարող բազմակի համարվել. օրինակ՝ Վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին Դեպի երջանիկ մի ուրիշ աշխարհ՝ *անհայտ ու հեռու անծանոթ, օտար* (*Թ., «Դեպի անհունը»*)։ Ինչ *սիրուն* գույներ ունեն՝ *կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե* (*Իս., III, 228*)։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Անշաղկապ միավորվող բազմակի որոշիչները կարող են առանձին խմբերով թվարկվել. այդ խմբի մեջ մտնող առանձին որոշիչները սերտ կերպով կապված են միմյանց հետ շաղկապով կամ առանց շաղկապի և մի քերականական ու իմաստային ամբողջություն են ներկայացնում, ապա դիտվում են իբրև մի անդամ. օրինակ՝ Եվ հետո մեկը մյուսի հետևից տեղացել են վար ուրիշ *մեծ ու փոքր, ծանր ու թեթև,* զանազան սնդուկներ (*ՉԸԵ, 300*)։

§ 1050. Բազմակի որոշիչները միավորվում են և, ու *բաղհյուսական (կապակցական) շաղկապներով և իրենց որոշյալի հետ կազմում են մի ներփակ շարք։ Եթե բազմակի որոշիչները կազմված են երկու անդամից, ապա ներփակումը ամփոփ է և որոշ՝ առանց որևէ թվարկման, իսկ եթե բազմակի որոշիչները կազմված են երկուսից ավելի անդամներից, ապա մինչև վերջին անդամը տեղի է ունենում թվարկում, իսկ վերջինը շաղկապներով ներփակում է թվարկվող որոշիչների շարքը և որոշյալի հետ կազմում մի ներփակ ամբողջություն. օրինակ՝* Երգում էր իր *քաղցր ու տխուր* զրույցները (*ԻսԵ, 289*)։ Նրանց այն կավե գետնափոր խրճիթների փոխարեն կանգնած են հիմա Նաիրյան այդ փոքրիկ քաղաքում քարե *միհարկանի, երկհարկանի և նույնիսկ երեք հարկանի* շինություններ (*ՉԸԵ, 299*)։ Բնության *այս տեսակ խիստ, միմյանցից տարբեր և միմյանց հակառակ* ծայրահեղությունները ստեղծեցին նույնպես *խիստ և ծայրահեղ* բնավորություններ (*Բ., III, 188*)։ *Երեք միլիոն պատանի, երիտասարդ և չափահաս* բան-

վորներ, գյուղացիներ, ընչազուրկներ վաղ առավոտից մինչև ուշ երեկո աշխատել են *(ԻսԵ, 326)*։ Ով թարմ, ուրախ, Շաղաղ-շարմաղ-Պայծառ ու պաղ լույս *(Թ., «Արուսյակ»)*։ Ու միշտ լուռ *չարտահայտվող ու ծածուկ* մի բան կա նրա մեջ *(ՍՋՄԿՊ, 118)*։

§ *1051. Երբ բազմակի որոշիչներից երկու առանձին որոշիչներ միավորվում են* և, ու *շաղկապներով, ապա դրանց հաջորդում է նույնանման խումբ կամ խմբեր, և այս առանձին խմբերը իրենց մեջ չեն կազմում մի իմաստային ամբողջություն, այլ առաջ են բերում իրենց մեջ մի ներփակ շարք, ապա թվարկվում են իրար առանձին խմբեր՝ շաղկապով կամ առանց շաղկապի և դիտվում են իբրև բազմակի որոշիչներ։ Եթե խմբերը միավորվում են առանց* և, ու *բաղհյուսական շաղկապների, կազմում են խմբերի թվարկվող աններփակ շարք, իսկ եթե հիշյալ շաղկապներով միավորվում են, ապա խմբերը նույնպես ներփակվում են։ Պարտադիր չէ, որ բոլորը անպայման խմբերով հանդես գան. օրինակ՝* Եվ նրազը ճանանայի *երկար ու թրթռացող, մի քիչ այլանդակ ու սապատավոր* ստվերը սյուների արանքից նետում էր մինչև այնտեղ *(ԱԲԵ, 499)*։ Սույլ ու աղքատ և մանավանդ շատ վախկոտ մարդու մեկն էր *(ԻսԵ, 332)*։

§ *1052. Երբ որևէ շաղկապով, կապով կամ առանց դրանց միավորվում են այնպիսի որոշիչ բառեր, որոնք միասին մի հասկացողություն են կազմում, չեն կարող բազմակի որոշիչներ համարվել. օրինակ՝ Կոտ ու կես* կորեկ ունեմ ցանելու համար *(Թ.)*։ Մխում էին և դաշտավայրի *խիտ առ խիտ* սփռված գյուղերը *(Ր., III, 473)*։ Էլ *երկար ու բարակ* միտք անելու ժամանակ չէր *(Թ., III, 208)*։ Լավ անուն մարդը միաժամանակ ապրում է *հազար ու մի տեղ, հազար ու մի* մարդու սրտում *(Թ., III, 283)*։ Բայց ինչ էր աղքատի *ունեցած-չունեցած* զանձն ու երջանկությունը *(Նույն տեղում, 284)*։

§ *1053. Երկանդամանի բազմակի որոշիչները միավորվում են նաև* թե *շաղկապով, որը և՛ թվարկող նշանակություն ունի և՛ կապակցող։ Եթե բազմակի որոշիչները երկու անդամից ավել չեն, և* թե *շաղկապը դրանց երկուսի միջև է գտնվում, կապակցող նշանակություն է ստանում և որոշիչներով կազմում է մի ներփակ շարք. օրինակ՝ Հայ թե օտար* մամուլի ոգևորությունը այնքան մեծ էր *(ՎՓՀՀ, 204)*։ Էդ օրը մենք *քսանհինգ թե երեսուն* նապաստակի ետևից ենք ընկել ու բռնել *(Թ., III, 208)*։ Ղայիմ-Սաքոն, սակայն, զուցե ճանաչում էր բոլոր *հայտնի թե անհայտնի* հեղինակների *նկարազրած* ժլատներին *(Նար., I, 411)*։

§ 1054. *Կրկնվող* թե *շաղկապով թվարկվող բազմակի որոշիչները ավելի հաճախ ետադաս են և կազմում են մի աններփակ շարք. օրինակ՝* Ես սիրեցի փողոցների հեռուն *թե՛ լույս, թե՛ գրավիչ (ՉԸԵ, 216)։* Դարձել էր տնակն իր ավեր, իր երկիրը դեռ *թե՛ մութ, թե՛* խոլ *(նույն տեղում, 237)* Ես սիրում եմ գրքերը *թե՛ նոր, թե՛ հին, թե՛* արվեստով, *թե՛ անարվեստ (նույն տեղում, 258)։ Համեմատի՛ր նաև նախադաս որոշիչները.* Բարձրացել էր բարդին նաիրյան *Եվ թե՛ լույս, թե՛ մութ* օրերում *(նույն տեղում, 237)։*

§ 1055. *Բազմակի որոշիչները միավորվում են* և, ու *կրկնվող շաղկապներով, որոնք կազմում են թվարկվող որոշիչների աններփակ շարք. օրինակ՝ Ե՛վ սրինգի ձայնով, և՛ շեփորի, Եվ որոտի ձայնով* կան գրքեր *(ՉԸԵ, 260)։* Ընկար ուղին քո *և՛ մութ, և՛ ցուրտ։*Գիշերներով *երկար, ո՛ւ կապարե, ո՛ւ* կույր *(նույն տեղում, 258)։* Այդ նա էր՝ ուսուցիչը: *Դեմքով բարի, Ե՛վ հարազատ, և՛ սառը,* խստաբարո, Բարեկամի նման մտերիմ *Եվ անհողդողդ և մեղմ, և անսահման ներող (նույն տեղում, 248—249)։*

§ 1056. *Բազմակի որոշիչները միավորվում են նաև հակադրական* բայց *շաղկապով՝ կազմելով անդամահատված, բայց ներփակ մի շարք։ Այս միավորման հիմնական նշանակությունն այն է, որ երկրորդ բազմակի անդամը հակադրվում է նախորդին առանց բացառելու այն. օրինակ՝* օրըստօրե թեթևացել է *այդ անհավատալի, բայց իրոք ճշմարիտ* սովորությունը *(ՊՊ, I, 383)։* Կայցելե նրա լեռներին ու հովիտներին, նրա *հեռավոր, բայց սիրազվարճ* գյուղերին *(Մուր., II, 147)։* Ներքին հարկի *մի ցածուն, բայց և ընդարձակ* սենյակի մեջ ժողոված էին մի խումբ աշխույժ երիտասարդներ *(Մուր., V, 8)։* Նայում էր նրա *գեղեցիկ, բայց վշտից տանջված* դեմքին *(Նար., I, 334)։* Հանգիստ շողը փայլում էր նրա *զայրալի, բայց կենսալի* աչքերի լճակներում *(ԴԴ, I, 485)։* Տեսնում եմ մեր Երերուքը, Շիրակի դաշտում *մենավոր ամայի դարերի թշնամիների առաջ կքած, բայց վեհ, չքնաղ երազային (Իսհ, 256)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Ետադաս որոշիչները կազմում են աններփակ շարք, եթե թվարկվում են առանց բաղհյուսական կապակցող շաղկապների, կամ կրկնվող տրոհական շաղկապներով։

§ 1057. *Բազմակի որոշիչները միավորվում են նաև զիջական* թեպետ, թեկուզ, թեկուզ և *շաղկապներով. օրինակ՝* Մեր աշխատու–

թյան մեջ գուցե և կան, իհարկե, *ավելի մեծ, թեկուզ մի քիչ այլ կարգի* սխալներ ու թերություններ *(ՁԸԵ, 297)*։ *Օ՜, միամիտ* նորտեր, *թեկուզ և հանճարեղ (նույն տեղում, 258)*։

§ 1058. *Բազմակի որոշիչները միավորվում են տրոհական* կամ *շաղկապով, որ զուգադրում է առանձին անդամները*։ Այդ նոր տներից ու խանութներից մի քանիսը նույնիսկ թիթեղե *կարմիր կամ կանաչագույն* կտուրներ ունեն *(ՁԸԵ, 299)*։ *Այս կամ այն* դերասանը *այս կամ այն* կերպ խաղում է տվյալ տիպարը *(ՎՓՀՀ)*։ Երևի ես «Փնջիկի» խմբագրության *երկրորդական, երրորդական կամ*, ով գիտե, *չորրորդական* և հինգերորդական աշխատակիցն եմ *(Մուր., II, 313)*։

§ 1059. *Բազմակի որոշիչները լինում են նախադաս, ետադաս և խառը, այսինքն՝ որոշիչներից մեկը կամ մի քանիսը լինում են նախադաս, իսկ մյուսները՝ ետադաս։ Շարադասական այս դրությունը ավելի հատուկ է բանաստեղծությանը։ Ետադաս որոշիչները ավելի թույլ են կապված իրենց որոշյալի հետ և հեշտությամբ կազմում են անկերփակ շարքեր։ Նախադաս որոշիչները, ինչքան էլ որ թվարկվում են, այնուամենայնիվ, որոշյալով սահմանափակվում են, իսկ ետադաս որոշիչները մնում են անսահմանափակ։ Ավելի ցրված ու անկապակից են նախադաս և ետադաս բազմակի որոշիչները, այսինքն՝ այնպիսիները, որոնց մի մասը շարադասվում է որոշյալից առաջ, իսկ մյուսը՝ հետո։*

Ետադաս բազմակի որոշիչները ոչ միայն թույլ են կապված իրենց որոշյալի, այլև միմյանց հետ։ Այս երևույթը պատճառ է դառնում, որպեսզի չառաջանան այնպիսի որոշիչների շարքեր, որոնք միմյանց հետ իմաստային սերտ կապի մեջ գտնվելով, դադարում են բազմակի անդամներ լինելուց (§ 1052)։ Ետադաս որոշյալը միմյանց և իր հետ է շղթայում որոշ կարգի որոշիչներ և կազմում է ավել կամ պակաս քերականական ու իմաստային սերտ միասնություն կազմող խմբեր։ Նախադաս որոշյալը այդպիսի հատկանիշից զրկվում է, որի պատճառով հաճախ ունենում է տրոհվող որոշիչներ։

Ետադաս որոշիչները երբեմն գտնվում են որոշիչի և ստորոգյալի անվանական մաս կազմելու սահմանագծում, այսինքն՝ դժվար է լինում ճշգրիտ ու մեկին որոշել, թե տվյալ բառը ետադաս որոշիչ է, թե ստորոգյալի անվանական մաս։

§ 1060. *Ետադաս բազմակի որոշիչները կարող են միավորվել այն բոլոր ձևերով ու եղանակներով, որոնք քննվեցին վերևում.*

օրինակ՝ Զարմանքով գուցե նայես իմ այս գրքի էջերին՝ *թե՛ անշուք, թե՛ պարզ (ՉԸԵ, 215)։* Դա մի երիտասարդ առողջ կին էր՝ *գիշերային հագուստով, գլխաբաց, ոտաբաց (Շիրվ., II, 399)։* Հաջորդում են միմյանց այդ հուշերը բազմերանգ, այդ հուշերը *ուրախ ու տխուր (ՍՉՄԿՊ, 6)։* Կարծես առաջին անգամն եմ տեսնում աշխարհը՝ աշխարհը *առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը հնօրյա և միշտ նորաստեղծ հավիտենական մի անծանոթ հրապույրով առինքնող (Իսհ, 287)։* Եվ տիկիններ ու պարոններ *գեղածիծաղ, ժըպտուն, ուրախ (Փափ., 232)։* Բայց դու էլ *խելոք* մի մարդ ես *գիտոմ (Թ., «Հառաչանք»)։* Ես նրանից հուր եմ ուզում, *Անշեջ* հուրը արքայան *(Թ., «Փարվանա»)։*

4. ԲԱԶՄԱԿԻ ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉՆԵՐ

§ *1061. Բազմակի հատկացուցիչները նույնպես կարող են միավորվել առանց շաղկապների և շաղկապներով։ Առանց շաղկապների միավորվող բազմակի հատկացուցիչները թվարկվում են ճիշտ այնպես, ինչպես բազմակի անշաղկապ որոշիչները. օրինակ՝* Այս *խոհերի,* այս *գրքերի,* այս *մտքերի* աշխարհում Կա մի արև անեզրական *(ՉԸԵ, 266)։* Շուկայի բերանի կողմից հանկարծ լսվեց *շների բուռն հաչելու,* ապա *պահնորդի* ձայնը *(Փափ., 506)։*

§ *1062. Երկուսից ավելի հատկացուցիչներից վերջինը հաճախ միավորվում է* և, ու *բաղհյուսական շաղկապներով, որոնցով փակվում է թվարկվող շարքը. օրինակ՝* Յուր ֆթին պետք է դիպչեն *յուղի, բոխի, բազկաթանի, ղավուրմի և* զանազան *բանվածքների ու թթուների* ափաշներից ու կարասներից բարձրացած անուշահոտ բուրմունքը *(ՊՊ, I, 384)։* Օ, անձկալի ժամեր *միայնության, ընդվզումի, խոհի, Ոգու ըմբոստության ու* կոռվի *(ՉԸԵ, 248)։* Ավելացնում էր նաև *Դոլուն Կարիի, Խանձասար-Խուշու* և մյուս *եղբայրների* անունը *(ԱԲԵ, 346)։*

§ *1063. Երկանդամանի բազմակի հատկացուցիչները միավորվում են գերազանցապես* և, ու *շաղկապներով. օրինակ՝ Աղձնյաց ու Մոկաց* տերերն էլ նրանց նայելով մնացել էին ձեռնպահ *(Մուր., III, 284)։ Լույսի և ազատության* այս փրկարար և մեծագույն պայքարին իր արտառուչ մասնակցությունն է բերում հայ փոքրիկ ժողովուրդը *(Իս., IV, 192)։ Մերուժանի և Վահան Մամիկոնյանի* պարտության համբավը կայծակի արագությամբ հասավ Տիզբոն *(Ր., III, 362)։*

Ծանոթություն. Երկանդամանի հատկացուցիչների մի կամ երկու եզրերը կարող են խմբավորված լինել. այս դեպքում այդ խմբերը դիտվում են իբրև երկանդամանի և կապակցվում են միմյանց հետ. օրինակ՝ Պիտի խորհեր և որոներ *կյանքի ու մահվան* և տիեզերքի անլույծ խորհուրդների արմատը *(ԻսԵ, 290)։*

§ *1064. Հատկացուցիչները միավորվում են* կամ *տրոհական շաղկապով. օրինակ՝* Այս պատճառով էլ նա *դրացու կամ հասարակության* գործերով երբեք չէր հետաքրքրվում *(Մուր., I, 296)։* Ցերեկն էլ փոքր դուրս էր գցում այս ու այն հարևանի կամ ռեսի տանը *(ԻսԵ, 332)։*

§ *1065. Հատկացուցիչները միավորվում են* թե *շաղկապով, որը կրկնվելու դեպքում կազմում է թվարկվող հատկացուցիչների աններփակ շարք. օրինակ՝* Ձգտել եմ երգով, որ մնա տոկուն նա *թե՛ տխրության, թե՛ հոգսի* ժամին *(ՉԸԵ, 217)։* Եվ գյուղերի թե՛ քաղաքների գինետներում, բաժակի առաջ նստած՝ գուսանավառ քամբիռով երգում էր իր քաղցր ու տխուր զրույցները *(ԻսԵ, 289)։*

§ *1066. Հատկացուցիչները կարող են թվարկվել* և *շաղկապով ու կազմել աններփակ շարք. օրինակ՝* Դու կբերես ձայներ գերերկրային, Անապատի ձայներ ու անտառների... *Եվ սողունի* ձայներ *և կրիայի (ՉԸԵ, 261)։*

5. ԲԱԶՄԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

§ *1067. Բազմակի բացահայտիչները սովորաբար թվարկվում են առանց շաղկապների, կամ միավորվում են* և, ու *շաղկապներով. օրինակ՝* Հայոց գետերի հինգ մեծամեծ նահապետները՝ *Տիգրիս, Եփրատ, Կուր, Երասխ, Փասիս* անհամբեր էին և կամուրջների *(Ր., III, 180)։* Շտապում էր իր բարեկամին ցույց տալու գիրքը և գրքի նկարները՝ *Երևանի բերդը և Արարատը,* պարսիկ *սարբազներին* և հարեմի մանկամարդ *պարսկուհուն (ԱԲԵ, 624)։* Եվ վճռեց ամրախարիսխ, երկարաձիգ պարիսպ քաշել Դեղին ծովից սկսած մինչև Գոբի անապատի դեղնածավալ ավազների մեջ... *որպես պատվար ու պատնեշ, բերդ ու ամրոց (ԻսԵ, 326)։* Նրանք կամուրջի վարձ էին հավաքում՝ *բուրդ, ոչխար, դրամ (ԱԲԵ, 346)։*

6. ԲԱԶՄԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

§ 1068. *Ինչպես տեսանք, խնդիրները լինում են ուղիղ և անուղղակի։ Սրանք էլ բաժանվում են մի քանի տարատեսակների։ Ուղիղ և անուղղակի խնդիրները միևնույն նախադասության մեջ չեն կարող բազմակի համարվել, այդպես էլ բազմակի չեն կարող համարվել անջատման և մատուցման անուղղակի խնդիրները, եթե հնարավոր լինի այս երկուսը միևնույն ստորոգյալի լրացումներ դարձնել։ Բազմակի խնդիրներ են համարվում այնպիսի լրացումներ, որոնք միևնույն հոլովով են կիրառվում, վերաբերում են միևնույն ստորոգյալին ճիշտ և ճիշտ միևնույն հարաբերությամբ և միևնույն շարահյուսական կիրառությամբ։ Եթե ստորոգյալի խնդիրները միևնույն հոլովով են կիրառված, բայց տարբեր շարահյուսական պաշտոններ են արտահայտում (ասենք՝ մեկը մատուցման, իսկ մյուսը շահի անուղղակի խնդիրներ են՝ տրական հոլովով), դարձյալ չեն կարող բազմակի խնդիրներ համարվել։ Բազմակի չեն նույնիսկ բուն և երկրորդական ուղիղ խնդիրները միասին վերցրած։*

§ 1069. *Ուղիղ և անուղղակի խնդիրները իրենց միավորման ձևերով ու եղանակներով միմյանցից չեն զանազանվում, այդ պատճառով այստեղ դրանք ուսումնասիրվում են խառը, այսինքն՝ միևնույն տեսակի խնդիրների բազմակի լինելը կարող է միավորման օրինակ ծառայել մյուս տեսակի բազմակի անդամների համար։*

§ 1070. *Ինչպես մյուս լրացումները, այնպես էլ խնդիրները միավորվում են երկու հիմնական եղանակով՝ անշաղկապ՝ լոկ թվարկումով և շաղկապով։*

Անշաղկապ թվարկվող խնդիրները արտահայտվում են որոշ դադարներով և կազմում են անընդհատ թվարկվող անդամների մի շարք. օրինակ՝ Որոնց մեջ բուռ-բուռ լցնում էր *չամիչ, պնդուկ, նուշ (ԱԲԵ, 546)։* Լսում էր *խոսակցությունները, կանչը,* ձիերի *վրնջոցը,* մանուկների լացի *ձայները,* մեկի զիլ *ծիծաղը (Նույն տեղում, 549)։* Այս երիտասարդն իր հաստատուն *բնավորությամբ,* իր անհանգիստ աշխատասիրությամբ, նպատակին ձգտող իր համառ *գործունեությամբ* կատարելապես զարմացնում է ինձ *(Նար., III, 405)։* Աչքերից թափում էր *բոց, շանթ, ադամանդ, ծուխ (ՁԲԵ, 125)։* Վարդանը հիշեց Արտաշատի *ժողովը,* ուխտյալների *երդումը,* ժողովրդական ըմբոստացման *ցույցերը,* իր *պատրաստությունները,*

մինչև Համազասպ եղբոր *ուժասպառվելը* հոգնությունից *(ԴԴՎ, 413)*։ Մանեն նայում էր նրա կեռ *քթին*, աչքի վրա արյունի ճանկի պես խոնարհված թավամազ *հոնքին*, հին մագաղաթի պես չորացած ու ճաքճքված *այտին (Նար., III, 11)*։ Ծով կար նրա մտքում և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով *մի գլուխ*՝ մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի *կնոջ*՝ թիկունքին երկար ծամեր, մերթ քարե *քանդակներ*, կիսավեր *պարիսպներ*՝ նրանց հիմքի մոտ ալպիական ծիրանագույն մանուշակներ *(ԱԲԵ, 195)*։

§ *1071. Բազմակի խնդիրները միավորվում են* և, *ու շաղկապներով, որոնք կա՛մ կապակցում են երկանդամանի բազմակի խնդիրները մի ներփակ շարքի մեջ և կամ բազմանդամանի բազմակի խնդիրների վերջին անդամը, որով փակվում է անշաղկապ թվարկվող շարքը և կազմվում է ավելի ընդարձակ ներփակ շարք. օրինակ՝* Ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ *ճակատը*, սև *մազերը* և նույնիսկ սև *աչքերը (ԱԲԵ, 193)*։ Տանուտերը դիտում էր հավաքված *բազմությանը* և ավելի հեռուն՝ կտուրների վրա խումբ-խումբ կանգնած *հարս ու աղջիկներին (նույն տեղում, 549)*։ Երկուսն էլ ոգևորված խոսել էին *սովորելու*, *աշխատանքի և* ո՞վ գիտե, էլ ի՞նչ պայծառ *ապագայի մասին (ԱԲԵ, 175)*։ Ղեկավարները ձգտել են *հողի, ինչքի և փառքի (Իսե, 257)*։ Աչքերը *թույն* էին կաթում ու ծայրահեղ *ատելություն (ՉԸԵ, 439)*։ Նա յուր հետևից թողնում էր *ավերակներ*, տխուր *անապատ* և *ամայություն (Ր., III, 363)*։ Նրա անդորր *բնավորությանը* և մեղմ *ձգտումներին* չէր համապատասխանում Մարիամի հոգեկան տրամադրությունը *(Շիրվ., II, 389)*։ Ատոմը շտապ կանչեց *Խորենին և Ջոհրակին (ԴԴՎ, 410)*։ Նա վաղուց էր նկատել սուրհանդակների ծածուկ *հայտնվելն ու անհետանալը* ճանապարհին *(նույն տեղում, 411)*։ Ես սիրում եմ *ամառն ու շոգն* արևավոր *(Շիրազ, Հատընտիր, 224)*։ Արմենիերը չզգաց տիկին էլոիզի ո՛չ դողացող *ձայնը* և ո՛չ տխուր *շեշտը (ԱԲԵ, 635)*։

§ *1072. Եթե բազմակի խնդիրները զույգ-զույգ միացած են* և, *ու շաղկապներով և թվարկվում են իբրև առանձին զույգեր, ապա դրանք պետք է թվարկման մեջ դիտել իբրև առանձին անշաղկապ թվարկվող աններփակ խմբային շարքեր, մանավանդ եթե առանձին խմբերի զույգ անդամները քերականորեն և իմաստաբանորեն իրար մոտ են։ Իսկ եթե վերջին խումբը մյուսների հետ միավորվում է շաղկապով, կազմում է ներփակ խմբային շարք։*

Հնարավոր է նաև, որ խմբային անդամի հետ միավորվեն առանձին անդամներ։ Թե՛ այս, թե՛ մյուս դեպքում զույգը պետք է

դիտել իբրև մի առանձին թվարկվող միավոր, չնայած դրանք իրենց մեջ ներփակ խումբ են կազմում. օրինակ՝ Թեև ուրիշները նախանձել են նրան, այսինքն՝ նրա *ադամանդներին ու տուալետներին, կառքերին ու ձիերին, ճաշերին ու ընթրիքներին (Շիրվ., III, 391)*։ Մեր թափառական զուռնաներից և գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չքնաղ *տաղերն ու խաղերը*, մեր *մելոսը*, սրտաճույզ երգեր *(Իս., IV, 168)*։ Եվ լույսն ու խավարը իր հոգում՝ փառաբանում էր նա հայրենի կանաչ *դաշտերն* ու դեղին *գետերը, ճերմակ ծիրանի գինին, ընկերական սերն ու գգվանքներն աղջիկների (ԻսԵ, 292)*։ Որ տեսել է *բուք ու բորան* և ցուրտ *ձմեռ (ԱԲԵ, 622)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Բազմակի բացահայտիչ խնդիրները նույնպես պետք է խնդիրներ համարել։ Համեմատի՛ր. Հագել էր տաճկաստանի ժողովրդական հալավ՝ կարմիր *շապիկ*, կապույտ *վարտիք*, պոչերով մաշված *սոլեր* և բրդյա *գուլպաներ (ԼԹԿ, 5)*։ Եվ տեսա այն, ինչ որ տեսել էի իմ նախկին գոյությունների շրջանում՝ միայն *չարիք ու ոճիր*, միայն *ցավ ու զրկանք*, միայն սուտ *հաճույքներ* և ճշմարիտ *տանջանքներ (ԻսԵ, 321)*։ Օրվա երկրորդ կեսին պետք է հետևեի մասնավոր դասերի՝ հայկական *դպրության, իտալերենի, ֆրանսերենի*, գրականության *պատմության, փիլիսոփայության* ու *հոգեբանության (ՎՓՀՀ, 98)*։

§ *1073. Բազմակի խնդիրները թվարկվում են* և, ու, թե *շաղկապներով, երբ այս վերջինները կրկնվում են յուրաքանչյուր բազմակի անդամից առաջ։ Հնարավոր է, որ առաջին անդամը չունենա այդ շաղկապները։ Հիշյալ շաղկապներով թվարկվող բազմակի խնդիրները արտաբերվում են յուրահատուկ դադարով, որ առաջանում է այդ շաղկապների շեշտավոր դրությունից։ Այս թվարկումով բազմակի խնդիրները կազմում են աններփակ թվարկվող շարք. օրինակ՝* Իմ սրտում ունեմ ես անթիվ *սերեր, ո՛ւ ցանկություններ, ո՛ւ խոհեր* բազում *(ՉԸԵ, 187)*։ Դուք կներեք *և՛* իմ *տխրությունը, և՛* իմ մեծ *կարոտը (ԱԲԵ, 620)*։ Դու ես միայն ինձ հետ կիսել *թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ (ՉԸԵ, 293)*։ Մի հայացք, որ արտահայտում էր և՛ կծու *հանդիմանություն*, և՛ *վիշտ*, և՛ հուսալու անպայման հուսալու բուռն *կարոտ (Շիրվ., II, 389)*։ Այդպես երկինքն է թափում հանկարծ *թե՛ կարկուտ, թե՛ ձյուն, թե՛ փոթորիկ (ՉԸԵ, 226)*։ Գուցե նրանք հիշեցին իրենց *տնակները, և՛* մանր *երեխաներին*, և՛ իրենց *կանանց (ԱԲԵ, 629)*։ Դու կբերես անհուն *հո-*

բիզոններ, անհայտ հեռուների օվկիաններ կապույտ Ծ՛վ գիշերի ընթացք, և՛ լեռների շղթա, և՛ հողմերի պտույտ (ՉԸԾ, 260)։

Ծանոթություն 1. Թվարկումը կարող է կատարվել խմբերով և առանձին անդամներով. ըստ որում խմբերը իրենց մեջ կազմում են ներփակ շարք, իսկ միմյանց և առանձին անդամների հետ՝ աններփակ շարք. օրինակ՝ Փնտրեց պղինձ, երկաթ և՛ ոնիքս, մարմար, ոսկի և՛ կվարց, և՛ գրաֆիտ, և՛ սրաֆար (ԱԲԾ, 271)։ Իջնում ու ծածկում է նա հեռուները. հեռու՝ և՛ ուղի ու արահետ, և՛ գյուղ ու քաղաք, և՛ սար ու անտառ (ՍԶՄԿՊ, 5)։

Ծանոթություն 2. Թե շաղկապով թվարկվող բազմակի խնդիրները կարող են ներփակվել, երբ վերջին թե-ից առաջ և շաղկապ է կիրառվում. օրինակ՝ Բայց չկարողացավ խախտել իմ հավատարմությունը թե՛ դեպի հայրենիքը և թե՛ դեպի իմ թագավորը (Ր., III, 359)։

§ 1074. Բազմակի խնդիրները թվարկվում են նաև էլ շաղկապով, որ այս դեպքում նույն նշանակությունը ունի, ինչ որ և շաղկապը. օրինակ՝ Նրանք գրգռված էին և դժգոհ էին նրանի՛ց էլ, Ատոմի՛ց էլ (ԴԴՎ, 360)։

§ 1075. Բազմակի խնդիրները միավորվում են նաև այլ, այլև շաղկապներով, որոնցով կազմվում է հակադրություն։ Այլ շաղկապը բացառում է ստորոգյալի գործողության առնչությունը նախորդ խնդրի նկատմամբ, իսկ այլև շաղկապը ընդհակառակը ցույց է տալիս, որ ստորոգյալի գործողությունը երկուսի վրա էլ տարածվում է հավասարաբար։ Այս շաղկապով միավորում են հակադիր անդամներ, որոնք անդամահատված են ուժեղ կերպով և աններփակ շարք են կազմում. օրինակ՝ Ու այս անգամ այդ տախտակների վրայից մենք արդեն տեսնում ենք ոչ միայն զորանոցների պատերն ու պատուհանները, այլև հեռուն (ՉԸԾ, 435)։ Ես այսուհետև ձեզ համարելու եմ ոչ թե իմ ծառա, այլ հավատարիմ բարեկամ և հնարագետ խորհրդակից (Ր., II, 151)։ Որոնք «չպիտի պատճենը տան, այլ բնույթը, էությունը» (Շիրվ., IX, 450)։ Հիմա արդեն ոչ միայն իրավունքի, բարոյականության կամ մարդկության հետ է կռվում, այլ ճակատագրի հետ (ՎՓՀՀ, 298—299)։

§ 1076. Բազմակի խնդիրները միավորվում են կամ տրոհական շաղկապով, որը արտահայտում է խնդիրների միջև ընտրություն. երբ կրկնվում է շաղկապը, կազմվում է թվարկվող աններփակ

շարք, *իսկ եթե* կամ-*ը դրվում է վերջին անդամից առաջ, փակում է թվարկման շարքը. օրինակ՝* Նա ոչ օպերաներ է գրել, ոչ օրատորիաներ, թերևս մի քանի *արիաներ* կամ *ռոմանսներ* միայն *(Իսն, 371)*։ Ես, ճիշտ է, դեռ քաղաքացի օրիորդների հետ խոսելու անհրաժեշտ *ճարպկությունն ու բառապաշարը* կամ, լավ է ասել, *ոճերն ու վարվելակերպը* չունեմ *(ՍԶՄԿՊ, 271)*։

Ծանոթություն 1. Այլն *դերանունը, որ* և-*ով ներփակում է թվարկվող շարքը, նույնպես պետք է բազմակի խնդիրների մի անդամը համարել. օրինակ՝* Բոլորն էլ համարյա ունեին լավ, մաքուր անկողիններ, ստանում էին սպիտակեղեն *և այլն (ՁԲԵ, 441)*։ Ունեցել ենք Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, շարական, Ֆրիկ, Նաղաշ, Նահապետ Քուչակ *և այլն, և այլն (Շիրվ., IX, 460)*։

Ծանոթություն 2. Բազմակի խնդիրներ են համարվում նաև այն անորոշ դերբայները, որոնք ենթարկվում են որևէ բայի, բայց նրանց հետ չեն կազմում բաղադրյալ ստորոգյալ. այսինքն՝ դիմավոր բայի գործողություն կատարողը տարբերվում է անորոշի գործողության կատարողից. օրինակ՝ Սակայն կա մի հանգամանք, որ ինձ չի թողնում *արիանալ* և *համարձակ լինել (ՍԶՄԿՊ, 263)*։ Նրան սովորեցնում էր պարզ *հնչել* բառերը, բարձրաձայն *ընթերցել, արտահայտությունների մեջ զուսպ լինել, չերգվել* ո՛չ ասածը անվամբ և ո՛չ ազնիվ խոսքով, այլ *ասել* միայն ճշմարիտը *(ԱԲԵ, 567)*։

Ծանոթություն 3. Երբ խնդիրները իմաստով սերտ ամբողջություն են կազմում միմյանց հետ, դադարում են բազմակի լինելուց. օրինակ՝ Դու *չափ ու սահմանդ* կորցնում ես *(Շիրվ., III, 390)*։

§ *1077. Բազմակի խնդիրները միավորվում են նաև* ոչ *ժխտական շաղկապով, որը կրկնվելով՝ ուժեղ կերպով առանձնացնում է այդ խնդիրները միմյանցից որոշակի դադարով. այս որոշակիությունը արդյունք է* ոչ *շաղկապի հատուկ շեշտադրության. օրինակ՝* Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում *ո՛չ* նրանց *բողոքին, ո՛չ աղերսին, (ԱԲԵ, 559)*։ Ո՛չ տղա ունեին, ո՛չ աղջիկ *(Իսն, 332)*։ Հարկավ ես ո՛չ այնքան միջոցներ ունեի և ո՛չ էլ ժամանակ *(Շիրվ., VIII, 251)*։ Որոնք չէին մտածում ո՛չ նորեկ գարնան, ո՛չ սիրուն լուսնի և ո՛չ ճեմելիքներում զբոսնող գեղեցկուհիների մասին *(Մուր., V, 8)*։

7. ԲԱԶՄԱԿԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ 1078. Ստորոգյալի լրացում հանդիսացող բոլոր պարագաները կարող են բազմակի լինել։ Բազմակի լինում են միևնույն պաշտոն կատարող պարագաները։ Տեղի պարագան ձևի պարագայի հետ բազմակի չի կարող լինել, բայց տարբեր խոսքի մասերի պատկանող և տարբեր ձևաբանական տիպ ներկայացնող բառերը միևնույն ստորոգյալի համար միևնույն պաշտոնը միաժամանակ կատարելով՝ դառնում են բազմակի լրացումներ, տվյալ դեպքում պարագաներ։ Ձևի պարագա դառնում են ածականները, մակբայները, զանազան հոլովներով գոյականները, դարձվածքային զանազան արտահայտությունները և այլն։ Եթե միևնույն ստորոգյալը միաժամանակ ունի հիշյալ կարգի տարբեր ձևի պարագաներ, ապա դրանք միմյանց հետ միավորված բազմակի ձևի պարագաներ են։

ա) ԲԱԶՄԱԿԻ ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

§ 1079. Բազմակի ձևի պարագաները արտահայտվում են բազմատեսակ բառերով ու դրանց տարբեր ձևաբանական կառուցվածքով։ Ձևի պարագա են դառնում գոյականներ, մակբայներ, դերբայներ, ածականներ, կապական արտահայտություններ և այլ կարգի բառակապակցություններ։ Եթե սրանցից մեկը մյուսի լրացումը չէ, այլ համազոր ու միանման դերով հանդես են գալիս իբրև միևնույն ստորոգյալի ձևի պարագաներ, համարվում են բազմակի՝ չնայած իրենց խոսքի մասային և ձևաբանական կառուցվածքի խիստ տարբերության։

§ 1080. Ձևի պարագաները նույնպես միավորվում են լոկ թվարկումով, այսինքն՝ առանց որևէ շաղկապի և շաղկապներով։ Առանց շաղկապի թվարկվող ձևի պարագաները միավորվում են՝ կազմելով բազմակի անդամների աններփակ մի շարք։ Այս շարքի մեջ կարող են միավորվել թե՛ միանման ձևաբանական կառուցվածք ունեցող և թե՛ տարբեր կարգի բառեր. օրինակ՝ Գալիս էր *գրպանները միշտ քաղցրավենիքով լիքը, ձեռքին ամեն անգամ մի փոքրիկ փաթեթ խաղալիքներով (ՎՓՀՀ, 13)*։ Մի մարդ տեսավ գարնան մարգում *վեր ճախրելով, ճռվողելով* ոնց էր արտուտն անուշ երգում *(Թ., «Արտույտի երգը»)*։ *Հագած կապած զենք ու զրահ, Ձիանք հեծած ամեհի* Ահա եկել հավաքվել են Կտրիճները Կովկասի *(Թ., «Փարվանա»)*։ Գնաց *դրոշակը ձեռքին, թուրը մեջքին, չի-*

291—28

բուխը բերնին, գլուխը բարձր, փափախը ծոծրակին, հպարտ, աղավայել (Իսն, 334)։ Կնքահայրս տուն էր վերադարձել *մաքուր սափրված, բեղերը սրածայր ոլորած (ՎՓՀՀ, 5)*։ *Վագոնի մեջ մի անկյունում կկզած, լացակումած, ամբողջ աշխարհի դեմ սրդողած, լուռ ու մունջ* գալիս էի դեպի տուն *(նույն տեղում, 8)*։ Եվ վարդաջրերի գոճարները *քրքջալով, ծիծաղելով* ցայտում, թռչում են հեռու *(Իսն, 301)*։

Ծանոթություն 1. Շաղկապով կամ առանց շաղկապի հարադրված այնպիսի բառեր, որոնք մի իմաստային ամբողջություն են կազմում, չեն կարող բազմակի համարվել։ Դրանք երկուսը միասին մի անդամ են կազմում. օրինակ՝ Անցնում էին պարսպի տակով *տխուր ու տրտում (ՂԱՆ, 127)*։ *Կազմ ու պատրաստ* սպասում են մոտիկ ժամին մրցության *(Թ., «Փարվանա»)*։ Անահիտն իջավ ձիուց *ողջ առողջ*։ Վաչագանն էլ *լուռ ու մունջ* հետևեց նրան *(ՂԱՆ, 121, 135)*։

Ծանոթություն 2. Բազմակի չեն կարող համարվել նաև այնպիսի բառերն ու կապակցությունները, որոնք լրացնում են ստորոգյալը մի այլ ձևի պարագայի հետ միասին. այսինքն՝ իբրև ձևի պարագա միաժամանակ վերաբերում են նաև ստորոգյալի ձևի պարագային. օրինակ՝ Անրջային կիսալույսերով կամաց-կամաց իջնում է մթնաշաղը *(Իսն, 391)*։ *Այս օրինակի մեջ* անրջային լույսերով *կապակցությունը վերաբերում է* կամաց-կամաց իջնում է *կապակցությանը միաժամանակ, ուստի* անրջային լույսերով և կամաց-կամաց *բազմակի ձևի պարագաներ չեն* իջնում է *ստորոգյալի համար։ Համեմատի՛ր.* Նրանք *մոլորվածի պես լուռ ու մունջ* ներս մտան *(ՂԱՆ, 122)*։

§ 1081. Բազմակի ձևի պարագաները միավորվում են նաև բաղհյուսական և, ու *շաղկապներով։ Եթե բազմակի ձևի պարագաները երկուսն են, ապա դրանք իրար հետ սերտ միանում են հիշյալ շաղկապներով և կազմում մի ներփակ շարք՝ առանց որևէ թվարկման. իսկ եթե երկուսից ավել են, թվարկվում է մինչև վերջին բազմակի ձևի պարագան, իսկ այս վերջինը միավորվում է շաղկապով և փակում շարքը. օրինակ՝* Լսում էի ապշած, քարացած, հիացած և դյութված *(ՎՓՀՀ, 7)*։ Որ տխուր և մտախոհ գնում էր յուր ճանապարհը *(Մուր., IV, 28)*։ Այս ասաց խորին լռությամբ և ջերմեռանդ զգացումով *(ԴԴՎ, 405)*։ Գլխիկոր և ամոթահար իջա դեպի բնակու-

թյունները *(Փափ., 382)*։ Քուրմերը կռվում էին ամենաանուսանատ և կատաղի կերպով *(ՂԱԾ, 135)*։ Արաքական եժույգը հեծած, սուսերամերկ և սրարշավ նա դիմում էր մերթ այս և մերթ այն կողմը *(Մուր., III, 279)*։ Ուրախ ու զոհ Որոտ թագավորն ու գեղեցիկ աղջիկը մեծ հարսանիք են անում *(Թ., III, 257)*։

Ծանոթություն 1. Երբ մի քանի բազմակի ձևի պարագաներ ձևաբանորեն մոտ են իրար և միմյանց նկատմամբ համանիշ են, ապա մի այլ ձևի պարագա, որ դրանց նման չէ իր ձևաբանական կառուցվածքով և չի հանդիսանում դրանց համանիշ մեկ անդամը, շաղկապով դժվարությամբ է միավորվում։ Այս պարագայում համանիշ ձևի պարագաները միավորվում են շաղկապով, իսկ մյուսը մնում է բաց. օրինակ՝ Պարկը ուսին, բամբիռը անութի տակ և ցուպը ձեռին, *աղքատ գուսանի պես* թափառում էր արևայական բանաստեղծը *(Իսծ, 291)*։

Ծանոթություն 2. Երբ ձևի պարագաները խմբավորվում են զույգ-զույգ, ապա յուրաքանչյուր զույգը միավորման տեսանկյունով պետք է մի անդամ համարել։ Խմբի զույգ անդամները միմյանց հետ գերազանցապես և, ու *շաղկապներով են միավորվում և միմյանց հետ կազմում են մի ներփակ շարք, իսկ եթե առանձին խմբերը չեն միանում շաղկապով, ապա կազմում են մի ընդհանուր աններփակ թվարկում՝ միայն խմբերով. օրինակ՝* Եվ անցնում էր նրա կյանքը *թափառական ու անտուն, խրճիթե-խրճիթ և գյուղե-գյուղ*[1] *(Իսծ, 292)*։ Հասնում է տուն *սովորական կարգով ու քայլերով, դեմքի միատեսակ արտահայտությամբ* և *առանց հետաքրքրվելու (Մուր., IV, 28)*։

§ *1082. Բազմակի ձևի պարագաները թվարկվում են* և, կամ, թե *շաղկապներով, որոնք կազմում են թվարկվող բազմակի անդամների աններփակ շարքեր. օրինակ՝* Պառավի գլուխը ծերությունից շարժվում էր անդադար կա՛մ վերևից ներքև, կա՛մ ձախից աջ *(Նար., III, 7)*։ Անհավասփիկ հագած ուղևորի զգեստ Ե՛վ ձեռքիդ ցուպ առած, և՛ ուսիդ մախաղ Դու գնում ես դեպի հեռուները վսեմ *(ՉԸԾ, 260)*։

բ) ԲԱԶՄԱԿԻ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

§ *1083. Բազմակի տեղի պարագաները կարող են միավորվել առանց շաղկապների՝ լոկ թվարկումով՝ մանավանդ այն պարագայում, երբ պատկանում են միևնույն խոսքի մասին և ունեն միևնույն*

---

[1] Խրճիթե խրճիթ և գյուղե գյուղ *տեղի պարագա չէ*։

ձևաբանական կառուցվածքը։ Անշաղկապ միավորված տեղի պարագաները կազմում են աններփակ բազմակի անդամների շարք՝ թվարկման հնչերանգությամբ. օրինակ՝ Արզումանն անցնելու է *քարերի վրայով, ջրի միջով, նրանց հետքով (ԱԲԾ, 541)։* Գառնանամուտին *Սալյանից,* Ղարաբաղի *տափաստաններից,* մինչև անգամ շոգ *Լենքորանից* հազար-հազար մարդ, ոչխար, ուղտ, ձի քոշով և քարվաններով բարձրանում էին Զանգեզուրի լեռնային արահետները *(նույն տեղում, 345)։* Եվ ճանապարհ է այստեղից դրել *դեպի բանտ, Սիբիր, դեպի կախաղան (ՁԸԾ, 193)։* Կույտ բաժինը, *բեմի ներքևը, ատիճանների ներքևը՝* ոչ մի տեղ չկա *(ՁԸԾ, 438)։ Բաքվից, Նոր-Նախիջևանից, Պետերբուրգից, Մոսկվայից* սկսեցին տեղալ հերքումներ, հայհոյանքներ, սպառնալիքներ *(Շիրվ., VIII, 146)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Երբ բազմակի տեղի պարագաները արտահայտվում են կապական արտահայտություններով, և կապը չի կրկնվում իր բոլոր խնդիրների մոտ, դարձյալ յուրաքանչյուր կապի խնդիր (թեկուզ առանց կապի) համարվում է բազմակի անդամ. օրինակ՝ Երկար մեր երազները թափառեցին հեռավոր *անտառների,* կապույտ *գագաթների վրա, դաշտերի և ծաղիկների շուրջը (Փափ., 375)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2. Երբ առանձին տեղի պարագաներ արտահայտված են տարբեր խոսքի մասերով և տարբեր ձևաբանական կազմով, և մեկը մյուսի համար բացահայտող նշանակություն ունի, ապա դրանք բազմակի անդամներ չեն հանդիսանում. այլ բան է, երբ մեկի համար բացահայտող դերով հանդես են գալիս մի քանիսը. այս դեպքում այս վերջինները միմյանց նկատմամբ բազմակի անդամներ են, իսկ իրենց միջոցով բացահայտվողի նկատմամբ այդպիսի համազոր դեր չունեն. օրինակ՝ Քաղաքի արևմտյան *ծայրում, վերը,* ժայռակոտ, դեղին *բլրի վրա* խիստ խոժոռ, որպես արևելյան քարե մի բռնակալ բազմել է բերդը *(ՁԸԾ, 300)։* Սպիտակ մարմինը *հատակի վրա* թավալվում էր *այս ու այն կողմ (Շիրվ., II, 399)։*

§ 1084. Բազմակի տեղի պարագաները միավորվում են և, ու շաղկապներով, որոնք կազմում են բազմակի տեղի պարագաների ներփակ շարք։ Եթե բազմակի տեղի պարագաները կազմված են երկանդամից, ապա հիշյալ շաղկապներով կազմվում է մի սերտ

միավորված ներփակ շարք՝ առանց որևէ թվարկման, իսկ եթե երկուսից ավել են, ապա առաջին անդամները թվարկվում են, իսկ վերջինը ներփակում է շարքը. օրինակ՝ Ձյունապատ *բարձունքներից* և դեղնած *լեռնալանջերից* թավալում էր սառնաշունչ քամին *(Իսն, 321)։* Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով սփռված էին լինում նրանք *այգիներում, բանջարանոցներում և ագարակներում (Ր., III, 473)։* Սլանում էր *շավիղներով ու մեծ ուղիներով (Իսն, 338)։* Նրա հետ կարճ ժամանակում ես այցելեցի *Բեյրութ, Դամասկ, Կաֆֆա, Ալեքսանդրիա, Բենգազի, Տրիպոլի, Ֆեց, Մարաքեշ, Օրան, Ջիբրալտար, Մալագա, Կադիքս, Սևիլյա, Սիրակուզա, Լիվոռնո, Ճենովա և Նեապոլ (ՎՓՀՀ, 195)։*

§ 1085. *Երբեմն* և, ու *շաղկապներով միավորվում են առանձին երկու բազմակի անդամներ, ապա իբրև խմբեր կազմում են առանձին բազմակի անդամներ. եթե խմբերը չեն կապակցվում շաղկապներով, ապա դրանք կազմում են աններփակ թվարկվող շարք, իսկ եթե նաև խմբերն են միավորվում շաղկապներով, նշանակում է՝ ներփակվում են. օրինակ՝* Անկաշկանդ հնչում է մեր մայրենի լեզուն *դպրոցներում ու դատարաններում, գործարաններում ու զորանոցներում, ակումբներում ու շուկաներում (Իս., IV, 176)։*

Ծանոթություն. Ելման և ուղևորման տեղի պարագաները չեն կարող բազմակի տեղի պարագաներ համարվել, քանի որ դրանց պաշտոնները հակադիր են միմյանց։ Այդպես էլ բազմակի տեղի պարագա չեն համարվում գյուղից գյուղ, երկրե երկիր, տնե տուն, քաղաքից քաղաք *և այս կարգի այլ բառակապակցություններ, որոնք միտում են մի բառ դառնալու. օրինակ՝* Երկրե երկիր թափառեցի *և ուսմունքներից ուսմունքներ, կոնսպիրացիաներից կոնսպիրացիաներ (Իս., IV, 170)։* Մտա Կորնթոսի *պարանոցից Արշիպելականը (ՎՓՀՀ, 197)։ Առաջին օրինակի յուրաքանչյուր զույգը մի բազմակի անդամ է։ Ընտեղից էստեղ* մարդ չի գա *(ԱԲԵ)։* Ծծմակա *գլխից մինչև Սեղանսար* Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ *(Թ., «Սասունցի Դավիթը»)։ Այս վերջին օրինակների մեջ բազմակի տեղի պարագաներ չկան։*

§ 1086. *Բազմակի տեղի պարագաները միավորվում են նաև կրկնվող* թե, և, կամ *շաղկապներով, որոնք հատուկ շեշտով առանձնացնում են յուրաքանչյուր բազմակի անդամ, թվարկվում և կազմում բազմակի տեղի պարագաների աններփակ շարք. օրինակ՝*

Նույն անունով ճանաչվում էր թե՛ Շիրակի *դաշտում* և թե՛ Արշարունյաց *ձորում (Մուր., III, 358)*։ Հազիվ թե մի խումբ մոլլաներ ու սեյիդներ թե՛ *մզկիթների, թե՛ հրապարակների, թե՛ շուկաների մեջ* համարձակ ու բարձրաձայն հաղորդում էին այդ հրամանը *(Փափ., 535)*։

§ *1087. Տեղի պարագաները միավորվում են* թե, կամ *տրոհող շաղկապներով, որոնք առանց կրկնվելու արտահայտում են ընտրություն և կազմում են առանձնացած, բայց ներփակ շարք։ Եթե բազմակի տեղի պարագաները երկուսից ավելի են, շաղկապները միավորում են միայն վերջին անդամը. օրինակ՝* Հայրենի *դաշտում,* թե մի հեռավոր Անհայտ *հողի տակ* հեզ ծածկեն լոին *(Շիրազ, «Հատընտիր», 189)*։ Եվ ոտնեղ էլ լինեն՝ կնունք՝ նստած, թե հարստանխատանը. եկեղեցու գավթում պատի տակ շար ընկած, *թե Բոլոր քարի մոտ...* Տեր Նորընծան աչքերը պիտի խոժոռեր *(ԱԹԵ, 446)*։ Ամառային գեղեցիկ օրերը խմբում էին նրանց միասին երբեմն փաղաքի *պարտեզներում,* երբեմն կանաչ *դաշտերի վրա* և շատ անգամ փաղաքից հեռու՝ կարկաչահոս գետակների *ափին կամ* հորդաբուխ *աղբյուրի մոտ (Մուր., II, 158)*։ Փախան, ներս ընկան *տուն, ժամ կամ խանութ (Թ., «Սասունցի Դավիթը»)*։

§ *1088. Տեղի պարագաները միավորվում են նաև* այլ, այլև *հակադրական շաղկապներով, որոնցից առաջինը բացասում է, իսկ երկրորդը համատեղում՝ կազմելով հակադիր, բայց ներփակ շարք. օրինակ՝* Ուսանողները մի փանի աղյուս են նետել ոչ թե *ոստիկաններ,* այլ իրենց *հակառակորդների վրա (ԱԹԵ, 601)*։

գ) ԲԱԶՄԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ *1089. Բազմակի ժամանակի պարագաները միավորվում են շաղկապներով և առանց շաղկապների. օրինակ՝* Բազենյանը չեկավ ոչ այդ *օրն երեկոյան և ոչ էլ* հետևյալ օրը *(Նար., III, 489)*։ *Ամառ, ձմեռ* ամեն երեկո հին ճանապարհով հարբած տուն էին վերադառնում *(ԱԹԵ, 346)*։ Ներս է մտնում հանդիսավոր այս կամ այն *երեկույթին կամ դասախոսությանը (Շիրվ., IX, 454)*։ Մենք հենց *այսօր, թե* այս *գիշեր* պիտի ազատվենք *(ՂԱԵ, 129)*։ Սպասում էր, թե մի *ռոպեից,* մի *ժամից* իրան էլ կկանգնեցնեն քննիչի առաջ *(ՊՊ, II, 204)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1. Եթե ժամանակի պարագան արտահայտված է կապով, և մի կապը ունի մի քանի խնդիրներ, ապա

դրանք պետք է կապի բազմակի խնդիրներ համարել և ոչ բազմակի պարագաներ. օրինակ՝ Վերջապես մի քանի ժամվա կատաղի *կռվից* ու խիզախ *հարձակումից* հետո Բեշիրը հրաման տրավ զորքին *(Մուր., III, 279)*։ Էս օրվան օրից ուղիղ *մի տարի, մի ամիս ու մի օր* անց դու նրան կտեսնես էստեղ *(Թ., III, 253)*։

Ծանոթություն 2. Սկզբնական ժամանակակետը և վերջնական ժամանակակետը միասին չեն կարող բազմակի անդամ լինել, քանի որ այդ ընթացքը մի ամբողջական ժամանակաշրջան է. օրինակ՝ Ուր տրորվել են ու մզվել մեր պապերի ձեռքով տնկած ու հասցրած խաղողները *Նոյ մեծ պապից ըսկըսած մինչև մեր օրերը (ՊՊ, II, 36)*։ Ձեռնարկվեց «Սուրբ իմաստության» իր երջանիկ հիմնադրության *օրից մինչև* իր *կործանումը (ՎՓՀՀ, 197)*։

Ծանոթություն 3. Երբ մի ժամանակը իբրև կարճատև ժամանակաշրջան մտնում է մեծ ժամանակի մեջ՝ իբրև նրա մի մասը, իբրև մասնավորում, դրանք բազմակի պարագաներ չեն համարվում. օրինակ՝ Բնության հանդարտ *ժամանակը,* այն էլ միայն գիշերը ամենասուր ականջը շատ մոտից հազիվ կարող էր որոշել *(ՊՊ, II, 38)*։

գ) ԲԱԶՄԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 1090. Բազմակի նպատակի պարագա դառնում են գերազանցապես անորոշ դերբայները և կապական արտահայտությունները, որոնք կարող են միավորվել լոկ առանց շաղկապ թվարկումով և շաղկապներով. օրինակ՝ Այս երկու ուժերը միանում են հռոմեական միապետության դեմ՝ *կազմելու համար* մի երկպետություն՝ սիրո ծայրագույն վերելքի պոեզիայով սրբագործված, մի տիտանական օրգիայով արևելքն ու արևմուտքը *միացնելու* և աշխարհին *տիրելու (ՎՓՀՀ, 297)*։ Իր բանակով ասպարեզ է մտել *սպանելու, ավերելու, այրելու նպատակով (Շիրվ., IX, 456)*։ Տրվում է նրանց *նախաճաշի կամ ճաշի համար (Շիրվ., VIII, 251)*։ Հավաքվել էին հայոց պարապ մնացած ուսուցիչներն ու վարժուհիները *«հոգեզվարճ բամբասանքով» զբաղվելու,* կամ ինչպես իրենք էին ասում, *«ազգային նորություններից» խոսելու (Մուր., IV, 8)*։ Կալիոպին նույնպես անօգուտ կերպով ամեն հնար թափեց *ինձ անկողին դնելու և քնեցնելու (ՎՓՀՀ, 4)*։ Որոնք հաճախ ժողովվում էին այդտեղ

միմյանց հետ տեսնվելու, մտերմապես զրուցելու, մայրենի լեզվով կարդալու, կամ հեռավոր հայրենիքից ստացված նորությունները միմյանց հաղորդելու, երբեմն էլ իրենց ցավերի մասին միմյանցից կարծիք կամ խորհուրդ հարցնելու (Մուր., V, 8)։ Որովհետև նրանք են սիրում մեր զենքերը՝ *բնության ուժերը ծառայեցնելու և գետին տապալելու գիշատիչ անասունին (Իս., IV, 176)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Կապերով արտահայտված նպատակի պարագաները պետք է բազմակի համարել ըստ կապի բազմակի խնդիրների։ Այս դեպքում նպատակը դիտվում է առանձին-առանձին և ոչ այնպես, ինչպես ժամանակը, որտեղ կապը իր բազմակի խնդիրները միավորում է իբրև մի ամբողջական ժամանակաշրջան։

ե) ԲԱԶՄԱԿԻ ՊԱՏՃԱՌԻ, ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ *1091. Բազմակի պատճառի պարագաներ են դառնում գերազանցապես բացառական հոլովով գոյականները և կապով արտահայտությունները, որոնք հատկապես միավորվում են և, ու շաղկապներով. օրինակ՝ Ուրախությունից* և երիտասարդական *ավյունից* ժպտում էր ինքն իրեն *(ԱԲԵ, 176)*։ Բռնության երեսից փախչողները ու մեզ ապավինողները *քաղցից* ու *մերկությունից* պիտի կոտորվին, իսկ բուն հայրենիքում մնացածները՝ բարբարոսների *սրածությունից (Մուր., IV, 9)*։ Ես նրան սիրում էի խելագարի պես և ոչ միայն իր բերած *նվերների* կամ բուն *շոյանքների*, ոչ էլ նրա հարուցած շողքալից *ուրախության համար միայն (ՎՓՀՀ, 13)*, Շատ եմ *ցրտից, սովից* լացել *(Շիրազ, «Հատընտիր», 157)*։

§ *1092. Չափ ու քանակի պարագաները միավորվում են առանց շաղկապների կամ առանձնապես* և, ու *շաղկապներով. օրինակ՝* Սկսվում էր քաղաքի կողմից և անընդմեջ գնում էր *մի օր, երկու օր, տասն օր (ԱԲԵ, 345)*։ *Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում (Թ., III, 164)*։ Գնում են, ման են գալիս *մի տարի, երկու տարի, երեք տարի (Նույն տեղում, 166)*։ Որոնց օրեկան եկամուտը հասնում է տասը, քսան *և մինչև անգամ երեսուն հազարի (Մուր., IV, 10)*։

VI ՏՐՈՀՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

§ 1093. *Պարզ երկանդամանի նախադասությունը սովորաբար ներկայացնում է մի իմաստային և հնչերանգային ամբողջականություն, որն իր մեջ ունի առանձին իմաստային և հնչերանգային ավելի մանր խմբեր։ Այսպիսի երկու իմաստային և հնչերանգային խումբ են կազմում նախադասության ենթական և ստորոգյալը, որոնք իրենց շուրջ խմբավորում են իրենց լրացումները. օրինակ՝* Նրա գլխի վերև ծփծփում էր սուրբ, հայրենիքի դրոշակը *(Իսհ, 186)։ Այս նախադասության մեջ ունենք երկու իմաստային ու ինտոնացիոն առանձին խմբեր, որոնք մտնում են մի ընդհանուր իմաստային և ինտոնացիոն ամբողջի մեջ. Այդ խմբերն են՝* Նրա գլխի վերև ծփծփում էր և սուրբ հայրենիքի դրոշակը: *Խմբերի իմաստային ու ինտոնացիոն կենտրոնները հանդիսանում են ստորոգյալը* (ծփծփում էր) *և ենթական* (դրոշակը), *որոնք սերտ կերպով (թե՛ իմաստային և թե՛ ինտոնացիոն) իրենց շուրջ խմբավորել են իրենց լրացումները։*

§ 1094. *Հաճախ ենթակայի և ստորոգյալի լրացումները, այսինքն՝ նախադասության երկրորդական անդամները նախադասության մեջ ավելի ինքնուրույն դիրք են գրավում, այսինքն՝ իմաստային և ինտոնացիոն կապերը իրենց կենտրոնի՝ ենթակայի և ստորոգյալի հետ թուլանում է, և ինչպես երկրորդական նախադասությունները հատուկ ինտոնացիայով անջատվում են իրենց լրացյալ հանդիսացող գլխավոր նախադասությունից, այնպես էլ նախադասության երկրորդական անդամներն են առանձնանում։ Առանձնացումը կատարվում է դադարների, հատուկ իջնող ինտոնացիայի և շեշտի միջոցով, իսկ առանձնացման պատճառներն են շրջուն շարադասությունը, երկրորդական անդամի ընդարձակությունը, որ իր մեջ որոշ*

կապակցական միասնական ամբողջություն է ներկայացնում և հաճախ չի տեղադրվում այն ընդհանուր ինտոնացիայի սահմանում, որի մեջ պարփակվում է նրա լրացյալը։ Այս անտեղադրելիությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ առանց այդ դժվար տեղադրելի երկրորդական անդամի էլ՝ հաճախ տվյալ լրացյալը, այսինքն՝ գլխավոր անդամը, ծանրաբեռնված է լինում այլ երկրորդական անդամներով, որի պատճառով ի վիճակի չէ մի ուրիշ ընդարձակ լրացում ևս առնելու իր ինտոնացիոն հնարավորության սահմանում, այսինքն՝ իշխելու նրան։

Այսպիսով նախադասության ներսում առաջանում են ըստ իմաստի և կառուցվածքի յուրահատուկ շարահյուսական խմբեր, որոնք առանձնանում են իրենց լրացյալներից և այսպիսով ավելի ինքնուրույն դիրք են գրավում։ Չնայած սրանց այս ինքնուրույն դիրքին՝ այնուամենայնիվ դրանք նախադասության երկրորդական անդամներ են, որոնք իրենց բովանդակությամբ ավելի հարուստ են, ավելի արտահայտիչ և օժտված են հուզարտահայտչական մեծ լիցքով ու տրամաբանական ընդգծվածությամբ։

§ *1095. Նախադասության երկրորդական անդամների այսպիսի առանձնացումը կոչվում է տրոհում, իսկ առանձնացվող անդամները՝ տրոհվող լրացումներ, որոնք հաճախ նախադասության մեջ որոշակիորեն չեն վերաբերում այս կամ այն առանձին գլխավոր անդամին, այլ հավասարապես երկուսի համար էլ լրացում են հանդիսանում, որի պատճառով երբեմն դժվար է լինում որոշել դրանց յուրահատուկ բնույթը. օրինակ՝* Հեղինեն շփոթված, աշխատեց խլել իր ձեռները *(Նար., III, 190)։ Այս նախադասության մեջ* շփոթված *տրոհվող լրացումը որոշիչ է, այսինքն՝* շփոթված Հեղինեն, *սակայն չի բացառված, որ* շփոթված *լրացումը կողմնակի կերպով ունի նաև ձևի պարագայի նշանակություն։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Տրոհվող լրացումները իրենց լրացյալներից բաժանվում են երկու կողմից ստորակետներով, կամ բութով և ստորակետով։ Սովորաբար տրոհվող լրացումները ետադաս լրացումներ են. նախադասը կլինի, եթե դրանք իրենց լրացյալից բաժանվեն բութով, իսկ մյուս անդամներից՝ ստորակետով. օրինակ՝ Մինչ այդ մի զույգ ճակինքեթ թիթեռներ՝ *աղամանդե թևերով,* եկան նստան նրա խաղցրաբույր մազերի *վրա (Իսն, 310)։*

1. ՏՐՈՀՎՈՂ ՈՐՈՇԻՉ

§ 1096. *Տրոհվող որոշիչ են դառնում դերբայական ավել կամ պակաս ընդարձակ դարձվածները (նույնիսկ մի առանձին դերբայ), գործիական, բացառական, ներգոյական հոլովով արտահայտված գոյականական որոշիչները, որոնք գերազանցապես ընդարձակ բառակապակցություն են ներկայացնում, կապական արտահայտությունները, ածականները, մանավանդ այնպիսիները, որոնք բայարմատ են և գրեթե իրենց նշանակությամբ նույն դերն են կատարում ընդարձակ տրոհվող լրացման կազմում, ինչ որ դերբայը դերբայական դարձվածի մեջ և այլն։*

§ 1097. *Դերբայական դարձվածով արտահայտված տրոհվող որոշիչները սովորաբար առաջ են գալիս որոշիչ երկրորդական նախադասություններից՝ այս վերջինները վերածելու միջոցով։ Ամենից հաճախ կիրառվում է հարակատար դերբայը և իբրև որոշիչ ցույց է տալիս այն գործողությունը, որ ասված է լրացյալի մասին, կամ կատարել է լրացյալը։ Հայերենում ամենից շատ դերբայական դարձվածներն են դառնում տրոհվող լրացումներ. օրինակ՝* Մինչ այդ մի խումբ երիտասարդներ՝ *ժողովված ջրհորի եզերքին*, մտածեցին արձանը դուրս հանել *(Փափ., 292)*։ Դորպատի այդ հռչակը ստեղծել էր արքայական համալսարանը՝ *կառուցված Ալեքսանդր I-ի կայսրության օրոք (ԱԲԵ, 573)*։ Հյուսիսի ցրտաշունչ տափաստաններից և սառցապատ լեռներից դարեր անվերջ հիունգնուների և թուքիուների վայրենի հորդաները՝ *մրրկաբաշ ձիերին գամված*, արշավում էին Չինաստանի ծայրագավառների վրա *(ԻսԵ, 326)*։

§ 1098. *Դերբայական դարձվածով կազմված տրոհվող որոշիչը երբեմն որոշիչային կիրառման հետ համատեղում է նաև պարագայական նշանակություն, եթե մոտ է ստորոգյալին և ամենակարևորը, եթե ստորոգյալը այնպիսին է, որ այս կամ այն նշանակությամբ ձգում և իր հետ է կապում տրոհվող որոշիչը։ Այսպես, վերևում բերված օրինակներից վերջինի մեջ՝* մրրկաբաշ ձիերին գամված *տրոհվող որոշիչը կարող է դիտվել իբրև ձևի պարագա* արշավում էին *ստորոգյալի համար։ Համեմատի՛ր.* Իսկ ապրողները, երբ տուն դարձան՝ *ծերացած և ուժասպառ (ԻսԵ, 327)*։ Շահյանի առաջով շտապ քայլերով անցնում էին կենտուկենտ մարդիկ՝ *վերարկուների օձիքը բարձրացրած և ձեռքները գրպանների մեջ կոխած (Նար., III, 527)*։ Կանաչազարդ դաշտավայրը՝ *ցողված վաղորդյան մարգա-*

բիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով *(Ր., III, 471)։ Այս վերջին օրինակում տրոհվող որոշիչը կարող է դիտվել նաև իբրև պատճառի պարագա (ցողված լինելով)։*

§ 1099. Տրոհվող որոշիչներ են դառնում նաև բացառական, գործիական, ներգոյական հոլովներով գոյականական լրացումները, որոնք դարձյալ համապատասխան նախադասության ստորոգյալի բնույթին՝ կարող են նաև համարվել այս կամ այն պարագայի պաշտոնները։ Այսպիսի լրացումները սովորաբար մենակ հանդես չեն գալիս, այլ որոշիչ են դառնում իրենց հետ առնչվող ուրիշ բառերով. օրինակ՝ Երկիրը՝ լի *ցնծությամբ*, արտադրում էր շատ բարիք *(Փափ., 305)։* Հետո հարձակվեցին ուրիշ վանականներ՝ *ճպռոտ և թարախոտ աչքերով (ԱԲԵ, 566)։* Նրա աչքերի առաջ հառնում էր վանքը՝ *դարմանի և ցորենի շեղջակույտերով, նախիրներով (նույն տեղում, 566)։* Ես նախ նկարագրեցի քաղաքը՝ *հին ու նոր հրաշալիքներով (ՉԸԵ, 323)։* Մինչ այդ մի զույգ հակինթե թիթեռներ՝ *ադամանդե թևերով*, եկան և նստան նրա քաղցրաբույր մազերի վրա *(ԻսԵ, 310)։* Իսկ ավելի ներքև բարձրանում էր մայր ճեմարանի սյունազարդ շենքը՝ *սպիտակ կրաքարերից (ԱԲԵ, 574)։* Երեսունի մոտ մաշված մի կին էր նա՝ *մտրակի ճկուն մարմնով, թախծալի ժպտի ցոլքերը խոշոր աչքերում (ԴԴ, II, 20)։*

§ 1100. Առանց պարագայական նշանակության տրոհվող որոշիչ են դառնում հաճախ ածականները, որոնք հազվագյուտ են առանձին լինում, կամ կիրառվում են բազմակի և կամ որևէ կապակցությամբ. օրինակ՝ Թվում էր, թե շարժվում էին նրա գանգուրները՝ *ծխագույն և ծխի նման ոլորուն (ԱԲԵ, 564)։* Նրանք նոր շորերով էին՝ *կարմիր, կապույտ, կանաչ (նույն տեղում, 123)։* Եվ նրա մտքի առաջ հառնեց խոժոռ վանահայրը՝ *բիրտ*, ինչպես շրջապատի ապառաժները, *քրձազգեստ և բոկոտն (ԱԲԵ, 569)։* Չէին կարող, այո, այդ դժբախտ օրերը չծնել անձնավորություններ՝ *դժբախտ ու հերոսական (ՉԸԵ, 323)։* Մի հրաշագեղ աշխարհում մի արքայադուստր է եղել՝ *թարմ ու պայծառ*, ինչպես ծերունի արշալույսը լեռների ճերմակ գագաթներին. *չքնաղ և նազելի*, ինչպես եղնիկը անտառի աղբյուրի մոտ *(ԻսԵ, 274)։* Դա մի սիրուն ոսկեփետուր սապետ էր՝ *հպարտ ու լուրջ (ԴԴ, II, 67)։*

§ 1101. Առանձնապես պարագայական նշանակություն են ստանում այն տրոհվող որոշիչները, որոնք արտահայտվում են կապերով։ Այսպիսի որոշիչները ընդարձակ բառակապակցություն են

ներկայացնում՝ կապերով հանդերձ, որոնք հատկապես արտահայտում են ձև (պես, նման) և այլն. օրինակ՝ Մի թռչուն՝ *նման անտառաբնակ բուի,* ճաշում էր զանգակի պարանը *(ԱԲԾ, 584)։* Ներս մըտավ վագոնի ճաղքանդամ կոնդուկտորը՝ *չեկ թութունե թավ բեղերը շրթունքների վրա կախ (ԴԴ, II, 14)։* Գույնզգույն թիթեռները՝ գույնըզգույն ծաղիկների նման, ցանված էին օդի մեջ *(Ր., III, 472)։*

§ 1102. Տրոհվող որոշիչները անվանական գոյականական ստորոգելիական վերադիրների մոտ հանդես են գալիս՝ իբրև լիակատար որոշիչներ՝ առանց պարագայական նշանակությունների. օրինակ՝ Ռուզան Ամատունին Եվայի նման աղջիկ է՝ *հոնքերը բարձր, համարյա ճակատին (ՍԶՄԿՊ, 121)։* Նիհար, սև-սև մի մարդ էր նա՝ *փոքրիկ նեղ աչքերով* և ծխից դեղնած ատամներով *(ԳՄԾ, 324)։* Առաքինության մասին ձեր հերյուրած ճառերը լոկ ուռկաններ են՝ *արվեստակյալ այնպես նուրբ,* ինչպես սարդի ոստայնը *(Մուր., IV, 165)։* Այնպիսի աննման ծաղիկներ՝ անպատմելի բույրերով ու գույներով. այնպիսի լուսատերև ծառեր՝ *ամենահամեղ պտուղներով զարդարուն (Իսծ, 310)։*

§ 1103. Տրոհվող որոշիչ են դառնում նաև ուղղական հոլովով գոյականներ, որոնց որոշյալները որոշիչ հոդ ունեն, իսկ իրենք կիրառվում են անորոշ առումով՝ ունենալով, սակայն, ածական որոշիչներ։ Սրանք նույնպես չունեն պարագայական նշանակություններ. օրինակ՝ Աճաղաղը՝ *բավական գեղեցիկ մի ասպետ,* ժիր ու ճոգածու, պատրաստվում էր դիմավորելու հետևյալ օրվա լուսաբացը *(ԴԴ, II, 65)։ Նրա* դիմացն ելավ գավառներից մեկի պատգամավորուհի Սավգյուլը՝ *մի ճակատով գալում կնիկ, գյուղխորհրդի նախագահ (ԴԴ, II, 21)։* Եղել են բոլորին ծանոթ ղարաբաղցի Նիկոլը՝ ուսուցիչ, մշեցի Մարգարը՝ սրճարանատեր, ռուս Աբրահամը՝ գաղտնի ոստիկանության պաշտոնյա *(ՁԸԾ, 307)։*

Ծանոթություն. Այսպիսի որոշիչներ կարող են նաև բացահայտիչներ համարվել, բայց անորոշ լինելու հանգամանքը, դրանց խիստ կերպով առանձնացնում է՝ դարձնելով դրեթե միջանկյալ լրացումներ, որոնք գտնվում են որոշիչի և բացահայտիչի սահմանագծում։

§ 1104. Տրոհվող որոշիչը՝ հակառակ սովորական որոշիչին՝ կարող է վերաբերել նաև դերանուններին, բայց այս պարագայում

դրանք դյուրությամբ են ձգվում ստորոգյալի կողմից, այսինքն՝ հակվում են դեպի պարագայական լրացումները. օրինակ՝ Ներս են մտնում նրանք՝ *մեծ-մեծ փափախներով, խաչաձև փամփշտակալներով,* ոտից մինչև գլուխ զինված և զարհուրելի *(ԳՄԾ, 323)։* Ներս է մտնում անհայտ ոմն՝ *փաթաթված սև դոմինոյի մեջ (ԱԲԾ, 577)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Տրոհվող որոշիչը միշտ ետադաս է իր որոշյալի նկատմամբ։ Եթե տրոհվող որոշիչը դարձնենք նախադաս, կդառնա սովորական որոշիչ։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2. Հատկացուցիչը տրոհվող լրացում չի դառնում, իսկ ինչ վերաբերում է բացահայտիչին, ապա այն հայերենում միշտ տրոհվող լրացում է, ուստի այն, ինչ որ այստեղ պետք է ասվի, ասված է արդեն 688—731 պարբերություններում։

2. ՏՐՈՀՎՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ 1105. Տրոհվող պարագաներ են դառնում դերբայական դարձվածները, որոնք արտահայտվում են անորոշ դերբայի գործիական հոլովով, հարակատար, անկատար դերբայներով, անորոշ դերբայի տրական, բացառական հոլովներով։

Այս բոլոր կապակցություններն էլ վերջիվերջո առաջանում են նախադասություններից՝ շաղկապների վերացումով և դիմավոր ստորոգյալի դերբայացումով։ Մեծ մասամբ դերբային ուղեկցում են նրա հետ կապված այլ բառեր ու կապակցություններ, որոնք ամբողջը միասին դառնում են իբրև մեկ պարագայական լրացում՝ արտահայտելով նախադասության ստորոգյալի գործողության կատարման հատկանիշը՝ ձևը, պատճառականությունը, պայմանը, նպատակը, հիմունքը, հակառակ հիմունքը, ժամանակը, տեղը և այլն։

Հաճախ միևնույն դերբայական դարձվածը իբրև տրոհվող լրացում համատեղում է մեկից ավելի առումներ, այսինքն՝ միաժամանակ արտահայտում է և՛ պատճառ, և՛ ժամանակ, կա՛մ ձև և այլն։

§ 1106. Հարակատար դերբայով արտահայտված տրոհվող լրացումը արտահայտում է նախադասության ստորոգյալի գործողությանը զուգահեռ կողմնակի գործողություն. օրինակ՝ Թողած գիրք ու պարապմունք՝ ընկերներով գնում եմ ճաղափի տեսարժան վայրերը *(ՍՁՄԿՊ, 301)։ Տան մեծ որդին կատաղած՝* բարոյագետներից մեկի հետ կռվի բռնվեց *(Փափ., 291)։* Ու տնքում էր Ջաղի րիբին՝ պառավ կովն առաջն արած *(ԱԲԾ, 29)։*

§ 1107. Հարակատար դերբայով արտահայտված տրոհվող լրացումը դառնում է ստորոգյալի համար ժամանակի պարագա. օրինակ՝ Արշալույսը դեռ չշառագունած՝ զարթեցրել է ինձ (Մուր., II, 14)։ Բայց դեռ մեր տան անկյունը չհասած՝ ես աղմուկ եմ լսում (ՍԶՄԿՊ, 218)։ Բայց հազիվ խեղդվելուց ազատված՝ խնդրեց, որ իրեն վեր քաշեն (Փափ., 292)։ Բայց դեռ գյուղից դուրս չեկած՝ Բադին իմացավ, որ քարվանսարան էլ է վառվել (ԱԲՆ, 21)։ Դեռ հորը չընկած՝ ջատ աղաղակեց (ՂԱՆ, 315)։ Այս դեպքից երկու ժամ անցած՝ Այծատուրը գնաց (նույն տեղում)։

§ 1108. Հարակատար դերբայով արտահայտված տրոհվող լրացումը հաճախ դառնում է ստորոգյալի համար ձևի պարագա, այսինքն՝ լրացնում է ստորոգյալի գործողության կատարման ձևը, եղանակը. օրինակ՝ Աչքերը Հասոյին ուղղած՝ բարձրանում էին (Փափ., 226)։ Ու պրոֆեսորն սկսեց քայլել մանր և համաչափ քայլերով՝ ձեռքերը մեջքին բռունցք արած (ԱԲՆ, 566)։ Լիլիթը աղբյուրի մոտ նստած, ականջը դրած նրա բյուրեղյա նվագին՝ նայում էր դրախտի աստղազարդ երկնքին (ԻսՆ, 310)։ Ու վարիչը՝ Հայրոն, սուր ու զննող աչքերը հառած նրանց՝ բացատրում է էքսկուրսանտներին (ԴԴ, II, 71)։

§ 1109. Հարակատար դերբայով արտահայտված տրոհվող լրացումը կարող է լինել ստորոգյալի համար պատճառի պարագա. օրինակ՝ Մրնգի ձայնից դյութված՝ մոռանում էին տակի անդունդը (Փափ., 226)։ Բաց արա վանդակի դռնակը, և թռչնակը դեպի ազատությունն ունեցած իր բոլոր ձգտումով հանդերձ թերևս դուրս չգա այնտեղից և խցկվի մի անկյուն՝ վախեցած այն անհավորությունից (Նար., III, 56)։ Ով գիտե ինչ անհայտ դրդումից ստիպված՝ Գոհարիկը բաց արավ սենյակի պատուհանը (ՂԱՆ, 311)։ Այդ դեպքից սիրտ առած՝ մյուս օրը Թաթուլը իր հոտը քշեց դեպի աջակողմյան սարը (նույն տեղում, 332)։

§ 1110. Տրոհվող լրացում են դառնում նաև անորոշ դերբայով արտահայտված դարձվածները։ Ամենից հաճախ անորոշ դերբայը կիրառվում է գործիական հոլովով և իբրև տրոհվող լրացում իր հետ կապակցված բառերով հանդերձ արտահայտում է ստորոգյալի այս կամ այն պարագան՝ հաճախ իր հետ համատեղելով մեկից ավելի նշանակություններ։

§ 1111. Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված տրոհվող լրացումը ցույց է տալիս այն ժամանակը, երբ կատարվում է ստորոգյալի գործողությունը։ Այսպիսի պարագան հաճախ

համատեղում է պատճառականություն, ձև և այլն. օրինակ՝ Երբ *մի ձորակի գետակն անցնելով*՝ սկսանք դեպի գյուղը բարձրանալ, միջօրեի տապը ավելի ևս զգալի դարձավ *(Մուր., IV, 67)*։ Փոքրիկ տղան *տնից փողոց դուրս գալով*՝ թեթև սարսուռ է զգում *(ՍԶՄԿՊ, 205)*։ Ետ էին դարձել նրանք, սարսափել էին՝ *շնչելով Արարատի ցուրտ մառախուղը և տեսնելով խորանդունդ վիհերը, քարանձավները (ԱԲԵ, 569)*։ *Ներս մտնելով*՝ Աշխենը սովորական բարևը տվեց Մարությանի ամուսիններին *(Նար., III, 344)*։ *Վերադառնալով տուն*՝ նախ սկսա մտածել այն մասին... *(Մուր., IV, 297)*։ *Հասած լինելով արդեն այսպիսի բարձր աստիճանի*՝ ես, իհարկե, պիտի աշխատեի այնուհետև հեռու պահել ինձ հասարակ ամբոխից *(Նույն տեղում, 302)*։ *Հասցնելով տուն*՝ դնում ենք մեր սենյակում *(ՍԶՄԿՊ, 298)*։ *Ուրախ-ուրախ ներս մտնելով մոր սենյակը*՝ ասաց *(ՂԱԵ, 312)*։ *Յուր ծննդարանին անվանակից* գյուղում բույն դնելով՝ հրեղեն Մեսրոպը յուր թռիչքը այդտեղից ուղղել է մերթ դեպի Սյունիք և մերթ դեպի Աղվանք *(ՂԱԵ, 403)*։ *Նկատելով իշխանին*՝ մոտ վազեց մի մանկահասակ աղջիկ *(Ր., III, 71)*։

Ծանոթություն. Ինչպես արդեն նկատեցինք, այս տրոհվող ժամանակային պարագաների մեջ մասամբ զգացվում է պատճառակցությունը։ Համեմատի՛ր. Սարսափել էին՝ շնչելով Արարատի ցուրտ մառախուղը և տեսնելով խորանդունդ վիհերը: *Հասած լինելով արդեն այսպիսի բարձր աստիճանի*՝ ես պիտի աշխատեի... *տե՛ս բերված օրինակները*։

§ 1112. Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված տրոհվող լրացումը դառնում է ստորոգյալի համար պատճառի պարագա, որ ունենում է երբեմն ժամանակային երանգ. օրինակ՝ Նա ես վռեց՝ *իր համար մի չարագուշակ բան զգալով ընդհատված ձայների մեջ (ԱԲԵ, 566)*։ *Պետրոսի գալով*՝ Կամսարյանների վիլլան նոր փայլ ու շուք ստացավ *(Մուր., V, 164)*։ Նա ընկած էր բազմոցի վրա ծանր ու անշարժ՝ *նեղվելով իր չարությունից (Նար., III, 56)*։ Սահակը, *կուշտ եմ ասելով*՝ մի կողմ քաշվեց *(ԼԹԿ, 216)*։ *Շարունակ հնազանդվելով, շարունակ խոնարհվելով*՝ կատարյալ բռնակալ ենք շինել նրան *(Մուր., II, 447)*։ Հայրը *օրն ի բուն հարբած լինելով*՝ ոչ միայն պատիվ չուներ իր ազգականների և ծանոթների առջև, այլ շատ անգամ ծեծ ևս ուտում էր նրանցից *(ՌՊԵ, 493)*։

§ 1113. Այսպիսի տրոհվող լրացումը արտահայտում է գործողության միջոցի պարագան, որ երբեմն համատեղում է ձևի և

պատճառի երանգներ. օրինակ՝ Եվ դաշտերը ետ հոսելով, հեռվում պտույտ գալով. լեռներն առաջ վազելով՝ առեղծել էին մի հսկայական պար *(ԴԴ, II, 14)*։ Ես շատ եմ երազել ուրախացնել Մարոյին՝ *գտնելով նրա եղբորը (ԴԴ, II, 36)*։ Եվ հետո չարժե նորոգել նրա վիշտը՝ *կրկին որոնելով* անհայտ կորածին *(նույն տեղում, 41)*։ Գործի հաջողությունը կասկածելի էր կացուցանում՝ *Նադիրյանի կարծիքներին հակառակելով (Մուր., II, 251)*։ Ամեն տարեմուտի սկզբում Հայաստանը կատարում էր այդ քավությունը՝ *մկրտվելով Արածանիի սուրբ ջրով*։ Ամեն տարեմուտի սկզբում Հայաստանը կատարում էր և սիրո այդ սուրբ խորհուրդը՝ *Աստղկա տաճարին աղավնիներ ձոնելով (Ր., III, 76)*։

§ 1114. Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված տրոհվող լրացումը դառնում է ստորոգյալի ձևի պարագա, որ ցույց է տալիս գործողության կատարման եղանակը. օրինակ՝ Եվ սիրուն ներին պտույտ գործելով օդի մեջ՝ գնաց ջախջախվելու անդունդի քարերի վրա *(Փափ., 226)*։ Ուստի գլխարկը վերցրեց, վերարկուն հանեց և դուրս գնաց դեպի սեղանատուն՝ աշխատելով ընդունել իր սովորական անտարբերությունը *(Նար., III, 343—344)*։ Բրդի թելը, ոսկրոտ մատները դողացնելով՝ ասեղի ականջով անցրնում է և կարկատում *(ԱԲԵ, 30)*։ Նրանք, *իրենց շուրջն ու հեռուն նայելով՝* մի-երկու խոսք էին փոխանակում *(ՍՁ, V, 277)*։ Եվ գրեթե իսկույն էլ քնեց՝ *խաղաղ փափացնելով քթածակերից (Նար., III, 55)*։

§ 1115. Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված դերբայական դարձված հանդիսացող տրոհվող լրացումը կարող է արտահայտել ստորոգյալի գործողության հիմունքը և կողմնակի հիմունքը, երբ գործողությունը առաջ է բերվում հիմնվելով կողմնակի երևույթների վրա, որոնք գործողության բուն դրդապատճառն են հանդիսանում. օրինակ՝ Նրա ասելով՝ իբր թե Կաղ Կաղիչը հենց երեկ երեկո տուն վերադառնալիս՝ կայարանի ճամփին հանդիպում է երկու հոգու *(ՍՁՄԿՊ, 210)*։ *Հիմնվելով այն ծանոթությունների վրա՝* կարող եմ պնդել *(Մուր., II, 144)*։ Նրա ֆալի բակլաները, *իրա ասելով՝* Երուսաղեմի մեջ Քրիստոսի գերեզմանի վրա էին դրած և այդ պատճառով, *դարձյալ պառավի ասելովն՝* երբեք չէին ստում *(ՌՊԵ, 497)*։

§ 1116. Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված տրոհվող լրացումը հաճախ ցույց է տալիս ստորոգյալի գործողությանը զուգահեռ կողմնակի գործողություն, որ սովորաբար միաժամանակյա է լինում ստորոգյալի գործողության հետ. օրինակ՝

—Այո, *շեշտեց Բաղամյանը՝ պղտորված աչքերը փայլեցնելով նրա վրա և շրթունքները կծոտելով (Նար., III, 138)։ Չխոսելով այլևս մյուս հարցերի* մասին՝ այսքանը միայն կասեմ *(Մուր., II, 299)։* Նա չափում է յուր ստորադրյալների պարտքի և իրավունքի սահմանը՝ *անարգելով հաճախ նրանց մարդկային արժանապատվությունը (Մուր., II, 449)։ Դառնալով տղային ու աղջկանը՝* հարցրեց կնոջը *(ՂԱԵ, 314)։* Կտրեց ճանապարհը և, *մտնելով ծառերի մեջ,* ցատկեց մամռապատ ապառաժի գլխին *(Ր., III, 70)։ Որսորդության պատրվակով դուրս գալով ամրոցից՝ այսօր Սամվելը ոչինչ* չորսաց *(Ր., III, 73)։*

§ *1117. Վերջապես հիշյալ տրոհվող լրացումը արտահայտում է ստորոգյալի գործողության հետևանքը, նպատակը, պայմանը, համապատասխանության պայմանը և այլն. օրինակ՝* Տղան ինչպես կուզեր ստահակ լինել, բայց *երեք շաբաթ մնալով նրա վարժարանի մեջ՝* զառի նման հեզ կդառնար *(ՌՊԵ, 495)։* Երկու սև ամպ կանգնել են դիմաց-դիմաց՝ *գոյացնելով ամպեղեն կիրճ (ԱԲԵ, 571)։* Ծեր գերմանացի պրոֆեսորն անխնա մտրակում էր արևելցու հախուռն բնավորությունը՝ *համարելով այն հետևանք ասիական խավար միջավայրի (ԱԲԵ, 567)։* Նրա ծայրով բոթում էր կամ մեկի կրծքին՝ *կամենալով ուղիղ նստեցնել նրան,* կամ մյուսի գլխին, որպեսզի սա շատ չկորացնե այն *(Մուր., V, 135)։* Երբեմն ուժեղանում էր, երբեմն բարականում՝ *նայելով հովերի թափին (Իս., III, 159)։*

§ *1118. Տրոհվող լրացում է դառնում նաև անկատար* խս-*ով վերջացող դերբայը, որը միայն արտահայտում է ստորոգյալի ժամանակի պարագան։ Ինչպես վերևում բերված դերբայները, այնպես էլ այս վերջինը կարող է լինել և՛ առանձին, և՛ իր հետ քերականական տարբեր առնչություններով կապված բառերով, այսինքն՝ ամբողջական դերբայական դարձվածով։ Անկատար դերբայը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ միաժամանակյա է ստորոգյալի գործողության հետ, միայն դերբայի ժամանակը ավելի տևական է, իսկ ստորոգյալի գործողությունը կարող է համընկնել թե՛ այդ ամբողջ տևական ժամանակին և թե՛ նրա միայն մի պահին. օրինակ՝ Ջրի գնալիս՝* մանկամարդ մի ուրիշ հարս Սանդուխտին սովորեցրեց *(ԱԲԵ, 28)։ Այդպիսի բան տեսնելիս՝* փոքրիկ դանակը հանում է ու քերում անմիջապես *(ՍՋՄԿՊ, 191)։* Ճանապարհին, *աղքատան մոտով անցնելիս՝* միտն ընկավ, որ օրը կյուրակե է *(ՂԱԵ, 215)։* Մեր պրոֆեսորը *ակերու վերա խոսելիս՝* միշտ սովորեցնում

էր մեզ զանազան հնարներ, թե ինչպես պետք է խարդախ ակը իսկականից ջոկելու *(ՌՊԵ, 443)։ Դուռը բանալիս՝* տղաները նորից ցանկություն են հայտնում *(ՍՁՄԿՊ, 217)։*

Ծանոթություն. Երբեմն իս-*ով վերջավորվող անկատար դերբայի փոխարեն ժամանակի պարագա է արտահայտում անորոշ բացառականը, որ նույնպես տրոհվում է. օրինակ՝ Այդ շինության մեջ բացված դռնից մտնելուց՝* Կամսարյանի առաջ բացվեցավ մի ընդարձակ և սիզավետ բակ *(Մուր., V, 107)։*

§ 1119. Անորոշ դերբայի տրական հոլովը հաճախ առանձին և իր հետ կապակցված այլ բառերի հետ՝ իբրև դերբայական դարձված, դառնում է ստորոգյալի նպատակի պարագան. օրինակ՝ Անցնում ենք խմբից-խումբ՝ *լսելու (ՍՁՄԿՊ, 302)։* Օհան ապերը գնում էր գոմը՝ *տավարին ապուր տալու (ԱԲԵ, 120)։*

§ 1120. Այլևայլ պարագաներ են դառնում կապով արտահայտված տրոհվող լրացումները, որոնք մեծ մասամբ ընդարձակ բառակապակցություններ են՝ հոլովական տարբեր առնչություններով միմյանց հետ կապված և տարբեր խոսքի մասերով արտահայտված։ Այսպես՝ այդպիսի տրոհվող լրացումները արտահայտում են՝ ա) ժամանակի պարագա. օրինակ՝ Եվայի մասին երազելուց հետո՝ քնել եմ հանգիստ *(ՍՁՄԿՊ, 203)։* Ինձ տեսնելուն պես՝ նա անունս տալիս է *(Նույն տեղում, 215)։ Մի տասնհինգ րոպե անց՝* ավտոն դողաց, ցնցվեց և թռավ *(ԴԴ, II, 51)։* Նրանց տված տասը խորհուրդներին հետևիր՝ *այն էլ քո անցյալ անհաջողությունների պատմությունը հիշողությանդ մեջ նորոգելուց ետ (Մուր., II, 450)։ Ամեն օր խանութը փակելուց հետո՝* գրպանները լցրած տուն էր գնում *(ՌՊԵ, 498)։*

բ) Կապական արտահայտությունները իբրև տրոհվող լրացում ցույց են տալիս ստորոգյալի նպատակի պարագան. օրինակ՝ Ամեն օր շալակով սրա-նրա համար անտառից մի քիչ ցախ է բերում՝ *մի փոր հացի համար (ԱԲԵ, 22)։* Կամ ինչպես մեկը ծախել է իր ամբողջ կայքը, կաշառք տվել՝ *որդուն զորակոչից ազատելու համար (ԱԲԵ, 48)։ Այդ նպատակին մասամբ հասնելու համար՝* ես բերել եմ գյուղատնտեսական գրքեր *(Մուր., II, 118)։*

գ) Կապական արտահայտությունները իբրև տրոհվող լրացումներ դառնում են ձևի, պատճառի, հակառակ հիմունքի, փոխարինության և այլ պարագաներ. օրինակ՝ Բայց *չնայած խաղի մեջ*

գլխովին ընկղմված լինելուն՝ խաղընկերներից շատերը լավ չէին զգում իրենց *(ՉԸԵ, 324)*։ Նրանց թվում էր, որ փչում է՝ *չնայած հուլիսյան հաճելի եղանակին (նույն տեղում, 324)*։ Գիշեր-ցերեկ, ամեն ժամ, ամեն րոպե՝ *չնայելով ինքս ինձ զսպելուս*, ամբողջ սրտովս, ամբողջ էությամբ դեպի նա եմ ձգտել *(Նար., III, 342)*։ *Ինքը հակառակ իր ցանկության*, փոքր-ինչ ուշացել է *(Նար., III, 529)*։ Հասնում է աղջիկը՝ *հունցած խմորի պես (ԱԲԵ, 26)*։ *Առանց երկար մտածելու* իջավ վերևից *(ՂԱԵ, 312)*։ Հայրոն շուտով հայտնի դարձավ ամենքին՝ *շնորհիվ յուր անշնորհքության (ԴԴ, II, 60)*։ *Չնայելով յուր արտաքին կոպտության*՝ երևաց, որ բավական լուսամիտ է նա *(Մուր., IV, 295)*։ Շահյանը հանկարծ՝ *բոլորովին հակառակ իր բնավորությանը*, կատակ անելու տրամադրություն զգաց *(Նար., III, 521)*։ Սակայն *չնայելով դրան*՝ Բաղամյանն ամեն ամիս մի որոշ գումար ուղարկում է ծերունուն *(Նար., III, 63)*։ Բայց նա ինքը *խելոքանալու տեղ*՝ տասնապատիկ ավելի կատաղեցավ *(ՊԵ, 496)*։ Թոնիրի մոտից հեռանում էր՝ *մի քանի լավաշ կռան տակ (ԱԲԵ, 26)*։ Տիկին և պարոն Փիլարյանները հենց իսկույն դուրս պետք է ելնեն՝ *այցելության գնալու համար (Մուր., IV, 12)*։

§ *1121. Տրոհվող պարագաներ են դառնում գոյականները և այլ խոսքի մասեր զանազան հոլովներով, որոնք կարող են լինել տեղի, ժամանակի, պատճառի, ձևի, հակառակ հիմունքի, միասնության, նպատակի և այլ պարագաներ. օրինակ*՝ Մենք *որքան էլ փողոցում*՝ չենք կարողանում մեր ծիծաղը զսպել *(ՍՁՄԿՊ, 301)*։ Մարգարիտները այլևս չէին ժպտում առաջվա պես՝ *իրենց թավշանման շքեղ կանաչովը (Փափ., 306)*։ Երիտասարդը նստել էր մոմակալի մոտ՝ *ձեռքին ունելին (ԱԲԵ, 564)*։ Վերջապես նրանց խմբերը վերադառնում էին իրենց քաղերը՝ *երգով և ծնծղաների նվագով (ԱԲԵ, 583)*։ Մարությանը *խալաթը հագին*՝ նստած էր հեռու *(Նար., III, 344)*։ *Աղքատին տեսնելուց*՝ նա փակում էր աչքերը, *ընկածին պատահելուց*՝ կոխում էր ու անցնում *(Մուր., IV, 162)*։ Աճարը հին է՝ *անհիշելի* ժամանակներից *(ԱԲԵ, 24)*։ Ամեն կերպ աշխատում էր սիրաշահել նրան՝ *հայերին խաղաղ պահելու մտահոգությամբ (ՍԶ, V, 278)*։ *Վերջինի պակասելուց*՝ կառուցությունը դարձյալ երևան կգա նոր ուժով *(Մուր., II, 116)*։ Գյուղացին սովորել է մի բան անել՝ *տրակի ազդեցությամբ (ՂԱԵ, 404)*։ Այդ առատությունները շինականներին խիստ բարեբար կերակուր են մատակարարում՝ *մանավանդ ձմեռային պահոց օրերին (Ր., III, 71)*։ Իսկ երբ ոչ ոք չէր լսում նրան, *մենակությունից, թե*

ձանձրությունից՝ բուխարու առաջ բաց էր անում չարականի գիրքը *(ԱԲԵ, 119)*։

§ *1122. Տրոհվող լրացումներ են դառնում նաև առանձին մակբայներ, եթե ետադաս են, մանավանդ երբ ստորոգյալի այլ լրացումներից հեռու են շարադասված, օրինակ՝* Եվ գլուխը ձախ ետ դարձավ նա եկած ճամփով՝ *մենակ ու ձեռնունայն (ԱԲԵ, 122)*։ Թող այդպես լինի՝ *հավասար (ԴԴ, II, 36)*։

§ *1123. Տրոհվում են նաև նախադասության այնպիսի անդամները, որոնք պարզաբանում են իրենցից առաջ դրված որևէ անդամ՝ բազմազան կողմերից։ Այսպիսի պարզաբանող լրացումները համարվում են այնպիսի լրացումներ, ինչպիսի լրացյալի համար դրանք պարզաբանման դեր են կատարում։ Ուրեմն դրանք կարող են վերաբերվել նախադասության համարյա բոլոր անդամներին և կարող են արտահայտվել բազմազան ձևերով։ Համեմատի՛ր.* Հոգնած նստում է թախտին՝ *իմ դիմաց (ՍԶՄԿՊ, 209)*։ Որոնց քշում են քեռու երկիր՝ *բանտ* կամ *աքսոր (նույն տեղում, 219)*։ Գնում էին էքսկուրսիա՝ *Երևան-Քանաքեռ-Սևան (ԴԴ, II, 39)*։ Նա փողի հետ փոխանակում է ամեն ինչ՝ *մինչև իր ընտանեկան սրբությունն անգամ (ՂԱԵ, 404)*։ Վերին հանդը տանող ճամփի վրա՝ *ջաղացներին չհասած*, Անթառանց մեծ ընկուզենու տակ Վանդունց Բադու տունն է *(ԱԲԵ, 22)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Այսպիսի տրոհվող լրացումները մասամբ մոտենում են բացահայտիչի, սակայն առաջացել են շարահյուսական տարբեր կապակցություններից, որոնց բուն պաշտոնը հաճախ մթագնվել է. օրինակ՝ բերված նախադասություններից մեկի մեջ կան բանտ *և* աքսոր *բառերը.* երկիր *բառի մոտ դրանք համարում ենք տեղի պարագա, սակայն ավելի շուտ մթագնված նպատակի պարագա են (բանտարկելու, աքսորելու)։* էքսկուրսիա *բառը նույնպես տեղ է մտածվում, բայց այն ևս նպատակի պարագա է.* ջաղացներին չհասած *պարզաբանող արտահայտություն է, բայց պետք է լիներ՝* ջաղացներին չհասած տեղում: *Այդպիսի կապակցությունները առաջանալով տարբեր աղբյուրներից և մտածման եղանակներից ստանում են փոխանցվող բնույթ, այսինքն՝ կարող են համարվել և այս, և այն լրացում։*

Ծանոթություն 2. Պարզաբանող տրոհվող լրացումները իրենց լրացյալի հետ հաճախ կապակցվում են այսինքն՝ այն է *պարզաբանող շաղկապներով. օրինակ՝* Եվ այդ օրը բոլոր նաիրցիները տոն ունեն, *այսինքն՝ անվանակոչություն (ՁԸԵ, 301)։* Մի օր, *այսինքն՝ մի գիշեր,* ժամը մոտովորապես երեքին, Քաղաքի բոլոր տների պատուհանների ապակիները հանկարծ զրնգում են *(նույն տեղում, 306)։*

§ *1124. Գոյականները, դերանունները և հոլովվող այլ խոսքի մասերը* բացի, զատ, անկախ, դուրս *կապերով հանդերձ՝ հաճախ տրոհվում են, մանավանդ, երբ ետադաս են ու ընդարձակ և ցույց են տալիս այն առարկան, որ առվում, բացառվում է նախադասության անդամ հանդիսացող մյուս առարկաների շարքում կամ շարքից։ Այսպիսի առանձնացող անդամները կարող են բացառման հարաբերության մեջ դրվել նախադասության բոլոր գոյականական անդամների հետ, անկախ այն բանից, թե նախադասության որ անդամի հետ է հարաբերության մեջ մտնում, այդպիսի լրացումը կոչում ենք բացառման անուղղակի խնդիր։*

Բացի հինգ հարկանի շենքից՝ այդ ամենակարող կենտրոնից, Քաղաքում կան այստեղ ու այնտեղ հաստատված մի շարք ուրիշ, քիչ թե շատ նշանավոր կենտրոններ *(ՇԸԵ, 307)։* Ընկերական դատարանի դատախազը դատախազ էր նրանց աչքին՝ *անկախ այն գործից (ՁԸԵ, 431)։ Բացի սենյակներն՝* այստեղ ամեն բան էժան է *(Թ., V, 328)։* Տեսնելու արժանի ոչինչ չուներ իր շուրջը՝ *բացի փոքրիկ բանջարանոցը (Մուր., IV, 70)։ Բացի պառավ Դեղին՝* ամենքը նեղացնում էին նրան *(Թ., III, 39)։* Ոչ ոք նրաշք չի տեսնում՝ *թըշվառներից զատ (Շեքս., I, 325)։ Աշխատանքի հետ կապված հարցերից դուրս՝* նա նրա հետ ուրիշ որևէ մտերմական զրույց չի ունեցել *(ՆՁՀ, 145)։ Բացի այդ՝* պատվիրեց նրան ուշի ուշով դիտել նրա և օրիորդ Շուշանի հարաբերությունը *(Մուր., II, 288)։ Պաշտոնից ու պարտավորությանդ հավատարիմ լինելուց զատ՝* դու պարտավոր ես նաև հնազանդ լինել *(Մուր., II, 450)։ Բացի քո փորի մասին հոգալուց՝* ուրիշ ոչ մի բանի մասին չես հոգում *(Նար., III, 65)։*

§ *1125. Պարզաբանող լրացումների մի տեսակն է հավելյալ լրացումը, որ լրացուցիչ տեղեկություն է հաղորդում նախադասության որևէ անդամի մասին։ Այսպիսի լրացումները նույնպես տրոհվում են. օրինակ՝* Օհան ապերը գրքեր շատ ուներ՝ *հին գրքեր (ԱԲԵ, 124)։* Մի կիրակի պատշգամբում նստած կարդում էի նրա հին գըր-

քերից մեկը՝ *կարծեմ Հուստինյանոս թագավորի մասին (ԱԲԵ, 124)։* Քանդակել է նաիրցի վարպետը տասներկու առաքյալների դեմքերը՝ *մեկ-մեկ, կողք-կողքի տասներկու առաքյալ (ՉԸԵ, 302)։* Ահա թե ինչու է ընկերությունը կենտրոն՝ նույնիսկ գերկենտրոն *(Նույն տեղում, 307)։* Այդ մարդն, իրավ, հրապարակախոս էր, *բայց կաշառակեր,* մարտնչում էր, այո՛, *բայց ոչ ազնվաբար (Մուր., IV, 163)։*

§ 1126. *Տրոհվող լրացումներ են դառնում նաև բայանունների, գոյականացած դերբայների խնդիրները. օրինակ՝* Շահանը ճանապարհին պատմեց բժշկի ասածը՝ *սպասելու մասին (ԱԲԵ, 27)։* Որը միակ ունկնդիրն էր Քյալլա ծառուրի ձեռագիր խորհրդածությունների՝ ճշմարիտ հավատի, ամուսնալուծության և «երից տարրի փոխակերպման» մասին *(Նույն տեղում, 297)։ Համեմատի՛ր.* Հիշեց նրա ամեն հրաշքները՝ *կատաղի տղայոց խելքի բերելու մասին (ՌՊԵ, 495)։* Նրա քաղցր ու մեղմ բնավորությունը՝ *թե՛ դեպի շինականը և թե՛ դեպի քաղաքացին* նրա անձը պաշտելի էին կացուցել *(Ր., III, 73)։*

§ 1127. *Տրոհվում են նաև ամփոփող, եզրակացնող, ընդհանրացնող, հաստատող, հիմնավորող բառերը, բառակապակցությունները, որոնց լրացական պաշտոնը մթագնվել կամ աստիճանաբար մթագնվում է. օրինակ՝ Մեկ խոսքով* նրա այրի մոր համար ապրուստի հորդահոս աղբյուր էր բացվել այդ չորս ամիսը *(ՌՊԵ, 498)։ Եվ ճիշտը. որ,* հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովը հոգի է *(ՉԸԵ, 309)։* Եվ ես *վերջապես,* հոգնածությունից մեկնվում եմ չոր տախտին *(ՍԶՄԿՊ, 207)։* Դրա հետ միասին, *ըստ իմ սովորության,* հառեցի հայացքս Շուբինի աչքերին *(Նույն տեղում, 135)։ Ավելին՝* դատից մի օր առաջ կամերաներում և միջանցքներում կալանավորները բողոքում էին *(ՉԸԵ, 431)։*

§ 1128. *Տրոհվող լրացում են դառնում* որպես, ինչպես, իբրև *բառերով առանձնացող տարբեր տեսակի արտահայտություններ, որոնք լինում են որոշիչ, բացահայտիչ և պարագաներ՝ նայած նախադասության որ անդամի հետ են առնչվում. օրինակ՝* Չգիտեմ ամեն տարի Զորագյուղում գարունն այնքան սիրուն է, ինչպես այն տարին *(ԱԲԵ, 124)։* Նույն աչքերն էին, ինչպես *բարիկենդանի օրը կտուրի վրա (Նույն տեղում, 126)։* Ցանկապատի փշերի առանքից երկու մանրիկ աչքեր, *որպես սև ձիթապտուղ,* և բարակ կարմիր շրթունքներ *(Նույն տեղում, 128)։* Այդ երկու անվան մեջ, *ինչպես ընկույզի երկու կճեպի մեջ, պարփակվում էր մի քաղաք*

(ԱԲԵ, 297)։ Նայում են շոգեկառքին, որպես մի զարմանալի հրաշքի *(ՁԸԵ, 305)։* Կանգնած է քաղաքի մեջտեղում, *որպես ահռելի մի վեհություն, քարե ակնածանք (նույն տեղում)։* Այժմ, իհարկե, այդ գեղեցիկ և բուն քրիստոնեական սովորությունը մոռացության է տրված, *իբրև անպետք հնություն (Մուր., IV, 71)։ Ու այնպես ենք հարձակվում այդ գրքերի վրա,* ինչպես երեխան վաղուց սպասված մրգի վրա *(ՍԶՄԿՊ, 300)։ Իբրև հայր չունեցող տղայի՝* մենք քեզ ազատել ենք թոշակից *(ՍԶՄԿՊ, 116)։*

VII ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 1129. Շարադասությունը շարահյուսության մի բաժինն է, որն ուսումնասիրում է նախադասության անդամների նախադասության մեջ իրար նկատմամբ ունեցած դիրքավորումը, այսինքն՝ շարադասման կարգը, տեղը։ Կան լեզուներ, որոնք որոշակի կերպով հաստատուն են դարձրել նախադասության այս կամ այն անդամի, մանավանդ ենթակայի և ստորոգյալի տեղը։ Երբ այս երկու գլխավոր անդամները դասավորվում են, ապա պարզ է, որ մյուս երկրորդական անդամները համապատասխանորեն խմբավորվում են այս երկուսի շուրջը։ Կան նաև այնպիսի լեզուներ, որոնք որոշակի կերպով չեն հաստատել նախադասության անդամների տեղը։ Այդ տեղը պայմանական է այնքանով, որքանով ավել կամ պակաս ազատությամբ նախադասության այս կամ այն անդամը, հատկապես ենթական և ստորոգյալը, կարող են տեղաշարժ կատարել՝ առանց աղավաղելու նախադասությունը։ Այս դեպքում նախադասության անդամների դիրքը որոշվում է անհատական ըմբռնումներով, ոճաբանական պահանջներով, տվյալ անդամի, այս կամ այն պարագայում, կարևորությամբ, իմաստային նրբությունների հաշվառումով և այլն։

§ 1130. Հայերենի շարադասությունը ազատ է, այսինքն՝ նախադասության անդամների համար որոշակի տեղ չի սահմանված։ Բայց ինչքան էլ որ ազատ է, այնուամենայնիվ որոշ սահմաններ կան, որից ավելի անհնար է օգտվել այդ ազատությունից։ Եթե նախադասության ենթական ունի որոշիչ կամ հատկացուցիչ, ապա դրանք պետք է շարադասվեն անմիջապես ենթակայից առաջ. շրջումով կարող են նաև ետադաս լինել, սակայն չի թույլատրվում դրանք այլևայլ բառերի ընդմիջումով հեռացնել իրենց լրացյալից։ Բացահայտչի տեղը ավելի որոշակի է. այն բացահայտյալից միայն հետո կարող է դրվել. առաջ դրվելով՝ կփոխի իր բնույթը։

§ 1131. Չնայած այսպիսի կաշկանդումներին, այնուամենայնիվ հայերենի նախադասության անդամները ազատորեն տեղաշարժվում են, որի շնորհիվ դրանք առաջ են բերում միևնույն նախադասության բազմաթիվ փոփոխակներ, որոնք իրենց արտահայտչությամբ, նուրբ իմաստների յուրահատկություններով փոխադարձաբար հարստացնում են մեր նախադասության արտահայտչական հնարավորությունները։

§ 1132. Մեր լեզվի նախադասության անդամների դասավորումը, ինչքան էլ որ ազատ լինի, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում առաջ է բերել մի այնպիսի վիճակ, որ պայմանավորվում է նախադասության անդամների այս կամ այն դիրքում կիրառվելու հաճախականությամբ։ Սովորական հաղորդման, առօրյա զրույցի, խոսակցության մեջ նախադասության անդամները գտնվում են իրենց համար սովորական դարձած դիրքավորման վիճակում։ Երբ նախադասության անդամների համար սովորական դարձած դիրքավորումը պահպանվում է գրավորի մեջ, ստացվում է ուղիղ կամ սովորական շարադասություն։ Իսկ եթե այդ սովորական կարգը խախտվում է, առաջանում է շրջուն շարադասություն։ Օրինակ՝ Մեր հիմնարկի աշխատակիցները այսօր գնում են զբոսանքի. այս նախադասության մեջ ենթական գտնվում է նախադաս վիճակում (նրա նախադաս լրացումները նկատի չեն առնվում). նրան հաջորդում է ժամանակի պարագան, ստորոգյալը, ապա նպատակի պարագան։ Երբ այս կարգից որևէ անդամ իր տեղը փոխում է, ապա ուղիղ կամ սովորական շարադասությունը փոխվում է շրջունի։ Շրջումը տարբեր պատճառներ ունի։

§ 1133. Ուղիղ կամ սովորական շարադասությունը չի կարելի շրջուն դարձնել, երբ շրջումը նախադասության նշանակությունը աղճատում է, կամ երկդիմություն է առաջացնում, երբ զգացվում է խիստ անբնականություն, երբ առաջանում է նախադասության միանման ձևական կառուցվածք ունեցող անդամների պաշտոնների շփոթություն։ Եթե նույնիսկ սովորական շարադասության դեպքում կան վերոհիշյալ երևույթները, ապա պետք է շարադասությունը շրջել նման երևույթներից խույս տալու համար։ Շրջումը թույլատրելի է այն դեպքում, երբ ոճաբանորեն արդարացվում է, այսինքն՝ երբ շրջումը հարստացնում է նախադասության հուզարտահայտչական հնարավորությունները և օժտում է իմաստային անհրաժեշտ նրբություններով։

§ 1134. Ուղիղ կամ սովորական շարադասության դեպքում իմաս-

տային և արտաշնչական ամբողջությունը հավասարապես բաժանվում է նախադասության անդամների վրա։ Եթե նախադասության մեջ ենթական և ստորոգյալը կարևոր դիրք են գրավում և իմաստի ու արտաբերման կենտրոն են հանդիսանում, դա նրանց էական առանձնահատկությունն է, որ, իբրև այդպիսին, սովորական շարադասության մեջ մնում է աննկատելի՝ իբրև սովորական երևույթ. նախադասության որևէ անդամ չի առանձնանում և ընդգծվում մյուսների շարքում։

§ 1135. Հակառակ սովորական շարադասության՝ շրջումը հաճախ այնպիսի իմաստային ու ոճաբանական նրբություններ է հայտնաբերում նախադասության մեջ, որ սովորական շարադասությամբ բնավ չի զգացվում։ Նախադասությունը լիցքավորվում է քնարական շնչով, հուզարտահայտչական խորությամբ, մեղեդիկ հարստությամբ և համաչափ կշռույթով։ Շրջումով առանձին բառեր նախադասության մեջ մի նոր կշիռ են ստանում՝ շնորհիվ նոր շեշտադրության, նոր դիրքի։ Շրջումով զգալի է դառնում նախադասության յուրաքանչյուր անդամի շեշտը, որովհետև դրանք դուրս են գալիս արտաբերության սովորական շրջանակներից, որով և պայմանավորվում է նրանց կշռույթը։ Գրողը ըստ իր ոճաբանական ըմբռնումների, ըստ գրվածքի բնույթի մեկ առաջ է քաշում խոսքի որակական տարրերը, որպեսզի ստեղծի պերճ, ծաղկուն ոճ. երբեմն, ընդհակառակը, կարևորությունը տալիս է գործողության բառերին, որով ուժեղացնում է խոսքի թափը, շարժունությունը և այդպիսով առաջին գծի վրա է դնում խոսքի բովանդակությունը։

1. ԵՆԹԱԿԱՅԻ ՏԵՂԸ

§ 1136. Ուղիղ կամ սովորական շարադասությամբ ենթական դրվում է նախադասության սկզբում (լրացումները նկատի չեն առնվում). օրինակ՝ Երիտասարդ *սիրտը* հուզվեց: Եվ *նա* միայն մի քաղցր ու խորհրդավոր ժպիտով պատասխանեց թախծող արտասուքին *(Մուր., II, 190)։* Այս *բանը* թերևս անսպասելի լինի քեզ համար *(Նար., III, 451)։* Փայլուն *մազերը* հյուսված էին մի հաստ գիսակի մեջ *(Նույն տեղում, 229)։* Մոլորված *երևակայությունս* սկսավ առաջիս հազար ու մեկ զանազան պատկերներ նկարել *(ՌՊՆ, 350)։ Գիշերը* անցավ կրակի ու բոցերի դժոխային գործողության մեջ *(Ր., III, 320)։* Ատոմի խոսելու այդ ձևը մի փոքր վստահեցրեց Առաքելին *(ԴԴՎ, 337)։*

§ 1137. Ենթակայի ուղիղ շարադասության այս դիրքորոշումը ավելի հաճախ է կիրառվում այն դեպքում, երբ անվանական բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը իր քերականական կառուցվածքով համընկնում է ենթակային. օրինակ՝ Նրանց հրանոթները ապագա հրանոթների նախապապերն էին, (Ր., III, 306)։ Թող ամոթը և մշտական ապաշխարանքը լինի նրանց բաժինը (Նույն տեղում, 251)։ Իսկ իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է (ԴԴՎ, 220)։

§ 1138. Ենթական պարտադիր կարգով անվանական ստորոգյալից առաջ է դրվում, երբ այդ ստորոգյալի բայական հանգույցը զեղչված է, թեկուզ ինչ խոսքի մասից էլ կազմված լինի ստորոգելիական վերադիրը. օրինակ՝ Վայրկյանը՝ ծանր, օրերը՝ թեթև, տարիներն անցան իրարու ետև (Իսծ, 64)։ Աղբյուրներդ՝ բյուրեղ զանգեր: Հուր հավքերդ, թևերն՝ արծաթ, կտուցները՝ լալ-մարջան (Իսծ, 64, 96)։ Իսկ դա՝ այդքան թուլակազմ, այդքան ողորմելի, սակայն միշտ զվարթ և միշտ արագաչան (Փափ., 273)։

§ 1139. Եթե ենթական մի որևէ անորոշ դերբայ է, իսկ ստորոգյալը կապակցվում է այս, ահա ցուցական բառերով, կամ նշանակել բայով, ապա ենթական միշտ նախադաս է դրվում. օրինակ՝ Ձգձգել, ժամանակ շահել՝ ահա մեր ուժը, մեր խելքը (ԴԴՎ, 256)։ Չանսալ կոչի հրամանին, չգնալ ատյան՝ կնշանակի թույլ տալ... (Նույն տեղում, 265)։ Լինել, թե չլինել՝ այս է խնդիրը (Շեքս., I, 49)։

§ 1140. Ենթական ստորոգյալից հետո է դրվում այն դեպքում, երբ հատուկ նպատակով ստորոգյալի լրացումները մղվում են նախադասության սկիզբը։ Ստորոգյալը հաջորդելով իր լրացումներին՝ ուժեղացնում է նախադասության անդամների տրամաբանական կապը, այլապես՝ ստորոգյալի հեռացումը իր լրացուցիչներից առաջ է բերում տրոհվող լրացումներ, որով թուլանում է նախադասության կապակցումը։ Ուրեմն՝ սովորաբար, երբ ստորոգյալի լրացումները տեղադրվում են նախադասության սկզբում, պետք է դրանց հաջորդի ստորոգյալը և ապա ենթական. օրինակ՝ Խորունկ երկնքում դեռ վառ են մի քանի սպիտակ աստղեր (ԱԲԾ, 570)։ Կապույտ սառույցների մեջ ցոլանում է աստղերի սպիտակ-դեղնավուն լույսը (Նույն տեղում)։ Իսկ երկու կողմ ժայռերից ծիլ-ծիլ հյուսված են լուսեղեն աղբյուրներ (ԴԴԸ, 185)։ Լեռների և բլուրների տիտանական պարի մեջ գոյացել է մի կաթսա (Անթ., 184)։ Այս հանգամանքը ի նկատի ունենալով՝ նվային խիստ անախորժ թվաց

Աշխենի ծաձկամտությունը *(Նար., III, 333)*։ Այդպես էր երևում ինձ՝ Աղդան *(Փափ., 410)*։ Արտակի համար անհասկանալի էին Աստղիկի շարժումները *(ԴԴՎ, 448)*։ Թիֆլիսի Վերա թաղամասում, մի փոքրիկ փողոցի վրա, գտնվում է մի ոչ շատ ընդարձակ շինություն *(Մուր., II, 220)*։ Հանկարծ նրա մշուշված աչքերին երևաց խորիշայի պատկերը *(ԴԴՎ, 540)*։ Մթան մեջ խավարակուռ արձանի նման խստորեն նայում էր Տփղիսի արևմտյան սարը *(Նույն տեղում, 543)*։

§ *1141. Ուրեմն՝ երբ ստորոգյալը չունի խնդիրներ, այլ միայն կան պարագաներ, ապա այդ պարագաներին հաջորդում է ստորոգյալը, իսկ ենթական մղվում է նախադասության վերջը։ Իսկ երբ ստորոգյալը պարագաների հետ ունի նաև խնդիրներ, այս դեպքում պարագայական բառերին հաջորդում է ենթական, իսկ ստորոգյալը գերազանցապես մղվում է նախադասության վերջը. օրինակ՝* Հետևյալ օրը՝ վաղ առավոտյան, Աշխենը մի քանի տող նամակ գրեց *(Նար., III, 313)*։ Նրա գնալուց մի քառորդ ժամ հետո ցավագար աչքերով ծառան փողոցի դռան մոտ նամակի մի ծրար գտավ *(Նույն տեղում, 332)*։ Այդ օրը սուրհանդակ եկավ Առոմից *(ԴԴՎ, 546)*։ Առաջին կարճ հարվածներով նա մի փոքր կասեցրեց պարսիկների թափը *(Նույն տեղում, 548)*։ Երկու տարուց հետո էստեղից էլ հերս ինձ տարավ մեծ քաղաք *(Թ., III, 119)*։ Նրա գնալուց հետո ես ոչինչ չեմ կարողանում անել *(ՍՋՄԿՊ, 212)*։

§ *1142. Եթե ընդհանրապես ստորոգյալի բոլոր լրացումները դասավորված են նախադասության սկզբում, ապա դրանց անմիջապես հաջորդում է ստորոգյալը, և ենթական մղվում է նախադասության վերջը, իսկ եթե ստորոգյալների լրացման մի մասը սկզբում է, իսկ մյուս մասը՝ վերջում, ապա ենթական նախորդում է ստորոգյալին. օրինակ՝* Երեկոյան ես քնում եմ պայծառ հեռանկարներով *(ՍՋՄԿՊ, 244)*։ Այսօր ես չափազանց վրդովված էի *(Նար., III, 135)*։ Այս մտածմունքների հետ միասին Վահանը արդեն հագնըվել և լվացվել էր *(Մուր., II, 368)*։ Վահանին տեսնելուն պես Մովսիսյանը մի կողմ հրեց օրիորդին *(Նույն տեղում, 369)*։ Ներսում հատակը, դիմացի պատը և երկար զաստոյկան պատած են հաստ գորգերով *(ԱԲԵ, 318)*։

§ *1143. Ենթական ստորոգյալից հետո է շարադասվում, երբ հեղինակը պատումի մեջ կարևորությունը տալիս է գործողությանը, երբ ցանկանում է խոսքի մեջ հանդիսավորություն մտցնել, երբ պատմվում են լինելություններ, եղելություններ և վերջապես,*

երբ ենթակաները վերացական բառեր են, երևույթների անուններ, ժամանակի մասեր։ Այս ավելի նկատելի է տոնական հանդեսների, ցույցերի, հասարակական կարևոր իրադարձությունների նկարագրությունների մեջ, երբ անհրաժեշտ է պատումը օժտել շարժունությամբ, աշխույժով և հուզարտահայտչական պաթոսով։ Սովորաբար այս կարգի խոսքերի մեջ նախադասությունները քիչ են ծանրաբեռնվում երկրորդական անդամներով. օրինակ՝ Հոսում էր հանդարտ Դոնը... Եղել էր Դոնը և պիտի մնար մշտահոս, հավերժական... գործում էր մեծ ու իմաստուն պատմությունը առողջ զինվորի զարկերակի պես *(Քոչար, 728)*։ Գնում է գերին, գնում է նորից, Անցել է թիվը հազար հազարից. Չի լցվում սակայն էն վանքը կըրկին, Չի կանգնում հայի հոսանքն ահագին *(Թ., I, 335)*։ *Կորչում* էին նրա պայծառ օրերը, ընկնում էին նրա դալար զարդերը, հալածվում ու կոտորվում էին նրա սիրասուն երեները... և հառաչում էր նա *(Թ., III, 50)*։ Անցան օրեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ *(Ր., III, 244)*։ Ամաչեց աղան իր գործից։ Կիսամեռ եղավ Զալխեն հուսահատությունից։ Փոխեց Հասոն եղանակը *(Փափ., 226)*։

§ *1144. Առհասարակ ենթակայի ետադաս դիրքը (ստորոգյալի համեմատությամբ) առաջ է բերում հանդիսավորություն, ուժեղացնում է խոսքի քնարականությունը, ընդգծում է գործողությունների, եղելությունների կարևորությունը։ Այս երևույթը շատ ավելի պարզ է զգացվում, երբ համադաս նախադասությունների մեջ ստորոգյալը կրկնվում է. օրինակ՝* Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր էջմիածնի վանքը *(Ր., III, 473)*։ Դատարկ էին քաղաքները, դատարկ էին գյուղերը, դատարկ էին ճանապարհները *(Նույն տեղում)*։ Անցան օրեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ *(Ր., III, 244)*։

§ *1145. Ենթական ստորոգյալից հետո է դրվում հեղինակային այն նախադասությունների մեջ, որոնք ցույց են տալիս, թե ուղղակի խոսքը ում է պատկանում, երբ այս նախադասությունները ընկած են ուղղակի խոսքի մեջ կամ նրանից հետո. օրինակ՝* Եթե մարդ կարողանար նրանց տեսնել,— *շարունակեց Բենտոնը*,— բոլորին ճանաչել *(ԳՍԹ, I, 236)*։ Թռուցիկների մասին խոսե՞լ ես հետը,— *հարցրեց նա (Նույն տեղում, 280)*։ Առաջին անգամ եմ տեսնում այս տեսակի թեյի պատրաստություն, *նկատեց Վահանը՝ Մանասի հետ* միասին սեղանին մոտենալով *(Մուր., II, 207)*։ Դռան փակիչին հուպ տուր, կբացվի,— ներսից ձեն է տալիս տատիս տա-

տը *(Թ., III, 322)*։ — Այ, հիմա կտեսնենք, — *պատասխանեց Արխայանը անորոշ* և մտածեց *(ՍԶ, V, 159)*։ Օրիորդ, — *ասացի աղջկանը*, — տվեք վերջին մնաս բարևը ձեր հանգուցյալ մորը *(ՌՊԵ, 321)*։ *Ինչպես տեսնում ենք, այս պարագայում ետադաս ենթական պարտադիր է։ Հեղինակային խոսքի ստորոգյալներ են լինում սովորաբար՝* ասել, հարցնել, պատասխանել, պնդել, շարունակել, խոսել, նկատել *և այս կարգի այլ ասացական և փոխաբերաբար ասացական բայեր, որոնցով հենց բնութագրվում է ուղղակի խոսքը. տվյալ դեպքում ենթական անկարևոր է, ուստի մղվում է ետին գիծը։*

§ *1146. Ենթական ետադաս է լինում նաև այն պարագայում, երբ համադասական, բայց իրար հետ իմաստային սերտ կապի մեջ չգտնվող նախադասությունները հաջորդում են իրար. որպեսզի կտրտվածությունը թուլանա, անցումները անբնական չլինեն, օգտագործվում է շրջուն շարադասությունը, որովհետև տարբեր բնույթի ստորոգյալները առաջ քաշվելով թվարկման մեջ՝ ավելի բնական հաջորդականություն են ստեղծում, քան ենթականները. օրինակ՝* Դուռը բաց էին անում, ներս էր մտնում նոյեմբերյան քամին, օրորվում էին եղեգները, նվազում և ապա բռնկվում էր ճրագների լույսը, և ծփում էին դրոշակները *(ԱԲԵ, 242)*։ Թևեր առած թռավ եկավ նա արքայանիստ քաղաքը, և ծայր տվին խնջույքներն ու գինարբուքները *(Իս., III, 192)*։

§ *1147. Բազմազանության և թվարկման միանման ձևերից խուսափելու համար երբեմն բազմակի ստորոգյալներից մեկը դրվում է ենթակայից առաջ, իսկ մյուսը կամ մյուսները հաջորդում են ենթակային։ Շարադասության այս ձևը ավելի սերտ է կապում բազմակի անդամները, և նշվում է մի գործողությունից մյուսին անցնելու արագությունը. օրինակ՝* Գնում էր Համբոն ու մտածում *(Թ., III, 48)*։ Ասում է ջաղացպանն ու լինգը վերցնում *(Նույն տեղում, 144)*։ Մտածում է փայտահատը և, չնայած հարստացած, բայց կացինը նորից գոտին է խրում, չվանը թևին գցում ու գնում *(ՍԶ, V, 329)*։

2. ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ա) ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ *1148. Վերևում ասվեց, որ սովորական կամ ուղիղ շարադասությամբ ստորոգյալը դրվում է ենթակայից հետո. օրինակ՝* Նա կազմված էր մի քանի մասերից: Յուրաքանչյուր մասը որոշված էր

օրիորդի զանազան սպասավորների կացության համար *(Ր., III, 288)*։ Նա պատմում էր հմայիչ ձայնով *(ԱԲԵ, 658)*։ Երմոլովի կինը կռացավ, թեքվեց Իվան բեյի վրա: Խարույկի լույսը հասնում էր մինչև դիմացի անտառը *(Նույն տեղում, 563)*։ Ես պահանջում եմ հինգ հազար երկու հարյուր մանեթ *(ՌՊԵ, 443)*։ Երկու հանդիպակացները միևնույն շարժումներով դիմավորում են իրար *(Փափ., 363)*։ Եվան խոսում էր համարձակ, արագ *(Նար., III, 229)*։ Չարագուշակ լռությունը ծանրացել էր ավերակների վրա *(ԴԴ, II, 291)*։

§ 1149. Ինչպես նկատելի է օրինակներից, սովորական շարադասությամբ բաղադրյալ ժամանակների օժանդակ բայը անմիջապես հաջորդում է դերբային. սակայն, երբ անհրաժեշտ է ենթական ուժեղ շեշտել, օժանդակ բայը դերբայից առաջ է ընկնում և հարում է ենթակային. օրինակ՝ Աշխարհակալներ են եկել գնացել կարավաններով այս ճանփաներում: Կարավաններ են ճոճացել, իրենց հակերում տարել գորեն, վարդաջուր, արմավ, թիրաք, բեհեզ, թույն, թղթադրամ, ծալած մահավճիռներ, ողջույններ սիրո *(ԴԴ, II, 183)*։ Ինքն էլ է սովորում: Անտոնն էր պատմում *(ԱԲԵ, 413)*։ Բայց այժմ նա ուղղակի ինքն էր հրավիրում ինձ *(Նար., III, 472)*։

§ 1150. Այս դեպքում օժանդակ բայը ոչ միայն կարող է ենթակային հարել, այլև նախադասության ամեն մի անդամի, եթե այս վերջինը առանձնապես շեշտվում է. օրինակ՝ Սարերի բարձր կատարներին ամպը ցող էր շաղում *(ԱԲԵ, 414)*։ Այս էր տեսել նաև նրա որդին *(ԴԴ, II, 177)*։ Կարավանը ռիթմ է տալիս անապատին *(Նույն տեղում, 181)*։ Այսպես էի մտածում *(Անթ., 318)*։ Անկեղծ էր խոսում *(Նույն տեղում, 308)*։ Ջերմ մնաս բարով ենք ասում *(Նույն տեղում)*։ Ու առաջս են գալիս ուրիշ պատկերներ *(Թ., III, 213)*։ Էդ ինչ լավ ես նվագում *(Թ., III, 306)*։ Տեսնողն էլ այնպես էր կարծում *(ԱԲԵ, 408)*։ Եվայի վրա ամենից ավելի սարսափ էին բերել Բազենյանի աչքերը *(Նար., III, 488)*։ Խաե՞ղ է կենում քեֆ սիրող Հասանը *(Թ., III, 182)*։

§ 1151. Օժանդակ բայի շրջման այս ձևը այնքան է տարածված ու սովորական, որ հարցական, բացականչական նախադասությունների մեջ օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ, և դա շրջում չի համարվում, եթե հարցական և բացականչական ինտոնացիան լրացումների վրա է։ Ընդհակառակը, օժանդակ բայը դերբայից հետո դրված՝ այժմ խիստ անսովոր է. օրինակ՝ Դու ինչո՞ւ ուղարկում ես *(փոխանակ՝ ինչու ես ուղարկում)* ինձ այդ վրեժխնդրության առաջ *(Մուր., III, 366)*։ Որքան կոշտ ու կոպիտ պատրաս-

տել էր ինձ դպրոցը *(Րաֆֆի, «Կայծեր»)*։ Որքան սեր, որքան արտասուք թափվել էր *(Ր., III, 534)*։

§ *1152. Առհասարակ, երբ նախադասության անդամների դերակշիռ մասը գտնվում է ստորոգյալից առաջ, օժանդակ բայը միտում է դեպի դրանք, իսկ դերբայը ընկնում է հետո. օրինակ՝* Այստեղ սարերն իրար են հանդիպել *(Թ., III, 68)*։ Բավական է նախադասության որևէ շեշտված անդամ ընկնի ստորոգյալից հետո, օժանդակ բայը կհակվի այդ շեշտված անդամը, այսինքն՝ դերբայից հետո: *Համեմատի՛ր.* Մի անգամ ձեր հայրը ուսից տո՛ւն էր վերադառնում *(Թ., III, 216)*։ Մի անգամ ձեր հայրը ուսից վերադառնո՛ւմ էր տուն: *Օժանդակ բայը միշտ միտում է այն եզրը, որտեղ նախադասության հնչերանգային կշիռը կրող բառ է գտնվում։ Իսկ եթե տրամաբանական շեշտը դերբայի վրա է, օժանդակ բայը անպայման հետևում է դերբային։ Համեմատի՛ր.* Էդ ինչ *լա՛վ ես նվագում (Թ., III, 306)*։ Էդ ինչ լավ *նվագո՛ւմ ես*։ Զվարթը *հանգի՛ստ էր* դիտում ծերունի վանահորը: Զվարթը հանգիստ *դիտո՛ւմ էր* ծերունի վանահորը *(ԴԴԸ, 188)*։

§ *1153. Իբրև կանոն բաղադրյալ ժամանակների ժխտական խոնարհման մեջ օժանդակ բայը, իր վրա կրելով ժխտական չ մասնիկը՝ միշտ դերբայից առաջ է շարադասվում. օրինակ՝* Լռությունը չէր հեռանում նրա դեմքից *(Նար., III, 480)*։ Եվայի ուշադրությունից չէր վրիպել և այն հանգամանքը *(Նույն տեղում)*։ Նրա կյանքին ոչ մի վտանգ չէր սպառնում *(ՍԶ, V, 283)*։ Նրանք այդպիսի բաների հեչ չէին հավատում *(ՌՊԵ, 576)*։

Ծանոթություն. Ժխտականով օժանդակ բայը ետադաս դիրքում ոչ թե շրջում է, այլ բարբառային շարադասություն է. օրինակ՝ Թե որ կեղտոտ բանը ուզում չեք *(Թ., III, 19)*։ Էս սիրտս հովացնում չի *(Նույն տեղում, 48)*։ *Համեմատի՛ր նաև հետևյալ ձևը.* Համաձայնվեցի ոչ *(Թ., III, 17)*։

§ *1154. Արգելական հրամայական մի՛ ձևը նույնպես նախադաս է դրվում իր հրամայական եղանակի բայի նկատմամբ. օրինակ՝* Մի՛ արատավորիր Մամիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով *(Ր., III, 551)*։—Ոչ, ոչ, մի՛ անիր, մի՛ կոտրիր բարձր տրամադրությունը *(ԴԴ, II, 326)*։ Մի՛ լար, որդիս, որ չես լսում էլ մայրական քաղցր ձայնը *(Ծատուրյան)*։

Ծանոթություն. Մի *արգելականի ետադաս դիրքը նույնպես բարբառային է. օրինակ՝* Սիրտդ կոտրիլ մի *(Թ., III, 18)*։

§ *1155. Հարկադրական եղանակի* պետf է, պիտի *եղանակիչը դրվում է բայից առաջ. օրինակ՝* Երկաթե կոներ պետf է ունենաս *(ՎԱՈՊ, 56)։* Տղե՛rf, կենդանի պետf է գյուղ տանենf *(նույն տեղում, 66)։* Պիտի երթան առաջ հիմա, պիտի առնեն fաղաfը մեծ, Պիտի թափեն նրա վրա հազարամյա մաղձը իրենց *(ՉԸԾ, 22)։* Դուf ամենfդ պիտի մեռնեf *(Իսհ., 299)։ Այսպես է նաև ժխտական ձևը։* Երկնային պետության սահմաններում չպիտի գրվի ոչ մի գիrf «Ինչի և ինչու»-ի մասին, չպիտի խոսվի կյանfի նպատակի մասին, չպիտի հարցվի պատճառների պատճառի մասին, ոչ պիտի fննվեն տիեզերական գաղտնիfները *(Իսհ, 300)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Պետf է, պիտի *եղանակիչները բայից հետո հազվադեպ դրվում են բանաստեղծության մեջ՝ հանգավորման և այլ նկատառումներով, այլապես այդպիսի շրջումը բարբառային է։ Համեմատի՛ր.* Քանդեն պիտի ու ավերեն, տեղը փոշի պիտի փռեն, հազարամյա fաղաfը այդ fանդեն պիտի ու ավերեն: Այրեն պիտի խելագարված, պիտի պարեն հրդեհներում *(ՉԸԾ, 22)։*

§ *1156. Երբ ստորոգյալը գտնվում է նախադասության սկզբում, բնական է, որ օժանդակ բայը պետք է հաջորդի դերբայինն. օրինակ՝* Նիրհում են խանի զառամ կատվի աչfերը *(ԴԴ, II, 181)։* Ընթանում են ուղտերը պղնձե, ինչպես դարեր կորաfամակ *(նույն տեղում, 183)։* Քլթfլթում էր փոfրիկ մաfուր հեշտաեռը *(Նար., III, 344)։* Կարդում է խոջան և վանում ճանապարհի թախիծը *(ԴԴ, II, 179)։*

§ *1157. Երկրորդական բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալները ըստ սովորական շարադասության նույն դիրքն են գրավում, ինչ որ մյուս բաղադրյալ ժամանակները և առհասարակ բայով արտահայտված ստորոգյալները։ Ենթակայից հետո կիրառվող ստորոգյալը սովորական է, իսկ նախադաս վիճակը՝ շրջում։*

Երկրորդական բաղադրյալ ժամանակով արտահայտված ստորոգյալը հաճախ կազմված է լինում երեք անդամից, այսինքն՝ կա՛մ հարակատար, կա՛մ ապառնի, կա՛մ ներկա դերբայից, օժանդակ եմ *բայից և* լինել *բայի խոնարհվող որևէ ձևից։ Ուղիղ կամ սովորական շարադասությամբ դերբային հաջորդում է օժանդակ բայը (օժանդակ բայը հարում է շեշտված բառին, իսկ շեշտը դերբայի վրա է), ապա գալիս են* լինել *բայի ձևերը. օրինակ՝* Երևի կարծում են եղել *(Նար.,*

IV, 108)։ Ամեն օր սպասում են եղել *(Մուր., Ընտ. երկ., I, 60)*։ Երկյուղը մեզ փոխած է լինում *(ՂԱԵ, 355)*։ Բերդից իջնելով անցնելիս է եղել գետը *(ՁԸԵ, 301)*։ Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ումանա թագավորը *(Թ., III, 224)*։ Ամենանեղ օրերին նա միշտ ասելիս էր եղել *(ԴԴ, II, 177)*։

§ 1158. *Եթե այդ ամբողջ կապակցությունից առաջ նախադասության որևէ անդամ շեշտվում է առանձնապես, ապա օժանդակ* եմ *բայը շարադասվում է առաջ, որին հաջորդում է դերբայը, ապա* լինել *բայի ձևերը. օրինակ՝* Բարեկամներին ոչ թե մեռելի տերն է հայտնելիս լինում *(ՂԱԵ, 366)*։ *Կամ՝ օժանդակ բային հաջորդում է* լինել *բայը և ապա ներկա, հարակատար կամ ապառնի դերբայը. օրինակ՝* Այստեղ մի ժամանակ մի մեծ մարդ է եղել կենալիս *(ՂԱԵ, 403)*։

§ 1159. *Եթե* լինել *բայը խոնարհվում է պարզ ժամանակով, այսինքն՝ չունի օժանդակ* եմ *բայը, ապա առաջ դրվում է կա՛մ ներկա, կա՛մ ապառնի և կա՛մ հարակատար դերբայը, և ապա սրանց հաջորդում են* լինել *բայի խոնարհվող ձևերը. օրինակ՝* Մինչև որ տղան խնդրած աղաչած չլիներ *(Մուր., II, 351)*։ Կարծում են, որ գող պիտի մտած լինի տուն *(ՂԱԵ, 329)*։ Կարծես լուսինը իր արծաթափայլ ճառագայթներով մտնում լիներ նրանց *(Ր., III, 74)*։ *Հակառակ դասավորությունը համարվում է շրջում. օրինակ՝* Նա հիմի գետնի տակին բեհեզերուղի կողքին նստած՝ իր քաջագործությունները կլինի պատմում *(ՊՊ, II, 205)*։ Թեև ամենևին չէր կարծում, թե Եվան այնքան հիմար կլիներ գտնված *(Նար., III, 343)*։ Շահյանը չէր կարծում, թե պանի Զդանևիչը դարձյալ փող խնդրելու համար լիներ իրեն հրավիրելիս *(Նույն տեղում, 524)*։

Ծանոթություն. Մ. Աբեղյանը, հետևելով ընդհանուր այն օրինաչափությանը, թե օժանդակ եմ *բայը պետք է հետևի* լինել *բայի դերբայական ձևին, գտնում է, որ ուղիղ շարադասություն է հետևյալ ձևը.* Նա եկած լինում է: Նա գնացած եղել է: *Այս ձևերը անսովոր են այժմ*։

§ 1160. *Բայական այն բաղադրյալ ստորոգյալը, որ կազմված է սկիզբ, վերջ, գործողության ընթացք, մտադրություն, հարկադրվածություն, ցանկություն, նախասիրություն և գործողության այլ առանձնահատկություններ արտահայտող դիմավոր բայերից և այս վերջիններից կախված որևէ անորոշ դերբայից, սովորաբար շարադասվում է այսպես. դիմավոր ձևերը նախորդում են անորոշ դեր-*

բային, որը կամ անմիջապես է հետևում դիմավոր ձևերին և կամ միջահատվում է նախադասության այլ անդամներով. օրինակ՝ Եվ շանը մտածեց նորից զվարճանալ *(Փափ., 300)*։ Այստեղ ես ստիպված եմ մի փոքր կանգ առնել, թողնել ընկերներիս խորհրդավոր մինարեթի մեջ և դառնալ դեպի Կարոն *(Ր., IV, 279)*։ Բայց այդ տարածությունը երբեմն-երբեմն սկսվում էր լցվել *(ՁԸԵ, 368)*։ Երիտասարդը կամեցավ ձեռքից վերցնել նայելու *(ԴԴ, II, 215)*։ Ինքը վճռած էր եղել երբեք հրապարակ չհանել *(Նույն տեղում, 216)*։

§ *1161. Երբ անհրաժեշտ է այդ կախյալ անորոշը ուժեղ շեշտել և ցույց տալ վերջինիս իմաստային կարևորությունը ամբողջ նախադասության մեջ, անորոշը շրջումով առաջ է մղվում, իսկ դիմավոր բայը ետ է տարվում. օրինակ՝* Սարսափած խանութներն իրար հետևից փակել սկսեցին Լորիս Մելիքյան խանութպանները *(ՁԸԵ, 369)*։ Բերդից հանկարծ քաղաքացիների համար միանգամայն անսպասելի կերպով դեպի քաղաք շարժվել սկսեցին զորքեր, զորքեր, զորքեր *(Նույն տեղում)*։ Խոսել անգամ չհամարձակվեց *(ԴԴՎ, 253)*։

§ *1162. Հարադրական բարդությամբ կազմված ստորոգյալները շարադասվում են հետևյալ կարգով. սկզբում դրվում է հարադիրը (ածական, գոյական, մակբայ և այլն), որին հաջորդում է օժանդակ բայը, և ապա գալիս է դերբայը, եթե բաղադրյալ ժամանակ է։ Իսկ եթե ժամանակը պարզ է, հարադիրին անմիջապես հաջորդում է բայը. օրինակ՝* Խատիենկոյի աչքերը դուրս էին վիժել կոպերից *(Անթ., 149)*։ Թագավորի տղեն մտիկ է անում *(Թ., III, 332)*։ Անց են կենում սեր ու խնդում *(Թումանյան)*։ Հինայած մորուքով մեկը դրժկամորեն բաց էր անում մսի խանութը *(ԳՍԹ, I, 6)*։ Գադիշոյին մի տեսակ անախորժ եկավ գիշատիչ գազանի այդ սառը ժպիտը Վասակի աչքերում *(ԴԴՎ, 273)*։ Ես հանկարծ գլխի ընկա *(ՁԸԵ, 410)*։ Երկրորդ պատճառը այն աստիճան մեծ դեր էր խաղացել *(Նար., II, 331)*։ Հուզված մեջ ընկավ Հովակիմ դարբինը *(ԴԴՎ, 468)*։ Ջոկատների հրամանատարները դուրս եկան ընդառաջ *(Նույն տեղում)*։

Ծանոթություն. Հարադիր հանդիսացող մի շարք տեղի մակբայներ կարող են դրվել բայից հետո, որովհետև սկզբնապես, երբ դրանք առանձին տեղի պարագաներ են եղել, շարադասվել են ստորոգյալից հետո և ապա բաղադրվելով ստորոգյալի հետ՝ մնացել են ետադաս դրությամբ. օրինակ՝ Ոստիկանական երկու աստիճանավոր արագ մտան ներս *(ԳՍԹ, I, 9)*։ Վարդանը գնաց ներս մյուս նախարարների հետ *(ԴԴՎ, 450)*։

Այսպես կարելի է ասել՝ վազեց դուրս, եկավ մեջտեղ և *այլն, որտեղ, սակայն, կապակցական սերտությունը թուլանում է։ Համեմատի՛ր նաև.* Նա արդեն կորցնում էր իրեն *(ԴԴՎ, 450)։*

1163. Երբ հարադրություն ներկայացնող ստորոգյալից առաջ որևէ բառ ուժեղ է շեշտվում, ապա օժանդակ եմ *բայը առաջ է գալիս և հարում է այդ շեշտվող բառին. օրինակ՝* էսպես էլ բավական ժամանակ է անց կենում *(Թ., III, 346)։* Ոչ շատրվաններն են զվարթ վեր ցայտում իրենց ջրերը *(Թ., III, 346—347)։* Ինչպես էր տեղի ունեցել նրա վառնումը *(ՋԸԵ, 406)։* Ինչեր էին տեղի ունեցել այնտեղ՝ իրադարձությունների անավոր դաշտերում *(ԴԴ, II, 257)։* էսպես ամիսներ են անց կենում *(Թ., III, 185)։* Մի անգամ էլ, երբ որսի է դուրս գալիս *(նույն տեղում, 224)։* Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծություն է վեր կենում *(նույն տեղում, 231)։*

բ) ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1164. Անվանական ստորոգյալը նույնպես, ըստ սովորական շարադասության, հետևում է ենթակային։ Առանձին որևէ տարբերություն բայական ստորոգյալների համեմատությամբ գոյություն չունի. օրինակ՝* Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ *(ԱԲԵ, 228)։* Իսկ այդ կյանքը կանաչ սարերն էին, բազմատեսակ խոտերը *(նույն տեղում, 409)։* Այդ ժպիտը ծաղրի ու չարախնդության մի զանգված է *(Մուր., IV, 125)։ Եթե ենթական շարադասվում է ստորոգյալից հետո, դա սովորական շրջում է. օրինակ՝* Գեղեցիկ էր այս առավոտը *(Ր., III, 472)։*

§ *1165. Եթե ստորոգելիական վերադիրը առանց հանգույցի է, ապա այդպիսին միշտ շարադասվում է ենթակայից հետո։ Այս դեպքում նման դիրքավորումը պարտադիր է ստորոգելիական վերադիր հանդիսացող բոլոր խոսքի մասերի համար. օրինակ՝* Ամեն ինչ՝ գորշ, առօրյա *(ՋԸԵ, 36)։* Նրա դեմքը՝ արծաթե ափսե, վրան քիթը՝ կեռ մի դանակ *(նույն տեղում, 45)։* Աշխարհը բանտ, մեջը անբախտ, ես մի գերի անխնդում *(Թումանյան)։* Նա մի աղյուծ, ես մի գառ *(Թ., «Քառյակներ»)։* Դու բյուրեղ բաժակնե՞րում մի երազ... Մի երազ սրբափայլ և անհաս *(Իսե, 48)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. Ստորոգելիական վերադիրը կարող է առաջադաս լինել, երբ համադաս նախադասությունից առաջինի վերադիրը նախադաս լինելով ունի հանգույց, իսկ մյուսները նույն դասավորության մեջ հանգույցը զեղչում են. օրի-

նակ՝ Սիրուն էր Զալխեն, կախարդիչ՝ աչքերը, սալվի էր բոյը, կամար՝ ունքերը, գողտրիկ՝ թշերը *(Փափ., 224)։ Այսպիսի շարադասությունը հազվադեպ երևույթ է և անսովոր շրջման արդյունք։*

§ *1166.* Եմ, լինեմ *բայական հանգույցները իբրև կանոն դրվում են ստորոգելիական վերադիրից հետո. օրինակ՝* Խոսակցությունը հաճելի էր Մկրտումին *(ԱԲԵ, 466)։* Դա արդեն նրանց մասնագիտությունն էր *(ՁԸԵ, 433)։* Սաքենիկի ամբողջ կյանքը մի անվերջ մաքառում եղավ անողոք կարիքի հետ *(ՎՓՀՀ, 333)։* Բայց կինն էլ պակաս խորամանկ չէր *(ՂԱՆ, 296)։* Իսկ ձեր վերքերին ես ինքս բժիշկ կլինեմ *(Շեքս., I, 151)։* Համոզիկն էլ վկա կլինի *(ՆԶՀ, 409)։*

§ *1167.* Եմ, լինեմ *բայական հանգույցները ստորոգելիական վերադիրից առաջ են շարադասվում այն դեպքում, երբ տրամաբանական շեշտը ընկնում է վերադիրից առաջ, այսինքն՝ առաջադաս ենթակայի վրա. օրինակ՝* Դուք կլինեք պաշտոնական խմբագիր-հրատարակիչ *(Շիրվ., II, 386)։* Մեզ մի ուսուցիչ է հարկավոր *(ՁԸԵ, 413)։* Շալուն Սիմոնի ոսկորն է հաստ, թե Եփրեմի *(ԱԲԵ, 451)։* Ավան ամին էլ էր ծանոթ հին կյանքին *(նույն տեղում, 452)։* Արևելքն է շան հայրենիքը *(Թ., III, 124)։ Առհասարակ բայական հանգույցը հաջորդում է շեշտակիր բառին. օրինակ՝* Ինչո՞ւ է այդ պատմությունը դուրեկան *(ԱԲԵ, 453)։* Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ *(Թ., III, 160)։*

§ *1168. Եթե ենթական և ստորոգելիական վերադիրը ունեն նույնանման քերականական ձևավորվածություն, շարադասության շրջումը դժվար է դարձնում ենթակայի և ստորոգելիական վերադիրի ստույգ որոշումը։ Այս դեպքում պետք է իմաստից տարբերենք, որ հաճախ դժվար է, մանավանդ եթե թվական համաձայնություն չկա. օրինակ՝* Իմ բոլոր ծանոթ ընկերների մեջ ամենազվարթն ու դյուրահաղորդը Օլգան եղավ *(ՎՓՀՀ, 334)։* Միմիայն շներն են իր հույսը *(Թ., III, 126)։*

§ *1169. Երբ բաղադրյալ ստորոգյալը կազմված է ավելի նյութական նշանակություն ունեցող բայերից և ստորոգելիական վերադիրից, ավելի ճիշտ, երբ հանգույցը բաղադրյալ ժամանակով է արտահայտված, սովորաբար վերադիրը նախադաս է լինում, սրան հաջորդում է օժանդակ բայը, ապա գալիս է դերբայը. օրինակ՝* Ուրեմն արծիվը նուռ է եղել *(Թ., III, 160)։* Ուրեմն ծովը պստիկ է եղել *(նույն տեղում)։* Քավոր աղվեսն էնտեղ արդեն տեր է դառել *(Թ., III, 148)։* Տովիկը մի զարմանալի աղջիկ էր երևում ինձ *(ՐԿ, 329)։* Առաջնորդի մոտ հյուր է կանչված *(նույն տեղում, 397)։* Ժպի-

տր մեղք է համարվում *(Թ., II, 14)*։ Նա քաղաքի մեջ ամենաընտիր աշակերտն է համարվում *(ՌԴ, II, 102)*։ Սովորույթը երկրորդ բնավորություն է դառնում *(Նար., II, 233)*։ Շունը շատ ավելի մեծ բան է եղել *(Թ., III, 122)*։

§ *1170. Երբեմն դերբային անմիջապես հաջորդում է հանգույցը, ապա գալիս է ստորոգելիական վերադիրը, բայց հանգույցը երկու բաղադրիչներից առաջ կամ հետո չի կարող լինել. այն միշտ միջնադասում է. օրինակ՝* Բեմը ներկայացնում էր մի ցարական գեներալի սենյակ *(ՋԸՆ, 421)*։ Ես հարցը համարում եմ փակված *(ՋԸՆ, 412)*։ Դուք այստեղ կոչվում եք Պրոսերեսիոս *(Ր., I, 186)*։ Տասս կոչվում էր Շուշան *(ՐԿ, 7)*։ Շանգ Շենգը իրավամբ կոչվել է «աշխարհի ամենաերկայն գերեզմանոցը» *Իս., III, 251)*։ Եվ ժպիտը դառնում էր թերև ծիծաղ *(ԱԲՆ, 449)*։

§ *1171. Եթե բաղադրյալ ստորոգյալը ենթակայից առաջ է շարադասված, այդ ժամանակ վերադիրին հաջորդում է բայական հանգույցը, և հետո դրվում է ենթական։ Հանգույցը չի կարող ենթակայից հետո դրվել. օրինակ՝* Հիվանդանոցում ծառայող մի կին էր Անահիտը *(ՋԸՆ, 421)*։ Հռոմեական կրկեսի համփտեճական գլադիատոր է մեծահամբավ դերասանը, ինչքան շռնդալից է հանդիսատեսի ընդունելությունը, նույնքան մեծ է նրա պահանջը և անտարբերությունը՝ անողորմ տապալվողի առջև *(ՎՓՀՀ, 333)*։ Ո՞րն է քո սովորած շունը *(Թ., III, 122)*։ Այսպես թե այնպես սքանչելի կուպլետիստ էր էֆիմ Բրավելմանը *(ՋԸՆ, 423)*։ Զգույշ է միրհավը *(ԱԲՆ, 233)*։

3. ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1172. Իբրև կանոն որոշիչը շարադասվում է որոշյալից առաջ՝ թեկուզ ինչ խոսքի մասով էլ արտահայտվելու լինի այն. օրինակ՝* Գնաց, վերջապես, *եռանդուն* կոմերսանտը, *ճարպիկ* սպեկուլեանտը, *սատարը շուռ տված* ամերիկացին *(Շիրվ., VI, 297)*։ Ապա *համեստ* ընթրիք՝ պանիր-հաց, եթե լինեի, *տաք* կերակուր, *հանդից բերած* կանաչեղեն, երբեմն էլ *հարևանի ուղարկած մի ազիզ* կերակուր, որ տարին մի անգամ կեփվեր Բաղու օջախում *(ԱԲՆ, 9)*։ Նա գործիքների *կաշվե* պայուսակը դրեց անկյունում, կախեց *երկաթե ձողով կավե* նրազը *(Նույն տեղում, 269)*։ Արևի առաջին ճառագայթների հետ որոտացին *պալատական* նվագարանները և շարունակում էին *անլսելի* հնչյուններով ածվիլ *(Ր., III, 595)*։ Դա չէր *հայոց սիրելի* նավասարդը. *հայոց նոր* տարին, որ յուրաքանչյուր ամի

աշխարհախումբ բազմությամբ տոնվում էր Աշտիշատի *ծաղկազարդ* տաճարներում *(նույն տեղում)*։ Ամեն առավոտ *արծաթյա* փողերի հնչյունը, *որսորդական* բարակների մռնչյունը, *սիգապանծ* նժույգների խրխինջը խռովում էին *սորամոտ* անասունների վաղորդյան հանգիստը *(Ր., III 472)*։

§ *1173. Երբ, իբրև շրջում, որոշիչը որոշյալից հետո է շարադասվում, այնքան ուժեղ է ընդգծվում, որ հաճախ առանձնանում և դառնում է տրոհվող որոշիչ. Համեմատի՛ր հետևյալ օրինակները.* Անմահության այս հզոր տենչը, այս կամքն անըմբռնելի, բխում է ապրող տիեզերքի անհուն ընդերքից, որպես մի անհրաժեշտություն՝ *ներքին և ներույժ (Իս., III, 215)*։ Պետք էր տեսնել, թե ինչպես ոչխարներն *այն անմիտ* մոռացել էին ուտելը *(Փափ., 223)*։ Մի ներմակ ամպ՝ *թափանցիկ ու անձև,* հանդարտ լողում էր լազուրի մեջ *(ԱԲԵ, 98)*։ Ով չի տանձ կերել, կամ կարմիր խնձոր, նուռ ու սերկևիլ, կեռաս ու սալոր, դեղձ *կարմրաթշիկ,* ծիրան *անուշիկ* *(ՂԱԵ, 87)*։

§ *1174. Ետադաս որոշիչը, ձեռք բերելով որոշ անկախություն, օժտվում է իմաստային յուրահատուկ կշիռով։ Ետպդաս որոշիչներով հարուստ խոսքը ունենում է լրջություն ու վայելչություն։ Հաճախ այդպիսի որոշիչները, մղվելով նախադասության վերջը՝ ստեղծում են այնպիսի տպավորություն, որ կարծեք, թե դրանց պետք է հաջորդեն որոշյալներ։ Առաջանում է անվերջացածություն, և հաճախ այդպիսի որոշիչը համատեղում է մեկից ավելի պաշտոններ (§ 1096)*։

§ *1175. Խոսքը քնարական բարձր շնչով օժտելու, տպավորությունը ուժեղացնելու, միատարր հնչերանգությունը փոփոխելու համար հաճախ գրողը բազմակի որոշիչներն առանձնացնում է զույգանի կրկնությամբ. այս դեպքում երբեմն որոշիչը շարադասվում է որոշյալից հետո, այսինքն՝ կրկնության մեջ որոշիչը ետադաս է դառնում։ Ոճաբանական այս հնարը հատուկ է քնարական, պերճ, որակական տարրերով հարուստ խոսքին. օրինակ՝* Գարուններ բացվեցին և մրգահաս աշուններ, երկինքն էր սուտակ, բուրաստաններ, *Հրեղեն վարդեր, վարդեր ոսկեձույլ և* ծաղիկներ՝ մանվածապատ, ջերմ, հափշտակված, հրեղեն *(ԴԴ, Ընտ. պատմ., 205)*։ Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց, Նաիրուհին տխուրաչյա և համեստ *(Տերյան)*։

§ *1176. Ետադաս են կիրառվում գլխավորապես գործիական և բացառական հոլովով որոշիչները, որոնք, իբրև այդպիսիք, գերա-*

պանցապես բառակապակցությամբ են հանդես գալիս և դառնում են տրոհվող որոշիչ. օրինակ՝ Կտրին տղամարդիկ՝ տարօրինակ նիստ ու կացով *(Փափ., 293)*։ Ներս մտավ քաղբաժնի պետ Պյոտր Ֆեդոսովը՝ *ուրախ շողշողուն դեմքով (Քոչար, 433)*։ Մինչ այդ մի զույգ հակինքե թիթեռներ՝ *ադամանդե թևերով* եկան ու նստան նրա քաղցրաբույր մազերի վրա *(Իս., III, 222)*։ Ողջ է Արսեն Տոնոյանը՝ *առաջին գումարտակից (Քոչար, 438)*։ Մեր ջաղացից կես ժամ հեռու, Ախուրյանի զառիթափի վրա էր գտնվում Օհան ամու փոքրիկ ջաղացը՝ մի աղորիքով *(Իսն, 217)*։ Սպիտակ քարաշեն եվրոպական ձևի շինությունները փոխարինում էին նախկին նեղ ու ցածր ասիական կացարաններին՝ *հողե տափակ կտուրներով (Շիրվ., IV, 22)*։ Մյուս սենյակում երևում էր տուալետի սեղանը՝ *լի բազմաթիվ անուշահոտ յուղերի, ջրերի սրվակներով,* սանրերով, խոզանակներով, մկրատներով *(Նույն տեղում, 51)*։

§ *1177. Դյուրությամբ իրենց որոշյալից եսադաս են դրվում դերբայական դարձվածով կազմված որոշիչները, որոնք դարձյալ հանդես են գալիս իբրև տրոհվող լրացումներ. օրինակ՝* Կանաչազարդ դաշտավայրը՝ *ցողված վաղորդյան մարգարիտներով*, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով *(Ր., III, 471)*։ Նա էր Իրանի սիրո աստվածուհին՝ նյութ եղած բանաստեղծների կրքոտ երգերին *(Փափ., 235)*։ Ուզեց, որ իր շուրջը սերը միայն թագավորի անսահման սերը՝ բարիք սնուցանող, ժպիտ, երգ ու կյանք միայն հարուցանող *(Նույն տեղում)*։ Դիտում էր նրա բյուրեղային մերկությունը՝ ծիրանավառ վարդերի թերթերի վրա ընկողմանած *(Իս., III, 234)*։ Տեսավ սատանայի պարանոցից կախ ընկած Լիլիթին՝ տարփաբույր մեկոններով վարսերը պսակված *(Իս., III, 236)*։

Ծանոթություն. Ստորոգելիական վերադիրի որոշիչը եսադաս դիրքում կարող է երկդիմություն առաջ բերել, այսինքն՝ կդիտվի ոչ թե իբրև որոշիչ, այլ բայական հանգույցը առած բազմակի վերադիր. օրինակ՝ Նրա եղբայրը թագավոր է՝ հզոր և պատերազմասեր *(Իս., III, 120)*։ Ոչ միայն կարելի է՝ հզոր և պատերազմասեր թագավոր *հասկանալ, այլև՝* թագավոր է, հզոր է և պատերազմասեր: *Համեմատի՛ր հետևյալ նախադասությունը.* Դրա համար այդպես ծանրաշարժ ես, հաստ ու կոպիտ *(Իս., III, 226)*։ *Այստեղ անշուշտ* հաստ ու կոպիտ *ածականները բազմակի վերադիրներ են։*

§ 1178. *Ավելի ինքնուրույն դիրք են ձեռք բերում կոչական բառերի եստադաս որոշիչները, որոնք կարծես մի նոր կոչական են. օրինակ՝* Լիլիթ, հոգուս հոգի, ինչո՞ւ ես տխուր *(Իս., III, 234)*։ Լիլիթ հրեշտակներից չքնաղս, այդ ինչ ծաղիկներ էին *(Նույն տեղում, 222)*։ *Այս պարագայում եստադաս որոշիչը այնքան ուժեղ է առանձնանում և ինքնուրույն դառնում, որ կարծես բացահայտիչ լինի։*

§ 1179. *Եթե գոյականը ունի բազմակի որոշիչներ, ապա սրանք այնպես պետք է շարադասել, որ մեկը մյուսին չվերաբերի, այլ բոլորը առանձին-առանձին հարեն իրենց որոշյալին (եթե այդպես է պահանջվում)։ Երբեմն բազմակի որոշիչների մեջ լինում են այնպիսիները, որոնք ունակ են որոշիչ ունենալու. սխալ շարադասության պարագայում գոյականին վերաբերող որոշիչը կդառնա իրեն համազոր բազմակի անդամի որոշիչ. օրինակ՝* Սպիտակ քարաշեն եվրոպական ձևի շինությունները փոխարինում էին նախկին նեղ ու ցածր ասիական կացարաններին *(Շիրվ., IV, 73)*։ Արամը նկատեց, որ շուռ եկած փողոցը փակող տան ավերակների մոտ *(Անթ., 435)*։ *Այս երկու նախադասությունների մեջ* սպիտակ *և* շուռ եկած *որոշիչները իրենց տեղում չեն։ Պետք է լիներ այսպես՝* քարաշեն, եվրոպական ձևի սպիտակ շինությունները... Արամը նկատեց, որ փողոցը փակող, շուռ եկած տան... *Համեմատի՛ր նաև հետևյալ նախադասության որոշիչները.* Կգտնվեին օրիորդ Աշխենի նման քնքուշ, պարկեշտ, բարեսիրտ և ազնիվ զգացմունքներով ոգևորվող աղջիկներ *(Մուր., II, 178)*։ Քնքուշ, պարկեշտ, բարեսիրտ *որոշիչները՝ վերաբերում են* աղջիկներ *բառին, իսկ* ազնիվ *որոշիչը՝* զգացմունքներ *բառին։*

§ 1180. *Մ. Աբեղյանը նկատել է, որ մի քանի բառեր, ինչպես՝* բոլոր, ամբողջ, ամենայն *ուղղական հոլովով գոյականից հետո էլ կարող են շարադասվել. օրինակ՝* վեց ժամ ամբողջ, տարին կլոր: Տարին բոլոր նա ինքը... հողի հետ խաղացել է. աշխարհն ամենայն և *այլն։ Այս երևույթը, որ անցյալում քերականական արժեք ուներ, այժմ վերացել է, այդ կարգի եստադաս որոշիչները չեն տարբերվում մյուս եստադաս որոշիչներից և դիտվում են իբրև շրջում։ Համեմատի՛ր.* Մոռանամ դրախտն ամբողջ *(Իս., III, 231)*։ Աշխարհն ընդհանուր քո սիրուդ համար քաշում են փափագ *(Ջիվանի)*։ *Այժմ ինչպիսի եստադաս որոշիչ էլ վերցնելու լինենք, պետք է դիտվի իբրև շրջում. ինչ վերաբերում է* տարին բոլոր (Տարին բոլոր վառ գարուն. *Իսհ, 68)*, տարին կլոր *(Համեմատի՛ր «Կլոր տարի» գիրքը)*, տարին պտուտ *և նման ձևերին, ապա, ինչպես երևում է օրինակներից,*

կա՛մ դրանք ստացել են կայուն կապակցության արժեք և կամ այդ շարադասությամբ չեն մնացել։

§ 1181. *Այդպիսի դիրք էր ներկայացնում նաև* մի *թվականը, որ շարադասվում էր* քանի *բառից հետո՝* քանի մի *ձևով։ Շարադասական այս ձևը նույնպես հնացած է, չնայած իբրև մնացուկ կիրառվում է նաև այժմ. օրինակ՝ Քանի մի* րոպե հետո տեսավ *(ՍԶ, V, 129)։* Դրվատել հանգուցյալի *քանի մի* բարեգործական նվերները *(Շիրվ., IV, 24)։ Համեմատի՛ր նաև՝* շատ մի *կապակցությունը.* Պատերազմական *շատ մի* անցքերի ու դեպքերի *(Մուր., III, 47)։*

§ 1182. *Եթե միևնույն որոշյալը ունի գոյականական այլևայլ լրացումներ, ապա սովորաբար թվական որոշիչը անմիջականորեն պետք է դնել որոշյալի վրա, այսինքն՝ այդ գոյականական լրացումներից հետո. եթե թվական որոշիչը դրվի գոյականական լրացումներից առաջ, կդիտվի իբրև դրանց համար որոշիչ. օրինակ՝* Նրա վշտի ամեն մի նշանը պիտի տանջեր իր ճանապարհորդ զավակներին *(ԴԴՎ, 264)։* Գետի վրա պողպատյա լարերից կախված օրորվում էր մի կամուրջ *(ԱԲԵ, 276)։* Վերևի ընդարձակ դահլիճում գեներատորը երկնում է հազար-հազար կիլովատ *(նույն տեղում)։*

Պետք է խույս տալ թվական որոշիչների ցրումից, այսինքն՝ չըպետք է որոշյալից հեռու ընկնի։ Համեմատի՛ր. Մի թեթև ալեխառն մազերով, բայց շատ առույգ ծերունի *(Շիրվ., II, 178)։* Այնտեղ մի սիրտը խոռոված վերակացու կա *(ԳՍԹ, I, 93)։*

§ 1183. *Եթե որոշյալը ունի ածական և թվական որոշիչներ, ածականները շարադասվում են թվականներից հետո. օրինակ՝* Նրա հատակից Հայկասարը հանեց հինգ հատ գյուղական կլոր բոքոն *(Անթ., 453)։* Լոռու ձորում մի խեղճ Ձատի սպանեց թավարին *(ԱԲԵ, 277)։* Քո քաղաքի մոտ մի մեծ գետ կա *(ՂԱԵ, 321)։* Սրանք մի շքեղ գորգ փռեցին ճանապարհից դուրս ավազի վրա *(ԴԴՎ, 275)։* Հազարավոր խանդավառ հայկական դեմքեր փայլեցին կարոտագին ժպիտներով *(նույն տեղում, 277)։* Ձայն տվեց մի գեղեցկադեմ, բարձրահասակ մարտիկ *(նույն տեղում)։* Իսկ երկու սգավոր ուռենիներ իրանց վարսագեղ ճյուղերով հովանավորում էին նրան *(Բ., III, 239)։*

§ 1184. *Երբ թվական որոշիչը շարադասվում է ածական որոշիչներից հետո, առանձին ուշադրություն է բևեռվում այդպիսի թվական որոշիչի վրա. օրինակ՝* Քաղաքամերձ *մի* տեղում Վասակը կանգ առավ *(ԴԴՎ, 275)։* Սենյակը մի լուսամուտ ունի, մեջը երկու մահճակալ, մի սեղան և վեննական *երկու* աթոռ *(ՍԶՄԿՊ, 250)։* Դարբին

Հակոբը վարպետի մուրճով ավանդական *երեք* հարվածը տվեց սալին *(Իսճ, 268)*։

§ *1185. Թվական որոշիչը կարող է ածական որոշիչներից հետո շարադասվել, երբ այդ ածականները կախյալ վիճակում են գտնվում իրենցից առաջ գտնվող որևէ բառից. օրինակ՝* Համեմատաբար երիտասարդ և գեղեցիկ *մի* այրի կին էր նա *(Իսճ, 266)*։

§ *1186. Թվական որոշիչը ածական որոշիչներից հետո է դրվում, երբ ածականները իրենցից առաջ ունեն մի այլ թվական. օրինակ՝ Հինգ* տարեկան *մի* տղա քնել է արդեն *(ՍՋՄԿՊ, 234)*։ Ոտի *մեկը* կոտրած *մի* հավ *(ՂԱճ, 319)*։

§ *1187. Թվական որոշիչը* այս, այդ, այն, ամեն, յուրաքանչյուր, նույն *դերանուն որոշիչներից հետո է շարադասվում. օրինակ՝* Որի վիթխարի ապակիներն արտացոլում են Լոռու ձորի ժայռերը, անտառը, ավերակ մատուռը և *այն երեք* տունը *(ԱԲճ, 276)*։ Մենք *էն երեք* ագռավների ձագերն ենք *(Թ., III, 353)*։ Ուտեղեն պիտի գտնենք *այդ 200* մանեթը *(ՈՊճ, 728)*։

§ *1188.* Այսպիսի, այդպիսի, նույնպիսի *ցուցական որոշիչների հետ կիրառվելով՝ թվականները դրվում են նախադաս և ետադաս. օրինակ՝* Աշխարհիս երեսին քիչ կա *այնպիսի մի* վսեմ կառուցում *(Իսճ, 250)*։ Ոչ ոք սիրտ չէր անում ձեռք զարկել *այդպիսի մի* քաջագործության *(ՂԱճ, 150)*։ *Երկու նույնպիսի* ծառեր կանգնած էին առվի մյուս ափին:

§ *1189. Թվական որոշիչը գոյական որոշյալից հետո չի դրվում։ Եթե թվականը ունի* մոտավորապես, ընդամենը, մոտ, ամբողջ, շուրջ, ուղիղ, բոլորը-բոլորը *բառերը, ապա թվական որոշիչը դրվում է այս բառերից հետո. օրինակ՝* Քաղաքիս պետք է *...ընդամենը 50* հատ ուսումնական *(ՈՊճ, 707)*։ *Ամբողջ քսան* տարի էր *(Փափ., 26)*։ Ծվստան գյուղն ունի *շուրջ երեք հարյուր* բնակիչ *(Փափ., 58)*։ *Ամբողջ յոթ-ութ* ժամ շարունակ բերաններս բաց չէինք դրել *(ՈՊճ, 331)*։ Իմ բոլոր ունեցածս է *մոտ ի մոտո երկու հազար հինգ հարյուր* մանեթ *(նույն տեղում, 727)*։ Ինձ պետք է *ուղիղ երկու հազար* մանեթ տարեկան փող *(նույն տեղում, 227)*։ *Մոտ երեք տասնյակ* տարի *(Անթ., 155)*։ Նախիջևան հասնելու համար *ընդամենը երկու հարյուր հիսուն* մանեթ է մնացել *(ՈՊճ, 651)*։

§ *1190.* Այս, այդ, այն, նույն, ինչ, այսպիսի, այնպիսի, այդպիսի, որպիսի, ինչպիսի, ինչքան, որքան, այսքան, այդքան, այնքան, որքան, որչափ *դերանուն որոշիչները դրվում են ածական որոշիչներից առաջ. օրինակ՝* Ես նայում եմ *այս նորոգ* մարդու աչքերին *(ԱԲճ,*

278)։ Չեմ մոռանա առաջին իմ ուղևորությունս դեպի Թիֆլիս և առաջին օրերն *այդ աղմկալի, ուրախ* քաղաքում (ՍՁՄԿՊ, 233)։ *Այսպիսի շատ* գիշերներ, անքուն սրտամաշ գիշերներ հանդիպում էին Պատմոսի հզոր աքսորյալին (Ր., III, 243)։ Մտապատկերների *որպիսի անըմբռնելի* հաջորդումների շնորհիվ թվաց, թե նա տանտիրուհու աղջիկը չէ (Փափ., 393)։ Մի ամբողջ վայրկյան կատարելապես այն աղջիկը երևաց ինձ. *նույն փոքր* շրջազգեստն ու բացվարդագույն բանկոնը, *նույն վես* քայլվածքը և ուղղաձիգ բռնվածքը (Փափ., 393)։ *Ինչպիսի արտառոց* հրաշքների, տեսիլների շրջան էր այդ (Իսհ, 258)։ Ինչ *անհեթեթ* հրաշագործ իրեր, մասունքներ էին բերում հետները (*նույն տեղում*)։ *Այդպիսի գեղեցիկ* այր ես տեսած չեմ (Իսհ, 212)։ Ամենքը երգում էին *այդ մեծ*, վեհասքանչ երգը (*Նույն տեղում, 275*)։

§ 1191. *Եթե որոշյալը ունի* այս, այդ, այն *իսկական ցուցականները և* նույն, միևնույն *նույնականները, սովորաբար նախորդները նախադաս են. օրինակ՝* Կասկածն ընկնում է *էս նույն* հավատարիմ ծառայի վրա (Թ., III, 334)։

§ 1192. *Եթե որակական և հարաբերական ածականները միաժամանակ որոշիչ են դառնում միևնույն որոշյալի համար, հարաբերական ածականը որակականից նախադաս է դրվում։ Հարաբերական ածականները համեմատաբար ավելի առարկայական են, որակական ածականները նրանցից առաջ դրվելով՝ կարող են վերաբերվել նրանց նյութական մասին. օրինակ՝* Նստել եմ *գյուղական փոքրիկ* սրճարանում (Իսհ, 257)։ Տեղն ու տեղը նստարանի վրա նըստում է, *փետե կոպիտ* ոտնամանները հանում (Թ., III, 333)։ Դնում էր *սաղաֆի լայն* գաղտակուրի մեջ (Ր., III, 238)։ Գաղափարական աշխարհը բաժանում էր *առևտրական նյութապաշտ* աշխարհից (*Մուր.*, II, 411)։

§ 1193. *Եթե որակական ածականներն իբրև որոշիչ հարաբերական ածականից առաջ են շարադասվում, այս դեպքում դրանք գերազանցապես անջատվում են, այլապես որոշակի չեն հասկացվի։ Համեմատի՛ր.* Աջակողմը շարունակ իր գորշ ու լայնշի թաթերն էր մեկնում *մեծ իրանյան* անապատը (ԴԴՎ, 271)։

§ 1194. *Դերբայական դարձված կազմող որոշիչը և՛ որոշյալից առաջ է դրվում և՛ հետո։ Որոշյալը չի կարող ընկնել դերբայական դարձվածի միջև, որովհետև այս վերջինը ավել կամ պակաս չափով կապակցված բառերի մի միավոր է, որ նախադասության մեջ պաշտոն է ստանում իբրև մի ամբողջություն։ Դերբայական դարձվածը*

առաջանալով մի ամբողջական նախադասությունից՝ իր հետ բերում է այդ նախադասության համարյա բոլոր անդամները և դառնում է մի բարդ որոշիչ։ Այս բարդ որոշիչի անդամները շարադասվում են հետևյալ ձևով. դերբայական դարձվածով նախադասս որոշիչի դերբայը անմիջապես նախորդում է որոշյալին, իսկ մյուս մասերը շարադասվում են այնպես, ինչպես որ դրանք շարադասվում են նախադասության մեջ. օրինակ՝ Դավաճաններին չի հաջողվի պղտորել *պայքարի ելած* մարդկանց մտքերը *(Անթ., 452)։ Փողոցով հոսող* ամբոխի թափորը տարօրինակ էր և չարագուշակ *(Նույն տեղում, 447)։* Մանրացել էր *տիկնոջ դստեր համար իրրև ուսուցիչ հրավիրված* ժամանակ *(Մուր., II, 168)։ Դառը քրտինքի բերած* կոպեկը ուղղի պոչ է։ *Սև իշով գնացած* ճանապարհը կարճ կլինի *(ՊՊ, II, 287)։* Ուր գտնվում էին *Մերուժանի ձեռքով հրդեհված* Նախճվանի ավերակները *(Ր., III, 568)։*

§ 1195. *Եթե դերբայական դարձվածից բացի, որոշյալը ունի և այլ որոշիչներ, ապա դրանք շարադասվում են դերբայական դարձվածից հետո. այդպես՝ դերբայական դարձվածը ունենալով որոշիչ կրելու տնյակ այլևայլ անդամներ՝ հիշյալ որոշիչները կվերադրվեն դրանց. օրինակ՝* Տեսնում է միջին *մի եփած ճերմակ օձ (Թ., III, 334)։* Մոտ եսան րոպե ճետո նրանք կանգ առան *աշխարհից բարձր պարիսպներով* առանձնացած միհարկանի *տան առաջ (ԳՄԹ, I, 213)։* Իսկ վերևում նման են *իրար կողքի կպցրած բազմագույն* կարկատաններ *(Անթ., 184)։*

Տ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. Եստագաս դերբայական դարձվածը իր որոշյալից տրոհվում և շարադասվում է այնպես, ինչպես որ կազմվում է դարձվածը՝ յուրաքանչյուրը իրեն հատուկ այն կազմությամբ, որ ունի դերբայական դարձված առաջացնող նախադասությունը։

§ 1196. *Քանակություն, թվական հանկացողություն, անորոշություն արտահայտող բոլոր կարգի որոշիչները սովորաբար շարադասվում են որակական և հարաբերական ածական որոշիչներից առաջ. օրինակ՝* Մեր նաշի համար *բավական* խորովածցու միս ունենք *(Ր., III, 539)։* Նույնիսկ սիրուն ժպիտի մեջ սավառնում էր ինչ-որ տխուր, հուսաբեկ ու սրտմաշուկ սովեր *(Փափ., 395)։* Ուզում է բռնել *բոլոր* կասկածելի մարդկանց *(ԱՋՄԿՊ, 245)։* Նրա լայն վիմային ստորոտը բռնում է *բավական* ընդարձակ տարածություն

(Ր., III, 243)։ Ես ավելի բարձր էի դասում Հայաստանի ամբողջությունը, քան *հարյուրավոր* առանձնացած իշխանություններ *(Ր., III, 253)*։ Մոլորված երևակայությունս սկսավ առաջիս *հազարումեկ* զանազան պատկերներ նկարել *(ՌՊԵ, 350)*։

§ *1197. Եթե որոշյալը ունի որևէ հատկացուցիչ, որոշիչները շարադասվում են այդ հատկացուցիչից հետո, որպեսզի չվերաբերեն հատկացուցիչին, որ գերազանցապես գոյականական բառ է. օրինակ՝* Ինչ մեծ հաճույք է *շղթաների այս առնական* շառաչը *(Իսե, 209)*։ Նայում էր մեզ *իր պղտոր, շշկլված, անորոշ* հայացքով *(Թ., III, 79)*։ *Նրա այրող* ճառագայթները հանդիպելով սարերի հովությանը՝ թուլանում էին, կորցնում էին *իրենց կրակոտ* զորությունը *(Ր., V, 325)*։ Դեռ արտափայլում էին հանգչող *արեգակի վերջին ճառագայթների ծիրանի* շառավիղներով *(Ր., IV, 330)*։ *Օթևանի փոքրիկ* պատուհանից իրեն էին նայում երկու գլուխներ *(ԴԴՎ, 199)*։

4. ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉԻ ԵՎ ՀԱՏԿԱՑՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1198. Հատկացուցիչը շարադասվում է հատկացյալից առաջ. եթե հատկացյալը ունի որոշիչներ, հատկացուցիչը դրվում է նաև այդ որոշիչներից առաջ. օրինակ՝* Մեր կողմերում օգոստոսը *մոտի* ամենալավ ժամանակն է *(ՍԶ, V, 187)*։ Մենք անցել ենք *Փալանթոքանի լեռնաշղթայի հյուսիսային երեսի* հովիտն և բարձրանում ենք *Գեղամա ծովակի* հարավային կողմի լեռնաշղթայի *կատարը* *(ՊՊ, II, 543)*։ *Ալթմազովի* հռչակը այն *թատրոնի* երեկոյեն արդեն քաղաքի մեջ տարածվել էր *(ՌՊԵ, 400)*։ *Սխալ պետք է համարել հատկացուցիչի շարադասման հետևյալ ձևը.* Լսել եմ, ախպորն՝ այդ առավոտվա շեփորահարը *(Շեքս., I, 9)*։ *Փոխանակ՝* առավոտվա այդ շեփորահարը:

§ *1199. Եթե հատկացյալը ունի այնպիսի որոշիչ, կամ որևէ լրացուցիչ, որ գոյական է, ապա հատկացուցիչը շարադասվում է այդպիսի լրացումներից հետո։ Հատկացուցիչը ետ է դրվում նաև դերբայական դարձված հանդիսացող որոշիչներից։ Երկու դեպքում էլ, երբ հատկացուցիչը առաջ է հիշյալ որոշիչներից, բութով անջատվում է. այլապես երկդիմությունից դժվար է խուսափել։ Համեմատի՛ր հետևյալ օրինակները։*

Վերջինների հովանավոր սրահը և հյուրընկալ քաղցր ընդունելությունը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոգից կրած *մեր* նե-

ղությունը *(Մուր., Ընտ. երկ., I, 6)։ Եթե մեր հատկացուցիչը թեկուզ* կրած *բառից առաջ դրվեր, այլևս չէր կարող վերաբերել* նեղությունը *բառին։ Համեմատի՛ր.* Կարդում էր *Մաղինեի՝* աստղերի պես պլպլացող աչքերում *(ԳՍԹ, I, 88)*։ Բավական էր տեսնել նրանց թաթերի ձյունի վրա տպավորված հետքերը *(Րաֆֆի)*։ *Փոխանակ՝* ձյունի վրա տպավորված նրանց թաթերի հետքերը: Նրանց՝ արշալույսների նման շեղ և շուշանների նման մաքուր մարմինները բուրում էին *(Իս., III, 207)*։ Փոխանակ՝ արշալույսների նման շեղ և շուշանների նման մաքուր նրանց մարմինները բուրում էին:

§ *1200. Ետադաս հատկացուցիչը մեր լեզվի շարադասության կանոնների համաձայն խիստ շրջում է համարվում, ուստի չի կարելի ամեն պարագայում կիրառել։ Այս տեսակ շրջում հատուկ է ոճավորված արձակին (բանաստեղծության մեջ դա շրջում չի համարվում), որի խոսքը մասամբ կշռույթավոր է և հարուստ է ինտոնացիային բազմազանությամբ։ Ինչպես որոշիչը, այնպես էլ հատկացուցիչը շրջուն շարադասությամբ առանձնապես ընդգծվում և ուշադրություն է պահանջում. օրինակ՝* Մռայլ աչքերով, ինչպես անդունդները *Վրկանա ծովի*։ Գորի մրրկաշունչ անապատից մինչև երկնասույզ բարձունքները *Կավկազի (Իս., III, 206)*։ Ինքը սերունդ է մի մեծ *տոհմի (Ր., III, 245)*։ Ահա մերկ քարաժայռի գագաթին դեռ կանգնած են կիսակործան աշտարակները մի հին *ամրոցի (Ր., IV, 326)*։ Ինչ-որ քնած լարեր է շարժում այնտեղ մաքուր ու մելամաղձիկ, ինչպես տեսքը սգավոր *գեղեցկուհու (Նար., III, 8)*։ Սա ինչ շրջումն էր բախտի *անիվի (ԴԴՎ, 306)*։ Ինչու բարձրացավ ծայրն *աշտարակի (Փափ., 225)*։

§ *1201. Եթե բարդ նախադասության մեջ որոշիչ երկրորդական նախադասությունը վերաբերում է գլխավոր նախադասության որևէ հատկացուցիչի, սովորաբար կիրառվում է ետադաս հատկացուցիչ, որպեսզի մոտեցվի* որ *հարաբերականին՝ երկդիմությունից խուսափելու համար. օրինակ՝* Խղճահարվեց՝ տեսնելով հուսահատությունը մեռնող *մարդու,* որ գալարվում էր տագնապի մեջ *(Իս., III, 212)*։ Հանդիպում են սրընթաց կոհակներին *Փամբակի ջրի,* որ հովտի երկայնությամբ վազում է դեպի Լոռու ձորերը *(Թ., III, 9)*։

§ *1202. Ետադաս հատկացուցիչը սովորական է, և շրջումը անզգալի, երբ վերաբերում է ստորոգելիական վերադիրին։ Այսպիսի հատկացուցիչը, իբրև այդպիսին, չափազանց թուլացել է՝ մոտենալով անուղղակի խնդրի, այսինքն՝ սկսվել է սեռականի փոխանցումը տրականի, և բառը ստացել է երկդիմի պաշտոն. օրինակ՝* Ով եղավ

պատճառ այս պարտված *հաղթության* (*ԴԴՎ, 719*)։ Աշխարհի բոլոր նշանավոր գյուտերը, բոլոր մեծամեծ գործերը արդյունք են եղել դժվարատար *ճեղքությունների և* ներսական *համբերության* (*Մուր., ՐԵ, I, 6*)։ Նշան է *թուլության և անզորության* (*նույն տեղում*)։ Այն բոլորը, ինչ մենք տեսնում ենք, զգում ենք կամ լսում, ծնունդ են տիեզերական մայր *պատճառի* (*Իս., III, 203*)։ Ինչ ժամանակ է *ամուսնանալու* (*Շիրվ., IV, 53*)։

§ *1203. Երբ անորոշ դերբայի սեռականը շրջումով եստադաս է դրվում, թուլանում է սեռականի* (*հատկացուցիչի*) *ըմբռնումը, և հատկացուցիչը ձեռք է բերում նպատակի պարագայի նշանակություն. օրինակ՝* Սմբատն զգում էր պահանջ սիրտը *թեթևացնելու* (*Շիրվ., IV, 236*)։

§ *1204. Հատկացուցիչը եստադաս է կիրառվում հին արտահայտությունների ձևով, որոնք երբեմն մի բառի արժեք ունեն, կամ կապակցություն են ներկայացնում. օրինակ՝* Գլուխ գործոց, արքունիւթյուն արքոց, սէրն աստուծոյ, ի նիշատակ խորհին նարգանացս (*ՈՊԵ, 390*)։ Ի պատիվ Ալբամազովի (*նույն տեղում, 392*)։ Ի լուր ամենքի, ի խնորոց նոտի: Քամին վրա է հասնում և *ի սփյուռս աշխարհի* ցրում մոխիրն առաջին կրակի (*ԱԲԾ, 570*)։

5. ԲԱՑԱՀԱՅՏԻՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1205. Բացահայտիչը շարադասվում է բացահայտյալից հետո։ Երբ այդ նույն բացահայտիչը դարձնում ենք նախադաս, վերածվում է որոշիչի։ Ուրեմն այժմ հայերենում բացահայտիչի եստադաս դիրքը անխախտ է. օրինակ՝* Սահակը՝ *Ակուռի գյուղացիներից մեկը,* չէր վախենում ո՛չ ցրտից, ո՛չ սառցակույտից (*ԱԲԵ, 569*)։ Քիփգյոլից բարձր, ժայռերի խորշում վառվում էր նրանց խարույկը՝ *առաջին կրակը,* որ լեռան լանջին այդքան բարձր վառել էր մարդը (*նույն տեղում*)։ Նրա հետ մեկտեղ պակասում էր նաև ակումբի «երկրորդ հոգին»՝ *ակումբի կենտրոնը՝ Մազութի Համոն* (*ՁԸԵ, 324*)։ Հայոց թագաժառանգը՝ *պապը* յուր կնոջ՝ *Զարմանդուխտի* և երկու որդիների՝ *Արշակի և Վաղարշակի* հետ, պահված էին Կ. Պոլսում (*Ր., III, 30*)։ Գեներալ Տեր-Ղուկասովը՝ *Երևանյան զորաբաժնի հրամանատարը,* այդ միջոցում գտնվում էր Զեյդեգանի և Դալի-Բաբայի մեջ (*Ր., «Խենթը», Ա*)։

6. ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱՅԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 1206. *Ձևի պարագաները սովորաբար շարադասվում են ստորոգյալից առաջ. օրինակ՝* Գիշերվան անհուն հավերժն են *տխուր* Ծվում ծկլթում խավարի միջում *(Թ., II, 36)*։ Արագիլները իրենց ձագուկներով *հանգիստ* տեղավորվում էին այնտեղ *(Իսհ, 279)*։ Շահյանն իր պարզ ակնոցի միջից *ուշադրությամբ* նայում էր այդ անչափ շատախոս կնոջ տակավին թարմ, բայց փոքր քիչ կոպիտ դեմքին ու մի քիչ շիլ աչքերին *(Նար., III, 250)*։ Այժմ նա *բոլորովին* կտրել էր իրեն արտաքին աշխարհից *(Նույն տեղում, 362)*։ Մեջտեղից *ոլոր-մոլոր պտույտներով* անցնում էր Եփրատի վտակը *(Ր., «Խենթը», Ե)*։ Մաղինեի դեմքը երեկվա ճանապարհից, թե զգացմունքների վայրկենական պոռթկումից *թեթևակի* գունատվել էր *(ԳՍԹ, I, 95)*։

§ 1207. *Ձևի պարագաներ են դառնում ոչ միայն մակբայները, այլև գոյականները, ածականները, բառակապակցությունները և այլն։ Եթե այսպիսի ձևի պարագաներ շարադասվեն ենթակայից կամ նախադասության այլ անդամներից առաջ, կարող են դիտվել իբրև դրանց համար այլևայլ կարգի լրացումներ՝ չկապվելով ստորոգյալի հետ։ Համեմատի՛ր.* Բայց էլ չի կարող նա այնպես շփերթ ու խելագար թևերը տարածել *(Թ., V, 206)*։ *Երկար* պարտեզի վրա նայում էր *(Մուր., II, 180. բնագրում նայելուց)*։

§ 1208. *Եթե ձևի պարագայի հետ միաժամանակ ստորոգյալը ունի նաև այնպիսի լրացումներ, որոնք կարող են նաև ձևի պարագայի համար լրացումներ լինել, ապա այդպիսի լրացումները պետք է շարադասվեն ձևի պարագայից հետո. օրինակ՝* Եկավ կանգնեց ձնի կիտուկների առաջ ու սկսեց *երկու ձեռքով մարդի պես* ձինը ետ տալ *(Անթ., 294)*։ Երկու ձեռքով *միջոցի անուղղակի խնդիրը պետք է շարադասվեր ձևի* պարագայից *(մարդի պես)* հետո:

§ 1209. *Ուրեմն ստորոգյալի լրացումների շարադասությունը պայմանավորված է այդ լրացումների խոսքի մասային բնույթով։ Գոյականական և առհասարակ այնպիսի լրացումներ, որոնք, բացի ստորոգյալից, նախադասության այլ անդամի չեն կարող վերաբերել, շարադասվում են այնպիսի լրացումներից առաջ, որոնք կարող են ստորոգյալի հենց վերոհիշյալ լրացումների համար որոշիչ դառնալ։ Ածական, դերանուն և մակբայ հանդիսացող ձևի պարագաները սովորաբար անմիջապես նախորդում են ստորոգյալին, իսկ գոյականական, դերբայական դարձվածներով, կապական արտահայ-*

տություններով կազմված ձևի պարագաները շարադասվում են նախորդներից առաջ. օրինակ՝ Ծտերը խմբովին թևերի ամբողջ թափով *շեշտակի* գալիս նստում էին բակի մեջ տնկված հակակի ծառերի վրա (*Նար., III, 8*)։ Ներսում խավարի մեջ մի քանի հոգի ողբասող կանանց նման *աղիողորմ* հեծկլտում են (*ԱԲԵ, 261*)։ Գանավանը նույնպես վեր-վեր, կարծես ահագին ներմակ կոհակներ կազմելով, *գոգաձև* գնում էր դեպի ձախ (*Փափ., 402*)։

§ *1210. Եթե ձևի պարագաները ըստ կազմության, ըստ ձևի և իմաստի չեն կարող միմյանց լրացումներ դառնալ, շարադասվում են ազատ, ավելի ճիշտ՝ ըստ գործողության եղանակի նկարագրության տրամաբանական զարգացման. օրինակ՝* Սեղմված ժայռերին, քսքրտվելով կավոտ շերտերին, ոստնելով խութին-խութ գնացի հեռու (*Փափ., 387*)։

§ *1211. Շրջում է համարվում ձևի պարագայի ետադաս շարադասությունը (ստորոգյալի նկատմամբ)։ Ամենից առաջ այդպիսի շրջում տեղի է ունենում, երբ անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել ոչ թե գործողության վրա, այլ այդ գործողության ձևի, եղանակի, նրա բնութագրման վրա։ Սա ոճաբանական առանձնահատկություն է։ Երբեմն շրջումը կատարվում է հարկադրաբար. երբ ստորոգյալը ունի տարբեր կողմերից լրացնող ձևի պարագաներ, դժվար է դրանք այնպես շարադասել, որ խճողում առաջ չգա, որ ստորոգյալի բնութագրման տրամաբանական և հետևողական կարգը չխախտվի, կապակցությունը չծանրաբեռնվի։ Այս պատճառով երբեմն որոշ ձևի պարագաներ մղվում են ստորոգյալից հետո։ Ետադաս ձևի պարագան ավելի լայն նշանակություն է ստանում և հաճախ վերաբերում է ամբողջ նախադասությանը. օրինակ՝* Վեր էր կացել հեղեղը և գալիս էր հորձում *սևափրփուր* (*ԴԴՎ, 218*)։ Վարդանի հոնքերը միացան մի *դժվար կնճիռի կծկումով* (*Նույն տեղում, 219*)։ Օր. Նվարդի խուլ, դառն հեկեկանքները հնչում են ավելի խուլ, *ավելի աղի* (*ՉԸԵ, 320*)։ Առատ ձյունի խոշոր փաթիլները ցած են թափվում անշարժ օդի մեջ *անձայն ու հանգիստ* (*Նար., III, 420*)։ Եվ երեխան դողում էր *խեղճ ու անտուն* (*Իս., III, 257*)։ Եվ դառնագին խորհում էր Անանդան *անհույս ու հոգեմաշ* (*Նույն տեղում, 214*)։ Մի ննջիչ, մռայլ զգացում սեղմեց սիրտս *անգութ, անգութ* (*Նույն տեղում, 40*)։ Իսկ մեր բանտը լուռ էր՝ *հսկա գերեզմանի պես* (*Նույն տեղում, 17*)։ Կախվում է ձին *այնպես սահուն ու ներդաշնակ* (*Անթ., 184*)։

§ *1212. Բառական ավելի մեծ խումբ ներկայացնող ձևի պարագաները, հատկապես դերբայական դարձվածները միտում են*

ետադաս կիրառության. օրինակ՝ Քուռակն սկսում էր կաքավել՝ *փռըշտալով ու խրտնելով հաճախակի* շողացող կայծակներից *(Անթ., 187)*: Հեռու տեղից ինքն իրեն եկած որսին նա հետևում էր *նշան բռնած որսկանի աչալրջությամբ (ԳՍԹ, I, 86)*: Ճամբարի հեռավոր ծայրին մի վրան էր հաստատված ծառատունկերի խտության մեջ՝ *հսկայական բազմաթև արծվի փռվածքով և բրգաձև ու կոնաձև զանազան բաժիններ ի մի հյուսված (ԴԳՎ, 278)*:

§ *1213. Երբ համադասական նախադասությունները հատուկ նպատակով սկսվում են ստորոգյալով, բնականորեն լրացումները ետադաս են դառնում. օրինակ՝* Դուրսը ձյունը, իմ սիրած ձյունը իջնում է *հանդարտ*: Իջնում է նա մերկ ծառերի վրա, տների վրա, փողոցների վրա: Իջնում ու ծածկում ամեն ինչ՝ *խնամով, համասար (ՍԶՄԿՊ, 5)*:

§ *1214. Գերազանցապես ետադաս են դրվում* որպես, ինչպես, *կապերով արտահայտված ձևի պարագաները. օրինակ՝* Գունավոր շալի հոտը բուրում էր *որպես Իրանի սաքզա (ԱԲԵ, 251)*: Փափախների տակ պսպղում էին աչքերը *որպես չիբուխի կրակներ (նույն տեղում, 253)*: Գյուղում այդ նորօրյա նավատքը մնացել է *ինչպես անտառի կուսական թավուտը (նույն տեղում, 260)*: Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով՝ *որպես մի ամոթխած հարսիկ (Ր., III, 471)*:

§ *1215. Երբեմն ձևի պարագան շարադասվում է նախադասության սկզբում. օրինակ՝* Կամաց-կամաց մեր նախկին մտերմությունն էլ սառեց *(Փափ., 414)*: Արխալուղի կոճակները արձակված, մի ձեռքը ծոցին բռնած, Տիտոսը չռած աչքերով մեկ սրան էր նայում, մեկ նրան *(ԱԲԵ, 421)*: Եվ այսպես օրերն անցնում էին, իսկ իմ դրությունը մնում էր նույնը *(Մուր., II, 73)*: Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, որպես կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներ, սփռված էին լինում նրանք այգիներում, բանջարանոցներում և ագարակներում *(Ր., III, 473)*:

7. ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱՅԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1216. Տեղի պարագան ազատ կերպով թե՛ ստորոգյալից առաջ է շարադասվում, թե՛ հետո: Եթե դա նախադասության սկզբում է տեղադրված, ապա սովորաբար սրան հաջորդում է ստորոգյալը, և հետո գալիս է ենթական. օրինակ՝ Դռան մոտ* զրնգացին Սոնայի շալե շապիկի արծաթ սուրմաները *(ԱԲԵ, 229)*: *Ջինջ օդի սառնության մեջ* զգացվում էր առաջին ձյունի շունչը *(նույն տեղում, 228)*:

Օդի մեջ բուրում էր խիստ ախորժելի զովություն (*Ր., III, 293*)։ Այժմ *նրա առջև* տարածվում էին խոտավետ մարգագետիններ (*Ր., III, 348*)։ *Տոխալի արևելյան ափերի վրա* դեռ նշմարվում էին մի ժինավուրց ճաղաքի բարձր աշտարակները և ատամնավոր շրջապարիսպները (*նույն տեղում, 305*)։ *Արշակի մոտ* կանգնել էր մի գունատ պատանի (*Իսծ, 236*)։ *Բակը* մտավ մի զառամյալ ծերունի (*Նար., III, 9*)։

§ *1217. Եթե նախադասությունն ունի որևէ խնդիր, տեղի պարագային (եթե վերջինս նախադասության սկզբում է) հաջորդում է կա՛մ այդ խնդիրը և կա՛մ ենթական. օրինակ՝ Վերևում* արջ եմ տեսել ես. կամ՝ *վերևում* ես տեսել եմ արջ (*ՍՁ, V, 258*)։ Դեռ *վաղոնում* ինձ պաշարել էր մի տարօրինակ ահ (*ՍՁՄԿՊ. 233*)։ *Այստեղ* մեր զրույցին խառնվեցին և կանայք (*ԱԲԾ, 292*)։ *Նամակի մեջ* Սիտակն ինքը խոստովանում է Դվակորյանցի անմեղությունը (*ՊՊ, II, 179*)։ *Վեհաշուք տաճարի վերևից* առեղծվածային խոլական ֆիմեռները օրվա բոլոր ժամերին ճայում են իրենց ոտների ներքո ընդարձակ նրապարակին (*Իսծ, 233*)։ *Իր վրանի դռնից* Վարդանը դիտում էր Վասակի ճանապարհվելը Միհրներսեհի ապարանքը (*ԴԴՎ, 306*)։ *Թիֆլիսում* նա բազմաթիվ ծանոթներ, շատ բարեկամներ ուներ (*Նար., III, 61*)։

§ *1218. Ուղիղ շարադասությամբ նախադասության ենթական դրվում է սկզբում, որան հաջորդում է ստորոգյալը, ապա գալիս է տեղի պարագան. օրինակ՝* Մի ժանի անակնկալ հանգամանքներ պահեցին ինձ այստեղ (*Նար., III, 494*)։ Տղերքը գնալուց հետո ես մենակ մնացի այնտեղ (*Ր., IV, 342*)։ Ես գնում եմ մի հովտի միջով (*նույն տեղում, 343*)։ Մի աշակերտ մտակը ձեռքին կանգնած էր նրա մոտ (*նույն տեղում, 255*)։ Բարձր ազնվություն կինսի նրա երակներում (*ԱԲԾ, 292*)։ Տիգրանը մի այրուձի մարդերի և իշխանների հետ եկավ հայոց զնդի համբարը և հագնված նախարարներին առաջնորդեց դաշտ (*ԴԴՎ, 308*)։ Արշակը թեքվեց դեպի «Վոսի Փաքորզի» սրճարանը (*Իսծ, 240*)։

§ *1219. Եթե այս պարագայում տեղի պարագան ստորոգյալից առաջ է շարադասվում, համարվում է շրջում, և այդ արվում է այն շեշտելու, ընդգծելու նպատակով. օրինակ՝* Վարժապետը *մի անկյունում* նստած էր լինում (*Ր., IV, 254*)։ 1870 թվականին ես *Վարշավ* էի գնացել իմ մասնավոր գործերի համար (*ՊՊԾ, 420*)։ Աստվածը Վասիլիսան զանգը *հողումը* թաղում է (*Թ., III, 265*)։ Հետո բազավորի տղեն *տուն* է գալի (*նույն տեղում, 168*)։ Ես *պատշգամբում* ակամա լսում եմ այս բոլորը (*ՍՁՄԿՊ, 247*)։

§ *1220. Տեղի ելման պարագան սովորաբար նախադաս է ժամանման, ուղևորման տեղի պարագաների նկատմամբ։ Դրանք կարող են կամ իրար մոտ գտնվել և կամ հեռանալ իրարից նախադասության այլ անդամների միջահատությամբ. օրինակ՝* ճանապարհը անվերջ ոլորումներով *Կարինից* վազում էր դեպի *Սպեր (ՍՋ, V, 276)։ Բաթումից* երկաթուղու մարդատար գնացքը սլանում էր *դեպի Թիֆլիս (Նար., III, 213)։* Մեկ օր Մառքեոս աղան *տոնավաճառից* ուշ տուն է գալիս *(ՌՊԵ, 541)· Համեմատի՛ր.* Ցերեկվա ժամը 11-ն էր, որ վազեվազ հոգնած տուն էի շտապում Գաբրիել Ա-ի մոտից *(Նույն տեղում, 318)։*

§ *1221. Հարցական դերանուններ, մակբայներ՝* որտեղ, ուր, ներքուստ, արտաքուստ, ուստի, մի կողմից, տեղ-տեղ *և այլն՝ իրենց վրա են առնում արտաբերման կշիռը և շարադասվում են նախադասության սկզբում. օրինակ՝ Ո՞ւր* ես գնում *(Ր., III, 464)· Ո՞ւր* է գնում հայրիկը *(Նույն տեղում, 345)։ Որտե՞ղ* էի ես մինչև այժմ *(Նար., II, 136)։ Որտեղի՞ց* ես գալիս *(ՌՊԵ, 543)։ Որտեղ* հարյուր մանեթ պարտք կա, տասն էլ կարելի է ավելացնել *(ՊՊ, I, 451)։ Մի կողմից* դաշտն յուր մշակությունն է պահանջում, *մյուս կողմից* տանուտերը կանգնեցրել է յուր զզրին գյուղի մոտ *(Նույն տեղում, 423)։ Տեղ-տեղ* ծառերը անանց պատնեշ էին կազմել *(ԱԲԵ, 233)։ Որտե՞ղ* կարող եմ ձեզանից լավ առաջնորդ գտնել *(Մուր., II, 219)։* Բայց *որտե՞ղ* էր Բազենյանը *(Նար., III, 491)։ Ո՞ւր* ես լինում գիշերները *(ԳՍԹ, I, 26)։*

8. ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՅԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1222. Ժամանակի պարագան սովորաբար դրվում է նախադասության սկզբում, տեղի պարագայից և ստորոգյալի մյուս լրացումներից առաջ։ Երբ ժամանակի պարագան նախադասության սկզբում է, նրան հաջորդում է ենթական, ապա գալիս է ստորոգյալը. օրինակ՝ Ամեն անգամ այս ճանապարհով անցնելիս՝* նա գնում էր միշտ զվարթ, խնդմերես, խաղացկուն մի ընթացքով *(ՍՋ, V, 277)։ Համաձայնություն տալուց հետո* նա ստիպված եղավ առժամ մնալ Կարին *(Նույն տեղում, 279)։ Մյուս օրը* թագուհին և օրիորդը Ալանառղանի հսկողությամբ ներքո ճանապարհ ընկան դեպի պարսկաստան *(Ր., III, 467)։ Նշանակված օրը* և *նշանակված ժամին* Բաղամյանն եկավ *(Նար., III, 99)։ Այսօր երեկոյան դեմ, ժամը 6-ին* ես գնացի այստեղի ճեմելիքը *(ՌՊԵ, 442)։ Վերջին օրերը* համարյա

յուրաքանչյուր անգամ նա ներկայանում էր Զազունյանին նոգեկան զանազան դրությունների մեջ *(Նար., II, 180)*։ *Նրա գնալուց հետո պահ մի* խռովակցությունը դարձավ կին կառապանի վրա *(Փափ., 390)*։ *Առավոտները* նա ծլվլում էր մեր երդիկին *(Թ., III, 72)*։

§ *1223. Եթե նախադասության սկզբում շարադասվում է ենթական, ապա դրան հաջորդում է ժամանակի պարագան և հետո գալիս է ստորոգյալը. օրինակ՝* Ես *երեկ* պիտի ճանապարհվեի *(Նար., III, 494)*։ Վարդանն ամեն անգամ փակում էր նրա բերանը *(ԴԴՎ, 301)*։ Նա *մի օր* ցանկություն հայտնեց գնալ Գլակա վանքը՝ աղոթելու Վարդանի և բոլոր տարագիրների փրկության համար *(Նույն տեղում, 373)*։ Լռության ճնշումն *արդեն* անտանելի էր դառնում մինչև անգամ Աշխենի համար *(Նար., III, 272)*։ Դուք *հենց սկզբից* սխալ տոն բռնեցիք *(Նույն տեղում, 130)*։ Երևանու երկիրը *պարսից իշխանության տակից խլսլու ազատվելուց հետո*՝ վարչական ձևի կողմանե զանազան փոփոխության ենթարկվեցավ *(ՊՊ, I, 432)*։ Այդ երեկոն *ավելի շուտ* մթնեց *(ԱԲԵ, 498)*։ Նախիրը *կանուխ* իջավ սարից, կիթը *մթնով* կատարեցին *(Նույն տեղում)*։

§ *1224. Եթե ստորոգյալը միաժամանակ ունի թե՛ տեղի և թե՛ ժամանակի պարագաներ, ապա առաջ դրվում է ժամանակի, հետո գալիս է տեղի պարագան. ըստ որում տեղի պարագան կարող է կա՛մ անմիջապես հաջորդել ժամանակի պարագային և կա՛մ մղվել նախադասության վերջը. օրինակ՝ Ամեն օր* Երվանդի հետ անցնում էինք Ալեքսանդրենց տան առաջով *(Իսե, 201)*։ *Մի կեսօրի* այդ ճանապարհով գնում էին շորս հեծյալներ *(ՍԶ, V, 276)*։ *Տասն օր հետո*, Պոնտոսի ջրերը ճեղքելով մի նավ էր սուրում դեպի արևմուտք՝ դեպի Բյուզանդիայի մայրաքաղաքը *(Նույն տեղում, 292)*։ *Առաջին օրերն* զբոսնում է նրա մեծ պարտեզում ու ծաղկանոցներում *(ՍԶ, V, 410)*։ *Վաղ-առավոտյան* պետք է դասատուն գնայինք բոլորովին անոթի *(Ր., IV, 255)*։ *Մյուս օրը* զավառական բանտն ուղարկեցին երեք հոգի *(ՊՊ, II, 210)*։ *Հետևյալ* օրը առավոտն երեցփոխ Ղազար բիձու տանը քննիչի հրամանով, տանուտերի օգնականի ձեռքով, կրկին հավաքվեցին Օ. գյուղի առաջավորները *(ՊՊ, II, 203)*։

§ *1225. Եթե ստորոգյալը միաժամանակ ունի ընդհանուր և մասնավոր ժամանակի պարագաներ, ըստ որում մասնավորը մերթ կարող է հանդես գալ իբրև ճշտող, բացահայտող, իբրև բազմակի անդամ։ Երկու դեպքում էլ ընդհանուրը մասնավորից առաջ է շարադասվում. օրինակ՝* Այսօր *երեկոյան դեմ, ժամը 6-ին* Ես գնացի այստեղի նեմեցիքի *(ԹՊԵ, 442)*։ Նա եկավ *երկրորդ օրը, երեկոյան դեմ*

(Նար., III, 386)։ *Մի շաբաթ հետո, գիշերը* ստացվեց Աշխենի հե-ռագիրը *(Նույն տեղում, 593)*։ *Մի օր երեկոյան պահուն* Բաքոսյանը դառնալով տուն՝ այնտեղ գտավ տիկին Շնորհաբաշխին *(Ր., IV, 62)*։

§ *1226. Ժամանակի պարագան նախադասության վերջում պետք է շրջում համարել. այս դեպքում այն համեմատած ստորոգյալի ձևի պարագայի հետ՝ շատ թույլ կերպով տրոհվում է. օրինակ՝* Դու ինձ մոտ եղել ես տարիներ առաջ *(ԴԴՎ, 299)*։ Բազենյանը, հակառակ Թեկլեին արած իր խոստմանը, չեկավ ոչ *այդ օրն երեկոյան և ոչ հետևյալ օրը (Նար., III, 489)*։ Հանգստացիր *հիմա*, մայրենի հարազատ հողի գրկումն ես *հիմա (Իսն, 372)*։ Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք *(Նույն տեղում, 376)*։

9. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱՅԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1227. Պատճառի պարագան սովորաբար շարադասվում է ստորոգյալից առաջ. օրինակ՝* Հենց *այս պատճառով* էլ նրա աչքում բոլոր աշխարհի մեջ միակ արժանավոր բանը փողն էր *(Մուր., II, 405)*։ *Այդ պատճառով* նրանք էլ քեզ նման կյանքի մեջ մտնելուց՝ առաջին պատահող սրիկայից պիտի խաբվին *(Նույն տեղում, 410)*։ *Այդ պատճառով* դպրոցը լիքն էր աշակերտներով *(Իսն, 193)*։ *Ուրախությունից* նա թուլացավ երիտասարդի գրկի մեջ *(Ր., IV, 43)*։ Բայց *նոբաթ չլինելու պատճառով* եկավ տուն *(ԱԲն, 256)*։ Երբեմն *մի բահի կոթի վրա* քարանձավում աղմուկը դադարում էր *(ԱԲն, 360)*։

§ *1228. Պատճառի պարագան կարող է շարադասվել նաև ստորոգյալից հետո, ենթակայի և ստորոգյալի միջև, բոլոր լրացումներից հետո՝ օրինակ՝* Բոռենիները ոռնում էին *անհագ ծարավից (Իսն, III, 32)*։ Տանջվում է, մաշվում *սիրուց, կարոտից (Թ., I, 525)*։ Խեղճը դողալով՝ *դարդից* կուացավ *(Թումանյան)*։ Օր. Նվարդը *հուզմունքից* քիչ էր մնում ուշաթափվի *(ՉԸն, 320)*։

§ *1229. Ծավալաս պատճառի պարագան նույնպես առանձնանում և հաճախ դառնում է տրոհվող լրացում. օրինակ՝* Հայրս լռել է *համեստությունից, թե ամաչելուց (ՍԶՄԿՊ, 8)*։ Նրա գլխի աջ ու ձախ կողմերում նստած էին երկու քույրերը և լալիս էին... *ուրախությունից (Շիրվ., III, 416)*։ Այսու մենք շտապում ենք առաջին հերթին մեր խորին շնորհակալությունները հայտնել մեր բոլոր հիշ-յալ բարեկամներին՝ ոչ այնքան մեզ, որքան պատմությանը մատու-

ցած նրանց հիշյալ անգնահատելի ծառայության համար (*ՁԸԾ*, 297)։ Առնվել է լեզուները՝ *զարմանքից ու հիացմունքից* (*նույն տեղում*, 305)։

10. ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱՅԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1230. Իբրև կանոն նպատակի պարագան շարադասվում է նախադասության վերջում. օրինակ՝* Բավական աշխույժ բազմություն էր հավաքվել ձիարշավի տեղը քաղաքից ու շրջակա այգիներից՝ *տեսարանը դիտելու* (*ԴԴՎ*, 84)։ Հայտնում եմ *ի լուր աշխարհի* (*ՊՊ*, II, 420)։ Մի անգամ Ներսես մեծը եկել էր Տարոն *յուր կալվածքներին այցելություն գործելու* (*Ր*., III, 212)։ Տիգրանուհին գնացել էր ջաղաց *ալյուր աղալու* (*ԱԲԽ*, 256)։ Պախրան է իջել ձորը՝ *ջրի* (*նույն տեղում*, 259)։ Երկուսը միասին գնում են Տելեֆոն Սեքոյի ունարանը *նարդի խաղալու* (*ՁԸԽ*, 321)։ Դարձնում են նրանց պատնեշները փոշի՝ *հանուն հացի, լույսի, աշխատանքի վսեմ* (*ՁԳԾ*, 255)։

§ *1231. Գոյականներով արտահայտված նպատակի պարագաները կարող են նաև ստորոգյալից առաջ շարադասվել. օրինակ՝* Կժերն առած թովռալով *ջուրն*[1] են իջնում աղջիկներ (*Թ*., II, 51)։ Նա ինձ *ճաշի* պահեց (*Իս*., III, 322)։ Այս գիշեր *պահակի* գնա (*Շեքս*., I, 143)։ Մի կրպակի դուռ գոց էր այնպես, ասես սովդաքյար տերը *ճաշի* էր գնացել (*ԱԲԽ*, 252)։

§ *1232. Եթե նպատակի պարագա հանդիսացող անորոշ դերբայը ունի կողմնակի լրացումներ, ապա անորոշը կարող է թե՛ այդ լրացումներից առաջ դրվել և թե՛ հետո. օրինակ՝* Նա քաղաք էր գնացել *հատկապես իմանալու գները* (*ԱԲԽ*, 483)։ Գալիս եք անվերջ ու անվերջ *մտնելու այս հին դարպասներից* (*ՁԸԽ*, 261)։ Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ *աղջիկ տեսնելու, պարի ու կոխի* (*Թ*., II, 58)։

Ծանոթություն. Մյուս պարագաները շարադասության առանձին դիրքավորումներ չեն պահանջում, ուստի դրանց վրա կանգ չենք առնում։

11. ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ *1233. Սովորական շարադասությամբ խնդիրները ընկնում են ստորոգյալից հետո. օրինակ՝* Ծղոտների արանքում մի սև բզեզ գլորում է աղբի կլոր *գունդը* (*ԱԲԽ*, 238)։ Դիլան դային կոխ է տալիս չորացած *տերևները*։ Հնձած արտում կաքավները հավաքում էին *ըն*-

[1] Ջուր *այստեղ կարող է նաև տեղի պարագա մտածվել*։

կած հատիկները, կոցահարում թափված *հասկերը* (*ԱԲՇ, 232—233*)։ Ուրեմն Բզզեն հասավ յուր փափագին (*ՊՊ, II, 408*)։ Այս ներկայացման ընթացքում ես նիշեցի մեր բոլոր մանվածապատ *զրույցները* նոր կոլեկտիվ թատրոնի մասին (*ՁԸԾ, 421*)։ Իր վրանի դռնից Վարդանը դիտում էր Վասակի *ճանապարհվելը* Միհրներսեհի ապարանքը (*ԴԴՎ, 306*)։ Ձիավո՛րները վաղուց յուրյանց ունեցած չուլ ու փալասի տակ են հավաքել կիսամերկ *երեխաներին* (*ՊՊ, II, 158*)։ Բայց ես Մուրացանի գրվածքների և նրա մեզ հետ ունեցած զրույցների մեջ չէի տեսել այն տարածված կարծիքի *ապացույցը* (*ԻսԾ, 370*)։

§ 1234. *Ուղիղ խնդիրը ստորոգյալից առաջ է շարադասվում այն ժամանակ, երբ առանձնապես շեշտվում է. օրինակ*՝ Վաղուց, շատ վաղուց մի տեղ մի անգամ ես մի *տառանավոր* եմ կարդացել (*Թ., III, 213*)։ Պառավը *շապիկն* առնում է տանում պալատը (*նույն տեղում, 266*)։ Բուֆետչիկը համրիչն առջևը ինչ-որ *հաշիվներ* է անում (*Նար., II, 466*)։ Ես ամենայն պատրաստակամությամբ ձեզ համար իմ *գլուխս* կխոնարհեմ այդ պատուհասի առջև (*նույն տեղում, 385*)։ Երկար մտածելուց հետո, վերջապես, *տակին* բացվում են պատի ճեղքում (*ԱՋ, V, 324*)։ Ես իսկույն *հանցավորը* կգտնեմ և նրա չարագործության արժանի պատիժը կտամ (*ՊՊ, I, 527*)։ Դաստատն մեջ մի քանի բարի երեսով ռուս *տղաներ* նկատել էի (*ՌՊԾ, 540*)։

§ 1235. *Եթե նախադասությունը, ուղղակի խնդրից բացի, ունի նաև տրական հոլովով անուղղակի խնդիր, սովորաբար ուղղակի խնդիրը այս վերջինից հետո է շարադասվում. օրինակ*՝ Երեխային կերակրող կանանցից մեկը մոտենում է Լևոնին և մեկնում է *նրան* իր աշխարհի *գրքույկը* (*ԱնԹ.,185*)։ Հաշվապահը մեկմեկ ցույց տվեց *նրան* բոլոր *տեղեկագրերը* (*ԱնԹ., 185*)։ Նրանք ամենևին չհայտնեցին *ինձ* իրանց *նպատակը* (*Ր., IV, 274*)։ Նա երբեք *ինձ* այդպիսի *հարց* չի տալիս (*ԱՋՄԿՊ, 418*)։ Ինչու բնությունը *նրան* խիղճ է տվել (*Նար., II, 379*)։

§ 1236. *Երբ ուղիղ խնդիրը ստորոգյալից առաջ է դրվում, անուղղակի խնդիրը հաջորդում է ստորոգյալին. օրինակ*՝ Իմ մտքում նրաժեշտի *խոսքեր* եմ ասում *քաղաքին*, Գյունեյ *թաղին*, մեր Ցից *քարին* և իմ մանկության ընկեր *Անդոյին* (*ԱԲՇ, 160*)։ Երբեմն *եղնեղը* մոտ էր ֆշում *ձորին* (*նույն տեղում, 163*)։ Մենք վերջապես մոտենում ենք Գարասին և կողովի *թուզիկները* լրագրում փաթաթած տալիս *նրան*։ Նա մեծ մասը վերցնում է և մի քանի *տասնյակ* տալիս

ինձ ու *Տիգրանին (ԱՁՄԿՊ, 407)*։ Բայց նոր ամուսնությունը *երեխա* չպարգևեց *նրանց (Քոչար, 433)*։ Եվ երեխան *երջանկություն* տվեց *նրանց (նույն տեղում)*։ Վերջացնելով թեյի երկրորդ բաժակը՝ տասը *կոպեկ* ավելի վճարեց *սպասավորին* և վեր կացավ (*Նար., III, 217)*։

§ *1237. Եթե ստորոգյալը երկու խնդիրներից հետո է շարադասված, անուղղակի խնդիրը դրվում է նաև ուղղակի խնդիրից առաջ. օրինակ՝ Հարցերիս* մի այնպիսի *չոր ու ցամաք պատասխաններ* է տալիս *(Նար., II, 391)*։ Բրուտ Ավագը *ինձ* հողե *փարչ* է տվել *(ԱԲՆ, 154)*։ Թագավորն ուրախ ու զոհ ընդունեց ամենքին և ամեն *մեկին* մի որևէ բաղձր *խոսք* ասավ *(Թ., III, 282)*։ Իշխանը կամ իշխանուհին նրան փող տալու մոռանում էին *(ԹՊՆ, 409)*։ Ես *ձեզ* ամեն *բան* մանրամասնաբար կպատմեմ *(նույն տեղում, 337)*։

§ *1238. Եթե նախադասությունը ունի կրկնակի ուղիղ խնդիր, առաջ դրվում է բուն ուղիղ խնդիրը, իսկ հետո երկրորդականը. օրինակ՝* Միայն թե կարողանամ աստղաբնակ *աղջկանը* ինձ *կին* առնեմ *(Թ., III, 269)*։ *Թեյ ու շաքար* էր *նվեր* տանում նրան *(Իսն, 217)*։ Դու նախանձում ես, որ ես *աշխատակցին* երբեք տեսակ *կերակուր* են ուտեցնում *(Մուր., II, 287)*։ Դեռ *իրեն* Սարյանի աշխարհնայեցողության համակիր *ոմն* էր ներկայացնում *(նույն տեղում, 291)*։

§ *1239. Բազմակի խնդիրների թվարկումից խուսափելու նպատակով և շարադասության բազմազանության համար հաճախ ստորոգյալը գցվում է նույնանուն խնդիրների միջև. օրինակ՝* Նա նարբնտանարված ժողովրդի *վիճակն* էր նկարագրում և իշխանների *ապօրինությունները (Իսն, 183)*։ Բրուտ Ավագը ինձ հողե *փարչ* է *տվել* և հողի մարդու *օրհնություն (ԱԲՆ, 154)*։ Ու սկսել է՝ էս որբևայրի *կանանցն* է նստել կրուժևա գործել սովորեցնում, էս որբանոցի երեխաներին՝ *երաժշտություն*, աղքատներին՝ նոր տեսակի *հովանավորություն*, անգործներին՝ մեր աշխարհքում չլսված *գործեր (Թ., V, 310)*։

Ծանոթություն. Ինչպես արդեն ասվել է, հայերենի շարադասությունը այնքան ազատ է, և նախադասության անդամների տեղաշարժը այնքան բազմազան, որ դժվար է այդ բոլորը չափված-ձևած կանոնների տակ դնել։ Այստեղ տրվեց ընդհանուրը, իսկ այդ ընդհանուրից դուրս շարադասության առանձին մանրամասները կուսումնասիրվեն ոճաբանության մեջ, որովհետև մեր լեզվի շարադասության ձևերը ավելի ոճաբանական արժեք են ներկայացնում, քան քերականական և բուն այդմ էլ հարստացնում են լեզվի արտահայտչական միջոցները։ Հենց

սա է քերականության ու ոճաբանության սերտ աղերսը։ Ամեն քերականական երևույթի տարբեր գործածությամբ առաջ է բերում լեզվի ներքին արտահայտչական նորանոր հնարների դրսևորում։ Նկատի ունենալով այս ամենը, հեղինակը մտադրված է հայոց լեզվի ոճաբանության վերաբերյալ իր ուսումնասիրությունը հրատարակել իբրև այս գրքի երրորդ հատոր։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲԵ — Բակունց Ա., *Ընտիր երկեր, Երևան, 1955։*

ԱԲԻԳ — *Տե՛ս Ավագյան։*

ԱԲՄ — Բակունց Ա., *Մթնաձոր, Երևան, 1927։*

ԱԲՄԹՆՋ — *Տե՛ս ԱԲՄ։*

ԱԻԵ — Իսահակյան Ա., *Ընտիր երկեր, Երևան, 1955։*

ԱՃՀՔ — Աճառյան Հ., *Համեմատական քերականություն, Երևան, 1952։*

Անթ. — *Սովետական գրականության անթոլոգիա, Երևան, 1950։*

ԱՇ — Աղավնի, *Շիրակ, I, Երևան, 1954։*

Առած. — Ղանալանյան Ա., *Հայկական առածանի, Երևան, 1950։*

Ավագյան Արիգ, *Շիկացած հող, Երևան, 1955։*

ԳԱՍՆ — Ախվերդյան Գ., *Սայաթ-Նովայի առաջաբանը, 1852։*

Գերցեն — *Եղելություններ և խոհեր, Երևան, 1952 (երեք հատորով)։*

ԳՄԵ — Մահարի Գ., *Երկեր, Երևան, 1954։*

Գոգոլ — *Երկերի ժողովածու, Երևան, 1952—1955։*

ԳՉ *կամ* Գ. Չմշկ. — Գեորգ Չմշկյան, *Իմ Հիշատակարանը, Երևան, 1953*

Գր. — *Գրական թերթ։*

ԴԴԵ — Դեմիրճյան Դ., *Երկեր, 1946։*

ԴԴԸ — Դեմիրճյան Դ., *Ընտիր պատմվածքներ, Երևան, 1951։*

ԴԴՎ — Դեմիրճյան Դ., *Վարդանանք, Երևան, 1951։*

Ընտ. էջեր — *Ընտիր էջեր, Երևան, 1946։*

Թ. — Թումանյան Հ., *Երկերի ժողովածու, Երևան, 1940—1951։*

Իս. — Իսահակյան Ա., *Երկերի ժողովածու, Երևան, 1950—1951։*

Իսն — տե՛ս ԱԻԵ:

Լեո, ՀՊ — Լեո, *Հայոց պատմություն, IĬ Երևան, 1946։*

ԽԱ — Աբովյան Խ., *Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1948—1955։*

Կիս., Թվաբ.— Կիսելյով, *Թվաբանության ձեռնարկ, 5—6-րդ դասարանների համար։*

ՀԱՃՀՔ — *Տե՛ս ԱՃՀՔ։*

Հայ գր. պատ. — *Հայոց գրականության պատմություն, Երևան, 1950։*

Հայ ԺՀ — *Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1950։*

ՀԻ — Հոմերոս, *Իլյական, Երևան, 1951 (թարգ. Հ. Համբարձումյանի)։*

ՀՀԵ — Հակոբյան Հ., *Երկեր, Երևան, 1951։*

Հյուս. — *Հյուսիսափայլ, 1858։*

ՂԱ — Աղայան Ղ., *Երկեր, Երևան, 1947։*

ՂԱԵ — Աղայան Ղ. *Ընտիր երկեր, Երևան*, *1956*։
ՂԱՀ — Աղայան Ղ., *Հեքիաթներ, Երևան, 1952*։
ՄԱՇ — Աբեղյան Մ., *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912*։
ՄԳ — Մ. Գորկի, *Երկերի ժողովածու, Երևան, 1940—1949*։
ՄՆ — Նալբանդյան Մ., *Երկեր լիակատար ժողովածու, Երևան, 1940—49*։
ՄՆԸԵ — Նալբանդյան Մ., *Ընտիր երկեր, Երևան, 1955*։
Մուր.— Մուրացան, *Երկերի ժողովածու, Երևան, 1951*։
Մուր. ԸԵ — Մուրացան, *Ընտիր երկեր, Երևան, 1936*։
Նար. — Նար-Դոս, *Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1938։ (1, 2, 3 հատորները վերաբերում են հաջորդին)*։
Նար.—Նար-Դոս, *Երկերի ժողովածու, Երևան, 1955 (երեք հատորով)*։
ՆԶ — Զարյան Ն., *Երկեր, Երևան, 1945*։
ՆԶԱ — Զարյան Ն., *Արա Գեղեցիկ, Երևան, 1946*։
ՆԶՀ — Զարյան Ն., *Հացավան, Երևան, 1947*։
ՆԶ Հատ.— Զարյան Ն., *Հատընտիր, Երևան, 1951*։
Շաքիրյան — *Շաթիրյան, Մ., Ձին լորներ, Երևան, 1955*։
Շեքս.— Շեքսպիր Վ., *Ընտիր երկեր, Երևան, 1951*։
Շիրազ, ՀԸ — Շիրազ Հովհ., *Հատընտիր, Երևան, 1954*։
Շիրազ, ԵՀ — Շիրազ Հ., *Երգ Հայաստանի, Երևան, 1940*։
Շիրվ.— Շիրվանզադե, *Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950*։
ՉԳՃ — Չարենց Ե., *Գիրք ճանապարհի, Երևան, 1934*։
ՉԵ — Չարենց Ե., *Երկեր, Երևան, 1932*։
ՉԸ — Չարենց Ե., *Ընտիր երկեր, Երևան, 1954*։
ՉԸԵ — Չարենց Ե., *Ընտիր երկեր, Երևան, 1955*։
Չմշկյան — *տե՛ս* ԳՉ։
ՊՊ — Պռոշյան Պ., *Երկերի ժողովածու, Երևան, 1953*։
ՌՊ — Պատկանյան Ռ., *Ընտիր երկասիրություններ, 1893*։
ՌՊԵ — Պատկանյան Ռ., *Երկեր, Երևան, 1955*։
ՍԳԱ — *Սովետական գրականություն և արվեստ*։
ՍԶ — Զորյան Ս., *Երկերի ժողովածու, 1940*։
ՍԶՄԿՊ.— Զորյան Ս., *Մի կյանքի պատմություն, Երևան, 1955*։
ՍԽՀ — Խանզադյան Ս., *Հողը, I, Երևան, 1954*։
Ս. Կապուտիկյան, ՍԶ — *Կապուտիկյան Ս., Սրտաբաց զրույց, Երևան, 1955*։
ՍՀ — *Սովետական Հայաստան*։
ՍՇԵ — Շահումյան Ս., *Երկերի ժողովածու, Մոսկվա, 1925*։
ՍՇԸԵ — Շահումյան Ս., *Ընտիր երկեր, Երևան, 1948*։
ՎԱՈՊ — Անանյան Վ., *Որսորդական պատմվածքներ, Երևան, 1953*։
ՎԱՍԱ — Անանյան Վ., *Սևանի ափին, Երևան, 1951*։
ՎՏ — *Տե՛ս Տ*.
ՎՓՀՀ — Փափազյան Վահրամ, *Հետադարձ հայացք, հ. I, Երևան, 1956*։
Տ.— Տերյան Վ., *Երկեր, Երևան, 1950*։
Ր.— Րաֆֆի, *Երկեր, Երևան, 1949 (երեք հատորով)*։
ՐԵԺ — Րաֆֆի, *Երկերի ժողովածու, I, Երևան, 1954*։
ՐԽ — Րաֆֆի, *Երկերի ժողովածու, III, Երևան, 1955*։

ՐԽՀ — Րաֆֆի, *Երկերի ժողովածու, (II հատ., Խաչագողի հիշատակարանը),* *Երևան 1955։*

ՐԿ — Րաֆֆի, *Կայծեր, Երևան, 1947։*

Փափ.— Փափազյան Վ., *Ընտիր երկեր, Երևան, 1951։*

ՔԹՈՀ — Թափալցյան Ք., *Ոսկի հովիտ, Երևան, 1955։*

Քոչար — Քոչար Հ., *Մեծ տան զավակներ, Երևան, 1952։*

Քրեստ.— *Քրեստոմատյա 9-րդ դասարանի, 1951։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։*

Աճառյան Հ., *Համեմատական քերականություն, Երևան, 1952։*

Այտընյան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866։*

Ղարիբյան Ա., *Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1950։*

Մուրվալյան Ա., *Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955։*

Աբրահամյան Ա., *Հայերենի դերբայները, Երևան, 1953։*

Աբրահամյան Ս., *Հայերենի դերանունները, Երևան, 1956։*

Մարգարյան Ա., *Արդի հայերենի կապերը, Երևան, 1955։*

Սևակ Գ., *Հայերենի շարահյուսություն։*

Булаховский А., Русский лит. язык, М., 1941.

Виноградов В. В., Русский язык, М.—Л., 1947.

Вопросы синтаксиса совр. русского языка, М., 1950.

Грамматика русского языка, т. II, 1953.

Зиндер Л. Р. и *Сокольская Т. В.*, Научная грамматика немецкого языка, Л., 1958.

Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, 1935.

Потебня А. А., Мысль и язык, Одесса, 1922.

Шахматов А. А., Синтаксис русского языка, Л., 1941.

Шендельс Э. И., Грамматика немецкого языка, М., 1952.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Առաջաբան 7

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

I ՊԱՐԶ ՀԱՄԱՌՈՏ ԵՎ ՊԱՐԶ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Նախադասության տեսակներն ըստ արտահայտման նպատակի (եղանակի) (§ 5—49) 13
   ա) Պատմողական նախադասություն (§ 5—8) . . . 13
   բ) Հարցական նախադասություն (§ 9—24) . . . 14
   գ) Հրամայական նախադասություն (§ 25—42) . . . 21
   դ) Բացականչական նախադասություն (§ 43—49) . . . 25

II ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ենթակա (§ 50—129) 29

1. Գոյականով արտահայտված ենթակա (§ 52—59) . . . 30
2. Դերանունն իբրև ենթակա (§ 59—87) 33
3. Ածականն իբրև ենթակա (§ 88—92) 45
4. Բայն իբրև ենթակա (§ 93—106) 47
5. Վերառված խոսքի մասերն իբրև ենթակա (§ 107) . . . 51
6. Դիմավոր բայերն իբրև ենթակա (§ 108) 51
7. Շաղկապներն իբրև ենթակա (§ 109) 52
8. Մակբայները, եղանակավորիչ բառերը և հոլովված դերանուններն իբրև ենթակա (§ 110) 52
9. Թվականը իբրև ենթակա (§ 111—116) 53
10. Բազմապատկական, հավաքական, կոտորակային, բաղկացական չափական թվականները իբրև ենթակա (§ 116) 55
11. Ձայնարկություններն իբրև ենթակա (§ 117) 55
12. Ամբողջական նախադասությունը, բառակապակցությունն իբրև ենթակա (§ 118—119) 55

13. Հոլովված բառը, բառակապակցությունն իբրև ենթակա (§ 120—121) 56
14. Մի քանի այլ բառակապակցություններ իբրև ենթակա (§ 122—129) 57
Ս տ ո ր ո գ յ ա լ (§ 130—470) 60
1. Սահմանական եղանակով արտահայտված բայական պարզ ստորոգյալ (§ 136—178) 62
2. Ստորոգյալ սահմանական եղանակի անցյալի ժամանակներով (§ 179—221) 74
Ա պ ա ռ ն ի (§ 222—224) 90
3. Ըղձական եղանակ (§ 225—249) 91
4. Պայմանական եղանակ (§ 250—265) 96
5. Հարկադրական եղանակ (§ 266—270) 101
6. Հրամայական եղանակ (§ 271—280) 104
7. Պարզ ստորոգյալի բաղադրված ձևերը (§ 281—303) . . . 107
8. Պարզ ստորոգյալի բաղադրումը մի այլ ձևական և իսկական նշանակություն արտահայտող բայով (§ 304—314) 111
9. Բաղադրված պարզ ստորոգյալ՝ համարժեք բայ-ստորոգյալներով (§315—319) 114
10. Երկրորդական բաղադրյալ ժամանակներով կազմվող բաղադրյալ ստորոգյալ 116
ա) Անկատար դերբայներով կազմող երկրորդական բաղադրյալ ժամանակներ (§ 322—332) 116
բ) Հարակատար դերբայով և լինել բայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակներ (§ 334—351) 123
գ) Ապառնի դերբայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակներ (§ 352—357) 132
դ) Երկրորդական բաղադրյալ ժամանակներ ունեմ և կամ բայերով (§ 358—361) 134
ե) Տալ բայով կազմվող պատճառական բայերը իբրև բաղադրյալ բայական ստորոգյալ (§ 362—365) 135
զ) Դարձվածքային կապակցություններն իբրև բաղադրյալ բայական ստորոգյալ (§ 366—371) 136
է) Բաղադրյալ բայական ստորոգյալ եղանակավորիչ դիմավոր բայերով և անորոշ դերբայով (§ 372—384) . . . 139
11. Բարդ ստորոգյալ (§ 385—387) 146
12. Անվանական ստորոգյալ (§ 388) 148
ա) Գոյականն իբրև ստորոգելիական վերադիր (§ 397) . . 152
բ) Գոյական վերադիրը եմ, լինեմ բայերի հետ (398—408) . 152
գ) Գոյականներն իբրև ստորոգելիական վերադիր դառնալ, ճանդիսանալ, կոչել, ներկայանալ, կանգնել, ընկնել, դուրս գալ բայերի մոտ (§ 409—410) 154
դ) Գոյականն իբրև ստորոգելիական վերադիր մի քանի չեզոք բայերի մոտ (411—412) 155
ե) Գոյականն իբրև ստորոգելիական վերադիր մի քանի կրավորական բայերի մոտ (§413—416) 157
զ) Գոյական վերադիրը թեք հոլովներով (§ 417) . . . 158

է) *Փոխանուն սեռական հոլովով գոյականն իբրև ստորոգելիական վերադիր (§ 418—419)* 160

ը) *Գոյական ստորոգելիական վերադիր կապով հանդերձ (§ 420—421)* 160

թ) *Ածականն իբրև բաղադրյալ անվանական ստորոգյալի վերադիր մաս (§ 422—424)* 161

ժ) *Ածականն իբրև պարզ անվանական ստորոգյալ (§ 425—427)* 162

ժա) *Ածական ստորոգելիական վերադիրը* եմ, լինեմ *բայերի հետ (§ 428—431)* 163

ժբ) *Ածականն իբրև ստորոգելիական վերադիր* դառնալ, դուրս գալ, հանդիսանալ, գալ *բայերի հետ (§ 432)* 164

ժգ) *Ածականն իբրև վերադիր* մնալ, կանգնել *և* կենալ *բայերի հետ (§ 433—434)* 165

ժդ) *Ածական վերադիրը* թվալ, երևալ, ձևանալ *բայերի հետ (§ 435)* 166

ժե) *Մի քանի յուրահատուկ բառեր իբրև ստորոգելիական վերադիր (§ 436—439)* 166

ժզ-ի) *Դերանունն իբրև ստորոգելիական վերադիր (§ 440—454)* 168

իա) *Թվականն իբրև ստորոգելիական վերադիր (§ 455—458)* . . 175

իբ) *Մակբայները և կապերն իբրև ստորոգելիական վերադիր (§ 459—460)* 176

իգ) *Ձայնարկությունն իբրև ստորոգելիական վերադիր (§ 461)* . 177

իդ) *Ենթակայական, անորոշ և հարակատար դերբայներն իբրև ստորոգելիական վերադիր (462—470)* 177

III ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

1. *Ստորոգյալի և ենթակայի համաձայնությունը դեմքով (§ 472—486)* 183

2. *Բազմակի ենթակաների և ստորոգյալի դիմային համաձայնությունը (§ 487—490)* 187

3. *Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը թվով (§ 491)* . . 188

4. *Գոյական ենթակայի թվական համաձայնությունը ստորոգյալի հետ (§ 492—518)* 189

5. *Բազմակի գոյական ենթակայի համաձայնությունը ստորոգյալի հետ (§ 519—535)* 199

6. *Անորոշ դերբայ-ենթակայի համաձայնությունը ստորոգյալի հետ (§ 536—537)* 204

7. *Դերանուն-ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը (§ 538—541)* 205

8. *Հարցական և հարաբերական դերանուններով ենթակայի համաձայնությունը ստորոգյալի հետ (542—547)* 207

9. *Որոշյալ դերանուն-ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը (§ 548—554)* 209

10. *Թվական-ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը (§ 555—560)* . 211

11. *Ստորոգելիական վերադիրի և ենթակայի համաձայնությունը (§ 561—578)* 213

IV ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. *Որոշիչ* (§ 584—636) 222
   - ա) *Ածականն իբրև որոշիչ* (§ 586—587) . . . 223
   - բ) *Բայն իբրև որոշիչ* (§ 588—590) 224
   - գ) *Դերանունն իբրև որոշիչ* (§ 591—599) . . . 226
   - դ) *Թվականն իբրև որոշիչ* (§ 600—610) . . . 231
   - ե) *Գոյականն իբրև որոշիչ* (§ 611—616) . . . 236
   - զ) *Որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 617—628) . 239
   - է) *Թվական-որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 629—635) 244
   - ը) *Դասական և մյուս թվականներով որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 636—646) 247
   - թ) *Դերանուն որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 647—649) 250
   - ժ) *Որոշյալ դերանուն-որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 650—652) 251
   - ժա) *Անորոշ դերանուն-որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 653—655) 253
   - ժբ) *Ժխտական դերանուն-որոշիչի և որոշյալի համաձայնությունը* (§ 656) 254
2. *Հատկացուցիչ* (§ 657—687) 254
   - ա) *Գոյականն իբրև հատկացուցիչ* (§ 658—673) . . . 255
   - բ) *Դերանունը և մյուս խոսքի մասերն իբրև հատկացուցիչ* (§ 674—677) 264
   - գ) *Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը* (§ 678—687) 265
3. *Բացահայտիչ* (§ 688—731) 269
   - ա) *Բացահայտիչի և բացահայտյալի համաձայնությունը* (§ 717—731) 278
   - բ) *Բացահայտիչի և բացահայտյալի համաձայնությունը հոլովով* (§ 718—719) 278
   - գ) *Բացահայտիչի և բացահայտյալի համաձայնությունը թվով* (§ 720—723) 279
   - դ) *Բացահայտիչի և բացահայտյալի համաձայնությունը հոդով* (§ 724—731) 280
4. **Խնդիր** (§ 732—847) 283
   - ա) *Ուղիղ խնդիր* (§ 738) 286
   - բ) *Արտաքին ուղիղ խնդիր* (§ 739—741) . . . 286
   - գ) *Հետևանքի ուղիղ խնդիր* (§ 742—743) . . . 288
   - դ) *Ներքին ուղիղ խնդիր* (§ 744—745) . . . 289
   - ե) *Երկրորդական ուղիղ խնդիր* (§ 746—769) . . 290
   - զ) *Առանց կապերի անուղղակի խնդիր* (§ 750) . . 292
   - է) *Տրական հոլովով անուղղակի խնդիր* (§ 751—756) . 292
   - ը) *Մատուցման անուղղակի խնդիր* (§ 757—759) . . 294
   - թ) *Հանգման անուղղակի խնդիր* (§ 760) . . . 295
   - ժ) *Փոխադարձ գործողության և կապվածության անուղղակի խնդիր* (§ 761) 296

ժա) Հաղորդման անուղղակի խնդիր (762—763)
ժբ) Նմանության կամ համապատասխանության անուղղակի խնդիր (§ 764—765) 297
ժգ) Վերածման կամ փոխարկման անուղղակի խնդիր (§ 766—767) 298
ժդ) Ստացման անուղղակի խնդիր (§ 768—773) . . . 299
ժե) Ուղևորման կամ ուղղության անուղղակի խնդիր (§ 774—776) 301
ժզ) Շահի անուղղակի խնդիր (§ 777—782) . . . 303
ժէ) Անուղղակի խնդիրը ուղիղ խնդրի նշանակությամբ (§ 783) . 306
ժը) Ներգործող ուղիղ խնդիր (§ 784—785) . . . 306
ժթ) Փոխարինության անուղղակի խնդիր (§ 786—787) . 307
ի) Հնազանդության անուղղակի խնդիր (§ 788) . . . 308
իա) Ապավինության անուղղակի խնդիր (§ 789) . . . 309
իբ) Բաղդատության անուղղակի խնդիր (§ 790) . . . 309
իգ) Անուղղակի խնդիր բացառական հոլով (§ 791) . . 309
իդ) Անջատման անուղղակի խնդիր (§ 792—793) . . 310
իե) Ելման անուղղակի խնդիր (§ 794—798) . . . 311
իզ) Ներգործող անուղղակի խնդիր բացառական հոլովով (§ 799—801) 312
իէ) Պասիվ ներգործության անուղղակի խնդիր (§ 802) . . 314
իը) Բաղդատության անուղղակի խնդիր բացառական հոլովով (§ 803—804) 315
իթ) Ծագման կամ սերման անուղղակի խնդիր (§ 805) . . 316
լ) Բաղկացության անուղղակի խնդիր (§ 806) . . . 317
լա) Մասնական անուղղակի խնդիր (§ 807—810) . . . 317
լբ) Հաղորդման անուղղակի խնդիր բացառական հոլովով (§ 811) . 318
լգ) Պատմական կամ վերաբերության անուղղակի խնդիր (§ 812) . 319
լդ) Սահմանափակման, նմանության և ընդօրինակման անուղղակի խնդիրներ (§ 813—815) 320
լե) Անուղղակի խնդիր գործիական հոլովով (§ 816—820) . . 320
լզ) Անուղղակի խնդիրը արտահայտված կապերի միջոցով (§ 821—845) 322
5. Պարագա (§ 846—988) 331
ա) Ձևի պարագա (§ 850) 332
բ) Մակբայները և ածականներ իբրև ձևի պարագա (§ 851—853) . 332
գ) Դերբայները և դերբայական դարձվածքները իբրև ձևի պարագա (§ 854) 334
դ) Ձևի պարագան արտահայտված տարբեր հոլովներով դրված բառերի միջոցով (§ 855—858) . . . 335
ե) Կապական արտահայտությունները իբրև ձևի պարագա (§ 859—865) 337
զ) Տեղի պարագա (§ 866—869) 340
է) Տեղի մակբայները իբրև բուն տեղի պարագա (§ 870—876) 341
ը) Կապական արտահայտությունները իբրև բուն տեղի պարագա (§ 877) 344

ր) Ուղևորման և ժամանման տեղի պարագաներ (§ 878—884) . 345
ժ) Նլման տեղի պարագա (§ 885—891) 347
ժա) Անցման տեղի պարագա (892) 319
ժբ) Ժամանակի պարագա (§ 893—894) 350
ժգ) Գործողության կատարման ժամանակի պարագա (§ 895) . 351
ժդ) Գործողության սկզբնավորման ժամանակի պարագա (§ 896) 351
ժե) Գործողության վախճանի ժամանակի պարագա (§ 897) . 352
ժզ) Մակբայներն ու մակբայական բառերն իբրև ժամանակի պարագա (§ 898) 352
ժէ) Ժամանակ նշանակող և այլ կարգի բառերն իբրև ժամանակի պարագա (§ 899) 354
ժը) Ժամանակի պարագան հայցական հոլովով (§ 900—909) . 354
ժթ) Ժամանակի պարագան տրական հոլովով (§ 910—922) . 358
ի) Ժամանակի պարագան բացառական հոլովով (§ 923—928) . 366
իա) Ժամանակի պարագան գործիական հոլովով (§ 929—931) . 368
իբ) Ժամանակի պարագան ներգոյական հոլովով (§ 932—934) . 369
իգ) Ժամանակի պարագան արտահայտված կապերով (§ 935—950) 370
իդ) Դերբայական դարձվածն իբրև ժամանակի պարագա (§ 951) . 376
իե) Տարբեր բնույթի բառակապակցություններն իբրև ժամանակի պարագա (§ 952) 377
իզ) Չափ ու քանակի պարագա (§ 953—954) . . . 377
իէ) Գործողության կատարման չափ ու քանակի պարագա (955—956) 378
իը) Ստորոգյալի գործողության ժամանակի տևողության չափի պարագա (§ 957—962) 379
իթ) Ստորոգյալի գործողության տարածության չափի պարագա (§ 963) 381
լ) Գինը, արժեքը և կշիռն արտահայտող չափի պարագա (§ 964) . 383
լա) Պատճառի պարագա (§ 965—968) 382
լբ-լգ) Հիմունքի և հակառակ հիմունքի պարագա (§ 969—971) . 385
լդ) Նպատակի պարագա (§ 972—980) 387
լե) Պայմանի պարագա (§ 981—984) 391
լզ) Միասնության պարագա (§ 985) 393
լէ) Վերաբերմունքի պարագա (§ 986) 393
լը) Հավաստիության պարագա (§ 987) 394
լթ) Ընդհանուր պարագաներ (§ 988) 395

V ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Բազմակի ենթակա (§ 992—1006) 398
2. Բազմակի ստորոգյալ (§ 1007—1041) 404
3. Բազմակի որոշիչ (§ 1042—1060) 418
4. Բազմակի հատկացուցիչներ (§ 1061—1066) 426
5. Բազմակի բացահայտիչ (§ 1067) 427
6. Բազմակի խնդիրներ (§ 1068—1078) 428
7. Բազմակի պարագաներ (§ 1078—1092) 433

VI ՏՐՈՀՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. *Տրոհվող որոշիչներ* (§ 1096—1104) 443
2. *Տրոհվող պարագաներ* (§ 1105—1128) 446

VII ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

1. *Ենթակայի տեղը* (§ 1136—1147) 459
2. *Ստորոգյալի շարադասությունը* (§ 1148—1173) . . . 463
3. *Որոշիչի և որոշյալի շարադասությունը* (§ 1172—1197) . . . 471
4. *Հատկացուցիչի և հատկացյալի շարադասությունը* (§ 1198—1204) . 479
5. *Բացահայտիչի և բացահայտյալի շարադասությունը* (§ 1205) . . 481
6. *Ձևի պարագայի շարադասությունը* (§ 1206—1215) . . . 482
7. *Տեղի պարագայի շարադասությունը* (§ 1216—1221) . . . 484
8. *Ժամանակի պարագայի շարադասությունը* (§ 1222—1226) . . 486
9. *Պատճառի պարագայի շարադասությունը* (§ 1227—1229) . . 488
10. *Նպատակի պարագայի շարադասությունը* (§ 1230—1232) . . 489
11. *Խնդիրների շարադասությունը* (§ 1233—1239) 489

Համառոտագրություններ 493
Գրականություն 495

Վարազ Դավթի Առաքելյան

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Գլխ. խմբ. Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ
Տեխն. խմբագիր Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ Օ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՎՖ 09341 [illegible] 479, պատվեր 291, Հրատ. 1373
տիրաժ 2000.

Հանձնված է արտադրության 25/VI 1958 թ.։
Ստորագրված է տպագրության 23 XII 1958 թ.։
Թուղթ 60×92 1/8, տպագր. 31,5 մամուլ, հրատարակչական 26,6 մամուլ։ Գինը կազմով 11 ռ. 90 կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան
Երևան, Աբովյան 124

ЦЕНА